



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ
ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՋՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1978

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ամեն մի ժողովրդի հոգևոր պատմության մեջ ասպարեզ է գալիս մի բախտավոր գրող,— բախտավոր իր ստեղծագործության պատմական նշանակությամբ,— որ բյուրեղացնում է իր ժողովրդի պատմական ու գեղարվեստական փորձը և, ի մի բերելով մինչ իր հանդես գալը եղած շրջափուլերը, նախանշում հայրենի գրականության ընթացքը երկար ժամանակով:

Տարբեր ժողովուրդների պատմության մեջ նրանք երևան են գալիս տարբեր դարաշրջաններում, բայց դա չի խանգարում, որ նրանք պատմական նույն նշանակությունն ունենան իրենց ազգային արվեստում:

Գերմանական գրականության մեջ այդ բանաստեղծը Գյոթենն է:

Ռուս գրականության մեջ՝ Պուշկինը:

Հայ գրականության մեջ՝ Հովհաննես Թումանյանը:

Կան գրողներ, և նշանավոր գրողներ, որ մարդու մշտական ուղեկիցները չեն՝ պատկանում են նրա մանկությանը, երիտասարդությանը կամ հասուն տարիքին: Գրողներ էլ, որ պատկանում են բոլոր հասակներին՝ մանկությունից մինչև խորին ծերություն:

Նրանք մարդու մշտական ուղեկիցներն են:

Հովհաննես Թումանյանն այդ գրողներից է:

Նրա ստեղծագործությունը իր դասական պարզությամբ ու խորությամբ մատչելի է բոլոր հասակների, բոլոր ազգությունների, բոլոր ժամանակների մարդկանց:

Թումանյանի ընթերցողը չի կարող հիշել, թե երբ է ծանոթացել նրա հետ, ինչպես չի կարող հիշել իր վաղ մանկությունը, նրան նախ լսում են, քանի զեռ կարդալ էլ չգիտեն, ապա ընթերցում, և այսպես, հետզհետե թափանցում Թումանյանի բանաստեղծական աշխարհը:

Պետև ուզում է, որ աշխարհի վրա աչք բացող երեխան կյանքը տեսնի պարզ ու պայծառ, իրրև համակ խնդություն: Ուրախ, ծպիտք դեմքին, նա մոտենում է մանկան իրրև բարության ոգի, պատմում նրան ծիտիկի ու աղվեսի, շան ու կատվի, ծառ ու ծաղկի մազին, երեխային առաջ տանում կյանքի նախնական իմացության գարմանահրաշ ճամփաներով:

Մի քիչ հասակ առնելով, հասարակության կրտսեր անդամն իմանում է պետության, որ այնքան էլ հեշտ չեն այս աշխարհի գործերը, որ աշխարհում կան շար

Ար 1
Թ—95

70404 (107)
705 (01) 76 (42) «Տ» 76

ու բարի ուժեր, որ նրանք մշտական կովի մեջ են, բայց գրեթե միշտ բարին է լինում հաղթողը: Կկվին հալածող Աղվեսն ի վերջո կյանքով է հատուցում իր շարությունների համար:

Ինչքան էլ որ լինի զգույշ,
Չարի առջև թե վազ, թե ուշ,
Է՛ղ է պանված, Աղվես աղա...

Վերջին շնչում այս խրատն է լսում շարագործ խորամանկը: Այդպես են ավարտվում Թումանյանի մանկական հեքիաթները՝ «Տերն ու ծառան», «Ոսկու կարասը», «Եռոտղ ձուկը»:

Մի քիչ էլ հասակ առնելով՝ ընթերցողը Թումանյանից իմանում է, որ շար և բարի ուժերի հարաբերությունն այս աշխարհում այնքան էլ մխիթարական չէ և որ նրանց հավիտենական կոիլը բնավ էլ միշտ չէ, որ բարու հաղթանակով է ավարտվում: Պատանին արդեն «Մի կաթիլ մեղրի» ընթերցողն է, այն լեզուների (գրա հիմքը հայկական միջնադարյան մի առակ է), որ պատմում է, թե ինչպես մի կաթիլ մեղրի պատճառով ծագում է աշխարհակործան պատերազմ, և վերջում կենդանի մնացած մարդիկ միմյանց՝

Հարցնում էին սարսափաճար,
Թե որտեղի՞ց արդյո՞ք ծագեց
Է՞ս ընդհանուր աղետը մեծ:

Պատանին նաև «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքի ընթերցողն է, իսկ դա ցույց է առնում, թե ինչպես գեղջուկ տղաների մեջ ամենաշնորհալին, ամենալավը՝ Նեսոն, դառնում է անազնիվ, անհամակրելի մարդ, որովհետև գրկանքները նրան քաշել են կյանքի հատակը: «Իսկ եթե,— խոստովանում է հեղինակը,— նա էլ ուտում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլլիներ, գուցե ինձանից էլ շատ ավելի լավը...»: Պատանին կարդում է նաև «Գիթորը» պատմվածքը, որի հերոսին՝ մի պայծառ պատանու, շարքաշ կյանքը նետում է քաղաք՝ օտար մարդկանց մեջ, այն «անիրավ աշխարհքը», ուր նա տանջվում է, շիմանալով ո՞ր մեղքի համար, և ի վերջո կնքում իր մահկանացուն:

Երիտասարդ ընթերցողը թերևս ամենից շատ բան ունի վերցնելու Թումանյանի գանձարանից. «Հայոց լեռներում», «Հայոց վիշտը», «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունները, որ կանխորոշեցին հետագա հայ հայրենասիրական պոեզիայի ընթացքը, «Հողահանգիստը»՝ մի հզոր ոեքվիսիտ, որ պոետը գրել է 1915 թվականի հայկական անլուր կոտորածների մղձավանջային օրերին... Ապա պատմվածքները՝ «Գրազը», «Երկաթուղու շինությունը», «Մեղքերուն»: Ապա և պոետական մեծ կտավները՝ «Աստուծոցի Գավիթը», որ հայ ժողովրդական հանճարեղ էպոսի շողջողուն մշակումն է, «Փարվանան», որ խոսում է հավերժական, անշեղ սիրո տենչանքներից, «Պոետ ու Մուսան», որի նյութը բանաստեղծական վսեմ իդեալների և նսեմ իրականության հակասությունն է «Հառաչանքը», արդարության կարոտով անցած մի կյանքի ողբերգություն, նախապաշարմունքի կործանարար ուժը ցույց տվող «Ըռուցի Սաքոն», ապա «Թմկաբերդի առումը», որ գնեում է փառասնելությունից զեպի մատուության հանցավոր ուղին տանող ճա-

նապարհը, և, իհարկե, ամենից առաջ «Անուշը», որը Թումանյանի գլուխգործոցն է համարվում:

Մենք սովոր ենք Թումանյանի մեծությունը տեսնել իր գեղարվեստական երկերում, բայց նա մեծ է իրրև գրական արվեստի տեսաբան ևս, իր ոչ միայն զուտ գեղագիտական, այլև պատմաբանական, գրականագիտական, բանասիրական, լեզվաբանական ըմբռումներով ու կոահումներով: Մավալուն չեն իր հոգվածները, ինչպես ծավալուն չեն գեղարվեստական երկերը, բայց դրանց նման էլ սեղմ են, իմաստալից և, իրավամբ, առանձին տեղ են գրավում հայ գեղագիտական մտքի զարգացման պատմության մեջ:

Որոնենք այդ պատմության էջերում ամենից ինքնուրույն ու ինքնատիպ դատողությունը ձևի ու բովանդակության հարաբերության մասին և, հավանորեն, կանգ կառնենք Թումանյանի ասույթների վրա: Որոնենք արվեստի մեջ ազգայինի ու համամարդկայինի հարաբերության ամենասուղբ ընդորոշումները՝ և իսկույն կմտաբերենք Թումանյանի ասույթները: Որոնենք հայ նոր գրականության պատմության ամենախորունկ իմաստավորումները՝ և կանգ կառնենք Թումանյանի «Կյանք և գրականություն» հոդվածաշարի վրա: Հայ շքեպիրագիտությանը դառնանք՝ առաջ կզան Թումանյանի մտքերը: Սայաթնուվագիտությանը դառնանք՝ դարձյալ Թումանյանը կկանգնի մեր առաջ: Արվեստագիտությանը դառնանք՝ վերստին Թումանյանն է՝ իր թեկուզև անավարտ ուսումնասիրությանը: Հայ գրականության բանավեճային ամենասուր հոդվածի հեղինակը դարձյալ Թումանյանն է («Հայոց դրամբյանիզմն ու նա»): Նույնիսկ թատերական ամենափայլուն ջրնադատականի հեղինակը վերստին Թումանյանը կլինի («Համլետի» շարչարանքի շաբաթը Թիֆլիսում):

Ամենուրեք Թումանյանը՝ գեղագիտական կայուն և ինքնատիպ ըմբռումներով, մտքի խորությամբ, հստակությամբ, հարստությամբ:

Այո՞, մենք սովոր ենք Թումանյանին ճանաչել իր գեղարվեստական երկերով, բայց ոչ իր քաղաքական մտածողությամբ, որ մեզ համար նույնքան թանկ է և արդիական, որքան իր գեղարվեստական ծառանգությունը:

Մեր ընթերցողին որքան լավ է ծանոթ արվեստագետ Թումանյանը, նույնքան քիչ է ծանոթ հրապարակախոս Թումանյանը: Այնքան քիչ է տպագրվել նրա հրապարակախոսությունը, որ «Գիթորի» և «Անուշի» ընթերցողը կարգին պատկերացում էլ չունի, թե դրանց հեղինակն ի՞նչ վիթխարի մեծություն է իրրև հրապարակախոս, հասարակական գործիչ, իրրև քաղաքական մտածող:

Մինչդեռ Թումանյանը, հայ դեմոկրատական ամենալայն խավերի գաղափարախոսը, հայ հասարակական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է առհասարակ: Հրապարակախոս Թումանյանը մեծ ազդեցություն է ունեցել ժամանակակիցների վրա, բայց այդ ազդեցությունը տարածվում է հետնորդներին վրա նույնպես: Նույնքան հստակ ու իմաստուն, որքան իր գեղարվեստական երկերը, Թումանյանի հրապարակախոսական հոդվածներն այնքան էլ հուզում, ոգևորում, ոգեշնչում են մեզ: Այդ հոդվածները ներկայացնում են քաղաքական և հասարակական հայացքների ամբողջական մի համակարգ, որի անկյունաքարը եղել է առաստիությունը՝ անխոտոր և անվերապահ:

Այս առումով նա հայ գրականության ամենարմատական, ամենակայուն ավանդների, Արվեստի—Նալբանդյան գծի ժառանգորդն է:

Քումանյանի լայն հայացքն իր ժողովրդի անցյալի և իր ապրած իրականության վրա պայմանավորված էր պատմության խորունկ զգացողությամբ: Ավելի լավ, քան որևէ մեկը, Քումանյանը հասկանում էր, թե ինչ բախտաբորչ նշանակություն է ունեցել Ռուսաստանը Հայաստանի պատմական ճակատագրում, բայց Ռուսաստանի դերն ու առաջնությունն Արևելքում նա դիտում էր ոչ թե իր հայկական զանգուկանությամբ, այլ համաշխարհային պատմական ընթացքի գլխավորությամբ: Քումանյանին, իհարկե, ծածոթի չէր Յ. Էնգելսի այն միացը, թե «Ռուսաստանն իրոք առաջադիմական դեր է կատարում Արևելքում», բայց, լինելով Արևելքի և Կովկասի հիանալի գիտակ, նա նույն հետևությունն էր հանգում պատմական գարավոր փորձի արամաբանության թելադրանքով:

Պատմական փորձով էին պայմանավորված հայ-ուսական հարաբերությունների Քումանյանական մեկնաբանությունը և ուսական կողմնորոշումը նույնպես: Նա հիանալի գիտեք, որ հայ-ուսական բարեկամությունն ամրապնդված է դարերի խորքից եկող ոչ միայն կուլտուրական, այլև ազգային դաշինքով, համատեղ թափված արյամբ: Գիտեք, որ արդեն իսկ «18-րդ դարի երկրորդ կեսից ի վեր թուրք հրամանատարությունը և նրա կովկասյան գործակալները շահում էին հրով, սրով ու գերեզմարությամբ մարդաթափ անել Հայաստանի այն մարզերը, որոնք կարող էին հենարան դառնալ իր հայացքը Աե. և Կասպից ծովերի ափերը գործած Ռուսաստանի առաջնադասման համար»:

Հայ և օտար աղբյուրներից Ռուսաստանի արևելյան պատերազմների պատմությանը քաջածանոթ Քումանյանը գիտեք, թե ինչ մասնակցություն են ունեցել հայերը ոչ միայն այդ բոլոր պատերազմներին, այլև ուս ժողովրդի մղած 1812 թ. հայրենական պատերազմին, որի համար Ալեքսանդր Առաջինը հատուկ հրովարտակով շնորհակալություն էր հայտնել Ռուսաստանում ապրող հայերին:

Այս ամենը լավ գիտեք Քումանյանը, բայց էլ ավելի լավ գիտեք և առավել եզրաբանությամբ նա շեշտում էր ուս ժողովրդի և ուսական զենքի փրկարար դերը հայ ժողովրդի կյանքում:

Ահա ինչու նա կարող էր գրել վստահ ու անվերապահ, թե Պետրոս Առաջինի ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը իր հայացքը դարձրել է զեպի Ռուսաստանը, «եվ ընգմիշտ Ռուսաստանը: Մինչև էսօրվան օրը», ... Հայ ժողովուրդը պետք է լինեք ուսի հեռ և իր կյանքի, գույքի ու պատվի ապահովության հայտը պետք է կապեք Ռուսաստանի հաղողության հետ», «Ռուսաստանում մենք գտնվում ենք աշխարհիս լավ ժողովուրդներից մեկի և լավ գրականություններից մեկի ազդեցության տակ»:

Քումանյանի ուսափրությունը լի էր ազգային արժանապատվությամբ: Ահա թե ինչու, երբ 1913-ին, հետադիմական «Նովոյե վրեմյա» թերթում հայտնվում է մի հողվածագիր, որ ուզում է փորձի ենթարկել հայ ժողովրդի ուսական կողմնորոշումը, բանաստեղծք բարձրացնում է իր լայնը. «Երեք ո՛վ եք, որ ուզում եք մեզ փորձի ենթարկել: Մի՞թե գուր եք հանդիսանում այն Ռուսաստանը, որին

վերադարձել են հայերը, մի՞թե գուր նրա հարազատ ներկայացուցիչն եք: Մի՞թե գուր նրա ոգու թարգմանն էք:

Ո՛չ, երբե՛ք: Մենք եկել ենք ու գալիս ենք գեպի մեծ Ռուսաստանը, դեպի մեծ ուս ազգը, և եթե սիրել ու հարել ենք — նրա՛ն, ոչ թե մեր ու մեզ նմաններին, որոնք միշտ եղել են փոքր ու անսիրելիս:

Այսպես է խոսել Քումանյանը և նրա խառքից երևում է, որ նա հստակորեն տարբերում էր երկու Ռուսաստան՝ գոլիցիներին ու վելիչկոներին բյուրոկրատական Ռուսաստանն իր մեծապետական շովինիզմով և դեմոկրատական Ռուսաստանը՝ իր վիթխարի կուլտուրայով և ազատագրական մեծ միախառնով:

Քումանյանն ապրեց ու ստեղծագործեց քաղաքական-հասարակական վերին աստիճանի բարդ ու դժվարին, խառն ու հակասական պայմաններում: Նա իր կենսափորձն ու ապրած ժամանակն արտահայտեց ոչ միայն գեղարվեստական ստեղծագործությամբ, այլ հրապարակախոսությամբ: Դրանք օրվա հրամարտականով, քաղաքական շիկացած պայմաններում և դրանց պահանջով թղթին հանձնված ու հրատարակված հողվածներն են, որ, թվում է, ամենից քիչ պիտի դիմանային ժամանակի քննությանը: Բայց մեծը միշտ էլ մեծ է մնում բոլոր ժանրերում ու ժամանակներում, և այսօր էլ նա իմաստուն գրույցի է նստում իր ժողովրդի հետ, որ այսօր էլ նրա գրույցի կարիքն ունի այնպես, ինչպես տարիներ առաջ: Նրա մտքերը հասցեագրված են ոչ միայն այն ժամանակվա ընթերցողներին, այլև մեզ՝ հետերդներին:



Հազիվ թե կարեքի է տանել, որ Քումանյանի կյանքն աշտի է ընկնում արտասովոր դեպքերում: Ո՛չ արկածներ, ո՛չ ումանտիկական սիրտ պտամություններ, որ պոետների կյանքը դարձնում են այնպես խորհրդավոր ու գրավիչ:

Հեռու ճամփաներ չի կտրել Քումանյանը, ինչպես իր ավագ ընկեր Ալեքսանդր Երովանզադեն կամ կրտսեր ընկեր Ավետիք Խասհայանը: Նրա ճամփորդությունները եղել են սակավաթիվ և պարտադրված: Մի անգամ եղել է Մոսկվայում և Պետերբուրգում, բայց դա ճամփորդություն էր կալանավորական վազոնով, երբ հակացարտական գործունեության մեջ մեղադրվող սյոետին տարել են դատավարության (1912): Կյանքի վերջում, 1921-ին, մի անգամ էլ Կոստանդնուպոլիս է մեկնել Հայաստանի օգնության կոմիտեի գործերով և վերադարձել է խախտված առողջությամբ: Վերջապես, 1922-ի դեկտեմբերին, ժանր հիվանդ Քումանյանին տարել են Մոսկվա բուժելու և այնտեղից, 1923-ի գարնանը, ՔիՖիխ բերել նրա գրք:

Եթե արտեց ավելացնեք Քումանյանի ուղեորությունը Կովկասյան ճակատի վայրերում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ նա հասել է մինչև Վան, ապա սպառած կլինեք իր բոլոր բացակայությունները Կովկասից՝ արքան կարճատե, նույնքան պարտադրված:

Պետեք մեզի՛ց՝ 1869 թվի փետրվարի 19-ին կոստ Գեղզ գյուղում: Լոտին, կամ ինչպես դին հայերն էին ասում՝ Գուգարաց աշխարհը, Գուգարքը: Ավետիք Քումանյանը համարում էր՝ համերակեն Կրկեր, հեթաթի, առասպելի մի վիզ-

1 Н. Разин, История военного искусства, ч. II, 1940, стр. 167.

աշխարհ, որի ամեն մի տեղյուհը ավանդավեպ է, ամեն մի քարը խոսում է հե-
րոսական անցյալից: Լոռուում է անցել պոետի մանկությունը և այդ «հոմերական
աշխարհն» անշնչելի կնիք է դրել նրա բովանդակ ստեղծագործության վրա: Լո-
ռուում ստացել է նախնական կրթությունը, այնուհետև սովորել է Քիֆլիսի Ներ-
սիայան դպրոցում, որ անավարտ է թողել՝ իր հետագա կրթությունն ու ուսուցա-
ցումը վերապահելով իրեն, իր շանքին ու ճաշակին, իր նախասիրություններին:

Քումանյանի հետագա կյանքը, սկսած 1883-ից, անցել է Քիֆլիսում՝ Ան-
գլերկովկասի վարչական ու կուլտուրական կենտրոնում, որ նաև արևելահայ մշա-
կույթի կենտրոնն էր մինչև հեղափոխությունը:

Այսպիսով, Քումանյանի ստեղծագործական կյանքի ամբողջ քառասուն տա-
րին անցել է Կովկասում, կովկասյան իրականության ոլորտներում: Բայց աշխար-
հագրական ու ժամանակային ընդգրկումով ոչ այնքան մեծ այդ կյանքն ամենա-
հարուստն է, որ ունեցել է որևէ հայ բանաստեղծ, համենայն դեպս՝ այդ ժամա-
նակներում:

Երևույթ, որ պայմանավորված էր բանաստեղծի ապրած ժամանակով և ունե-
ցած արտասովոր լայն շփումներով:

Քումանյանն ապրեց միջազգային և ազգային պատմության ահեղ մի դա-
րաշրջանում: Հայկական բազմադարյան տարեգրության ոչ մի ուրիշ ժամանակ
հույսերի այդքան մեծ վերելքներ ու վայրէջքներ, այդքան մեծ պատրանքներ ու
խորտակումներ չի խտացնում, որքան 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին
երկու տասնամյակները, իսկ դրանք պոետի ամբողջ գիտակցական կյանքի տա-
րիներն էին:

Քումանյանն այդ իրականության ոչ միայն ակնատեսը, այլև մասնակի-
ցը եղավ: Նրա կյանքն անցավ հրդեհների մեջ: Եվ տարիների հեռվից պոետի վա-
ղածամ ճերմակած կերպարանքը երևում է հրդեհի բոցերի մեջ, կարոտած հա-
յացքը Պառնասի բարձունքներին, միտքն անիրավված ժողովրդի հոգսերի ու ան-
կատար մնացած բանաստեղծական հղացումների հետ. մի ձեռքով գրելիս, մյուս-
ով փրկելիս:

Նա ուզում էր տիրություն անել իր ժողովրդին, կանխել ամեն մի վերահաս
աղետ, որ միշտ վերջինն է թվացել, բայց վերջինը չի եղել: Պետական գործիչ՝
պետություն չունեցող ժողովրդի մեջ, հայրենանվեր կյանք մի հայրենիքի, որ շատ
թշնամիներ ուներ ու քիչ բարեկամներ: Եվ նա բախտավոր եղավ այնքանով, որ
հասցրեց լինել իր ժողովրդի գոնե մի մասի փրկության ակնատեսն ու մասնա-
կիցը՝ կյանքով ու գործով:

Բնավ պատահական չէ, որ Քումանյանի ստեղծագործական կյանքի ամենա-
երջանիկ ժամանակը 20-րդ դարի առաջին երկու-երեք տարին եղավ՝ համեմատա-
բար անդորր մի դադար և՛ միջազգային, և՛ ազգային պատմության մեջ: Հինց
այս տարիներին է, որ նա ստեղծեց կամ ավարտման հասցրեց իր նշանավոր եր-
կերը՝ «Անուշ», «Սասունցի Դավիթ», «Փարվանա», «Լոռեցի Սաքուն», «Քմկա-
բերդի առումը» պոեմները և ուրիշ գրվածքներ:

Հասկանալի է նույնպես, թե ինչու այս գլուխգործոցներին հաջորդած մի քա-
նի տարում, 1905 թվի հեղափոխությանը համընկած ու հաջորդած հայ-թուրքա-
կան ընդհարումների ժամանակ, երկու ժողովուրդների սրբը պատյան դնելու
գործով անմնացորդ կլանված գրողը շատ քիչ բան ստեղծեց: Այն էլ հատկանալի

է, թե ինչու առաջին համաշխարհային պատերազմի և հայկական անլուր հետո-
րածների տարիներին հիմնիվեր ավերվեց պոետի և՛ կյանքը, և՛ ստեղծագոր-
ծությունը:

Եվ մեծ եղեռնի ահավոր պատկերները տեսած, 1915-ի զարհուրելի ամառը
էջմիածնի փախստական որբերին խնամած, «Հայոց լեռներում» և «Հայոց վիշ-
տը» հայրենասիրական խորունկ ոտանավորները գրած Ամենայն Հայոց Բանաս-
տեղծը կարող էր հոգեհանգիստ կարգալ իր ժողովրդի զոհերին:

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրեմեմբը ճի՛ն՝
Վերջին ճանգիցը կարգամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու ճովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փրված ու ցրված հազա՛ր-հազարով...

Կանգնեցի խոժոռ, մեճակ ու ճաստատ, Մասիօի նրման,
Կանչեցի բըշվառ էն հոգիներին՝ ցրված ճավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Մովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալիծո:
— Հանգե՛՛ք, իմ որբեր... իզա՛ր են ճուզմունք, իզա՛ր և անշան...
Մարդակեր գազան՝ մարդը՝ զեռ երկա՛ր էպես կը մնա...

(«Հոգեհանգիստ», 1916)

Ազգային և միջազգային աղետներն էին պատճառը, որ անփարատ տրամու-
թյուն բերին մշտածպիտ բանաստեղծի հոգուն, նրա պայծառ մտածողությանը տը-
վին հայեցողական երանգներ, տարան դեպի վշտի ու անէացման ոլորտները: Այս
հոգեբանության արտահայտությունն են Քումանյանի քառյակները:

Առատ, անհատ՝ Աստու նրման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ արբան-երբան մըտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ եոյս ու շրտայլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց ու փրկուելուց հոգնել եմ ես:

Սա փաստանքով լեցուն ներաշխարհն է այն գրողի, որ միշտ և առանց վա-
րանելու լքել է իր այնքան հրապուրիչ աշխատասենյակը՝ հասարակական գոր-
ծերի հրամայականով, և իր ապրած տագնապալի ժամանակներում շփոթելով ոչ
միայն հանգիստ, այլև իր տեղը, ի վերջո արել է ծանր խոստովանություն. «Ահա
լրանում է երեսուն տարին՝ ես շարունակ զանազան տեղեր եմ ընկնում, որոնցից
ոչ մեկն իմ տեղը չի: Երեսուն տարի է ես որոնում եմ իմ տեղը, դեռ չեմ գտել,
և երեսուն տարի է ես միայն պատրաստվում եմ իմ գործով՝ գրականությանը
զբաղվելու ու դեռ չեմ սկսել...»:

Ահա այսպիսի դժվարին կյանքով ապրող, բազմաշարժար տարեգրություն
ունեցող ժողովրդի բանաստեղծը պետք է, ի մի բերելով իր անձնական և իր ժո-
ղովրդի պատմական կենսափորձը, դարաշրջանի գեղարվեստական կյանքի օրո-
կարգ մուծեր իր գլխավոր գաղափարն ընդգեմ բռնություն և ի պաշտպանություն
հալածվողի ու մաքառողի: Մի զարմանալի հետևողականությամբ, որ հատուկ է
միայն մեծ արվեստագետներին, Քումանյանը զարգացրել է իր այդ գաղափարը

և՛ բանաստեղծութիւններում («Պանդուխտ եմ, քույրիկ», «Երազեցի շարունակ», «Հայոց լեռներում»), և՛ պատմվածքներում («Լեռների հովիվը», «Փիքորը», «Եղջերուն»), և՛ պոեմներում («Անուշ», «Հառաչանք», «Պոետն ու Մուսան»), և՛ ավանդույթներում («Չարի վերջը», «Պողոս-Պետրոս», «Փարվանա», «Ազադեա վաճառ», «Հսկան», «Քաղավորն ու շարչին»), և՛ քառյակներում, և՛ նույնիսկ, քարզմանութիւններում («Եփրիտի կայանավորը», «Մծիրի»):

Քումանյանի դավանանքն էր այն միտքը, որ նա արտահայտել է՝ «Հսկան» ավանդույթյան մեջ.

...Ասեմ մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրի՛ն տանչես:
Մեծ թե փոքր, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Ուր ծնվել է առեկ տակ,
Էս աշխարհում միտանակ,
Մի՛նք պակաս, մյուսը պվի,
Ողջն էլ գիտեն խրնդալ, ցավել,
Քը՛ պարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն աննազթ մի բան է ըսկ.
Կրշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մա՛ն...

Բանաստեղծի այս բառը գրվածքների բնարանը կարող է չլինել «Քաղավորն ու շարչին» ավանդույթյան վերջին տողերը.

...Ան՝ միշտ, քանի՛ որ կա
Շան՝ ու գործի՛, ըստեակ՝ ու տեք,
Ձի զինելու երկրի վրա
Ո՛չ չիտակ լսու՛մ, ո՛չ կրանք, ո՛չ սեր...

Քումանյանն ու հայտածանքի գեղմ հնչող այս ազդեղական շեշտ է տալիս Քումանյանի այնքան հրճվալից, այնքան կենսատեսաբան տեսող-
ծագործությունը:

Ժամանակակիցները զարմանքով են խոսել նրա մարդկային շքեղ, մեծահա-
բուտ խառնվածքի մասին: Ավետիք Իսահակյանը՝ Քումանյանի ասարիների ըն-
կերն ու մտերիմն այսպես է մտարհրել. «Քումանյանը կյանքով բռնկված մարդ
էր: Մեծ տեմպերամենտի տեր: Նրա էությունն ամբողջովին բաղձանք էր, տեն-
չանք, ցանկություն: Նրա սիրտը անկուշտ էր և անհազ. ուզում էր ամեն բան
տենենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ լինել»:

Որքա՛ն տարբեր համոզման ու բովանդակության մարդիկ հիացած են մնա-
ցել հրճվանքի ու զրույցի վարպետի, մարդկային այդ շուշլ տարերքի վրա: Ու
հոր այդ տարերքը չի հասել իր նույնքան շուշլ ըղձանքներին, կյանքի վերջում
տրել է արամալի խոստովանություն.

կյանքս աթի նրբապարակ, ոտի կոխան ամենի,
եռափան, խոսքան ու անգրտուղ անցավ առանց առդյունքի:
Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըրուսավ էս հողին...
Ի՛նչ պատասխան պիտի ես տամ: հող ու ծաղիկ ավաղին...

Տրտում: խոստովանություն, որ վկայում է Քումանյանի ողբերգական անբա-
վականությունն իր մեծադժվար կյանքից, բայց դա սերունդներին չի խանգարում
հերքելով հերքելու ասվածը և հաստատելու, որ այդ կյանքը ոչ միայն անպտուղ
ու ապարդյուն չի անցել, այլև տվել է մի արդյունք, մի եզակի արժեք, որ անդա-
նահատելի է ազգային գեղարվեստական կուլտուրայի գանձարանում:

Ո՞րն է այդ արժեքը:

Քումանյանն իրավ ասպարեզ, երբ եվրոպական և ռուսական պոեզիայում իշ-
խում էին սիմվոլիստ բանաստեղծները: Քումանյանը սրանց ժամանակակիցն էր:
բայց իր ստեղծագործության սկզբունքներով հեռու էր նրանցից: Եվ նա իր ժա-
մանակի պոետների գլխի վրայով ձեռքը մեկնում էր ետ, դեպի մեծ դասական-
ները: Ջուր չէ, որ Չարենցը Քումանյանին նվիրել է այսպիսի տողեր.

Ես կարդում եմ նրան ու ասում.— Այս հմուտ, հանճարեղ լոռեցին
Համերի, Կյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է Բեֆի,
Եվ քաս է բռնել նրանց հետ, մեծաբանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույք նստելիս:

Գեղարվեստական մտքի զարգացումն առհասարակ պատմական երևույթ է՝
պայմանավորված ամեն մի ժողովրդի պատմական կեցության մասին ու պայմաններով:
Եվ արվեստագետի նշանակությունը շափվում է այն դերով, որ նա խաղացել է
իր ժողովրդի, և ոչ միայն իր ժողովրդի, գեղարվեստական մտքի զարգացման
մեջ:

Եվրոպայում կլասիցիզմին ու լուսավորական ոեալիզմին հաջորդել էր ու-
մանտիզմը, ռոմանտիզմին՝ ոեալիզմը: Անշուտպ հետևողականության այս ըն-
թացքը ռուս գրականությունն ապրեց ավելի արագ: Սա աչքի առաջ ուներ Վի-
սարիոն Բելինսկին, երբ Պուշկինի մասին խոսելիս ասում է. «Մենք հանկարծ
ապրում ենք եվրոպական կյանքի բոլոր մոմենտները, որ արևմուտքում զարգա-
ցել է հետևողականորեն»:

Այն, ինչ ռուսական գեղարվեստական կուլտուրան ապրել էր 19-րդ դարի
առաջին տասնամյակում, հայկականն ապրում էր վերջին տասնամյակներում: Այս
ժամանակամիջոցում հայկական մշակույթն ավելի «հանկարծ ապրեց» գեղար-
վեստական զարգացման այն փուլերը, որ ռուսականը «հանկարծ ապրել» էր 19-րդ
դարի սկզբից: Ժիշտ է, նա անցել էր և՛ կլասիցիզմի, և՛ լուսավորական ոեալիզ-
մի փուլերը, բայց դեռ շարունակում էր ռոմանտիզմի (Բաֆֆի, Պեշիկթազյան,
Պատկանյան) հաղթահարման ընթացքը: Նա պետք է միանգամից արագացներ
այդ ընթացքը, կանգներ ընդհանուր գեղարվեստական մտածողության վերին մե-
կարդակին: Դա իրոք տեղի ունեցավ շենրհով գրական մեծ անհատականություն-
ների:

Եվ ազգային գեղարվեստական մտքի այս աննախադեպ զարգացմանը ներդրում

ամենից մեծ եղավ Քումանյանի գերը: Ահա ինչու Գերենիկ Գեմրեճյանը կարող էր գրել. «Հովհաննես Քումանյանը դարազուլու է մեր պրական կուլտուրայի մեջ»: Քումանյանի գեղազիտական ծրագիրն ինչ-որ շափով ազգային նոր գրական-լուսթյան հիմնադրի ծրագիր էր, մի յուրահատուկ ամբողջացումն ու ավարտումը եաշատուր Աբովյանի գեղազիտական ծրագրի:

Այսքան մեծ է Քումանյանի ստեղծագործության պատմական նշանակությունը:

Բայց նույնքան մեծ է նրա ստեղծագործության արդիական նշանակությունը ևս: Այս երկուսը միշտ չէ, որ համընկնում են. քիչ չեն հեղինակներ, և մեծ հեղինակներ, որոնց գեղարվեստական ժառանգության արժեքն ավելի պատմական է, նույնիսկ՝ բացառապես պատմական: Քումանյանը նրանցից չէ: Նրա գրվածքներում քիչ, շատ քիչ բան կարելի է գտնել, որ պատկանի բացառապես իր ժամանակին, միայն պատմությանը:

Նրա հերոսներն այսօր էլ խոսում են մեզ հետ: Բայց ամեն մի ընթերցող նրա հերոսներից, ինչպես բովանդակ ստեղծագործությունից կարող է վերցնել այնքան, որքան ըմբռնում է, որքան խելթը կտրում է: Քումանյանի խոսքը մատչելի է ամենքին, բայց ոչ ամենքին՝ հավասարապես. «Անուշը» ամենքին մատչելի է իբրև սիրո սրտառուչ պատմություն, բայց ոչ իբրև մարդկային էության մեկնություն, իբրև կեցության բանաստեղծական իմաստավորում: Մեկը վերցնում է մակերեսին եղածը, գոհանում է պատումի գրավորությամբ, մյուսը՝ պատումի լաթցրած խորհրդով: Իսկ «Անուշի» խորհրդը կյանքի հավերժության, մշտանորոգ կեցության հաստատումն է, որ կայծակելով անցնում է Քումանյանի բովանդակ ստեղծագործության միջով. հալածանք և մաքառում, սեր և ատելություն, վիշտ ու խնդություն, վրեժ ու շարություն, ամեն ամեն ինչ՝ բնությունը թե մարդիկ՝ իրենց իրարմեջ կրքերով, տենչերով, ըզձանքներով գալիս ու անց են կենում վերստին զոյանալու և վերստին անցնելու համար. «էսպես է կարգն աշխարհի», որքան էլ սիրած մարդուն կորցրած Անուշը տրամի ու զարմանա, «Թե ինչպե՛ս հանկարծ աշխարհը փոխվեց, ինչպե՛ս դատարկվեց կյանքում ամեն բան...»: Աշխարհն անընդհատ է փոխվում. «էսօրն ինչ է որ, էսօրն էլ կանցնի երեկ կդառնա» («Երեկ Անհունը», 1894), «Մենք ամենքս հյուր ենք կյանքում Մեր ծննդյան փուլ օրից, Հերթով գալիս անց ենք կենում էս անցավոր աշխարհից» («Թմկաբերդի առումը», 1902), «Էինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ. եվ ի՞նչն է հաստատ աշխարհի վերա... — Աշխարհում հաստատ մի բան կա մենակ, Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա» («էսպես չի մնա», 1908), «Աղբյուրները հնչում են ու անց կենում, Մարավները տենչում են ու անց կենում...», («Քառյակներ», 1922), «Մի հարցում տուր հըզոր մահին.— Մարգու քանի՞ սերունդ կանի Մի հրածեղտն աստեղային» («Միրիուսի հրածեղտը», 1922):

Քումանյանն իր ստեղծագործությամբ արտահայտել է այն, ինչ առհասարակ հատուկ է մարդկանց, մարդկային կյանքի ամբողջ բովանդակությանը՝ հրճվածքով ու տառապանքով, վշտերով ու տենչերով, հալածանքով ու մաքառմամբ: Ահա ինչու Քումանյանը, ինչպես ամեն մի ազգային մեծ բանաստեղծ՝ գրավել է ուրիշ ժողովուրդների համար ևս:

Ջուր չէ, որ ուս հայտնի բանաստեղծ Սամուիլ Մարշալը (չոտլանդական

մեծ բանաստեղծ Ռոբերտ Բիրնսի հայտնի թարգմանիչը, որ նաև Քումանյանի լավագույն թարգմանիչն է) այսպես է արտահայտվել հայ բանաստեղծի մասին. «Հայաստանը սքանչելի պոեզիայի և հիանալի պոետների երկիր է: Բայց, թերևս, 19-րդ դարի առաջին տասնամյակների երգիչներից ոչ մեկին այնպես չի բռնում ժողովրդական պոետի կոչումը, որքան Հովհաննես Քումանյանին: Նա ունի այն մեծնը, ինչով հարուստ է ժողովուրդը՝ բնության նուրբ զգացում, խորունկ իմաստություն և զխավորը՝ մեծագույն սեր կյանքի ու մարգու հանդեպ...»

Որպես ճշմարիտ պոետ, նա մատչելի ու թանկ է մեր երկրի նաև մյուս ժողովուրդներին, լայնորեն հայտնի է և նրա սահմաններից դուրս:

Քումանյանը ծանոթ է աշխարհի շատ ժողովուրդներին: Ոչ մի հայ գրող այնքան չի թարգմանվել Սովետական Միության ժողովուրդների և օտար լեզուներով, որքան Քումանյանը: Թուսերեն թարգմանվել է դեռևս 1893 թվականից, երբ նա դեռևս 23-ամյա բանաստեղծ էր:

Ահա Քումանյանի մասին ինչ է գրել Պավլո Տիչինան՝ ուկրաինական մեծահամբավ բանաստեղծը, որ հայ պոետին թարգմանել է բնագրից. «Ի՞նչ երջանիկ է Հայաստանը, որ ծնել է այսպիսի ճշմարիտ մի հումանիստ: Ի՞նչ երջանիկ է այն ժողովուրդը, որ դաստիարակել է այսպիսի սիրտ: Ե՛վ սիրտ, և՛ կամք, և՛ միտք: Քող ամբողջ աշխարհն իմանա, որ մենք կուլտուրապես անսահմանորեն հզոր ենք ու հարուստ: Քող համաշխարհային պոեզիայի աստղերը նայեն հայ հանճարի ստեղծագործության ջրերին»:

Այն կյանքը, որ անցկացրեց Քումանյանը, իր ժողովրդի պատմական կենսափորձը, որ նա խտացրեց իբրև գրող և հենց իր կենսափորձն ու հանճարը նրան հանգեցրին մեծ ու վսեմ գաղափարների, որոնք մարմնացում գտան իր բովանդակ ստեղծագործության մեջ. դրանք ժողովուրդների հավերժական բարեկամության, հալածվողի, տառապողի անվերապահ պաշտպանության, կյանքի ու աշխարհի ներդաշնակության գաղափարներն են:

«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդներն այդ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի և ամեն մեկն ունի իր դերը՝ երջանիկ դարձնելու ամենքին և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը».— գրել է Քումանյանը:

Հպարտությամբ կարող ենք ասել, որ հայ ժողովրդի մեծ բանաստեղծի բովանդակ ստեղծագործությունը ծառայել ու ծառայում է այդ նպատակին, որից ավելի ազնիվն ու վսեմը չի ճանաչում մարդկությունը:

ԼԵՎՈՆ ՀԱՆԿԵՐՈՒԹԱՆ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շո՛ւռ առը, խոփիդ դուրբան,
Օրհնյալ է աստված, հորովե՛լ:

Քաշի՛, եզր, ուտիդ մատա՛ղ,
Քաշի՛, քաշենք, վար անենք.
Ճիպտի՛ն արա, քըշի՛, հոտա՛ղ,
Մեր սե օրին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գրնաց,
Քյոխվեն կըգա, կըծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մընաց,
Կըբարկանա, կանիծի:

էն օրն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տերության,
Ի՛նչ տամ կոռին ու բեգյարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան:

Ձեռքս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցավի տեր,

Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արհ՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շո՛ւտ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնյալ է աստված, հորովե՛լ:

1887

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,
Երկինքը պայծառ,
Անհամար աստղեր
Ցուցըլում են վառ:

Քրնած է արդեն
Հովտում ողջ գյուղը,
Մըթնած ու լուռ է
Գյուղացու հյուղը:

Հոգնած գյուղական
Ընտանիքն ահա
Սրահում, կալում,
Կամ կըտրի վըրա:

Երկընքի դիմաց
Գըրկված են քրնած,
Վերեկցն, ասես,
Ժրպտում է աստված:

1887

ՀԻՆ ՕՐՀՆՈՒՔՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շըրջան կազմած,
Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հըսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նըրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
Ձի՛լ, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում—
Տաղ էինք ասում:

Երբ զըվարթածայն մեր երգը լըռեց,
Մըռայլ թամադեն բեխերն ոլորեց,
Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բուրբ մեծերը
Ու մեզ օրհնեցին.— «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

Ժամանակ անցավ, նըրանք էլ անցան,
Ջըվարթ երգերըս վըշտալի դարձան.
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,
Քե մեզ օրհնելիս
Ինչու ասացին.— «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել:
Այժմ, տրխորութեան թե քեֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեք զավակներին՝
Ձեր խոսքն ենք ասում.— «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

1887

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Եվ չերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախունն երամով:

Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տխրութեան ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր:

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմութուն,
Վեհափառ դայակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր ինձ հանգիստ առախս՝
Սըրտիս ականջին խոսելով թաքուն...:

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,
Ոգևորութեան հըզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեզ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծութեան հառաչանքներով
էդ անդընդախոր ձորերը լըցնեմ:

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սե, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
Ձեր անդունդներով եկեք շափվեցե՛ք,
Դուք է՛լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...:

1890

ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքև է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Ձարկում ավազին, շաշում է, ճըշում,
Ճըշում անհանգիստ, փըրփուրը բերնին:

Ինչպես ծերունին, ձայնով պառաված,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպես է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալիս ջըրի աղմուկին:

Այնինչ բընութեան զըվարթ համերգի
Ունկընդիրն անխոս, հավիտենական,
Ժայռը մըտախո՛հ՝ իր մըռայլ մըտքի
Նտեկից ընկած՝ լըսում է նըրան:

1890

Ա՛Մ, ԵՍ ԵՐԱՆԻ

Ա՛խ, ես երանի
Կայծակ լինեի,
Ռոտ-ճայթյունով
Մըռայլ ամպերից

Ժայթքեի ըմբոստ,
Զարկեի ուժգին,
Պատռեի խավար
Կամարը երկնի,
Ցույց տայի մարդուն
Գաղտնիքը վերին,
Որ տեսներ՝ այնտեղ
Ի՞նչ բան կա ահեղ,
Կամ ո՞վ է նրստած
Եվ ո՞ւր է աստված...

1891

ՍԱՐԵՐՈՒՄ

Մուժը իջավ, գետինն առավ
Քոշաքարա սարերում,
Գագաթների տեսքը կորավ
Ու խոր թաղվեց խավարում:

Երկինքն ամպած, տխուր ու սև
Լաց է լինում միալար,
Հեռո՛ւ, հեռո՛ւ լեռան ետև
Խաղում փայլակն անդադար:

Ահա փայլեց և մոտիկից,
Լուսափայլեց սար ու ձոր.
Ոլորվելով սարի տակից
Գետը վազում է պըղտոր:

Մենակ, անքուն հովիվն ահա
Կանգնած իրեն արխաջում,
Արթուն աչքով հըսկում է նա,
Գողից երկյուղ է քաշում:

— 20 —

Փայլակն ահա փայլեց կըրկին,
Նըրա կարմիր լուսի տակ,
Բինից հեռու, երևացին
Երկու մարդու կերպարանք...

Ամպը գոռաց ու տրրաքեց,
Եվ անձրևը սաստկացավ,
Հովիվն «հե՛յ հե՛յ...» աղաղակեց,
Շունը թևից վեր կացավ...

Հրացանները որոտացին,
Ոչխարն եղավ ցանուցիր,
Հավարն ընկավ, ողջ զարթնեցին...
Գիշերը մո՛ւթն, ակնակիր...

1891

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

էյ աստղեր, աստղե՛ր,
Երկնքի աչքեր,
Որ այդպես վառ-վառ
Ժըպտում եք պայծառ.
Ժըպտում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ
Աշխույժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ
Թըրվոում էի
Ու ցավ շունեի...
Ժըպտում եք այսօր,
Երբ թույլ ու անզոր,
Կորած հույսերիս
Կըսկիծն եմ լալիս...
Կըժպտաք նաև
Շիրիմիս վերև...

1891

— 21 —

ՈՒՌՈՒՄ

Դո՞ւ ես, իմ սիրո՞ւն;
Այն շքեմադ ուրուն,
Որ զըրկում է ինձ
Գիշերը քընից:

Դո՞ւ ես զըրկարաց,
Հայտնըփում հանկարծ,
Ուզում ես զըրկել,
Ու հանկարծ, մեկ էլ
Խավարի միջում
Սաճում ես կորչում...

Դո՞ւ ես ծիծաղով
Կամ ծանոթ ձայնով
Մեր սիրած երգի՝
Իմ լուս սենյակի
Մոտից հեռանում
Գիշերվա մըթնում...

Ասա՛, իմ սիրո՞ւն,
Դո՞ւ ես այն ուրում,
Որ զըրկում է ինձ
Գիշերը քընից...

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱՊՍՏՈՒՄ

Անապատի մեջ խավար ու տխուր,
Ծրված քարերից մի քարի վըքա,
Գլխակոր նըստած, մտախաճ ու լըւռ՝
Աշխարհի մասին մըտածում էր նա:

Նրա ճակատը մութն էր ավելի,
Քան անապատը գիշերվա մթնում:

Մտածում էր նա՝
Մարդկային կյանքի մութ անապատում:

Աչքի առաջև անց էին կենում
Սըրով, արյունով փուծադուժ ազգեր,
Անճար ու տըրկար լաց էին լինում
Աղքատը, այրին ու որբը անտեր...

Եվ անապատում, մի քարի վըքա
Միայնակ նըստած մըտածում էր նա...

1892



Մութն էր երկինքը, ոչ ոք չըտեսավ
Բնության գործը գիշերվա մթնում,
Միայն առավոտ, երբ որ լուսացավ,
Փայլում էր ցողը կանաչ դաշտերում:

Լուս էր պոետը, թախիժը դեմքին,
Ի՞նչ էր մտածում՝ մարդիկ շիմացան.
Սակայն տողերում, երբ որ կարդացին,
Զգայուն սրտի արցունքը տեսան:

1892



Ինձ մի՛ խընդրիր, ես չեմ երգի
Իմ տխրությունն ահագին,
Աղեկըտուր նըրա ձայնից
Կըխորտակվի քո հոգին...
Ոչ, քեզ համար այսպիսի երգ
Նրգելու չեմ ես երբեք:

Ծս երգեցի սարի վըրա,
Ու շորացան խոտ ու վարդ,-
Անապատ է այնտեղ հիմա,
Սև՛, ամայի անապատ...
Հառաչանքից այրված սարո՞ւմ
էլ ծաղիկ չի դալարում:

Բույր ու զեփյուռ ես կուզեի
Ծվ արշալույս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հյուսեի
Ու երգեի քեզ համար...
Բայց իմ սիրտը բըռնած են դեռ
Հուր հառաչանք, սև գիշեր:

1892

ԿԱՐՈՏ

Սըրտիս թագուհի,
Կարոտել եմ քեզ.
Ա՛խ, ի՛նչ կըլինի
Հանկարծ հայտնըվես
Եվ, թեկուզ իսկույն
Դարձյալ շրքանաս,
Ինչպես գիշերվան
Կարճատև երազ:
Միայն թե տեսնեմ
Պատկերըդ մեկ էլ,
Միայն թե ասեմ՝
Ո՛նց եմ կարոտել:

1892

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Կովկասի ամպած երկինքը պարզեց,
Հեռու հարավում շողակի նման
Հսկա Մասիսի գագաթը փայլեց՝
Վիթխարի Կազբեկ սարի հանդիման:

«Ողջո՛ւյն, բարեկամ», Մասիսն որոտաց
Թունդ կայծակների ձայնով ահաբեր,
Եվ մեծ Կովկասի լեռները հանկարծ
Խուլ դղրդացին— «Ողջո՛ւյն քեզ, ընկեր»:

Մենք հին փառքերով ու նոր ցավերով
Ազգականներ ենք իրար խորթացած,
Մտաբերո՞ւմ ես, որքան ենք սիրով
Միասին կանգնել փոթորկի դիմաց:

Բայց ի՛նչ փոխվել ես մի քանի դարում,
էլ չես շողշողում ամպերից վերև,
Հենց փաթաթվել ես թխպոտ ամպերում,
Չես ուզում ասես էլ տեսնել արև:

Այստեղ տուր ձեռքդ, մտեցիր, ընկեր,
Մի նայի՛ր, ետև, ի՛նչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում:

Մոտեցիր..., իմ հին ազգական,
Եվ թող որոտան լեռները բոլոր,
Թող լինեն վկա մեր նոր հաշտության,—
Խոսքը վերջացրեց Մասիսն ալևոր:

Կովկասի երկինքն ամպեց վերստին,
Ճայթեցին անթիվ կայծակներ ահեղ,
Այն սեզ լեռները ողջունում էին
Եվ ուրախության արցունքն էր հեղեղ:

1892

Ն. ԲԱՐԱԹԱՇՎԻՆՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱ

Մխիթարութիւն, սգավոր վրաստան,
Ինչո՞ւ է տխրել դեմքդդ այրական.
Շարժված անճունը հանգած պոետի
Շարժե՞ց վերստին ցավը քո սրտի,
Թե նորա մըթին գերեզմանը խոր
Որք հոգուդ համար շատ է անավոր...

Կը թաղես, այո՛, դարձյալ քո երգչին,
Բայց նորա վառած զգացմունքներին
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կրման հավիտյան
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր:

Եվ քե՞զ, անցավոր շիրիմից շիրիմ,
Հեզ ժողովրդի երգիչ մտերիմ,
Քե՞զ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով:
1893

ԱՂԲՅՈՒՐԸ

Սարի լանդին, ժայռի տակ,
Ջուր էր բրխում սառնորակ
Ու ցրվելով խոտերում
Իզուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր-գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ
Ջրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ՝ էն տարից՝
Շոքից հանած շոր լեզուն.
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նալեց աստղծուն:

Անցվորն եկավ տոթակեզ,
Սառն աղբյուրին որ հասավ,
Կըլխարկն առավ ու շոքեց՝
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տըվավ իր օրհնանցը
Անցվոր մարդը էն բարի.
«Բո շինողի օր-կյանքը
Ջրի նըման երկարի՛...»:

1892

ԱՅՎԱԶՈՒՄԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

Ելած՝ օվկիանի անզուսպ ալիքներ,
Մանրը հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, գոռալով ահեղ,
Եվ մըրրիկն ուժգին շքնչում էր այնտեղ
Անեզք ու անվերջ
Տարածության մեջ:

«Կանգնեցե՛ք», գոչեց, վերձինը ձեռքին,
Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Եվ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կըտավի վըրա
Կանգնած են՝ ահա:

1893

ՀԱՅ ՈՒՒՏԱՎՈՐՈՒՆ

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,
Օրանի քեզ, հայ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Այրարատ:
Զեփյուններով, ծաղկանց բույրով,
Ինչպես ծնող սիրագորով
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Գեղամ սարերն ու Արագած.
Եվ հարազատ աչքի նրման
Քեզ կը ժպտա վճիտ Սեան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վետ-վետ,
Փայլփլում է ծփանքներով,
Հորինում է լույսերի ծով,
Եվ մերթ վշտով ու տխրությամբ
Սեանում է, ինչպես մութ ամպ...

Հապա էն սա՛րն, էն սար հսկան,
էն սարերի սարն ու արքան,
Լազուր երկնի ծոցը մըտած,
Ճերմակ գլուխն ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում
Քու առաջնն ու քու սրտում...
է՛, նա արդեն քանի սև դար
Պերճ գագաթովն իր ձյունափառ
Շողշողում է, փայլատակում,
Եվ ուխտավոր հայի հոգում
Հպարտության ծնում թունդեր
Եվ սիրելի երազ՝ թե դեռ
էն երկնահաս Մասյաց կատար,
Ուր հին տապանն առավ դադար,
Դադար կանոնն փառքերն մեր հին,
Որ նորափայլ իշնեն կրկին...

1893

ԽՐԾԻԹՈՒՄ

Մանուկները գոռում-գոշում,
Լալիս էին աղեկեզ.
— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Հիվանդ նանը տեղի տակին
Մանր տընքաց տըխրալի.
— Մենք հաց չունենք, ես ձեզ մատաղ,
Ապին գնաց հաց բերի:

— Զէ՛, խաբում ես, սուտլիկ նանի,
Դու ասացիր՝ քարափին
Երբոր զարկի շողքն արևի,
Հաց կըբերի մեր ապին:

Արևն եկավ անց էլ կացավ,
Մենք սոված ենք դեռ էսպես.
Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նանի, հաց տուր մեզ:

— Հաց չի գտել ձեր ապին դեռ,
Տուն չի գալիս սևերես.
Քիչ էլ կացեք, իմ բալիկներ,
Հիմի այնտեղ կերթամ ես...

Մի մեծ ապի կա երկնքում,
Նա շատ ունի այնտեղ հաց...
Նա ձեզ այնքան շատ է սիրո՞ւմ...
Նա չի թողնիլ ձեզ սոված...

Կերթամ այնտեղ, նրան կասեմ,
Որ սոված եք, իմ բալեք,
Զեզ համար շատ-շատ հաց կուզեմ,
Որ դուք ուտեք, լաց չըլեք...

Ասով, սեղմեց սովալըլուկ
Զավակներին իր լանջին,
Ու շրթունքի վըրա դալուկ
Սառավ համբույրը վերջին:

Կրունքն էլ հետ շրթացվեցան
Բազմաչարչար մայրիկի:
Աչքը փակեց ու հավիտյան
Գրնաց, որ հաց ուղարկի:

Մանուկները գոռում-գողում,
Լալիս էին աղեկեզ.
— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում:
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

1893

Եթե մի օր, անո՛ւշ ընկեր,
Գաս այցելու իմ շիրմին,
Ու նորաբույս վառ ծաղիկներ
Տեսնես փրոված շորս կողմին,

Դու չը կարծես, թե հասարակ
Մաղիկներ են ոտքիդ տակ,
Կամ թե գարունն է այն քերեկ.
Իմ նոր տունը զարգարել:

Նրանք չերգած իմ երգերն են,
Որ սրտումըս ես տարա,
Նըրանք սիրո այն խոսքերն են,
Որ դեռ չասած ես մեռա:

Նրանք իմ շերմ համբույրներն են,
Այն աշխարհից ուղարկված,
Որի ճամփին քո առաջև
Գերեզմանով է փակված...

1894

ԵՐԿՈՒ ԱՆՎ ԱՄՊ

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրենց հանգրստության
Ծրկու սև ամպ, հողմի առաջ,
Գրնում էին հալածական:

Հողմը սակայն շար հոսանքով
Թափնել, ջոկել չէր կարենում,
Ինչքան նըրանց լայն երկնքով
Դես ու գեն էր քըշում, տանում:

Ու անդադար գրնում էին
Քըշված հողմի կատաղությանը,
Իրար կըպած ու միասին,
Ծրկու սև ամպ, երկու սև ամպ...

1894

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Կըռունկն երկընթում ճամփա կըհանի,
Կը՛ռ, կը՛ռ, ձեն կուտա էն խավար ամպում.
Ղարիբ մոլորել չի՛տե ինչ անի
Անգութ աշխարհքում, անծանոթ ճամփում:
Ա՛խ, էս սև ճամփին, էս դըժար ճամփին
Արդյոք ո՛ւր կեղթա, արդյոք շա՛տ մընաց,
Ո՛րտեղ կըհատնի էս օրը արդյոք,
Ո՛րտեղ կըհանգչեն ոտներըս հոգնած:
է՛յ, բարով գնաս, սիրելի թըռչուն.
Գարուն կըբացվի, ետ կուգաս կըրկին,
Զագով-ընկերով կուգաս դեպի տուն՝
Քո բունը հերվան, շինարու գըլխին...
Ա՛խ, ես բընավե՛ր, ընկած սարե-սար,

Ու քաշ եմ գալի, ու քաշ եմ գալի,
Անքուն ջրի պես դիպչում քարե-քար,
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալի:
Ամեն քար, աստված, իր տեղն է անժաժ,
Հենց ես եմ մենակ տեղից գըլորվել.
Ամեն հավք, անգո՛ւթ, իր բունը ունի,
Հենց ես եմ դարիք ճամփում մոլորվել...
Ա՛խ, էս սև ճամփեն, էս դըժար ճամփեն
Արդյոք ո՛ւր կերթա, արդյոք շա՛տ մընաց.
Ո՞րտեղ կը հատնի էս օրը արդյոք,
Ո՞րտեղ կը հանգչեն ոտներըս հոգնած...

1896

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հա՛, կյանքում ես միշտ այսպես եմ եղել—
Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ.
Հազիվ ուզել եմ անհոգ ծիծաղել
Եվ սրտիս խորքից հառաչել եմ «ա՛խ»:

Գարնան երկինք է իմ դժբախտ հոգին—
Մերթ մութ ամպամած, մերթ մեղմ ու պայծառ,
Եվ տարերքների ուժով ահագին
Շափառուկները ճընշում են իրար:

Իմ հոգին է այն երկնքի նման,
Որ ծավալվում է ձեր գլխի վերև,
Ձեզ անհայտ, գաղտնի—տեսնում է շատ բան
Եվ մոտ, կ՛ հեռու, կ՛ փայլուն, կ՛ սև...

Շեշտակի թափով, բուն ու մոլեգին
Ամենայն կողմից ցուանում, հոսում,
Լցվում են նրանք իմ անտակ հոգին
Եվ ալեկոծում, չարչարում, հուզում:

Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,
Որ թաքնված են լուսթյան ետև,
Հազար ահանջով ձայներ եմ լսում,
Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:

Եվ ամեն կողմից ձայնե՛ր ու ձայնե՛ր,
Քնքուշ, կատաղի, թախծալի, զվարթ...
Եվ ես ընկնում եմ, համբառնում եմ վեր,
Անզուսպ մոլեգնում կամ ծփում հանդարտ:

Լրբենի մի ձայն,— և ինչպես մորթիկ
Վազում է արյունս իմ երակներում,
Պայթում է սիրտս, և օձի նման
Բարձրանում եմ ես, թշշում, զալարվում:

Մի ձայն էլ ահա,— տկա՛ր, խղճա՛լի...
Եվ ես փոխվում եմ նորից ու նորից.
Ա՛հ, աստված, աստված, իմ փոթորկալի
Հոգին տանջվում է այսքան ձայներից:

1897

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ա

Տե՛ր, մինչև ե՞րբ մեր աչքերը քեզ մընան.
Մեր գույժն հասավ, հեռո՛ւ-հեռու ազգերին,
Աշխարհ լըցվեց մեր աղաղակ, մեր կարկան,
Ու չի անցել մեր տանջանքը տակավին:

Ինչո՛ւ, աստված. որե՛րն արդյոք հայրական
Գութըդ կօրհնեն կտոորածի էս ձորում,
Թե՛ տարագիր պանդուխտները կըպատմեն
Ողորմությունդ օտար-օտար ափերում:

Մի՞թե, աստված, դեռ քաղաքան շրտեսար
էսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,
Մի՞թե, աստված, հանելի շենքեզ համար
Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր գրվարթուն:

1898

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԵՍՂՄՈՍՇԵՐԻՑ

Աստված, ինչպես ծուխ օրերըս անցան,
Ոսկերքըս, ինչպես խրոխլ, շորացան,
Միրտըս ցամաքեց, ընկա խոտի պես,
Ճամփես մոռացա ահագին վըշտես:

Հացըս նախատինքն եղավ օտարի,
Հանգիստըս ճամփում հայածանքների,
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բոթ,
Գիշերը լացի մինչև առավոտ:

Տըքնեցի, ինչպես բու ավերակում,
Ինչպես միայնակ ճնճողով՝ տանիքում...
Աստված, տանջանքից ուժերըս հատան,
Մի՞թե չըհասավ ժամը փըրկության:

1898

ՏՈՒՄ ԳԻՇԵՐ

Տխո՞ւր գիշեր, տըրտում գիշեր,
Վիշտս ու նա նեղ սարթուն մենակ,
Եվ ուզում ենք մի բավ միջի,
Ի՞նչ ո՞րտեղից փրոսք գրուանք:

— 34 —

— Ասա՛, իմ վիճտ, իմ սև թախիծ,
Ա՛յ անբաժան կյանքիս ընկեր,
Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից,
Ի՞նչ դեպքով ես ինձ հետ ընկել...

Ու գալի՛ս են սև-սե հուշեր...
Տըխո՞ւր գիշեր, տըրտում գիշեր....

1898

ԴՈՒ ԶՈ ՃԱՄԹԵՆ

Դու քո ճամփեն գնա, քույրի՛կ,
Եվ թող լինի նա պայծառ:
Ինձ մի՛ ժրպտա, ինձ մի՛ սիրիք,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Ելած կյանքի ամեն ճամփից,
Կարոտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին:

Մի ձեռք չըկա, մի գիրկ չըկա՝
Պահի նըրան իրեն մեջ,
Խենթ, խելագար գընում է նա
Ձըգտումներովն իջ անվերջ:

Եվ ո՞վ գիտի՝ դեռևս անմեղ
Քանի հոգի կը տանջի,
Եվ ո՞վ գիտի՝ ինչ մութ, ահեղ
Անապատում կըհանդիպի...

Դու քո ճամփեն գնա, քույրի՛կ,
Եվ երբ լինենք մենք հեռու,
Աղոթք արա, որ մյուս անգրան
Ձը հանդիպենք իրարու:

1908

— 35 —

Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վըրա
Անցնում օրերն, անո՛ւշ, անո՛ւշ,
Անըրջային, թեթևասա՛հ
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:

Ահա բացվեց թարմ առավոտ
Վարդ է թափում սարին-քարին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Շընչում բուրմունք եղեմային:

Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վըրա
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,
Շըվին փըշեց հովիվն ահա—
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ:

1902

ՊԱՆԴՈՒԽՍ ԵՄ, ՔՈՒՅՐԻ՛Կ

Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ օրերից
Գընում եմ դեպի մի անհայտ երկիր՝
Կըտրված կյանքի ամեն կապերից,
Մենակ, տարագիր:

Հալածում են ինձ անցած օրերը,
Ներկա ժամերը հանգիստ չեն տալի,
Հոգնած են վաղուց իմ թույլ ոտները,
Ու արտաս ավելի:

Բայց գընում եմ ես հալածված նորից,
Ամեն վայելքից ու բախտից հեռո՛ւ,
Նույնիսկ հայրենի հողից ու ջրից,
Ինչպես եղջերու:

— 36 —

Եվ դու հանդիպած իմ դրժար ճամփում,
Ասում ես՝ արդեն բախտավոր եմ ես.
Իզուր եմ փախչում, իզուր գանգատվում.
Ու տանջվում այսպե՛ս...

Օ՛վ դու միամիտ: Բայց, երկինք վըրկա,
Չեմ եղել երբեք ես այդքան ըստոր,
Որ կարենայի այս դաժան բանտում
Լինել բախտավոր:

Չեմ եղել, քույրի՛կ. բոլոր օրերը
Տառապանք բերին, կորուստ ու կըսկիծ,
Եվ կյանքի հաճույքն, և կնոջ սերը
Ընկան իմ սըրտից:

Ես էլ վիրավոր գընում եմ փախած՝
Անհայտ օրերի խավարի ընդդեմ,
Ամենքից զրզված, ամենքին թողած,
Քեզ էլ կը թողնեմ...

1902

ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Երանի՛ էր ձեզ, գովվա՛ծ երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի փըրկության:

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խրո՛խտ, վեհապա՛նծ, թեպետև գերի,
Եվ ձեր քընարի ձայներն երջանիկ՝
Լիքը հըրճվանքով գալոց օրերի:

— 37 —

Այն, նա հողատէկց մեր աշքի առջե
Եվ մեր ըզգայուն սրբութեն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի քրման՝
Մեր անապատում չքրացան անհետ:

Եվ մենք խորտակված մեր կյանքի ձեռքից,
Անհույս ազալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քրնար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրբութից և՛ երգ, և՛ աստված:

1902

ՀԱՅՈՑ ԼՍՐՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դրժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձրը լեռներում:

Բայց բանի առջում շեկ անապատի
Օրդուները սև
Իրաբու հասե
Սկան գարկեցին մեր քարավանն աստվածի
Հայոց լեռներում,
Արևոտ լեռներում:

Ու մեր քարվանը շրփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարտո՛
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՛րբ կըբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

1902

ՀԱՅՈՑ ՎԻՇԵԸ

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Կող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերթ հոգեած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատուկ:

Ոչ հատուկն է, գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:

1902

ՄԵՐ ՈՒՒՅԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ-դեպի լույս,
Ու գընում ենք մեր ճամփով,
Մըրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կըրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մըրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դըրոշը սըրբազան,
Ու մենք շունենք տեղ ու դադար—
Նրկրից երկիր ցիրուցան,

Բայց գընում ենք մենք անվեհեր
Զարկերի տակ շար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

1902

Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում՝
Մանր վեհությամբ իջած երկնքից,
Այստեղ սրբազան մի շունչ է բուրում,
Մեզ վեր է տանում աշխարհի կյանքից:

Մի շունչ, մի խորհուրդ, մե՛ծ, հըրաշալի՛,
Խառնված հայոց մեր խորունկ հոգուն,
Նվ որքա՛ն դարեր, դարեր են գալի,
Մենք միշտ հավատով, մենք միշտ՝ աննկուն:

1904

Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն,
Ու նրանց միջում հավիտյան սիրուն
Կյանքը՝ հարաշարժ հոսանք է վարար...
Նորանոր ուժեր ճնշում են իրար,
Ելնում են թափով,
Իջնում տագնապով
Ու կենդան, կայտառ,
Միշտ նոր ձևի մեջ,
Անդուլ, անդադար
Հոսում են անվերջ...

էն լայն հոսանքի, մեծ աղմուկի տակ
Հավիտյան անշարժ, համր ու անգիտակ,
Անտարբեր էն տաք, եռուն պայթարին,
Անցնող օրերին, ապրող աշխարհին՝
Հզորն ու տկար
Ընդմիշտ հավասար,
Անխտիբ հալվում
Մեծ հանգրստի մեջ,
Հալվում են, ձուլվում,
Հանգչում են անվերջ...

1907

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ (ժողովրդական)

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լրցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըսուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կըշորորաս ճուտիկներով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Երբ կըկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,
Սարեր ձորեր զվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտս կըհանես.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

1907

ՎԱՅՐԷՋՔ

Քառասուն տարի բըռնած նահապետք՝
Շիտակ, անվեհեր
Գընում եմ ես վեր—
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պարծառ:

Քառասուն տարի նամփուլն արևաբոս
Անցել եմ էսպես
Ու հասել եմ ես,
Խաղաղությանն եմ հասել ես հարստ:

Թողել եմ ներքե, մեծ լեզուն տակին,
Ծ՛վ փառքը, կ՛ գանձ,
Ծ՛վ քեն, կ՛ նախանձ —
Ամենը, ինչ որ ճընշում է հողին:

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես—
Տեսնում եմ նորից
Իմ լերան ծերից—
էնպես հասարակ, դատարկ են էնպե՛ս...

Եվ ես իմաստունն ու քնաբու քեզին,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով
Իջնում եմ զըվարթ իմ լերան ետև...
1909

ՍՈՒԱԿԻ ՎԻՇՏՁ

(Ժողովրդական)

Մի օր տեսավ օտար թրոշուն՝
Սոխակ կուլար կուց-կուց արուն.
— Ինչո՞ւ, ասավ, սոխակ սիրուն,
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն.
Ինչո՞ւ, մինչ ե՞րբ դու երթումս,
Տըխուր կուլաս շոր թրփերուն,
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
էդ ճըսվառն քո երգերուն,
Հապա ինչո՞ւ դու օրն ի բուն,
էս լուս ու մութ առափոտուն,
էս շատ անուշ զով հովերուն
Ախ ու վախով կուլաս արուն:
— Ի՞նչ կըխոսես, օտար թրոշուն,
Խենթ ու խելառ դու քընտրուն.
Զըմե՛ն նստեց մեր տարեգուն,

Կըտրեց ջրիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,
Ի՞նչպես չըլամ կուց-կուց արուն:
էլի ասավ օտար թըռչուն.
— Հերիք դու լաս, սոխա՛կ սիրուն.
Հերիք դու լաս կուց-կուց արուն.
էլի կուգա քեզ նոր գարուն,
Արև ծագե էս վայրերուն,
Հալին ձյուններ մեր սարերուն,
Բացվին ջրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն
Բարև կուտաս ծաղիկներուն:

1910

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԸ

(ժողովրդական)

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Զուր է գալիս, անցնում շենով:
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Զեռքն ու երես պաղ լըվացել,
Լըվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էսպես.

— Դու ո՞ր սարեն կուգաս, ջրրի՛կ,
Իմ պաղ ջրրիկ ու անուշիկ:
— Ես էն սարեն կուգամ մըթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին:

— Դու ո՞ր առուն կերթաս, ջրրի՛կ,
Իմ պաղ ջրրիկ ու անուշիկ:
— Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

— Դու ո՞ր այգին կերթաս, ջրրի՛կ,
Իմ պաղ ջրրիկ ու անուշիկ:
— Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

1911

ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

(ժողովրդական)

Ա

Կըտուցը լիքը արին
Կաքավը նըստել քարին,
Զեն է տալիս, կըղկըղում,
Գանգատ անում հավքերին.
Ա՛յ քուրիկներ,
Ա՛յ հավքեր:

Բուն շինեցի էն սարում,
Զագ հանեցի աննըման.
Իջավ՝ խաղա մարգերում,
Եկան կալան ու տարան,
Ա՛յ քուրիկներ,
Ա՛յ հավքեր:

էն կարկաշուն վըզիկը
Սուր դանակով զարկեցին.
էն կարմըրիկ կըտուցը
Հուր կըրակին ձըգեցին,
Ա՛յ քուրիկներ,
Ա՛յ հավքեր:

էն մանրաքայլ տոտերը
Կըտրատեցին ծունկն ի վար,
էն խատուտիկ փետուրը

Ո՛րն արին ձոր, ո՛րը՝ սաք,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավթե՛ր:

Էն, որ սարերն էր հասել,
Փամին եկավ գում արավ,
Էն, որ ձորերն էր անցել,
Հեղեղն ելավ ու տարավ,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավթե՛ր:

Ք

Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էն բընում.
Հանգիստ չունեմ, դադար չունեմ էն բընում:
Զօրը մենակ՝ չեմ դիմանում էն բընում,
Գիշերն անտակ՝ չի լուսանում էն բընում,
Անցած օրերն եկել նորից էն բընում,
Գեւ են դառել, ուտում են ինձ էն բընում:
Էլ չի մընում իմ սըրտիկը էն բընում,
Ցավով լիքը, լացով լիքը էն բընում:

Գ

- Սե կաքավիկ, ո՞ւր պիտի դու երատես հիմա:
- Չորուկ բարդի ծառի վրա:
- Սե կաքավիկ, թե որ նըրա տերը գա՛ ո՞ւր:
- Լացող ուռու ճյուղքին տըխտաք:
- Սե կաքավիկ, էն տեղից էլ զըեն որ քե՛զ:
- Կըրակ կըլնեմ. կէրեմ ինձ ես...

Գ

Վա՛յ կաքավիկ,
Սե կաքավիկ,
Չալիկ-մալիկ
Սիրուն հավիկ:

Վա՛յ քո հուսիկ,
Էն խորտսին,

Վա՛յ սըգավոր
Իր մոր սըրտին:

Էլ քես կարդում
Հանդ ու արտում,
Մեր սարերից
Կորար տըրտում:

Վա՛յ կաքավիկ,
Սե կաքավիկ,
Վա՛յ իմ կորած
Սիրուն հավիկ:

1911

◆

Տաղով եկապ,
Ախով գնաց Սայաթ-Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

1913

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

(Բառաված)

Մեծ գոլն քնկավ, ձընհալն քնկավ,
Հողը շընչեք, քեֆյուտն եկավ,

Արևն ելավ վառ ճառագած,
Հարցմունք արավ հողին հակված.

Արևը

— Սիրուն աղջի՛կ, ի՞նչ դըրկեմ քեզ:

Աղջիկը

— Ես ծաղիկներ կուզեմ պես-պես:

Արևը

— Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
Սառցի ներքև քոնա՞ծ եք դեռ.
Դո՛ւրս եկեք, դո՛ւրս,
Շո՛ւտ, դեպի լուս,
Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քրնած սիրուններին՝
Ծաղիկներին ու ծիլերին:

Զբերը

Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ,
էս ի՛նչքան ուշ...
Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
Քա՞նի քրնեք, վե՛ր կացեք, վե՛ր,
Խընկածաղիկ,
Ծընկածաղիկ,
Արևքուրիկ
Շար-շարուրիկ
Հասմիկ, հափրուկ,
Ամանկոտրուկ,
Հորոտ-մորոտ,
Աղավնարոտ,
Կոճղեզ, ճանդուկ,
Քուրդ, ճարճատուկ,
Հարսնածաղիկ,

— 48 —

Ոսկեծաղիկ,
Խաշխաշ, ծրծուկ,
Վարդ, երիցուկ,
Մուշկ-վաղմեռուկ,
Պուտ, վառվրուկ,
Շըրվան, մըրվան,
Շուշան, ուհան,
Ապրեմ-չապրեմ,
Բուրեմ-մարեմ...
Քանի՞ քրնեք հողի միջին,
Ծկեք էստեղ, սարի լանջին,
Առվի ափին, հով ըստվերում,
Ժայռի տակին, հովիտներում,
Կանաչ խոտով,
Անուշ հոտով,
Միծաղեցեք
Ու ծաղկեցեք:

Ծաղիկները

— Բարև, բարև, կարմիր արև,
Ա՛խ, ի՛նչ լավ է դեպի վերև —
Ազա՛տ, լո՛ւյս, տա՛ք,
Կապո՛ւյտ, հըստա՛կ...

Արևը

— Սիրո՞ւմ եք ինձ...

Ծաղիկները

— Ա՛խ էնպես եմ սիրում, էնպե՛տ,
էլ առանց քեզ չեմ ապրիլ ես...
— Ես քեզ հետ եմ ուր որ գընաս...
— Ես կըտըխրեմ՝ որ հեռանաս...

Արևը

— Ապա եթե ձեզ համբուրե՞մ...

Ծաղիկները

— Ես հաճույթից կըկարմրեմ...
— Ես կըբուրեմ...
— Ես կըմարեմ...

— 49 —

Արեք

— Ա՛յ անուշներ,
 Ա՛յ քրնքուշներ,
 Ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ.
 Բաժակներդ բացեք իմ դեմ,
 Հազար գույնի, հազար ձևի,
 Պայծառ, ծավի ու ծարավի,
 Լըցնեմ շողով,
 Գոհար ցողով,
 Զերմ եթերով,
 Նուրբ թրթիռով,
 Կյանքի հյութով,
 Խունկի հոտով.
 Ա՛յ անուշներ,
 Ա՛յ քնքուշներ...

Աղջիկք

— Էս ի՛նչ անթիվ ծաղիկներ կան.
 Ոսկի-գեղին, կարմիր, դեղձան,
 Մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
 Ալ, նարընջի, մավի, կապուտ,
 Բացվել, լըցվել, ծաղկել են վառ,
 Ողջ ինձ համա՛ր, ողջ ինձ համա՛ր...

1913

ՎԵՐՁԻՆ ՏԱԳՆԱՊԷ

Վեր է կացել հին վիշապը՝ Առք թափով,
 Վեր է կացել վերջին մտրի տաղնապով,
 Արյունը ուշտ, ոճիրներով ահավոր,
 Մահ է շրնչում լեռներն ի վեր ալևոր:

Ու նրա դեմ ելած անդունդ, անսահման,
 Հորձանք տալով ամեն կողմից՝ հայության
 Հին-հին հույսերն ու հուզմունքը դարավոր
 Մառս են լինում լեռներն ի վեր ալևոր:

Մառս են լինում քաջ խմբերով անձնվեր,
 Մառս են լինում տանջվողներով կիսամեռ,
 Մառս են լինում անընկճելի ու արի
 Մինչև ճերմակ գլուխները լեռների:

Ու լեռները պառավ մոր պես վերստին
 Արնոտում են գլուխները իրենց հին,
 Միշտ խորհելով ամպերի տակ սեակնած,
 Որ հենց իրենց հառաչանքն են կուտակված...

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի
 Սլանում է մեծ արծիվը հյուսիսի
 Շիտակ դեպի բարձունքները հայկական,
 Իր հետևից հաչի բախտն ու ապագան:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
 Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,
 Բայց՝ կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
 Մըղկրտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
 Ու գաղթական զաւակներիդ լուռ շարքերից ուժառայառ,
 Մ՛վ գյուղերից, ե՛ր շեներից՝ տրխո՛ւր, դատարկ ու խավար,
 Զարկվա՛ծ հայրենիք,
 Զրբվա՛ծ հայրենիք:

Խորնըվում են մըտքիս հանդեպ բանակաները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակաները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույթներով արյունի,
Որ դարձրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհուն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում շարաղետ.
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու սիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին—
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...

1915

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անգախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, ու սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փըռված ու ցըրված հագար հագարով...
* *

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, նեմուրթ,
Թանդուրեք,
Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան
Մինչև Միշագետք, մինչև Ասորիք, մինչև Մովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
— Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և
անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

Աջիցըս եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ ելան Ձիրավի ձորից, հըսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան Մաղկանց սարերից, Հայկական պարից,
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչև Միշագետք, մինչև Ասորիք, մինչև Մովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
— Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և
անշահ...

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

1915

ԲԱՐՁՐԻՑ

Իմ բարի սրբոսի էն մեծ խոհերից,
 էն մեծ խոհերի անհուն խորերից՝
 Էամեցավ՝ ելավ իմ հրգոր հոգին,
 Որ բարձրից նայի աստծու աշխարհքին:

Քու պայծառ ցոլաց դեպ վերին այեր՝
 Մարդկային ամեն հընարքներից վեր,
 Վե՛ր ամեն շուքից և շամանգաղից՝
 Մինչև լուսեղեն ոլորտն անթախիծ:

Քու իր հարազատ բարձունքիցը լույս՝
 Անշար, անաշտ, անդորր ու անհուշ՝
 Պարզ, ամենատես հայացքովը նա
 Ճառագեց ներքև՝ աշխարհքի վրրա:

Տեսավ աշխարհքը՝ գեղեցիկ, անվե՛րջ,
 Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ,
 Եվ աստվածները նըրանց զանազան,
 Եվ սուրբերը, խիտ, խըտորդ ու դաժան:

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.
 Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,
 Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
 Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Ու ոչ մի երկիր չըկա հանգչելու—
 Խոր, արարչական հանգիստն անխորով,
 Քու ոչ մի անկյուն չըկա շընչելու
 Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Անպատում վըշտով վերըստին նայեց
 Իմ էս մեծ սրբոսին՝ աշխարհքից էլ մեծ,—
 Անսահման աշխարհք, և սեր ընդհանուր,
 Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու—
 Խոր, արարչական հանգիստն անխորով,
 էնտեղ հանգչելու, էնտեղ շընչելու
 էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

1915

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից,
 Կոչում դեպ բարիք, դեպ վսեմն ու սեր,
 Մեր ցավոտ սրտում զարթնում են նորից
 Երջանիկ կյանքի իղձեր ու հույզեր:

Աշխարհից աշխարհ թող ձեն տան իրար,
 Որոնք իշխում են մարդկանց սրտերին,
 Ազգերն ինչ ունեն ազնիվ ու պայծառ,
 Թող ի մի բերեն էս դառն օրերին:

Եվ թող սրտերի դաշըն կապեն կուռ,
 Ամուր շաղկապեն անսահման սիրով,
 Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,
 Կյանքը ջերմացնեն հոգեղեն հըրով:

Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝
 Թե ով ավելի ուժգին կըտօրի,
 Եվ թող մի քայլում լինի միշտ անվերջ՝
 Բարու, գեղեցկի ու վե՛հ գործերի:

Եվ բանաստեղծի խոհերն իմաստուն
 Քանզի խոսքեր չեն ապարդյուն ու սին,
 Եվ քանզի մարդը կարող է մարդուն—
 Սիրել— երջանիկ ապրել միասին:

1916

Երազեցի շարունակ
 Իմ կրանքի մեջ ես մանկուց—
 Ու քրեացի միշտ մեռակ՝
 Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես շրգտա ոչ մեկին
Երազներից իմ շրքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝
Հերոսներից իմ շրքեղ:

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց
Ու մընացի միշտ մենակ՝
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

1917

ԵՐԵՒԻ ՆՄԱՆ

Երեխի նրման մըտա ես աշխարհ,
Անվերջ միամիտ, անխելք անձնավեր,
Սըրտումըս ինչ կար, ձեռքիս ինչ որ կար՝
Բաժնեցի մարդկանց՝ անսեր, անտարբեր:

Երեխի նրման խաբեցին ինձ շատ,
Երազուն ու խենթ երեխի նման.
Տարան իմ հավատն ու սերը անհատ,
Խընդացին վըրես իմ դեմ հանդիման:

Երեխի նրման վարվեցին ինձ հետ,
Մի խորթ ու օտար երեխի նրման.
Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ,
Վըրդովմունք տվին ամեն մի վայրկյան:

Երեխի նրման տանջեցին ինձ բիրտ
Ընկեր, մերձավոր, և եղբայր, ու կին.
Ես էլ հուսահատ, զրզված խորասիրտ
Երեխի նրման թողի ամենքին...

— 56 —

Եվ ահա էսպես՝ հոգնած ու վըշտոտ,
Դադարգուն եղա, ամենքից փախա.
Ամենքից փախած զալիս եմ ձեզ մոտ—
Ու դուք էլ, ավա՛ղ, ինձ պես երեխա:

1917

ԳՐԱԳԱՐԱՆՍ

Բազմած են շուրջըս նրանք ամեն օր—
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:

1917

ԱՇԽԵՆԻ ԱԼԲՈՄԻՑ

Մայրըդ էն օրն ասում էր ինձ,
Թե՛ զուր թողիր տունը ձեռից,
Էնքան էժան ու էնքան հեշտ,
Էնքան հարմար, անհըրաժեշտ...

Նա տակավին չի իմանում,
Թե՛ աշխարհքն էր ինձ պատկանում.
Նույնիսկ ձըրի, առանց փողի,
Սիրտըս շուգեց—ձեռից թողի...

1917

— 57 —

ԱՆՈՒՑԻ ԱՎՈՍՒՑ

Կանցնեն օրերն, Անուշ ջան,
Կանցնի բո հերն, Անուշ ջան,
Ու կըտանի իրեն հետ
Իր ցավն ու սերն, Անուշ ջան:

Ցավը՝ անտակ ծովի պես,
Սերը՝ անհազ սովի պես.
Սովի միջին ու սովի՝
Անբախտ Սայաթ-Նովի պես:

1917

Քոշաքարում ես վազել եմ
Սղեկի հետ երազ, Անուշ,
Զըմրուխտ սարում երազել եմ
Զընաշխարհիկ երազ, Անուշ:

Զըմրուխտ սարը ամպ է պատել,
Իմ արևի լույսը վատել,
Աստուն խնդիրք արի շատ էլ՝
Ինձ չըտրվեց մուրազ, Անուշ:

Իմ մուրազը շատ էր շրթեղ,
Դըրախտ պիտանք քաղաք ու գեղ՝
Սրբը հոսեր հառաչքի տեղ,
Սերն ու բարին՝ Արազ, Անուշ:

Շատն են եկել էսպես անցել,
Հազար ափոտ էն մաղղկանց էլ,
Ես էլ կեթթում, բիշ է մնացել,
Էսքան վազ ու վրազ, Անուշ:

1917

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՛կ, անժե՛ր,
Ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ,
Սով բարություն, շընորհք ու սեր
Ճոխ պարգև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի,
Սիրտս է առատ, լին ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի—
Սերն անվերջ է, բարին՝ անհատ:

Երկյուղ շունեմ, ահ շունեմ ես
Գողից, շարից, շար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծընընդյան պայծառ օրեն,
էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տրվածն եմ տալիս իրեն:

1918

ՊԱՏՐԱՆՔ

Վեր է կացել էն սարում
Մեր Զալակը իր թևից.
Գընում է մութ անտառում,
Քաջ ախպերըս հավից:

Զըրնգում են նըրանք խոր
էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թըվում է, թե՛ կըգան...
Զո՛ւր... վաղուց են, ա՛խ, կըքանք
Մեր սարերից զընացել:

էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել...

1918

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՛, չի լըռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին
Ու դարավոր ցավն ամեհի
Ձի խորտակել էն հոգին:

Թընդում է դեռ նոր ձեռքերում
էն քնարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի:

— Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր—
Եղբայրական երգ ու սեր:

Հին օրերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Երգենք սըրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի:

Բարձրը հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Երկրե երկիր թող անցնի:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խըրախճանին
Ծեր Կովկասի ազգերի:

Ելնենք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր,
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Շա՛տ, շատ արցունք թափվեց մեզնում,
Մեն մի կաթիլն—մի խըրատ,
Անլուռ, անդուլ էն է ասում —
Ճամփա շունի գործը վատ:

Թո՛ղ ով կուզի՝ երկար-բարակ
Ձոռ տա խելքին մինչև մահ,
Մենք իմաստուն—սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա:

Ձարկե՛ք ուժգին մեծ Շոթայի
էն քընարը սսկեւար,—
Մարդը ինչ տա—էն կըշահի,
Թող իմանա ողջ աշխարհ.—

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում մուսան էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում:

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր—
Եղբայրական երգ ու սեր:

1919

ՄԻՐԻՈՒՄԻ ՀՐԱԺԵՇԸ

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր.
Ո՞ւրկից եկել,
Ո՞ւր ես թեքել,

Ո՛ր ես ճեպում էդքան հրզոր,
Անճառ թափով,
Անձեր ճամփով,
Գարե՛ր, դարեր հազարավոր

Սիրի՛ս, երկնից շքեղ գոհար,
Որ խաղում ես,
Փազփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ,
Ու զարդարում,
Զըվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ։—

Ի՛նչքան աչք է վըրադ հառել,
Նայում եմ քեզ
Հիմա մեզ պես,
Ի՛նչքան աչք է նայել, մարեզ,
Եվ կամ ի՛նչքան
Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել։

Ո՛վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,
Կամ ո՛ւմ աչքում պիտի անհետ
Մի օր հատնի,
Մարի, մըթնի
Հըրածեշտի շողըդ հավնտ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին.
Եվ թե տեսնես՝
Մեզնից էսպես
Մի հարցում տուր հրզոր մահին.
— Մարդու քանի՞
Սերունդ կանի
Մի հըրածեշտն աստեղային։

1922

◆
Ա՛նց կացա՛ն...

Օրերս թրոան, ա՛նց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն:

1890

◆
Վերջացա՛վ...

Կյանքըս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՛ փուշ էլավ,
Ինչ խընդութուն՝ վերջը ցա՛վ:

1890

◆
Ո՛ր կորա՛ն...

Մոտիկներըս ո՛ր կորա՛ն,
Ինչքան լացի, ձեն ածի՛
Ձեն չի տրվին, լո՛ւտ կորան:

1916, հունիս

Ծտ չեկավ...
Գընա՛ց, գընա՛ց, ետ չեկավ,
Անդարձ կապով սև հողում
Կապվե՛ց, մընա՛ց, ետ չեկավ:

1916, հունիս

Հիմի բացե՛լ են հանդես
Ծրգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի՛ ծղղրիդներ,
Ո՞վ է լսում հիմի ձեզ:

1916, հունիս

Ծրկու դարի արանքում,
Ծրկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցավի արանքում:

1917, հունվարի 15

Սով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

1917, փետրվարի 9

Քանի՛ մահ կա իմ սրբոտում,
Քափուր գահ կա իմ սրբոտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ա՛ն կա իմ սրբոտում:

1917, նոյեմբերի 7

Կյանքից հարթած անցավոր,
Ահա դարձյալ անցավ օր,
Դու վազում ես դեպի մահ—
Մահը բռնում հանցավոր:

1917, նոյեմբերի 10

Ծ՛տ եկե՛ք...
Գարնան վարար գետ եկե՛ք,
Անցած օրեր, խինդ ու սե՛ր,
Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք:

1917, նոյեմբերի 11

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր:

1917, նոյեմբերի 11

Զուր եմ փախչում, փնձ փաթում,
Հազար կապ է փնձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի շափ առառապում:

1917, նոյեմբերի 12

Ո՛վ իմանա՛ որք քնկանք,
Քանի՛ օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ հրք շրկա՛
Կըրա՛կ ընկանք, զո՛ւր քնկանք:

1917, նոյեմբերի 30

Երազումըս մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի.
— Աստված պահի քո դրդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

1917, դեկտեմբերի 24

Ինչքան ցավ էմ տեսել ես,
Նենգ ու ցավ էմ տեսել ես,
Տարել, ներել ու սերել,
Վատը՝ լավ էմ տեսել ժա:

1917, դեկտեմբերի 24

Քանի՛ ճեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ քառել,
Հուր եմ քառել՝ լույս տրվել,
Էլույս տալով եմ ըսպառվել:

1917, դեկտեմբերի 24

Մընացել է բերդը մեզ,
Հաղթանակի երթը մեզ.
Անց են կացել՝ ով կային,
Հիմի կըգա հերթը մեզ:

1917, դեկտեմբերի 26

Հոգիս՝ տանը հաստատվել—
Տիեզերքն է ողջ պատել.
Տիեզերքի տերն եմ ես,
Ո՞վ է արդյոք նրկատել:

1917, դեկտեմբերի 27

Ո՞նց է՝ ծրարում իմ հոգին
Չարին, բարուն, — ամենքին.
Էլույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

1918, հունվարի 4

Ի՞նչ ես թրոշում, խն-փե սի՛րտ,
Հազար բանի ետև, սի՛րտ:
Սո ո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթև, սի՛րտ:

1918, հունվարի 25

Իմ սո՛ւր, արթուն ականջում,
Մի խոր ձեն է միշտ հրնշում,
Անհո՛ւն, անքո՛ւն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանջում:

1918, հունվարի 26

Կինե՛ր հեռու մի անկյուն,
Կինե՛ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

1918, փետրվարի 2

Մի հավթ զարկի ես մի օր.
Թրու՛վ, գրնաց վիրավոր:
Թրոշում է միշտ իմ մրտքում
Թեք արնոտ ու մոլոր:

1918, փետրվարի 2

Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դըրկից.
Թախժում են պաղ ու խորհում,
Թե՛ ի՞նչ տարան աշխարհփից:

1918, փետրվարի 4

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Զա՛ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանջում ինձ ձեր քով:

1918, փետրվար

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճրմբին,
Լուռ հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

1918, փետրվար

Կըլթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թրոշում մանուկ հոգու հետ,
Ճախբում, ճըխում եթերում:

1918, հունիս

Քերանն արևոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:
Չեռքերն արևոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է միջև Մարդը իր ճամփան:

1918, նոյեմբեր

Մեռա՞ն, մեռա՞ն... Ծվ ահա,
Խառնըվել են կյանք ու մահ:
Չեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չըկան» ես հիմա:

1919, հոկտեմբերի 8

Արևելքի եղեմներին իչավ պայծառ իրիկուն,
Հեթիաթական պալատներում ըսպատում են իմ հոգուն:
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գրտնեմ ճամփան դեպի էնտե՞ղ, դեպի տո՞ւն...

1919, նոյեմբերի 21

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չբռնանքոված մինչ էսօր
Ազանց խոսքի երգ ես թափում հայտքերերով զուսավոր:
Ծս էլ, ապենք, զարմանալի ճեփերդող եմ բախտավոր,
Որ կարգում եմ էդ երգերը հարան հեջտ ու հարան խոր:

1919, նոյեմբեր

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ
կարճ,

Քանի՞ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ:
Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

1919, նոյեմբեր

Ազատ օրք, ազատ սերք, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կըրկին:
Է՛յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:

1919, նոյեմբեր

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,
Ծրազն էլ, նորք ու խուսափուկ, վրոագ եղավ, անցկացավ:
Վրոագ անցան երազ, մուրազ, ու չըհասա ոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տրված՝ զրրազ եղավ, անցկացավ:

1919, դեկտեմբերի 6

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՛ս, թե էն:
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, շեմ իմանում՝ է՛ս, թե էն:
Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի:
Տանի՞, թողնի՞, — ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՛ս, թե էն:

1919, դեկտեմբերի 8

Կորցրել եմ, որք գրտնեմ,
Տնդդղ իմաց տուր՝ գրտնեմ,
Ման եմ գալի էս մըթնում
Քեզ մտ գալու դուռ գրտնեմ:

1920, փետրվարի 4

Լուսը լուսին քո՛ժպիտն է իմ երեսին ճառագում,
Սրբ, ա՛խ, արդեն անբույժ զարկված, դեպի մահն եմ ես հակվում.
էսպես էն վառ արեգակի շողերի տակ կենսածոր
Կայծակնահար կաղնին ոտքի շորանում է օրեցօր:

1920, նոյեմբերի 24

Ի՞նչ իմանաւ Ըստեղծողի գաղտնիքները անմեկին.—
Քնկեր տըված, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.
Քանաստեղծին թողեց մենակ, մե՛ն ու մենակ Իրեն պես,
Որ Իրեն պես մըտիկ անի ամեն մեկին ու կյանքին:

1920, մարտի 30

Առատ, անհատ՝ Աստծու նրման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան մըտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմք՝ ճոխ ու շրտալլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց ու փրկարից հոգնել եմ ես:

1921, փետրվարի 7

Խայամն առավ իր սիրունուն.— «Ոտըղ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա որ սիրունի բիրն ես կոխում դու հիմի...»
Հե՛յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
էն սիրունու բի՛րն ենք կոխում, թե հուր լեզուն խայամի:

1920, ապրիլի 6

Ծա շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.
Ծա լըսում եմ նրբա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունչը ամենուր:

1921, փետրվարի 14

Ծրնեկ էսպես՝ անպիտք քեզ հետ—իմ կյանքի հետ լինեի.
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկրնքի հետ լինեի.
Բայց ո՛վ կըտա էն վայելքը՝ ինքու ինձ էլ ըզգայի,
Ու հալվեի, ծաղկավեի, ամենքի հետ լինեի...

1920, մայիսի 12

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներում
Ինչպ Արևելքն աստվածային—հայրենիքը իմ հոգու...

1921, մայիսի 1

Ամեն անգամ Քո տրվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մընում,—
Զարմանում եմ, թե՛ ո՞վ Շրտայլ, ի՞նչքան շատ ես արվել ինձ,
Ի՞նչքան շատ եմ դեռ Քեզ սաղա, որ միտնանք մենք նորից

1921, մայիսի 2

Հազար տարով, հազար դարով առաջ թե ես, ի՞նչ կա որ...
Ես եղել եմ, կա՞մ, Բջրինեմ հար ու հազվես, ի՞նչ կա որ...
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տինգերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ...

1921, մայիսի 3

Առի՛. աշնաց բո՛կ էս անբուն է ու անունը, որ ունեմ...»
Երբ ճառագեց անծայրանիք բո ժրպիտը հնարա զեւե.
— Ի՞նչ է անբուն էս անկարուն, ու անունը, որ ունեւս,
Դու աստվա՛ծ ես, դու անհուն ես, անանուն ես ու անեւս...

1921, մայիսի 6

Պատեղային երազների աշխարհներում լուսակաթի,
Մեծ խոհերի խոշանքների հետանկրոս անարատ,
Անհիշելի վերհուշերի մըշտաներում երբբայրոս՝
Երբեմն, ասես, ըզբում եմ ես, թե՛ կըհասանեմ Երբո մա...

1921, մայիսի 16

Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մամբար Ծրկնադրեւ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խառ է քացել Նրա հետ—
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչև վախճանն անվախճանի քրեընտեմ է գարե զար:

1921, մայիսի 21

Ո՞վ անձառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բղբաբում,—
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում Քեզանով,
Ողջը Քո մեջ՝ անմահ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձենով...

1921, օգոստոսի 2

Աստծու բանտն են տաճարները—աշխարհքներում բովանդակ.
Իբր էնտեղ է ապրում տերը, պաշտողների փակի տակ,
Հարկավ՝ ազատ նա ժրպտում է ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կըրակ մարդու գործին ու խելքին:

1921, օգոստոսի 25

Կյանքս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպարտող, անցավ առանց արդյունքի
Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չըրուսավ էս հողին...
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տրվողին...

1921, սեպտեմբերի 5

Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ շահ սրբազան,
Միածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կրնաճայրբս, ցողը՝ մյուտոն կենսավետ,
Ու կրնբողբս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

1921, հոկտեմբերի 21

Ամեն մի սիրտ ցավով լրցվեց մեր դարում,
Ցավոտ սրբտով աշխարհ՝ լրցվեց մեր դարում.
Ցավոտ աշխարհքն եկավ լրցվեց բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

Աղբյուրները հընչում են ու անց կենում,
Մարավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում:

1922, հունիսի 9

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Ծրկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

1922, հուլիսի 8

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրբտում,
Էնքան անթիվ կորած լավերն իմ սրբտում...
Չեմ էլ հիշում շար ու խավար էս ժամին՝
Ծրբ են փայլել ուրախ օրերն իմ սրբտում:

1922, հուլիսի 12

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր...
Անդարձ ու հին ճամփաներ՝
Ովքե՛ր անցան ձեզանով,
Ո՛ւր գընացին, ճամփաներ:

1922

— էս է, որ կա... Ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր:
— էս էլ կերթա՛ հանց երազում, թասըդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր:

1922, օգոստոսի 14

ԱՂՎԵՍԸ

Աղվեան եկավ մութ անտառից,
Հաքցմունք արավ լիքը թառից.
Մեծ խորոզ է հարկավոր ինձ.
Քաղցած աղվեան, ագին ծաղիկ:

Աղվեան հագել քուրքը դեղին,
Պրտուտ կուգա շուրջը գեղին.
Ջուր կըտըրվեց տատիս լեղին.
Դեղին աղվեան, ագին ծաղիկ:

Աղվեան ասավ պառավ տատին.
«Մըտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ թըմփլիկ ճուտին».
Անվախ աղվեան, ագին ծաղիկ:

Աղվեան եկել, նստել դեղին,
Ծրկար ագին ծըռել վըզին,
Աչք է գցել մեր խորոզին...
էս գող աղվեան, ագին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատըս պառավ.
Աման, հասե՞ք, տարավ, կերնավ...
Գըլխիս էս ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեան, ագին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարճիր խորոզ,
Ման կու գայիր գոռոզ-գոռոզ.
Փետուրք արավ ողջ դարուփոս
էն շար աղվեան, ագին ծաղիկ:

Աղվե՛ս, աղվե՛ս, փաքրիկ գաղամ,
Ոտներքդ կարճ ու խիստ վազամ,
Շըներն ամեն քեզ չըհասան,
Ճարպիկ աղվեա, ագին ծաղիկ:

1906

ԼՈՒՍԱԲԱՅԻՆ

(Ժողովրդական)

— Մուղրուզո՛ւ.
Աքլորը զիլ կանչեց թառին.
— Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,
Ջարթնեց մթնում ծիտը ծառին:

— Մուղրուզո՛ւ.
Խոսեց ծեղին երկրորդ քերան.
— Հո-հո՛, հո-հո՛,
Նախիրն արդեն հանդը տարան:

— Մուղրուզո՛ւ.
Լույսը բացվեց երրորդ կանչին.
— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Նստեց նանը տեղի միջին:

1907

ԿՈՒՅՐ ԱՇՈՒՂԸ

Կույր աշուղը մի տան բակում
 Եկել նստել՝ երգ է երգում.
 Երգում է ու սագին տալի
 էնպես տխր՝ որ ու սրտալի.
 «է՛յ, պարոննե՛ր, երնե՛կ նրան,
 Ով տեսնում է ամեն օր
 Կապույտ կամար, արևի լույս
 Ու երեսը իրեն մոր»:
 Երգում է ու սագին տալի
 Տխուր-տխուր ու սրտալի:

1907

ՔԱՄԻՆ

— Ո՛ւ-ն՛ւ-ն՛ւ...
 Քամին է, քամին,
 Տես անզգամին.
 Բերան շունի՝ փըշում է,
 Թևեր շունի՝ թռչում է,
 Ձեռքեր շունի՝ քաշում է,
 Իմ փոքրիկին քըշում է:

Կորի՛, դու քամի,
 Անպիտան քամի:
 Մի՛ վախի, շանիկ,
 Փեշքս պինդ պահի,
 Ես թող չեմ անի,
 Քամին քեզ տանի:

1907

ՀՈՒՌԻՆ

(Ժողովրդական)

Հուռին քնաց բանջարի,
 Բանջար չեղավ՝ խոտ եղավ,
 Խոտի տակին ծիտ եղավ,
 Ծղլվըլալեն դուրս թռավ:
 Ծիտը թռավ գերանին,
 Կանաչ խոտը բերանին:

1907

ՅՐՏՈՒՏԻԿ

(Ժողովրդական)

Արտուտիկ,
 Նախշուն տոտիկ,
 Իջնեն կալեր
 Գողտիկ-մողտիկ,
 Հնտրեն քարեր,
 Ուտեն կուտիկ,
 Կըծըլվըլան
 Կըլթիկ-կըլթիկ:

1907

ՈՒՎՈՒՆՔ

(Ժողովրդական)

Գարունը եկավ ամպերով,
 Ամպերը եկան անձրևով:
 Անձրևը տանեմ արտին տամ,

Արտը ինձ ցորեն տա.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացը ինձ ալյուր տա.
Ալյուրը տանեմ տաշտին տամ,
Տաշտը ինձ խմոր տա.
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրը ինձ հաց տա.
Հացը տանեմ բոշին տամ,
Բոշին ինձ ուլունք տա.
Ուլունքը տանեմ նանիս տամ,
Նանս ինձ ծեծի՛, ծեծի՛,
Տանից բշի, դուրս անի:

1907

ՓԻՍՈՆ

(ժողովրդական)

Փխոն, փխոն մլավան,
Թավրիզ թողեց, փախավ վան,
Լեզուն թաթխան, երկար պոչ,
Ինչ որ ուզեց, ասին՝ ո՛չ:

Փխոն գնաց գողեգող,
Փորը դատարկ, սիրտը դող,
Դունչը մեկնեց կովկիթին,
Շերեփին իջավ ճակատին:

1907

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը եկավ նստեց սարին,
Նստեց սարի սար կատարին,
— Լրակ՝ պատկի, աստվ ճարան:

Լավ օրերըդ անցան, կորան.
Խիստ սուսկալի
Ցուրտ է գալիս.
Ասավ, գնաց:
Սարը կամաց
Մտավ սպիտակ
Վճրմակի տակ:

1907

ԿԱՆԱՆՉ ԱԽԱԿԵՐ

Է՛յ կանանչ ախպեր,
Է՛յ ճանանչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր
Արևի շողեր.
Թն՛ք անուշահոտ
Միլ, ժողիկ ու խոտ,
Կարճաչուն վրտակ,
Ծրկիթք կապուտակ,
Խառուստիկ հավքեր,
Զրրեզան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախութուն,
Է՛յ կանանչ ախպեր,
Է՛յ ճանանչ ախպեր:

1907

ԱՐԱԳԻԼ

(ժողովրդական)

Արագի՛լ, բարով եկար,
Հա՛յ, արագի՛լ, բարով եկար,
Դու մեզ զարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր:

Արագի՛լ, երբ զընացիր,
Դու մեզանից երբ զընացիր,
Հա՛ փըշեցին բուբ ու բորան,
Մաղիկները ամեն տարան:

Արագի՛լ, բարով եկար,
Հա՛յ, արագիլ, բարով եկար.
Բունբոզ շինիր դու մեր ծառին:
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:

1907

ՄՆՃՂՈՒԿՆԵՐ

(ժողովրդական)

Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,
Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,
Կոացա քար վեր առա զարկելու համար,
Ղասարներ դանակ բերին մորթելու համար,
Աղջիկներ թե քաշեցին փետրելու համար,
Պառավներ պղինձ դրին եփելու համար,
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
Տերտերներ խաշով եկան օրհնելու համար,
Աշուղներ սազով եկան գովելու համար:

Ա՛յ ճնճղուկիկ,

Կարմիր տոտիկ,

Սպիտակ փորիկ,

Ուտեն կուտիկ,

Խմեն ջրիկ

Առվի եզրիկ,

Պատիկ-մատիկ,

Փախշեն երթան ման գալու համար:

1907

ԱՇՆԱՆ ՎԵՐՋԸ

Սարի լանջին,
Մեզի միջում
Խոխոջում է
Ու տըրտընջում
Ջուրը բարակ,
Ջուրը տըխուր.
— Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,
Ո՛ւր կորան, ո՛ւր,
Տերև ու խոտ,
Վարդը շաղոտ,
Սարվորն ուրախ,
Սըրինգ ու խաղ:
Շուրջըս դատարկ,
Շուրջըս տըխուր...
Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,
Ո՛ւր կորան, ո՛ւր:

1908

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Եկավ գարուն, եկան հավքեր,
Տաքցավ արև, գզլան ջրեր,
Եկան վարի-ցանքի օրեր:
Կոունկն ամուլ արեցի,
Սագերն հորիք լըծեցի,
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,
Կաքավն հացվոր բռնեցի,
Արտ ունեի՛ վարեցի,
Ցորեն, գարի ցանեցի:

1909

ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՅ

(Ժողովրդական)

Մի՛ լինի ուրազի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ եղի՛ր սղոցի պես,
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

1908

ՏԵՐԵՎԱԹԱԹ

— Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,—
Ասավ քամին տերևներին,—
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՛նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Ծկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...
Ծկեք տանեմ հեշտ ու անթև,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այնուհետև...
Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...

Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սրվաքվայով տխուր երգեց՝
Քամու վեկին փառն, փափառն:

1909

ԲԵԼԼՈՒՆԵՐ

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով Կատուն ճոճ էր,
Շունն էլ գրչիին գրչակ շուներ,
Միայն, գիտեմ ո՛չ՝ արդիանց որդի
ձանկեկ էր մի գառան մորթի:
Եկավ մի օր, ձմեռվան մրտին,
Կատիկի կուշտը տարավ մորթին:
— Բար աջողում, ուստա Փիտ,
Գլուխըս մըրսեց, ի սեր աստծո,
Ա՛ն էս մորթին ու ինձ համար:
Մի գզակ կարի գրչիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մքնա՛,
Համա-համա շատ շուշանա:

— Աչքիս վըրա, քեռի Քուշի.
Մի գզոակ ա, հո մի բուրբ չի.
Քու թանկագին խաթեր համար:
Ռարբաթ օրը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ա,
Մեր մեջ խոսելն էլ ամաթ ա.
Ի՛նչ մեծ բան ա, ա՛ո՛, հե՛ր օրհնած,
Միա՛ ջն, միա՛ ջն մի գզակի վարձ:

Ուրբաթ օրը քեզի Քուչին՝
Ուտից առաջ՝ բաց-բաց կուճին՝
Թափ-թափ տալով՝ ծանրը ու մէծ,
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.
— Ուստեն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...
— Մի քիչ կացի—հրես կերևա:

II

Ուստեն եկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փրնթիւրնթաց
Ու մուշտարու վրրա թընդաց.
— Ցուրտը տարա՞վ... վա՛հ, տընա՛շեն,
Չես թող անում մի շունչ քաշեն.
Հեշտ բան հո չի՞, հըլա նոր եմ
Ցըրցամ տըվել, թե որ կարեմ:
— Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,
էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա:
Փող եմ տըվել, վախտին կարի,
Թե չէ՛ ասա՛ էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վըրես գոռում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ա՛խպեր, գընամ ու գամ...
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ գըլուխը բաց:

III

Մին էլ եկավ, դարձյալ շըկար.
էս անգամը գիպան իրար.
էլ անպատիվ, անկարգ խոսքեր,
էլ հին ու նո՞ր, էլ հեր ու մե՛ր,
էլ գող Փիտո՞, էլ քաշալ Շո՞ւն...
Բանը հասավ գիվանքաշուն:
Շունը մինչև գընաց, եկավ:

Ուստա Կատուն կուտըն ընկավ
Գըլուխն առավ ու մի գիշեր,
Հայցե՛, կորավ. էն կորչին էր...

IV

էն օրվանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել.
Մըտքում հըլա դեռ պահում ա,
Որտեղ կատվին պատահում ա,
Վեր ա թըռչում վըրա վազում,
Իրեն մորթին ետ ա ուզում.
Իսկ սևերես Կատուն հանկարծ
Նա ա դառնում ու բարկացած
Փըշտացնում ա. մըթամ նոր եմ
Ցըրցամ տըվել, թե որ կարեմ:

1886

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱՎԱՆՆԵՐ

Մի օր Չըղչիկն ու Ճայն եկան
Թե՛ ե՛կ դառնանք վաճառական:
Ասին ու խելք-խելքի տըվին,
Հավան կացան, պայման դըրին.
Բայց՝ արի տես... որ փող չունեն:
Շատ միտք արին, թե ինչ անեն,
Վերջը եկան Փըշի մոտը,
Ընկան նըրա ձեռն ու ոտը,
Ու մորհակով,
Շահով, կարգով,
Փող վեր առան բավականին,
Ինչքան պետք էր իրենց բանին:
Չիղջը մընաց, տընպահ դառավ.

Ճայր բոլոր փողերն առավ,
Առավ, նրստեց նավի միջին,
Հասավ Մըսըր. Չինումաչին,
Ցարս, Հընդըստան,
Աբարըստան...
Է՛լ թանկագին քիրմանի շալ,
Է՛լ մարգարիտ, զըմրուխտ ու լալ,
Հընդու խուրմա, փրստա, բազաձ,
Ծվ... ո՛ր մեկի անունը տամ.
Ի՛նչ որ տեսավ, աչքը սիրեց,
Աատ-առատ նավը լըցրեց.
Նավը լըցրեց հազար բարով
Ու ետ՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալիս
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելավ,
Չարկեց, տարավ ապրանք ու նավ:
Միայն սովորաբար ճայր էնօր
Ազատվեցավ մերկ ու տըկլոր:
Ազատվեցավ—փառք իր ասծուն,
Բայց ի՞նչ սըրտով խեղճը գա տուն.
Գա՛—ի՞նչ ասի պարտքատերին,
Ո՞նց երևա իր ընկերին...
Հնկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիզը ծըռած,
Համբու՞մ է օրն օրի վըրա,
Թե՛ մեր ճայրը երբ պիտի գա...
Ծրկար նայեց,
Ճամփեն պահեց,
Շատ լավ ու վատ երազ տեսավ,
Մինչև պարտքի օրը հասավ,
Ու՛ մուրհակի թուղթը ձեռքին:
Փուշը տընկվեց կըտեր ձեռքին:
— Է՛յ, բարեկամ, ի՞նչ բանի եք...
Էլ չեք ասում թե՛ պարտք ունեք...
Գործ բըռնեցից՝ հորս ուղարկե՛ք
Ետ ափեք դե՛ փողոս հրեկո

Թուղթ եք տըվել՝ վախտ իմացեք,
Ամոթ, արուտ, ահ՝ ունեցեք...
Թալան հո շի՛... մեղք եմ ես էլ...
Ախպե՛ր, էսպես բա՛ն եք տեսել.
Ոսկի տա մարդ իրեն ձեռով.
Չըկարենա առնի զո՞ռո՞վ...
Սրանից հետո դե արի դու
Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...
Գողգողում էր ողջ թառակում,
Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լըսում,
Հենց մի բերան էն էր ասում.
— Ա՛յ ամոթ ձեզ, Չըղջիկ ու ճայ,
Ի՞նչ ենք լըսում.— վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ.
Անունները վաճառական,
Ու էս տեսակ խայտառակ բա՛ն...
վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,
Չըղջիկ ու ճայ...
Չըղջիկն էսպես միշտ լըսեցիս
Սիրտը բերնով դուրս էր գալիս,
Բարկանում էր իրեն մըտքում,
Անիծում էր, չըբում, թըբում.
— Ա՛յ քու տունը քանդվի, ա՛ ճայ,
Ա՛յ դու դառնաս զըրողի փայ.
Էս ի՞նչ բան էր, որ դու արիր,
Գլուխս էս ի՞նչ փորձանք բեղիք...
Ու խընդրում էր ամեն անգամ.
— Մի՛ նեղանար, Փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
Կա՛ց մի քիչ էլ:
Թուղթ ըստացա երեկ ճայից,
Թե՛ դուրս եկա Արարիայից.
Որտեղ որ է՝ շուտով կըգա,
Դեռ մի բան էլ ափել կըտա...
— Ծս շեմ ուզում ափելն, ախպեր,
Կանխիկ համրած իմ փողը բնի.
Շահ եք գըրել,

Վախտ եք դրրել.
Ինչ գրրած ա, էն եմ ասում,
Ձեզնից ավել բան չեմ ուզում:
— Չէ՛, աղա Փուշ,
Քե վազ, թե ուշ.
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիվը... ես իմ հոգին...
Ես հույս ունեմ... ասենք պարտք ենք...
Բայց չէ՛ ախար մենք էլ մարդ ենք...
Չէ՛, քու արածն ով մոռանա,
Իր աստվածն էլ նա կուրանա...

Խեղճը էսպես լեզու ածավ,
Շատ հույս տրվավ, շատ խոստացավ,
Շատ սուտ ասավ պարտքատերին,
Շատ ըսպասեց իր ընկերին.
Բայց ընկերը չըկա՛, չըկա՛:
— Էս ի՞նչ ցավ էր. աստված վըկա.
Ի՞նչ իմ բանն էր՝ մըտա մեջը,
Որ խայտառակ լինեմ վերջը...
Ի՞նչպես պըրծնեմ էս կըրակից,
Էս ահագին պարտքի տակից,
Էլ ի՞նչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա ե՞րբ կըզա, ի՞նչ իմանամ,
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մոտ գընամ...

Շատ միտք առավ,
Դեռ-դեն թըռավ,
Ինչ որ ունեի տանը, հագին,
Ողջ հավաքեց, տըվավ պարտքին,
Ցիփ մերկացավ,
Էլ չըպըրծավ:
Վերջը տեսավ, որ ճաբ չեղավ,
Քեքը առավ, ինքն էլ փախավ,
Փախավ, կորավ, որ էլ էնպես,
Դատարկ, սընանկ ու սևերես,

Ոչ պատահի պարտքատերին,
Ոչ երևա լույս աշխարհին:

Այնուհետև իր նամուսից,
Չըղջիկը մերկ, փախած լուսից,
Ցեքեկները դեռ-դեն թաքում,
Գիշերն է միշտ մըթնում թըռում,
Որ շերևա իր թայ-թուշին,
Ոչ պարտքատեր աղա-Փուշին:
Ճայն էլ ծովում,
Ճըռում, ծըվում,
Ջուրն է մըտնում,
Դուրս է պըրծնում,
Քեին տալիս,
Ման է գալիս.

Քե մի գուցե բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի:
Իսկ Փուշն, արդեն հույսը հատած,
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,
Կողքովն ով որ անց է կենում՝
Քաշում է փեշն ու հարցընում,
Քե շե՞ն տեսել մեկն ու մեկին,
Էն լիրբ ճային կամ Չըղջիկին.
Ու էն օրից մինչև օրս էլ
Մեկը մեկին դեռ չեն տեսել:

Ա.ԽԹԱՄԱՐ

Միծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա,
Մովն է մըտնում գազտագողի
Ամեն գիշեր մի տըղա:

Մովն է մըտնում առանց նավակ,
Բազուկներով առնացի
Զուրը ճողփում, լող է տալի
Դեպի կրղզին դիմացի:

Խավար կրղզուց պարզ ու պայծառ
Մի լույս կանչում է նրբան,
Մի վառ փարոս նրբա համար,
Զըմուրի իր մամփան:

Միրուն Քամարն ամեն գիշեր
Այնտեղ կրրակ է անում,
Եվ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մոտիկ դարանում:

Մըփում է ծովն ալեծածան.
Մըփում է սիրտը տըղի:
Գոռում է ծովն ահեղաճայն,
Նա կրուվում է կատաղի:

Եվ Քամարը սըրտատըրուփ
Արդեն լըսում է մոտիկ
Զըրի ճողփուն, ու ողջ մարմնով
Միրուց այրվում է սաստիկ:

Լըռեց: Մովի խավար ափին
Կանգնեց սև-սև մի ըստվեր...
Ահա և նա... իրար գըտան...
Խորհրդավոր լուռ գիշեր...

Միայն ալիքը վանա ծովի
Մեղմ դիպչում են եզերքին.
Եվ հեղհեղուկ հեռանում են
Շըշունջներով անմեկին:

Նըրանք առես փըսփըսում են...
Ու աստղերը կամարից:

Ակնարկելով բամբասում են
Կիրք, անամոթ Քամարից:

Բամբասում են կոտի սըրտում...
Ժամ է արթեն... ու կրկին
Մինն ալեկոծ ծովն է մըտնում,
Մյուսն աղոթում եզերքին...

Բայց մի անգամ շարկամ մարդիկ
Նըրանց գաղտնիքն իմացան,
Փայտը հանցեցրին սև ու սաստիկ
Մի մութ գիշեր գիվական:

Մոլորվեցավ խավար ծովում
Լողորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերձ՝
Հառաչանքներն՝ «Ա՛խ, Քամար...»

Մոտ է ձայնը. սև խավարում,
Ժայռերի տակ սեպպացած,
Ուր ամենհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած,
Ու մերթ լըսվում ուժասպառ.
«Ա՛խ, Քամար...»

Առավոտյան ծովը ծըփաց,
Ափը ձըղեց մի գիակ,
Նըրա շուրթին, պաղ, կարկանատ,
Ասես մեռած ժամանակ
Սառել էին երկու քառ.
«Ա՛խ, Քամար...»

Այն օրվանից սըրա համար
Երբին կոչվեց նիթամար:

ԱՆԻՄԱՄ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շննում
Մի հարգևոր հարսն է լինում:
Նըրա բերնից՝ կեսուր-կեսառ
Չէին լրսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
էսպես խոնարհ ու հարգևոր:
Մի օր մենակ օդում նըստած,
Իր ճոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփույթ սանրում, հյուսում,
Հետն էլ ձենով երգ էր ասում:

«Աշխարհը բանտ,
Մեջը անբախտ
Ես մի գերի անխընդում...
Միրուն շորեր,
Ջահել օրեր
Ի՞նչ եմ անում էս բանտում:

Երեսն է ծրտին,
Ճյուղքի միջին
Սըլվըլում է, թըռթըռում,
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազատ, կանաչ արտերում:

Ա՛խ, սե՛ ըլի,
Չըթվի, փըլի
Մընված օրը աղջըկա,
Ցավ ու խընդում
Փակված սըրտում,
Միծաղ չըկա, «ախ» չըկա...»

Մին էլ հանկարծ բացվեց դուռը,
Ու ներս մըտավ ծեր կեսուրը:
— Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը,
Գետին պատո՛ր՛, մըտնեմ մեջը...

— Հոպոպ դառնաս,
Անամոթ հարս:
Մի տե՛ս, մի տե՛ս,
Թե լըրբի պես
Գըլուխը բաց,
Ազատ նըստած՝
Ո՞նց է կանչում,
Չի ամանչում...
Լեզուդ լալկի,
Մազըդ թաղքի,
Գըլխիդ կըպչի
Սանրը միջի:

Ասավ-չասավ,
Մին էլ տեսավ՝
Սանրը գըլխին
Հարսն առաջին
Հոպոպ դառավ,
Երդկից թըռավ,
Ու վերացավ,
Վե՛ր, հեռացավ:

էն էր ու էն.
Խեղճն էն օրեն
Հանդերն ընկած՝
Հոպոպ մընաց,
Միշտ էլ էն հին
Սանրը գըլխին,
Չալի՛կ-մալի՛կ,
Լեզուն լալկի,
Անխոս ու լուս,
Մոլոր, տըխուր:

Բայց երբ հանկարծ
Միտն է գալիս,
Որ գլխաբաց,
Երգ ասելիս՝

Իր կեսուրբը
Բացեց դուռը,
Վեր է թըռչում
Սըրտատըրտի
Ու դեռ ճըչում:
— Հո՛ւ-պո՛ւ... Հո՛ւ-պո՛ւ...

1898

«ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ»

Վաղո՛ւց, երբ մոտ էր երկրին երկինքը,
Ու լըսում էր դեռ մարտկանց տերն-ինքը,
Էն լավ ժամանակ երկու մանուկներ
Ունեին մի շար, մի անսիրտ խորթ մեր:
— Կորե՛ք, գընացե՛ք, աշխատանք արե՛ք,
Աշխատանք արե՛ք ու եկե՛ք կերե՛ք:
Ի՞նչ եք վեր թափել անգործ ու անբան,
Հասած տըղերք եք հինգ-վեց տարեկան...

Էսպես բարկացավ մի օր խորթ մերը,
Ճիպտոներ տըվավ ղըրկեց հորթերը:
Անհանգիստ հորթե՛ր, ամառվան շոգ օր,
Կեստ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Նըրանց ետևից՝ լալով, հևալով,
Փոքրիկ որբերը՝ քարեքար գալով,
Վազ էին տալիս անտառի միջում,
Վազ էին տալիս ու իրար կանչում:

- Պողո՛ս, գտա՞ր:
- Չէ՛է՛:
- Պետրո՞ս, գտա՞ր:
- Չէ՛է՛:
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...

Շատ օր ման եկան՝ խեղճերն հոգնեցին,

Եկան՝ խորթ մորը լալով պատմեցին.
— Նա՛նի, ա՛յ նանի, կորան հորթերը...
— Վա՛յ, գետինն անցնե՛ք, — ճըջաց խորթ մերը,
Թող դուք կորչե՛ք հորթերի տեղակ,
Անտակ ձորի մեջ, անժած քարի տակ:
Մի արջ պատահեր, մի գազան, մի գել,
Որ չէի տեսել ձեր շուքը մեկ էլ...
Դե՛, ետ գընացե՛ք, գընացե՛ք, կորե՛ք,
Մինչև չըգտնե՛ք հորթերը բերե՛ք՝
Աչքիս չերևաք, ա՛յ աչքիս փըշեր,
Թե չէ՛ կըսպանեմ ես ձեզ էս պիշեր...

Ու ճիպտուն էլ ետ իրենց թափերին,
Հոգնած ու սոված, արցունքն ալտերին,
Փոքրիկ որբերը՝ անտառի միջում
Գիշերվան կիսին լալիս են, կանչում:

- Պողո՛ս, գտա՞ր:
- Չէ՛է՛:
- Պետրո՞ս, գտա՞ր:
- Չէ՛է՛:
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
- Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

Անտեր հորթերը չըկան ու չըկան:
Ճարները կըտրած՝ խեղճերը եկան,
Լալով շոքեցին:

- Տե՛ր աստված, ասին,
- Ի՞նչ կըլնի, գըթաա՛
- Գոնե թևեր տաս,
- Թևեր տաս՝ թըռչե՛ք,
- Թըռչե՛ք ու կորչե՛ք,

Որ էլ շտեսնի մեզ մեր խորթ մերը,
Մինչև որ գըտնենք կտրած հորթերը...
Հենց ասին-չասին անմեղ բերանով,
Աստված որոտաց իր դըթոտ ձայնով:
— Ահա ձեզ թևե՛ր, սիրուն երեխե՛ք,
Թըռչուններ դառե՛ք, թըռած ման եկե՛ք,
Որ էլ շտեսնի ձեզ ձեր խորթ մերը,
Մինչև որ գըտնե՛ք կտրած հորթերը:

Գիշերը քնեցե՛ք ծառերի ճյուղին,
Մեղն ու ծղոտը արեք անկողին,
Ապրուստ էլ կերեք իմ լի սեղանից...
Երբ որ դադարգուն եղաք ձեր տանից...
էսպես վերկեց հենց կանչեց աստված,
Փոքրիկ որբերը փոխվեցին հանկարծ

- Ու թևեր առան,
Թըռչուններ դառան:
Ու թևեր առած՝
Թըռչուններ դառած
Դեռ մինչև էսօր,
Ընկած սար ու ձոր,
Մըվում են, մընչում,
Մեկմեկու կանչում.
— Պողո՛ս, գտա՛ր:
— Չէ՛է՛:
— Պետրո՛ս, գտա՛ր:
— Չէ՛է՛:
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

1898

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղավ՝ մի անգամ անտառի միջին
Արծիվն ու Կաղնին էսպես վիճեցին,
Թե ո՞րն իրենցից շատ տարի կապրի,
Ո՞րն է դիմացկուն ու պինդ ավելի:
Արծիվն ասավ՝ ես. Կաղնին էլ թե՛ ես:
Երկուսն էլ համառ ու հըպարտ էսպես՝
Մեծ-մեծ պարծեցան սաստիկ վիճեցին,
Վերջը էս տեսակ պայման կապեցին:
Փամանակ դրին հինգ հարյուր տարի
Արքան հավքերի, արքան անտառի,

Որ թե որոշված էն օրին հասնեն,
էն օրը մին էլ գան իրար տեսնեն:
Ու Արծիվն իսկույն Կաղնուց հեռացավ,
Հըզոր թևերը շարժեց, վերացավ
Դեպի ամպերը, դեպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լավ օրերը:
Կաղնին էլ փըռեց ճյուղերն երկաթի,
Խո՛ր ու խոր մըխեց ճանկերն արմատի
Ու էնպես հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգ հարյուր տարում:
Դարե՛ր անց կացան: Եվ ահա մի օր
Արծիվը եկավ ծերացած, անզոր,
Մըվոցը կըտրած, տըկար, հեալով,
Թույլ-թույլ թևերը հաղիվ քարշ տալով
Տեղ հասավ մի կերպ, նայեց դես ու դեն,
Տեսավ, որ Կաղնին ընկել էր արդեն.
Ծյուղերը թեև դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ:
— Հե՛յ, կանչեց. դռոզ, պարծենկո՛տ Կաղնի,
Դե լավ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարյուր տարուց մի ժամ էլ դեռ կա,
Ընկել ես արդեն, անկոտրում հըսկա:
— Հինգ հարյուր տարի ապրել եմ կանգնած,
էդքան էլ կապրեմ դեռ էսպես թիկնած,
Մինչև լըրանա մի հազար տարին:
Պատասխան տըվավ ընկած վիթխարին:

1898

ՓԱՐՎԱՆԱ

I

Բարձրագահ Արուսն ու Մըթին սարեր
Մեջք մեջքի տըված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Զավախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ էնտեղ արծրվի նրման,
Միծղուն, կապուտած երկրնքի ժոցում,
Նըստում էր էն սեք սարհրի արքան
Իրեն Փարվանա ճերմակ ամբոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ուներ,
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս Մըթին սաբերում:

Աշխույժ մանկությամբ զարդարում էր նա
Մերուխյան օրերն ու սաբերն իր հոր,
Ու ապրում էր ժեր արքան Փարվանա
Իրեն էն քննքուշ ծաղկով բախտավոր:

Մեծ բախտը ստեղծեց անաշուն էր գեռ:
Եկավ էն օրն էլ հասավ երջանիկ,
Ու զըրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամբոց, ամեն արքունիք:

— Ո՛րտեղ է, ասավ, էն քաղը, թե կա,
Իմ շընաշխարհիկ զըստերն արժանի,
Թո՛ղ առնի իր ձին, իր զենքն ու զըրահ,
Գա՛, ցույց տա իրեն, իր բախտը տանի.—

II

Հագած, կապած զենք ու զըրահ,
Ձիանք հեծած ամենի,
Ահա եկել հավաքվել են
Կըտրիճները Կովկասի.
Մեր Փարվանա թագավորի
Ապարանքի հանդիման
Կազմ ու սբատրաստ սպասում են

Մոտիկ ժամին մըրցության:
Ըսպասում է ողջ աշխարհքը՝
Եկած, կիտված Փարվանա,
Թե ո՞ր կըտրիճն արդյոք պիտի
էն սիրունին տիրանա:

Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշաներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագավորն ալեհեր:
Հայրը ինչպես մըռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարված՝
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհքը.
Կըտրիճները քարացած,
Երազների մեջ են ընկնում՝
էս աշխարհքից վերացած:
— Նայի՛ր, զըստրի՛կ, իշխանագուն
էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդես գուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մեկը իրեն ուժը ցույց տա,
Մյուսը՝ շընորհքն իր բազկի,
Ո՛րը՝ ճարպիկ ձիարշավը,
Ո՛րն էլ թափը իր վազքի:
Իսկ եք կըռփվն առնի դադար,
Հայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջեից
Կըտրիճները պայազատ,
Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անհաղթներից անհաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մընա
Անզուգական քո բախտին:

Ասավ արքան, ձեռքը ձրգեց,
Նըշան տըվեց պայքարին,

Այնինչ՝ աղջիկն առաջ եկավ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
— Գուցե, հայրի՛կ, տըկար լավին
Հաղթի մի վես տըմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սըրտի...
— Է՛յ, Փարվանա շըքնաղ փերի,
Ի՛նչն է հավան քո սըրտին,—
Խոնրվում են կըտրիճները,
Խընդրում կըրկին ու կըրկին:—
Գա՛նձ ես ուզում, ոսկի՛, արծա՛թ,
Անդին քարեր ու գոհա՛ր,
Ա՛ստղ ես ուզում, մենք երկընճից
Վեր կըբերենք քեզ համար:
— Ինչի՛ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկընճի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի:
Ես նըրանից հո՛ւր եմ ուզում,
Անշեջ հուրը սըրբազան,
Ով կըբերի անշեջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...

Ասավ աղջիկն. իրար անցան
Կըտրիճները քաջարի,
Զիանք հեծած թըռան հապճեպ
Դեպի շորս կողմն աշխարհի:
Թըռա՛ն, շուտով գըտնեն, բերեն
Անշեջ հուրը աղջրկան.
Բայց... տարիք են գալի՛ս, գընո՛ւմ,
Նըրանք չըկան ու չըկան...

— Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չըդարձան
էն քաջերը սիրատենչ.
Մի՛թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
էլ չեն բերիլ հուրն անշեջ:

— Ո՛չ, իմ դըստրիկ, կըգան անշուշտ
Ու կըբերեն էս տարի.
Կըռիվներով արյունըռուշտ
Լիքն է ճամփեն քաջերի:
Ո՛վ իմանա, պետք է անցնեն
Մութ աշխարհքից, Սև ջըրից.
Ո՛վ իմանա, պետք է փախցնեն
Յոթգըլխանի դեբրից:

Անց է կենում դարձյալ տարին:
Նայում է կույսն ամեն օր.
— Ո՛ւր է, հայրի՛կ, ե՛րբ կըգա նա՛
Սարից թըռած ձիավոր:

Միշտ երազում ես տեսնում եմ
էն հերոսին ապագա,
Հուր կարոտով թըռած իմ դեմ,
Կուսանում է... ու չըկա:

— Կըգա, դըստրի՛կ իմ թանկագին,
Հեշտ չի բերվում հուրն անշեջ.
Շատ, շատ անգամ բերող հոգին
Ինքն է այրվում նըրա մեջ...

Անց է կենում դարձյալ տարին:
Նայում է կույսն ամեն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամփում
Զի երևում ձիավոր:

— Հայրի՛կ, հայրի՛կ, մի՛թե չըկա
էս աշխարհքում անշեջ հուր.
Թառամում է սիրտըս ահա,
Պաղ է էս կյանքն ու տըխուր...

էլ չի խոսում. մոռալլ, տըրտում,
Կուռ է արքան ալևոր,
Սև-սև ցավերն իրեն սըրտում՝
Միտք է անում գըլխակոր:

էսպես անցան շատ տարիներ.
 Տըխուր աղջիկն արքայի
 նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,
 Ճամփաներին ամայի,
 Հույսը հատավ... ու լաց եղավ.
 Էնքա՛ն արավ լաց ու կոծ,
 Որ լիճ կըտրեց արտասուքը,
 Մածկեց քաղաքն ու ամրոց.
 Մածկեց, կորա՛ն, ինքն էլ հեաք...
 Այժմ էնտեղ տըրտմաշուք
 Խոր Փարվանա չիճն է ժըփռած,
 Հըստա՛կ, ինչպես արտասուք:
 Աւ էն ժըճիտ ջըրերի տակ
 Յույց են տալի մինչ էսօր
 Մեր արքայի ճերմակ ամրոցն
 Ու շենքերը փաստավոր:



Ասում են՝ էն թիթեռները,
 Որ գիշերվա խավարում,
 Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
 Որտեղ լույս է հենց վառվում,
 Հավաքվում են, շուրջը պատում,
 Մեջն են ընկնում խելագար,
 Ասում են, թե՛ էն Փարվանա
 Զահիլներն են սիրավառ:
 Ըշտապելուց թև են առել,
 Գարձել թեթև թիթեռներ,
 Ու տակավին հուր տեսներին՝
 Մեջն են ընկնում անհամբեր.
 Զանք է անում ամեն մինը,
 Շուտով տանի, տիրանա...
 Ու այրվում են, այրվո՛ւմ անվերջ
 Կըտրիճները Փարվանա:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կես գիշերին կանթեղը վառ
 Կախ է ընկած երկընքից,
 Լուսավորչի կանթեղն անմար
 Հայոց մըթնած երկընքից:

Կախ է ընկած առանց պարան
 Արագածի կատարին,
 Ու սեղանից հըսկայական
 Լույս է տալիս աշխարհին:

Լույս է տալիս երկա՛ր գալեր
 Ու վառվում են միշտ անշեջ
 Սուրբի մաքուր արցունքները
 Յուզի տեղակ նըրա մեջ:

Ոչ մարդկային ձեռ կըհասնի
 էն ահավոր բարձունքին.
 Եվ ոչ քամին կըհասնոցընի՝
 Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խավարը
 Չընաշխարհիկ մեր երկրին,
 Երբ տխրում է ահն ու վախը
 Թույլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է լիքը սիրով
 Ու հավատով անասան,
 Ով նայում է վառ հույսերով
 Դեպի Հայոց ապագան,—

Նա կըտեսնի էն մըշտավառ
 Զահը կախված երկընքից,
 Առես՝ աստժո աշքը պայծառ
 Հըսկում է ցած երկընքից:

ԳԱՌՆԻԿ ԱԽՊԵՐ

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կորած գրնում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու:

Քույրը մեծ էր, ոնց որ լիներ
Կըհամբերեր արևին,
Բայց ախպերը փոքրիկ էր դեռ,
Չէր դիմանում ծարավին:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
Կովի ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր:
«Քուրի՛կ ջան, քուրի՛կ, ես շատ եմ ծարավ,
Ի՛նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

— Չէ՛, ախպեր ջան, չէ՛, դու կով կըդառնաս,
Կովի կըճղակի տեղից մի՛ խրմի.
Մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,
Առաջներըս պաղ աղբյուր կա հիմի:

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գրնում, գրնում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
Ձիու ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր:
«Քուրի՛կ ջան, քուրի՛կ, ես շատ եմ ծարավ,
Ի՛նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

— Չէ՛, ախպեր ջան, չէ՛, դու ձի կըդառնաս,
Ձիու սըմբակի տեղից մի՛ խրմի,

Մի քիչ էլ կացի. քիչ էլ որ կենաս՝
Մտտիկ մի գուլալ աղբյուր կա հիմի:

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գրնում, գրնում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու:

Գրնում են, գրնում. տեսնում են ճամփին
Գառան ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր:
Փոքրիկ ախպերը էլ չի համբերում,
Քըրոջից թաքուն խրմում է պուճուր:

Քույրը մին էլ ետ է նայում,
Որ մի գառը մղկըտալի
Իր ետևից տըխուր մայում
Ու մայելով վազ է տալի:

Խեղճ Մանուշը վայ է տալիս,
Վայ է տալիս, լալի՛ս, լալի՛ս.
Բայց էլ ի՛նչ աներ,
Բայց էլ ո՛նց աներ...

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գառն ու աղջիկ մոլորված,
Հեռու երկրում
Տըխուր-տըրտում
Գրնում, գրնում են կորած:

Սոված ու ծարավ գրնում են, գրնում.
Գրնում են, գրնում, չըգիտեն թե ուր.
Վերջապես մի հով անտառ են մըտնում,
Անտառի միջին մի զանգակ աղբյուր:
Կուշտ-կուշտ խրմում են էն սառը ջրից,
Հետո Մանուշը ծառն է բարձրանում,

Փառելի պապերն էլ ժառերի տակին
Մուշ-մուշ արածում, ալուն է անում,
Իրիկվան պահին խրխինջ ու ջրբիջ...
Լըցվում է հանկարծ անատուն աղմուկով.
Մոտիկ են գալի ձայնորդ քիչ-քիչ...
Մոտիկ են գալի ծիծաղով, երգով...

Եվ ահա ոսկի սանձերից բռնած
Բերում են ջրեան ձիանքն արքայի:
Ամենի ձիանքն աղբյուրից խըրտնած՝
Մառս-ժառս են կանգնում ու մոտ շեն գալի:
Մըտիկ են տալի ծառայքը մեկ էլ,
Որ սիրուն մի ցուք ջրբի մեջն ընկել,
Ու ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրբի հետ գընում է գալի:
Նայում են վերև: Ի՞նչ տեսնեն, աստված.
Մի հուր-հրեղեն, մի շարմաղ աղջիկ,
Մառի ճյուղերին նազելի նըստած՝
Նայում է ներքև լըռիկ ու մընջիկ.
Մի սիրուն աղջիկ, արմանք ու գարմանք:
Չարմանք է պատում խեղճ ծառաներին.
Տեր աստված, արդյոք ի՞նչ հըրաշք է սա,
Վայրի անտառում իջած էս ծառին:
— Ո՞վ ես, չըքնաղ, տեսի՞լք ես դու,
Թե՞ հողեղեն արարած.
Թե տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,
Թե աղջիկ ես՝ արի ցած:
Ցած ե՛կ տեսնենք՝ ինչպես եղավ,
Որ ծագեցիր դու մեզ մոտ.
Ինչ ցավ է քեզ արդյոք բերել
Մեր աշխարհքը անձանոթ:
— Մեզ որբության ցավն է բերել
Ձեր աշխարհքը անձանոթ:—
Ձայն է տալի ծառի վըրից
Մեր Մանուշը ամաչկոտ:—
Մենք տուն շունենք, ոչ ասպսկեն
էս լայն արմուկ աշխարհքում,

Մութն էլ հիմի շուտով կընկնի,
Վախենում ենք անտառում:

Ու ծառաները գառն ու աղջկան
Առնում են բերում պալատն արքայի:
«Ո՞վ ես դու, սիրուն— հարցնում է արքան,—
Անբան գառան հետ ի՞նչ ես ման գալիս»:

Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր,
Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թե ապրած կենաս, ահեղ թագավոր,
Մեր բանը, հապա՛, էսպես ու էսպես...

Թագավորն երբ որ լըսում է մին-մին՝
Ե՛վ շատ ցավում է, և՛ շատ հավանում.
Անում է նըրան իրեն թագուհին,
Ցոթն օր, յոթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շըքեղ դահլիճում,
Կիքն ու երջանիկ ապրում է Մանուշ.
Փառելի պապերն էլ ճոխ պարտեղներում
Արտո է անում ու խաղում անուշ:

Պալատումը կար նախանձոտ ու չար
Մի պառավ կընիկ, հընուց աղախին.
Նախանձում է սա, թե ոնց պիտի գա
Մի որբ՝ թագուհի դառնա մեր գըլխին:

Մի օր էլ գալի, գըլուխ է տալի,
Առաջը կանգնում կեղծավոր գովում.
«Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Չրի-չր՛ի լողացնեմ շարմաղ էն ծովումս»:

Խարում է, տանում, գցում ծովի մեջ,
Շորերը առնում, ետ բերում քարաք,
Հագցընում իր սև, դարձվոր ուղջրկան,
Պալատ ուղարկում թագուհու տեղակ:

Սրեւր ծածկած թանձր շրդարշով
Պալատ է մըտնում էն սուտ թագուհին,
Ու թագավորն էլ կասկած չի տանում,
Թե ով է եկել բազմել իր գահին:

Բայց ինչ են անում, ինչ որ չեն անում,
Չեն կարում էլ տուն բերեն Գառնիկին.
Մայրում—էս ափից էն ափն է վազում,
Մայրում—էն ափից ետ գալի կրկին:

Ի՞նչ անենք սրբան, ո՞նց անենք սրբան.
Պառավն ու աղջիկ շատ միտք են անում.
Վերջը գալիս է դարձվոր թագուհին
Անկողին մըտնում, հիվանդ ձեանում:

Էլ թանկ ուտելիք, էլ ազնիվ մրգեր
Բերում են փրոտում, խնդրում, աղերսում.
Մըտիկ չի տալի ոչ մեկի վըրա.
Վերջը Գառնիկի մըսիցն է ուզում...

«Բայց չէ որ, Մանուշ, քու եղբայրն է նա.
Ո՞նց ես նըրա միան դուզում դու հիմա...»

— Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հո չի՞,
Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
Ասում է, ճշում. «Վա՛յ, մեռա՛, ամա՛ն...»
Ու թագավորը տալիս է հրաման.

- «Կրրակ վառեցեք,
Դանակ սրեցեք,
Բերեք մորթեցեք
Ախպեր-Գառնիկին,
Որ առողջ լինի
Իր քույրը տիկին»:

Թագավորն էսպես պատվեր է տալի,
Պատվեր է տալի ու դուրս է գալի,
Գրնում է ծովափ սաստիկ սրտնեղած,
Թե ո՞րքան Մանուշն անգութ է եղած...

Մայրում է, լալիս Գառնիկ-Ախպերը,
Լացացնում է ժեռ ծովի ափերը,
Մի ափից բըռնած մյուս ափն է թըռչում,
Մարդկային լեզվով քըրոջը կանչում.

— Քուրիկ ջան, քուրիկ,
Կրրակ են վառում,
Կրրակ են վառում,
Դանակ են սրում:
Քուրիկ ջան, քուրիկ,
Լըսի անդունդից,
Օգնության հասի,
Սպանում են ինձ:

Լըսում է արքան՝ տեղը քար կըտրած,
Եվ ալիքների միջիցը հանկարծ
Շատ ծանոթ մի ձայն հեռո՛ւ, խո՛ւզ ու խոր
Կանչում է քնքուշ, կանչում է անզոր.

«Ախպեր ջան, ախպեր,
Անհեր ու անմեր,
Անքուր ու անտեր,
Իմ Գառնիկ-Ախպեր.
Դըժար է տեղըս,
Ձենըս չեն լըսում,
Ձենըս չեն լըսում,
Ձենըս չի հասնում:
Ա՛խ, չար պառավը
Սե արավ օրըս,
Այժմ էլ կըսպանի
Գառնիկ-Ախպորըս»:

Լըսում է արքան, պալատն է հասնում,
Պատում է քողը թագուհու դեմքի.
Պատում է, տեսնում... բայց ի՞նչ է տեսնում,
Ո՞վ է իր գահին եղել թագուհի...

— Եկե՛ք, ձկնորսներ, ուռիան ձրգեցի՛ք,
Հանկեցեք ծովից մեր լա՛վ Մանուշին,
Եկեք, դահիճներ, ծովը ձրգեցեք
Կախարդ պառավին ու էս հըրեշին:

էսպես բարկացած գոռում է արքան,
Ժողովուրդն ամեն թընդում է ցավից,
Գալիս է կանգնում, ձրգում է ուռիան,
Անմեղ Մանուշին հանում է ծովից:

Հանում է ծովից, գահին բարձրացնում,—
Կրկին թագուհի ու տիկնանց տիկին.
Գառնիկ-Ախպերն էլ անշափ խընդումից
Պատում է իրեն ոչխարի մորթին,
Դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Ոչխարի տըկար մայունի տեղակ
Մարդկային լեզվով ազատ ու ճարտար:

Իսկ շար պառավին, իրեն աղջրկան,
Որ խաբել էին աշխարհ բովանդակ,
Վըզներից կապում ջաղացի քարեր,
Ձրգում են ծովի անդունդը անտակ:

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Առած պատիվ: գահ ու թագ.
Աշխարհքն էի
Խաղա՞ղ ու լի՛,
Չարը թաղված հողի տակ:

1905

ՉԱՐԻ ՎԵՐՁԸ

Կինում է մի սար,
էն սարում մի ծառ,
էն ծառում փըշակ,
Փըշակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կըկուն:

— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուններ,
Ե՛րբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՛ք, գընաք,
Ուրախանաք...

Երգում էր մարիկ Կըկուն,
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ:
— էս սարը իմն է,
էս ծառը իմն է,
Ծառում փըշակ կա,
Փըշակում՝ մի բուն,
էս ո՞վ է եկել
Տիրացել թագուն:

Ախ դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Երեք հատ ձագ, աղա Աղվես:
— Երեք հատ ձագ ցույց կըտամ քեզ,
Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ:
Ձրգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՛ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, շըկտրես,
Աստված սիրես,
էս մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե էդպես
Մի ջընջիլ մեզ
Բընով-տեղով.

Ամբողջ ցեղով:
Խնդրեց մարիկ Կրկուն ու ձագերից մինը ձգեց
ներքև: Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց:

Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,

Իմ լավ կուկու.

Ո՞ր սև սարում,

Ո՞ր անտառում,

Ո՞ր թրփի տակ

Կորար մենակ...

Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,

Իմ խեղճ կուկու...

Լաց էր լինում մարիկ Կրկուն, մին էլ, ըհ՛ը՛, Աղվեսը
ետ եկավ:

— էս սարը իմն է,

էս ծառը իմն է,

Մառում փըշակ կա,

Փըշակում՝ մի բուն,

էս ո՞վ է եկել

Տիրացել թաքուն:

Ախ դու Կրկու, հիմա՛ր Կրկու,

Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:

— Երկու հատ ձագ, աղա Աղվես:

— Երկու հատ ձագ ցույց կըտամ քեզ:

Ա՛խ, շարամիտ դու ավազակ,

Ի՛նչ խաբար է, երկո՛ւ հատ ձագ.

Ի՛նչ, ուզում էս էստեղ զոռով

Կըցնես ամբողջ կրկուններո՞վ...

Ձրգի շուտով մի հատը ցած,

Թե չէ՛ կացինս հըրեն սըրած,

Գընամ բերեմ,

Մառը կըտրեմ...

— Վա՛յ, չըկտրես,

Աստված սիրես,

էս էլ առ տար,

Ու թող դադար՝

Վերջինը գեթ

Մընա ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կրկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքև:
Աղվեսը՝ հա՛փ, էս էլ առավ ու գնաց:

— Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,

Ընչի՞ համար

Եկա ես սար,

Բուն շինեցի,

Ձագ հանեցի...

Աղվեսն եկավ,

Տարավ, կերավ,

Երկու, երկու,

Կուկու... կուկու...

Լաց էր լինում մարիկ Կրկուն:

էս միջոցին— դա՛, դա՛, դա՛, Ագռավն անց էր կենում
էն կողմերով: Լսեց Կրկվի լացի ձայնը:

— էդպես տխուր ու զարհուրիկ

Ի՛նչ ես լալիս, Կրկու քուրիկ:

— Ինչպես չըլամ, ա՛ սանամեր.

Աղվեսն եկավ էն սըրտամեռ,

Գըլխիս էսպես փորձանք բերավ,

Ձագուկներու տարավ, կերավ:

— Վո՛ւյ իմ աչքին, անխելք Կրկու,

Ինչպես իզուր խաբվել ես դու

Սուտ խոսքերից շար Աղվեսի:

Ո՛նց թե սարը իմն է՛ կասի:

Ո՞վ է տըվել էն լըրբին սար.

Սարն ամենքիս է հավասար...

Ո՞վ կըթողնի վեր կենա նա

Ամբողջ սարին գա տիրանա,

Անունը տա սըրած կացնի,

Սրան-նրան սուտ վախեցնի,

Ու մինն էսօր, մյուսը երեկ,

Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...

Սև գրողի էն տարածին

Ո՞վ է տըվել սըրած կացին:

Մին էլ որ գա ու սպանա,

Մի՛ վախենա, քըշի գընա:

էսպէս աստղ Ազոտովն ու թռավ գնաց: Ահա կրկին
Ազովնսն եկավ:

— Էս սարը իմն է:

Էս ծառը իմն է...

Հազիվ էր ասել, Կըկուն բնից գլուխը հանեց՝

— Սուտ ես ասում, դու խաբեբա,

Անխիղճ գազան անկուշտ, ագահ:

Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,

Սարն ամենքիս է հավասար:

Ի՞նչ ես եկել սուտ տեր դարձել,

Ծա հլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,

Ձագուկներըս տըվել եմ քեզ...
Կորի՛, գընա, դաւ շար Աղվիս,

Հերիք ինչքան սուտ ես ասել,

Հիմի գիտեմ, շեմ վախում էլ:

Կացին շունես ծառը կըտրես:

— Ո՞վ աստղ քեզ:

— Ազոտովն աստղ:

— Ազոտ՞վը, լա՛վ:

Ու Ազոտովի վրա բարկացած Ազվեսը պոչը քաշեց,
հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ,
վեր ընկավ, իբրև թե սատկել է: Ազոտովն էլ կարծեց՝
իրավ սատկել է, թռավ եկավ: վրեն իջավ, որ այքերը
հանի: Ազվեսը՝ հա՛փ, հանկարծ բռնեց:

— Ղա՛-ղա՛-ղա՛-ղա՛,

Ազվես աղա...

— Ա՛յ դու կոտավան շարաշեղա,

Ո՞նց թե Կըկվին ասել ես դու,

Թե ես կացին շունեմ սրբած...

Կացին շունե՛մ... դե հիմի կա՛ցի...

— Վա՛յ, քեզ մեղա,

Ազվես աղա,

Ծա եմ ասել, շեմ ուրանում:

Ինձ քըրքըրի, ինձ կեր-հում-հում,

Տո՛ւր, ինչ պատիժ սիրտըդ կուզի,

Բայց մի վերջին խոսքըս լըսի:

Ծա էն սարում, հենց դեմուդեմ,

էնպէս մի թանկ պահուստ տեսեմ,

Որ շես գըտնի դու քո օրում

Ոչ մի թառում կամ անտառում:

Քնչի՛ համար էն ահագին

Գանձը կորչի հողի տակին:

Արի գընանք. հանեմ տամ քեզ,

էնքան ուտե՛ս, էնքան ուտե՛ս...

Թե չըլինի ու սուտ դուրս գամ,

Ծա հո էստեղ միշտ կամ ու կամ...

— Գնա՛նք, աստղ Ազվեսը: Թե կըլինի, շատ լավ,
թե չի լինի, էլի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ազոտովը նկատել էր, որ մի թփում պառկած
էր գյուղացու շունը: Ազվեսին տարավ, տարավ, դուրս բերավ
ուղիղ էն թփի վրա:

— Ա՛յ, ասեց, էս թփումն է իմ պահուստը:

Ազվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկոր-
դից բռնեց ու դրեց տակին: Ազվեսը խեղդվելով սկսավ խոխուլ:

— Ա՛խ, ե՛ս... ա՛խ, ե՛ս...

Չգուցը Ազվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ էսպե՛ս...

Ա՛խ, անիրա՛վ

Դու սե Ազոտավ...

— Ինչքան էլ որ լինիս գուցը,

Չարի համար թե վազ, թե ուշ,

էդ է պահված, Ազվես աղա,

Ղա՛, դա՛, դա՛, դա՛...

Պատասխանեց Ազոտովն ու թռավ:

ՀՍԿԱՆ

Կովկասյան առասպել

Լավ չեմ հիշում թե որ դարում,
Հին ժամանակ մեր աշխարհում
Ասում են թե՛ կար մի իշխան.
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ.
Որ թե մարդիկ նրա աչքում—
Թե՛ հասարակ ճանճ ու մըժեղ:
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գրլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըզար նրա դիմաց:
Ոճեր անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բուլուկ,
Երամակներ ձիու, ջորու,
էս բոլորը ցրված, փռված
Մինչև ծովի ափը հեռու:
Մինչև ուր որ քըշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր,
Ո՞վ էր գրլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըզար նրա դիմաց:
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նրստած էր իրեն տանը.
Լեզապատառ ներս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.
— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՛, էսպես հրաշք մի բան.
Արածում էր ծովի ափին
Բազմությունը քո հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է գալի:
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք շքնչին,
Փովը մինչև ծառեկն է հասնում,
Իսկ գրլուխը ամպի միջին:

Ծկավ, կանգնեց մեր հանդիման
Ու որոտաց ամպի նրման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորե՛ք իսկույն, դուք մարդուկներ,
Ձեռքս քանի չի հասել դեռ...»
էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տրվի էսպես.
«էդ սեակնած, մութ ամպերում
Ձուր ես էդքան բարձրը դոռում.
Ով էլ լինես, ուակից էլ գաս,
էս մի բանը լավ իմանաս,
Դու, երկնահաս, ահեղ հրակա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,
Ո՞վ է գրլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըզա նրա դիմաց»:
Բայց ինձ իսկի չըլսեց էլ
էն անճոռնի աժդահակը,
էն ամպերից ցած կըռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,
Դուրս հանեց մի ձուկն ահագին
Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի...» — Հազիվ էսքան
Պատմեց հովիվն իշխանական
Ու վեր ընկավ, շունչը փչեց:
Խիստ զայրացավ իշխանը մեծ.
— Ո՞վ է, ասավ, համարձակվե՛լ
Իմ տերության սահմանն եկել
Ու էդպես էլ վըրես հաշում...
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
Ծս ոչ մի տեղ և ոչ մեկին...
էսպես ասավ ու զայրագին
Հըրամայեց՝ զորքերը գան:
Հըրամայեց՝ զորքերն եկան.
— Կեցցե՛ մեր տեր, մեր թագավոր,
Անհաղթ, անմահ, ամենազոր...
— Ապրե՛ք, ասավ իշխանը սեղ,

Նլիք իսկույն ու զրնացնք,
Մանուկ ու ծեր
Իմ առյուծներ,
Ո՞վ է, տեսեք, վրբու հաշում
Ու իմ ուժը չի ճանաչում:
Ցույց արվեք դուք, որ ոչ մի տեղ
Չըկա ոչ ոք ինձնից ուժեղ...
Ասավ. զորքերն իրենց կարգին,
Փող փրչեցին, թրմբուկ զարկին,
Շրթրիկոցով զրբընգոցով
Ճամփա ընկան դեպի մեծ ծով:
Հասան, տեսան—ա՛յ քեզ հըսկա,
Գըլուխն էստեղ, ոտները չըկա,
Գընա՛, գընա՛, թե որ գըտնես...
Երկար ու մին ձրգված էսպես,
Հըսկայական քընով քընած:
էստեղ, էնտեղ գիրքեր բըռնած՝
Դես շոքեցին, դեն պառկեցին,
Հա զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժած չի գալի,
Խըռըմփում է զարհուրելի,
Խըռըմփոցից, ինչ-որ խոսում,
Մարդիկ իրար ձեն շեն լըսում:
Մոտ գընացին, էլի՛, էլի՛...
Դարձյալ տեղից ժած չի գալի:
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Գոռգոռալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքուստներից,
Ելան վըրեն, դեսից, գենից,
Որը ոտին,
Որը քըթին,
Որը լանջին,
Որն ակամոջին,
Փորի վըրա, միքքի վիշում,
Ձի են քըշում, նիզակ ճոնում,
Չարկում, զարկում,

Ջըգում, թըքում,
Հայհոյում են էսպես, էնպես...
Մին էլ հըսկան էն սարի պես
Վըրա նստեց—մե՛ծ, ահարկու...
Ինչ պատահեց—ոչ տեսնես դու:
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
Որն էլ գըլխից, քըթից, լանջից,
Կամ ուտերից, կամ ականջից
Ներքե ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Նըրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացավ հըրեչ հըսկան,
Թե, տեր աստված, արդյոք էսքան
Մանըր-մուճըր ի՞նչ բաներ են,
Որ եկել են թափվել վըրեն:
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գնան,
Բուռն արավ իր բըռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց,
Գըրպանն ածավ
Ու վեր կացավ,
Կընգընգալեն իրիկունը
Գընաց հասավ իրենց տունը:
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին:
Գընաց հըսկա մորը պատմեց,
Թե իրեն հետ ինչ պատահեց,
Ու զըրպանից հանեց բաղոթ՝
Ահից խելառ ձին-ձիավորա
Բարի կիճը հենց որ տեսավ,
— Ամա՛ն, որդի, վա՛յ ինձ, ասավ.
Ի՞նչ ես անում էդ խեղճերխն,
Բա շե՛ս տեսնում, թե քո ձեռին
Ոնց են դողում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես:
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,

Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծընվել է արևի տակ,
էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել:
Չըպարծենա երբեք ոչ ոք,
Քե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ...
Բաց թող, որդիս,
Բա՛ց թող՝ գընան,
Ապրեն ազատ
Ուր կամենան:

Ու, հընազանդ մոր խըրատին,
Իսկույն հանեց հըսկա որդին
Իր գըրպանից ձին-ձիավոր,
Իրար խառնած գորքը բոլոր.
Քողեց գընան՝
Ուր կամենան:

1908

ԷՍՊԵՍ ԶԻ ՄՆԱ

Հին գրույց

Կենում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ:
Եվ ի՞նչն է հաստատ աշխարհի վըրա...—
Աշխարքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա:—
Կենում է՝ իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ:
Ունենում է սա մի խելոք տըղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ:

Տարիք են անցնում: էս խելոք տըղեն
էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սըրա վարձը շատացնում,
Ինչպես իրենը՝ էնպես է նայում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, հիմի էլ էնպես
էլ մերկ ու տըկլոր, էլ քաղցած հո չե՞ս:
— Չէ՛, լավ եմ, հայրիկ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես շի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
Առաջ է գընում տըղեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պալատն է հասնում,
Դառնում է ծառա մեծ թագավորին:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ ես ուզում,
Կողում ես առատ էս լիքը ծովում:
— Հա՛, լի եմ, հայրիկ, դու հանգիստ գընա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես շի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
էնքան է սիրվում մեր խելոք ծառան,
Որ թագավորը բերում է սըրան
Իրեն տերության երկրորդն է անում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն:
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ է մընում.
Քու խոսքովն են ողջ նըստում-վեր կենում:
— Հա՛, մեծ եմ, հայրիկ, նազիր եմ ահա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես շի մնա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
էս բարի երկրի թագավորը ծեր
Մի օր անժառանգ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարքը մընում են անտեր:

Ժողովք են կանչում երկրի մեծերին:
Ժողովք են գալի, խորհուրդ են տնում,
Բերում են իրենց խելոք նազիրին
Առքով ու փառքով թագավոր դընում,
Ու մեր գյուղացին լքսում է մի օր,
Դարձել է իրեն որդին թագավոր:
Գալիս է.— Որդի՛ս, էլ ի՞նչդ է պակաս.
Ամբողջ աշխարհում մի դու ես, որ կաս...
— Փառք աստծու, հայրիկ, ունեմ թագ ու գահ.
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
Իր գահին բազմած ինքնակալը՝ նոր
Մահվան ու կյանքի վճիռ է անում
Բուռը հավաքած աշխարհը բոլոր:
Բուռը հավաքի աշխարհը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարհին:
Մեր թագավորն էլ մի անգամ էսպես
Մահիճ է ընկնում, ավանդում հոգին:

Լքսում է ծերունկ հայրը՝ մի օր՝ էլ,
Որ իր թագավոր որդին չըմնաց:
Ի՞նչ ասել կուզի՝ գալիս է վրեն,
էլ ի՞նչ մըղկտոց, էլ ի՞նչ սուգ ու լաց...
Զորքով, աշխարհով, ծեսով, հանգեսով
Արքային վայել թաղում են անում,
Ու վեր են կենում՝ զըրույց անելով
Ամենքը իրենց տղնիքն են գնում:
Տարիք են անցնում: Հայրը մի անգամ
Գալիս է որդու չիրիմի վրա:
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,
Բայց վրին գրած... «էսպես չի մընա...»

Գընում է հայրը: Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեղեից հաշիվն իմանա...
Էն օրից էսօր անվերջ, պարեզար
Զրույցն ասում է՝ «էսպես չի մընա...»

Ու շրկա շրջեղ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարհի վերա,
Մերն է աշխարհը ու կյանքը հիմի,
Բայց մեր աշխարհն էլ... էսպես չի մընա...

1906

ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

Միտիկն ու Մուկիկն ախպերացան: Գետի ափին բուն
չինեցին, մտան մեջը:

Մի օր Միտը գնաց քուջուջ անելու, ետ եկավ տեսավ
Մուկիկը մեռել է: Մեկանը զարկեց.

— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...
Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը փորեց, տվավ գլխին:

— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...
Ձենի վրա կորիկն եկավ:

— Միտիկ-միտիկ, շալփետուրիկ,
Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ:

— Թաո՛ւ, թաո՛ւ,— ասաց Միտը,—
Ծա որ շտամ, ո՞վ տա հապա:

Մուկիկի պես ախպեր մեռավ:
Աշխարհն էսպես մնաց անտեր,

Ծա որ հողը տամ իմ գլխին,
Մե՞ծ բան է...

— Ափսո՛ս, ափսո՛ս,— ասավ կորը,—
Մուկիկի պես մարդը մեռավ,—
Ասավ, իրեն էնքան զարկեց,
Թեք կոտրեց կախ արավ:

Մառը ասավ.

— կորիկ քուրիկ, ճրտճրտուրիկ,
Ինչո՞ւ ես մի թեք կոտորել:

— Բա ի՞նչ անեմ, որ չեկոտորեմ:
Մուկիկի պես մարդը մեռավ:

Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտը գլխին հող է տալի,
Ես որ իմ մի թևը կոտորեմ՝
Մե՞ծ բան է...

— Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ,— կանչեց ծառը.
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Գընաց եկավ, գընաց եկավ,
Իր ճյուղերը զարկեց իրար.
Զարդեց, մընաց ճըղնակոտոր:

Քարերն ասին.
— Մառիկ-մառիկ, կանաչ թառիկ,
Ճյուղերդ ինչո՞ւ վեր թափեցիր:
— Վա՛հ, ձեր տունը աստված շինի.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտիկն էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտորած,
Իմ ճյուղերը ես որ թափեմ՝
Մե՞ծ բան է...

— Հազար ափսո՞ս,— քարերն ասին.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Ու գոռալեն, գըռգըռալեն
Գըլորվեցին սարերն ի վար,
Թափվեցին ցած՝ շըրերի մեջ:

Ջրերն ասին.
— Ի՞նչ պատահեց, ա՛յ գիծ քարեր,
Չէ՞ դուք ձեր տեղն անժած էիք,
Ի՞նչ եք էդպես ցած գըլորվում:
էլ ի՞նչ անժած. բա շե՞ք ասիլ,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտիկն էնտեղ հողը գըլխին,
Լորիկն իրեն թևը կոտորած.

Մառը մընաց ճըղնակոտոր,
Մենք մեր տեղից որ գըլորվենք՝
Մե՞ծ բան է...

— Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ, ի՞նչ իմացանք,
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...
Ջրերն ասին. խառնվեցին,
Ու գնացին պըղտոր-մըղտոր:
էն կողմերից տըմտըմբալով
Պառավն եկավ: էս որ տեսավ.
— Ա՛յ գըլգըլան շըրեր, — ասավ,
Գուք պարզ էիք միշտ ու մարմանդ,
Ինչո՞ւ էսօր պըղտորվեցիք:

— Վա՛յ քու տունը քանդվի, պառավ,
Բա շե՞ս լըսել՝ ինչ է եղել.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտորած,
Մառը եղավ ճըղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Մենք պըղտորվենք՝ մե՞ծ բան է...

— Հողն իմ գլխին,— պառավն ասավ,—
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Զարկեց իրեն ու ծըվատեց,
Երեսն արավ արյունլըվիկ,
Մազաքձուձ՝ գյուղը վազեց:
Գյուղում ասին.

— Պառավ տատիկ, ի՞նչ պատահեց,
Ինչո՞ւ երեսդ արյունլըվիկ:
— Վա՛յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք:
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտորած.

Մառք եղած ճրղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Ես իմ երեսն արյունոտեմ՝
Մե՞ծ բան է...

— Ափսո՛ս, ափսո՛ս, հազար ափսոս,
Որ էն տեսակ մարդը մեռավ...
Ափսոսացին էն գյուղացիք,
Սև կապեցին, սուգ նստեցին.
— Վա՛յ. ո՞վ ասավ, ո՞վ ասավ...
— Հողագըլուխ Միտիկն ասավ,
Թեք կոտրած կորիկն ասավ,
Ճրղնակոտոր Մաքիկն ասավ,
Գըլտոր-մըլտոր Քարիկն ասավ,
Պըղտոր-մըղտոր Զըրիկն ասավ,
Մազաքձուձ Պառվիկն ասավ,
Մեր Մուկիկը մեռել է՛...
էլ ո՞վ մընաց էս աշխարքում,
էլ ի՞նչ ապրենք էս աշխարքում...
էսպես ասին
Ու միասին
կացով, կոծով,
Ճիչ-գոսոցով
Հավաքվեցին ու զընացին,
Քարեցն ընկան կոտորվեցին:

1908

ՄԻ ԿԱԹՈՒ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի Կրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր մախում:
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ժառից
Ներս է մտնում մի գրո շորան.

— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղըր շունե՛ս,
Մի քիչ տաս մեզ:
— Ունեմ, ունեմ, շորան ախպեր.
Ամանդ ո՞ւր է, ամանըդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
էս սըհաթին քաշեմ տամ քեզ:

էսպես համզիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով
Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած:
— Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,
էս կաթիլին վեր է գալի:
Ճանճի վըրա, թաքուն թաքուն,
էս խանութի տիրոջ կատուն
Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...
Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը իսկույն կեթ
Հաֆ է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում
Ու շրպըրտում:

— Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն.
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը
Տուր՝ թե կտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին:

— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունըս,
Իմ ապրուստը՛ս, տեղը՛ս, տունը՛ս...
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,

Անխիղճ, լիրբ, շար, ֆըլան, ֆըստան,
Ո՛նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր ածղահակը,
Մեծագլուխ իր մահակը
Ծտ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փրոռում:

— Ըսպանեցի՛ն... հա՛յ, օգնությո՛ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեռն է տալի մեկը մյուսին.
— Հա՛յ, օգնությո՛ւն... Ըսպանեցի՛ն...

Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վերից, գործի տեղից,

Ճիշով, լալով,
Հարայ տալով—
էլ հերն ու մեր,
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր տըղերք,
Ջոքանչ, աներ,
Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...

Ինչ իմանաս էլ՝ ո՛վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,
էս տեսակ էլ բա՛ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՛ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձրգում,
Իր շան կողքին երկար ու մեկ:
— Դե, ձեր մեռելն եկեք տարեք:
Ու էստեղից բոթը զընում,

Գընում մոտիկ գյուղն է հասնում.

— Հե՛յ, օգնեցե՛ք,
Մեռած հո շեք,

Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շընաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
էն ճանճի պես

Ամբողջ գյուղով օրդու կապում,
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն միևր առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փետով,
Որը ձիով, որը ոտով,

Որն անգրտակ, որը բորիկ—
Դեպի դուշման գյուղը մոտիկ:
— Տո՛, էսպես էլ անիրավ գյո՛ւղ.

Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ զընում է առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սըրի:
Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր աղաթին...

Գընա՛նք, զարկե՛նք,
Ջարդե՛նք, կրակե՛նք...

— Հա՛յ, հո՛ւյ, հառա՛ջ, դե ձեզ տեսնե՛մ...

Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
էնքան ավել կատաղեցին.

Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,
Կորան, զընացին
Գետնին հավասար:

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից
էսքան մոտիկ, սահմանակից
էս գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տերութեան թագավորը,
Երբ լսում է էս բողոքը,
Արձակում է հրրովարտակ
Ժողովրդին իր հրպատակ.

— Հայտնի լինի մեր տերութեան.
Զինվոր, բանվոր, ազնւական—
Ամեն շարքին
Ու աշխարհքին,

Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Երբ մենք քրնած էինք սիրով,
Մեր սահմանը մըտավ զոռով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին:
Արդ, սրբահար ու հրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
Պատվեր տրվինք մեր բանակին,
Թընդանոթով մեր ավերող.
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ յիսի
Մըտնի հողը մեր ոսոխի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գրեց զորքին, ժողովրդին.
— Մարդկանց առաջ է աստըծու
Բողոքում ենք մեր դրացու
Վարմունքի դեմ և՛ չար և՛ նենգ.
Որ ոտքելով ամեն օրենք,
Բորբոքում է կրօնի ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած:
Արդ՝ ակամա մենք քստիպված,

Հանուն պատվի, արդարութեան,
Հանուն թափված անմեզ արշան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն աստու և իր փառքի—
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վըրա:
Ու ըսկսեց կրօնի վնասել:
Շոխնդ, որոտ էստեղ, էնտեղ:
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Արլուն, ավեր, ճիշ, ազազակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...

Ամառ, ձմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան,
Ու, կրօնի վըր դադարած,
Սովը եկավ համատարած:
Սովը եկավ— սովի հետ ցավ,
Սաղկած երկիրն ամայացավ...
Իսկ մեացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
էս ընդհանուր ազեւը մեծ:

1909

ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ

(Ազգային ավանդույուն)

Ենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,
Անօրենն եկավ, եկավ ու եկավ:
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հոյսոյ,
Փաթաթեց, պատեց ինչպէս վերապօսած,

Կանգնեց Սևանա ափին հովասուն,
էնտեղ, ուր ուշքը ու միտքն աստրժուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր գորքին,
Օհաննա վանքը ծովի եզերքին:

էն վանքում, հայոց ազգին պահապան,
Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար:

Երբ տեսավ խաղաղ վանքիցը իրեն
Անօրեն մարդու էս գործն անօրեն,
Խրոտվեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դժգոհ մարդուց ու կյանքից,
Աղոթքը կիսատ դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ,
Ու բըրթմընջալով, միամիտ, անփուլթ,
էն վետ-վետ, ծըփուն ջրերի վըրա
Ցամաք ոտնեքով գընում էր ահա:

Տեսավ հըրաշքը Լենկթեմուրն ափից,
Տեսավ, սասանեց տեղը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար,
— Ծ'տ արի, ասավ, Ե'տ արի, արդա՛ր,
Ծ'տ արի, ասավ, ո՛վ դու աստժու մարդ:
Ետ եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրերի վըրով,
Ու առաջն ելավ թաթարը սիրով:
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալևոր,
Գա՞նձ, իշխանությո՞ւն, թե կյանք փառավոր...
— Քո փառքն ու գանձը հարկավոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ գընան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կյանքի ձենն ածեն
էս լեն աշխարհքում, արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին:
— Ժողովուրդ կուզե՞ս... լա՛վ: լինի էդպե՛ս:
էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գընա ինձ համար աղոթք արա, ծե՛ր:

Ասավ Լենկթեմուրն ու տըվավ պատվեր,
Որ գերի հայոց ազգը մի թևից
էն վանքը մըտնի սուրբի ետևից.
Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,
Նրան է բաշխում էնքանի կյանքը:
Հրաման արավ իրեն գորքերին,
Ու բաց թողեցին հայ ազգի գերին:
Մըտնում է գերին, մըտնում մի ծերից,
Անցել է թիվը հարյուր հազարից,
Զի լըցվում սակայն հասարակ մի վանք...
Ապշում է թաթարն — արմա՛նք ու զարմանք:
— Թողե՛ք, կանչում է իրեն գորքերին,
Հորձանք է տալի նորից հայ գերին:
Գալիս է գերին, գալիս է նորից,
Անցել է թիվը հազար հազարից,
Զի լըցվում սակայն էն վանքը կըրկին,
Զի կանգնում հայի հոսանքն ահագին:
Երբորդ անգամ է կանչում գորքերին:
Գալիս է անցնում մընացած գերին:
Անցնում է գերին, անցնում շարեշար,
էլ մարդ չըմնաց, գընա՛ց ինչ որ կար,
Դատարկ է սակայն վանքը տակավին...
Թեմուր զարհուրած դառնում է շորս դին.
— Ձարթո՞ւն եմ արդյոք, թե երազ տեսա...
Հայտնեցեք ինձ շո՛ւտ. ի՞նչ հըրաշք է սա...

Գընում են տեսնում մարդիկն իր ղըրկած—
Մեր հայր Օհանը՝ աղոթքի շոքած,
Աչքերն երկընթին, միրուքն արցունքոտ.
Ով որ հայ ազգից մըտել է իր մոտ,
Իր սուրբ աղոթքով, կամքով վերինի,
Փոխել է իսկույն, դարձրել աղավնի,
Բաց պատուհանից թողել ամենքին,
Թըոցրել դեպ իրենց լեռները կըրկին,
Ու հիմի վանքում էլ չըկա ոչ ոք,
Ինքն է աղոթում մենակ, ծընկալոք:

ՄՈՇԱԿՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Գիծ Մոծակի պարի ծամին
Զարկեց հանկարծ աշնան քամին,
Ուժը խըլեց, ուշքը տարավ:
Գիծը մին էլ մըտիկ արավ,

Որ էն արև

Աշխարհքն արդեն պատած ողջ սև,
Հացով, թացով սուզ է անում,
Դողում, պաղում ու դալկանում...
Շուտիկ, շուտիկ իրեն կինն էլ
Սուսիկ-փուսիկ կողքից կորել,
Ով գիտի՝ ինչ ծակ էր գրտել,
Մինչև գարուն մեջը մըտել:
Սոված, սառած

Ու սալարած

Վեր թըռավ՝ վար, դես ընկավ՝ դեն,
Ժիր Մրջյունի տաքուկ ու շեն
Բունը հիշեց, ելավ գընաց,
Դրոսն առջև տըխուր տըզզաց.
— Բա՛ց արեք, բա՛ց...

էս տարածամ՝ թըզվառ ձենից

Կոպիտ, թուխ-թուխ,

Հաստագըլուխ

Մի պահապան զարթնեց քրնից,

Ներսի մըթնում մի կերպ արավ,

Փակած դուռը նեղ ծերպ արավ,

Տեսավ՝ սևով, թևով զուգված՝

Դրոսն առջև մինը տընկված,

Ոտները թել,

Ինքը մի գել

— Հե՛յ, ո՞վ ես դու,

Ա՛խպերացու

— Տը՛գ-պը՛ գը, սսավ, Մոծակն եմ ես.

Բա շե՛ս ասիլ, էսպես՝ էսպես,

Ամանն ամբողջ,

Ուրխս, առողջ,

Պայծառ ու տաք

Արևի տակ

Կինըս աշխույժ սառ էր անում,

Ես էլ անհոգ խընդում, ցընժում,

Տեսակ-տեսակ պարեր պարում,

Սըրա նըրա թուշն համբուլում

Ու վայելում ամեն բանից,

Ամեն բարուց ու սեղանից,

Կիքը այգում,

Ճահճոտ մարգում,

Ճոխ տըներում,

Պայատներում...

Մի անգամ էլ. երբ որ էսպես

Պարում էի, մինը անտես

էնպես զարկեց՝ ուշքըս անցավ:

Ուշքի որ գամ՝ ի՞նչ տեսնեմ լավ.—

Երկինքը թուխպ, երկիրը սև,

Դառը քամի, սառը անձրև,

Արար աշխարհն պաղել, փոփոխել,

Կողքիցըս էլ կենս է փոփոխել...

էլ ի՞նչ ասեմ, ողջը մի-մի

էն ի՞նչ լեզու կարա պատմի

Կամ ի՞նչ բերան,

Չըտեսներված, հըրաշք մի բան...

Հիմի էսպես՝ սոված, մենակ,

Մընացել եմ պատերփ տակ,

Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում:

Ես էլ եմ հո շատ մըճըրվում,

Բայց ի՞նչ անեմ, ո՞ւր գընամ էլ,

Երեսս էլի ձեզ եմ արել:

Աստծու սիրուն, մի՛ խընայեք,

էս մի ձըմեռ շահեք, պահեք,

Մինչև նորից գարուն բացվի,

Աշխարհքն էլ ես բարով լըցվի:

— Դե լավ, դու կաց, ներս գընամ ես,

Տեսնենք՝ ներսից ինչ կտանք քեզ:

Ասավ պահնորդն ու մեջում էջ

Կոկ սենյակներն անցավ անվերջ,
Մինչև հասավ ներսի տունը,
Ուր ապրում էր մեծ Մըրջյունը
Առատ կյանքով,
Իր համայնքով:
Գընաց իրենց լեզվով հայտնեց,
Մըրջյունը լուռ լըսեց, մըթնեց,
Ու ետ դարձավ
էսպես ասով.
— Գիժ Մոծակի համա՞ր եմ ես
Ողջ ամառը արևակեզ՝
էնքան ջանքով
Ու տանջանքով
Տուն տեղ դրոնել, ճամփա հարթել,
Ամբար շինել, պաշար կիտել,
Որ ամառը ծուլլ պըտըտի,
Ձմեռը գա նըստի ուտի՞...
Մեր ծուլլերին ջարդել ենք մենք,
Ուրիշ ծուլլի՞ բերենք պահենք...
Կերթաս կասես էդ անպետքին,
Բանի, գործի ժամանակին
Ով փոխանակ աշխատելու,
Ուշք ու միտքը տա խընդալու,
Պարապ շըրջի, երգի, պարի,
Սըրա նըրա թուշն համբուրի,
էս կուռ վազի, էն կուռ ցատկի,
Վերջը էդպես պիտի սատկի:

1916

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

(Ջուղայի գաղթից)

— Հե՛յ, լավ մանրո՞ւք,
Ասե՞ղ, հուլո՞ւնք,
Մատնի՞ք, վարջա՞ն,

Ապարանջա՞ն...
Հա՛վ, ձու բերե՞ք,
Առեք, տարե՞ք,
Խունջիկ-մունջիկ
Հարան ու աղջի՞կ,
էժան կըտա՞մ,
կավը կըտա՞մ...

էսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրև թե շարշի մի թափառական,
Զարյու կերպ մըտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան:
— Հե՛յ, ո՞վ կուզի թել ու ասե՞ղ,
Դուրս եկեք, դո՞ւրս, ինձ մո՞տ, էստե՞ղ...
— Չարշի ախպե՞ր, շարշի ախպե՞ր,
Ասեղ ունի՞ս, էս կողմը բեր:
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,
Ու մոտ գընաց շարշին կընկան:
— Օ՛, ի՞նչ ասեղ, իսկն օձի քիստ...
Թոփը մի հաց...
— Վո՞ւյ, թանկ է խիստ...
— է՛, մի՛ խոսիր, քուրի՛կ, էդպես,
Շահի կյանքը թե կըսիրես:
— Ամա՞ն, հողեմ գլուխը Շահի,
Ասոված Շահից հեռու պահի.
Արևդ ապրի, շարշի ախպեր,
էդ անունը բերան մի՛ բեր:
— Վա՛հ, էսքան էլ շա՞ր լինի մա՞րդ:
Ի՞նչ է արել Շահը ձեզ վատ:—
Գազան թուրքի սըրից փըրկել,
Զոր Ջուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ առատ Փարիա,
Աչքն էլ քաղցըր միշտ ձեզ վըրա...
— Օ՛ք, հերիք է, շարշի ախպեր,
Մի՛ խոսեցնիր ինձ դըրանից:
Նրնեկ դըրա ոտը կոտրեր՝
Զըզար հաներ մեզ մեր տանից:

Սկավ վարար հեղեղի պես,
Զարկեց մեր շեն, մեր լի Զուլան,
Ոչ աստըծուն նայեց, ոչ մեզ,
Սըրբեց բերավ ողջ տեղահան:
Թող արինք փակ մեր տուն ու ծառ,
Բանալիներն Արազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Ստ նայեցինք ու կանչեցինք.

«Աստվածածին՝ն՝ Վերին Կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
Որ քո գրեանք մեր վաթանից՝
Մեզ դարձրու գերութունից»:
Ազաչեցինք աղերսելով,
Ստ շուռ եկանք ու անց կացանք:
Մեծով, կտժով, հրբով, սըրով՝
Մով Արազի ափը հասանք:
Արազը ծով, Արազն ելման,
Դուրս է եկել իր ափերից.
«Անցե՛ք», եկավ մեզ հըրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Ստեղ սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւզ, վաչճատո՛ւն, իրաբանցո՛ւմ,
Բառաչում են մեծ ու պոեանք,
Իքար գրկած՝ գետը լըցվում...
էն սև օրը, որ մենք տեսանք,
Քո թըշնամին թող չըտեսնե՛ր...
Ա՛խ, ե՛րբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը երկինք հասնե՛ր...

Ու գալիս են շարչու գրլիին
Կիտվում պանդուխտ, գերի հարեք.
«Անե՛ծք Շահին, իրեն գահին»,
Անիծում են երկինքն ի վերս
Շուռ են գալիս իրենց բընում՝
Զարչու աչքերն ըսպառնալիս
Ձեռն ու ոտը դող են լինում,
Ու, սևակնած, հարց է տալիս.

— Շահի առջև հապա էնօր
Գոռում էիք միաբերան,
Քե ապրում եք դուք բախտավոր
Ու օրհնում եք թախտն ու իրան...
— Սուտ էր, ախպե՛ր: Դու մեզնից մեկն՝
Ի՛նչ թաքցրենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ո՛նց չըծածկենք
էն մարդակեր շար գազանից:
Սուտ էր: Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Զի լինելու երկրի վըրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...
Մորնչաց շարչին, արեն շրպըրտեց,
Դուրս ելավ տակից Շահ-Աբասն աճեղ,
Նաչաղը ցուաց, իչավ շեշտակի,
Գերի ծերունին փրովեց տեղնուտեղ:
Փրովեց... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Զի լինելու երկրի վըրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր

ՄԱՐՈՆ

I

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
 Լեռների մեջ միգապատ,
 Խոր ձորերի քարափին՝
 Ձեռք տըված ճակատին՝
 Միտք է անում տըխրադեմ:
 Ի՞նչ է ուզում՝ չըգիտեմ...
 Պաս չենք էնտեղ մենք ուտում,
 Ու չերմեռանդ աղոթում,
 Ժամ ենք գնում ամեն օր.
 Բայց միշտ ցավեր նորանոր,
 Միշտ մի աղետ, մի վընաս
 Գալիս են մեզ անպակաս:
 Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
 Մի պատմություն, որ երբեք
 Հիշատակով տըխրալի
 Սըրտիս հանգիստ չի տալի:

II

Մեր գյուղից վեր մինչ էսօր
 Կա ուռենի մի սըզվոր:
 Մեծ անտառից նա զատված,
 Մարդու կացնից ազատված՝

Կանգնած է դեռ ու շոգին
 Հող է տալիս մըշակին:
 Գիծ, Լեռնային մի վըտակ
 Խոխոջում է նըրա տակ,
 Խաղում կանաչ մարգերին:
 Էն առվակում կես օրին,
 Երբ որ շոգից նեղանում,
 Գընում էինք լողանում:
 Տըկլոր, աշխույժ խըմբակով,
 Աղաղակով, աղմուկով
 Խաղում էինք, վազվըզում
 Գույն-գույն մանրիկ ավազում
 Կամ հետևում հե ի հե
 Թիթեռնիկին ոսկեթև,
 Ու միշտ հոգնած ժամանակ,
 Էն մենավոր ծառի տակ
 Նըստում տըխուր մի քարի,
 Գերեզմանին Մարոյի...

Մարո՛, անբա՛խտ, վաղամե՛ռ,
 Դու մանկության իմ ընկեր,
 Ո՛րքան ենք մենք խաղացել,
 Իրար սիրել ու ծեծե՛լ...

III

Ժիր էր Մարոն, դուրեկան,
 Նոր էր իննը տարեկան,
 Նըրանց տունը երբ մի օր
 Եկան երկու եկավոր:
 Ու Մարոյի մայրիկը
 Երբ որ բերավ, դրավ լիջը
 Խոնչեն նըրանց առաջին,
 — Շնորհակալ ենք մենք, ասին,
 Տաշտները լի հաց լինի,
 Դուռները միշտ բաց լինի.
 Հաց չենք ուզում ձեզանից,
 Հող տըվեք մեզ ձեր տանից...

էն ժամանակ Մարտի
Հայրիկն առավ արաղի
Կիբը բաժակն ու ասաց.
— Կամքըդ լինի, տեր աստված...
Նըշանեցին Մարոյին,
Տըվին շորան Կարոյին:

IV

Չորան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարգանդ էր գտնիս.
Բայց զորանչը անառնման
Միրում, փարում էր նըբանի:
Շատ էր սիրում և Մարոն.
— Լավն է, ասում էր, Կարոն,
Բերում է ինձ ամեն օր
Կանփետ, շամիչ ու խընձոր...

V

Մին էլ Կարոն ազմուկով
Սկավ զուռնով-թըմբուկով,
Ու Մարոյին զուգեցին,
Երեսին քող ձըգեցին,
Հինա զըրին ձեռքերը...
Սկավ խաշով տերտերը,
Տարավ ժամում կանգնեցրեց.
— Տե՛ր ես, որդյա՛կ, հարցրեց:
— Տեր եմ, ասավ մեր Կարոն,
Լուռ կանգնած էր միշտ Մարոն...
Հայրն էլ եկավ ու ծեփն
Էսպես օրհնեց իր փեսին.
— Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջքըդ ամուր բերդ լինի...
Իսկ եբք հեշեց ատարան հա՛ն-ն,

Նըբան փեփ տուն տարան:
Պըսակեցին Մարոյին,
Տըվին շորան Կարոյին:

VI

Թե զըրբացի շար շանքով,
Գիր ու կապով, բըժժանքով
Մանուկ սիրտը կըտրեցին,
Կամ թե նըբա հանդերձին
էն անհոգի շար շաղոմ:
Քըսեց գբլի ճըրագուն...
էդ շիմացավ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, եկավ ետ հոր տուն:
Սկավ լացեց նա վըշտոտ,
— Ես չեմ գնալ նըբա մտ.
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինեմ կին...

VII

Հայրիկն էնժամ բարկացավ,
Սեծեց նըբան ու ասավ.
— Դուքս իմ տանից, սեերնս,
Ետ շնայես դեպի մեզ,
Ոտ չըդնես էլ տունըս,
Մըրտեցիր անունս...
Լալով, ծածկած իր դեմքը,
Թողեց Մարոն հոր շեմքը:

VIII

Ու հալածված իր հորից,
Փախած շորան Կարոյից,
Սոված, պատուած շորերով,
Կորչում էր նա օրերով:

Կուչ էր գալիս խղճալի
Օջախի շուրջ օտարի
Կամ թափառում մեն-մենակ
Մեր հանդերում շարունակ:

IX

Շատ ամիսներ անց կացան...
Դիմաց սարից մի շորան
Ձեն էր տալիս մի օր մեզ,
Թե՛ իմացե՛ք, որ էսպես
Կարմիր շորով մի խիզան
Ընկավ ձորը, մի կածան...
Դուրս թափվեցինք մենք գյուղից,
Հնուու կանգնած, երկյուղից,
Տեսանք՝ ահեղ էն ձորում
Ոնց էր լալիս ու գոռում
Մարոյի հայրն ալևոր,
Մայրը ճըշում սըգավոր:
Շատ լաց եղավ և Կարոն...
Մեռավ, գընաց մեր Մարոն:

X

Սակայն անբախտ նորա դին
Պապի կողքին շրջըրին:
Գյուղից հեռու մինչ էսօր
Կա ուռենի մի սըգավոր:
էն մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին.
Առանց ժամ ու պատարադ
Մեջը դըրին Մարոյին,
էն սև քարն էլ տաշեցին,
Բերին վըրեն քաշեցին:

XI

Շատ եմ տեսել, երբ սըգավոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին...
— Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՛ն,
Ո՞վ անիծեց, Մարո ջա՛ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՛ն,
Տուն արի՛, տո՛ւն, Մարո ջա՛ն,
Խո՞ր ես քընեզ, Մարո ջա՛ն,
Ձե՛ս զարթնում էլ, Մարո ջա՛ն...
Կորանալով էն քարին՝
Ձեն էր տալիս Մարոյին.
Խունկ էր ծըխում, մոմ վառում,
Որ գիշերվան խավարում
Փայլփըլում էր մեն-մենակ
Հեռվից երկար ծամանակ:

1887

ԼՈՌԵՅԻ ՍԱՔՈՆ

I

էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:

Նըրանց ոտքերում՝ գազազած գալի՛
Գալարվում է գիծ Դե-Բեդը մոլի,
Խելագար թրուշում քարերի գըլխով,
Փըրփուր է թըջում անզուսպ երախով,

Քրքում ու զարկում ժեռուտ ասիերին,
Փրնտրում է ծաղկած ասիերը հին-հին,
Ու գոռում գիծ-գիծ.

— Վա՛շ-վի՛շ 22. Վա՛շ-վի՛շ 22...

Մուժ անձավներդ, հազար ձեռքով,
Քաջքերն անհանգիստ՝ հրուպիտ ձայներով
Գեկ հառաչքին արձագանք տալի,
Մաղրում են նըրա գոռոցն ահեղի
Ու կըրկնում գիծ-գիծ.

— Վա՛շ-վի՛շ 22. Վա՛շ-վի՛շ 22...

Գիշերը լուսնի երկշոտ շողերը
Հենց որ մըտնում են էն խավար ձորք՝
Ալիքների հետ խաղում դողալով,
Անհայտ ու մըռայլ մի կյանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Շընչում է, ապրում և մուժն և ահեղ:

էս տախտի վըրա աղոթում մի վանք,
էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մուժ աշտարակից. ինչպես զարհուրանք,
Բուի կըրոնչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գըլխից, լուռ մարդու նըման,
Նայում է ձորին մի հին խաչաքձան:

II

էն ձորի միջին ահա մի տընակ:
էնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ:
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա էլ էս գիշեր
Գընացել է տուն: Սարերի շորա՛ն—
Գյուղիցը հեռու, հազար ու մի բան,
Ով գիտի՝ պարկում շընալի՛ր շըկար,
Ա՛ղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձըլման՝ ուտել:
Թե՛ նըշանածին շատ էր կարտեղ—

Ոչխարը թողել՝ գընացել է տուն:
Այնինչ՝ համկալը հենց առավոտը
Գեպի սարերը քըշեց իր հուար:
Ու Սաքոն անքուն,
Թաց տըրեխները հանել է, քերել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինկը տըվել,
Մեն-մենակ թըթվել:

III

Թեկուզ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքոն ընչի՛ց է վախում:
Հապա մի նայի՛ր հըսկա հասակին,
Ո՛նց է մեկնըվել: Ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած:
Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գըլուխը մեխած մահակը ձեռին,
Ձեն արավ, կանչեց գալում շըներին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար,
էնժամ կիմանաս, թե ընչի համար
Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից,
Հեռու են փախում նըրա փարախից:

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Ապրում են սիրով երեխուց ի վեր:
Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդեն,
Շըհուն ու պըկուն խառնում են իրար,
Աժում են, խնդում, խընդում միայար...

IV

Բայց խուզ ու խավար օդում էս գիշեր
Մենակ է Սաքոն ու շունի ընկեր:
Բուխարու կողքին լուռ թինկը տըլած
Մըտածում է նա... ու մին էլ, հանկարծ:

Որտեղից որտեղ, էն ձորի միջին
Միտն եկան տատի զըրույցները հին...
Միտն եկան ու մեր Սաքոն ակամա
Սկսավ մըտածել շարքերի վըրա,
Քե ինչպես ուրախ խըմբով, միասին,
Սուրը ոտներով գիշերվան կիսին,
Քուրքերի կանանց կերպարանք առած,
Ծրևում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպես քաջքերն այրերի մըթնից,
Ծրը նայում է մարդ քարափի գըլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընջույք են սարքում,
Ձուռնա են ածում, թըմբուկ են զարկում...
Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվաձայն, երկչոտ հընչեցին նորից.

— Կասեն՝ Սաքո՞, մեզ մոտ արի,
Արի՛ մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Միրուն-ջահել հարսն-աղջիկ:

— Ինձ մոտ արի՛ ձվածեղ անեմ...
Ինձ մոտ արի՛ բըլիթ տամ...
Ծս քու հոքիրն... ես քու նանն եմ...
Ծս էլ աղիզ բարեկամ...

— Սաքո՞, Սաքո՞, մեզ մոտ արի,
էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Տարա-նի-նա՛... տարա-նի-նա՛...:

Ու խոլ պատկերներ տըգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Ծրևութեղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժըպիտներով ժանտ ու սևերես...

Սըրնթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՛մը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց ոտով,
Գիշերվան հովից տերևն էր դողում,
Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Քե՞ ոչխարների թույլ մընչոցն էր այն,—
Սաքոյին թըվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
Ականջ դըրավ նա...

— Ո՞վ հող թափեց բուխարիկից...
էն ո՞վ նայեց լիսածակից...
էս ո՞վ կըտրից անցավ թեթև,
Շունչ է քաշում դըռան ետև...
— Ո՞վ ես, էհե՛յ... ի՞նչ ես անում.
Ի՞նչ ես լըռել, ձեն շես հանում...

Պատասխան չըկա. լըռության միջում
Ձորագետն է միայն մըրափած վըշշում:
— Հա՛, իմացա, Գեվոն կըլնի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛...
— Գեո՞...
Ձեն-ձուն չըկա:

Միայն ահավոր լըռության միջում
Ձորագետն է խուլ, մըրափած վըշշում:
Եվ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է քամին.
Անքուն շարքերը շեն միայն քընած,
Վըխտում են ուրախ՝ ձորերը բըռած,

Խավարում կազմած դիվական հանդես,
Վազում վազվրզում ըստվերների պես,
Մինչև որ մենակ մի մարդ կըզրտենն,
Ճիշով-քրքրեռով... փարախը մբտնեն...
Աչքիքը հանգչող կըրակին հառած՝

Սանըր է շրնշում հովիվն ահ առած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկուս

— Չէ՛, քամին էր էն... էն գիլի շրվաք...
էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...
Ուզում է վերն մըտիկ տա մեկ էլ՝
Ու սիրտ չի անում:

Ականջ է դընում...
Գալիս են կըրկին թեթև, կամացուկ
Գրուան ետևից փրսփըսում ծածուկ.

— էստեղ է նա,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...
Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.
Նայիր էսպե՛ս,
Մըտիկ արա՛,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Սաքոն շարժվեց փըշաքաղած,
Դեպի շեմքը նայեց, դողաց...
Շըրը՛խկ... հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լըցվեց,
Տունը լըցվեց թուրք կանանցով,
Ճիշ-գոռոցով, հըռհըռոցով...

VII

Ահուելի ձոր է Մի կըտար լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում
էն մութ, ահավոր գիշերվա կիտին
Վազում է Սաքոն լուսու ձորերում:
Չարքերը ընկած նրբա ետևից,

Հերարձակ խըմբով, ճիշ-ազազակով՝
Հասնում են մեղքին բըռնում են թեից,
Չարկում են, զարկո՛ւմ օձի մքտրակով...
Քաջքերն էլ այրից զուռնա-դըհուով
Ճըշում են, կանչում ծանոթ ձայներով.

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս ինչ ուրախ պար ենք գալի՝
Միրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ:

— Ինձ մոտ արի՛ ձվածեզ անեմ...
Ինձ մոտ արի՛ բըլիթ տամ...
Ես քու հոքիքն... ես քու նանն եմ...
Ես էլ ազիզ բարեկամ...

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի.
Տարա-նի-նա՛... տարա-նի-նա՛...
...

Այնինչ Դերեզից այքեր են թըռչում,
Ալիքներն ելնում, ալիքներն ուռչում,
Խավարի միջին ծրփում են կայտառ՝
— Բըռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար...

1889

ՀԱՌԱՉԱՆՔ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված.
Ու ջերմ ըզձերքս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախտոն երամով:

Ձե՛զ, ձեզ վերջստին, ամպամած լիռներ,
Կյանքի տրխրություն ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր:

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմություն,
Վեհափառ դայակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ շիր ինձ հանգիստ տալիս՝
Սըրտիս ականջին խոսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես զիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,—
Ոգևորության հըզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեզ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էզ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք
Ձեր անդունդներով եկեք շափվեցե՛ք,
Դուք է՛լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

Հատված I

Մի քանի տարի սըրանից առաջ,
Երբ որ հայրենիք էի ես գնում,
Այն մըթին ձորում, ուր որ քաղցրավառ
Մեղեդու ձայնով Դերեզն է վազում,

Ժայռերի գլխին, ուր բազկատարած
Աղոթք են անում Հաղպատ-Սանահին,
Գիշերը հասավ, ու ես դադարած
«Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին:

Նա տրտնջալով ժերության ընդդեմ
Քըթքթում էր յուր ծառերի տակին.
«Բարի օր, պապի», ու խոժոռաղև
Մերը ետ նայեց ձեռքը ճակատին:

Մի կասկածավոր ու խիստ հայացքով
Ձննելուց հետո հոնքերը կիտեց.
Սաստիկ սառնությունը պատասխան տալով
Դեպի յուր դափեն ինձ առաջնորդեց:

Նրա ետևից անխոս գընացի,
Փընթփնթացնում էր նա իմ առաջին—
«Մեր բանը պրծավ, երբ էս ձորերի
Սըտերը սրանք էլ եկան սովրեցին:

Սա էր մնացել, սա էլ անպատճառ
Մեր գլխին մի նոր կրակ է բերում,—
Նոր դրած բեզյար, կամ իզուր մի շառ,
Թե չէ ինչ ունի էս խուլ ձորերում:

Եկած կըլինի, որ խաբար տանի,
Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա.
Ով յուր դառնը անասուն ունի,
Կամ որի կնգա աչքերում յուղ կա:

Կամ հին գերեզման քանդող կըլինի,
Կամ թե կըհամրի ծմակի ծառերը,
Կամ նրա համար, թե օրը քանի՞
Ձու են ածում մեր գյուղի հավերք...

Ո՛վ գիտի, հիմա ով վեր է կենում
Գլխին էս տեռակ գդակ է դնում...

Լոսց ծերունին ծանրը տնքալով
Ու առաջ գնաց թին դիմհար տալով:

Իսկ երբ որ հասանք աղքատիկ դափին՝
Ինձ հրրափիրեց, և յուր ունեցած
Շորի կտորը փռեց իմ տակին,
Ինքը առաջիս մնաց լուռ կանգնած:

Ճերմակ գլուխը ապա բարձրացրեց,
Հանքերի տակից ազդու նայելով,
Որոտող ձայնով այսպես հարցըրեց
Ջզվանք ու զայրույթն հագիվ պահելով:

— Աղա՛, հարցնելը ամոթ չըլի՞նի,
Հրամանքդ ի՞նչ մարդ ես, կամ ո՞րտեղից ուր...
Եվ շուտասելով մի պատասխանի՝
Ինքը շարունակ խոսեց կցկտուր:

— Ով էլ որ լինիս, բարով ես եկել,
Անփորձանք լինի թո ճանապարհը,
Աստված կյանք տա ձեզ, որ հարցնեք դուք էլ,
Թե ինչ ցավ ունի խեղճ ունչպարը:

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սև-սև օրերը.
Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ,
էզ հաստատ գիտե ինքը—միայն տերը:

Բայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն,
Քո բարի աչքով տեսնում ես էլի,
Տկլոր ու սոված էսպես տարին բուն
Քարի-հողի հետ կոփվ ենք տալիս:

Թե որ ձեռներս էլ մի բան է ընկնում,
Չենք կարողանում բերան հասցընենք...
Էսքան տանջվելով քրտինք ենք անում,
էլ էն սևերեսն, էլ էն սովածն ենք...

— Ի՞նչոցն է, պապի, աչքսան ճոխ կրկրում,
Ինչպես ասում ես, դժվար էք ապրում,
Վարձատրություն չե՞ք ստանում հողից,
Թե՞ նեղություն է գալիս մի տեղից:

«Մեր նեղությունը... քեզ ինչպե՞ս հայտնեմ,
Թող հաստատ լինի մեր թագավորը.
Ես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ,
Բայց աստված կտրի մեր քաշած օրը...»

Ի՞նչ անես, ախպե՛ր, ումի՞ց խառվես,
Պետք է համբերել, թե լավ թե օտալ...
Բայց դու շասացիր հրամանքդ ով ես,
Ուզում եմ քեզ հետ լիսսիրտ խոսալ:

— Ես քաղաքումը կարդում եմ, պապի:
«Հա՛, տիրացու ես, բա ինչո՞ւ շասիր...»
Կանչեց ծերունին ու իրեն դափի
Դռնից հեռացավ. «մի քիչ սպասիր»:

Հատված II

Մըթնեց: Ծերունին լուռ շարշարանքով
Մի քանի կոճղեր դրոնց կըրակին,
Նորից բարեկց իր երկրի կարգով
Ու բարի մազթեց շահել գոնադին:

Ան կըստգտեցինք իրար դեմ ու գեմ
Սաստառեցյալք վառվող կրակի շուրջը.
Մեր առջև ձորն էր Քըշշում խավարչոին,
Մեր գեմը խաղում ձորերի շունչը:

Գիշերվան անբուն հավքերն են տղիտոց
Մըվում, ծղկլկում խավարի միջում,
«Որքան է եղբորը հանջում ցավալուց,
Բուն է իր դանձան վալը կարնչալու»

Ու ողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ զարգանդ են գիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծրմակից
Եվ ձիգ ոռնոցը սովատանջ գիլի:



Մանրը տընքալով թեք ընկավ ծերը,
Երկար կոթավոր շիբուխը լըցրեց.
Գիշերվա նըման կիտած նոթերը
Խուլ որոտալով էսպես հարցրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
Իմանամ, ես էլ ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու էժանից,
Կամ նոր դուրս եկած գազեթից, բանից...

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի:

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան:
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Որ կռիվ շանի, ուրիշին չըտիրի,
Մարդ չըկոտորի, երկիր չավերի...

— Է՛հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Ես շատ եմ զըզվել քաղբից, գազեթից,
Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմի,
Զեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից:

— Ի՞նչ ես կորցրել—ընչի ման գալի,
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի
Ամեն մեռնողի երանի տալով:

Մեր ապրուստն ի՞նչ է.— մի կտոր շոր հաց,
Էն էլ հըրեն հա՛— երկընթից կախված:
Մի մարդ որ նըրա երեսը պահի՛
Նըրա ապրուստը ի՞նչ պետք է լինի...

Ես քեզ օրինակի էս խոր ձորերում
Էս է շորս քսան տարիս լըրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիղեթ
Պըտիտ եմ գալի էս ձորի միջին,
Կըռիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում—չեմ հասնում վերջին:

Վազներից էնքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար ես փող եմ տալի.
Գըլուխը քարը, գոնն փող լիներ,
Էլ ինչո՞ւ էսքան մարդ գանգատ կաներ:

Ջախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
Մրա համար էլ փող եմ վըճարում:
Էս դափեն ի՞նչ է—մի երկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան:

Ասում են՝ գեջ ես կտրել դու մերին:
Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,
Մինչև չըտեսնես մեծին, պիսերին.
Հիմի տես նրանք ինչքան են ուզում:

Գողն էլ մի կըռնից, գելն էլ մյուս կըռնից,
Աչքը թեքեցիր—բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են դըռնից,
Ու չես իմանում որ կողմը թըռչես:

Թե տանուտերին գանգատ եմ գնում,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից.

Գողերի հետքը իր տունն է տանում,
Համեցն'ք դիզան՝ ուզիր սրբանից:

Նստեցնում է քեզ մի կրկու բաժակ:
Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օղի:
— Դու գնա, պա՛պի: միանիտ քընիք:
Ըս աչքի լուսը կը հանեմ գողի:

Դարձել է աշխարհն, ա՛խպեր, առ ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը—արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,
Վայը եկել է տարել տղեարխն:

Երեկ իրիկուն էր կողքիդ սընից:
Կախ էին արած երեք հըրացան.
Տղեք են՝ փախած տանից, դիվանից,
Եկան ու ծեքին էլ ետ հեռացան:

Ո՛վ է մեղավոր... Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր:
Հենց էն եմ տեսնում—մու՛թն, անգետ մարդիկ,
էլ մենք ենք մեջտեղ տանջվում՝ ամեն օր...

Մեր բանն էլ, ախարի, էսպես է եկած,
Մենք լեզու շունենք—ուժեղը աստված:
Մեր հիե աղաթից ընկել ենք, զըրկվել,
Նորն էլ շրգիտենք թն՝ ինչ է՝ եկել:

էստեղ մեզ մոտիկ թավազներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փարներն ողողած, փոխկենքը թողած,
Կըրոները կանթում՝ կըտերը կանգնած:

Մեկին մեք գյուղում մի թիզ հող ունի:
Թըքես մի ծերից մյուս ծերը կընկնի.
Ոչ ինքն է վարում, ոչ տալիս մեկին,
Բուռն է հավաքել գյուղացու հողին:

Գնում է ուրշի ապրանքը տանում,
Թաքուն հավաքում իր հանդն է անում,
Աղմուկով քըշում իր հանդի միջից,
Շտրափ է առնում անմեղ տիրոջից:

Պարում է ձմեռն հարսանիքներում,
Կամ մեծավորի թեփշի է լիզում,
Մինչև մի քանի շահի է ճարում,
էն էլ տանում է լափում թիփլիզում:

Մի օր սա՛նկավ, թե շորան Չատին
Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել.
Չատին էլ կուլ չի գընաց թավարին.
— Թող գա մի տեսնենք—էդ ո՛վ է տեսել:

Աղաչանք արի, պաղատանք արի.
— Ա՛յ տղա, ասի, ետ քա՛շվի, հեռի՛,
Բեր ձեռը վեր կալ, անծօք շար բանին...
Բայց ի՞նչ հասկացնես բրձի շաբանին:

— Չէ՛ որ չէ՛, ասավ, էն լեռ սարի պես
Գընաց դիք կանգնեց գեղի մեյդանում.
էս դատաստանը, էս թավարն, էս ես,
Թող գա մի տեսնենք ինձ ինչ է անում:

Եկան իրարու խոսք խոսքի հասավ,
Չատին մի քանի կոշտ խոսքեր ասավ.
Դե մարդիկ երբ որ կոխվ են անում,
Մեջտեղ փըլավ չեն իրար բաժանում:

Մեր տանուտերն էլ, աստված է օրհնել,
էսպես մի բան էր պակաս նըրան էլ.
Մեկի պոչը միշտ մեկ էլի տակին,
Եկավ տաքացած, ճիպտը՝ ձեռքին:

Եկավ էս Չատիս հաշիցը կապեց,
Ինչքան որ գիտես՝ թո ասած թուկեց,

Թե՛ պետք է կորցնենք քեզ էնքան հեռու,
Որ էլ չըտեսնես արևը կոռու:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խընդիրքով,
Ինչքան որ տվինք, ավել խընդրեցինք—
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպե՛ր, ասացինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք եք կովացրել, արին հո շարիք.
Համ ծեծել տըվիր, համ ըշտրափըդ առ,
Արի վերջացրու, բու էլավ, հերիք:

Սա ոտը դրեց վերի թարեքին.
— էսքան ու էսքան բերեք, որ ներենք...
— էս է ունեցածն աստըծու տակին,
էլ չըկա, ա՛խպեր, ո՞րտեղից բերենք:

Ինչ արինք՝ շարինք, շեկավ հավատի,
Գընաց ավելի բարձրը գանգատվեց,
Թե՛ ինքըս թավադ, թավադի որդի,
Ու շորան Չատին ինձ ուշունց տըվեց...

Վերևից մի մարդ եկավ քննություն,
Միրուքը հաշա, աստղը ճակատին,
Եկավ, վեր եկավ, մըտավ քյոխվի տուն,
— Որտե՞ղ է, ասավ, էն շորան Չատին...

Չատին էլ եկավ անճոռնի ու մեծ,
էն փետի նըման մեջտեղը տընկվեց.
Ոչ օրենք գիտի, ոչ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն:

Քննությունն արին, բըռնեցին գյադին,
Թե՛ ի՞նչպես ուշունց կըտաս թավադին.
Բաց արին տեսան գըրած զակոնում,
Թե շորան Չատին Միբիր է գընում:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խնդիրքով,
Ինչ ուզեց տըվինք, հետն էլ խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ա՛խպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք եք կովացրել, արին հո շարիք.
Համ ծեծել տըվիր, համ ուզածըդ առ,
Արի վերջացրու, բու էլավ, հերիք:

— Հո՛ գիտեք, ասավ, ես էլ խըղճի տեր,
Չեմ ուզում ընկնեմ արինն էդ տըղի
Դըրա խիզանը մենակ էս գիշեր
Պետք է որ գըցի տեղը էս աղի...

Մարդը խիղճ ունի՛ էսպես է ասում,
Սըրանից ավել էլ ի՞նչ եք ուզում.
Բայց տըղամարդը, որ նամուս ունի,
Կավ է իմանում ինչ պատասխանի...

Երեկ իրիկուն էդ կողքիդ սընից
Կախ էին արած երեք հըրացան:
Քանի՛-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՛-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր: Միտք եմ անում, միտք.
Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում —
Ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր:

Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Ես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
էն ո՞ր աստվածն է կարգ դըրել էսպես...

Երկուն էլ հայ են, ունեն մի հավատ,
էլ ընչի մուժիկ, կամ էլ ի՞նչ թավադ.

Նրա արինը կարծի՞ր է՝ մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըրա՞ ձեռքից:

Թե չէ՞ թավաղ ես՝ ինչ ուզես անես,
Ես չըկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...
է՛հ, մի՞ խոսեցնի, աստված՝ կըսիրես,
Թե չէ՞ մի զաշաղ կըդառնամ ես էլ...

Լըռեց ծերունին: Իրար դեմ ու դեմ՝
Թիկնած էինք թե՛ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թըշշում խավաբշտին,
Մեր դեմը խաղում գիշերական շունչը:

1890

ԱՆՈՒՑ

ՆԱԽԱՅԵՎՈՒՄ

ՀԱՄԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թըռչելով՝
Փերինները սարի գըլխին՝
Հավաքվեցին գիշերով:

— Եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի՛
Չըքնաղագեղ ոգիներ,
Եկե՛ք, շահել սիրահարի՛
Սերը ողբանք վաղամեն:

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունչ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկնփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըբտով խընդիրք արել՝
Բարի ծըպտան իր սերին...

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս իգիթ քու յարին.
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՛ս էդ ծով աչքերին...

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցված սըրտերն ու աչքը՝
Սարի ծաղկունք տըխուր սյուզքով
Հառաչեցին էն գիշեր:

— Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

— Եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի՛
Չըքնաղագեղ ոգիներ...
Ու փերիններն էսպես սըխոր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշաղի
Հընչունեներով դըռնփական,
Ու հենց շողաց ցողքն արևի՛
Անտես, անհետ չըբացան:

Խոր սուգվեցին ակն աղբյուրի,
Մըտան կաղերին հաստարուն,
Ու լեռնաչին վըտակների
Ալիքները սրաղստըուն:

Կանչում է կրրկին, կանչում անդադար
 էն շրճնաղ երկրի կարտուր անքուն,
 Ու թևերն ահա փրուած տիրաբար՝
 Քրոչում է հոգիս, թրոչում դեպի տուն:
 Ուր որ հայրենի օջախի առաջ
 Վաղո՛ւց կարտտով ըսպասում են ինձ,
 Ու ձրմբան երկար գիշերը նըստած՝
 Խոսում են Լոռու հին-հին քաջերից:

Դեպ էն սարերը, որ վես, վիթխարի,
 Հարբած շարճերով բըռնած շուրջպարի,
 Հըսկա՛ շուրջպարի բըռնած երկընճում,
 Հըրճվում են, ասես էն մեծ հարսանքում
 Պերճ Արագածի նազելի դըստեր,
 Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,
 Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
 Փախցըրին բերին անառիկ Լոռի:

է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր,
 Ահա ձեզ տեսա ու միտըս ընկան,
 Առաջըս եկան երջանիկ օրեր,
 Սիրելի դեմքեր, որ հիմի շըկան:
 Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
 Որ անցած գարնան կային ձեր լանջում:
 Անցե՛լ ձեր գըլխի հերվան ձյունի պես,
 Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
 Ողջո՛ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
 Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
 Քրոչուն կարտտով փընտրում ձոր ու լեռ,
 Դյուրական ձայնով կանչում է հանդես:
 Դո՛ւրս եկեք կըրկին շիրմից, խավարից,
 Դո՛ւրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ,
 Կյանքով շընչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
 Լըցրե՛ք պոետի հաճույքը վըսեմ...

Եվ մութ այրերից մամոտ ժայռերի,
 Քավուտ ծըմակի լըռին խորճերից,
 Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
 Արձագանքն ահա լըսում եմ նորից:
 Քընդում է զըվարթ աղմուկը բինի,
 Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,
 Ու բոլորն, ահա, նորից կենդանի
 Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
 Ու թա՛րմ, ցողապատ լեռների լանջում...
 Սո՛ւ... ահա՛նչ արա,— հովիվն է կանչում...

— Աղջի՛, անաստված, նըստի՛ր վըրանում,
 Ի՛նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
 Խաղեր կապելով,
 Չուեր շափելով,
 Ոչխարըս անտեր,
 Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քու սիրով,
 Ոտըս կապեցիր թել-թել մազերով,
 էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով,
 Ա՛յ սարի աղջիկ,
 Ա՛յ սիրուն աղջիկ,
 Ա՛յ դու կարմրաթուշ,
 Քուխամաղ Անուշ:

Քու հերն ու մերը թե որ ինձ շըտան,
 Արին կըթափեմ ես գետի նըման.
 Սարերը կընկնեմ, կորչեմ անգյուման.
 Ա՛յ սև աչքերով,
 Ա՛յ ծով աչքերով,
 Ունքերըդ կամար
 Աղջիկ, քեզ համար:

Սրգում է Սարոն, ու չի կարենում
 Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:
 — Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
 Դու շես իմանում... ականջ արա, տե՛ս...
 — Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դագեն,
 Քանի՛ դուրս թըռչես, նայես դես ու դեն,
 Տեսնողն էլ կասի—ի՛նչ աղջիկ՛ է սա...
 Հազար մարդի մոտ կերթա, կըխոսա:
 — Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջի՛ն,
 Ի՛նչքան ավլուկ է տալիս կանանչին...
 Նանի՛, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
 էն սարի լանջին ռջան գյուղում» ասեմ:
 — Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՛
 Ի՛նչ ունիս ջահել շորանների մոտ,
 նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
 Պարկեշտ կաց, աղջի՛, ամոթ է, ամո՛թ:
 — Ա՛խ, սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի,
 Մին լաց է լինում սեակնա՛ծ, սըբտո՛ւր,
 Մին թև է առնում, ուզում է թըռչի,
 Չըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ուր...
 Նա՛նի ջան, նա՛նի, հս ի՞նչպես ասեմ,
 Ի՛նչ անի անքուն, անհանգիստ քալիդ.
 Նա՛նի ջան, նանի՛, կուժը թող ատենմ,
 Աղբյուրը գընամ աղջիկնների հետ...

VI

Կըժերն ուսած՝ թըռվըռալով
 Զուրն են իջնում աղջիկներ,
 Խընդում իրար ուսի տալով,
 Սրգը գընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
 Դոշ է տալի, փըրփըրում.
 էն ո՞ւմ յարն է նըստած լալի
 Հոնգուր-հոնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, գուլալ ջըրեր,
 Որ գալիս եք սարերից,
 Գալիս՝ անցնում հանդ ու շուր,
 Յարս էլ խըմե՛ց էդ ջըրից:

Յարաբ խըմե՛ց, յարաբ հովցա՛վ
 Վառված սիրտը էն յարի,
 Յարաբ հովցա՛վ, յարաբ անցա՛վ
 Անքուն ցավը շիպյարի...:

— Աղջի՛, քու յարն եկավ անցավ
 Վառված, տարված քու սիրով,
 էրված շիգյարն՝ եկավ անցավ,
 Չըհովացավ պաղ ջըրով...:

Ամպի տակից ջուր է գալի,
 Դոշ է տալի, փըրփըրում.
 Ա՛խ, իմ աղխը յարն է լալի
 Հոնգուր-հոնգուր էն սարում:

VII

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
 Չեն տըվավ թաքուն մի խավար կասկած.

— Էն ե՛րբ էր՝ Անուշն իր կուժը առավ,
 Աղբյուրը գընաց ու ետ չըդառաւ...
 Ամպերն եկել են սարերը պատել,
 Չորերը լըցվել, իրար փաթափվել,
 Հազար շար ու շառ, հազար հարամֆ,
 Հազար ջահելներ վըխտում՝ են հիմի...:

Ու ելավ տեղից պառավը հանկարծ...
 — Ո՛ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազըդ կըտրած...
 Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
 Կանչում է, կանչում անա՛հ զամպիկն...
 — Աղջի՛, սեասի՛րտ, քու ա՛հը կըտրի,
 Աղջիկը մենակ ձո՛րը կըմըսնի.
 Ամպը կոխել է, աշխարհը մըլմե՛լ:

Ի՞նչ ես կորցրել՝ չես կարում գրտնել...
Աղբի, հե՛յ Անուշ, ա՛յ աղբի՛, Անո՛ւշ...
Սրնկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ».
Ու ձորի գրլխին մոլորված կանգնած
Նայում է ներքև սիրտը սևակնած:
Ամպերն եկել են սարերը պատել:
Ձորերը լցվել, իրար փաթաթվել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի:

VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ... մերըս կիմանա...
— Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի՛ քիչ էլ մընա...
— Չէ՛, թող ես գնամ... ա՛խ, ի՛նչ խենթ եմ ես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ծս ե՛րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրա՛վ,
Էնքան մընացի՛ աչքըս ջուր դառավ,
Ինձ չես լըսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում՝
Ինչ կըլնեմ ես...
Ծս կըվառվեմ,
Հուր կըդառնամ,
Ծս կըհալվեմ,
Ջուր կըդառնամ,
Ծս չըգիտեմ՝
Ինչ կըդառնամ,
Թե որ մին էլ
էսպես մընամ...

Ասում են՝ ուղիս
Աղբիկ էր ինձ պես,

Մընում էր յարին,
Ու շեկավ նա տես:
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից շորացավ,
Ուռնի դարձավ:
Ջրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում...

— Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում...
Էն, որ գիշերով շըհու եմ փըշում,
Էն ո՞ւմ եմ կանչում...
Էն, որ մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում...
Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ հիշում...
Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստված Անո՛ւշ...
Արբեցա՛ծ, անո՛ւժ
Հառաչեց հովիվն ու սըրտին ընկավ,
Հալվեցա՛վ, հանգա՛վ...

IX

— Անո՛ւշ, ա՛յ աղբի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մերը, հառաչում, կանչում:
— Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛...
Ձորից աղջըկա ձենն է դողանջում:
Ու մազերն անկարգ տըված թիկունքով

Ու ցըրված շիկնած այտերի վրտան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նրման:
Նա կուժը դատարկ ետ բերավ կրրիկին,
Իսկ ուսին տարած առաջոր չըկա,
Թողել է էն էլ ջրրի եզերքին...
Ա՛խ, անհոգութուն շահել աղջըկա...
— Նանի՛, վախեցի, գանգատվում է նա,
Եվ ուզում է լալ, շի կարողանում.
Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսա,
Կարծեցի՛ թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մերը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով իրենում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

ԵՐԿՐՈՐԳ ԵՐԳ

X

ՀԱՄԱՐԱՐՃՈՒՄ ԱՌԱՎՈՅԸ

Համբարձումն եկավ, ծաղիկունքը ալվան
Ջուզել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

— Համբարձում յա՛յլա,
Յա՛յլա՛ ջան, յա՛յլա,
Սև սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Երգ ու բույր խանած,
Թե-թևի բրունած
Ջուզում են լեռներ,
Յաղիկ են քաղում,
Սաղիկ հետ խաղում,
Ինչպես թիթեռներ:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Լավ օրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Եկավ Համբարձում
Սաղիկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ գրաված:

— Ա՛յ ջան՝ սողա, շքա՛ն՝ սողա, ո՛ւմն ես դու
— Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դե հանի՛ր, ա՛ղջի,
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
էն իգիթ յարին:

— Բեղը ծիւ-ծիւ, բոյը թիւ-թիւ էն յարի,
Ի՛նչ դարդ ունեմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Հուր սըրտեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մեկին իր երազն ու սեր,
Մյուսի մուրաղը սըրտումն է մընում:

XI

Պրտույտ է տալիս վիճակը նորից.
Քուշուշքը գրչիին ծաղիկ Սաղկամեք,
Թընդում՝ զջան գյուղում՝ մատաղ սըրտերից,
Հեռը գրվողում էն ծաղիկոտ սաքեք:

— Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Զիգյարին գյուլլա դիպչի
Քեզ սիրի ով որ, աղջիկ:

— Ո՛հ, ի՛նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Սևաբա՛խտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ:

— Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի շար խոսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղը խաղա՛, ջան գյուլում ասա:

— Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ.
Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել...
Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի օր, ես օրորոցում,
Մի պառավ դարվիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նըրան բաժին չի տալի.
— Կորի՛, ասում է, կորի՛ մեր դըռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...
Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թե՛ դըրա օրը լացով անց կենա...
Ա՛խ, էն դարվիշի անեծքին անգուժ
Ու էս վիճակին տեղյակ է աստված.
Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մո՛ւթ,
Ի՛նչ կա, չըզգիտեմ, իմ առջև պահված...

— Մի՛ տըրտմիր, Անո՛ւշ, մի՛ լինիր համառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու էդպես սըրտաճա՛ք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան,

Կյանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
էդ քո նորահաս մատաղ կուսուժյան
Առաջև դեռ կան երջանիկ օրեր:
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի շար խոսք է սա,
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա:

(Խուճրը երգում է)

Աղջի, բախտավո՛ր,
Երե՛ն՛կ քու սերին,
Քու սարի սովոր
Սև-սև աչերին:

Համբարձում, յա՛լլա,
Յա՛լլա ջան, յա՛լլա,
Սեր-օրեր, յա՛լլա,
Յա՛լլա ջան, յա՛լլա:

Մեռնեմ փարունքիդ,
Մաղկած դարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանգնած յար ունես:

Համբարձում, յա՛լլա,
Յա՛լլա ջան, յա՛լլա,
Սար-յարեր, յա՛լլա,
Յա՛լլա ջան, յա՛լլա:

(Անուշը մեճակ)

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ,
Չեմ հասկանում՝ դեպի ուր...
Դողում է պաղ նըրա ձեռնից
Իմ սիրտը սև ու տըրտուր:

Դուք էլ, սարի սիրուն ծաղիկներ,
Թարուն մի ցավ ունիք լուռ,
Աշիկները լիքն է արցունք,
Սիրտները սև ու տրխուր:

Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջվում են միշտ էսպես դուք,
Տըրորվում են ու թառամում՝
Սիրտները սև ու տրխուր:

(Խումբը հեռվից)

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Վառ ցավեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

XII.

Ձրմուսն մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անզուսպ ամբողջ գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լեն հրապարակ
Բաց արին մեղտեղն արձակ գըլխատան,
Ջուռնաշին փըշեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարա՛յ են տալի—«բաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մոսիկն:
Ողջ գյուղը կանգնեց պարզսպի նման,
Ջոկվեց, բաժանվեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փուճկան,

Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի:
Գոռում են, գոչում երկու բանակից.
— Սըրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, տըղե՛րք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարս ու աղջրկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փեշերը հավաք խըրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մուլեգին...
Աղաթ կա սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց աղաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խոզապարկովի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դըժվար է իբրև հաղթել մեկ մեկի:
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Ջուր սըրտաարբոփ նայում աղջիկներ,
Եվ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր:
Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ,
Աչքերի առջև մըլաբը պատեց,
Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարք:
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու շոքեց վըրեն:
Ամբոխը թափվեց հարա-հըրոցով,
Վեր թըոցրեց ջահել փահլեաններին,
Եվ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:
Յընժուճյան ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջրկերք:

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,
 — Թող գա՛, գոռում է, որ բըռնենք նորից,
 Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
 էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
 Վե՛ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
 Մեյդան բաց արեք, թող մին էլ մեջ գա...
 Ու ամեն կողմից ուրախ հըռհըռում,
 Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Չե՛ լավ, էդ չե՛ լավ,
 Վեր չի գըցել դեռ,
 Մոսին թո՛ւ էլավ—
 Խոզապարկուկ էր...
 Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
 Շատ էլ լավ կանի.
 Մեջքը թա՛փ տըվեք,
 Թող մին էլ բըռնի...
 Հա՛, հա՛ հա՛, տըղեք,
 Մեջքը թա՛փ տըվեք...

XIV

Եվ աղմկալի հարսանքի տանից
 Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր.
 Արյուն է կաթում սևակնած սըրտից,
 Գընում էր ըշտապ, քայլերը մոլոր:
 — Ամո՛թ քեզ, Մոսի՛, թո՛ւք ու նախատինք,
 Ամո՛թ քեզ նըման գոված իգիթին,
 Մի անունդ հիշեր, մի բոյիդ մըտիկ,
 Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
 Ի՛նչպես վեր ընկար դո՛ւ սաթի նըման,
 Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած...
 Դո՛ւ... կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
 Նըրանից հետո երևաս կանա՛նց...
 Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գըլխին...

Մաղրատեղ դառար բովանդակ գեղին...
 Դե մեռի՛ր, էլի՛, գետինը մըտի՛ր,
 Տանը վե՛ր ընկե՛ր՝ իլիկ պըտըտիր...:

XV

— Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
 Սըրանից հետո չե՛մ սիրիլ նըրան...
 Վախենում եմ ես... դամեդ տեղը դիր...
 Սիրտըս դողում է տերևի նըման...
 Խնդրում էր լալով եղբոր առաջին
 Անգոր ու դալուկ իր քույրը շոքած.
 Մոսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
 Ուզում էր մորթիլ նըրան աչքը բաց:
 — Դե իմ անունով երդվի՛ր, անըզգա՛մ,
 Որ էլ Սարոյին դու չես սիրելու,
 Թե չէ՛ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
 Մինչև դաստակը սիրտըդ եմ խըրելու:
 — Քու ոտի հողն եմ, Մո՛սի ջան, Մոսի՛,
 Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
 Ես էլ Սարոյին չեմ սիրում՝ ասի,
 Տեսնո՞ւմ ես շոքած ի՛նչպես եմ լալիս...
 — Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ, խաբերա՛.
 Չե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
 էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
 Հեկեկում ես դու գիշերվա մըթնում.
 էն ի՞նչ է հապա, որ դու երազում
 «Սարո ջան, Սարո՛... Սարո» ես ասում...
 — Մո՛սի ջան, Մո՛սի, գըլխովըդ շուռ գամ,
 Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անգամ.
 էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
 էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
 Ինձ մի՛ ըսպանիր, դամեդ տար հեռու...
 Քու քույրը չե՛մ ես... իմ Մոսին չե՞ս դու...

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
 Ախպեր տըղերքը էս դեպքի համար.
 Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
 Կըրկին հաշտության շեղավ մի հընար:
 Անկոտորում Մոսիկն էլ ո՞ր Մոսիկն էր,
 Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարհում,
 Իրեն հարազատ քըրոջը տեսներ
 Նամարդ ընկերի՝ Սարոյի գըրկում:
 Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
 Ուզում է շահել քըրոջն ըսպանի,
 Սարոյի անունն ու սերը թաքտն
 Խանչալի ծերով սըրտիցը հանի:
 Ո՞վ գիտի, գուցե հենց էս գիշեր էլ
 Իգիթ ոսոխներն, անհաշտ ու համառ,
 Մեկմեկու հոտից ոլխար են քըշել:
 Մեկմեկից վըրեժ առնելու համար:
 Կարող է նույնպես պատահել հանկարծ:
 Որ մեկի դեզը, արդյունքը հընձի,
 Գիշերվա ժամին, հըրով բըրբեկած:
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐԿՈՐԿ ԵՐԳ

Ամպերը դանդաղ ուղտերի նրձան՝
 Նոր են ջուր խըմած՝ ձորից բարձրանում.
 Քարոտ թիկունքից Զաթինդաղ լիտան
 Նոր է արևը պըռունդը հանում:
 Գյուղում աղմուկով իրար են անցնում,
 Կըտեր ծերերին կանայք հավաքված,
 Տըղերքը դեպի քարափն են վազում՝
 Հըրացանների կիսերից բռնած:

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
 Կանգնեց վըրդովված տըղերանց միջին,
 Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
 էսպես նա պատմեց զոռ տալով շիթիին.
 — էս գիշեր, կեսը կըլնեի գիշերվա,
 Դեռ շի կըտցրել աչքըս տեղի մեջ,
 Քունս էլ է կորել, ջանս էլ էն վազվա,
 Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
 Հա՛, հալալ կեսը կըլնեի գիշերվա,
 Շունը վերկացավ էս կըռան վըրա.
 Հեյ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող շելավ.
 Շունը գազազեց, շոնը վեր կալավ...
 Հե՛յ գիղի, ասի ինքըս իմ միջում,
 Ի՛նչ է մընացել ասաջվան տըղից.
 Քընում էի վաղ մենակ արխաջում,
 Մի ձեն լըսելիս վեր թըրոչում տեղից...
 էն էի ասում, քընկլ շէի դեռ.
 Կըլինեի դառը գիշերվան կեսը,
 Երկու մարդկային սև կիրպարանքներ
 Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...
 էս որ լըսեցին, դես ու դեն ցըրված
 Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
 Ու մըտի տակին, ճամփիցը ծըռված,
 Երկու մարդու թայրմ ոտնատեղ գըտան:

Ամբողջ մի ամիս խուճըր զինավառ
 Սարեր ու ձորեր տունատակ տըղեց՝
 Չորան Սարոյին գըտնելու համար.
 Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց:
 Մի ամսից հետո տըղերքն եկան տուն,
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.
 — Հալալ է տըղին, ա՛յ փգիթության,
 Ահա թե ինչպես կըփախցնեն աղբիկ:

Մենակ Անուշի փայտերը—Մոսին
Մընաց հանդերում. երդում կերպով նա,
Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա:
Մնաց հանդերում: Եվ ահա մի օր,
Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, տըխուր, գըլխակոր.
Անուշը ձորից եկավ հորանց տուն:

XX

— Աղջի՛, Վա՛րդիշաղ, թե հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցի՛ր, տես ի՞նչ է ասում.
Աչքըս խավարի, տեսիլ դառնամ ես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձեն ձենի տըված...
Մի գարիդ գըցի՛ր, թե որդով խընդաս,
էս երազն իսկի ես լավ շեմ փորձել.
Ողորմած աստված, քու դուռը բանաս,
Քու ոտի հողն ենք — դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձենով լալիս,
Սարոյի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալիս...
— Աղջի՛, Մա՛նիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ ահա, էդպես դուրս եկավ.
էս շարն, էս բարին... Սարոն է էս էլ...
Տե՛ս, ահա, Սարոն սև ճամփեն ընկավ...
Աստված խընայի ջահել-ջիվանին,
Աստված խընայի իր անբախտ նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սարոն փախցրած եղջերվի նըման,

Օրհասն առաջին, գընդաին ետեից,
Հանդերը՝ դըժոխք, ընկերը՝ դուշման:

Եվ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խավարն է պատում,
Նըրա բայաթին ողորմ է տըխուր,
Ընկեր սարերին խոսում, գանգատվում:

— Բարձրը սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բուժես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անգյուման,
էս աշխարհից բեզարած:

Կորչեմ բեզար դատարգուն,
Քարե-սարեսար դատարգուն.
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ, կըմեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կառայք հարևան,
Ու խոսք շեն գըտնում ասեն անարգված,
Տարած, ետ բերած, անբախտ աղջրկան:

Աստված խրնայեց՝ կոպիտ ախպերը
 Հեռու հանդերից դեռ տունն չէր դարձել,
 Իսկ խոժոռադեմ ալևոր հերը
 Հսկասով փրփրփրած թրթռել, անիծել:
 — Դո՛ւրս գրեա՛, կորի՛, ա՛յ լիրբ, տներգա՛մ,
 Սև ու սուգ լինի թագ ու պրսակըդ:
 Կորի՛, շերևաս աչքիս մյուս անգամ,
 Գետինը մըտնի երկար հասակըդ:
 Տեսա՛ր, որ նրբան ատում է Մոսին,
 Չեն ուզում, տեսար, նրբան հերն ու մերդ:
 Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուտին,
 Որ վեր ես կենում փախչում նրբա հետ:
 Խոնրված գյուղացիք կըտուրից իջան՝
 Մեղմելու կոպիտ բարկութունը հոր,
 Հայտնըվեց նույնպես գյուղի քահանան,
 Մի պատկառելի հըսկա ալևոր:
 — Դո՛ւրս գրնացե՛ք, դո՛ւրս, գոչեց տերտերը,
 Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,
 Թողեք նա հայտնի իր միտքն ու տերը,
 Նրբանից հետո բանը կըպարզի:
 Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
 Սիրո՛ւմ ես նրբան, քու կամքո՞ւմ փախար...
 Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
 Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
 — Ի՛նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
 Որ դուրսը հանկարծ աղմբկեց էսպես...
 Ո՞վ է ըսպանել... Մոսի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
 — Անո՛ւշ, հե՛յ Անո՛ւշ... շուր հասցրե՛ք, ջո՛ւր...

XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
 Երկընթի մըթնած ամպերից փչչներ,
 Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,
 Գյուղից սրլացան մի փռամբ կըտրիճներ:
 Ցավից տաքացած էլ բան չեն հարցնում,
 Թըռչում են, ասես ահից հալածված,
 Ու նրբանց առջև ահա՛ն իրաջվում,

Թըռչում է ձորը արշուճով լըցված՝
 Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
 Բարափի գըլխին կանգնած անհամբեր,
 Լո՛ւտ, սըրտատըրոփ ախանց են դընում,
 Նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ.
 Դեբեղն է մեծակ անդընդում՝ հուզված՝
 Խըլածայն ողբով սողում դեպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
 Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
 Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
 Եվ կերպարանքը փոխված է բուրբ:
 Առանց նայելու մարդկանց երեսին,
 Առանց խոսելու, սևակնած, դաժան,
 Մոտեցավ սրահին, կախ տըվավ սրնին՝
 Սև հըրացանը՝ սև օձի նըման:
 Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
 Ոչ ոք ծըպըտալ չի համարձակվում,
 Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
 Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
 Մեռած շորանի պատավ նանն է նա՝
 Ցավից խելագար բառաչում, լալիս.
 Տարաբա՛խտ ծընող, վազում է ահա,
 Չորիցն է տըխուր գոռոցը գալիս:

XXV

Սըգավոր կանայք նրբա ետևից
 Հարա՛յ կանչելով ձորը վազեցին,
 Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝
 Դիակի շուրջը կարգով շարվեցին:
 Իգիթին վայել սըրտառուչ ողբով՝
 Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված:
 Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր.
 Մընացին մոտիկ քարերին նըստած:

Ողբացին անշունչ դիակի վըրա՝
Անտեր մընացած ոշխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
Եվ նըրա մասին, որ ընկերները
Հանդը գընալիս Սարո կըկանչեն,
Որ սարից փախած սոված շընեբը
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,
Օճորքում գըրած պիտի մըրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
էլ սար չի փնալ առանց Սարոյի:
Սև շորեր հագած կընըստի տանը,
Անցած օրերը միտը կըբերի:
Եվ ամեն մի խոսք, մի հիշողություն
Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
Եվ աղաչում էր նա մեռած որդուն՝
Մի անգամ խոսի, աչքը բաց անի:
— Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կյանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Քըշնամի՞ որդի, դավաճան՝ որդի...
Բայց չէին բացվում աչքերը փակված,
Շուրթերը սառել, չորացել էին.
Նըրանց արանքից ատամները բաց՝
Սիպտակ շարքերով երևում էին:
Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով
Ծառս եղավ դուշման երկընքի դիմաց,
Եվ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եվ լալիս էին ձեն ձենի տըված...
— Կարմիր արևից ընկած, Սարո ջա՞ն.
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՞ն...
Արևս հանգավ, Սարո ջա՞ն,
Գիշերս ընկավ, Սարո ջա՞ն...
Գիշերը ընկավ, թանձրացավ մութը.

Ու նըվաղեցին ձեները տըրտում,
Հոգնեցի՞ն, հանգա՞ն... Մերուկ Դեբեդը
Սըգում էր մեծակ խավար անդընդում:

Սըգվոր գետը՝
Մեր Դեբեդը,
Սիրտը քըրքրած,
Ջուրը փըրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին,
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Եվ մի քանի ընկեր-տըղերք
Ձորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըվին հովվի դին:
Ծառ ու ծաղիկ՝ սըվսըվալով
Բույր խընկեցին դյուրեկան,
Մեր Դե-բեդն էլ ահեղ ձենով
Երգեց վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Ձորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

XXVII

Գարունը եկավ, հավքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկավ, մի մեծակ քաղվոր,
Գետի եզերքին շըրջում է մուրը,
Շըրջում է մուրը, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

— Միրուն ազգի՛կ, ի՞նչ ես լալիս
էդպես մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
էս ձորերում ամեն օր:
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կըգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես սւզում,
Ա՛խ, նա գընա՛ց, նա գընա՛ց...
Արտասովելով, լալով էդպես
նա չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Ջահել կըրական աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
Դու էլ գընա նոր սեր արա,
էսպես է կարգն աշխարհի:

— Ծնորհակալ եմ, անցվոր ախպե՛ր,
Աստված պահի քու յարին.
Ճամփիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ,
Ինձ արցունք է տըվիլ տերը,
Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տըտունչն է խոսում,
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անչորան,
Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու,
էլ չի դառնալու, էլ չի դառնալու...

— Ծ՛տ դատ, ե՛տ, իգե՛թ,
Ծտ դառ, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր գառավ:
Ոչխարդ էն սարով.
Շուռ տուր, առնն արի՛՛
Փախի՛ր գիշերով
Ու թաքուն արի...
Ա՛խ, էն կանաչ սարի լանջին,
Ո՞վ է քընած էն տըղենն,
Վըրեն քաշած սև յափընջին,
Կուռը հանած էն տըղենն...
Ջա՛ն, իմ յարն է, ջանի՛ն մեռնեմ,
Սաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՛ւշ, անուշ մըբափեկ

Վե՛ր կաց, վե՛ր, իգե՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛վ,
Ոչխարըդ բեր կիթ,
Օրը ճաշ դառավ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,
Թուխ շորան, արի՛,
Կարոտըս առնեմ...

Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուքս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Ձի են խաղում, շափ տաքի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արեք,
էս ի՞նչ տեսիլք ես տեսա.
Ո՞վ էր տեսել էսպես հարսնիք—
Ո՛չ հարս ունի, ո՛չ փեսա...

Բերում են հըբեն,
Ամա՛ն, մեք տան դեմ...

Վե՛ր դըրեք, վըրե՛ն
Հյուսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալի՛ս,
էդ ո՛ւր եք տանում...
Ինձ էլ թաղեցեք
Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է լո՛ւռ, սառած,
Արյունը չոր դեմքի վըրա,
Աչքերն անթա՛րթ, սիպտակած,
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
Արի՛, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը շուր դառավ:
էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
էլ մի լացացնի,
Ես շատ եմ լացել...
Տե՛ս, կրխոռվե՛մ,
Լաց կըլիս ես է՛լ...
Չեմ խոսիլ քեզ հե՛տ...
Չեմ սիրիլ քեզ է՛լ...

XXVIII

Անլըռելի վըշվըշում է
Պըզտոր շուրը Դեբեդի,
Նըրա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:
Նըրա շուրջը հեզ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,

Ձե՛ն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված,
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկա,
Բայց իր սիրած տըղան երբեք
Չըկա՛, չըկա՛ ու չըկա...
Վըշվըշում է գետը—վո՛ւշ, վո՛ւշ,
Ու հորձանք է տալիս հորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ յարիդ մոտ...»

— Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մերը վերևից, կանչո՛ւմ.
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են անոելի,
Դու՛ման Դեբեդն է մենակ մըռընչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին,
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, է՛ն դյուրիշ գիշեր,
Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկընքի դըռներ,
Ներքև պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհըրդով
Լըցվում բովանդակ նըրա սուրբ գըթով:

է՛ն վե՛հ վայրկենին չըքնաղ գիշերի՛
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Ասողերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

I

Հընչում էր վերջերսն վրտահն արծաթի,
 Արևը խաղում պայծառ-կապույտում...
 Առանց հոգսերի ու առանց վրշտի
 Խաղում էինք մենք էն երազ հովտում,
 Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրորդ...
 — Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Չի կարենում բըռնել ես նըրան,
 Ճերմակին տալով՝ ծառերի ետև...
 Մածկըվում էր նա աչքես անգուաման,
 Կըրկին հայտնըվում ճապուկ ու թեթև,
 Ու թընդում էր միշտ ծիծաղը ծաղրող...
 — Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
 Բըռնեցի նըրան: Հանկարծ նա ճըշաց,
 Չեղբումըս դառավ ճերմակ աղավնի,
 Ու թևին արավ, ու թըռավ, գընա՛ց...
 Գընա՛ց ճախրելով էն երազ հովտում,
 Մուզվեց, չըբացավ պայծառ կապույտում...

II

Վեր թըռա քընից, դուրսը նայեցի...
 Արևը ուրախ զարկել էր սարին,
 Բընությունն անհոգ, թարմ ու նազելի
 Զուգվում էր, ժըպտում մանուկ արևին:
 Գիշերն անցել էր, բայց իր ետևից
 Մըռայլ էր թողել դեռ ցած հովիտում,
 Էդպես տակավին անցած երազից
 Խավար մի բան կար նըստած իմ սըքտում:
 Թեկուզ երազին չես էլ հավատում,
 Բայց օտար տեղում, բո տանից հեռու,

Սիրտըդ մի համառ կասկած է մըտնում,
 Թե՛ մի մահագույժ ուկ բոթ է գալու...

Հասմիկն երազում աղավնի դառավ,
 Աղավնի դառավ՝ իմ ձեռքից թըռավ...
 Լոկ երա՞զ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
 Երազ, թե իրոք—այդ միթե մի՞նչ չէ,
 Երազն էլ երբ որ կարող է կանչել՝
 Կարող է հուզել, խընդացնել, տանջել...
 Հասմիկն ապրում էր—Հասմիկը մեռավ...

Երազը եկավ—երազը թըռավ...
 Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
 Երկուն էլ անցվոր, երկուն էլ պատրանք:
 Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,
 Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա,
 Որ թե հարթըմնի և թե երազում
 Ապրում է, տեսնում, ըզգում ու հուզվում...
 Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
 Թե՛ կինըս հիվանդ—ըսպասում է ինձ...

III

Տո՛ւն, տո՛ւն, դեպի՛ տուն
 Թըռչում եմ արթուն,
 Ինչպես երազում:
 Եուրջըս ամեն-բան
 Ըշտապ, ինձ նըման,
 Անցնում է, վազում:

Երջմած գըլթիս՝ մեց
 Գալիս ես անվերջ
 Ու ճընչում իրոք
 Զանազան դեպքեր,
 Հուշեր ու մըտքեր,
 Պայծառ ու խավար...

Ենտնում եմ նըրան՝
 Թանջում է գարեհեռ

Շողերի միջին,
Ու ժրպտում է ինձ
Իր պատուհանից՝
Մաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Մաղկով զարդարած,
Դրբած դագաղում.
Տըխրալի մի օր,
Արտասուք, սրգվոր,
Սևեր ու թաղում...

Տո՛ւն, տո՛ւն, դեպի տուն.
Ու մյուս իրիկուն
Մեր տան դեմ ելաւ:
Մի սև-սև զանգված՝
Կուտակված, կանգնած
Մեր դռանն ահա...

Պըտուլտ է գալիս
Աշխարհը գըլխիս,
Երկինքը մըթնում...
Ողջ կանգնած են լուռ,
Ու ներսից տըխուր
Չայներ են թընդում...

IV

«Հասմի՛կ շա՛ն, եկա՛վ... դե վեր կա՛ց... վեր
կա՛ց...»

Դուրս հոսեց դեմքս տըրտում ու հոգնած
Նըբա մոր ողբը... խունկի ծըխի տակ
Աչքովըս ընկավ դագաղը ճերմակ,
Ու շուրջըս մըթնեց: Տեղըս կորցըրի...
Մարդից, արևից, աշխարհից հեռի,
Մի անտակ ձորում, սև՝ ու խոր շըբում
Տարվում էի ես, խեղդվում, շարչարվում.

Բարձր էին ափերն, ողորկ ու դրժար,
Մի թուփ չըկար գեթ բունելու համար,
Զըկար կենդանի ձե՛ն, ըստվե՛ր, նըշա՛ն,
Որ կարենայի կանչել օգնության...

V

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, զըվարթ թըրթըրով
Մի ծիծաղ անցավ փողոցի միջով:
Ես ուշքի եկա, աչքըս բաց արի,
Տեսա աշխարհը ու լույսն արևի,
Տեսա՝ նըստտած մարդիկ շըշընջում,
Անտարբեր թեքված՝ իրար ականջում
Խոսում են ուրիշ բաների վըրա,
Ու ոմանք ժրպտո՛ւմ, ժրպտում աշխարհ...
Իսկ կողքիս նըստած ալևոր մի մարդ
Խրատում էր ինձ միալար, հանդարտ.
— Մի՛ լար, սիրելի՛ս, երեխա շես դու,
Ինչքան էլ որ լաս — իզուր ես լալու.
Քո ձենը երբեք էլ չի լըսվի նա,
Ոչ կըհասկանա, ոչ էլ ետ կըգա:
էսպես կամեցավ աստված, երևի,
Որ նըբա օրը շուտով խավարի...
Մենք հողեղեններս՝ անճար ու չընչին,
Ի՛նչ ենք աստուծո կամքի առաջին...
Բաց է էս ճամփեն ամենքիս համար.
Մեր, երիտասարդ, մեղավոր, արդար,—
Ամե՛նք, ամենքը, էստեղ ինչ որ կան,
էսօր թե էգուց ամենքը կերթան.
Ով որ կըմընա,
Թող նա պարծենա:

VI

Ես լըսում էի... Ու հանկարծ ես էլ
Ուզեցի հաշտվել հըզոր մահի հետ.
Անճար, ախարմա սկսա մըտածել:

Թե մահը լափ է, միայն մենք՝ տարեալ,
 Մենք խեղճ, կարճամիտ, ու շնորհասկանում...
 Ինչպես է գաղթս և ուր է տանում,
 Թե՛ և՛ կյանք, և՛ մահ—անցավոր, ունայն...
 Մի մեծ հավերժի ձևերն են միայն,
 Ինչպես որ ահա «երեկն» ու «էսօր»:
 էսօրն ինչ է որ,— մի երեկ է նոր,
 էսօրն էլ կանցնի, երեկ կը դառնաս,
 Եվ սակայն կըրկին միեկնույն է նա
 Եվ էսպես անվերջ էսօր ու երեկ
 Փոփոխվում են միայն, միշտ մընում է մեկ.—
 Մեկ մեծ ժամանակ: էսպես էլ հոգին.
 Փոփոխում է միայն կեզին արտաքին—
 Մարմինն՝ էսօրվան օրին՝ նրանման,
 Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ:
 Կամ ևս սիրուն,— հասանուտ մի գետ,
 Որ հազար աչիք ու ծրփանք ունի.
 Գալիս են ալիք, անցնում են անհետ,
 Անցնում են դեպի անդունդն օվկիանի,
 Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ.
 Ապրում է դարձյալ անվերջ, անընդհատ...
 էսպես փոխվելով հասում է գրկում,
 Գրկում անհունի անճառ սահմանում,
 Գեպի գերազանց վիճակն երջանիկ,
 Ակն երջանկության, սիրո հայրենիք:
 Ուր շրկան մարգրիկ և ոչ ըզգացում,
 Ուր ողջին մի մեծ կյանք է միացնում...
 Եվ ի՞նչ է սիրո իմաստը վերին,
 Ի՞նչ երջանկության խորհարդը խորին,—
 Հավի՛ն՛, միանա՛լ,
 Իրեն մոռանալ...

Եվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում,
 Երկրում թե այլուր, վերե՛ն երկրներում,
 էն անհայտ ճամփով, որով նա գրկաց,
 Ես էլ կը թռչեմ, աշխարհը թողած,

Ու կըզգամ նրբան լիպարեմ նրբա հետ
 Մի ուրիշ անվի՛րջ կյանքով երկնավետ...

VII

Բայց ես միշտ թաքուն մի հույս ունի,
 Թե կարող էր նա լինել... կենդանի...
 Մի տեղ մի անգամ էդպես է եղել.
 Տարել են մեկին, ուղել են թաղել,
 Շիրմի փոսի մեջ զարթնել է հանկարծ,
 Կարող էր և մեզ լինել պատահած...

VIII

— Ո՛չ, ո՛չ, նա գրկաց էլ ետ չի գալու,
 Եվ էդպես դու միշտ մեկը ես մընալու
 Թեկուզ և հագնես երկաթի տըրեխ,
 Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ.
 էլ շես հանդիպիլ նրան ոչ մի տեղ,
 Ոչ մի աշխարհում, ոչ մի ժամանակ...
 էն պաղ-դիտակն էլ, որ տեսնում ես դեռ,
 էն էլ հողի տակ կը ծածկեն հիմա,
 Կըզա՛ն, կըզնա՛ն տարիքն անտարրեր,
 Ու նա կը փրաթ, նա հող կը դառնա.
 Անունն էլ ապրող աշխարհի հաճար
 Դատարկ մի հնչյուն, անխորհուրդ մի քառ...
 էն էլ կը փորչի, ինչպես որ շրկա
 Անունն ու հետքը էն հին աղչրկա,
 Որ ձեզնից առաջ հազար տարիներ
 Նույնպես սիրածար ա՛ծը փառ ուներու
 Եվ ի՞նչ է մարդը, և ի՞նչ իրեն կյանք.—
 Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ:
 Հավերժականը չունի կերպարանք,
 Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...
 Անողոր մի ձեն լիպարեմ ինձ կանչում,
 Տանջում էր հողիս, խորտակում, նրեշում:
 Ճիգ էի անում նրբան շրտնիցել,

Միրտըս էլ հետը պոկել, հեռացնել
Աւ գրտնել մի ձեն, մի հընչյուն, մի բառ,
Որ կյանքի, հույսի նըշույլ ունենար...
Ուզեցի «աստված» մին աղաղակել,
Բայց չէ՞ որ նա էր էն մահն ուղարկել:

IX

Մի անհուն ցավի մըրմուռի նըման
Մավալվում էին զանգերը թաղման,
Ու ժամի ծըխտտ կամարների տակ
Կանգնած էր արդեն տըխտտ պատարագ,
Տըխտտ պատարագ, տըխտտ մեղեդիք,
Տըխտտ աղոթքներ ու տըխտտ մարդիկ,
Մեջտեղը ճերմակ դագաղը նըրա
Գըրած սևասքող սեղանի վըրա,
Ու նա դագաղում, ասես թե քընած,
Հարսնական ճերմակ շորով պճնըված,
Անփո՛ւյթ, անզգա՛ կյանքին ու մահվան,
Իր դագաղն ածած վարդերի նըման...

էստեղ՝ բունըված մի նոր տագնապով՝
Ուզեցի գըտնեմ մըտքի մի թափով,
Թե ի՞նչ էր արդյոք, էն ի՞նչ էր լինում,
Ի՞նչ էր պատահել, նա ո՛ւր էր գընում...
Եվ իսկույն, ասես, դիպա մի քարի:
Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
Կանգնած էի ես խորտակված ու պաղ:
Լուռ էր: Հոգևոր երգերը մենակ
Մավալվում էին վըսեմ ու խաղաղ:
Ես լըսում էի, լըսո՛ւմ շարունակ:

«Այս անցավոր երկրի վըրա
Լըցան օրերն պանդըխտության,
Երկնաարըաց գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացած մահկանացուն՝
Միանալու իր աստըծուն:

Այնտե՛ղ, Վերին Երուսաղեմ,
Օթևանում հըրեշտակաց,
Ուր որ Ենովք ու Եղիաս,
Աղավնակերպ կան ծերացած,
Այն աշխարհո՛ւմ անտըխտտական
Արդարքն ապրում են հավիտյան:

Յոթնաստեղյան լույս խորանում,
Ուր ցավ չըկա, ոչ հեծություն,
Ընտրյալ հոգիքն ուրախանում,
Խայտում են միշտ անվե՛րջ, անհո՛ւն
Բերկրանքներով հարազըվարձ,
Աստծո զըվարթ աչքի առաջ:

Այնտեղ նըրանք, միշտ բախտավոր,
Նայում են Հոր լույս երեսին,
Նըրա առջև պաղատավոր
Նըրանց համար, որ թողեցին.
Ու իջնում են, մըխիթարում
Մեզ տըրտմալի այս աշխարհում...»

Թովված, կախարդված, տառված էն երգինը
Վերացավ, թըռավ իմ վշտոտ հոգին
Դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անհայտ ու հեռու, անծանոթ, օտա՛ր...
Եվ էն աշխարհը հըրաշալի՛ էր.
Ո՛չ սուգ կար էնտեղ, ո՛չ վայելք, ո՛չ սեք,
Ոչ կարելի էր կորցընել մի բան
Եվ ոչ ունենալ քաղց ազահության.
Ինչպես գերեզման և ունայնություն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Ինչպես հայացքը մեռելի աչքի՝
Մի միտք ունեի միշտ առանց հուզմունքի,
Հողեղեն մարդուն անհայտ խորհըրդով
Հավիտյան սառած, խաղա՛ղ, անվըրդով...
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լուիկ,
Ըստվերնե՛ր էին, անմարմին մարդի՛կ,
Տըժգույն, անարև, աղոտ լուսի մեջ

Աղոթում էին անձայն ու անվերջ,
Աղոթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
Ո՛չ ազատություն, ո՛չ մահ, ո՛չ խընդում...

X

Հանկարծ շրուակյունն, ինձ ուղքի բերավ:
Աչքիս առջևից հրթալքքը թքոավ:
Պատարագն արդեն վերջացրել էին:
Դազաղը շարժվեց, թընդաց ահագին
Սասանիչ երգը մահվան սարսափի,
էն լացն ու կոծը, օրհններգ մահի,
Որով մեռելին հրածեշտ են տալիս
Դեպի գերեզման՝ ճամփու դռնելիս,
Երբ ծառ է լինում վիշտը՝ մայրական
Դեպ գահն արարչի—դըրկողը՝ մահվան,
Արձակում ցասկոտ իր ճիշը հատին
Ու թույլ, հուսահատ ընկնում է գետին:

XI

Դուրս եկանք գուռը նաչեցի վերե:
Վերեն, խնչպե՛ս միշտ, փայլում էր արև.
Բուրբն աշխարհում կարգին ու հանգարտ,
Ու ինչպես երեկ՝ էնպես ամեն մարդ...
Բայց երկինքն էնքա՛ն պայծառ էր այնօր,
Եվ պայծառությունն էնքա՛ն էր տըրտում,
Տըրտմությունն էնքան խոր, հանդիսավոր,
Որ թըվում էր ինձ, թե շինջ կապույտում՝
Վերջին հըրածեշտ տալով աշխարհքին՝
Ճախրում էր ճըրա հեռացող հոգին...
Ու մըտքովս անցավ հանկարծ ակամա,
Թե արդյո՞ք կըրա աչքերը անմահ
Նայո՞ւմ են ներքե, տեսնո՞ւմ են ինձ էլ,
Թե ո՞նց եմ ցավիս տակին կորացել...
Եվ կամ ո՞րն է նա, էն շո՞ղն է պաշտառ,
Որ զըվարթ խաղով, աշխույժ ու կայտառ

կորչում է, մըտնում թուխայ ամպի ետե,
Ազատ, երկնաշու էն ա՛մազն է թոթե,
Թե՛ էն աղավնին, որ հիմա թքոավ:
Անփույթ ճախրելով՝ շինջ օդում կորավ...

XII

Հանդը՛ւզըն մտքեր, ո՛ւր եք սըլանում,
Ի՛նչ եք որոնում էն մութ սահմանում.
Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
էս սև ու տըխուր թումբերը շընչին...
Կո՛ւտ գերեզմաններ. քանի՞ սըզավոր
Ձեր եզերքներին կանգնել են մի օր,
էս դատարկ կյանքին, անհաստատ բախտին
Անեծքներ տալով բեկվել, հեռացել,
Երբ որ սիրածի դազաղը մըթին
Վիհ են իջեցրել ու դեմքը ծածկել...
Եվ որքա՛ն ըզձեր, սըրտեր ու զգայմունք
Թաղված են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա կ՛ մի նոր բարձրացրած սև թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Որ ապրում էր դեռ երկու օր առաջ...
Եվ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կըծածկի նույնպես մամուռը կանաչ,
Կանի հավասար քարին ու հողին,
Ինչպես դըրացու անկողինը հին:
Նըրանից հետո գե՛ եկ՛ իմացի՛ր,
Թե ո՞վ է թաղված քո ոտի տակից,
Ի՛նչ ցեղից էր նա, ի՛նչ ձեռքեր ունեք,
Անահ հերո՞ս էր, գեղամի մի կի՞ն,
Անհող մի ջահե՛լ, անկըշտում ազա՞հ,
Աղքա՞տ, թե հարո՞ւստ.— ձե՛ն, նըշան չե՛կա...

XIII

Եվ... իջնում էր նա ընդմիջտ իմ աչքից,
Կյանքից, արևից, էս լուռ աշխարհից...

Կորացա, վերջին համբույրս տրվի,
Ու էն համբույրով դագաղում զբրի
Խընդում, սեր, ըղձեր, ամեն, ամեն բան...
Ինձ ետ քաշեցին, մի կողմը տարան:
Իսկույն հետևեց խուլ զբրզբոցը,
Քարով ու հողով լըցրին էն փոսը,
Գագաղն էլ, ինքն էլ ծածկվեցին հանկարծ,
Ասես թե բընավ աշխարհ չէր եկած,
Եվ այսուհետև երբե՞ք, հավիտյան
էլ չէր տեսնելու արևը նրբան...
Հուզարկներն այնժամ մոտ եկան մի-մի.
— Է՛հ, ասոված նրբա հոգուն ողորմի.
Մի օր էլ մենք ենք էսպես գընալու,
Կյանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Ո՛վ է աշխարքիս վըրա մընալու.
Անցավոր են ողջ—բախտ, վայելք ու փառք...
Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձյալ հանգիստ զըրույց անելով
Գընացին իրենց տըները անհոգ:
Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
Երկինքն էլ էնպես պայծա՛ռ ու հանդարտ...
Եվ ինչպես երեկ, էնպես ամեն մարդ...

XIV

Եկավ գիշերը: Իմ հոգնած հոգուն
Իջավ տանջալի մի խաղաղութուն:
Վայր ընկա, ինչպես ուժաթափ մի բան,
Որ զգում է միայն կարոտ հանգստյան,
Բայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն,
Ուզում է հիշել, թե ի՛նչ բան էր այն.
Մի խառըն երա՛զ էր, մի աշխա՛րք ուրիշ.
Գինու մի քե՛ֆ էր, ծաղը՛ր, թե՛ պատիժ...

Մըրափը սակայն ծանրը ու դանդաղ
Զոքեց ինձ վըրա՝ սև թևերը կախ,
Միտքըս իր թելը կըտրեց ու թըռավ,

Անհուն, խավարչտին քառսում կորավ.
Մահ, մեռել, շիրիմ—թեթև հեռացան,
Ու հեռանալով՝ փոխվեցին, դարձան
Ամպեր, ըստվերներ, կետեր երերուն,
Գողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատև մի քուն եկավ ինձ վըրա,
Եվ ես մյուս անգամ երազում տեսա:

XV

Չընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում.
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած էի ես էն երազ հովտում:

Շուրջըս շուշաններ, անվե՛րջ շուշաններ.
Լիքն էր անտառք անուշ բուրմունքով,
Եվ եղեմական ներդաշնակ ձայներ
Փառք էին տալի թովչական երգով.

«Փա՛ռք անպատում մըխիթարչին,
Փա՛ռք խորհուրդին անմահության.
Նա է կըրում հույսը վերջին
Ու շողն անշեջ, արարչական.
Փա՛ռք խորհուրդին անմահության:

Նա գընում է բարձր ու անվերջ
Գեպի անհունն ու հավիտյան,
Վիշտը հանգչում է նրբա մեջ,
Ապրում սերը անապական:
Փա՛ռք խորհուրդին անմահության...»

Ու լսում եմ ես էն խաղաղ օդում
Քընքույշ ու զըվարթ ձայնը սիրելի,
Անհայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերագանց մի ուրիշ կյանքի.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշվա՛ռ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,

Ուր շրկա՛ման՝ անջատում,
Ու սերն անվե՛րջ, անհատնո՛ւմ...

Արի՛, թրոհի՛ր, գընա՛նք քնն՝ հետ,
Անցա՛վ, անհո՛գ, անհո՛ւշ, անհե՛տ...»:

1894

ՊՈՆՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Նրստած եմ՝ մի օր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, մի՛տք, ու չեմ կարենում
Մի հիմար գրանեմ՝ ցավեքքս հողամ...
Վեր կենամ, աօի, մեկի մոտ գընում,
Կըրկին պարտք անեմ, գըլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը:
— Ողջո՛ւյն Պառնասի գըլխից սըրբազան...
Ծտ նայեմ տեսնեմ՝ իմ ծանոթ Մուսան:
— Վե՛ր կաց, բանաստեղծ, կանչում է էսպես,
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, որուր արի հանդես,
Տանջվում են ահա եղբարքըդ թըշվառ,
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ:
Երկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա՛ քեզ համար բերել եմ ավյուն,
Հույս տուր վըհատին, ըստփոփիր որքին:
Ու՞ տուր պանդըխտին իր երկար ճամփին:
Նայի՛ր՝ աղջիկը ի՛նչպես ծաղկել է,
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կյանքի արևը ու սիրտ է հուզում,
Անձևըվեր սիրտ երգեր է ուզում...
Ուրախ ու անհոգ քարանձն էլ ահա.
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Չորերը լըցվել, փըռվել հովտում.
Հավքերն երգում են, ծաղկունքը փըթթում...
Գու էլ ըսթափվի՛ր, երգիր քեզ նըման:

Ողջունի՛ր շքեղ գալուստը քարանձն:
— Հերիք է, Մուսա՛, երկինքը վըկա,
էլ համբերելու սիրտ ու տեղ շրկա.
էնպե՛ս կանեմ քեզ, որ դու մոռանաս
Արյուն ու գարուն, պոետ ու Պառնասի
Անիծված լինին էն օրն ու տարին,
Որ գերի դառա ես քո քընարին.
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Ջըրկված մընացի կյանքում բոլորից...
— էն տաղա՛նդը, էն ձի՛րքն հապա,
Որ տըվել եմ...

— Ա՛յ խաբեբա,
Ահա ես էլ էդ եմ լալիս.
Ինչո՞ւ էս ձիրքն էիր տալիս:
Չըզիտեի՛ր միթե այնժամ,
Թե ինչ աշխարք պիտի ես գամ:
Թող լինի մի կեղեքող,
Հավաքեի միշտ փող ու փող.
Առաջ թեև «գազան» ու «ցեց»,
Կըդառնայի շուտով ես մեծ,
Վե՛հ բարերար
Ազգի համար.

Մեռած օրս էլ պըսակ տային.
«Իր որը ազգից—միակ հային»:
Կամ թե տերտեր լինի թող,
Խաչը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նըստեի,
Իմ ապրուստը գըրբասեի.
Ազգն էլ աչըր տընկեր վըրաս.
— Իմ փըրկողը դու ես, որ կաս:
Ահա էսպես բան լիներ մարդ,
Գընար ապրեր լի ու հանդարտ:
Կամ սընզուրված մի ճոխ հիմար,
Որ ապրում է լոկ իր համար,
Ուտում-քընում, ելնում-ուտում,
Կի՛, գո՛հ, ինչպես աղբակույտում
Հանդիստ ապրող որդը պարարտ:

Կըլինեի հարգի մի մարդ,
Նույնիսկ եթե գըլուխըս այնժամ
Դատարկ լինեիր հազար անգամ,
Քան թե հիմա իմ գըրպանը:
Ահա կյանքում էս է բանը.
Թե չէ՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուսայի ու երգերի,
Որդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկել անժամանակ—
Թե պոետ եմ... օ՛ր, ո՛ր, Մուսա՛,
Մի անարդար պատիժ է սա:
Եվ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նրկատեցին,
Կըռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարհին մըտիկ արա.
Շատն էլ խընդաց խելքիս վըրա...
Իսկ ես, ա՛խ, ես,
Միշտ խենթ էսպես,
Գիշեր-ցերեկ թերթում գըրքեր,
Շինում էի դատարկ երգեր,
Միշտ քո քամով էի թըռչում,
Ու միշտ բախտից հեռու փախչում:
— Ա՛յ ապերախտ, ի՞նչ ես ասում.
Էն ո՞ր բախտն ես դու ափսոսում,
Որ չեմ տըվել քեզ իմ ձեռքով.
Աստվածային հըզոր ձիրքով
էս ցած կյանքից հեշտ ու անթև
Թըռչել երկինք, վերև՛, վերև՛,
Ցավեր, հոգսեր ողջ մոռանալ,
Դըժոխք իջնել, դըրախտ գընալ,
Անհուն ըզգալ, թովիչ երգել...
Ո՞ր բախտից եմ ես քեզ գըրկել:
— Օ՛ր, ո՞ր բախտից... ա՛յ սևերե՛ս,
Ահա շարեմ, հիշիր ու տն՛ս:

Ինձ մի անգամ առան-տարան
Հաշվապահի ուսումնարան.
Շատ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես էս դպրոցում,
Ատեսատը հետո ծոցում,
Ուր որ գընաս,
Տեղ կունենաս,
Լա՛վ փողով տեղ բուղզալտերի.
Խաղեյինդ էլ տարեցտարի
Միշտ կավելցնի քո ոտեիկը,
Վերջը վըրան և... աղջիկը:
Բայց դու եկար միտքըս մըտար,
Ինձ չըթողիր տեղըս դադար.
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանշան
Ուղեղիս մեջ դարձան որդեր,
Քիչ էր մընում սիրտըս պայթեր.
Ես էլ խըրտնած, խենթ երեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա.
Թե չեմ կարող, ես չեմ կարող,
Ես գըրող եմ, գըրո՞ղ, գըրո՞ղ:
Սակայն էլի բախտըս ժըպտաց,
Ձեռըս բըռնեց տարավ հանկարծ
Ու պիսերի տըվավ պաշտոն:
Ո՛չ լի օր կար ինձ և ոչ տոն:
Մեծավորըս էնքան սիրեց,
Հին գըրչակոթն ինձ նըվիրեց.
Ընկերներս էլ ինձ դաս տըվին—
Ոնց պըրկել խընդրատըվին:
Բայց դու էլի եկար գըտար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Ես էլ հիմարս՝ խկույնեկեթ
Վեճ բաց արի ամենքի հետ.
Թե ի՞նչ բան է՝ խեղճ գյուղացուն
Գերի շինել՝ ողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,

Այրու պղինձն աճորդ-անկէ...
էս բոլորը քիչ էր կարծես,
էնքան արիր, սատանի պես,
Որ զըրեցի մեծիս պարսաւ:
Նա էլ—կո՛րի, կո՛րի, առաւյ
Մենք ենք տալի քեզ փող ու վարձ;
Դու, Մուսայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոստում:
Էդպես պիտեր մենք շենք ուզում:
Սակայն աստված մեծ է գութով:
Հայտնի կանտոր ընկա շուտով:
Կապրեմ ազատ, գործըս քեզնու:
Հետքս եկար, մըտար կանտոր,
Գործերս արիր խառնուփրնթոր:
Քու երեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ գուրս արին:
էսպես եղա ես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ:
(Հո պոետի պարտքն էլ գիտես,
էդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
Վե՛ն ու վը՛նիս ծանր ու բաթակ):
Ո՞ր մեկն ասեմ, ո՞րը թողնեմ:
Երբ որ տեսան շընոր՛ք շունեմ,
Այնուհետև քանի անգամ
Մանոթ, ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տըվին խորհուրդ:
— Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգփսա, հեշտ կյանք...
Իսկ ես՝ անփորձ, անխելք, հիմար,
Ողջ մերժեցի լոկ քեզ համար:
Պատրաստ կյանքից, բախտից փութում,
Գանձանակի թեփշին թողում,
Քրնարն առա,
Պոետ դասա,

Երգ ու տաղով մըտա հանդես,
— Հե՛յ, Մուսայի ընկերն-եմ՛ես,
Ձեն տըվի ես ոգևորված:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հրահրաց
Ժողովուրդը միաբերան,
Թըրցրեղ է խելքն՝ էս խեղճ տըղան:
Հեռո՛ւ կորի, խե՛նթ պատանի,
Որ անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքըդ տըվել երգին՝
Մի շես նայում էս աշխարքին...
Մենք մարդիկ ենք—գործ ենք անում;
Խենթ մե՛նթ բաներ շենք հատկանում:
Ես գոչեցի.— խավա՛ր ամբոխ,
Պաշտում ես դու լոկ փայլ ու փող,
Ձես հասկանում դու պոետին:
Ե՛ս, երկընթի քընքույշ ուրդին,
Երգում եմ սե՛ր, ճըշմարտությո՛ւն...
Ու գը՛նացի խըմբագրատուն,
— Տեր խըմբագիր, պոետ եմ՛նոր,
Բերել եմ ձեզ ոտանազոր:
Ահա կարդամ ականջ դըրեք,
Ձեր հանդիսում տեղավորեք:

«Անորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում ենք ինձ դուք՝ օր ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՛ւ չեք քընում, ինչո՛ւ չեք փակվում.
Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել՝
Ուզում է քընել, հավիտյա՛ն քընել...
Դուք էլ քընեցեք, սևորա՛կ աչքեր,
Ցերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»

— Ոչինչ, կոկիկ է: Խոսելով անկեղծ՝
Դուք վատ չեք գըրում, պարո՛ն բանաստեղծ:
Ամեն մի տողում տասն հին վանկերը,
Բայց ինձ ազդատ են թըվում հանդերը:
Հապա՛ մի տըվեք, ուղղե՛մ ես հիմա,

Տեսեք՝ թե որքան սահուն դուրս կրգաս:
Ուղղում եմ ես միշտ մեր պոետներին,
էսպես եմ պոետ շինել բոլորին:

«Աւերակ աշքեր, սևորակ աշքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես քաջքեր...»

Ես իսկույն ինչպես հալածված քաջքից՝
Փախա խրմբագրից ու իրեն աշքից,
Ծրգերըս ուղիղ տարա տըպարան:
Դուրս եկավ էսպես մի նոր երգարան:
Այնժամ մըտրակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քըննադատ, բազմագետ ու խիստ,
Սաստիկ վրրդովված, անաշտ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»:
— Ես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զրգվեցնում է ինձ էդ երգի Մուսան:
Ո՛չ մըտքեր են պետք, ո՛չ ձիրք և ոչ խելք,—
Բառեր ու հանգեր—և ահա քեզ երգ:
Հենց նոր դուրս եկած էս խակ տըղան էլ
Գըլխից էս տեսակ բաներ է հանել:
Ուրի՛շ բան էին հին պոետները...
Նըրանք էլ մեռան, տարան հետները
Տաղանդ ու երգեր. ամե՛ն, ամեն բան
Մըտավ նըրանց հետ խավար գերեզման...
Գարձավ անաստ... էլ ո՞վ է մընում...
էլ ուրիշ պոետ մենք չենք ընդունում...
Որքան ծաղրում ենք, սըրանք չեն լըռում,
Ոչ էլ մեր ուզած բաներն են գըրում:
— Ո՞վ բըրետների, կույրերի երկիր:
Դու մի՛ հավատար, իմ հե՛զ որդեգիր,
Ես էն հանգուցյալ լավերից նույնպես
Լըսել եմ հաճախ գանգատներ պես-պես:
Սպանում են դեռ ծաղրով ու թուխով,
Ապա պըճընվում նըրանց անունով.
Լափում են նըրանց վաստակը արդար,
Ու նորից... նույն հին կըռիվը վատթար...

Երգվում եմ ահա ճառագող օրով,
Վառ Ավրորայի մաքուր շողերով,
Խոսում ես դու էն չըբերի մասին,
Որ միշտ անտեղյակ առաջին լուսին,
Զեն հըրճվում նըրա ծագման հանգիսով.
Միայն կեսօրին ապուշ երեսով,
Ելնում են մըռայլ, տեսնում քընեած՝
Գըլխների վերև արևը կանգնած.
Ու ծունկ են չոքում,
Օրհներգ են երգում.
Հի՛ն օրհներգություն ու հի՛ն հըրեշներ...
Բայց մի՞թե նըրանք ապրում են անմեռ,
Եվ էդպես անհաշտ էսօր էլ քեզ հետ...
— Ի՞նչ հըրեշ, Մուսա՛, ի՞նչ կույր ու բըրետ,
Ի՞նչ բաներ ես դու քեզնից հընարում...
Ես էն եմ ասում, թե մեր աշխարհում
Պոետները ողջ տըխրել են, ցավել,
Որ իրենց երգի քընար ես տըվել...
Ես էլ... ի՞նչ ասեմ... մեղավոր եմ ես,
Մույլ ու անշընորհք, անպետք, սևերես...
Մեր խեղճ տանըցիք ո՛րքան նախատում—
Բայց ես՝ միշտ համառ, չէի հավատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի:
Մի օր ինձանից արավ հարցուփորձ.
— Ունի՞ս, հարցըրեց, մի պաշտոն կամ գործ:
— Բանաստեղծ եմ ես, հայտնեցի հըպարտ:
— Դըժվար է, ասավ, երբ անգործ է մարդ:
— Բանաստեղծ եմ ես, կըրկնեցի մեկ էլ:
— Հասկացա՛նք, ասավ, պարապ ես եղել...
Եվ խեղճ ընկերըս երբ որ՝ սըրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ,
էնպես ծիծաղեց մեր աղան փառփառ,
Որ և հասարակ և մեծ վեհափառ.
Ով որ իմացավ,
Ծիծաղը պըրծավ:
Բայց վերջն ավելի պարզեց խընդիրը,

Երբ հողված գրեց մեր չըրագիրը...
— Բանաստեղծն, ասավ, թո՛ղ մի գործ շինի,
Որ հացի, վարձի դառնա արժանի...
Թե չէ համառի ու մընա պոետ՝
Ի՛նչ հաշիվ ունի ազգը նըրա հետ...
Ազգը հո նըրան չի խընդրում գրբի,
Թերթն էլ փող շունի՝ թե որ վըճարի...
Թո՛ղ գընա ապրի իրեն գըրիչով...
էսպես ենք դատում մեր մաքուր խըղձով:

Ներշընչման համար

էսպես է հարմար.—

Ով սովից մեռել՝

Նա՛ է լավ գըրել:

Կարող ենք մենք էլ՝

էսպես մըտրակել:

Ու ծաղրել մի-մի,

Որ առաջ դիմի...:

— Ո՛վ ախոռ-երկիր, մըտրակի՛ մարդիկ...
Գե՛, ե՛կ, սիրելիս, տանեմ քեզ Կրկինք...
էնտեղ երջանիկ ոգիների հետ
Զըվարթ կըխընդաս ու կերգես հավետ.
Կամ կուզես թըոցնեմ, հանեմ Ոլիմպոս,
Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբարտ:

— Իմ ազնի՛վ Մուսա՛,

Ա՛յ, է՛ դպես խոսա:

Իրավ, էս կյանքից ես շատ եմ գըզվել:
Ի՛նչ երանություն՝ երկընթում սուզվել:
էն շըքնաղներին, որոնք, անկասկած,
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց—

Կինել միշտ ընկեր

Ու սիրո հրգեր

Հորինե՛ք,

Ձունել,

Երկրային շընչին հոգսերը թողած...
Կամ, ոտներն հանգիստ ծալներից կախաօ,
Նըստել Պառնասի երջանիկ գըլխին...
Ու բարձրից ճաշիլ էս հիմար խըլխիլ:

Բայց ես ունեմ կին; շատ երեխաներ,
Նըրանց բաժնի քնտեղ թ՛նչպես կըլինիր...
— Օ՛, երբ Պառնասի գագաթ վերանաս,
Զավակներ ու կին պիտի մոռանաս:
— Ո՛վ դու անիրավ, ի՛նչ եմ արել քեզ,
Որ ինձ իմ տանից էզպես բաժանես:
Զէ՛, լավ է վըրկին, որ երկրում մընամ,
Մաղրի, նեղության մի կերպ դիմանամ...
— Բո կամքը լինի, ազա՛տ բանաստեղծ.
Ընտրի՛ր, ուր կուզես՝ երկինք թե երկիր,
Բայց միշտ, ամեն տեղ եղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քո ե՛րգը երգիր:
Կանգնի՛ր միշտ վերև,
Ու ինչպես արև՝
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հըզոր,
Բո կոչումն է դա.
Եվ, ինձ հավատա՛,

Բոլոր գանձերը, գոհարներն ամսին
Զարժեն կարճատև քո ներշընչանքին:
— Ա՛յ, դու սատանա՛, է՛լ կուզես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ, դու կեղծավո՛ր, սիրուն անպիտան.
Ես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան:
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա գե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ վընկանք—
Ասա՛, թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՛նչ եմ ասում, հայոց գըրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը.
Եվ երկար, երկար մեր ողջ հանճարով
Մըտածել ենք մենք զըժար օրերով,
Գըրողի պըսա՞կ,
Թե՞ փողի քըսակ...
Եվ լավ ենք վըճուխ...
Գե՛, գընա՛ Մուսա՛,
Գըրադարանս շինում եմ կաստա,

Քրքում եմ և քեզ և քո պըսակին,
Երկրրպագում եմ փողի քըսակին:
«Փողի քըսակը, փողի քըսակը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ տըգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին:
Նըրա ուժն է՝ որ դարձընում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառվին շինում բարերար,
Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,
Նա՛ է հասցընում աղոթքն աստրծուն,
Նըրա վըրա է աշխարքը կանգնած:
Նա մեր հոգին է, մեր երկրորդ աստված:
Պոետն էլ բընավ թե խոսել է վատ,
Տուժել է սաստիկ, զըղչացել է շատ,
Եվ այժըմ, ահա, խելքի է եկել,
Սկսել է նըրան օրհնություն երգել»:

Երգըս որ լըսեց իմ դըժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան,

— Դե՛հ, մընաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Ես էսքան տարի
Ինչ որ քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

1899

ՄԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ

I

Առյուծ-Մըհերը, գարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն.

— 216 —

Իշխում էր ահեղ, ու նըրա օրով
Հավքն էլ շէր անցնում Սասմա սարերով:
Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու
Քընդում էր նըրա հըռչակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր,
Հազար բերան էր—մի Առյուծ-Մըհերը

II

էսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» շէր քաշել նա դեռ իրեն օրում,
Բայց հիմի, երբ որ եկավ ծերացավ,
էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ:
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու որբ աշխարքի վըրա
Ոտի կըկանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ շունեմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի:

III

Մի օր էլ՝ էն գորշ հոնքերը կիտած
Երբ միտք էր անում, երկընթից հանկարծ
Մի հուր-հըրեղեն հայտնըվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին:
— Ողջո՛ւյն մեծագոր Սասմա հըսկային,
Քու ձենը հասավ աստծու գահին,
Ու շուտով նա քեզ մի զավակ կըտաս:
Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըվել,

— 217 —

էն օրը կրմեոնեք քու կիսն էլ, դու էլ:
— Իր կամքը լինի, ասով Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարհում ժառանգ ունենանք,
Մենք էլ նորսանով անմեռ կըմընանք:
Հըրեշտակն էստեղ ցոլացավ նորից,
Ու էս երջանիկ ավետման օրից
Երբ ինը ամիս, ինը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ:
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Չենով Օհանին,
Երկիրն ու որդին ավանդեց նորան,
Ու կիսն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

IV

էս դարում Մըսըր անհաղթ ու հզոր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագավոր:
Հենց որ իմացավ էլ Մըհեր չըկա,
Վեր կացավ կըրովով Սասունի վըրա:
Չենով Օհանը անից սարսափած՝
Քըշամու առաջն ելավ: գըլխարաց,
Ազալանք արավ, ընկա՞վ տաները.
— Դու եգիր, ասավ, մեր գլխի տերը.
Ու քու չըվաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ շանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
— Չէ՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրթ տակով,
Որ էզուց-էջօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուք չարեմ իմ գեմ:
Ու գընաց Օհան՝ բուրբ-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրթ տակ.
Մենակ Դավիթը, ինչ պիտի չարին,
Մոտ շեկավ դուշման Մելիքի թըրթի:
Եկան քաշեցին՝ թե-գոռով տանեն,

Թափ տրվավ, մարդկանց գըցեց դեռ ու գեմ,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառած քարից կըրակ դուրս թըռավ:
— Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին:
— Թագավոր, ասին, դու էսքան հըզոր,
Բըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա:
— Դո՛ւք գիտեք, ասավ Մըսրա թագավոր,
Բայց թե իմ գըլխին փորձանք գպ մի օր,
էս օրը վըկա,
Սըրանից կըգա:

V

էս որ պատահեց, մեր Դավիթ հըսկան
Մի մանուկ էր տեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար թե՛ մարդ, — թե՛ մըժեղ:
Բայց վա՛յ խեղճ որբին աշխարհի վըրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:
Չենով Օհանին ուներ մի շար կին:
Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կըովել.
— Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի եթեմը բերել,
Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
Հո՛ղեմ գըլուխը... ես գերի հո չե՛մ՝
Ամենքի բե՛ֆի ետևից թըռչեմ...
Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանք,
Գընա, իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսավ ողբալ ու կըծել,
Իր օրը սըզալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ եղավ աշխարհի միջում,
Ոչ մի տեր անի, ոչ մարդն է իր քըմում...
Գընաց թհանք երեխի տակ:

Մի զույգ ոտնաման բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դրած,
Ու արավ Սասմա քաղքի գառնարած:

VI

Քրշեց գառները մեր հովիվ հրսկան,
Ծլավ Սասունի սարերն աննըման.

«է՛յ շան, սարե՛ր,
Սասման սարե՛ր...»

Որ կանչեց, նրրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմբղըմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բըններից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան:
Դավիթը ընկավ նըրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից —
Ազվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քշեց ողջ Սասմա քաղաք:
Կաղկանձ ու ոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղբըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրես անհամար գազան.

«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած,

Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտը
Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՛հ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընուս.
Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,
Ելե՛ք, շուտով բացեք դըռներ.
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քըսանն արել...
Շուտով ելե՛ք, եկե՛ք տարե՛ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արեք:

Տեսավ՝ շեն գալի, դուռ շեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում.

Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսարաց:
Հուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Ձենով Օհանին ասին.
— Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած,
էս խենթը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,
Գազանով լըցրեց մեր քաղաքն էսպես:
Աստված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չէ էս խալխի՛ն լեղաճաք կանի:

VII

Ելավ Օհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուեր կըփախչեն:— Մին էլ էնտեղից
Մի բոզ նապաստակ, ալանջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ:
Դավիթն էր. ելավ, ետևից ընկած
էն սարը քըշեց, ետ բերավ էս ձոր,
Բերավ, ուերին խառնեց նորից նոր:
— Օ՛ֆ, ի՛նչ դըժար է, հորեղբայր Օհան.
Աստված օխնել է էն սե-սե ուեր,
Ամա բոզալուկ էս ուեր, որ կան,
Փախչում են, ցըրվում ողջ սարերն ի վեր.
էնքան եմ երեկ վազել, շարշարվե՛լ,
Մինչև հավաքել ու տուն եմ բերել...
Նայեց Օհանը, որ Դավթի հագին
Ոտնաման շի էլ մնացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի օրվա միջում էնքան է վազել:
— Դավի՛թ շան, ասավ, շեմ թողնի էսպես,
Բոզալուկ ուեր շարշարում են քեզ.
էգուց նախիրը կըտանես արոտ:
Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գընաց, նորից նոր մեր Դավթի ոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերավ երկաթի.

Երկաթի մի կոտ՝ հարյուր լողարկան
Ու շինեց Սասմա քաղքի նախնայան:

VIII

Քըշեց նախիրը մեր նախորդ հըսկան,
Ուլավ Սասունի սարերն աննըման:

«է՛յ ջան, սարե՛ր,

Սասման սարե՛ր,

Ի՛նչ անուշ է

Ձեր լանջն ի վեր...»

Որ կանչեց, նրա ձենից ահավոր

Գըզորդ-դըմրդըմրոցն ընկավ սար ու ձոր:

Վայրի զազաններ բընեթից փախան,

Քաղեքար ընկան, դատարկուն եղան:

Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,

Որին մի սարից, որին մի ձորից,

Գեղ, ինձ, առյուծ, արջ, վագրը բըռնեց,

Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ գեպ Սասմա քաղքը:

Ոռնո՛ց մըռընչո՛ւն, աղմո՛ւվ, ազաղա՛կ...,

Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՛նչ տեսան,

Հենց քաղքի վըրա անհամար գազան...:

«Վա՛յ, հաբա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,

Ամուր փակեցին դուռն ու շուսամուտ:

Դավիթը նկավ կանգնեց մեյզանում:

— Վա՛հ, էս քաղքըցիք ի՛նչ վազ են քընտում:

Հե՛յ կովատեր, հե՛յ գոմշատեր,

Ելե՛ք, ջուտով բացեք դըռներ,

Ով մինն ունեք—տասն ձմ բերե՛լ,

Ով տասն ունեք—քըստեն արե՛լ:

Շուտով ելե՛ք, նկե՛ք, տարե՛ք:

Ձեր եղն ու կով գոմերն արե՛ք:

Տեսավ՝ շեն գալի, դուռ չեմ բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյզանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:
Կուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Ձենով Օհանին ասին:

— Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր,
Մեր եզն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ:
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեջն ու եզ,
Մի օր էս քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կըտա կավերի:

IX

Իավիթ շողառավ, մի կըրա՛կ դառավ:
Ճաբը կըտըրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
Գընա, որս անի սարերի վըրեն:
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ որսկան: Գնաց, մի կորկում
Կոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կըեկա մոտ,
Վիշապի նըման, երկա՛ր, ահագին
Մեկնըվում, քընում կըրակի կողքին:
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,
Պ սուվը վըրեն ասատիկ բաթկացավ:
— Վա՛յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս:
Ձևոից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արտն աստը՞նու տակին,
Ինչո՞ւ ես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում:
Թե որսկան ես դու—նետ-աղեղդ ա՛ն,
Սըմա կա պըրից մինչև Աղանաթ:

Քու հերը ձեռին մի աշխարհ ունեւր,
Որսով մեջը լի որսի սար ունեւր.
Եզնիկ կա էնտեղ, այժամ ու պախրա.
Կարո՞ղ ես—զընա, էնտեղ որս արա:
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.
Ես շահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում:
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հորեղբայրդ—Օհանը կասի:

X

Հորեղբոր շեմքում մյուս օրը ծնգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին:
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ շես ասել՝
Իմ հերը որսի սար է ունեցել,
Այժամ կա էնտեղ, եղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ որսասար:
— Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,
էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր:
էն սարը, որդի՛, գընաց մեր ձեռից,
էն սարի որսն էլ գընաց էն սարից,
էլ չկան այժամ, եղջերու, կըխտար:
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
(է՛յ գիդի օրեր—ո՞րտեղ եք կորել),
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հերը մեռավ, աստված իրոտվեց,
Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,
էս սարի որսն էլ թալանեց, տարավ.
Եզնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալթաթ էդպես էր գրած:
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրա թագավոր ձեռըդ կիմանա...
— Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
Մըսրա թագավոր թող Մըսրը կենա,
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...

Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարճըդ կապի՛ր, գընանք որսասար:
Ելավ Օհանը ճարը կըտրոված,
Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ:
Ձենով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռովաց.
Դավիթը մընաց մըտքի ծովն ընկած:
Մին էլ նկատեց, որ մուխը հեռվում
Մի թեժ, փայլփուլն կըրակ է վառվում:
էն լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընա՛ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատրուված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում ետ քարի վըրա:
Վար իջավ Դավիթ էնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Օհանին.
— Ե՛լ, հորեղբայր, քանի՞ քընես,
Ել, էն պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձըր սարին,
Բարձըր սարին, մարմար քարին:
Ե՛լ, հորեղբայր, անուշ քընից.
էն ի՞նչ լուս է բըխում քարից:
Ելավ, խաչ քաշեց Օհանն երեսին.
— Է՛յ, որդի՛, ասավ, մեռնեմ իր լուսին,
էն մեր Մարութա սարն է գորավոր:
էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխափան:

Մըշտական, երբ որ կըմբի վեր գրեամ,
էնտեղ էր քու հերն իր աղոթքն անուս:
Քու հերը մեռավ, աստված խըռովեց,
Մըսրա թողալոր զորքեր ծագովեց,
Մեր վանքն էլ եկավ քանդեց: Էն օտարամ,
Բայց գեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը էս էլ երբ որ իմացավ,
— Անող հորեղբայր, հորեղբայր, աստվ,
Որքան ուսանտեր աշխարհի վըրա,
Հեր շունեմ՝ գու ինեմ հերտե՛ջան արաս:
Էլ շեմ իջախեա՛ Ատարաթա սարից,
Մինչև շըշինեմ մեր վանքը նորից:
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,
Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Որ գան՝ էս շարաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինենը:
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ:
Վարպետ ու բանվոր անկան կանգնեցին,
Զըրը՛ խկ հա թըրը՛ խկ նորից շինեցին:
Առաջվան կարգով, փառքով փառքով
Բարձրը Ատարաթա վանքը՝ Տիրամոր:
Ցըրված միաբանք էտ նորից անկան,
Նորից թընդացին աղոթք, շարական,
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Ատարաթա սարից:

XIII

Անտեղ արարան Անտարա Մեղիքին.
— Հապա՛ շեա ասեմ՝ Դավիթը վեր կին
Հոր վանքը շինել, իջխանե՛լ գտեմ,
Գու օխտը տարվան խարջը՛ շեա տանել:
Նվեցիք զաշխարհավ.

— Գընացե՛ք, ասավ,
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Չարխադին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ օխտը տարվան խարաջը բերեք:
Քառսուն կույս աղջիկ բերեք արմազան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսունն էլ երկար, որ ուղտեր բանան,
Իմ տանն ու դըռան զարավաշ դառնան:
Ու Կոզբադին առավ զորքեր.
— Գըլխի՛ս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը շընջեմ հայոց ազգի:
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բըռնեցին ու երգեցին.
— Մեր Կոզբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան:
Զա՛ն Կոզբադին, քաշ Կոզբադին,
Սասմա Դավիթին զարկեց գետին:
Ու Կոզբադին փըքված, ուռած,
— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց:
Մինչև գալըս դեռ համբերեք,
Էն ժամանակ պիտի պարեք...

XIV

Էսպես երգով
Զոռով-զորքով
Գու Կոզբադին մըտավ Սասուն.
Օհան լըսեց՝ կապվեց լեզուն.
Աղ ու հացով:

Լաց ու թացով

Առաջն ելավ,

Խընդիրք արավ.

— Ինչ որ կուգես՝ առ, տա՛ր, ամա՛ն.

Վարդ աղջիկներ, կանայք Սասման,

Դառը դադած դեղին ոսկին,

Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,

Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,

Վերև՝ աստված, ներքևը՝ դու...

Ասավ, բերավ շարան-շարան

Վարդ աղջիկներ, կանայք Սասման:

Ու Կոզբադին կանգնեց, շոկեց,

Մարաֆն արավ, դուռը փակեց,

Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,

Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:

Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.

Սե սուզ կալավ հայոց ազգին:

XV

Հե՛յ, ո՛ւր ես, Դավիթ, հայոց պահապան,

Քարը պատրովի—դո՛ւրս արի մեյդան:

Քանդած հոր վանքը որ շինեց նորից,

Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,

Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,

Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ:

Պառավն էր. եկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.

— Վա՛յ, խելա՛ն Դավիթ, շաղգամի տեղակ

Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ.

Քու աչքն աշխարքում մենակ ի՛նձ տեսավ.

Կորեկըս արիք գետնին հավասար,

էս էր մընացել ձըմեռվան պաշար,

էս էլ կըտրում ես,

էլ ո՞նց ապրեմ ես:

Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ն գընա՛,

Քու հոր աշխարքին տիրութունն արա՛,

Քու հոր գանձը կե՛ր,

Թողել ես անտեր,

Մըսրա թագավոր դըրկել է՝ տանի:

— Էլ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,

էդ ի՞նչ ես ասում, ես շեմ հասկանում,

Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում:

— Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...

Մըսրա թագավոր ջու աչքն է հանում,

Դանդալոշ Դավիթ. դըրկել է հըրեն,

Եկել են Սասմա քաղաքի վըրեն

Բադին, Կոզբադին,

Սյուդին, Չարխադին,

Քալան են տալի բովանդակ Սասուն.

Քառսուն բեռ ոսկի խարաշ են ուզում,

Քառսուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,

Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:

— Ի՛նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.

Ցույց տուր մի տեսնեմ—ո՛րտեղ են ուզում:

— Ո՛րտեղ են ուզո՛ւմ... Մահըս տանի քե՛զ.

Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...

Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...

Ոսկին Կոզբադին ձեր տանն է շափում,

Աղջիկներ փըլեկ մարաֆն են լըցրած:

Շաղգամը թողեց Դավիթ ու գընաց:

Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին,

Չափում է ոսկին թեղած առաջին,

Սյուդին, Չարխադին պարկերն են բըռնել,

Չենով Օհանն էլ շըլինքը ծըռել,

Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:

Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:

— Վե՛ր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնիր դու,

Իմ հոր ոսկին է—ես եմ շափելու:

— Կոզբադին ասավ.— է՛յ, Չենով Օհան,

Կըտաս—տո՛ւր խարշը էս օխտը տարվան,

Քե չէ՛ կը գնամ, միբարձրս վրկա,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գա,
Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը քանի:
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շրենր,
Բա չե՛ք իմացել դուք Սասմա ժրոնր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՛ չը վաք,
Կուզեք մեր երկիր դռնեք խարջի տա՛կ...
Բարկացա՛վ Գավիթ, շափը շը պըրտեց,
Տը վա՛վ Կոզբաղնի գըլուխը շարդեց,
Չափի փըշրանքը պատն անցա՛վ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարհից փախան գընացին
Բաղին, Կոզբաղին,
Սյուդին, Չարխաղին:

XVI

— Կա՛յ, վա՛յ, հորեղբա՛յք, ի՛նչ ասեմ ես քեզ,
Մենք ունենք էստեղ գեղին ոսկու դեզ,
Դու արե՛լ ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի գրտան...
Հորեղբայրն ասա՛վ.— Ա՛յ խենթ, փեշազար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրա:
Չըտըվիր, հիմի որ դոքք ատնի՛ գա,
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըրթի՛վ կանի:
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, թե՛զ գա, մե՛ս կերթամ,
Կերթամ, ե՛ս նըրան պատասխան կըտամ:
Ու մութ մարտդի գըտանը դարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձարկեց:
— Գընացե՛ք, ասա՛վ, աչքատ ասպրեցե՛ք,
Սասունցի Դավիթն արե՛ խընդրեցե՛ք:

XVII

Էսպես շարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բաղին, Կոզբաղին,
Սյուդին, Չարխաղին:
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տըվին կըտերներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կոզբաղին գնաց Սասուն,
Կանայք բերա՛վ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերա՛վ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հենց մոտեցան, նըկատեցին,
Սափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
— Է՛յ, Կոզբաղին մեծաբերան,
Էդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըզաս փախած,
Հաստ գըլուխը կիսից ճըղած:
Էն դո՞ւ շասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց-երկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գե՛լ գազան,
Ետ ես գաղի քանց շուն վազան...
Ու Կոզբաղին խիստ բարկացա՛վ.
— Սո՛ւ կացե՛ք դուք, լըրե՛ր, ասա՛վ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք գեռ,
Դուք չեք տեսել Սասմա ժրոնր:
Սասմա ժրոնր լերան-լերան,
Նետեր տեսե՛ մի-մի գերան.
Սասմա երկիր քար ու կապան,
Դըժաք օարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր—ինչպես կեռ թուք,

Զորք ջարդեցին երեք հարյուր...

Ասավ ու էլ շառավ դագար,
Վրոագ-վրոագ, գրլխապատառ
Վազեց իրեն թագավորին:
Խընդաց թագվորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզրադին,
Արժե՛ կախեմ ես քու ճրտին
Մեր դուզդունի մեծ նըշանը—
Պարգև քու մեծ հաղթությանը:
Ո՛ւր են, հապա առաջըս բեր
Սասմա ոսկին ու աղջիկներ:

Ասավ Մեկիք, ու Կոզրադին
Գըլուխ տըվավ մինչև գետին.
— Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,
Զոռով փախա ես ձիավոր,
Ո՞նց բերեի Սասմա ոսկին:
Մի խենթ ծընվեց հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,
Գըլուխս էսպես տըվավ ջարդեց.
«Զե՛մ տալ, ասավ, իմ հոր ոսկին,
Զեմ տալ կանայք իմ հայ ազգին,
Սասմա երկիր ձեզ տեղ չըկա...
Քո թագավոր, ասավ, թո՛ղ գա,
Քոդ գա՛ ինձ հետ կըռիվ անի,
Քե դոշաղ է՛ զոռով տանի»:

Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեղ, անմորուք.
Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,
Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սպիտակ ալևոր,
Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն.
Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...
Կանչեցե՛ք, թող գան, հագնեն զե՛նք, զըրա՛հ,
Կըռիվ տի գընամ ես Դավթի վըրա,

Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

XVIII

էսպես անհամար զորքեր հավաքեց,
Եկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանրը նըստեց Մըսրա թագավոր:
էնքան ահագին բազմությունն էն օր
Բաթմանա ջըրին եկավ ու շոքեց,
Ով եկավ, խըմեց—գետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մընացին ծարավ:
Զենով Օհանին զարմանքը տարավ:
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՛նչ տեսավ:
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Աեսա՛ էն գիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ձյունով պատել էր Սասուն:
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վա՛յ, փախե՛ք, եկավ... հա՛յ, հարա՛յ, եկավ...
— Ի՛նչը, հորեղբա՛յր, ի՛նչը, ի՛նչն եկավ...
— Ցավն ու կըրա՛կը Դավթի պինչն եկավ:
Մըսրա թագավոր ելել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիվ կա ասողերին, թիվ չկա զորքին...
Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարհին...
Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սըրի չըտա...
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, դու դարդ մի՛ անիր.
Գընա՛, քու օդում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:
Ու գընաց Դավթի ծանոթ պառավին.
— Նանի ջա՛ն, ասավ, ծանոտած ու հին

Յրկաթի կրտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես շունես, հավաքի՛ր, ինձ տուր,
Մի էշ էլ գրտիր, որ վրբն նրսահեմ,
Կրտիվ տի գրնամ Մըսրա գորքի դեմ:
— Վա՛յ, Դավիթ, ասավ, մահս տանի քեզ.
Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...
Քու հերն ուներ կրովի համար
Հրբեղեն ձի, ոսկի քամար,
Մալ-ծալ կապեն, գուռը պողպատ,
Քամբ սաղափեն, կուռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աչ բազկին,
Ջրբահ շապիկ, Քուր-Կեծակին,
Դու եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես էշ ու շամփո՛ւր...
— Ամա՛ն, նանի՛, չեմ լըսել դեռ:
Ո՛ւր են հիմի իմ հոր գենքեր:
— Հորեղբորդ գրնա հարցուր.
Ո՛ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
Բան է, թե որ չըտա սիրով,
Աչքը հանի՛ր՝ խըլի՛ր զոռով:

XIX

Դավիթ գրնաց հորեղբոր մտո-
— Է՛յ հորեղբայր, կանչեց հերսատ,
Իմ հերն ուներ կովի համար:
Հրբեղեն ձի, ոսկի քամար,
Մալ-ծալ կապեն, գուռը պողպատ,
Քամբ սաղափեն, կուռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աչ բազկին,
Ջրբահ շապիկ, Քուր-Կեծակին,
Կըտաս—բեր տուր...
— Վա՛յ, Դավիթ: շա՛ն,
Ահից գոռաց Ձենով Օհան:
Քու հոր մահվան տարուց—օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սրնգուկից Քուր-Կեծակին,

Ջրբահ շապիկ, ոսկի գոտին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ տղանիդ,
Կուզես—հրբեն, գրնա հանի՛ր:

XX

Հագավ Դավիթ գենքն ու զրբահ,
Կապեց գոտին, Քուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վրբա,
Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Հոր ձին հեծավ ու մըտրակեց.
Ձենով Օհան լալով երգեց.
— Ափսո՛ս, հագա՛ր ափսոս հրբեղեն մեր ձին,
Ա՛խ, հրբեղեն մեր ձին.
Ափսո՛ս, հագա՛ր ափսոս մեր ոսկի գոտին,
Ա՛խ, մեր ոսկի գոտին.
Ափսո՛ս, թանկ կապեն, որ հագին տարավ,
Ա՛խ, որ հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՛խ, Դավիթըս կորավ»:

Էս որ իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ, Օհանի ձեռքը համբուրեց:
Ձենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,
Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասնա դաշտ դըրավ նանադարն:

XXI

Սասունցի Դավիթն աներ մի քանի-
Անունը Քորոս, անեղ սոճականա:
Սա էլ իմացավ համբավը կըրավի,

Մի բարդի ուսին գալիս է ահա:
Գալիս է՝ հեռվից բարձրը գոռալով.
— Ի՛նչ եք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի գրլիսանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին որ չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Չբավեցե՞ք, հիմի ուր որ է կրգա,
Եկել եմ սրբեմ մեյդանը էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սրբեց բանակից մի քրսան վրբան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քրնած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
Ձե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք.
Հետո շասեք՝ թե մենք քրնած—
Դավիթ գող-գող եկավ, զրնաց...

էսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըսրա զորքի մեջտեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կեծակին:

Ջարդեց, փրշրեց մինչև կեսօր.
Կեսօր արինն ելավ հեղեղ,
Քրշեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
— Տըղե՛րք, ասավ, ճամփա տրվեք,
Փրնամ խոսեմ ես Դավթի հետ:

Գրնաց՝ կանգնեց Դավթի առաջ,
էսպես խոսեց էն ծերունին.
— Դալար կենա՛, կուռըդ, ո՞վ քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քո ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՛նչ են արել քեզ էս մարդիկ,
Հե՛ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քողն երեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը գոռով-թըրով
Հավաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՛նչ ենք արել:

Թագավորն է քու թըշնամին,
Կըռիվ ունես—իր հետ արա,
Հե՛ր ես քաշում Թուր-Կեծակին
էս անճարակ խալխի վըրա:

— Կավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ո՛ւր է հիմի,
Որ սե կապեմ նըրա օրին:

— Մեծ վըրանում քրնած է նա,
է՛ն, որ միջից ծուխը կելնի.

էն ծովսն էլ հո ծովս չի որ կա,
Գոլորշին է իր բերանի:

Ասին. դեպի մեծ վերտանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու գրռանը
Գոռաց կանգնած արարներին:

— Ո՛ր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մեկիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պետք է քընի,
Նրեք օրն է դեռ անցկացել,
Զորս օր էլ կա, քունը առնի:

— Ի՛նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Օխտը օրով հանգիստ քընի՞...

Քընել-մընել չեմ հաւկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս գա մեյդան,
էնպես դըրան ես քընացնեմ,
Որ չըզարթնի էլ հավիտյան:

Նլան՝ մարդիկ ճարահատված
Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած՝
Մըսրա-Մեղի բաց կըրնկին:

— Օ՛Ֆ, էլ հանգիստ քուն չունի՞ մարդ
էս անիծված լըվի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ եկավ, քընեց նորից:

Նլան, բերին մեծ գուժանի
Խոփը դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըվին մերկ թիկունքին:

— Օ՛Ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
էս անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից:

Տեսավ Դավթին, Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըրընչալով,
Փըշեց վըրեն, որ թըսցընի
էն աժդըհին մի փըշելով:

Տեսավ, տեղից ժած չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից զվրա նստեց
Ու ծպտալով հետը խոսեց:

— Բարո՛վ, Դավթի՛թ, հոգնած ես գեռ,
Ե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիկ կանենք,
Եթե կըռիկ կուզես կըրկին...

Իր վըրանում քընակալը
Քառսուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել է մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել:

Ի՛նձ որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
էն կորստյան հորի վըրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը.
— Հա՛, հա՛, հա՛ հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի գընա՛ խավար
Հորում փըթի, էնքան մընա:
Ու ահագին մի շաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա:

XXII

Քընեց էն գիշեր Ձենով Օհանը:
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրա երկընքում արև ճառագած,
Սև ամպ էր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա:

— Հողե՛մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՛վ գիտի՝ Դավիթն ո՛ւր է քե՛ֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.
— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցուլթում դալկացած:

— Ի՛նչ եղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ երկընքի բարձըր կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուզվեց խավարում:

Ջարթնեց վախեցած:— Տունդ քանդվի, կի՛ն.
Ես ո՛նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր շահելն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զենքերըս մի բե՛ր...

XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,
Ջարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՛րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մինչև լուսը կըհասցնեմ».
Ու ձին տըվավ փորը գետին.
— Մեջքըդ կոտրի՛, լուսն ի՛նչ անեմ.
Լաշին հասնեմ ես, թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երես փորը գետին.
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՛րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին»:
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ էն գարին:

Չեքքը եկավ տեխն հասավ:
Գետին չիբետ փորը սև ձին:
— է՛յ, ջան Ասուկ, մինչ ե՛քքը, ասավ,
Կըհասցընես Նավթի կրողին:

«Եթե ամուր մեջքիս մընաս,
Ոտըդ զընես ասպանգակին,
Մինչև մեկէլ ստըդ շուռ տաս,
Կըհասցընես», ասավ սև ձին:

XXIV

Աս ձին քաշեց Ձեռով Օհան,
Չախը դըբավ ասպանգակին,
Աչն էլ մինչև շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսավ՝ Դավթի նըժուլգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրա զորքը շոքած,
Ինչպես անծեր ձըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հաղավ,
Որ չըպատոի իրեն զուրկ,
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ձեփից:

— Հե՛յ-հե՛յ Դավթի, ո՛րտեղ ես գու.
Հիշի՛ր խաչը քո աշխկի,
Սղաքը Տիրամոր անուճըր տա՛գը,
Ու դուրս արի շուսյն արի՛կ...

Ձենը զընաց գըմբըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հարուն.
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեզըսցրո՛ւ,
Սասմա սարից ինձ է գոռան:

Ո՛վ Մարութա Ասավումածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձե՛զ եմ կանչել,— հասե՛ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց շուղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ,
Սարսափ կալավ դե Մելիքին:
— Դավթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,
Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կրո՛իվ անենք:

— Կրո՛իվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
— Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավթի,
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրգն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, զընաց մինչ Դիարբեքի
Ու էնտեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկավ, զարկեց. կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը:

— Երկիր քանդվեց կամ ծածկեղավ,
Ասին մարդիկ շատ աշխարհում:

— Չէ՛, ասացին, արնի ծարավ
Հրսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին:

— Կենդանի ե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Տե՛ս, ո՛րտեղից հիմի կըգամ:
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալաթ
Ու բաց թողեց ձին Հալաթից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ զողաց թափից:

Եկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:
— Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛ — հերթն ինձ հասավ:
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա:

Եկավ, զարկեց բուրբ ուժով,
Մանըր զարկով հըսկայական.
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,
էն ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեզ-մըշուշում:

— Մելի՛ք, ասավ, ո՛ւմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչալով ելավ տեղից
էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Նաղաց, շողաց թուր-Կեծակին:

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջաղու.
— Դավի՛թ, մազըս ա՛ն ոտիդ տակ,
էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
էս անգամ էլ եկավ քուրը.
— Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.

— Էս մի զարկն ու աստված, աստվ,
էլ մարդ շրգա, պետք է որ տամ:

Աստվ, ելավ ու փոթորկեց,
Թրուավ, ցուլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թոր-Կեծակին:

Անցավ քառսուն զոմշի կաջին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հրբշին,
Օխտը գազ էլ դենը գընաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արթ՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լսեց, շատ վարձուցավ
Իրեն զարկից, Թոր-Կեծակից...

— Մելի՛ք, աստվ, թա՛փ տտեր մի քե՛,
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեան ու մյտառ գնն

Էս որ տեսավ Մտորո քունտի,
Ջուր կըտըրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
Ականջ արեք հալա գեո՛րին:

Դուք ըսանչպար մարդիկ, աստվ,
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր առնեք:

Ի՛նչ եք առել նետ ու աղնդ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՛ որ մենք էլ ունենք տուն-տնիդ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Չանձրացե՛լ եք խաղաղ ու հաղա
Հողագործի օր ու կյանքից,
Թե՛ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով՝
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառսուն գազ խոր՝
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես էօօր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին:

Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՛նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՛ դուք, որ մեզ արիք դուշման...

1902

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոնեն՛ր, ահանջ արեք
Թափառական աշուղին,
Միրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
Մեր ծերնդյան փուշ օրից,
Հերթով զալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՛ծք նըրա շար գործքին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին:

Ես լավութիան խոսքն եմ ասում,
Որ ժրպտում է մեր սըրտին.
Ո՛վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ մարդին:

Է՛յ, լա՛վ կենաք, ալա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խոսքըս, տեսեք, ո՛ւր է գընում,
Փաշ որսկանի գյուլլի պես:

I

Նադիր Շահը զորք հավաքեց,
Ջորք հավաքեց անհամար,
Եկավ Թըմկա բերդը պատեց,
Ինչպես գիշերն էն խավար:

— Հե՛յ, քաշ Թաթուլ, կանչեց Շահը,
Անմա՛հ էիր քեզ կարծում.
Մ՛կ, բերել եմ ես քու մահը,
Ի՛նչ ես թառել ամրոցում:

— Մի՛ պարծենա, գոռոզ Նադիր,
Պատասխանեց էն հըսկան.
Գըլխովը շա՛տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան:

Ասավ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հավլունի,
Թըռավ, հեծավ նըժույգ իր ձին,
Դաշտը իջավ արյունի:

Ու քառսուն օր, քառսուն գիշեր
Կըռիվ տըվին անդադար,
Ընկան քաջեր, անթիվ քաջեր,
Բերդի գըլխին հավասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անհաղթ, աննըկուն,
Ջորք ու բարան խորտակվել են,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սեաշյա:

II

էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,
Առանց զենքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կըգընար:

Սիրո հընոց,
Կրակ ու բոց՝
էնպես աչքեր թե ժըպտան,

Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կրտան:

Վարդի թերթեր՝
Էնպես շուրթեր
Թե հաղթություն բեզ մարդին,
էլ բեզ ո՛չ Շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ գեներ ու զորք կը հաղթեն:

III

Ու կը ուժի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նըրան՝ իր տեսքով, հասակով, առին,
Զի հասնի շըքնաղ հուրին իրանի:
Մով են աչքերը Ջավախքի դրստեր,
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գազաթն է՝ ծածկում:
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հըսկան,
Նըրա ժպիտն է քաշին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նըման:
Թե տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անգոր կընկնի ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես և թըմուկ բերդին,
Որ լես կարենում էսքան ժամանակ:

IV

Էնպես է ասել հընաց էգ մառին՝
Ցարսի բյուրյուլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՛նչը կը հաղթի կյանքում հերոսին:
Թե լըլինին
Կինն ու գինին:

Արևի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար,
Ո՛վ կանի նըրան գետնին հավասար,
Թե լըլինին
Կինն ու գինին:

Պարում է ասես կըռիվ գընալիս,
Գետընքից վերև թըռչում ման գալիս.
Ո՛վ ցած կը բերի նըրան թըռչելիս,
Թե լըլինին
Կինն ու գինին:

Թեկուզ և արար աշխարհ գա վըրան,
Կերթա դեմ ու դեմ, տուր չի տալ իրան,
Ռուստեմ Զալն էլ չի հաղթիլ նըրան,
Թե լըլինին
Կինն ու գինին:

V

Ու ղըրկեց Շահը իր ֆովիչ նըգլին.
Գընա տե՛ս, ասավ, թըմկա տիրուհուն,
Երգի՛ իմ սերը նըրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի նըրան իմ ոսկի գահը,
Խոստացի նըրան ամե՛ն, ամեն բան,
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
Երկրակալ Շահը իր սիրած կընկան:

Ուր ասեղ կը ուժով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սաղի հետ.
Եվ ահա մի օր ծեր, թափառական
Մի աղքատ աշուղ մըտավ թըմկաբերդ:

VI

Գոռում են, գողում: Թըմկա ձորեր,
Կանգնած է Թաթուլ Շահի առաջման.

Ջարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում էն Քրոի նրման:

Ջարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում էն Քրոի նրման.
Նրզում է աշուղն իր Շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Քըմկա տիրուհին.
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծութուն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի աննրման.
Նայի Շահի՛ն, իրեն զորքի՛ն,
Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տրկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել,
Լինիս շքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ Քըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...
Ու դարձավ նա լո՛ւտ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

VII

Դարձավ իր կըովից իշխան Քաթուլը,
Դարձավ հաղթական իրեն զորքի հետ,
Սըրբեց, պատյանը դըրավ կեռ թուրը,
Ցնծության ձայնից դողաց Քըմկաբերդ:

Խընշույք է սարքել Քըմկա տիրուհին,
Ցերեկ է արել խավար գիշերը.

Հեղեղի նրման հոսում է գինին,
Ու քեֆ է անում Ջավախքի տերը:

Պըտույտ է գալի չըքնաղ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,
Իաժակներդդ լիուլի,
Խըմենք — աստված կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Քաթուլի:

— Է՛յ, տեր աստված կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապազ
Մեր գլխիցը անպակաս:

Ու թընդում է Քըմուկ բերդը
էն աղմուկից խընդության,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով հաղթական:

— Էն մըթին ամպից արծի՛վն է իշնում,
Սարի արծիվը շեշտակի թափով:
— Էն Քըմկա բերդից Քաթուլն է իշնում,
Քըշնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն Քըմկա ձորում սև ա՛մպն է գոռում,
էն շա՛նթն է ճայթում էնպես ահարկու:
— Էն Քըմկա ձորում Քաթուլն է կըովում,
էն թուրն է շաշում էնպես ահարկու:

Ի՛նչ սարի արծիվ կըհասնի քաջին,
Ի՛նչ Շահ կըկանգնի նըրա առաջին:

Ու շի դադարում երգի հետ վարար
Կախեթի գինին խելագար հոսել:

Խրմում են տիկնոջ թանկ կյանքի համար,
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խրմում են կրավող քաշերի փառքին,
Որ կրավի դաշտում կյանք չին խրնայում,
Եվ ընկածների սուրբ հիշատակին,
Որ երկընթիցն են այժմ իրենց նայում...

Պըտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդորում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Օ՛ֆ, տիրուհի, աստված վկա,
էլ չենք կարող մենք խըմել.
էլ ուժ չըկա, էլ տեղ չըկա,
Շատ ենք խըմել ու հոգնել...

Ու հանգչում է թըմուկ բերդը,
Պապանձում է ու մարում,
Հարբած, հոգնած տերն ու զորքը
Մըրափում են խավարում:

VIII

Լուռ ու խավարչտին կամարների տակ,
Հոգնած ու քընած բազմության վըրով
Թըռչում են, թըռչում, սև, շարագուշակ
Երազներն ահեղ, անվերջ խըմբերով:

Երազ է տեննում թաթուլ իշխանը,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթվել, իբր բերդը պատահել,
Քըլուխը զըրելու հապտել վթառ:

Ու բարձրացնում է հըրեշն ահունի,
Իրեն զըլուխը բարձրացնում է վեր,

Բարձրացնում մինչև բարձունքը քերդի,
Մինչև թաթուլի պալատն ու տըներ:

Պառկած է իբրև թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հըրեշտակ,
Թո՛ղ, որ ապանեմ հս էդ հըրեշին:

էսպես է ասում թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ,
Իրեն աթելի կընոջ գըլուխտեղ
Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

IX

է՛յ, հըսկեցե՛ք, ի՛նչ եք քընում,
Քաջ զինվորներ թաթուլի.
Ո՞վ է, տեսե՛ք, տանջվում մըթնում,
Քուն շի աչքին մոտ գալի:

Չըլի՞նի՞ թե հաղթահարված,
Ճարը հատած թըշնամին
Դավ է գընում մութն ու մոտած
Կես գիշերվա էս ժամին:

Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մաքո՛ւ է գընում ու գալի.
Հե՛յ, զարթնեցե՛ք, ասոցուն քաշեր,
Պահապաններ թաթուլի:

Վե՛ր կացեք, վե՛ր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:

Դա՛վ... դա՛վ... ելե՛ք... կոշե՛ք... պո՛նե՛ք...
Ձենք առեք ըն՛ամ... ձի հեճե՛ք, ձի՛...

Ճըռընչում են, դըղըրդում են
Դարպասները երկաթի...

X

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Զավախքի վըրա,
Ավերակ բերդին, սև ամպի նըման,
Սուխն ու թըշնամին չոքել են ահա:

Հաղթության փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի և՛ զորքերն, և տե՛ր,
Ու հավիտյան էլ մընացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում է Շահը անտեր գահույթին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տըված բաժակին...

Ու լի դառնություն հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՛թե թաթուլը քաջ չէր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությանը ամրոց չէր առել,
Զէր եղել կյանքում երբեք խաբերա...

էսպես տիկինը տըվավ պատասխան.
Անհուն ցատումից մըռընչաց Շահը.

— Հե՛յ, դահի՛ճ, գոռաց գազանի նըման.
Դահիճը իսկույն մըտավ սրահը:

XI

Դահիճն եկավ ոտից գըլուխ
Կարմիր հագած ու արյունն,
Ու դուրս տարան իր պալատից
Թըմկա չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ էն ժեռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
էն ահավոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ձոր:

Գել ու աղվես եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ազուավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին:

Անցավ անտես ու աննըման
էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Անցավ զալում էն մեծ արքան
Իրեն փառքով ու զորքով,
Անցավ թաթուլն էն հաղթական
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նըրանցից մենակ անմեռ
էս զրույցը հասավ մեզ,
Որ մեզանից հետո էլ դեռ
Պետք է խոսվի միշտ էսպես:

XII

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք
Թափառական աշուղին,

Սիրո՛ւն տիկնայք, շահե՛լ տըզերք,
Լավ ուշ զըրեք իմ խաղին:

Ամենքս էսպես հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուշ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
էս անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՛խ, երանի՛ ո՛վ մարդ կրգա
Ու մարդ կերթա անարատ:

1902

Գ Ո Տ Մ Վ Ն Ժ Գ Ն Ե Ր

ԼԵՌՆԵՐԻ ՀՈՎԻԼԸ

Լեռնե՛ր... բարձր ու կանաչ լեռներ, դուք հայրենիքն ու զահե զով զեփյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի, անմահական սառն աղբյուրների, սև-սև ամպերի, հրեզեն կայծակների, ջրեղեն տարափների... Դո՛ւք — մտտիկ աստղ-ծուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ...

Եվ ո՛վ է հողեղեններից այնքան ձեզ նման հպարտ, հզոր, վեհանձն ու մաքուր, որքան ձեր հարազատ որդեգիրը, ձեր մրրիկների ու զեփյուռների, ծաղիկների ու կայծակների ծնունդը, ձեր պահած ու փայփայած հովիվը:

Լեռների հովի՛վը. անծանոթ ու խորթ կյանքի սրտամաշ հառաչանքներին, գետնաքարշ արարքներին, հացկատակ խաղերին ու տաղերին, հպարտ ու զվարթ, որպես այդ ձեր վայրենի ծաղիկները:

Բայց ձեր վայրենի ծաղիկներն էլ իրանց բույրով-հրապույրով ընկնում են ծանր ու կուպիտ ոտների տակ և ապականվում, ցեխ դառնում:

Քաղաքում, բարձրահարկ տան բակում՝ յուր սրինգն ածում ու պար էր գալիս մի բարձրահասակ, թիկնավետ երիտասարդ Երա հագին բազմատարազ շորերի ցեցուտիներ էին, գլխին՝ ծանր քրդի քուլոկ:

Քեթրթ էր երա հովվական սրնգի ձայնը, ուրախ էր պարի

եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև: Նրանք երբեմնակի նայում էին վերև, երևի տեսնելու, թե օքսի՞ն կա պատշգամբներում, թե չէ. նայում էին, սակայն չէին աղերսում...

Տխուր էր և նրա առնական դեմքը յուր շիկասև նորածիլ շըրջանակի մեջ, ուր նշանավոր էին արծվի քիթն և ուռած շրթունքները: Եվ նա ինքն ամբողջ մի մարմնացած վայրենի վիշտ էր, բայց յուր սրինգն ածում ու պար էր գալիս:

Նրա հնամաշ շորերի ձորձերը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ծիծաղաշարժ տեսարան, որ սաստիկ վիրավորում էր նրա հզոր կերպարանքն ու գառն տխրությունը:

— Քո՛ւրդը, քո՛ւրդը... — աղաղակեցին երեխաները, և տանըցիք նոր ճաշերն ավարտած, թմփթմփալով սրնգի ձայնին դուրս եկան պատշգամբը, նայելու աղքատ քուրդին:

Ավելի ոգևորված՝ քուրդը կրկնապատկեց եռանդը, աշխատում էր ցույց տալ յուր բոլոր շնորհքը զանազան ծամածուծություններ ու խեղկատակություններ անելով... Եվ նա հասնում էր յուր նպատակին. վերևից հրճվում, ուրախ կրկնում էին:

Բայց նրանցից ոչ ոք չէր մտածում, թե ինչու ինքը՝ պարողը չի ուրախանում, ինչու մենակ նա է տխուր...

Եվ ի՞նչ կավելանար աղքատ քրդին, եթե մեկն այդ հարցներ: Նրան մի քանի կոպեկ սև փող էր հարկավոր, առավ դուրս եկավ: Մտավ ուրիշ բակ:

Պատրաստվում էր դարձյալ յուր պարն սկսելու, երբ մեկը հարցրեց.

— Ո՞րտեղացի ես, տղա՛:

— Սասունիցն, աղա:

— Հապա ո՞ւր ես եկել:

— Ես շորան էի. աղա. թուրքեր մեր գեղ քանդեցին... իմ ոչխար լե թալլեցին...

Նա բաց արավ կռան տակը, որտեղ երևում էր խանչալի տված լայն վերքի սպին, քուրդը վերցրեց, ցույց տվեց գլխի պատուվածը, երևի դրանով ուզում էր ասել, թե հեշտ չի տեղի տվել թշնամուն, և դարձյալ ծածկելով՝ սկսեց յուր սրինգն ածել ու պարել:

— Где это Сасун, папа? — հորը փարելով հարցրեց օրիորդը:

— Это там... далеко, — ձեռք թափ տալով, իբրև պատասխանեց հայրը և շարունակեց «ղնջոտալով» նայել աղքատ սրնգահարին, որ, զանազան ուստումներ ու ծամածուծություններ անելով, պար էր գալիս ներքև՝ բակում:

Չվարթ էր նրա սրնգի ձայնը, պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին նրա թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև...

Եվ այսպես պար էր գալիս հայրենիքից հալածված, ոչխարը խլած Սասունի լեռների հովիվը: Նրա հնամաշ շորերի ձորձերը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ցավալի տեսարան:

1894

ԳԻՔՈՐԸ

1

Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարհը մի պցիլ, չեմ ուզում, — լալիս էր կինը:

Բայց Համբոն չսեց:

Մի խաղաղ առավոտ էր. մի տխուր առավոտ: Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաշեցին ու ճամփա դրին:

Քուրդը՝ Ջանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն էր տալի. «Գիքո՛ւ, էդ ո՞ւլ ես գնում, հե՛ Գիքո՛ւ»:

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև:

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,— որդուն կանչելով գնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թուփուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի առաջում էլ երկաց գյուղը հեռու մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛,— ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան:

Առաջին իրիկունը դոնախ ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն էր:

Գեղին սամովարը թշուղում էր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ շրջաշրջակացնելով բաժակները լվանում ու թել էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին: Գիքորն էնտեղ մտքումը գրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զաննի համար մի էն տեսակ շոր դարկի:

Իրիկնահացից ետը տանտերն ու Համբոն թինկը տված, շիբուխ քաշելով գրուց էին անում: Խոսեցին Գիքորի մասին: Տանտերը գովեց Համբոյին, որ շարձարվում էր որդուն մարդ շինի: Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության վրա, բայց Գիքորը շատ էր հոգնած, քունը տարավ:

Մյուս օրը քաղաք մտան: Գնացին ծերունի թավաշու մոտ: Առավոտը բազարն իջան:

— Բիձա, էդ էրեխին ծառա ես տալու՛, — խանութի ներսից հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես,— ասավ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, ես կրնեմ,— առաջարկեց վաճառականը: Նրան ասում էին բազազ Արտեմ:

2

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բազազ Արտեմի տանը: Պայմանն էն էր, որ Գիքորը պետք է տունը ճաքեր, ամանները լվանար, ոտնամանները սրբեր, դուքանը բաժին տաներ, ու էս տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի:

— 262 —

Մի տարուց ետը բազազը նրան պետք է տաներ դուքան, շիներ դուքանի «աշկիրտ», ու էսպես Գիքորը պետք է բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասավ բազազը պայմանը կապելիս:— Թե գրեառք կուզես, դեռ դու պետք է տաս, որ քու որդին բան է սովորելու: Ախար իսկի բան չգիտի...

— Որտեղից գիտենա, խազեին ջան,— պատասխանեց Համբոն,— որ գիտենար, էլ ո՛ր կրեերի, ես էլ բերել եմ, որ բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի: Էնպես սովորի ո՛ր... Ձեր կողմերից էն նիկոլն ինչ է, որ իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինձ մոտ է մարդ դառել: Ամա վերջում մի ջուխ շալի գդալ ու մի քանի բան գողացավ...

— Չէ՛, խազեին ջան, սա գողանալ չի: Որ էդպես բան անի, կգամ կոնիցը կրնեմ, էն Քուռը կզցամ:

— Հա՛, որ ձեռը հալալ է՝ մարդ կդառնա:

— Ի՞նչ դարդն էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնա. լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարհումն ինձ նման խեղճ ու զուրկ չմնա... Ինքն էլ աշխարհք էրեխա ա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանաչ ա էլել, գրի սեն ու սպիտակը ջոկում ա: Ամա աղաչանքն էն ա, որ լավ մտիկ անեք, զարիք էրեխա ա, քորփա ա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց, բարձր ձենով հրաժայելով— «Ձայ բերեք, հաց բերեք սրանց համար...»:

3

Հեր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում:

— Գե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ ողբ ես դուրս գալի... Հենց պետք է անես, որ... ես ի՛նչ գիտեմ... ո՛վ տեր աստո՞՞... — մռնչաց Համբոն ու շիբուխը լցրեց:

Այնինչ Գիքորը շորս կողմն էր դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունեն՛:

— Չէ, սրանցը փեչն ա, ա՛յ էն ա փեչը...

— Կալ էլ չունեն՛:

— Սրանք քաղաքացի են, գեղացի հո չեն, որ կալ կալսեն:

— Բա ո՞րտեղից են հաց ուտում:

— 263 —

— Փողով առնում են ուտում: Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածուան էլ, փետն էլ, շուրն էլ...

— Վա՛...

— Բա՛, սրան Քիֆլիզ կասեն: Դու հլա դոշաղ կաց, դեռ շատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունե՛ն...

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են: Մտիկ արա հա՛ — ձեռնաքաշություն շանես: Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կդցեն, մոտենաս ոչ: Թե վերցնես էլ, տար ասա — «խանո՛ւմ, էս ի՞նչ փող ա, էստեղ վեր ընկած էր. աղա՛, էս բանն էստեղ գտա», թե չէ...

— էստեղ էլ պրիստավ կա՞ որ...

— Կա բա՛ս... Վախտ ու անվախտ դես-դեն շընկենս, ձեռք ընկած փողը քոռուփուշ շանես, հազար ու մի պակասություն ունենք: Քեզ էլ լավ պահի, գիշերները բաց շըլես, մրսես ոչ... Մի-մին եկողի հետ գիր դարկի... — մերթ-մերթ շիրուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն: Այնինչ Գիքորը ննջում էր:

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն էդ ա... Օրեր են, կմթնեն անց կկենան...

Շարունակում էր հերն իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված քնել էր արդեն:

էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ հոգնել էր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, դեզերի նման դարսած գույնզգույն շիբերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կինտոները... էս ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված դժվժում էր նրա գլխում: Եվ նա հոգնել էր ու հորը թինկը տված քնել:

էս ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը: Կինը տրտնջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառա էր գտել:

— Կսովորի, հո էդպես չի մնալ, — ասում էր նա կնոջը:

— Կսովորի, որդի, սիրտդ շուռ մի՛ բերի, — խնդրում էր բազազի պառավ մայրը:

Բայց տիկին նատոն չէր համոզվում: Նա արտասովելով անիծում էր իր բախտը:

4

Գիքորը մենակ նստած էր բազազ Արտեմի խոհանոցում: Նա արդեն ծառայության մեջ էր:

Խազիկի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մավի բլուզ էլ հագին, էսպես ոտից գլուխ փոխված, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թե ընչի եկավ իրենց գլուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի...

էս ժամանակ ներս մտավ տիկին նատոն:

Գիքորը տեղը նստած էր:

Տիկինը մի բան ասավ: Գիքորը լավ չլսեց, թե չհասկացավ:

— Քե՞զ չեմ ասում, տո արջի քոթոթ:

Գիքորը շփոթվեց, քրտնեց. մին ուզեց հարցնի, թե ինչ է ասում, մին էլ սիրտ շարավ: Աղջիկ պարոնը բարկացած դուրս գնաց:

— Ը՛հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, սա տեղիցն էլ ժած չի գալի, ձեն էլ չի հանում...

— Վերջացավ, — անցավ Գիքորի մտքովը: — Բայց ի՞նչ շուտ վերջացավ... ի՞նչ վատ վերջացավ... Հիմի ես ի՞նչ անեմ... հերս էլ գնաց...

Եվ ամեն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն-իրեն խոսելով ներս մտավ սև շորերով բարի պառավը՝ բազազի մերը:

— Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցդ ընչի՞ չես կանգնում, որդի, — խրատում էր նա Գիքորին. — որ բան են հարցնում, ձեն հանի... ո՞նց կըլի էդպես...

Պառավին դեղին էին ասում:

Դեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի, ինչպես սամովարը գցի, ոտնամանները սրբի, շոտկը բռնի, ամանները լվանա...

Բացի պառավ դեղին, ամենքը նեղացնում էին նրան:

Բազազի «դուքանի աշկերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիթի» էին կանչում, քիթը բաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները:

Բայց էս բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա: Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թե չէ՝ փեշն էր դնում, գնում հանդը: Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբրի վրա նստում էր ուտում:

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր: Ինչքան էլ սոված լիներ՝ պետք է սպասեր մինչև ճաշի ժամանակը գար, էն էլ ամենքն ուտեին, հետո ինքը: Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում:

Մին, երկու, տասը համբերելուց ետը նա սկսեց շորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը գա:

Սկզբում ինչ գտնում էր — շոր հացի փշրանք, կրծած ոսկոր թե ուրիշ բան, զցում էր բերանը: Մի քիչ հետո մտածեց խոհանոցի պահարանները որոնել: Ապա թե սովորեց կերակուրի պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց եթե նկատեիր՝ն...

Ինչ վատ բան դուրս կգա՞ր...

Եթե նկատեիր՝ն...

Հապա ի՞նչ անես...

Թողնե՞ս, փախչե՞ս...

Եվ Գիբորն սկսեց մտածել փախչելու մասին:

Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մենա՛կ, ճամփա չգիտես, մարդ չես ճանաչում... իսկ հերը...

Էնքան շարշարվեց, խոսեց, խրատեց՝ «Օրեր են, որդի, կմըթենեն, անց կկենան...»

Եվ ահա Գիբորի գլխում հնչում է հոր խանձված ձեռք. — «Օրեր են, կմթենեն, անց կկենան... անց կկենան...»:

Ձանգը սովին:

Գիբորը վեր թռավ: Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՛ր՝ ով է, ինչ է ուզում: Նա դուրս եկավ, պատշգամբից նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջ կանգնած: — Էդ ո՞վ եք, հե՛յ, — ձայն սովավ վերևից:

Ներքևից վերև նայեցին:

Տիկիները ծիծաղեցին, իսկ պարոնը, ակնոցներն ուղղելով, հարցրեց:

— Աղջիկ պարոնը տա՞նն է:

— Ի՞նչ եք անում, — հարցրեց Գիբորը:

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ:

— Քեզ հարցնում են՝ տա՞նն է, թե չէ, — բարկացավ պարոնը:

— Բան ունե՞ք:

էս աղմուկի վրա տիկինը դուրս եկավ:

— Քրթրվես դու, գնա դուք բաց արա, շո՛ւտ, — ճշաց ու սկսեց անիծել Գիբորին և իր ամուսնուն: Բայց շուտով հյուրերն երևացին, և նա ժպտալով դիմավորեց:

— Ա՛՜ բարև, բարև... էս ո՞ր խաչիցն էր, ի՞նչպես է որ մտաբերեցիք...

— էս ո՞րտեղից եք գտել, — ոտից գլուխը Գիբորին շափելով հարցրեց պարոնը, իսկ տիկիները շարունակ ծիծաղում էին:

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք, — կատակի տվավ տիկինն, ու հյուրերը խնդալով ներս մտան:

Գիբորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իսկույն ներս մտավ և տիկին նստոն:

Իրար առողջութուն հարցնելուց ետը հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս եկավ մի ահագին պատմություն:

— Օ՛Ֆ, սիրտս մաշել է, — գանգատվում էր տիկին Նատան. — Թե իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռքից: Ասում եմ՝ գուցա անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք էլի, ասում է՝ մեզք է. գեղացի երեխա է, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կսովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն է՞ մի՛ տախ, — էս ու էն կողմից սկսեցին բազմեց տիկին հյուրերը:

Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քաղաքի նորութուններից: Հենց էդ խոսակցութեան ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը:

— Աղջիկ պարոն, միրզը բերի:

— Հա, լավ, գնա՛,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ պարոն, խազեինն ասում էր՝ բալը թանգ ա, հարկավոր չի...

Էս խոսքերի վրա հյուրերից ոմանք պոռթկացին ու թաշկի-նակով բերաններին հուպ տվին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակութունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ թանկ է, էս ժամանակին ով է բալն առնում: Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է միրզը, հո ուտելու համար չեն եկել, ի՞նչ են նեղութուն քաշում...

Տանտիկինը, մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ եղածն ուղղի:

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը:

— Ով սուտ ասի՝ գետինը մտնի,— երզվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ:

6

Հյուրերին ճամփու դնելուց ետը տիկին նատոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր էր քաղում մրգի սեղանը: Նա հայհոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն:

— Քա՛, խամ է, որդի, կտովորի, որդի... ինչի ես սիրտդ շուռ բերում... Ախ աստո՛ծ, ի՞նչի չես հոգիս առնում,— հառաչում էր պառավ դեղին:

— Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... Խամ է, դե գնացե՛ք դուք շինեցե՛ք, ես հո ձեր գերին չեմ,— ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն գար:

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասովել, ավելի բարձր խոսել ու ամանները իրար գլխով տալ:

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ. թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառա բռնես... կավ է

մարդ ծառայի տեղ էլ քաշ գա, քան թե ամեն օր էսենց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չե՛ս...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բազազը՝ տան մեջտեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. էս էր մնացել, որ խալխի մոտ էլ մարդ գետինը մտնի, էս էլ արիք. էլ ի՞նչ պատահի,— վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմութունը:

— Վա՛հ,— բացականչեց բազազը:

— Ա՛խ աստո՛ծ,— հառաչում էր բարի պառավը՝ դեռ ու դեռ ընկնելով:

Բազազը Գիքորին ձեն տվեց:

Թմփթըմփացնելով Գիքորը ներս ընկավ:

— Մոտիկ արի,— կանչեց բազազը:

Գիքորը վախեց նրա դույնից, մնաց տեղը կանգնած:

— Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն էս անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո՛, արջի քոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես ղոնաղներին ասում, թե բալը թանգ է՛ր...

— Ես... ես... աղջիկ պարոնին...— ուզում էր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին, գլուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել, անդադար կրկնելով — «բալը թանգ էր, հը՛... բալը թանգ էր, հը՛...»:

Պառավ դեղին դողողալով մեջ ընկավ, աշխատում էր ետ քաշի կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկավ, երեխաներն էլ սկսեցին ճչալ, բազազը ետ կանգնեց հևալով ու կրկնելով — «բալը թանգ էր, հը՛», — աչքերը միշտ շոտած անկյունում կծկված Գիքորի վրա, որ դողալով ու ցավագին մրմնջում էր:

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

7

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին: Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, չի՞թ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր:

Եվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու տոգույն, մեծ-մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարանների բարձր պատերին զարկելով ծառու էր լինում Քուռը, ոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշուրում կամուրջի տակին:

Ափից մոտիկ պտտում էր մի կանաչ նավակ: Երկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկամ էր ձգում, մյուսը նավն էր կառավարում:

— Այ հիմի կհանի,— ասավ Գիքորն ու կանգնած նայում էր ձկնորսներին: Ուռկանը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն իմ բախտից,— ասավ Գիքորն ուռկանը ձգելիս: Գիքորի բախտը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ մեր Զաննի բախտիցը:

Էս էլ դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ Գալոյի բախտիցը:— Գալուն էլ էր անբախտ:

— Էս մինն էլ բաս...

Բայց էդ ժամանակ մոտիկ քարվանսարի դռանը աղմուկ բարձրացավ: Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով:

Ա՛յ արի, արի, մեյմուն,
Ճիպոտդ սարի, մեյմուն,
Պառավի պես կուզի-կուզ,
Ջահելի պես պարի, մեյմուն:

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, շկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը:

— Ի՞նչ ես ներս խցկվում, տո լածիրակ, գնա քու բանին,— ասավ մի կինտո ու զարկեց գլխին:

Նեքորը հանկարծ սթափվեց ու վազեց գեպի խանութը:

Իրիկունը Գիքորը կուշ էր եկել խոհանոցում: Դեռ արտասուքը էք ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խաղճիկի ապտակները տեղերը, դեռ նոր էր լռել աղբիկ պարոնի ձեռքը — շրվ-շրվացնելով ներս մտավ Վաստն՝ բազադի աշկերտը: Գիքորին

նկատելով՝ հա իսկույն կանգ առավ ու, մասխազրա դեմքին չքու-թյուն տալով, սպառնալի հարցրեց.

— Կլուբումն ուշացա՞ր, տո արջի քոթթի, թե գուքերնատի մտտ վառազ գործ ունիիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում:

— Ասա մի տեսնեմ է, տո՞...

Գիքորը լուռ էր:

— Չե՞ս իմանում, տո՞. ո՞րտեղ էիր է՛, որ էսօք ինձ քաղցած սպանեցիր. որ մեռնեի՞ հետո՞...

Էսպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վաստն պատրաստվում էր մի ուրիշ ձևի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղճիկի ձայնը: Գալիս էր:

— Աբա տես հիմի քեզ ի՞նչ է անում,— սպառնաց Վաստն: «Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Խաղճիկը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց շտան, որ իմանա, թե ինչ բան է քաղցածությունը:

Վտանգն անցավ:

Գիքորը հանգստացավ, թեև շտան էր աղբիկ-պարոնի ձայնը, որ ճշում էր.— Ախր ընչի՞ ես պահում, դուրս արա կորչի էլի, դուրս արա կորչի՞...

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Լուսնակ պիշիր, բոլորովին քուն չունեմ,
Ինձ տեսողը կարծում է, թե տուն չունեմ, վա՛յ, տուն
չունե՞մ...»

Իր հրգը երգելով Վաստն հաց էր ուտում: Գիքորը վերմակի տակից երբեմն զգույշ ձեփկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն օրը հաց չէր գրել բեքանը. ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պատկեց, ու քունը չէր տանում:

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում հա՞, էգպե՞ս...—

նկատեց շարաճճի վաստն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիբորին:— Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խազեինը չիմանա:

Գիբորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում: Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ հերն ու մերը կովում էին իրեն քաղաք բերելու համար... մերը լաց էր լինում, չէր ուզում...

— Ա՛խ, նանի ջան, ի՛նչ լավ էր սիրտդ իմացել,— հառաչում էր Գիբորը տեղի տակին ու հաց ու պանիրը ուտում, ականջը սրած, թե խազեինը հո չի գալի:

Իսկ առավոտը կանգնած էր խանութի դռանը:

10

Խանութի դռանը կանգնած ձեն էր տալի Գիբորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

— Կանչի է՛, տո՛. ի՛նչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերանումդ հո չուր չկա՛:

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք...— կանչում էր Գիբորը:

Ներսը ծիծաղից թուլանում էին:

Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեպի իրենց խանութը: Եվ նա հաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում էր քաշել դեպի խանութը, ու բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս էր գալի համբերությունից: Գալիս էր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոթ օրերին, խանութի դռանը երկար կանգնելուց հոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած շեբրի վրա:

էդ ժամանակ շարաճճի ընկերները կամ հարևանները բռնութի էին բռնում նրա քթի տակը:

Նա փոշտալով վեր էր թռչում:

Շոգից թմրած վաճառականները զվարճանում էին: Իսկ խազեինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն էր տալի.

— Քնում ե՛ս, տո, արջի քոթոթ, կանչի է՛...

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք,— ձեն էր տալի Գիբորը:

Մի օր էլ Գիբորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից երկու գյուղացի դուրս եկան: Նա վազեց, փաթաթվեց գյուղացիներին:

— Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան էր,— զարմացած բացականչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերին.

— Բաղո, դու կճանաչե՞իր...

— Ես աչքերիցը կճանաչեի,— պարծեցավ ընկերը:

Ճշմարիտ որ Գիբորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել: Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ: Դժվար էր ճանաչելը:

— Ա՛յ տղա, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհքին...— հիանում էին գյուղացիները:

— Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին ո՛րտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խոզ են արածացնում...

Այնինչ Գիբորը իրար ետևից հարցնում էր.

— Իմ մերը ո՞նց ա... մեր էրեխեքը ո՞նց են... իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնել ա, թե չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել...

— Ամենն էլ լավ են, շատ բարով կանեն,— պատասխանեցին գյուղացիք:— էն ա Մուքնանց Ղուկասը մեռավ, մին էլ Պուճուրանց պառավը, մնացածը լավ են:

— Բա իմ հերն ընչի՞ չի գալի:

— Քու հերը լավ ուզում ա, ամա ո՞նց գա: Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան շափեն վրեն...

— Բա բան չեն դարգե՛լ...

— Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ: էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ զոռով ծերը ծերին ա հասցնում: Նրանցից ի՛նչ ես ուզում: Թե ունիս, դու դարգի հերն խարջ են ուզում — ձեռին գոռոչ չունի:

— Հո մեր տանիցը օքմի չի՞ հիվանդացել:

— Չէ՛, էն ա ձեր Մաղիկ կովը Միրզանց զոմի փլեկովը ներքև ընկավ, սատկեց:

— Մաղիկը սատկե՞ց...

— Խեղճ մերդ էնքան լաց էլավ՝ աչքերն ուռան:

էս ասելով, գյուղացիներից մեկը մի նամակ հանեց տվավ Գիբորին ու ասավ.

— Հիմի ի՛նչ ես ասում. մենք էլ քեզ տեսնիլ չենք, գնալու

ենք. թե մորդ կամ քվորդ համար բան ես դարգելու, տուր տա-
նենք:

— Թ՛րտեղից բան դարգեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...

— Ամա ի՞նչ...

— Բազում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ: Համ մեր գեղին, համ մե-
րոնց կարտեղ եմ, համ էլ...

— Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառել, խելո-
քացել ես... էդ տեսակ բան կասե՛ն: Էստեղ քեզ համար աղավա-
րի ապրում ես — շորերդ թազա, ոտն ու ձեռք իստակ... Մենք
ասում ենք մեր էրեխանցն էլ տեղ անես՝ բերենք, դու էգ ի՞նչ ես
ասում: Էն որ ասել են՝ «խոզի գլուխը դրին խալիչին, գլորվեց ետ
ցիխն ընկավ», հաշալ քեզ համար են ասել:

Էստես համալիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս բա-
րով ասին ու գնացին:

Նրանց գնալուց ետը Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց
արավ հար նառակը:

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան:

Ի քաղաքն թիֆլիզ:

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջութիւնն ենք ուզում,
ամեն: Քեզ շատ կարոտով բարով են անում ապին, նանը, Զանին,
Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն: Մեր սիրելի որդի Գիքոր. ահա
իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում
են և փող չենք ձարում, և նանն ու Զանին տկլոր են և տեղներս
շատ նեղ ա: Գիքոր ջան, մի քանի մանեթ փող դարգի և մի գիր
դարգի քու որպիսութենիցը: Եվ իմացած ըլես, որ Սաղիկը սատ-
կեց, և նանն ու Զանին տկլոր են»:

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքո-
րը, դարդ էր անում իրանց տան համար: Միտքը էրում էին նա-
մակի տողերը:

— Նանն ու Զանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

— Կանչի է՛, տո, ի՞նչ ես վերացել, ուշքդ հոտները գնա՞ց... —
ձեն տվին ներսից:

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք, — կանչում էր Գիքորը
խանութի դռանը կանգնած:

Ձմեռը եկավ: Սառն աղմուկով ձյունախառն բուքը թռչում է
քաղաքի վրով: Փողոցներում սուրում, սուլում, հոտան է անում:
Վզզալով մտնում է անկյունները, աղքատի ու աղկորի է ման գա-
լի, պանդուխտ ու անտեր երեխա է որոնում:

Ահա գտավ Գիքորին:

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձեն էր
տալի նա.

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք...

— Հրե՛սսս... — շարախինդ սուլելով ցուրտը, անեթուլթ թրի
նման, զարկեց անցավ ոսկորները: Գիքորը դողաց:

Առանց էն էլ նա շատ էր մաշված. էղբանն էլ հերիք էր նրան
ու անկողին ընկավ:

Հիվանդ պառկած էր Գիքորը բազազ Աթոռեթ խոհանոցում:
Պառավ դեղին օրը մի քանի անգամ նեքս էր մտնում, իրեն-իրեն
խոսելով:

— Ի՛նչ կուզես, որդի՛, Գիքո՛ր:

— Ջո՛ւբ...

Գեղին ջուր էր տալիս: Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում է
ազահ խմում էր ու կրկին ուզում:

— Էս սիրտս հովացնում չի, դե՛ղի... ես մեր աղբրի սառը
ջրիցն եմ ուզում, դե՛ղի... ես մեր տունն եմ գնում... ես իմ նանին
եմ ուզում...

Բազազ Արտեմը ցավի մեջ էր ընկել: Ծա դես-դեն ընկավ,
նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, որ Համբոն գա, իսկ
Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը:

Էստեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած: Տխուր
անքում էին ու օճորքին նայում անզոր հայացքներով:

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում:

Էստեղ գտավ նրան հայրը:

— Էգ ինչ ես էլի, Գիքոր ջան, — մզկտալով վրա ընկավ Համ-
բոն:

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը:

— Գիքոր ջան, բա եկել եմ, է՛, Գիքոր ջան... ես քու ապին եմ, է՛...

Հիվանդը ոչինչ չհասկացավ: Նա զառանցում էր ու զառանցանքների մեջ կանչում էր— «Միկի՛շ, Զանի՛, ապի՛, նանի՛...»:

— էստեղ եմ, Գի՛քոր ջան, նանը զարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՛ս... Միկի՛շն ու Զանի՛ն հրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում: Ի՞նչ ես ասում. դե խոսա է, Գիքոր ջան...

— է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք,— բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում էր տաքության մեջ:

14

Մի երկու օրից ետը Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կռան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քրոց գտան: Էն էլ երևի, քրոջ— Զանի համար էր հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, որ էդ միևնույն ճամփով քաղաք եկավ իր Գիքորի հետ: Ահա էստեղ էր, որ նա ասավ.

— Ապի, ոտներս ցավում են...

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կար, մենակ նա չկա...

Մյուս օրը, երբ Համբոն անցնում էր լեռները՝ հեռվում երեվաց իրենց գյուղը:

Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Զանին, Միկի՛շը, Մոսին, իսկ փոքրիկ Գալուն մոր գրկից կանչում էր.

— Ալի՛, ալի՛, հե՛ Գիքու...

ԵՐԿԱՔՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

1898 թվին նոր էր բացվել Թիֆլիսից կարս գնացող երկաթուղին, և ոտու գյուղերից մեկում մի իրիկնադեմ Ուհանես բիժու գոան գերանների վրա նստոտած զրույց էինք անում: Ուհանես բիժեն մեզ պատմում էր, թե ինչպես սկսվեց երկաթուղու շինությունը:

«Մի տարի ես ու մեր Սիմոնը ներքի ճալումը ճիպոտ էինք կտրում»: էսպես էր պատմում նա:

«Մին էլ տեսանք մի քանի սիպտակ շլապկավոր մարդիկ ներքևից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր գնացին:

— Ասի՛ հե՛ Սիմոն,

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ էստեղ մի բան կա:

— Թե՛ ի՞նչ պետի ըլիլ, ճամփորդ մարդիկ են, կարելի ա ճամփեն կորցրել են, իրենց համար գնում են:

— Ասի՛ չէ, էստեղ մի բան կա, ետնա կիմանաս:

Եկանք տեսանք Տերսանց ջաղացի կտերը մի սիպտակ փետ ա տնկած:

— Ասի՛ հե՛ Սիմոն,

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսնում ե՛ս:

— Թե՛ էս ի՞նչ ա որ:

— Ասի՛ հալա դեռ կաց, ետնա կիմանաս...

Սրանից մի քանի ժամանակ անցկացավ — մին էլ տեսնեք կազեթ եկավ, թե՛ բա՛ երկաթուղու ճամփեն դեսն են տանում...

— Ասի՛ հե՛ Սիմոն,

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսա՞ր՝ խոսքս որտեղ դուրս եկավ...

— Ա՛յ լեզուդ պապանձվեր հա՛,— ձայն տվեց էն կողմից որսկան Օսեփը:

— Ա՛յ տղա, ընչի՞ ես էդպես ասում, ի՞նչ մի վնաս բան ա երկաթուղին,— մեջ մտան մի քանի գյուղացի:

— Վնաս չի, բա ինչ ա, եկավ ձորերումը ծղրտաց, էլ պախրա շմնաց, կխտար շմնաց, ձենիցը խրտնեցին, փախան կորան:

— Պախրեն ու կխտարը չէ որ, հավատա՛ ես էլ կկորչեմ,— խոսքն առավ մի հովիվ, որ դազանակին հենված կանգնած էր:—

Գնում եմ քարի գլխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քարափները քանդելիս տեսնում եմ, սրտիս ծերը մղկտում ա, ոճք որ թե մարդի երեխան թշնամու ձեռին քրքրելիս ըլեն, ու մարդ կարենա ոչ թե օգնի...

— Զէ, շատ բան կփշանա,— սրա հետ էլ հառաչեցին մի քանիք:

Ու սկսվեց վեճը երկաթուղու վրա, թե երկաթուղին օգուտ էր բերելու, թե վնաս:

էդ վեճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատող օտարականներից մինը ձորիցը դուրս եկավ ու մոտեցավ մեզ:

— Բարի իրիկուն ձեզ:

— Աստժու բարին, ուստա:

— Ինձ մի շափ ալյուր է հարկավոր, ձեզանից ո՞վ ալյուր կծախի,— դիմեց օտարականը ամենքիս:

— Ո՞րտեղացի ես, ուստա,— հարցրեց Ուհանես բիձեն:

— Օսմանլի հողիցն եմ:

— Ուհանես բիձա, հալա մի հարցրու տես ո՞ր քաղաքիցն ա,— խնդրեց մի գյուղացի:

— Քու քաղաքի անունն ի՞նչ ա, բարեկամ,— կրկին հարցրեց Ուհանես բիձեն:

— Սըվազ:

— Սըվա՞զ,— երկարացնելով ու խորհրդավոր կերպով կերկնեց Ուհանես բիձեն:

— Ի՞նչ ասավ, Ուհանես բիձա:

— Սըվազ...

— Պա՛հ, քու տունը չբանդվի...— ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի:

— Էնտեղից էստեղ քա՞նի ամսվա ճանապարհ է,— շարունակում էր հարցուփորձը Ուհանես բիձեն:

— Երեք ամսվա:

— Պա հո՞...— միաբերան զարմացան ամենքը:

— Համեցեք, զարիր ախպեր, նստիր, հաց բերեն, հաց անուշ արա:

— Զէ, շնորհակալ եմ, վառազ եմ. ձեզանից ո՞վ ալյուր կծախի, մի շափ ալյուր տա՞՞ գնամ:

— Ախչի, մի շափ ալյուր դուրս բերեք,— դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն.— գլուխ-գլուխ լցրեք:

Հարսներից մինը մի շափ ալյուր դուրս բերեց, ուզեց դատարկի մեջը, բայց նա թող շարավ:

— Ի՞նչ արժե...

— Աժա, դեռ աժա տոպրակիդ մեջը:

— Զէ, առաջ մի գինն իմանանք:

— Դեռ աժա, հետո կիմանաս. թե որ թանգ ըլի, դարտակելը հեշտ ա:

Ուստեն իր տոպրակը բաց արավ, հարսն ալյուրը մեջը գատարկեց ու գնաց:

— Դե հիմի ի՞նչ տամ,— հարցրեց ուստեն, ծոցից քսակը հանելով:

— Ոչինչ, ուստա, ոչինչ չի հարկավոր, քեզ փեշքեշ, մեր աշխարքումը զարիբից հացի փող չեն անիլ, էգ տեսակ ագաթ չկա...— ասավ Ուհանես բիձեն ու շարունակեց իր շիբուխը ծխել: Ուստեն մի քիչ շփոթվեց, չեմ ու չում արավ ու գնաց:

Ուստի գնալուց հետո մի կարճատև լուռություն տիրեց, ապա թե խոսեց մի գյուղացի:

— Էն օրը մինն էկել ա թե՛ մաժոն եմ ուզում: Հարսները մաժոն դրին առաջին. կերտով պրծավ, հիմի վեր ա կացել, թե՛ ինչ արժե...

— Ասում եմ ի՞նչը...

Թե՛ մաժոնը...

— Ասի՛ ա՛յ մարդ, գլխիցս քաշվի, էգպես բաներ մի խոսիլ, թե չէ ոչխարի էլած կաթն էլ կցամաքի...

— Ա՛յ տղա, բա ի՞նչպես անենք... էն լա՞վ ա, որ ով գա մուֆտա ուտի ու տանի՞... էս վրա քանիտն են գալի, գիտե՞ս թե չէ... էն օրը մեին էլ ես եմ մի խան ալյուր շափել տվել... էդ ո՞ւր կերթա,— մեջ ընկավ Ուհանես բիձու փոքր ախպերը:

— Որ գա՛ մին էլ տուր...— գլուխը վեր քաշելով հանդարտ խոսեց Ուհանես բիձեն:

— Օջախդ շեն կենա,— վռչացին մի քանի ծերեր:

— Աչքս լուս էլի՛. Սըվազից սկսած ով գա՛ շափի տուր. կասես ես նրանց համար եմ աշխատել... Ով գալիս ա՛՞ բարով, հաղար բարի. բան ա ուզում՝ փողը բերի՛ տանի...

Ու սկսեցին վիճել: Ուհանես բիձեն էլ տաքացավ, ազմուկը մեծացավ:

— Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ... Ձորերում սուլում էր երկաթուղին:
Նոր էր մտել նա մեր ձորերը:

1897

ԱՐՁԱՌՐՍ

Ա

Մի կերի տարի ես ու մեր Ավագը Մասրեքում խոզ էինք պահում: Հիմի մի աշունքվա գիշեր բերել ենք խոզը իր նիստը արել ու դափի դռանը մի կրակ վառել, որ բոցն աստծու ոտներն էրում է: Մի լուսնյակ գիշեր է: Ծա պկու եմ ածում, էս Ավագն էլ մի բայաթի է վեր քաշել, որ սար ու ձոր գվգվում են:

Մին էլ Ավագը թե՛ «Ա՛յ տղա, էն ո՛վ է, հրե մի մարդ է գալի վերի կոնիցը»:

Մտիկ տամ տեսնեմ, դրուստ որ՝ մի մարդ է գալի վերևիցը: Ամա ես էլ լսել եմ, որ արջը գողության գալիս՝ խաբելու համար առաջի երկու ոտը դռշին է դնում, երկու ոտանի մարդի նման է գալի, ոնց որ մարդ ըլի:

Ասի՛ Ավագ, էս օքմին չի, արջ է:

Թե՛ բո՛հ, չէ չէ պոզեր:

Ա՛յ տղա, ասի՛ արջ է:

Ծա՛ հա, սա՛ չէ. ես՛ հա, սա՛ չէ: Իսկ նա էլ կամաց-կամաց կողքհան մոտենում է, ու ձեռներին էլ հրացան չկա: Մին էլ էն տեսանք՝ առաջի երկու ոտը վեր դրավ, դառավ շորսոտանի ու, ա՛ն հա կտաս՝ խոզի կես տեղը: Խոզը ճղճղալով իրար խառնը-վեց, հավաքվեց արջի վրա:

— Ալարա՛շ, բռնի հա՛ բռնի, հրես հա՛, հրես:

Ամեն միևս մի ածխակոթ վեր կալանք, վազեցինք: Մի հասուլիկ մերուն ունեինք. ականջ դնենք, որ սրա ճղղոցը ներքի փոսերիցն է գալի: Վազ տվինք փոսերի վրա: Ածխակոթը քաշել ենք, հիմի էս անխրավին վեր ենք հատում, տալիս ենք, ինչ անում ենք, չենք անում, մերունը բաց չի թողնում. առաջներս խտրտած ձորն

է ընկնում: Վերջը՝ շատ տեղը նեղացրինք, չէ՛, թող արավ, փախավ:

Առավոտը ասի՛ Ավագ, դու խոզի կշտին կաց, ես գնամ տանիցը մի հրացան բերեմ:

Թե՛ դե՛, լավ:

Բ

Ավագը խոզի կշտին կացավ, ես գնացի, տանը մի հին հրացան ունեինք, վեր կալա եկա: Եկա, շիտակ գնացի ներքի մոշուտնին, որտեղ գիտեմ արջի տեղն է: Ման էկա. որ դտա ոչ, մի տեղ մի լավ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի՛ մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս՝ հենց մոշենու տակիցը մինը ֆրթացրեց ու հրացանս բռնեց:

Դու մի ասիլ, գնացել եմ հենց անտեր արջի վրա եմ կանգնել:

Որ հրացանիս լուլիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի: Հիմի նա օլորում է, ուզում է կոտրի, ես օլորում եմ, որ հենց անեմ ծերը վրեն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ: Բայց անտերք գլխի է ընկել, թողնում չի:

Ծա ձգեցի, նա ձգեց. տեսա, որ բան չի դառնում, ձեռս գցեցի, ասի հանկարծ խլեմ: Ձեռս գցեցի թե չէ, թանթլիկը բերավ ուսովս պատ տվավ: Որ թանթլիկն ուսովս պատ տվավ, հրացանը բաց թողեց: Հնքան արի՛ հրացանի ծերը փորին դեմ առավ, շախմախը ձեռս գցեցի, ասի՛ էս է, բանը պրծավ: Վերի ոտը քաշեցի՛ չըրթկացրի, տրաքեց ոչ: Մտիկ տամ, տեսնեմ՝ քարը վեր է ընկել, կորել: Հնտեղ մեջքս կոտրեց: Հրացանը բաց թողի, ասի՛ խտրտեցն ազատվեմ. եղավ ոչ: Բռնեցինք իրար:

Գ

Դես քաշեցինք, դեն քաշեցինք: Տեսնեմ՝ անտերն էս է, ինձ ուտում է: Ձեն տվի՛ «Ա՛լարաշ հե՛յ... Ա՛լարաշ հե՛յ...»:

Մին էլ տեսա շունը կլանչելով գալիս է: Եկավ, հասավ: «Ա՛լարաշ, օգնի, ասի, ինձ կերավ...»: Հա՛յ քեզ մատաղ, շո՛ւն. որ հասավ մեջքին տվավ էլի, ոնց որ մի գնդակ ըլի: Ամա ի՛նչ, էն շունը թե նրա մեջքին տված, թե էն լեռ քարափին:

Ոնց որ երկու փահլևան պինդ իրար բռնեն, բռնել ենք ու

աչք աչքի ենք գցել: Մին էլ տեսա՛ կում արավ ու մարդի պէս երե-
օխս մի մեծ թքից — թո՛ւ: Որ թուքն աչքերս բռնեց, գլուխս դռչիս
վրա կոացրի, ետնուց էլ թանթիկով մի թունդ ապտակ հասցրեց,
ու ինձ կորցրի:

Տեսա՛ էլ ազատվելու դուռը չկա, ասի՛ ես առաջուց երեսիս
վրա վեր ընկնեմ, որ երեսս փշացնի ոչ: Բերանսիվեր տակին վեր
ընկա: Որ տակին վեր ընկա, շունն ավելի կատաղեց: Արջն ընկել
է ինձ վրա, շունը ետևից իրեն ուտում է, որտեղից բռնում է՝
օդուտ չի անում: Դու մի ասիլ վարպետ շուն է, գիտի արջը որտե-
ղից կխեղճանա: Մեջքին վեր էլավ, ականջներիցը բռնեց: Որ
ականջներիցը բռնեց, արջը ինձ թողեց: Անտերը գազազեց, շանը
թափ տվեց մեջքից, վեր գցեց ու բռնեց, հուպ տվավ թե շանչեց,
էլ գիտեմ ո՛չ ինչ արավ, որ բաց թողեց, շունը կլանչելով ձորն ըն-
կավ, փախավ. կորավ:

Դ

Շունն էլ գնաց. մնացինք ես ու ինքը: Հիմի տակին երեսս
բռնած միտք եմ անում: Իմացել եմ, որ արջը ականջ է դնում,
տեսնի շունչ կա, թե չէ: Թե իմանում է, որ շունչ է քաշում տակի
օքսիկը, շարդում է, մինչև շունչը կտրի, թե հո չէ՛՝ բոթբաթաղ է
անում, թողնում գնում, որ հոտի, հետո գա հանի ուտի: Էս միտք
տեսելիս մին էլ էն տեսա՛ գլուխը բերավ գլխիս վրա դրավ, շունչը
իրեն քաշեց. ականջ է դրել: Ես էլ շունչս փորս գցեցի, ոնց որ թե
մեռած եմ: Գլուխը վեր քաշեց, մի քիչ կացավ՝ մին էլ ականջ
դրավ: Էլ ետ շունչս պահեցի: Սա որ տեսավ՝ ես էս է մեռած եմ,
ինձ թող արավ մրթմրթալով գնաց: Աչքս ծերպ արի, ասի՛ մտիկ
անեմ, տեսնեմ ուր է գնում: Ասում եմ՝ հենց լինի մի քիչ տեղ հե-
ռանա, վեր կենամ փախչեմ:

Գնաց՝ մոտիկ ցախ ու մախ կար, փետ կար, հավաքեց բերավ
վրես ածավ: Մեջքիս վրա դրավ, շինքիս վրա դրավ, էլ ետ գնաց:
Գնաց, մի թեթև ցրցչորի կար, էն էլ բերավ ոտներին վրա դրավ,
մին էլ ետ գնաց:

Տեսնեմ՝ մի ահագին բոթուկ կա, շարշարվում է պոկի, որ ըն-
րի էն էլ վրես գցի: Միտք արի որ՝ թե էս բոթուկը բերի վրես գցի,
տակին շունչս կկտրի: Ասի, քանի ուշքը բոթուկումն է, վեր կե-

նամ կորչեմ: Փորսող տալով փետերի տակիցը գուրս եկա, փա-
խա մտա մոտիկ մամխուտը, տապ արի:

Հիմի տապ արած տեղիցս մտիկ եմ անում, Չարշարվեց, բո-
թուկը պոկեց ու, ոնց որ մարդը խառտի, խառտեց, բերավ թե վրես
գցի: Եկավ տեսավ փետերի տակին մարդ չկա: Բոթուկը խառտին
զարմացած կանգնեց, փետերի տակին մտիկ արավ, շորս կուտը
մտիկ արավ, հանկարծ բոթուկը վեր գցեց ու՝ թո՛ւ հա թո՛ւ, թո՛ւ
հա թո՛ւ, մարդի նման թքոտում է. ասի երևի ափսոսում է, էլի:

Թո՛ւ հա թո՛ւ անելով, ճոճոացնելով ընկավ ներքի ձորը: Ըս
էլ վեր կացա, դուրս պրծա գեպի Ավագը: Գալիս եմ, ոնց եմ գա-
լիս, ոնց որ հետ ածած լինեմ: Ետ եմ մտիկ անում, ասում եմ
տեսնեմ, հո արջը գալիս չի: Հասա մեր խոզի նիստը: Էս Ավագը
թե՛ ա՛յ տղա, էդ ի՞նչ խաբար է, էդ ի՞նչ ես եղել: Ասի՛ էլ խաբա-
րը ո՞րն է, բո տունը քանդվի, էսենց բան եկավ գլուխս: Թե՛ բա
հրացանդ ո՞ւր է:

Նոր տեսնեմ, որ հրացանս մտիցս ընկել է, թողել եմ տեղը:

Ե

Եկանք մի քանի հոգի հավաքվեցինք, գնացինք հրացանս
բերինք: Հրացանիս քարը շինեցի, պնդացրի, ասի՛ Ավա՛գ, էլի
պետք է գնամ: Թե՛ ա՛յ տղա, ձեռը վեր կալ, կրոնի կզգի: Ասի՛
հիմի սովորեցի, էնպիս շեմ անի, որ բռնի:

Թե՛ դու գիտես:

Հրացանս վեր կալա, քարը պնդացրի ու գնացի: Տանձի էլ
կաթոցի ժամանակն է: Գնացի մինչև ճաշ ման եկա, ոտնահան
եղա. գտա ոչ: Միտք արի՛ ախպեր, սա ուր կլինի քաշված, ախր
սա պետք է որ էս խոզի կողմերից հեռանա ու: Վեր կացա, ասի
ներքեմ մոշուտների վրա:

Մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհը՛, արջի հետքը առաջիս:
Հետքն ընկա գնացի. գնամ՝ տեսնեմ հրես մի բարդի կրծել է, կըր-
ծել ու թողել: Գլխի ընկա, որ սրանում մեղր կա: Վերև մտիկ
տամ, ճանճը արկանցից բանում է: Ասի՛ հիմի թե իրեն գտնեմ էլ
ոչ, էս հո որս է ու որս: Մի քիչ էլ գնացի, տեսնեմ առաջիս մի
մորմոնչաբուն է քանդել, բայց հողը դեռ թաց է: Տեսա որ մոտե-
ցել եմ: Էստեղ մի անտեր ահ ընկավ սիրտս: Հրացանի քարին
մտիկ տվի ու առաջ գնացի: Հենց սոս փոխեցի, մի թքմիթքմիթ

եկավ: Կանգնեցի... Բացատի գլխին մի լավ մեղրատանձի կա-
տեսնեմ՝ հրես տակին տանձ է ուտում: էս կռանը մի տանձ է կա-
թում, դեսն է վազում, մրթմրթալով ծամում ու ականջ դնում, էն
կռանը մի տանձ է կաթում, դենն է վազում: Մին էլ որ կանգնեց
տանձի կաթոցին ականջ դնելու, ծառի տակը մտա, հրացանն
երեսս կալա: Տեսնեմ հրացանի ծերը տըմբտըմբում է: Չէ՛, սիրտս
պնդացրի, մին էլ նշան դրի, հուպ տվի... Հրացանը որ տրաքեց,
սա մի գոռաց, պըտիտ եկավ, ու առ հա՛ կտասս, ընկավ ներքի ձո-
րը: Հրացանս մին էլ լցրի, մոտիկ թմբի գլուխը բարձրացա, տես-
նեմ սա ջրին է վազում. ասի՛ բաս սրա բանը խարաք է. վիրավո-
րը որ ջրին գնաց, ջուր խմեց-պրծավ, էլ ապրիլ չի:

Մին ասի՛ հտկիցը գնամ, մին էլ ասի՛ անեծք շար սատանին.
վիրավոր արջը գեշ է, կրունի, կփշացնի: էն է, ինչ նա դենը գնաց,
ես էլ ետ եկա, էլ գիտեմ ոչ ինչ եղավ:

Միայն էն օրերում ձորի վրա շատ ուրուր պըտիտ եկավ...

1899

ԳԱՐՈ ԲԻՉՈՒ ԾԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ես ու Գարո բիձեն անցնում էինք Լոռու ձորով:

— Հե՛յ, տիրացու,— ձայն տվավ նա:

— Համմե՛:

— Հրամանքդ շատ: Ես տեսնում եմ, որ էս մեր նոր ուսում
առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ
կասես:

— Ինչո՞ւ, Գարո բիձա:

— Ընդուր համար, որ հենց գիտեմ՝ ամեն բան իրենք են
հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են էլել, ոչ բան են
հասկացել: Մին էլ կտեսնես նստեցին ու գլխիդ գելի ավետարան
կարդացին — հա՛ էս ճանճ պահի՛ր, էս արբեշումի ճիճու պահի՛ր,
էսպես մածուն շինի՛ր, էսպես ցանի՛ր, էնպես հնձի՛ր... Տո՛, հեր
օրհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ էդ բաները դրանք էլ միտք են
արել թե չէ, նրանցից ետը՝ թեկուզ ուշունց տուր:

— 284 —

— Ետո մի՛տք եք արել որ, Գարո բիձա:

— Ախպեր, ա՛յ, ես հիմի օրինակի համար՝ մի՛նն ասեմ, դու
տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թե՛
չէ: Մի աշունք մեր Գավոն գնաց քաղաքը խոզ ծախելու: Մի ճա-
նանչ մարդ արբեշումի ճիճվի սերմ էր տվել թե՛ տարեք ձեր տեղը
բհամ բերեք: Ծամփա պահեցինք մինչև գարունքը բաց էլավ: Գա-
րունքը որ բաց էլավ, ոնց որ խրատ էր տվել՝ էս ճիճվի սերմը
բերինք մեր խիզանի ծոցում դրինք, որ տաքանան, դուրս գան:
Դուրս էկան ասեղի ծերի շափ մանր սև գաղեր — մի խոսքով մոնք
քեզ օրինակի — Գարո բիձեն այստեղ հանկարծ ձայն տվեց: — Տի-
րացո՛ւ:

— Համմե՛:

— էդ ձեր ուսումնականները թե գիտեն — արբեշումի ճիճուն
ի՞նչ կուտի:

— Թթան տերև:

— Ապրե՛ս, դրուստ ա: Գնացի ձորիցը մի շալակ թթան տերև
բերի, կապեցի մենձ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրեն ածի:
Ինչքան մարդ էկավ թամաշա, ոչ մնի տուն շթողինք՝ որ աշքով
չտան, ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս գալի: Ա՛յ տղա, էդ
անտեր ճիճունները մի քանի օր կացան ու կտորվեցին: Հիմի թե
ասենք նրանից էր, որ գոմշի ձագը շատ էր մոտ կապած, ոտնա-
տակ էր տալիս, թե նրանի՞ց էր, որ հավերը տուն էին թափում —
մե-մեն կուտ ուտում, դե ո՞նց անենք: Խո չէինք կարող հավերը
կտորել կամ ձագն սպանիլ: Թե ասենք անձրևիցն էր, որ երդի-
կովը ներս էր թափվում, մին էլ մարդ միտք ա անում, թե բա
քաղաքումն անձրև չի գալի... Մի խոսքով՝ բան գլուխ չեկավ:
Տեսանք, որ մեր երկրումը արբեշումի ճիճուն անում չի, բան չի
դառնում: Դե՛, զարմանալի ի՞նչ կա որ. էնպես երկիր կա՞ դուռ չի
ապրում, էնպես երկիր կա՞ ցորեն չի դուրս գալի. ամեն մի աշ-
խարք մի տեսակ բնություն ունի. ամա էս մեր նոր ուսումնա-
կանները էսքանն էլ չեն հասկանում:

1899

— 285 —

ԵՐԿՈՒ ԼԱՅՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախտականներ Սասունի կողմերից հասան էջմիածին: Նրանց մեջն էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը:

— Հայրիկի աչք կուզեմ համբուրել,— խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

— Բարո՛վ, տեր հայր,— աչք մեկնեց հայրիկը. քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հողնած, խորտակված:

— Որտեղի՞ց կուզաս:

— Սասունի կողմերեն. ես Ա.-ի տեր Սարգիսն եմ...

— Ա.-ի տեր Սարգի՞սը...

— Այո, Հայրիկ:

— Է՛...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կատրեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին. մնացի այսպես...

— Է հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... այնպես, եկել եմ... եկել եմ... Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում:

Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս,— գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրիկ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հաղար,— պատասխանեց Հայրիկը.— այդ էլ քսան՝ եղավ քսան հաղար ու քսան... Ո՛ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՛ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

— Հայրիկինը...

— Դե ե՛կ, տեր Սարգիս, մոտ ե՛կ, աչք գիր գլխիս, աղոթիր, օրհներ, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աչք դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով...
Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին...
Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը...

1907

ԱԼՄԱԳԸ

Ա.

Ես իմ մանկության գարունները անց եմ կացրել մեր սարե-րում:

Շատ էի սիրում իմ տատնեց տունը ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը՝ Ահմադը, հովիվ էր:

Նա ինձ տանում էր, ման էր ածում գառների մեջ, հետը հանդից հաղարճի կարմիր ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում էր սրինգը ու ածում:

Ու աստղալի, լուսնյակ գիշերները, ահագին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները: Իսկ ես թիթեռի նման թրթում, պար էի գալի նրանց շրջանի մեջ:

Ահմադը թուրքի անուն է, դրա համար էլ երբ մենք խողի միս էինք ուտում, միշտ տանեցիք հանաք էին անում, ծաղում, ծիծաղում էին Ահմադի վրա, թե՛ Ահմադը հայացավ, Ահմադը հայացավ...

Իհարկե, անունը լսողը կասեր թուրք է. բայց հենց ներս մտնել, տեսնել թե Ահմադը ինչպես է ժած գալի տանը, հերիք էր, իսկույն կիմանար, որ նա տան սիրելի տղան է:

Ում կամենում էր, տուն էր բերում, պատվում, ճամփու դնում: Աղքատը ողորմություն ուզեր թե հարևանը հացփոխ, իր ձեռքով տաշտից վերցնում էր, տալի: Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպես և մյուս քեռիներս: Անասունների համար հոգին տալիս էր: Մինը հիվանդանալիս

գրեթե ինքն էլ հետն էր հիվանդանում, էնքան էր սիրում: Ինքն էլ էնպես սիրելի էր ամենքին: Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր: Ու ամբողջ օրը տատա ու պապ: շորս կողմը պտտվում էին, ինչ որ լավ բան էին գտնում, շուրջն էին հավաքում, խնդրում էին, թե էլ ուրիշ ինչ կուզի սիրտը:

Ք

Մի առավոտ էլ վեր կացա, տեսնեմ՝ բոլոր տանեցիք տը-
խուր են:

Իմ տատը արտասովելով քթքթում էր, ման էր գալի անկյուն-
ներում ու ինքը շէր իմանում, թե ինչ էր անում: Հարսներն ու աղ-
ջըկերբը լուռ, տխուր ներսուղուրս էին անում: Վրանի դռան կող-
քին նստած խոսում էր իմ պապը, իսկ մի քիչ հեռու գլխակոր
նստած էին քեռիներս:

— Աստված լինի քո օգնականը, բալա ջան,— խոսում էր
պապս:— Չոր քարին դնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար:
Պակաս օրդ խնդությունով անց կենա... Դե, վեր կաց, օրն անց
է կենում, ճամփեղ երկար է: Վեր կաց, բալա ջան, աստված բա-
րի ճամփա տա, ոտդ ոչ դիպչի քարի...

Ահմադը շուխի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ, եկավ մո-
տեցավ իմ պապին: Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու աչ-
քերը լցվեցին արտասուքով:

— Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր աղ
ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մոր կաթնի պես: Մեզ մտիցդ
զցես ոչ: Թե աջողություն ունենաս՝ իմացրու, որ մենք էլ ուրախա-
նանք, թե պակասություն ունենաս՝ իմացրու, որ հարեհաս լինենք:
Դե, գնա, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա:

Ապա թե տատս գրկեց, համբուրեց Ահմադին, հետո մնա-
ցածները լաց լինելով ձեռն առան: Ապուշ կտրած փոքրերիս էլ
Ահմադը համբուրեց և մի երկու կով, հորթ, գոմեշ, ձագ, մի կտրը-
կան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, մի երկու շուն էլ ետը
զցած, ճանապարհ ընկավ: Մյուս քեռիներս ուղեկցում էին Ահ-
մադին:

— Աստված բարի ճամփա տա, Ահմադ ջան, գնաս բարով,
բալա ջան,— ձեռքը ճակատին դրած ետևից ձայն էր տալիս
պապս:

Գ

Ահմադը անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռիներս վերա-
դարձան: «Բայց ինչո՞ւ էին լաց լինում մեր տանը, քեռի Ահմադը
ո՞ւր գնաց», մտածում էի ես:

— Ահմադը ո՞ւր գնաց, նանի — հարցրի իմ տատին:

— Իրենց տունը գնաց,— պատասխանեց տատս:

— Իրենց տունը ո՞րն է...

— Ուրիշ տեղ է:

— Ահմադը ո՞վ էր որ...

— Ահմադը թուրք էր, մեր ծառան էր: է՛, քանի տարի մեր
փանն էր... Հիմի իր իրավունքն առավ ու գնա՛ց...

— Բա էլ չի՞ գալու:

— Չէ՛, բալա ջան, գնա՛ց...

1908

ԳՐԱԶԸ

1

Այնտեղ սարերն իրար են հանդիպել, իրենց արանքում մի
մեծ ձոր են ստեղծել, որ կոչվում է Մութը Չոր:

Մութը Չորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից: Նրա
մի կողմը թուրք սարվորն է իջնում, իր բինեն զարկում, մյուս
կողմը՝ հայեր:

Բայց նրանց իգիթները գիշերվա մթնով էլ անցնում են այն
խոր անդունդը, իրարից ոչխար են գողանում, ձի, կով կամ գո-
մեշ են քշում: Նրանց հովիվները հանդերում են հասնում ու փե-
տակոխվում են անում:

Մեկ էլ տեսար մի սարի ուսից տարածվեց մի զիւ, առաձ-
գական ձայն — «Հավար հե՛յ»: Այդ գուժավոր ձայնը ձգվելով՝
տարածվում է լեռներում, ու հանկարծ երկու կողմն էլ բինեբում
իրարով են անցնում:

Քուրք Ղափըշողին իր բինեն զարկել, ձվար էր արել Մութը Չորի մի կողմը: Այնտեղից խրոխտ ու սպառնալի նայում էր դիմացը վեր եկած հայերին: Նրա մարդիկը այդ սարերի ամենահոշակավոր գողերն էին: Գատաստանից փախածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավազակային խմբերը նրա հարկի տակ էին ապաստան գտնում:

Մի իրիկնադեմ վրանում թինկը տված նա զրույց էր անում իր սովորական հյուրերի հետ: Նրանք հայտնի ավազակներ էին, որ անցնում էին լեռներով:

— Էս դիմացի հայերին լա՛վ է տղերքը տակնուվրա շին անում,— իր զարմանքը հայտնեց հյուրերից մի քուրդ:

— Էղբան էլ խեղճ մի գիտենալ դրանց,— պատասխանեց տանտերը:

— Դրա՛նց...

— Հա՛, դրանց: Դրանց մեջ Չատի անունով մի շորան կա, իգիթ եմ ասում, որ մենակ էն մի տղի դեմը դուրս գա:

— Փա՛ հա՛,— բացականչեց վրդոված ավազակը ու շրջակալով վրա նստեց:

— Ի՛նչ կտաս գիշերս էնպես անեմ, որ առավոտն էլ ծուխ չբարձրանա դիմացը:

— Կապուտ ձին փեշքեշ:

— Չեռքդ տուր:

Նրանք ձեռք-ձեռքի խփեցին ու գրազ եկան:

Սարսափելի մութն են Մութը Չորի գիշերները:

Մի մթնագիշեր էր. անձրևն էլ անընդհատ տեղում էր միալար: Քնած էր հայերի բինեն: Երբեմն-երբեմն հովիվները այս կամ այն կողմից խուլ «հեյ-հեյ...» կանչելով, իմացնում էին, որ հսկում են դեռ:

Գիշերվա մի ժամանակը մի թմփթըմփոց անցավ վրանների մոտից: Շները վեր կացան, վրա տվին, ոչխարը խրտնեց, ձիաները փախան, տավարը ցրվեց: Հովիվները հավար կանչեցին, հրացանները բացվեցին, և այս բոլոր սարսափներն ու ձայները խառնվելով մութին, հեղեղին ու ամպի որոտմունքին, հորինեցին մի դժոխային գիշեր:

— Շունը տարա՛ն, բինեն պահեցեք, հե՛յ...— գոռաց ածդահա հովիվ Չատին:

— Շունը տարա՛ն...— Չայն տվին ամեն կողմից ու սև սարսափը կալավ բինին: Լեռներում ամեն մարդ լավ է հասկանում, թե ինչ կնշանակի՝ «շունը տարան»:

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում ընկնում են բինեն, ոչխար, ձի, տավար խրտնացնում, խառնում են իրար: Շներն ընկնում են նրանց ետևից: Նրանք էլ շներին հաշեցնելով տանում, հեռացնում են բինից: Այնուհետև խառնված, անշուն բինին ետևվից վրա են տալիս նրանց ընկերները և շփոթի ու խավարի մեջ քշում են անասունները:

Շուտով հետեկց երկրորդ հարձակումը, հարահրոցն ընկավ, հրացանները բացվեցին, ամեն բան մթնումը խառնվեց իրար ու իրար խառնված ընկավ դեպի ներքև:

Ակնակիր մթնում ոչինչ չէր երևում: Փայլակի լուսով վայրկենաբար բացվում էր ահուկի տեսարանը, բայց մարդու աչքերը որոշ բան չէին կարող նկատել այն թոհուրթոհի մեջ: Աչքերը չէին կարող նկատել, բայց հրացանների ձայները ցույց էին տալիս, թե որ կողմից են գնում, և հովիվների ազազակը, որ կանչում էին՝ «Տարա՛ն, տարա՛ն... Ալաբաշ հե՛յ...»:

Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին ու էլ ոչինչ չէր լսվում:

Անձրևը միալար շրջվում էր և ամպը խուլ ճայթում ու որոտում հեռու լեռներում:

Լուսադեմին տղերքը վերադարձան: Գեռ հեռվից լսվում էր նրանց ուրախ-ուրախ խոսոցն ու ծիծաղները թանձր մշուշի մեջ: Ապրանքն ական ու անվնաս ետ բերին հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Չատի վրանը, որ հաց ուտեն:

Նրանք իրենց հետ բերել էին մի քրդի քուղոզ, վահանն ու թուրը:

Իսկույն տարածվեց, թե տղերքը մի քուրդ են սպանել ու հետաքրքրված սարվորները եկան խոնվեցին վրանի ներսն ու դռների արանքում:

Չատնի մայրը սոված հովիվների համար կրակի վրա կերակուր էր շինում ու հետն էլ իրեն-իրեն դուռդուռում:

«Ա տղա, նա էլ մեր կուռենա՛...»

Ա տղա, հիմի նրա մերը ճամփա կպահի՛...»

Ա տղա, կասի, տղես ետ չեկավ...»

Ա տղա, ճամփա կպահի՛ ետ չի գնա՛...»

Գլուխներն օրորելով նրան ձայնակցում էին մի քանի ուրիշ կանայք: Այնինչ՝ հովիվները սարվորին պատմում էին, թե բանն ինչպես եղավ:

— Չորս կողմից հավաքեցինք, տարանք արինք մի ձոր: Էստեղ սրանց տեղը որ նեղացրինք, սրանք ապրանքը թող արին ու ամենքը մի կուռն վրա փախան: Մընին քշեցի, տարա քարափին դեմ արի: Որ քարափին դեմ էլավ, մին էլ տեսա ետ դառավ, թուրը հանեց, վրա քշեց թե՛ գլուխդ ազատի, միջիցդ կես եմ անում: Ոնց թե միջիցդ կես եմ անում — դադանակը պտտեցի, ուսախառը վեր բերի, ա՛հ հա կտաս...»

— Ա՛յ տո՛ւր,— բացականչեցին սարվորները:

— Շրջելավո՞ւմ փովեց,— վերջացրեց Չատին իր պատմությունը:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— քահ-քահ խնդացին սարվորները:

6

Այս դեպքից մի քանի շաբաթ անց էր կացել: Մի օր շները հաշեցին. դուրս եկան, տեսան մի պառավ քուրդ ձայն էր տալի բինի ներքեից:

— Ի՞նչ ես ուզում, ա՛ քիրվա:

— Չորան Չատնի վրանն եմ ուզում,— ասավ քուրդը:

Բերին շորան Չատնի վրանը: Չատին հաց դրեց հյուրի առաջ: Գեսից-դենից խոսեցին, մինչև հացը կերավ, պրծավ: Երբ որ հացը կերավ, պրծավ, Չատին հարցրեց.

— Խեղճե՛ք, ընչի՛ համար է եկել քիրվա:

— Էստեղ մի քանի շաբաթ առաջ մի քուրդ են սպանե՛լ.— խոսեց հյուրը:

— Սպանել են,— պատասխանեց հովիվը:

— Ասում են՝ դու ես սպանել:

— Դրուստ է:

— Ես նրա հայրն եմ,— ասավ ծերունին:— Եկել եմ, որ նրա արինը քեզ հալալ անեմ: Դու նրան ճամփին շես սպանել, իր ոչխարումը շես սպանել, իր տանը շես սպանել... Քանի անգամ ասի՛ ա՛յ որդի, ձեռը վեր կալ էդ հարամ ճամփից, հեռու կաց էդ ընկերներից, ուրիշները քեզ համար շեն աշխատել... Ինձ չլսեց: Երևի էդպես մահը մոտեցել էր,— ասավ քուրդը ու գլուխը քաշ արավ, լռեց:

— Հավատիդ հաստատ կենաս, որ արդարն ես խոսում,— շորս կողմից ձայն տվին սարվորներն ու իրենք էլ լռեցին:

— Արինը քեզ հալալ,— բացականչեց ծերունին,— միայն մայրը... գիտես էլի, մայր է... չի հանգստանում... Շորերն ինձ տվեք, տանեմ, շորերի վրա լաց ըլի, իր սիրտը հովացնի, իր կարոտն առնի:

Չատին բերեց, ծերունուն հանձնեց արյունոտ քուղոզը, վահանն ու թուրը, մի ոչխար էլ առաջն արավ ու շներն անցկացրեց, տարավ ճամփու գցեց:

— Դե մնաս բարով, զավակս,— հրաժեշտ տվավ ծերունի քուրդը:

— Գնաս բարով, քիրվա՛:

1908

ԵՂՋԵՐՈՒՆ

Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը: Գիշերներն էդ կիրճով եղջերուներն իջնում են ձորերն ու հովիտները, արածում են, արշալույսից առաջ ջուր են խմում ու էլ ետ իրենց «պնդոցն» են տալի:

Գնում էինք պիշիքը մնանք բուստանցի Օվակիմի դափումը, որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու:

Ես էի, որսկան Օսեփն էր ու մեր գյուղացի մի տղա, որ Օսեփի շալակտարն էր:

Մենք գնում էինք էն դաժան հրճվանքով, որով միայն որսի են գնում: Ծամփին որսոց էինք փոստում:

— Որսը բախտի պես բան է,— ասում էր Օսեփը:— Մի՞ն էլ տեսար նրանք էլավ ու քամի դառա՞վ կորա՞վ: Մենսովոր մարդը նրան հեշտ չի նկատիլ: կշիռթվի, կդողդողա, կփախցնի: Աչքդ առնելուն պես պետք է թվանքդ բացվի: թե չէ որ ուղեցիր նշան գնես, մինչև աչքդ չապես, նա սարն անց կացա՞վ:

— Հապա դուք ինչպե՞ս եք որսի ման գալի, ուստա Օսեփ:

— Կավ որսկանը մտն չի գալ, նա որսը կպահի,— պատմում էր որսկանը:— Գիտի, ո՞ր ժամանակին, ի՞նչ տեղ որսը ժած կգա՝ կգնա էն տեղը կպահի: Քե մտն էլ գա, քիչ, էն էլ էնպես ման կգա, որ որսն իր քամին շատնի, թե չէ որսն էնպես ստը հոտառութուն ունի, որ թե քու քամին (հոտը) նրա վրա էլավ — սրժար, որտեղ որ է հոտը առավ կորավ:

Էսպես խոսելով իրիկունը հասանք բուստանցի Օվակիմի դափին: Մերունի բուստանչին փետ էր հավաքել, կրակը փռուել ու կողքին թիկնը տվել:

— Բարի ըրգուն, Օվակիմ բիձա:

— Այ աստծու բարին ձեզ, դուք բարով եկաք, ա՛յ տղա, էք ինչ լավ ղոնախներ եք: Ես հենց մենակ միտք էի տեսում, թե մի գրիցընկեր ըլի... էս հենց աստո՞ժ հասցրեց ձեզ... — ուրախացած զոռզոռում էր Օվակիմ բիձան:

— Դու էն ասա՛ որս ա ժած գալի թե չէ, Օվակիմ բիձա,— անհամբեր հարց տվավ որսկանը:

— Այ տղա, մի անտեր պախրի բուղա կա, Օսեփ ջան, դիշերները գալիս ա լորին ուտում ու գնում: էնքան լորիս փուշ արավ: Թվանք շունեմ, շուն շունեմ... Պախրա մի՛ ասիլ—մի սար ասա: Չարդախ ունի (պողեր), ոնց որ մի կաղնի:

— էդ մինը ոչինչ: բա իսկի բուղազոռոցի ձեն չի գալի՛:

— Այ տղա, էլ ասում ես, ինչ անես, քնահարամ են արել: Երեկ գիշեր էս վերի մատնեբումը հենց գոռում էին, որ գետինը որտում էր:

— Հա՛յ հող ու ջրի աստո՞ժ հա՛,— աղաղակեց որսկանը:

Օվակիմ բիձան մեզ հրավիրեց, տակնեքս խոտ ածավ, ինքն էլ կրկին թիկնը տվավ իր տեղը:

— Տղերք, ես որ խորը միտք եմ անում, տեսնում եմ, որ աշխարհի երեսին մարդիցն էլ վերը անիրավ շնչափոր չկա:

— Ինչի՞, Օվակիմ բիձա:

— Ինչին էլ որի՞ն ես ասում. տեսնում ես՝ դուք թվանքներդ առել եք եսններիցն ընկել, մենք էլ ուրախացել ենք, թե ինչ ա — մի պախրա կապանեք, կուտենք: Ախր չէ՞ որ նա էլ մեզ նման շունչ կենդանի ա, հրեն կես գիշերին էրվելով գոռում ա, ձեն ա տալի, իր կովին կանչում: չէ՛ էն էլ նրա սերն ու մուրազն ա...

— Թե ձենը դուրս կգա՛, ես նրա սերն ու մուրազը նշանց կտամ,— ծիծաղելով բացականչեց որսկան Օսեփը:

— Չէ՛, շատ մեղք բան ա, շա՛տ,— գուլիք շարժելով կրկնեց բուստանչին ու ձենը ավելի բարձրացնելով, կանչեց:

— Տղերք, էս ա որ պախրիցը խոսք ընկավ, ես ձեզ մէ բան պատմեմ:

— Պատմի, Օվակիմ բիձա:

— Մի տարի սաբումն էի: էկան, խաբար բերին, թե բա թող հիվանդացել ա, քեզ ուզում ա, արի: Սաբիցը վեր կացա, հիմի տուն եմ գալի: Ծամփին ձովեցի, ասի կարելի ա որսից, բանից պատահի: Ման եկա, ման, մի տեղ տեսնեմ բրնուտումը մի բան խշխշացնում ա, թփերը ժած ա տալի: Ախպեր, էս թե մոշահավ ա, մոշահավի բան չի, թե անասուն ա, ի՞նչի չի երևում: Մի քար պցեցի թփուտը: մին էլ տեսնեմ մի պախրի ճուտի ականչներ ցրցվեցին, էլ ետ ցածացան, ու սկսեց թփերը ժած տալ, ճամփա բաց անել, որ փախչի: Թվանքն երեսս կալա հենց թփերի էն ժած էկող տեղը: Թվանքը որ տրաքեց, սա վեր թռավ, դուրս ընկավ ու ետ գետնովը դիպավ: Տղերք, հիմի մի ձեն ա ածում, մի տնքում ա, ոնց որ մեռնող էրեխա: Ուստա որսկաններից լսել էի, ասի՛ էս ա սրա մերը ինձ տեսել ա, էստեղից փախել, որտեղից որ է հիմի ետ կգա: Մտա մի ծառի տակ ճամփա պահեցի: Շատ մնացի թե քիչ, մին էլ տեսնեմ հրես էկավ, բայց ոնց էկավ, ես տեսա, դուք ոչ տեսնեք — մի խոսքով մոր հման, Թվանքի ձենը իր էրեխի վրա լսած մոր հման: էկավ տեսավ իր ճուտը հրես անշունչ, արնափուլ մի ծառի տակ փուխած: Տղերք, դուքը մեկնել ա, ոնց ա տխուր մզպացնում, ոնց ա վերքը լիզում... Թվանքը վեր կալա, էստեղից բաշվեցի, էկա տուն: էկա տուն. էկա տեսա էրեխին դժար ա, հո-

գու հետ կռիվսն ա տալի; տնքում ա: Տղերք, էն օրը չի, էն օրվա աստոծն ա. էնպես էն պախրի ճուտի նման ա տնքում, որ աչքս խուփ եմ անում, հենց իմանում եմ դեռ էն թփի կողքին եմ կանգնած: Վերջապես, էրեխեն մեռավ. հիմի մերը ընկել ա վրեն—բառանչում ա... Ասում եմ, փառքդ շատ ըլի աստոծ, ի՞նչ ա մեր ու էն սարի պախրի զանազանությունը — ոչինչ... ամենի սիրտն էլ սիրտ ա, ամենի ցավն էլ — ցավ...

Օվակիմ բիձու տխուր պատմության տպավորության տակ միառժամանակ լուռ էինք:

— Օվակիմ բիձա, չէ որ ասում են պախրեն էլ տեր ունի,— խոսեց շալակտար Ազգարը:

— Ունի բաս, պախրեն մեծ տեր ունի:

— Ծանա էդ դրո՞ւստ բան ա:

— Դրուստ ա, բաս: Որսկան Փիրումն ինքը գլուխ որսկան էր ու նրա գնդակը իր օրումը գետին չէր ընկած: Մի անգամ մի պախրա ա վիրավորում: Պախրեն փախչում ա, սա ընկնում ա ետեկցը: Քշում ա տանում հասցնում Զորավոր կաղնըքու տակը: Էստեղ, Զորավոր կաղնըքու տակին պախրեն չոքում ա. պախրեն չոքում ա — որսկան Փիրումը թվանքն երեսն ա կալնում: Հենց էս տժժան ըոպեին Զորավոր կաղնըքուց մի դուռն ա բացվում, մի սիրուն հարսն ա դուրս գալի. էս սիրուն հարսը դուրս ա գալի՝ որսկանի դեմը ծղրտում.

— Ի՞նչ ես հալածում իմ անմեղին, անիրավ մարդ, ի՞նչ ա արել քեզ: Ազա՛հ, ոչ կշտանաս դու, որ շես կշտանում լիքն աշխարհքում: Թվանքդ արնով լցվի, գնդակդ խմոր դառնա, շորանա էդ թվանքը բռնող կուռը...

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ էր — գլխի ա ընկնում, սր էս որսի տերն ա, ձեռաց թվանքը գցում ա մի ծառի ճյուղքի, անիծելուն պես ծառի ճյուղքը տեղն ու տեղը շորանում ա:

— Օվակիմ բիձա, ուրեմն էդ ա, որ ասում են որսկանությունը անիծած ա:

— Անիծած ա, բաս, մին որսկանությունը, մին էլ ձկնորսությունը, երկուսն էլ անիծած են: Հնուց դրած նզովք ա, որ որսկանի ու ձկնորսի փորը կշտանա ոչ: Որսկանի վրա Քյարամն էլ նզովք դրեց: Երբ էրվելով իր Ասլու ետեկից ման էր գալի՝ մի վիրավորված պախրա տեսավ: Տեսավ՝ անասունը մղկտալով շունչը

տալիս ա, հորթն էլ մոլորած մնացել ա կողքին կանգնած, Էս տեղ սազն առավ ու մի խաղ ասավ:

Մենք խնդրեցինք Օվակիմ բիձուն, որ էդ խաղն ասի մեզ համար, ու ծեր բոստանչին իր պառավ ձենով, խարույկի առաջ երգում էր մութը ձորում.

Հե՛յ պարոններ, տեսա կանանչ գարունքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա.
Սիրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Գրնդակն առած զընում էր փուշ աշխարհքից,
Գանգատվելով մարդու անգութ արարքից,
Արյուն տալով, մղկտալով իր վերքից
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Աստված սիրող՝ որսին թըվանք շքոնի,
Երկինք սիրող՝ որսի միսը թող շառնի.
Դարդոտ Քյարամ տեսավ ծովում արյունի՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:



Ամենքը քնեցին. ես մնացի զարթուն: Գիշերն էս տեսակ տնդերում անսովոր մարդը չի կարողանում քնել, հազար ու մի ձեն է լսում, հազար ու մի բան է երևակայում:

էն անշուշտ գիշերվա հովն էր, որ շարժում էր սիմինդրները, բայց ինձ թվում էր, թե Օվակիմ բիձու ասած պախրեն էր բոստանը մտել: Գիշերվա մթության մեջ հեռվում սև կերպարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին:

Ու անքուն էի ես:

Գիշերվա մի ժամին դուրս եկա դափի դուռը: Պարզ աշնանային գիշեր էր: Զոր ցուրտը սեղմում էր: Զորերը խուլ թշուղում էին: Նրանք էլ ասես քնել էին, Օվակիմ բիձու նման փշաջնում էին խոր ու հանգիստ:

Բայց Քարվանդան աստղը արդեն դուրս էր եկել. մեր ճամփա ընկնելու ժամանակն էր: Ես վեր կացրի իմ ընկերներին: Նրանք շտապով հագան իրենց տրեխները ու վեր կացանք գեպի Ծղնուտի կիրճը...



Արշալուպսից առաջ մենք դարան էինք մտած Եղնուտի կիր-
ճում: Ես իմ դիրքից պահում էի առաջիս ընկած բացատը: Դի-
մացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութն անտառը:

Հետզհետե գիշերովա խավարն սկսեց նստրանալ: Ժայռերը
խոժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղշամուղշի միջից: Երկինքն
սկսեց գունատվել ու պարզվել: Ապա երևաց Եղջերուն — լուսաստ-
ղը: Վեր կացավ վաղորդյան գեփյուռը: Մաղիկները շարժեցին
իրենց գլխիկները, խոտերը զոզողոզացին, տերևները շրջացին: Ան-
տառն սկսեց զարթնել: Մոտակա թփից մի ծիտ ճկաց, մի ուրիշը՝
մյուս թփից, մեկն էլ հեռվից...

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստոցից ու զմայլած
դիտում էի շուրջս — բնությանը, էն սրբազան ժամին, երբ ծա-
զում է առաջին լույսը:

Հանկարծ մի ձայն... չորացած ճյուղ կոտրվեց մոտիկ անտա-
ռում: Նայում եմ էն կողմը: Անտառը տակավին մութն է: Աչքս չի
որոշում, թե ինչ կա էնտեղ, միայն պարզ լսում եմ զգուշ ռոտնա-
ձայնը, որ խաշամը կոխելով առաջ է գալի — խը՛շտ, խը՛շտ,
խը՛շտ... Բան չի երևում, բայց դարձյալ խը՛շտ, խը՛շտ, խի՛շտ,
ժոռոնում է աղվելի ու ափելի... Եվ, ահա, դուրս եկավ...

Ես առաջին անգամն էի տեսնում եղջերուն ազատ բնության
մեջ: Նա դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ, վեհ ու չքնաղ,
ինչպես բնության էն ամեն գեղեցկությունների տերն ու թագա-
վորը: Կիսովին, դեռ անտառի մթության մեջ կանգնեց, թուխ գուն-
չը դրավ գետնին, ապա թե գլուխը բարձրացրեց, վայրենի շնորհ-
քով ոլորեց երկայն վիզը ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում:

Ես շփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրացանս... Շարժ-
վեցի թե չէ, ես շտապով ետ թեքեց իր կարապի վիզը: Վիզը ետ
թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի հրացա-
նը: Հրացանի ձայնից անտառը որոտաց ու սկսեց ճռճալ: Էն
եղջերուն էր փախչում:

— Հա՛յ բո տունը չքանդվի,— ինձ հանդիմանելով դուրս
թռավ որսկանն ու վազեց դեպի մոտիկ բլուրը, տեսնի ո՛ր կող-
մից կերևա փախած որսը: Առավոտը բացվում էր, և էնքան լուս

էր, որ կարողացանք կանաչ խոտերի վրա գտնել թարմ արյան
հետքը:

Վիրավորված էր եղջերուն: Արյան հետքը բռնեցինք ու գնա-
ցինք որոնելու:

— Էսքան որ արյուն է տվել, ինչքան ուզում է գնա՝ մերն
է,— հայտնեց որսկան Օսեփը:



Իրիկնապահին նրան գտանք մի խոր առատում: Նա ընկած
տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա: Ես տեսա՝ ինչպես շէր
կարողանում գլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր
մեզ իր պղտոր, շըշկված, անորոշ հայացքով: Հանկարծ կարծես
գլխի ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց ու
կրկին ճզփալով ընկավ իր արյան մեջ մի ծանր, անզոր թառան-
չով:

Որսկանը վրա վազեց... Ես ուզեցի մի բան ասեմ, ամաչեցի...
Նա բռնեց եղջերուի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը... Ես կրկին
ուզեցի մեջ մտնեմ... գարծյալ սիրտ շարի... Ծվ ահա դաշույնը
փայլատակեց:

Ես երեսս շրջեցի, իբրև թե սարերին եմ նայում: Ետևից մի
խուլ տնքոց լսեցի... ու, չգիտեմ ինչու, սկսեցի մտածել կյանքի
ու մահվան մասին, և էնպե՛ս սոգեղ էր թվում ինձ կյանքը...

1909

ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱՂՆԻՍԸ

Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել, տանջվում էր տա-
քության մեջ: Հարևանները հիվանդի շուրջը հավաքված օգնե լի-
թը զբույց էին անում, շիրուխ քաշում:

— Տղե՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի դառնալ, էկեք սրան մի
քարաբաղնիս անենք,— ծխի միջից առաջաբեկեց նեոտ քիճեն:

— Հա, էգ խեղճս կտրեց,— հավանաբյուն տվեց մի աղիշը:

- Գրան էլ ուրիշ ճար չկա,— ձեն տվին էս ու էն կողմից:
- Կիրակո՞ս...
- Հը՞:
- Ասում ենք քարաբաղնիս անենք, ի՞նչ ես ասում:
- Վախենում եմ... չգիմանամ...
- Տո՞, կգիմանաս, էրեխա հո չե՞ս:
- Դե... դուք գիտեք... ձեզ... մատաղ:
- Ա՛ղջի, պղինձը ջուր լցրեք բերեք, մի փեշ էլ քար բերեք կրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նստոտեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի են ազատվել քարաբաղնիսով. Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Մատուրանց Ստեփանը, Մաշկավորանց Միկոն — մինչև որ ջուրն եփ էկավ, քարերն էլ կարմրեցին:

- Դե ժամանակն ա, վե՛ր կացեք:
 - Տղե՛ք, վախում եմ... — կանչեց հիվանդը:
 - Դու սո՛ւս կաց: Աղջի, մի երկու հաստ լեհեք բերեք, մի շորս ու հինգ ուժով տղեք էլ էկեք էստեղ:
- Շորերով փաթաթած եռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թըշաշացին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու շորս կողմից վրեն պինդ նստոտեցին:
- Վա՛յ, խեղդվեցի՛,— խուլ գոռում էր հիվանդը:
 - Խեղդվիլ չես... տղեք, պինդ նստեցեք: Գլուխն ու ոտները ամուր պահեցեք:

Հիվանդը աղաղակում էր, օրհասական ջանքեր էր անում շարժվելու, բայց հինգ-վեց ածղահա տղամարդ վրեն նստած շէին թողնում:

- Ո՞ւր ես գնում,— կանչում էին էս ու էն կողմից, վերևից սեղմում ու հռհռում:
- Հիմի թե չքրտնի՛:
- Ու նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, շիբուխը բերանին շարունակում էր իր պատմությունը:
- Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին շալ շինեցին խմացրին, պրաշոկ բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի՛ տղերք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՛ դե

դու դիտես: Բերի մի թեժ կրակ արի, Գարան տատի պռահող կոտրած պղինձը ջուր լցրի վրեն դրի, քար հավաքեցի ածի շեղջը: Զուրն եփ եկավ, քարը կարմրեց: Սա թե՛ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օքսին ա:

— Ադա, ընչի՛ ես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա:

— Վա՛յ է՛, նրա սրտոտը որն ա: Մի աշունք ես մի արջի բուն գտա: էկա ասի՛ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք արջին բնիցը հանենք: Գնացինք: Ծս մի ձող վեր կալա էս արջի բունը խըրխըթորեցի: Մին էլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկավ ու ինձ կալավ: Աբգար, քոմագ հա քոմագ: Ո՞վ կտա Աբգար — մին էլ տեսնեմ հրեն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծա էկա տուն: Ասում եմ, ադա, դու էս ի՞նչ արիր: Թե՛ էկա տուն, որ թվանք բերեմ: Սուտ: Վախիցը փախավ:

— էն էի ասում — հիմի սա կանգնել ա, թե նեսո ջան, վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չի դրինք, բերինք կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես բուղը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը. — վա՛յ, մեռա հա, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստոտեցինք: Ծս եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արուսն ա: Հիմի սա տակից գոռում ա, ո՞նց ա գոռում... էնքան գոռաց, մինչև դինջացավ: Բաց արինք, տեսանք, ջուր ա կտրել: էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ, առողջ մարդ:

Նեսո բիձու պատմությունը որ վերջացավ, վեր կացան վերմակները ետ քաշեցին: Գոլորշին օդեն բռնեց: Բայց Կիրակոսը...

- Կի՛րակոս:
- Ժած չի գալի:
- Կի՛րակոս...
- Պատասխան չի տալի:
- Կիրակո՞ս. — ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին: Կիրակոս չկա:
- Ա՛յ տղա, էս ո՞նց էլավ,— մոլորված արտասանեց նեսոն: Մյուսները լուռ էին:

— Վա՛յ, տունս քանդվե՛ց... — Սղրտաց Կիրակոսի կինը: Իրար հրհրելով տղեքը դուրս էկան կտուրը: Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուզ էր անում, կտերը արևում նստոտած տղեքը պատմում էին, թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիսից.

Համբարտանց Հարսնը, Մեջիբանց Վանեհուր, Հախավերդոնց Աղեն, Շի-
մալանց Շամիրը... ո՞ր միսն ասես:

— Տո՛ դե հակատի գիր ա էլի, հո նրանց էլ նեսոն չի խեղ-
դել:

Նեսոն լուռ, գլուխը կախ արած լսում էր ու չիբուխ էր քաշում:

1910

ՔԵՌԻ ԽԵՉԱՆԸ

— Բարի լիս ձեզ:

— Ա՛, բա՛րով, բա՛րով, քեռի տեղան: Աղջի, շայ բերեք, հաց բերեք, արաղ բերեք քեռի տեղանի համար: է՛, խեր ըլի, քեռի տեղան, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, որ դու քաղաք ես եկել:

— Ինչ պետք է պատահի. ձեր կարոտն էինք քաշում: Ասի՛ մեռնիլ կա, ապրիլ կա, մի գնանք տեսնենք:

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, քեռի տեղան:

Քեռի տեղանը դեսից-դեհից խոսելով թեյ խմեց, հաց կերավ, վերջը լոնց ու սկսեց չիբուխ քաշել:

Մին էլ չիբուխը բերնից հանեց թե՛

— Բա էս ո՞նց պրտի ըլի:

— Ի՞նչը, քեռի տեղան:

— էս, որ էրեխին սաղաթ են տանում:

— Չգիտեմ... ես ի՞նչ կարող եմ անել...

— էլ ինչը ո՞րն ա, հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:

— Դե ասա, ինչ որ կարող եմ անել,— պատրաստ եմ:

— Ասում եմ՝ գնանք մի մետրիկեն հանենք, տեսնենք ինչ ենք անում:

— Լա՛վ, հաճեցեք գնանք:

Գնացինք կոնսիստոր:

Դիվանապահին խնդրեցի՝ քեռի տեղանի ցույց տված թվա-
կանի մետրիկական մատյանները հանեց, ման եկանք, բոբորե-
ցինք, քեռի տեղանի տղեն չկա:

— էդ ոնց ա, ախպիր:

— Դե չկա էլի, քեռի տեղան:

— Հլա մի քանի տարի էլ ցած մտիկ արեք, կարելի՛ ա սը-
խալվել ենք:

Նոր մատյաններ բերինք, ման եկանք, նրանց մեջ էլ չկա:

— Մենք սխալվել ենք... անպատճառ սխալվել ենք էլի,—
կրկին խոսեց քեռի տեղանը:— էրեխեն իմ հաշվով մեծ պետք է ըլի:
Մթամ պետք է ասեի բարձր մտիկ արեք, ցած եմ ասել:

— Լավ, քեռի տեղան, բարձր էլ մտիկ կանենք:

Նոր մատյաններ բերինք, նորից ման եկանք: Գարձյալ չկա:

— Չկա, քահանեն գքել չի:

— Բա էս ո՞նց պրտի ըլի:

— Դե որ չկա՝ ի՞նչ անենք... Գնանք, քեռի տեղան:

— Գնալով ո՞նց կըլի... հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:

— Դե ինչ անենք, որ չկա:

Դուրս եկանք: Մի հիսուն քայլ գնացինք, քեռի տեղանը
կանգնեց:

— Կա՛ց հլա:

— Ի՞նչ կա, քեռի տեղան:

— Մըթամ էս ո՛ւր եկանք, ուր ենք գնում:

— Մեր տունն ենք գնում, էլի:

— Շտո էդ էլավ որ...

— Բա ի՞նչ անենք:

— Ախր էնտեղից էստեղ քու անունը տվել եմ եկել, հիմի որ
գնամ՝ ի՞նչ խաբար տանեմ:

— Դե ի՞նչ անեմ, քեռի տեղան, մատյաններն էն էին, էնքան
տարի տեսանք, տակնուվրա արինք — չկա:

— Ո՞նց թե չկա, էն ոնց ա ամենի տղեն էլ կա, հենց իմը
չկա...

— Դե որ էդպես է, ի՞նչ անենք:

Քեռի տեղանը մինչև տուն բան չխոսեց:

— Հը՛, ինչ արիք,— հարցրեց կինս:

— Դեո հալա տեսնենք,— պատասխանեց քեռի տեղանը:

— էլ ի՞նչ տեսնենք, մատյանումը գրած չէ, վերջացավ գը-
նաց,— մեջ մտա ես:

Քեռի տեղանը տնքաց:

— Վերջացավ, վերջացավ, ես էլ ինչ ճամփով եկել եմ, էն

ճամփովն էլ ետ կերթամ մեր տունը, — վճռեց ու վշտացած նրա տեղ, սկսեց շիրխին զոռ տալ:

Ճաշի ժամանակն եկավ: Լուռ նստած ճաշում էինք. հանկարծ քեռի խեղանք ճաշն ընդհատեց ու ինձ դիմեց.

— Բաս ես որ հիմի գնամ՝ քեռեկնկանդ ի՞նչ ասեմ:

— Ընչի՞ համար:

— Էս մետրիկականի:

— Վա՛հ, չկա, չկա, քեռի խեղան. տերտերը գրել չի, չկա:

— Է՛, դե ասում ես, է՛լի:

— Ի՞նչպես թե ասում ես, էլի. քեզ ասում են — չկա:

Քեռի խեղանը դարձյալ տնքաց ու շիրուխը սարքեց:

Ճաշից հետո մտա իմ առանձնասենյակը, որ հանգստանամ:

Մտածում էի, թե ինչ տեսակ մարդիկ են մեր գյուղացիք...

Մին էլ տեսնեմ ներս մտավ քեռի խեղանը:

— Քնո՞ւմ ես:

— Հա՛:

— Բա էս քնելու ժամանակ ա՞:

— Բա՞ ինչ անեմ, քեռի խեղան:

— Ախր ես եկա էստեղ մնացի, բա ի՞նչ ես անում:

— Ի՞նչ անեմ, քեռի խեղան:

— Էս մետրիկի համար բա ի՞նչ ես ասում:

— Վա՛հ, զարմանալի մարդ ես, ա՛յ մարդ, քեզ հայերեն ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի խեղան:

— Դե լավ, լավ, էլ ինչ ես նեղանում, չկա, ես էլ կգնամ մեր տունը: Մնաք բարով, — ու քրթմնջալով դուրս գնաց:

— Գնաս բարով. դե ինչ անեմ, որ չկա:

Վեր կացա, տեսնեմ քեռի խեղանը պատշգամբում նստած շիրուխ է քաշում: Գլխարկս վերցրի, որ տանիցը դուրս գամ:

— Էդ ո՞ւր ես գնում, — ետևիցս կանչեց քեռի խեղանը, — բա ի՞նչ ես ասում...

— Բան չեմ ասում:

— Գնո՞ւմ ես...

— Հա՛:

— Էլ մետրիկեն չես տեսնի՞լ...

— Չէ՛, չեմ կարող:

Էս պատմությունից հետո քեռի խեղանը գնացել էր գյուղումը

պատմել, թե իր տեղը նեղ էր, եկել էր քաղաք՝ ինձ խնդրել, որ օգնեմ, իսկ ես ասել էի՝ չեմ կարող, ու ոչ նրա խոսքին էին ականջ դրել, ոչ երեսին էին մտիկ արել:

1910

ԾՂՐԻԳԸ

Ճրոռ՝... ճրոռ՝... ճը՛ւճը՛ն, ճրոռ՝...

Լսե՛լ եք էն թախծալի ճրոռոցը, որ ծաղկի բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված հոսում է գարնան դաշտերի երեսով:

Իհարկե լսել եք, և ինչքա՛ն եք լսել: Դեռ ով գիտի, գուցե էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ էլ պտուկած խորասուզվել եք շինջ, կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթե երազների մեջ, իսկ շորս կողմերդ ծավալվում է համատարած՝ ճը՛ւճը՛ն... ճը՛ւճը՛ն...

Հանդի կամ դաշտի ծղրիդն է իր անթիվ ու անհամար ընկերներով:

Կամ գուցե հիշում եք էն մելամաղձոտ ճրոռոցը, որ ամառվան իրիկունները մեռնակ ու միալար հնչում է գյուղական խաղաղ տան մի որևէ անկյունից: Եվ ի՞նչ դյուրեկան թախիժ է բերում մարդու հոգուն, ի՞նչ խաղաղություն, ու մանկության օրերից, մանկության իրիկուններից, նրանցից էլ կարծես թե դենը՝ հեռավոր ու անորոշ հիշողություններ:

Էս էլ տան ծղրիդն է: Ապրում է տաք անկյուններում, սովորաբար բուխարու կողքին կամ վառարանի ետևը, մի որևէ փոքրիկ ճեղքում: Գիշերները իր թաքստից դուրս է գալիս, հացի, պանրի և ուրիշ ուտելիքների փշրանքներ է որոնում, նրանով ապրում ու երգում ամբողջ տարին: Նրա տան մեջ լինելն ու երգելը մեր տատերը բախտի նշան էին համարում:

Ճշմարիտ որ, բախտ է էս տեսակ երգիչ ունենալ տանը:

Հին հույները ծղրիդներին բռնոտում, ածում էին փոքրիկ վանդակներն ու կախում իրենց լուսամուտների շրջանակներին, որ երգեն:

Եվ, օրական մի թերթ սալաթ ստանալով, գերության հետ հեշտ հաշտվում են ժողովրդներն ու երգում, ու ափսիս էլ շատ են ապրում, քան ազատ ժամանակը, երբ ենթակա են հազար ու մի փորձանքի:

Մի մեծ միջատագետ, որ և մեծ բանաստեղծ է միաժամանակ, ասում է՝ ես ծղրիդին հաճույքով կզնեի գարնան վերածրնության երգիչների գլուխը:

Եվ սրանով՝ միջատ սոխակը քիչ է մնում խլի թռչուն սոխակի փառքը:

Բայց դուք գուցե էս էլ եք փորձել: Ուզել եք գտնել, տեսնել մեր փոքրիկ ու նշանավոր երգչին ու չեք կարողացել: Առաջիկ երգում է, ձեռք վրա գնում ես, մին էլ տեսնում ես կտրեց ու սկսեց հեռվից: Էն կողմն ես գնում, հանկարծ լսում ես, որ աչից է երգում, ձախից, ետևից...

Ջաբմանում ես, շշկում ես: Ո՞րտեղ է վերջապես:

Ինչ ուզում ես՝ արա, ձենով շեռ գտնիլ նրան, շարունակ էսպես խաբար կտա:

Թայց ինչո՞ւմն է հնարքը, ո՞նց է անում, որ էսպես խաբան է տալիս:

Շատ հասարակ ու սրբազ բան:

Նրկու դողդոջուն, սպիտակ, բարակ, շոր ու թափանցիկ արտաքին թևեր ունի, որոնց եզերքները իջնում են ցած: Սրանց աչք միշտ գալիս է ձախի վրա, ու արմատում տակից մի կոշտ ունի: Էդ կոշտից հինգ փայլուն ամուր երակներ են ձգվում, երկուսը վերև, երկուսը ներքև, իսկ հինգերորդը, որ շեղավուն է և փշփշոտ՝ մեջտեղով:

Հենց սա է էն գործիքը, որ թևին քսելով ձեն է հանում ու նվազում ծղրիդը: Կընտրնտոցի (СМЫЧОК) պաշտոն է կատարում:

Ներքեի ձախ արտաքին թևն էլ նույն կազմն ունի, միայն թե սրա կընտրնտոցն ու մյուս երակները վերևի կողմիցն են: Էնպես որ վերևի ու ներքեի արտաքին թևերի երակները խաչաձև գալիս են իրար վրա:

Կընտրնտոցներն իրար քսելիս, նայած թե որ երակին կամ թևի ինչ տեղին է քսում — նրա համեմատ էլ ձենը փոխում է:

Սրա հետ միասին, եթե նվաղելիս թևերը բարձրացնում է — ձենը տգատ ու լիահնչյուն է տարածվում, իսկ եթե թևերն իջեցնում է, կպցնում է մարմնին, թևի ձենը խլանում է, էնպես, ինչ-

պես եթե մատդ սեղմես յոթնորդ ամանին — ձենը խլանա: Եվ նայած, թե որ կողմից ու ինչպես է թևը սեղմում, նրա համեմատ էլ մին թույլ է գալիս ճրոտոցի ձենը, մին ուժեղ, մին զվարթ, մին ճնշված, մին էս կողմից, մին էն:

Դրա համար էլ ձենը լսում եք, բայց չեք կարողանում նրան գտնել:

Նրան գտնելու համար պիտի գտնեք նրա բունը: Դրեթե միշտ իր բնույթն է կամ բնի առաջը, ու չի հեռանում:

Ահա, տեան՝ք, բնից գուրս հանած նրա սև գլուխը, դեսուգեն է շարժում երկար շոշափուկները, որ մենք բխեք հեք ասում: Իմացավ՝ մոտենում ենք — շտապով ետ-ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց: Էլ դուրս չի գալ: Բայց ես գիտեմ նրան դուրս բերելու ձևը: Էսպես դեպքերում, երեխա ժամանակ, չոփ էինք առնում, կոխում ծղրիդի՝ մատնաշափ երկարություն ունեցող՝ բունը, խառնում ու ետ հանում: Էլ չէինք իմանում, զարմացած թե զարհուրած, ծղրիդը շշկված գուրս էր գալիս ու դես-դեն ընկնում: Իսկ եթե նորից ներս էր մտնում, կամ իսկի դուրս չէր գալիս, ավելի հիմնավոր բան գիտեինք — շուր էինք լցնում նրա փոքրիկ բունը, կամ տունը: Էս անգամ արգեն ուզեր-չուզեր մեր երգիչը դուրս էր գալիս արևի տակ:

Տունը շրով լցվեց:

Տուն որ ասում եմ — հանաք չիմանաք: Ես չեմ եզիլ նրա տանը, բայց հայտնի միջատագետների ասելով, ծղրիդի տունը թե մաքրության, թե գեղեցկության և թե առողջապահության կողմից ավելի լավն է ու հարմար, քան մարդկանցից շատ շատերի տները:

Տեղն ընտրում է արեգունի ու ջրփախ մի կանաչ տեղ. արեվոտ, առողջ ու դիրքը գեղեցիկ: Բնի մուտքի վրա սովորաբար կախված է լինում մի փունջ խոտ կամ ծաղիկ, որ համ դուռը ծածկի շար աչքերից, համ հովանի լինի շոգի դեմ: Մուտքի առաջ փոքրիկ ավյած բակը:

Ինչպես մուտքը, էնպես էլ ներսը — սենյակը, պարզ, մաքուր ու չոր, Իսկ ներսի սենյակի պատերը կոկ ու հղկած, դեռ սենյակում էլ պահարան: Ու միշտ էլ քանի կենդանի է ու ապրում է իր բնում, աշխատում է ավելի ու ավելի գեղեցկացնի, կատարելագործի: Եվ իր ցեղակից — ուղղաթևների մեջ մենակ ինքն է, որ էսպես բուն է շինում իր համար, նստակյաց կյանքի, մշտական

քնակութեան համար: Համ բակ, համ նախասենյակ, համ սենյակ, համ պահարան:

Ասացեք խնդրեմ, ի՞նչով է տանից պակաս: Ինքն էլ համ հիանալի նվագում է, համ էսպես տուն է շինում: Ինչո՞վ է մարդուց պակաս: Գլխին էլ որ լավ մտիկ անեք, պատավ մարդի գլխի նման է: Երևի էդ շնորհքի ու էդ գլխի պատճառով էս տեսակ մի ավանդութուն էլ կա: Ասում է. «Տղրիդը մի ժամանակով մարդ է եղել: Շատ ուրախ ու կյանքը սիրող մարդ է եղել: Աստծուն խնդրել է, որ իրեն հավիտենական կյանք տա, բայց մոռացել է հավիտենական կյանք խնդրելիս էն էլ խնդրի, որ միշտ ջահել մնա: Աստված նրա կիսատ խնդիրքը կատարել է: էս մարդն ապրել է, ծերացել, ծերացել, էնքան ծերացել, կորացել, շորացել ու կուշ եկել, փոքրացել, որ վերջը ծղրիդ է դարձել»:

Ինչպես բոլոր արտիստ մարդիկ — ծղրիդն էլ ասում է ամբողջը և սիրում է մենակությունը: Մենակ ապրում է իր գեղեցիկ տանը ու շատ էլ ծուլ է, ինչպես առհասարակ երգիչները: Մայիսը գալիս է թե չէ — տուն ու տեղը սարքում է թե չէ — սկսում է երգել: Եվ միշտ իր շեմքում: Իրիկնապահերին դուրս է գալիս վերջալուսի դիմաց կամ խաղաղ լուսնյակ գիշերները լուսնի լուսի տակ, իր մաքուր շեմքում նվագում, կամ ինչպես ընդունված է ասել՝ երգում — ճը՛ռո... ճը՛ռո...

Սկզբում երգում է իրեն համար, փառաբանում է գարնան գիշերների գեղեցկությունը, նոր կյանքի քաղցրությունը: Մի քիչ հետո սկսում է սեր երգել ու քնքշալով կանչել իր դրկից հարևանուն՝ տան առջևը կախած ծաղկի կամ խոտի փնջի տակ գտնվող մաքուր բակում — լուսնյակի լուսի տակ ժամանակ անցկացնելու:

Հարևանունին երգել չգիտի ու երբեք չի երգում, սակայն սիրում է երգը, մանավանդ երբ երգում իրեն են գովում ու կանչում: Լսում է երգչին, և լսում է իր առաջին ծնկներով, ու էդ ձենի վրա գալիս է հրավերքին:

Գալիս է, գուրգուրում, գգվում են իրար, սիրում են իրար, սիրելով էլ իրար հետ կապում են իրենց կյանքը: Բայց շատ կարճատև ու դժբախտ է լինում առհասարակ նրանց էդ բարեկամությունը: Մի տասը տեսակցությունից հետո հաճախ մեռնում է մեր ուժասպառ երգիչը: էն էլ է պատահում, որ էս ամենից հետո իր նախկին ընկերունցին է վրեն հարձակվում, ծեծում, ծվատում, ուտում, դեն շարտելով անբախտ երգչի փալաս դարձած ջութակը:

էն ջութակը, որ էնքան սրտառու էր եղանակներ էր նվագել իրեն համար:

Եթե կերպարանափոխության շրջանումն է պատահում, որ ծղրիդը կորցնի իր մարմնի որևէ մասը, նորից պոկված անդամը դուրս է գալի, ինչպես բույսի կտրած ճյուղը դուրս գա:

Տան ծղրիդը իր ապահով տեղը, իր տաք անկյունում սովորաբար երկար է ապրում, իսկ հանդիներ ենթակա է հազար ու մի փորձանքի: Քարաթոթոշ կա, մողես կա, մեղու կա, վերջապես էն շարաճճի ծտերը կան, որ անդադար թռչկոտում են շորս կողմը, մին էլ տեսար մինը մոտակա թփի վրից պը՛ծ զարկեց, կտցեց մեր տկար երգչին ու տարավ շամփրեց մամխի թփի փշերին — իրեն համար ձմեռվա պաշար:

Բայց եթե դրանից էլ ազատվի — բնությունից ո՞ւր պիտի փախչի:

Հասնում են աշնան ցրտերը: Հոկտեմբերյան մի ցուրտ օր էլ, վերջին անգամ իր շեմքի առաջ, աշնան սառը վերջալուսի դեմ, երգում է ծղրիդն իր վերջին երգն ու քնում հավիտենական քնով: Մառը քամին շորացած խոտերով ու թառամած ծաղիկներով ծածկում է նրա անհայտ գերեզմանը, իսկ մի քիչ հետո, անհետ թաղում է ձյունի տակ և վրեն սուչում է ձմռան բուքը:— Վո՛ւ, ո՛ւ... էսպես է բնության կարգը: Մնվեց, ապրեց ու մեռավ, ետևից թողնելով իր սերունդը՝ 300—600 ծղրիդ, ինչպես ասում են գիտնականները:

Մարիկ ծղրիդը էսքան ձու է ածել մի էն տեսակ հարմար ու ապահով տեղ, որ համ վտանգից ու փորձանքից ազատ լինեն ձվանը, համ էլ, երբ ձագերը դուրս գան, հենց տեղն ու տեղը կերակուր լինի նրանց համար:

Ջարմանում են գիտնականները, թե ո՞րտեղից է ծղրիդին էսքան խելք ու բանականություն, որ առաջուց ամեն բան հոգում է իր ձագերի համար: Չէ որ ինքը՝ ծղրիդը երբեք ոչ մեր է տեսնում, ոչ ձագ, որ սովորած լինի, փորձով գիտենա: Երբ որ գարնանը ձվից աշխարհք է դուրս գալիս — մերն արդեն մեռած է լինում անցյալ աշնանը, ինքն էլ երբ ձու է ածում — դրանից հետո մեռնում է նույն աշնանը, ու չի տեսնում, թե էն ձվից ինչ է դուրս գալիս եկող գարնանը: Հապա ինչպես է, որ ամեն բան հասկանում է, նախատեսում ու հոգում: Եվ դրան մի պատասխան են տալի, թե դա կյանքի, բնության անգիտակից թելադրությունն է, բնագոյն է, ինստինկտն է:

Բայց ով գիտի, մի՞թե չի կարող պատահել, որ բացի բնագրից ուրիշ ընդունակություն էլ ունենա մեր փոքրիկ երգիչը, օրինակ՝ գիտակցություն, դատողություն: Հեշտ կարող է պատահել, որ էդպես լինի, թեև ինքք բնագրն արդեն շատ մեծ բան է, և շատ կենդանիների մեջ ավելի է զարգացած, քան թե մարդու մեջ:

Ահա էսպես հոգում է ծղրիգն իր ապագա սերունդի համար, ապահովում է նրա ծնունդն ու ապրուստը և նոր գարունքին հայտնելովում են նրա ձագերը: Նորելուկ ձագերը ձվից դուրս գալուց հետո շորս անգամ իրենց կաշին ու կերպարանքը փոխում են ու շորորդ կերպարանափոխությանը դուրս են գալիս կատարյալ ծղրիգներ: Անմիջապես իրենց բնակարանի հոգսն են քաշում, իրար հետ կովում են ծնողական օջախին փրելու համար, որն էս կովում մեռնում է անժամանակ, որը տիրում է, մյուսներն էլ գնում են իրենց աշխատանքով նոր բնակարան են շինում, և դարձյալ նույն կապույտ, ժպտուն երկնքի տակ, նոր կանաչ ծաղկոտ դաշտերի մեջ խնդալով ու թնդալով շարունակվում է նույն կյանքն ու նաևն երգը — ճը՛ոո... ճը՛ոո...

Կարծես թե ոչինչ չի փոխվել:

1913

ԳԵԼԸ

1

Խորն աշունքին Լոռու սարերով անցկենալիս մի գյուղում մտաք վրա հասավ: Հյուր ընկա Անդրիաս քեռու տանը, որ մի հին ու փորձված հովիվ էր:

Սարերում սովորություն կա, որ տեսան մեկի տունը հյուր եկավ՝ հարևանները կհավաքվեն եկվորի գլխին, կհետաքրքրվեն, հարցուփորձ կանեն՝ իմանան ի՞նչ կա, ի՞նչ չկա աշխարհքում: Եվ ահա հետզհետե գյուղացիք հավաքվեցին Անդրիաս քեռու օթախը:

Տանտերը բուխարին թեժ արավ, մենք էլ, ու՛ք ինչպես ուզեց, տեղավորվեցինք լին ու արձակ տախտերի վրա ու սկսեցինք զրույց անել:

Էս խոսակցության ժխոցին գյուղի շներն սկսեցին անհանգիստ հաչել ու ոռնալ:

— Գել է,— միաբերան բացականչեցին գյուղացիք:

— Ընչի՞ց եք իմանում,— հարցրի ես:

— Գիլահաչ են տալի, աղա:

— Գիլահաչը ո՞րն է: Մի՞թե շները միշտ մի տեսակ շներ հաչում:

— Չէ, աղա, գիլի վրա ուրիշ տեսակ են հաչում, մարդի վրա՝ ուրիշ: Մարդկանցից էլ՝ գողի վրա ուրիշ տեսակ են հաչում, անցորդի վրա՝ ուրիշ: Խմբի վրա ուրիշ տեսակ են հաչում, կենդու մարդի վրա՝ ուրիշ...

Հենց էս խոսքի մեջն էինք, որ մի հրացան տրաքեց, շների հաչոցը սաստկացավ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացավ:

— Հասեք հե՛յ... տարա՛վ, տարա՛վ, հե՛յ...

Գյուղացիք դուրս թափեցին:

2

Գյուղիցը դուրս գիշերվա մթնում լսվում էր խուլ աղմուկ: Ես մենակ էի մնացել: Տան կնանիքն էին միայն դռան առջև հավաքված վաշ ու վիշ անում: Միջների պառավն անիծում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր:

Ու մրմնջում էր «Գիլկապի» աղոթքը:

«Ալալոս,

Գալալոս,

Գելը կապեմ երկու բըթով,

Երկու բըթով, երկու մատով,

Աստվածածնա քաղցր կաթով,

Սուրբ Սարգսի ձուլ ձարով,

Նահատակաց կարմիր բարով:

Գիլի ճամփեն մոլոր անեմ,

Գիլի ատամ խըմոր անեմ,

Ռտները թուլ,

Ակաեք խուլ...»

Ու կրկնում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր...

— Էն ի՞նչ է, նանի,— հարցրի ես, թեև համոզված էի, որ գել էր:

— Գեւ է, որդի, գել: Ոչխարը սարից գեղն են բերել — ետե-
վիցն եկել է:

3

Վերջապես խառնիխուռն բարձր-բարձր խոսելով ու ծիծաղե-
լով եկան գյուղացիք:

— Աղա, բա որ ասի՞նք:

— Ուրեմն գե՞լ էր:

Ինձ պատասխան տալու փոխարեն առաջ բերին մի թխա-
ղեմ 17—18 տարեկան պատանու:

— Այ տղա, Սիմոն, էդ ո՞նց էլավ:

— Այ տղա, դե էն ա ոչխարը բերում էի տուն անեմ: Բերի
գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ ոչխարը դես ու դեն խախալ-խա-
խալ է անում. շունն էլ հա է անում, թե ոչխարի մեջն ընկնի:
Հենց էս ժամանակը շները թփի տակիցը մի գիլի վեր կալան ու
ետևիցը լարվեցին:

— Հասի՛ հա հասի՛, բռնի՛ հա բռնի...

Մին էլ տեսնեմ ոչխարը կտրկան էլավ ու փախս առավ: Ետ
մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է, հետը կողք-
կողքի ընկել ու պոչով ետևիցը քշում է, ոչխարն էլ հետը շափ
ընկած գնում է, ոնց որ հարսանիքի ձիավոր ըլի...

— Հա՛յ հա հա՛յ... շուռ եկա դեսը: Թ՛վանքը որ տրաքեց,
սա ոչխարը թող արավ փախավ:

— Անտերը ոչխարի միջին տապ արած է էլել հա՛, — նկա-
տեց քեռի Անդրիասն ու դարձավ դեպի ինձ:

— էդպես է դրանց սովորությունն, ա՛ղա: էգ ու որձ գնում
են. Մինը ոչխարիցը մոտիկ տապ է անում, կամ եթե աջողեցնում
է՝ հենց ոչխարի միջին է տապ անում, մյուսը գալիս է երևութ
ըլում, խաբսը տալիս, շանն ու շորանին առնում փախում: Տապ
արած ընկերը ետևիցն էս խառնակ ժամանակը ոչխարը տանում
է. Շատ անգամ էլ ոչխարը տանում է պահում ու ետ գալիս ըն-
կերին օգնություն: Ուստա շորանը փախած գիլի ետևից գնալ չի,
գիտի որ ետևուց վտանգ կա պատրաստած:

— Սա էլ է լավ ժած եկել, — գովեցի ես պատանի հովվին, —
կարողացել է գիլի բերանից անփորձանք ազատել ոչխարը:

— Գիլի բերանից անփորձանք ոչխար ազատելն ինչպես կլի-

նի, աղա, — խոսեց պատանին: — Գելը տեսավ, որ ոչխարը ձեռի-
ցը գնում է, մինչև իմ հասնելը մի ռիսելում ոչխարի դմակը պո-
կեց տարավ:

— Հա՛, էդպես է, — դարձյալ մեջ մտավ տանտերս: — Գելը
ոչխարին հասավ թե չէ, եթե տանելու հնար չկա, դմակին կտա
ու մի տալումը դմակը կպոկի:

— Տավարին էլ հասավ թե չէ՝ բողազիցը կբռնի, քեռի Ան-
դրիաս, — մեջ մտավ մի տավարած:

— Տավարին էնքան էլ հեշտ չի, — պատասխանեց քեռի
Անդրիասը: — Տավարիցը մինը գոռաց թե չէ, ամբողջ տավարը
հասկանում է բանն ընչումն է, որովհետև գիլի գոռացնելն ուրիշ
տեսակ է. իսկույն բոլորը հավաքվում են, քամակ քամակի տալիս
ու պոչները դեմ անում, կանգնում...

— Տավարը հեշտ է շաղվում, քեռի Անդրիաս, ու հեշտ էլ գի-
լի փայ է դառնում: Էն, ինչ ձի՛ն է անում գիլի հետ, ոչ մի անա-
սուն չի անիլ:

Ձին գիլի հոտն առավ թե չէ, ականջները սրում է, փոռաց-
նում, փնչացնում ու ձեռաց բոլոր ձիերը հավաքվում են մի տեղ:
Մադիանները իրենց քուռակները մեջտեղն են առնում ու նրանց
ըրջապատում կանգնում, երեսները դեպի ներս, քամակները դեպի
դուրս — գելերի կողմն արած՝ քացիները պատրաստի: Ու աստոծ
հեռու տանի, թե մի գել մոտեցավ: Բայց կովում գիլի համար
ամենավտանգավորը որձ ձին է: Որձ ձին մադիանների հետ շըր-
ջանի մեջ չի մտնում: Բաշը թափ տալով ու փոռացնելով կատաղի
պտտվում է ըրջանի շորս կողմը, հարձակվում է գելերի վրա ու
առաջն ընկած գելին տրորում, ջարդում առաջի ոտներով կամ
քացու մի զարկով փռում գետին:

Եթե մադիանը մենակ է, քուռակը դոշի տակն է առնում ու
կանգնում:

Մենակ ձիու էս կողմն էն կողմն է թռչում գելը ու հանկարծ
վրա է թռչում բողազիցը բռնում կամ մի զարկով փորը պատ-
ռում: Երբեմն քնթիցն էլ է բռնում, շունչը կտրացնում: Երբեմն էլ
ձիու առաջն է ընկնում ու փախսը տալիս — իբրև թե վախենում է:
ձին էլ դուռը տնկած ետևիցն է ընկնում, իբրև թե հալածում է:
Հանկարծ ետ է դառնում ու բռնում:

— էդ հո էջն է, — խոսեց քեռի Անդրիասը: — Գելն էջի հեռ
խաղում է, խաղում, ու ականջներն իրեն քաշում, առաջը փախսը

հարում: էշն ընկնում է ետևիցը, իբրև թե հալածում է: Էսպես հեռացնում է, հասցնում մի ապահով տեղ ու ետ դառնում ուտում... Դրա համար էլ ասում են՝ «Իշի գերեզմանը գլխի փորն է»:

— Ոչխարն էլ է գլխի ետևիցն ընկնում.— նկատեց մի ուրիշը:

— Հենց գելն էլ էդ երկուսին — իշին ու ոչխարին ամենից շատ է սիրում:

— Իսկ ամենից քիչ մոտենում է խոզին ու գոմշին:

— Բա ի՞ծի՛ն:

— Պա՛, ի՞ծի բանը ծիծաղ է: Խամ գելն ի՞ծին ընած ժամանակը՝ էժը էնպես է ճղղղում, որ գելը թող է անում, փախչում:

— Բայց մի՞թե գելն էդքան անվախ ու համարձակ մոտենում է գյուղին,— հարց տվի ես:

— Գելը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, աղա,— պատասխանեց քեռի Անդրթասը:— Բայց հիմի սփովում է գլխի դժար ժամանակը: Ձմեռը գալիս է, անտառի որսը դժարանում է, ապրանքը սարից ցած է գալիս — տուն է մտնում: Գլխի ապրուստը կտրվում է: Մովը որ նեղացնի՝ գեղ էլ կմտնի, դեռ տուն էլ: Մովի ձեռիցը ձմեռը գալիս է շեմքիցը շուն է տանում լափում: Մուկն է որսում: Մառի փթոնակ է ուտում, իր լափոտն է ուտում... Գե սովն է պատճառն էլի, որ ձմեռը միանում են, բոլով են (ոհմակ) կազմում, որ ուժեղ լինեն, միասին հարձակվեն...

Ձմեռը դեռ էլի մեղանում, մեր սարերում, մեր անտառներում մի բան է ճարվում. նապաստակներ են կամ ուրիշ մանր-մունր կենդանիներ: Վերջապես եղնիկների ու եղջերուների ետևից են ընկնում, քշում են դեպի սառած գետերը: Տանում են սառույցի վրա ճղատում — ու վրա են հասնում խեղդում, ուտում: Բայց էն ինչ դաշտ տեղերն են, որ դրանք էլ չկան, գելը սովից ավելի համարձակ ու վտանգավոր է դառնում: Շատ անգամ կատաղում է: Ու դաշտ տեղերը մարդկանց վրա էլ է հարձակվում ու վնասում:

— Տղեք, գե խոտքն էստեղ ինձ տվեք,— էն կողմից խոտեց Շորագլայցի Ավոն ու սկսեց իր պատմությունը:

— Մեղանում, դաշտ տեղերում, գելը շատ ավելի վտանգավոր է, քան սար տեղերում: Մեղանում գելերը ձմեռվան գիշերը գալիս են գեղի մեջը ման գալիս: Եներին պահում ենք, որ շտանեն — շուտեն: Ձմեռները մեղանում շատ վտանգավոր է մենակ ճանապարհորդելը. մանավանդ, եթե մուֆն էլ վրա հասավ: Այ ձեզ պատմեմ իմ գլխին ձկած մի դեպք:

Մի քան անտանով մի փոքր անձինք: Մի ձեռն քա ճղը փորավ: Ախպերս ինձ ճղից ման գալու Ես էլ հապես է՞ն — 17 աստիկան շահել տղա եմ: Գնացի գեղի շորս կողմը ման եկա մտն — չքտա: Գոմահանդ ունենք, Կնքան էլ գեղիցը հեռու քի: Ախ՛, եզը ստփոր է, փարեղի է էդ կողմն ըլի գնացածս Գնացի էդ գոմահանոր: Գնացի, էս գոմը նաչեցի, էն գոմը նաչեցի, վերջը տեսնեմ՝ դրոստ որ եզը մի գոմունն է: Եզը դուրս արթ. գուրս գամ տեսնեմ արդեն մուֆն ընկնելու վրա է: Միրտս մի ահ ընկավ: Տեսնում եմ, որ լուտով շեմ կարող գեղը հասնեմս Մտածում եմ՝ փեռ՝ մ — չգեռ՝ մ:

Ի՛նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունաբարձ քաշա, շեն չկա, ձեն չկա. ձեռիս էլ մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՛նչ պետք է անեմ: Աստծու անունը տվի, եզն առաջս արի քշեցի: Մի քիչ տեղ անց էի կացել. հանկարծ իրիկվան էն դառը բամու հետ մի տխուր ձեն ընկավ ականջովս: Կառնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գլխի ոռնոց է: — ո՛ւո՛ւ...

Ո՛ւ... էս ոռնոցին միացավ ամբողջ խոտքը ու աստիկանով լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ որ աչ կողմս, հեռվում, մի՞թե մեջ, քախտ-չուխտ վառված ճրագների ձի բազմություն է շարժվում... էլ ի՛նչ. ձեռաց հասկացա, որ քեղերի աչքերն են — սոված բուրդ է: Եզը նստ տվի դեպի գոմերն ու քշում եմ, ո՛նց եմ քշում, վազում եմ, ո՛նց եմ վազում... Ծա նայեմ, որ արդեն գալիս են: Եզը թող արի փախա, ընկա գոմը: Ընկա գոմը, բարձրացա սների փխներին գերանների վրա դատարկ տեղեր են լինում է՛...:

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրա:

— Հա՛, էդ կոնդերից մեկին վեր էլա: Գեռ չէի տեղավորվել — մի՞ն էլ տեսնեմ. եզանս գոռոցը բարձրացավ: Զարմանք բան է, թե կնքան տարածությունը ինչպես մի երկուրուրու փորեցին ու հասան:

— Վա՛հ, գլխի ոտին փնջը կհասնի,— փոսեց քեռի Անդրիասը:— էն սարի գլխիցը որ մի բան նկատեց՝ մին էլ կտեսնեա կողքիդ դուրս եկավ: Դրա համար են առում էլի, փե՛ գելն աղբիլ է:

— Հա՛, էն էի առում,— շարունակեց Շորագլայցի Ավոն:— Եզանս գոռոցը բարձրացավ ու փակույն էլ կարեց, խոխոտքն ընկավ: Խոխոտքն էլ կարեց, ձիայն փեղերի փրկեցրեցոցն եմ շտում, ու լուտ եմ՝ ոնց են չափում...

Վա՛յ Միրան ջան... դուրս թռավ սրտիցս: Բայց ի՞նչ Միրանի ժամանակն է: Ես իմ գլուխն եմ լաց ըլում: Մտածում եմ թե՛ էս լավ էր, եզնովը կըլեն, մինչև կլուսանա, կամ կկշտանան ու կըզնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնիլ... Դու մի ասիլ՝ սոված գիլի բոլո՛ւկ, ես հիսուն ասեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հախոել են, ու մին էլ տեսնեմ, մու՛թը գոմը լցվեցին էն ջուխտ-ջուխտ վառած ճրագները ուխները բաց արած...

Գտան...

Եկել են լցվել, ներքևից ագահ-ագահ ինձ են մտիկ անում: Ես էլ շորացել եմ մնացել վերևը գերանին կպած: Մտիկ արին, մտիկ ու թող արին դուրս գնացին:

Շունչս ետ եկավ: Ասի՝ «փառքդ շատ ըլի աստոծ, էս էր՝ ազատվեցի...»:

Գեռ աստծու փառքը բերանումս, մին էլ ինչ եմ լսում: Իմ ուղղությամբ վերևից կտուրը քանդում են, շանգերովը հողը ետ են տալի: Արդեն լսում եմ շանգերը կոճերին է դիպչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի տեղս փոխեցի, անց կացա մյուս կոնդի վրա կուշ եկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

էլի եկան ներքև: Մտիկ արին, որ մյուս կոնդի վրա եմ. ետ դուրս գնացին: Հիմի էս կոնդի վերևից սկսեցին քանդել կտուրը:

Դարձյալ տեղս փոխեցի: էսպեսով՝ նրանք քանդելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին:

էլ ո՞ւր գնամ:

Եկան մտիկ արին կատաղած ու ետ գնացին: Քանդում են, ո՞նց են քանդում...

Մի սուր դանակ ունեի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնած՝ մտքումս աղոթք եմ անում.— Տեր աստոծ, դու ինձ ազատ անես էս նեղ տեղիցը...

Իսկ հենց անգաճիս վերևը քանդում են: Քանդելով հասան կոճերին: Հասան կոճերին. մինը կոճերի արանքովը թաթը մեկեկեց, որ կոճը ետ քաշի: Թաթը բռնեցի ու էն սուր դանակովը դռոթ կտրեցի... Թաթը փախցրեց, ոռնալով, կոնձկոնձալով ետ գնաց, ու կտերն իրարով անցան: Իմացել էի, որ գելերի մինը եթե վիրավորվեց՝ մյուսները վրա են թափում նրան ուտում: Ասի՝ «որիմն սրան ուտում են: Հիմի սպասում եմ, որ սրան կուտեն կպրծնեն ետ կգան: էլի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

Ականջս ձեռի է: Գիշերվա մի ժամին, ոնց որ երազում՝ մի բարակ ձեռն եմ լսում.

— Ավո հե՛յ...

Ինձ են կանչում...

— Տեր աստոծ, մի՞թե ինձ են կանչում... մի՞թե ախպերս է... Մի՞թե մերոնք են... Գոմից ձեռն եմ տալիս, գոռում եմ.

— Աղանիկ հե՛յ... էստեղ ե՛մ... Գոմերումն ե՛մ... Գելերն ինձ ուտում ե՛ն... Օգնեցեք հե՛յ...

էլի նրանք ձեռն են տալի, իմ ձեռը շեն լսում, թեև ես շարունակ կանչում եմ:

Մին էլ տեսնեմ հրացանները տրաքեցին, ետևից լավեցին հեռացող գելերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձեռը:

— Ավո հե՛յ...

— էստեղ ե՛մ... էստեղ ե՛մ... կենդանի ե՛մ...

Ներս թափեցին գոմը:

— Փառք քեզ աստոծ... Փառք քեզ աստոծ,— ուրախացած ու զարմացած կանչում են ամենքը: Ցած եկա վերջին կոնդի վրից: Ախպորս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

— էլ լաց մի ըլի, գնա աստծուն փառք տուր, որ էսօր նոր մորից ծնվեցիր,— կանչեցին էս ու էն կողմից ու ինձ դուրս բերին դուռը, ուր թափված էին մեր Միրան եզան ոսկորները:

Գեռ լուսը շէր բացվել:

Հեռվից լսվում էր գելերի ոռնոցը:

4

Շորագյալցի Ավոյի պատմությունից հետո խոսքն ընկավ գիլի ոհմակի վրա:

Երկար ձմեռներն ու ապրուստի դժվարությունն են պատճառը, որ գելերը ոհմակ են կազմում, բացատրում էին գյուղացիք:

Ոռնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ուժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե՛ հարձակման դիմադրելու ժամանակ: Ամեն մինը մենակ հեշտ կհաղթվի ձմեռն ու կկորչի, քան թե խմբով, և ամեն մինը շի կարող էն ճանկել, ինչ որ կճանկի խումբը:

Եվ հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյուրով:

Պարտափելի բան է գիլի ոհմակը. մանավանդ էր լինում է ձմեռը, գիլի ամենաքաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը քաղցից կատաղում է: էդ ժամանակ, ասում են, գելերը իրենք էլ են իրարից վախենում: Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանգըստանալու՝ շրջան են կազմում ու էնպես են վեր թափում, որ իրար երես պահեն, շեն հաժատում մեկմեկու: Վախում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն ու հարկավոր գեպքում իսկույն նշան տան իրարու, և իբրև թե բուրբը նայում են իրենց գլխավորին:

Գիլի համար մութը, ճամփի դժվարությունը, հեռավորությունը — ոչ մի նշանակություն չունեն:

Գիլն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեք-չորս օրվա ձիու ճամփա կկտրի: Իսկ գիլի սրատեսությունն վրա էսպես մի գրույց կա ժողովրդի մեջ:

Ասում են: Մի անգամ արծիվն ու գելը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՞րն է ավելի սրատես: Գելն ասավ՝ մի ամպոտ օր ես սարի գլուխն ելա, ամպի միջով մտիկ արի տեսա՝ հեռու մի դաշտում մի սև ցելի (վարած հողի) մեջ մի ակոտում մի սև գառն է նստած:

Արծիվն էլ թե՛ ես էլ երկնքի երեսն ելա, ներքև մտիկ արի, մի ժխնելույզի ձիջից տեսա կրակի վրա դրած մի պղինձ խուփը վրեն: Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սիպտակ մազ:

էսքան արագավազ ու սրատես գազան է գելը: Եվ էս ամենի հետ միասին՝ շատ խորամանկ:

Նա մինչև լավ շիմանա, որ հարձակումն ապահով է — չի հարձակվիլ: Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած պցի ափաշկարա վտանգի մեջ. բայց սովորաբար գելը շատ է զգույշ ու խորամանկ:

Թի գյուղացի էսպես պատմություն արավ: Ասում էր. մի տարի թափարդ էի սարել: Առավոտը վաղ վեր կացա գնացի տեսա մի գել է ընկել մեջը: Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրվել է, սատկել է: Վեր կալա թակարդիցը հանեցի, էն կողմը պցեցի: Մինչև գլուխս կախ ես թակարդովն էի էղած, մին էլ տեսնեմ վեր կոտցավ կապին տալով փախավ: Հա՛յ հա հա՛յ, էլ որտե՞ղ, իրեն տվեց անտառը: Դու մի՛ ասիլ անտերը ստամեռնուկ է տված եղել:

Գիլի ոհմակն էլ, ձմեռը ճամփա կտրելիս իրար ետևից է գրեում — ժլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձավածը առաջին է գնում: Եվ սա երկու հարմարություն ունի նրանց համար: Մին, որ առաջի գնացողները ձնի մեջ կոպար (շավիղ) են բաց անում, ետևից եկողներին համար բաց-պատրաստ ճամփա է լինում, մին էլ՝ որ ոչ ոք չի կարող իմանալ, թե իրենք քանիսն են եղել: Եվ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թե էս ոհմակը, որ անցել է, քանի գել է եղել մեջը:

Աստված հեռու տանի, թե ոհմակի աչքովը մի որս ընկավ: Ուրիշ գազան լինի, թե ընտանի կենդանի, իսկույն շորս կողմից շրջապատում ենք ու էլ փրկություն չկա: Իսկ կճղակավորներին, հատկապես եղնիկներին ու եղջերուներին, քշում են դեպի սառած գետերը, սառույցի վրա ճղատում ու վրա թափում, կամ քշում են դեպի բարձր ժայռերը, ժայռերից թռցնում ու իջնում ներքև լափում:

Ոհմակը վտանգավոր է և մարդու համար: Եթե բազմություն չեղավ՝ մի կամ երկու մարդից ոհմակը չի վախենալ, թեկուզ հրացան ունենան: Մինչև անգամ հրացանն ավելի վտանգավոր է: Հրացան արձակես թե չէ, իսկույն կհարձակվեն: Հիմի կասեք՝ հապա ինչի՞ց է վախենում գելը:

էս մասին գյուղացիք մի քանի պատմություն արին:

Գելը ոչ մի բանից էնպես չի վախենալ, ինչպես կրակից, — առաջինը խոսեց իմ տանտերը, քեռի Անդրիասը:

Մեր կողմերը, դե գիտեք, որ գել շատ կա: էնպես տեղ ունենք, որ հենց գիլի բուն է, որ կա: Մի մեծ ծմակ ունենք, Մոտկորա ծմակ ենք ասում: էդ ծմակումը մի թալա (անտառումը բաց տեղ, բացատ) կա: էգ թալումը էնքան գել կա, որ անուեը գրել են Գիլի թալա:

Մի ձմեռնամուտ իրիկուն օտրի գոմերիցը տուն եմ գալի: Հակառակին էլ էս Մտեփան տղես էլ հետս է. ինը-տասը տարեկան էրիսա է: Որ եկանք էդ թալի դիմացը, մի շան ձեն ընկավ ականջովս: Ասի՛ ով գիտի ոչխար են բերել էս կողմերը, շորանի շունն է հաշում: Ձեն տվի:

— Ա՛յ շորան, հե՛յ...

էս ձեռն տալն էր. էլի:

Շան հաշոցը կտրեց ու, ձեռք մատաղ, մին էլ էն տեսնեմ՝ էդ ծմակիցը գիլի տուտը բաց էլա՛վ, ուսինները բաց արած գալիս են, ո՞նց են գալիս, աչքերս սևացան...

Ի՞նչ մի՛ ասիլ, հաշոցը գեղ է եղել: Ախր չէ որ գեղը ունեւում է, բայց շանից հաշել է սովորում ու շատ անգամ էլ հաշում է:

Ձեռնիս թվանք կա, միայն լավ գիտեմ, որ գիլի բոլուկի վրա թվանք չեն գցիլ. թվանք գցես թե չէ՝ ավելի կատաղի վրա կտան: Էրեխեն թե՛ ապի, էն ի՞նչ են:

Ասի՛ վախիլ մի՛, քեզ մատաղ, դոշաղ կաց: Արի օգնի էս խաշամն (չոր տերեւ) ու շոր ճյուղերը հավաքենք: Չորս կողմից խաշամն ու շոր ճյուղերը ձեռաց կիտեցի ու կրակ տվի, բոցը ծուլ էլա՛վ: Մոտկորա ծմակը լիքը փետ: Մինչև սրանց հասնելը վրա տվի, թե՛ արի. բոցն էլա՛վ ծառերի ծերը:

Սրանք եկել են, ինչքա՞ն են եկել. շորս կողմներս կտրել են, հետո կանգնուտել ժընգժընգում են ու ատամները շխլշխկացնում: Աչքները ծմակի մթան մեջ քուրքուրթի (ծծումբի) բոցի նման ջուխտ-ջուխտ վառվում են: Մարդ մտիկ տալիս զարզանդում է:

Էրեխեն կպել է փեշիցս ու լաց է լինում:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, ես էստեղ եմ... լաց մի՛ ըլի, որ լաց ըլիս — կզան մեզ կուտեն...

Էրեխեն ձեռք փորն է գցել ու փեշիցս կպած դողում է, ո՞նց է դողում...

Տիր աստված, ասում եմ, դու ազատես էս նեղ տեղիցը: Ի՞նչ անեմ: Շուրս դրել եմ կրակի վրա: Էն էլ փետը հատնում է, էրեխեն էլ փեշիցս պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ, փետ բերեմ կրակին վրա տամ:

Մոտիկ մի ցըցչորի ծառ կար: Կրակը բոթեցի սրա տակը, սրա կողքին էլ մի կտորած ծառի շոր բլուլ (կատար) կար, էն էլ քաշեցի վրեն, թե՛ ծաղա՛վ, ոնց թե՛ ծաղա՛վ, կարմիր լույսն ընկել է ամբողջ ձորը:

Ի՞նչմացի սարիցը շորանները նկատում են, որ, ախպեր, էս ձորումը, էս ծամանակին, էս ի՞նչ կրակ պետք է լինի, որ քիչ է մնում ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեռն են տալի:

Ականջ դնեմ, որ էս մեր Շամիրի ձեռն է:

Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք:

Ձեռն տվի.

— Շամիր հե՛յ... գիլի բոլուկ է. շորս կողմս կտրել են... էրեխեն հետս է... օգնեցեք հե՛յ...

Չենց էս կանչելն էր: Մի քանի շորան իրար հետ ձեռն տվին.

— Վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, գալիս ենք հե՛յ...

Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեռն տալիս շտապեցնում, ոնց են շներին կանչում:

— Թորլան հե՛յ, Ղայթար հե՛յ, Չամբար հե՛յ, Չալակ հե՛յ...

Շների կլանչոցը վեր էլա՛վ ու մտավ ձորը:

էստեղ էրեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլի:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, հրես կզան:

— Տղերք, էս մեր Շամբրին Թորլան անուշով մի գելխեղջ շուն ուներ: Մին էլ տեսա էս շան ձեռք մոտիկ ծմակում զրնգաց: Սրա ետեկից մնացած շները, շների ետեկից կրնկակոխ շորանները, Չորանների դշրրդուն ու շների հաշոցը ծմակը դրմբացնում է: Մին էլ Ստեփանս թե՛ «ապի, գելերը փախչում են»:

Ասա՛վ, ու ուրախությունը խառնվեց սարսափին, սկսեց աղաղակել ու առաջն ընկած փետի կտոր, քար, հող շարտել գելերի ետեկից:

էլ գելն ո՞վ կտա: Ծմակի մթնումը կորան, գնացին:

Տղեքն եկան:

— Ա՛յ տղա, էս ի՞նչ բան էր:

— Բանն էլ որն է, ձեռն տունը չքանդվի, հապա էսպես, էսպես...

էստեղից վեր կացանք գնացինք շորանների մոտ, մինչև լուսացավ, առավոտը խմբով եկանք տուն:

էս բանն, ախպեր, իմ գլուխն եկա՛վ: Կրակը մեզ ազատեց,— վերջացրեց խոսքը քեռի Անդրիասը:

6

— Ուստա Սարգիս, հիմի քո պատմությունն արա — էս ու էն կողմից ձեռն տվին գլուղացիք.— Շորագյալից գալիս ոնց էլա՛վ:

— էլ ի՞նչ ասեմ, դե գիտեք էլի,— պատասխանեց ուստա Սարգիսը:

— Մենք գիտենք, ամա աղեն գիտի ոչ:

— Պա՛տմի, ուստա Սարգիս, պա՛տմի լսենք, տեսնենք Շորագյալի ճամփին քեզ հետ ի՞նչ է պատահել,— խնդրեցի ես:

Ուստա Սարգիսը զուռնաչի էր: Թիկը տված չիրուի էր քա-
ջում, վրա նստեց ու սկսեց պատմութիւնը:

— Շորագլալի ճամփին պատահած պատմութիւնն էսպէս է,
ազա ջան:

Մի հացապահաս տարի վեր կացանք ես, դամբաշ (զուռնի
ձեն պահող) Ակոփն ու գհոլի (թմբկահար) Դավիթը մեր զուռ-
նադհուր վեր կալանք, ասինք գնանք Շորագլալ գեղերը հարսա-
նիքներ անձնք, հացահատիկ հավաքենք բերենք ձմեռը կառա-
վարվենք:

Ին գիտեք էլի, որ Շորագլալա հացը համ լավն է լինում,
համ առատ, իսկ մեղանում, սարերում, սակավ է լինում, եղածն
էլ շատ անգամ կարկոտը տանում է:

Գնացինք զուռնա ածելով, հարսանիք անելով գեղեգեղ ման
եկանք: Բավական ցորեն-գարի հավաքեցինք, մի ծանոթի պահ
տվինք, մենք ետ ճամփա ընկանք դեպի մեր տները:

Գրտեմ ոչ Շորագլալ եղել էք թե չէ, Հոռոմ անունով մի գեղ
կա. էգ գեղիցը դուրս ենք եկել գալիս ենք դեպի Արթիկ: Եկանք,
ճամփին մոթն ընկավ: Մնկահար ձյուն. ցուրտն էլ հո թրի նման
մարդի երես է կտրատում: Ծամփեն էլ լավ չգիտենք: Գնա թե
պետք է հասնես Արթիկ:

էս մեր Դավիթն առաջին էր գնում: Մին էլ թե՛ տղք եկեք,
որ գեղը գտել եմ:

— Այ տղա, ո՞ւր է:

— Թե՛ հրեն ճրագները երևում են:

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ հեւում շատ ճրագներ
են երևում: Միայն ես նկատում եմ, որ էս ճրագները ժած են գա-
լի, գես-դեն են գնում:

Ասի՛ տղերք:

Թե՛ ինչ է:

Ասի՛ էս գեղ չի: Մին, որ ձմեռը սրանց գեղերի տների զուռն
ու կտուրը փակ, ճրագները չեն երևալ, մին էլ որ՛ էս ճրագները
որ տեսնում եք՝ ման են գալի:

Թե՛ բա էս ի՞նչ են:

Ասի՛ գելեր են: Գիլի բուռնի բերան ենք ընկել, պատրաստ-
վեցք: Ես լսել եմ, որ զուռնի ձենին գելը — էլ վախենում է, թի
իչ, — մտ չի գալի: Զուռնա-դհուր սարքեցք: էս խոսքումն ենք,
տեպանք ճրագները մոտենում են, մթնումք, ձնառ դաշտումք,

դեսուդեն վազում են, ցրվում են, ուզում են մեզ շրջապատեն: էն-
քա՛ն են, էնքան են, որ էլ հաշիվ չկա:

Ես ու Ակոփը զուռնեն վլեցինք, էս Դավիթն էլ դհուր — դը՛մբ
հա դը՛մբ, կեսգիշերին, էս վերանա դաշտումը ածում ե՛նք: Զուռ-
նա դհուր ձենը վեր էլավ թե չէ — էս գելերս, ոնց որ տեղնուտեղը
մեխես, մնացին իրենց տեղերը մեխված:

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, տեր աստված, ի՛նչ ոռնոց:
Զուռնի հետ ձեն ձենի են տվել, ոռնում են:

— Վալ ծիծա՛ղ, — էս ու էն կողմից բացականչեցին գլուղա-
ցիք: — Ուստա Սարգիս, լավ է ծիծաղներդ գալիս չեր:

— Այ տղա, ի՛նչ ծիծաղ կգար, սիրտներս սևացել էր. դա-
նակ սայիր՝ արյուն չէր կաթիլ:

— Ետո՞, ետո՞...

— Ետո մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ: Մենք
ածելով գալիս ենք, սրանք էլ շորս կողմերս կտրած հեռու մթնու-
մը ցինգիր-ցինգիր անելով գալիս են: Կարծես պար են գալիս:
Գլուխներդ ինչ ցավեցնեմ. էսպէս գնալով գիշերվա մի ժամանա-
կը առաջներս մի շան հաշոցի ձեն լսեցինք հեռու: էս հաշոցի վրա
մի քանի շներ սկսեցին հաշել ու ոռնալ, ու մին էլ տեսնենք մո-
տիկ գեղի ճրագները զուռը դուրս եկան: Սարդկանց ձեները հաս-
նում է մեզ:

Ուրախութիւնից զուռնա-դհուրի ձենն ավելի վլեցինք:

Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում: Վերջա-
պէս հասանք գեղին, սրանք ետ դառան, կորան:

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան — մնացին զար-
մացած: Տեսնում են՝ երկու զուռնաչի ու մի դհուրի ածելով գալիս
են ու հետները հարսանքավոր չկա:

— Այ ուստեք, բա հարսանքավորները՞ որտեղ են:

Ասում ենք՝ հարսանքավորները ետ դառան գնացին: Զուռն-
ցին ձեք գեղը մտնեն:

— էդ ո՞ւր էին որ...

— Գելերը...

— Ո՞նց թե գելերը...

— Աքպեր, ասինք, պատմելու ժամանակը չի, ցրտառար
էլանք, մեռնում ենք, մեզ մի տաք տուն տարեք, էնտեղ կրթա-
մենք:

Տաքան մի տաք օդա. բուխարին թե՛ աղին, հացը դրին.

առաջներս, գլխներին հավաքվեցին էսպես, ինչպես որ մենք հավաքվել ենք, ու սկսեցինք պատմել: Պատմում ենք ու ծիծաղում, պատմում ենք ու ծիծաղում:

Վերջն էլ իմանանք, որ էն գեղը շենք եկել, որտեղ գալիս էինք, ճամփեն կորցրել ենք — ընկել ենք Պարնի գեղ:

7

— Դուք հո կրակն ու զուռնեն եք ասում, բայց գելը մի բանից էլ է վախենում. թե իմանաք ընչի՞ց, — հարց տվեց օտարականը:

— Թոկից, — ձեն տվին մի քանիսը:

— Ո՞նց թե թոկից, — զարմացան շփոտեցողները:

— Հա՛, ճշմարիտ է, թոկը որ ետևիցդ քաշ տաս՝ գելը կվախենա, մոտ չի գալ, — հաստատեց քեռի Անդրիասը:

— Ա՛յ տղա, թոկն ի՞նչ է, որ գելը թոկից վախենա:

— Ո՞վ գիտի, օձի տեղ է դնում, ինչ է, ի՞նչ իմանաս:

— Մեր գեղումը Եղո անունով մի ջահել մարդ կար, — պատմեց Շորագյալցին: — Մի շատ սրտոտ ու քաջ մարդ: Երեսին որ թուր բռնիր՝ երեսը ետ չէր թեքիլ: Ինքն էլ թրի-թվանքի հետ խաղացող մարդ էր:

Սրանից մի 4—5 տարի առաջ մի ձմեռ գործով գնում է մեր հարևան գյուղերը ու մի քանի օր ուշանում: Մի երեխա ունեք, շատ էր սիրում: Մի իրիկուն լուր է առնում, թե բա՛ երեխեղ հիվանդ է, քեզ է ուզում: Վեր է կենում, թե՛ պետք է գնամ: Սրա առաջն են ընկնում, բռնում են, համոզում են, թե մուլը գիշեր — հազար ու մի շար փորձանք, հազար ու մի գել ու գազան, սպասիր, ասում են, գիշերը լուս ունի, կլուսանա կգնաս երեխիդ կտեսնես: Սա պըպին է կանգնում թե՛ չէ որ չէ, հենց էս կես գիշերին պետք է գնամ, թուրը վրես, ձին տակիս, ի՞նչ պետք է պատահի: Ինսանի թարսություն էլի: Չեն կարում հաղթեն, կես գիշերին ձի է նստում, ճամփա ընկնում: Կիսաճամփին գիլի բոլուկը սրան շրջապատում է: Դու մի ասիլ հետը թոկ ունի, ինքն էլ փորձված, բանգետ մարդ է. թոկը երկար բաց է թողնում ու ձիու ետևից քաշ տալիս: Գելերն էլ մոտ շեն գալիս, երկու կողմից թոկին մտիկ տալով վազ են տալի: էսպես բավական տեղ անց է կենում: Մի տեղ էլ, ո՞նց է լինում, ի՞նչ է լինում, թոկի ծերը ձեռքից դուրս է

պրծնում ու վեր է ընկնում: Սա ձին քշում է: Մի քիչ տեղ գնում է, գելերը վրա են տալիս: Թուրը հանում է հենց առաջին հասնողին տալիս... Դե գելերի սովորությունն էլ գիտեք էլի. մինը թե վրավորվեց — մյուսները նրա վրա կթափվեն, կուտեն: Էդպես էլ ձիավորին թող են անում, վրա են թափում էս վրավորվածին: Եղոս ձիուն մտրակում է, քշում, բավական տեղ քշած գնում է: Գելերը վրավորվածին լափում են պրծնում, ետ նորից ընկնում սրա ետևից: Սա էլի ուզում է թուրը հանի, որ զարկի, քաշում է, քաշում, դուրս չի գալի: Տեսնում է՝ հասնում են իրեն — հերսից պատյանը ատամով կրծոտում է, ինչ անում է, չի անում՝ թուրը դուրս չի գալիս: Դու մի ասի՛ գիլին որ զարկել է, առանց արյունը սրբելու տեղն է դրել, արյունոտ թուրը կպել է պատյանին, ամրացել:

Էլ ի՞նչ երկարացնեմ, գելերը վրա են տալի, իրեն էլ են ուտում, ձիուն էլ:

Մյուս օրը լուրն եկավ. գնացինք տեսանք արնոտ ձյունի վրա իր ոսկորներն էլ, ձիունն էլ, թուրն էլ, պատառոտած շորերն էլ թափված, ցրված դեսուզեն:

— Բա էն մարդին, որ գելերը կերել էին՝ ձեզ էդ բոլորն ո՞վ պատմեց, — հարցրեց մի գյուղացի:

— Հապա մարդուս խելքն ու փորձն ընչի՞ համար է, — պատասխանեց պատմողը: Գնացինք տեսանք ձրնի պարզ հետքերը երևում են, որ կողմից է եկել ու որտեղ է շրջապատել գիլի բոլուկը, որտեղից է Եղոն սկսել թոկը քաշ տալ, մինչև որտեղ է քաշ տվել, որտեղ է ձեռքիցն ընկել: Մի քիչ էլ գնացած է ու հետքերն իրար են խառնված, տակնուվրա են եղած, ու թափված են գիլի բուրդն ու ոսկորները: Նրանցից բավական հեռու էլ իրեն ու ձիուն են կերել: Թուրն էլ բերինք, տեսանք պատյանը մարդու ատամներով կրծոտած: Քաշեցինք, քաշեցինք, շկարացինք դուրս քաշել, տվինք վարպետին, քանդեց, հանեց. տեսնենք արյունոտ, կպած պատյանին:

— Ափսոս մարդ, — էս ու էն կողմից ափսոսացին գյուղացիք: — Ա՛յ թե ընչի համար են ասել, թե համբերությունը կյանք է: Ասա, հեր օրհնածի մարդ, մի քիչ համբերի, լուսանա էլի...

— Տղե՛ք, հովատա, գիլիցն էլ փերը վնասակար գազան շինեի. դուք ի՞նչ եք ասում,— խոտեց մի գյուղացի էս պատմութեանց հետո:

— Էդպես էլ քնացած կենաք, որ չի լինիլ,— հաստատեց քեփ Անդրիասը ու դիմեց ինձ.

— Դու ի՞նչ կարծիքի ես, պարոն:

— Ես էլ էդ կարծիքին եմ,— պատասխանեցի ես:— Արդեն գրքերից էլ հայտնի է, որ ոչ մի գազան գիլի չափ վնաս չի տալիս մարդուն: Մանավանդ էն երկրներում, որտեղ գլխավորապես անասնապահութեամբ են պարապում: Ամեն տերութեան մեջ էլ ահագին վնաս է տալիս: Միայն Ռուսաստան տարեկան մոտ մեկ միլիոն անասուն է փշացնում:

— Հապա ինչպե՛ս է, որ տերութիւնները չգրա մասին չեն մտածում, մի՛ ճար անում,— խոսքս կտրեց մի գյուղացի:

— Ինչպե՛ս չեն մտածում: Տերութիւններ կան, որ առանձին վարձատրութիւն են տալիս գել սպանողներին: Կանոնավոր կրօնավում են գիլի դեմ: Դրա համար էլ էնպես տերութիւններ կան, որ մեջներն էլ գել չկա. օրինակ Անգլիան, Գերմանիան...

— Կա՛հ,— զարմանքից բացականչեցին գյուղացիք:— Ո՞նց թե... հիմի էդ երկիրներում էլ գել չկա՞:

— Չկա...

— Ա՛յ երկիր... Ապրանքդ ազատ բաց թող ու հանգիստ գնա քու դործին...

— Էնպես տերութիւն էլ կա,— շարունակեցի ես,— որ հաշվով գիտեն, թե քանի գել կա իրենց երկրում, շորսը թե հինգը...

— Էդ ի՞նչ բան է,— ավելի զարմացան գյուղացիները,— մեքանում իսկի մարդի հաշիվը գիտեն ոչ, նրանք գելն էլ են հաշվել:

— Որ ասում ես գելը վերջացնում են, ինչպե՛ս են անում, վարձապետ,— հարցրեց մի ծերունի, որին Սահակ էին ասում:

— Զանազան միջոցներով, բի՛ճա Սահակ: Ինչպես ասի՛ տերութիւններն առանձին վարձատրութիւն կամ պարգև են տալիս ամեն մի սպանած գիլի համար, որպէսններն էլ աշխատում են շատ գել սպանեն, որ շատ փող ստանան: Մինչև անգամ կազմակերպված ընկերութիւններ կան, որ միայն գիլի որսի համար են: Էնպես երկիր էլ կա, օրինակ, Իսպանիան, որ եթե տերութիւնը չի

վարձատրում գել սպանողին — ժողովուրդն է վարձատրում: Սպանողը գելը գցում է իշի կամ ձիու վրա ու գնդե գնդ ման անում, ապրանքատերերից փող է հավաքում: Եվ ամենքն էլ ուրախութեամբ տալիս են:

— Չէ՛, ես էդ չէի հարցնում, պարոն ջան, ես էն էի հարցնում՝ թե ընչո՞վ են սպանում, ինչպես են կոտորում:

— Հա, էդ ես հարցնում: Ասեմ, բիճա Սահակ, էդ էլ ասեմ: Իհարկե, հրացանով սպանելն ու թակարդով բռնելը արդեն դուք էլ գիտեք: Բացի հրացանն ու թակարդը, էնպես տեղեր էլ կան, որ խորը փոսեր են փորում, օրինակ մի սաժեն ու կես խորութեամբ, մի սաժեն էլ լայնութեամբ: Երեսը ցախ ու մախով ծածկում են, վրեն միս են դնում, շորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ գելը թուշի, հանկարծ ընկնի մեջը: Սրանով, իհարկե, չի կարելի շատ բան անել:

Էնպես տեղ էլ կա, որ ամբողջ հասարակութիւններով հավաքվում են, գնում են շրջապատում անտառի որոշ մասերը: Որսկանները հրացանները ձեռներին պատրաստի երեք կողմը կտրում են, իսկ շորորդ կողմից մի բազմութիւն անտառ է մըտնում ու հրացան արձակելով, աղմկով, հարայ-հրոցով, շանով-բանով զազաններին քշում, բերում գցում որսկանների բերանը: Էս էլ անտառոտ տեղերն է լինում, ու էս միջոցն էլ չի մեծ արդունք տալիս: Պատահում է, որ ահագին աղմուկից հետո մեջտեղը մի կամ երկու նապաստակ են հայտնվում կամ պատահում է, որ դուրս եկող զազանները անվնաս էլ փախչում, ազատվում են: Ծատ քիչ են սպանվում:

Ռուսաստանի ձնոտ դաշտերումն էլ մի ուրիշ տեսակ որս են անում: Զիով ընկնում են գիլի ետեից: Մեկնահար ձյունի մեջ թաղվելով՝ գելը զոռով է վազում և շուտ էլ հոգնում է: Ծուկիցը հասնում են՝ հենց տեղնուտեղը դազանակով սպանում: Բայց ավելի շատ գիլին կոտորում են թույնով: Մատկած ոչխարը մաշկում են, միսը շերտ-շերտ կտրատում, արանքները թույն են լցնում, ես նորից մորթին վրեն քաշում ու տանում գիշերը: Հանգրում վեր գցում: Մոված՝ գելեր — գալին են ուտում ու տեղնուտեղը կոտորվում:

— Վարժապետ, ճշմարիտ է, գելը գազան է ու մարդուն էլ շատ է վնաս տալիս, միայն էդ որ պատմեցիր, ախպեր, ինչ թաքցընեմ, մեղքս եկավ,— խոսեց ծերունի Սահակը:

— Հետո գիլին մեղք կգա՞ն որ, Սահակ բիձա,— ձեն տվեց մի հովիվ:

— Ընչի՞, գելը շունչ կենդանի չի՞,— սկսեց վիճել Սահակ բիձեն:

— Գելն ի՞նչ է որ,— մեր շան պես անասուն էլի,— խոսքն առավ քեռի Անդրիասը:— Ուղիղ շան պես: Որ էն շունն էլ չուերը գցես՝ անտեր, սոված թողնես, հալածես — կվայրենանա, կդառնա գիլի պես մի բան, էլի: Ինչպես որ էն սոված, վայրենի գելն էլ որ բերես կուշտ պահես, պահպանես, խնամես, կընտելանա, կգառնա մեր շան պես տանու կենդանի:

— Հետո գելը տանու կըլնի՞ որ, քեռի Անդրիաս:

— Կա՞վ: Շատ է պատահել: Գիլի ճուտը բռնի բեր տանու արա, տես կլինի թե չէ:

— Հապա ինչո՞ւ է ասած՝ գելն ինչքան էլ տանու անես — էլի աչքն անտառումը կլինի:

— Էդ էլ է ճշմարիտ: Մի սերնդի, երկու սերնդի աչքն անտառումը կլինի, բայց կամաց-կամաց անտառը կմոռանա — կդառնա տանու կենդանի շան նման: Եվ հենց ինքն էլ շան ցեղից է, էլի: Գելն էլ կազմված է էնպես-ինչպես շունը: Գելն էլ շան պես տարին մի անգամ 3—10, բայց սովորաբար 4—6 ձագ է ծնում, ու ինչպես շունն իրեն համար բուն է փորում կամ մի անկյուն է գտնում ու էնտեղ ծնում ու մեծացնում ձագերը, էնպես էլ գելը: Կամ գետնում բուն է փորում, էնտեղ ծնում ու մեծացնում իր ձագերը կամ ընկած ծառի փշակում, կամ մերում, կամ հենց ծամկի խիտ տեղերը: Նա էլ է էնպես սիրում իր ձագերին, ինչպես ամեն մի ծնող կենդանի: Մի վտանգի հոտ առնելիս բերանով՝ շատ զգուշ ու քնքուշ իրենց տեղից տանում է ավելի ապահով տեղ: Եվ երբեք իր բնի մոտերում որս չի անիլ ու վնաս չի տալ, որ կասկած չբերի էդ տեղի վրա:

Գիլի էգն էլ, ինչպես շանը, ավելի քնքուշ է, դունչն ավելի սուր ու պոչն ավելի բարակ: Գելն էլ պատահում է, որ նույնպես կատաղում է, ինչպես շունը: Եվ կատաղած՝ գիլից շատ են վա-

խենում ու սարսափով հեռու են փախչում բոլոր վայրենի կենդանիները:

Վերջապես գելն էլ շան պես 12—15 տարի է ապրում: Ավելի երկար շատ քերն են ապրում, ինչպես և շների մեջ:

Մի խոսքով, միլենույն կենդանիներն են. միևը խնամքի տակ ու կուշտ, մյուսը վայրենի, հալածված ու սոված: Իսկ սովը...

Սովն ինչ ասես կանի, ձեզ մատաղ: Սովը մարդին էլ կդարձնի սարսափելի, ո՞ւր մնաց էն անտառի գիլին,— խոսքը վերջացրեց քեռի Անդրիասը:

— Ծճմարիտ ես ասում, քեռի Անդրիաս,— ասացի ես: Մեզանում սովորություն չկա, միայն լուսավոր երկրներում շատ է պատահում, որ մարդիկ վայրենի անասուններին ու զազաններին բռնում են, բերում են տանու անեն. փորձում են, վարժեցնում են, բան են սովորեցնում: Մինը երկու գիլի ճուտ էր բռնել բերել տանը պահել: Կարճ ժամանակում էնքան էին ընտանիացել, որ ազատ տան մեջն ամենքի հետ էլ խաղ էին անում ու շան հետ միասին միլենույն բնումը քնում: Մի քանի ժամանակից ետը միևը սատկում է: Ասում է՝ մենակ մնացածը քանի ժամանակ էր էլ ոչ խաղ էր անում, ոչ կարգին կերակուր էր ուտում: Տխուր վեր ընկած դարդ էր անում ու ոռնում: Իհարկե հետզհետե մոռացավ ու էլ ետ աշխուժացավ: Մեծացավ, ու ասում է, մեզ հետ էնքան էր կապվել, որ որտեղ նստում էինք, միշտ կողքերիս վեր էր ընկնում և ուրիշներին չէր թողնում, որ մեզ մոտենան: Ասում է՝ վախեցիք մարդու վնաս տա, շղթայով կապեցիք, իսկ մի քանի ժամանակից ետը մի շրջիկ զազանանոցի վրա ծախեցիք: Անցավ դրանից մի տարի ու կես թե երկու տարի, լավ չի միտս, էդ գազանանոցին պատահեցի մի քաղաքում: Հետաքրքրվեցի, ներս մտա, ասի տեսնեմ իմ գելը կենդանի է, թե՛ չէ: Ներս մտա հարցրի: Ի՞նչ մի ասիլ գելը մոտիկ վանդակում պառկած է եղել: Ձենս իմացավ թե չէ՝ վեր թռավ, ճանաչեց, ուրախացավ, ու ի՞նչ էր անում, ի՞նչ էր անում, չեք կարող երևակայել: Աշխատում էր ինձ մոտենալ, պոչը շարժելով, ծմրալով դեսուզեն է ընկնում վանդակում: Ինձ էլ թվաց թե մոտիկ, հարազատ արարածի հանդիպեցի, և դուրս գալիս մի տեսակ ցավ զգացի:

Ինչ կասեք սրան, Ահա պատահած դեպքը: Եվ ճշմարիտ է ասում քեռի Անդրիասը. գելն էլ շան պես մի արարած է, միայն վայրենի, հալածված ու սոված:

Արդեն գիշերվա կեսն էր, որ մեր գրույցը վերջացրինք: Ենե-
րը դուրսը հաշում ու երկար ու ձիգ ոռնում էին:

— Անտերը գեղի վրա պտիտ է գալիս. հեռանում չի: Հան-
գրատանալու չի, մինչև էս գիշեր մի վնաս չտա: Տղե՛ք, զգույշ կա-
ցե՛ք, ապրանք չտաք ոեխը,— ասավ քեռի Անդրիասը գյուղացիներ-
րին, որ բարի գիշեր ասելով, իրար ետևից դուրս էին գնում: մեր
օթախից: Դուրսը նրանցից մինը երկար ու զիւ հե՛յ, հե՛ւ աղա-
ղակեց, ու գյուղի շնորը հեռու թաղերից սկսած ավելի կատաղի
սկսեցին հաշել ու ոռնալ խմբովին:

Սոված գեյը պտտվում էր գյուղի շորս կողմը:

1913

Ի՞՞՞ ԸՆԿԵՐ ՆԵՍՈՆ

1

Մի խումբ ընկեր երեխաներ էինք: Գյուղացի երեխաներ:

Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակութուն. ազատ
էինք միանգամայն ու խաղում էինք. ինչքա՛ն էինք խաղում: Ու
ո՞նց էինք իրար սիրում, ո՞նց էինք իրար սովորել: Սոված ժա-
մանակներս էլ՝ վազում էինք հացի տաշտիցը մի կտոր հաց առ-
նում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրաք
մտու: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ
հեքիաթ պատմում:

Մի ընկեր ունեինք, անունը Նեսու: Էնքա՛ն հեքիաթ գիտեր,
էնքա՛ն հեքիաթ գիտեր, ոչ ծեր ուներ, ոչ տուտը:

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա
չուրը-բուրը նստոտում էինք. հիացած պլըշում Նեսույի՝ ոգևորու-
թյունից գեղեցկացած դեմքին: Ու պատմում էր նա Հուրի փերի-
ներից, Զմրուխտ Ղուշից, կիս ու Մութ աշխարհից...

— Նեսու շան, Նեսու, հիմի էլ Կուր Քազավորի հեքիաթը
պատմի, հիմի էլ Քութի դուշի հեքիաթը պատմի... հիմի էլ Քա-
լալի ու Քոսակի հեքիաթը պատմի...

էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան քաց արին:
Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քսան-երեսուն երեխա:
Ամեն մի երեխի համար տարեկան երեք ուրլի վարձ էին ուզում.
էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները
չէին կարող տարեկան երեք ուրլի տան, մնացին դուրսը: Դուրսը
մնացին և իմ խաղընկերների մեծ մասը, նրանց հետ և Նեսուն:

Առաջին անգամն էր, որ մեզ ջոկում էին իրաքից և ջոկում
էին ուսումնարանն ու վարժապետը, առաջին անգամն էր, զք
մենք զլիի էինք ընկնում, թե միևս ունևոր ենք, մյուսս աղքատ:
Գեո էտոր էլ ափանջումս է Նեսույի լացի ձենը, որ իրենց դռանը
թավալ գալով գոռում էք, թե՛ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ:
Եվ դեռ ափանջումս է նրա հոր ձենը, որ կանչում էք.— Կա ո՛չ,
կա ո՛չ, ա՛յ ոչ ու փուշ, որտեղի՞ց տամ... Երեք մանեթ ունենամ՝
կտանեմ հացի կտամ, կբերեմ կտտեթ, հրես մնացել եք սոված
նստած. կա ո՛չ...

Նեսուն ու մյուս դուրսը մնացած ընկերներս գալիս էին ուսում-
նարանի շնմբում հավաքվում մեզ մտիկ անում, քաց վարժա-
պետը թող չէր անում, էնտեղից քշում էր: Դասամիջոցներին խա-
ղի ժամանակ էլ չէր թողնում մեզ հետ խազան, ասում էր՝ կողմ-
նակի, օտար երեխաները իրավունք չունեն աշակերտների խաղե-
րին խառնվելու: Եվ նրանք գնում էին ուսումնարանի պատի
տակին նստոտում՝ սպասում էին մինչև դասներս վերջանար, որ
միասին գնայինք:

էնպեսով էլ առաջին տարին ուսումնարանում ես մոտեցա
նոր ընկերների հետ, Նեսուն ու մյուս դուրսը մնացած ընկերներս
էլ տարվա վերջը էլ չէին գալիս ուսումնարանի պատի տակին
նստոտում ու սպասում ինձ:

3

Մի երկու տարի մեր գյուղի ուսումնարանումը կարդալուց
ետք՝ հեքո ինձ տարավ մեր կազմերի գյուղաբարձրը, էնտեղ
ուսումնարանը տվավ: էս արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր:
Ծնեքք արտուակ, փարսիք տանկերերով, ժաղովուրդը զուգված ու
մաքրու, ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժա-

պետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորությունն էր ինձ համար ու զարմանալի, սակայն շատ դուրեկան:

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին: Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ, մաքուր, — ու էսպես կերպարանափոխված էլ տոների արձակուրդին վերադարձա մեր գյուղը:

Նեստն ու հին ընկերներս իմացել էին, թե վերադարձել եմ, առավոտից եկել էին մեր տան շորս կողմը պտտվում էին ու պատասակերիցը ծիկրակում: Դուրս եկա, գնացի մոտեցա: Չեմ հիշում ինչպես բարեկեցինք. միայն էն է միտս մնացել, որ նրանք էլ առաջվա նման մտերիմ ու համարձակ չէին ինձ հետ: Ամենից առաջ ուշադրություն դարձրին իմ շորերի վրա: Նեստն մինչև անգամ իմ աշակերտական կարճ բլուզն ակնարկելով մի սրախոսություն արավ՝ մյուսներին դառնալով ասավ. — Կասենաս պոչատ կաշաղակ ըլի... Նրանք ծիծաղեցին: Ես վշտացա, բայց բան չասացի: Ապա թե Նեստն ձեռքը քսեց իմ շորերին, նրան հետևեցին մյուսները ու զարմանք հայտնեցին, թե ինչ փափուկ են: Էդ օրը առաջին անգամն էր, որ ես էլ ուշք դարձրի նրանց շորերի վրա ու նկատեցի, թե ինչքան էին կեղտոտ ու պատռված: Եվ առհասարակ մեր ամբողջ գյուղը թվաց աղքատ ու կեղտոտ:

4

Երկու տարուց հետո էստեղից էլ հերս ինձ տարավ մեծ քաղաք, ավելի մեծ ուսումնարան: Երբ էստեղից էլ վերադարձա՝ իմ առաջվա խաղընկերները, որ արդեն մեծ տղերք էին, եկան բարեկեցին մյուս գյուղացիների նման ու նրանց հետ էլ հեռու կանգնեցին: Միայն մի անգամ, խոսակցության մեջ, երբ ուրիշները ինձ հարցնում էին, թե հիշո՞ւմ եմ արդյոք, որ միասին կարդում էինք, Նեստն էլ հարցրեց թե՛ «Միտդ ա, որ ձեր դռան գերանների վրա գիշերները հեքիաթ էինք ասում...»:

— Վա՛, ինչպե՛ս չի միտս... Միթե կմոռանամ: Էդ իմ մանկության ամենալավ հիշողություններից մինն է, — պատասխանեցի ես:

Նեստն կարծես թե ուրախացավ, բայց դարձյալ մնաց օտար ու հեռու:

Իսկ քաղաք վերադառնալու ժամանակ էնպես պատահեց, որ Նեստյի հոր ձին վարձեցինք, որ ես հեծնեմ: Նեստն էլ պետք է ձիու հետ ոտով գար: Եվ երբ ճանապարհ ընկանք, ես ձիու վրա, իսկ Նեստն իր ցնցոտիներով ու պճեղները դուրս պրծած տրեխներով ոտով՝ ձիու ետևից — ինձ սաստիկ ծանր եկավ: Մի քիչ անցնելուց հետո հայտնեցի, թե ես ոտով գնալն ավելի եմ սիրում քան ձիով, ու ձիուց իջա: Եվ այնուհետև կամ միասին ոտով էինք գնում, կամ հերթով էինք ձի նստում: Նեստն սրա վրա ուրախացավ, բայց նկատեցի, որ նա իմ արածը վերագրում է ոչ թե իմ բարեսրտությանն ու ընկերական զգացմունքին, այլ իմ հիմարությանը: Ես վշտացա իմ մեջը, բայց ավելի մեծ վիշտը առաջս էր:

Ծանապարհին մի տեղ իջանք, հանգստացանք ու հաց կերանք: Չմերուկ ուտելու ժամանակ իմ գրպանի դանակը հանեցի տվի Նեստյին, որ ձմերուկը կտրի: Ծամփա ընկնելու ժամանակ դանակը կորավ: Նեստն պնդում էր, թե դանակն ինձ տվավ, զբրպանս դրի: Ես թեև լավ գիտեի, որ ինձ չէր տվել, բայց գրպաններս ման եկա ու ճանապարհ ընկանք: Ես պարզ նկատեցի, որ նա իմ դանակը տակով արավ, վերջն էլ ուրիշները տեսել էին ձեռն: Եվ ճանապարհ ընկանք սրտումս մի ծանր վիշտ, որ ոչ թե դանակս եմ կորցնում, այլ մի ուրիշ շատ թանկագին բան, որ Նեստյի համար անհասկանալի էր... Իսկ երբ տեղ հասանք, ու Նեստն պետք է ետ վերադառնար, ես նրա համար մի ալխալուղացու առա նվիրեցի, բացի ձիու վարձը, իսկ նա ինձ դիմեց թե՛ «Բա մի շայի փող չես բաշխո՞ւմ...»:

Ես սաստիկ ամաչեցի ու էդ շայի փողն էլ տվի: Բայց նրանից հետո, ամեն անգամ, երբ հիշում էի իմ մանկության օրերը և էն երեկոները, գերանների վրա, լուսնյակի տակ նստած մեր խումբը ու Նեստյին՝ հեքիաթ ասելիս — ամեն անգամ սիրտս լքվում էր ցավով ու ափսոսանքով:

5

— Նեստն աղքատ է... Նեստն տգետ է... Նեստն լցված է գյուղական շարքաշ կյանքի դառնություններով... Նա էլ եթե ուսում առնեք, կրթվեք, ապահով լինեք՝ լավ մարդ կլինեք, գուցե ինձանից էլ շատ ավելի լավը...

Այժմ Նեստյին հիշելիս միշտ էսպես եմ մտածում ու աշխատում:

տում եմ արդարացնեմ, լավացնեմ ու նորից սիրեմ էնպես, ինչպէս սիրում էի էն ժամանակ: Ուզում եմ՝ շարունակ էն խաղաղ, աստղային լուսնյակ գիշերների նեսոյի պատկերը լինի աչքիս առաջին, մտքիս միջին, բայց չի լինում, էլ չի լինում. իսկույննեթ առաջ է գալիս մի ուրիշ պատկեր, մի շատ ամոթալի ու ցավալի պատկեր:

Նրբ արդեն ուսումս ավարտած, կյանք մտած մարդ էի, մի անգամ էլ մեր գյուղը վերադարձա ու գնացի գյուղամեջ: Գյուղամիջում ժողովուրդը հավաքված աղմկում էր ու աղաղակում, իսկ մեջտեղը մի հաշից թոկով կապած ու զլխակոր կանգնած էր Նեսոն:

Իմ հարցին պատասխանեցին, թե՛ գողութիւնն է արել: Ես միջամտեցի, բաց թողնել տվի նրան: Բայց իմ երևակայութեան մեջ նա դեռ մնում է թե՛ արևի տակ թոկերով հաշիցը կապած ու զլխակոր, իսկ շուրջն աղմկում է մեր գյուղը:

Մեր գյուղում սովորական բան է և՛ գողութիւնը, և՛ հաշիցը կապելը, և՛ ծեծելը, բայց էս մինը իմ աչքի առաջից ու մտքի միջին չի հեռանում, ինչպես չի հեռանում և էն մանուկ Նեսոն, լուսնյակ գիշերներին գերանների վրա նստած հեքիաթ ասող Նեսոն, մաքուր ու միամիտ Նեսոն, իմ մանկութեան ընկեր Նեսոն:

1914

ԱՆԽԵՆԷՔ ՄԱՐԳԸ

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան շարձարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

Հուսահատված, մի օր նա վեր կացավ, թե՛ պետք է գնամ քոնեմ աստծուն, տեսնեմ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատութիւնից. ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ւր ես գնում, — հարցրեց Գայլը:

— Գնում եմ աստծու մոտ, — պատասխանեց աղքատը, — Գարգ ունեմ ասելու:

— Դե որ գնաս աստծու մոտ, — խնդրեց գայլը, — ասա մի սոված գայլ կա, գիշեր-ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես վերակուր հասցնում:

— Լա՛վ, — ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

— Ո՞ւր ես գնում, ախպեր, — հարցրեց աղջիկը:

— Գնում եմ աստծու մոտ:

— Նրբ որ աստծուն տեսնես, — աղաչեց սիրուն աղջիկը, — ասա այսպիսի մի աղջիկ կա՞ ջահել, առողջ, հարուստ — բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան — ի՞նչ պիտի չիմի նրա հարցը:

— Կասեմ. — խոստացավ ճամփորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չէր էր:

— Ո՛ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,— հարցրեց չոր ծառը:

— Գնում եմ աստծու մոտ:

— Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,— խնդրեց չոր ծառը,— աստծուն կասես, այս ի՞նչ բան է. բուսել եմ այս պարզ շրի փիին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում, ե՛րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր աստվածը:

— Բարի օր,— ասաց աղքատն ու կանգնեց աստծու առաջին:

— Բարով եկար,— պատասխանեց աստված,— ի՞նչ ես ուզում:

— Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին խավար. ես այնքան տանջվում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

— Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր,— ասաց աստված:

— Էլ բան ունեմ ասելու, տե՛ր,— ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալութուն արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

— Ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց չոր ծառը:

— Ասաց, քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնի, դու չես կանաչիլ,— պատմեց մարդը:

— Էլ ո՛ւր ես գնում. արի՛ ոսկին հանիր էլի, համ քեզ օգուտ կլինի, համ ինձ, դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

— Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,— պատասխանեց աղքատը,— աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,— ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

— Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինի, ուրախ ու երջանիկ կլինես:

— Դե որ այդպես է, արի՛ դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,— թախանձեց աղջիկը ճամփորդին:

— Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,— ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գայլը, հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վազեց առաջը կտրեց.

— Հը, աստված ի՞նչ ասաց:

— Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՛ ինչո՞ւ է գարուն-ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց.— աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի — կբախտավորվի, ծառին էլ ասա՝ քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես: Եկա իրանց պատմեցի աստծու խոսքերը. ծառն ասաց, դե արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե՛ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չէ՛, ախպեր, չեմ կարող, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց սոված գայլը:

— Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կգաս, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

— Էլ քեզանից անխելք մարդ որտե՞ղից գտնեմ, որ ուտեմ,— ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին:

Ինչու է, չի լինում մի պառավ: էս պառավին իր էօր կթում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ուտում: Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի փրա Կանգնում է ու էսպես խնդրում.

— Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ, կցմըցեմ, գնամ քնկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր: Պառավն ասում է.

— Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

— Կովիկ, կովիկ, կա՞թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Կովն ասում է.

— Դե գնա ինձ համար խոտ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

— Արտիկ, արտիկ, խո՞տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Արտն ասում է.

— Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

— Աղբյուր, աղբյուր, ջո՞ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Աղբյուրն ասում է.

— Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

— Աղջիկ, աղջիկ, կուժո՞ւ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Աղջիկն ասում է.

— Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է շարչու մոտ:

— Չարչի, շարչի, ուլո՞ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Չարչին ասում է.

— Դե գնա ինձ համար ձու բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

— Հավիկ, հավիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Հավն ասում է.

— Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

— Կալվոր, կալվոր, կո՞ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասնե՞ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է. մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալի, ձուն տանում է շարչուն, շարչին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուտ է տալի, կուտը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կցում է, կցմըցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում:

1907

ՌՈՒԻԿ

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալի: Տուն է գալի, դուռը զարկում ու մկրկում, էսպես կանչում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարի սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Դուռը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արոտ:

էս բոլորը թաքուն տեսնում է գալը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,

— 340 —

Ման եմ եկել սարի սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քու ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...»:

Ու գալը հեռանում է, գնում:

Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարի սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում.
— Գիտե՛ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մի՛նը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՛ս հաստ ձայն ունե՛ր: Էնպե՛ս վախեցա՛, էնպե՛ս վախեցա՛... Դուռը բաց շարի, ասի՛ չեմ ուզում, գնա՛...:

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է եղել, որ բաց չես արել, — ասավ վախեցած մայրը: — էդ գալն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես. ասա՛ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով:

1907

Լինում է, չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դեռ է թռչում, դեռ է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թռնիր վառի, հաց թխի: Ասում է.

— Նանի ջան, նանի, ոտիս փուշը հաճի, թռնիրդ վառի, ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թռնիրը վառում:

Միտը գնում է, ետ գալի, թե՛ իմ փուշը ետ տուր ինձ:

Պառավն ասում է.

— Փուշը թռնիրն եմ գցել:

Միտը կանգնում է, թե՛

— Իմ փուշը տուր, թե չէ դեռ թռչեմ, գե՛ն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառավը մի լոշ է տալի: Միտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է.

— Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը ա՛ն, կաթնի մեջ բրդի՛, կե՛ր. ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՛ լոշս տուր:

Հովիվն ասում է.

— Կեքա:

— Չէ՛, — ասում է, — իմ լոշը տուր, թե չէ գե՛ն թռչեմ, գե՛ն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու շուեն, որ մորթեն:

Ասում է. — Ի՛նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցե՛ք, քե՛ք արեք: Ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՛ իմ գառը տվեք:

Ասում են. — Մորթել ենք կերել, որտեղի՞ց տանք:

Սա կանգնում է, թե՛ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՛ դե՛ն թռչեմ, դե՛ն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ:

Ու հարսին առնում է թռչում:

Գնում է, գնում. գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է. — Աշուղ ախպեր, առ էս հարսին պահի քեզ մտա Ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թե՛ իմ հարսը ինձ տուր:

Աշուղը ասում է. — Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՛ չէ, իմ հարսը տուր, թե չէ՛ դե՛ն թռչեմ, դե՛ն թռչեմ, սաղիկդ առնեմ դուրս թռչեմ:

Աշուղը սաղը՝ տալիս է իրեն:

Սա գն. առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճրտվորտալով երգել.

Մընգլը, մընգլը.

Փուշիկ տվի, լոշիկ առա.

Լոշիկ տվի, գառնիկ առա.

Գառնիկ տվի, հարսիկ առա.

Հարսիկ տվի, սաղիկ առա.

Սաղիկ առա, աշուղ դառա.

Մընգլը, մընգլը.

Ե՛ք՛վ, ծի՛վ:

Մին էլ հանկարծ սաղը վեր ընկավ ջարդվեց. ծիտը թռավ գնաց. հեթխաթն էլ վեճաբացավ:

1907

ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Աջուրը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհք տեսնի: Վիշը ձգեց, երկաբացրեց, բայց բան չտեսավ. դիմացի ոտքը թանգարում էր:

— Բուչի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, է՛ն սարի ետե՛մ ի՛նչ կա. — հարցրեց վերեկից բազում պառկած շանը:

— Ես էլ չգիտեմ, — պատասխանեց Բուչին:

— Հապա մինչև ե՛րբ պետք է այսպես մեռնեք. արի՛ գնա՛եք մի տեսնե՛ք՝ աշխարհունս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին:

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՛ւ:

Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

— Վա՛հ, սա որտեղի՞ց դուրս եկավ, ա՛յ լավ նախաճաշիկ,— մտածեց աղվեսը ու վազեց:

— Բարի՛ լուս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

— Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աքլորը:

— Օ՛, ինչ լավ բան եք մտածել,— խոսեց աղվեսը:— Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ի՞նչ լավ էր՝ պատահեցինք: Դե՛, ցած արի, որ շուշանանք:

— Ես համաձայն եմ,— ասավ աքլորը.— տես, թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

— Որտե՛ղ է ընկերդ:

— Էն թփի տակին:

«Մրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի. էս էլ իմ ճաշը»,— մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ ջունը դուրս եկավ, աղվեսը, պո՛ւկ, փախավ, ո՞նց փախավ:

— Կա՛ց, աղվե՛ս ախպեր, մի վռաղի, մենք էլ ենք գալի, էգուս ընկեր չի լինի,— ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը:

1907

ԿԱՅԻՆ ԱԽՊԵՐ

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կտորատում:

— Ախպե՛ր, ասավ, ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք:

— Կացինն ի՞նչ բան է,— հարցրին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը շարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը: Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ ձայն տվին իրար:

— Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերը ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռիցն առան:

Կացինը առան, որ հերթով կտորեն իրենց փայտը:

Առաջին օրը տանուտերը տարավ: Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկավ գյուղամեջ:

— Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Մեծեցին, տեսան՝ բա՛ն շղառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին:

— Վա՛յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտածեցին, ու վճռեցին տանեն բանտը զցեն:

Տարան զցեցին տանուտերի մարազը: Մարազը լիքը դարման էր. զցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինք բարձրացավ:

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից թե՛ «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բան հասկացրու»:

1907

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Կինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը իր երկրումը հայտնում է.

«Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դազանակ ունեք, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

— Կպատահի՞,— պատասխանում է թագավորը.— Իմ պապն

էլ մի շիբուխ ունենր. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկ-նում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս է մի դերձակ. Ասում է.

— Ներողութիւն, թագավոր, ես վաղ պիտի գալի, ուշացաւ Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռւմեց, գնացել էի կարկատելու:

— Հա՛, լավ ես արել, — ասում է թագավորը, — բայց լավ չէիր կարկատել. էս առավոտ էլ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կտրը կոնատակին:

— Դո՛ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ, — հարցնում է թագավորը:

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

— Մի կոտ ոսկի՞, — զարմանում է թագավորը: — Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

— Թե որ սուտ եմ ասում, թագավորութեանդ կեսը տուր:

— Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում, — խոսքը փոխում է թագավորը:

— Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

1907

ՉԱՆՉԱԽ ԹԱԳԱՎՈՐԸ

Կենում է, չի լինում մի աղքատ շաղացական:

Մի պատոված քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր շաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղան ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ շաղացի շուրը թողնի, գալիս է տեսնում պանիրը չկա:

Մին էլ գնում է շուրը կապի, գալիս է տեսնում բաղանը չկա: Էս ո՞վ կլինի, ո՞վ չի լինի: Մտածում է, մտածում ու շաղացի շենքում թակարդ է լարում: Առավոտը վեր է գնում, տեսնում մի ազվես է ընկել մեջը:

— Հը՞, գող անիծված, դու՛նս կերել իմ պանիրն ու բաղանը հա՛. կաց՛ հիմի ես քեզ պանիր ցույց տամ: — Ասում է շաղացականն ու լինզը վերցնում է, որ ազվեսին սպանի:

Ազվեսը աղաչանք-աղաատանք է անում: — Ինձ մի սպանի, — ասում է, — մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես, կենդանի բաց թող, ես քեզ շատ լավուփշուն կանեմ:

Ջաղացականն էլ լսում է, կենդանի բաց է թողնում:

Էս ազվեսը գնում է, էդ երկրի թագավորի աղբանոցում ման է գալի, ման, մի ոսկի է գտնում: Վաղ է տալի թագավորի մոտ:

— Թագավորն ապրած կենա, ձեր կտորը մի տվեք: Չախախ թագավորը մի քիչ ոսկի ունի, չափենք, ետ կբերենք:

— Չախախ թագավորն ո՞վ է, — զարմացած հարցնում է թագավորը:

— Գու դեռ չես ճանաչում, — պատասխանում է ազվեսը: — Չախախը մի շատ հարուստ թագավոր է, ես էլ նրա վեզիրն եմ: Կտոր տուր, տանինք ոսկին չափենք, հետո կճանաչես:

Կտրը անում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամբարանում կտտի ճեղքում, իրիկունը ետ բերում, տալիս: — Օֆ, — ասում է, — զոռով չափեցինք:

— Մի՛թե ճշմարիտ սրանք կոտով ոսկի են չափել, — մտածում է թագավորը: Կտրը թափ է տալիս, զրնգալին մի ոսկի է վեր բնկնում:

Մյուս օրը ազվեսը ետ է գալիս, թե՛ Չախախ թագավորը մի քիչ ակն ու մարգարիտ ունի. ձեր կտոր տվեք. չափենք կբերենք:

Կտտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում. կոխում է կտտի արանքը, էլ ետ իրիկունը ետ բերում:

— Օֆ, — ասում է, — մեռանք, մինչև չափեցինք:

Թագավորը կտոր թափ է տալի, մարգարիտը դուրս է թռչում: Մնում է զարմացած, թե էս Չախախ թագավորն ինչքան հարուստ պետք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտով է չափում:

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ ազվեսը գալիս է թագավորի մոտ խնամախոս, թե՛ Չախախ թագավորը պետք է տուժնանա, քու աղջիկն ուզում է:

Թագավորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

— Իե գնացեք, ասում է, շուտ արեք, հարսանիքի պատրաստվելու տեսեք:

Քաղաքի պալատում իրար են անցնում, հարսանիքի պատ-
րաստություն են տեսնում, իսկ աղվեսը շաղացն է վազում:

Վազում է շաղացականին աչքալուս տալի, թե՛ հապա թագա-
վորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ գնանք
հարսանիք անենք:

— Վա՛յ, քու տունը քանդվի, այ աղվես. էդ ի՞նչ ես արել,—
ասում է վախեցած շաղացականը:— Ես ով, թագավորի աղջիկը ով:
Ոչ պարուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես
ի՞նչ անեմ...

— Դու մի վախենա, ես ամեն բան կանեմ,— հանգստացնում
է աղվեսն ու ետ վազում թագավորի մոտ:

Վազելով ընկնում է պալատը:— Հայ-հարա՛յ, Չախախ թա-
գավորը մեծ հանդեսով գալիս էր, որ պսակվի: Ծամփին թշնամի
զորքերը հանկարծ վրա տվին, մարդկանց կոտորեցին, ամեն բան
տարան: Ինքը ազատվեց փախալով: Չորում մի շաղաց կա, եկել է
մեղը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց անեմ, շոր տանեմ, ձի
տանեմ, գա պսակվի, շուտով գնա իր թշնամիներից վրեժն առնի:

Քաղաքը իսկույն ամեն բան պատրաստում է, տալիս աղ-
վեսին, հետն էլ շատ ձիավորներ է դնում, որ պատվով ու փառ-
քով իր փեսին պալատ բերեն:

Գալիս են հանդեսով շաղացի դռանը կանգնում: Ջաղացա-
նի քուրքը հանում, թագավորի շորերը հագցնում, նստեցնում են
եթույզ ձիուն: Երջպատված մեծամեծներով, առջևից՝ ձիավոր-
ներ, ետևից՝ ձիավորներ — էսպես հանդեսով բերում են թագա-
վորի պալատը: Իր օրում պալատ շտեպած շաղացա՛ն — շշկված,
բերանը բաց մին շորս կողմն է նայում, մին հագի շորերին է նա-
յում, խլշկոտում ու զարմանում:

— Էս ինչո՞ւ շտեպի նման դես ու դեն է նայում, աղվես ախ-
պեր,— հարցնում է թագավորը:— Կարծես տուն չլինի տեսած,
չոր չլինի հագած:

— Չէ, դրանից չի,— պատասխանում է աղվեսը:— Նայում է
ու համեմատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը որտե՞ղ, էս
որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակուրներ են բերում:
Ջաղացականը չի իմանում՝ որին ձեռք տա կամ ինչպես ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղվես ախպեր,— հարցնում է թագա-
վորը:

— Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար
միտք է անում: Չեք կարող երևակայել, տեր թագավոր, թե ինչ-
քան բան տարան և վերջապես ինչ անպատվություն էր էդ մեք
թագավորի համար: Ինչպե՞ս հաց ուտի,— պատասխանում է աղ-
վեսը հառաչելով:

— Բան չկա, դարդ մի անի, սիրելի փեսա, աշխարհք է, էգ-
պես էլ կպատահի,— խնդրում է թագավորը:— Այժմ հարսանիք է,
ուրախանանք, քեֆ անենք:

Ու քեֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի. յոթն
օր, յոթ գիշեր հարսանիք անում: Աղվեսն էլ դառնում է քավոր:
Հարսանիքից հետո թագավորը իր աղջկանը մեծ բաժինք է
տալի ու հանդեսով ճամփա դնում Չախախ թագավորի հետ:

— Կացե՛ք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ
ետևից եկեք,— ասում է քավոր աղվեսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիր է
արածում:

— Էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են.— Շահ-Մարինը:

— Պա, Շահ-Մարի անունը էլ շտաք, որ թագավորը նրա
վրա բարկացել է, զորքով իմ ետևից գալիս է, ով նրա անունը
տվավ՝ գլուխը կտրել կտա: Որ հարցնի թե ումն է, ասեք՝ Չախ-
ախ թագավորինը. թե չէ՛ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ, տեսնում է ոչխարի հոտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է:

— Շահ-Մարինը:

Հովիվներին էլ նույնն է ասում:

Վազ է տալիս վազ, տեսնում է ընդարձակ արտեր, հնձվոր-
ները միջին հնձում են:

— Էս ո՞ւմ արտերն են:

— Շահ-Մարինը:

Հնձվորներին էլ նույնն է պատվիրում:

Վազ է տալի վազ, տեսնում է անվերջ խոտհարքներ:

— Էս ո՞ւմն են:

— Շահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նույնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

— Շահ-Մար, ա Շահ-Մար,— գոռում է հեռվից վազելով:—

Քու տունը չքանդվի, միամիտ նստել ես: Քաղաքը քեզ վրա բարկացել է, մեծ զորքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղը քանդի, տակնուվրա անի, ունեցած-չունեցածդ էլ թաղավորական գրի: Մի անգամ քեզ մոտ մի վառիկ եմ կհրել: Էն աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկա, որ քեզ իմացնեմ: Շուտ արա, գըլ-խիդ ճարը տես, քանի չի եկել:

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ,— հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռվից փոշի բարձրացնելով գալիս է թագավորը:

— Փախի՛, շուտով ձի նստի փախի, էս երկրից կորի, էլ ետ չեալես:

Շահ-Մարը իսկույն նստում է իր լավ ձին ու փախչում է դեպի:

Աղվեսի ետևից գալիս են հարսանքավորները: Գալիս են գառնով, թմբուկով, երգով, զորքով, հրացան արձակելով ու աղ-մուկով:

Գալիս են Չախչախ թագավորն ու իր կինը ոսկեգոծ կառքի մեջ, նրանց առջևից ու ետևից անհամար ձիավորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են մեծ նախիր է արածում:

— Էս ո՞ւմ նախիրն է,— հարցնում են ձիավորները:

— Չախչախ թագավորինը,— պատասխանում են նախապանները:

Անց են կենում, Հասնում են սարերին: Տեսնում են ոլխարի սիպտակ հոտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է,— հարցնում են ձիավորները:

— Չախչախ թագավորինը,— պատասխանում են հովիվները:

Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:

— Էս ո՞ւմ արտերն են:

— Չախչախ թագավորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Էս ո՞ւմն են:

— Չախչախ թագավորինը:

Ամենքը մնացել են զարմացած, Չախչախ թագավորն ինքն էլ քիչ է մնում խելը թոցնի:

Էսպեսով Աղվեսի ետևից գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին:

Քավոթ Աղվեսն էնտեղ արդեն տեր է դառնել, կոթողներ:

Քյուններ է անում: Ընդունում է խնամիներին ու նորից սկսում են քեֆը:

Յոթն օր, յոթ գիշեր էլ էստեղ են քեֆ անում, ու խնամիները վերադառնում են իրենց տեղը:

Չախչախ թագավորը, իր կինն ու քավոր Աղվեսը ապրում են Շահ-Մարի պալատներում:

Իսկ թագավորից վախեցած Շահ-Մարը մինչև էսօր էլ դեռ գնում է:

1907

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզր:

Չմտոր էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարունքը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզը չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը լիքը ոսկի: Եզները լծած թողնում է, վազում է գյուղը՝ հողատիրոջ մոտ:

— Հե՛յ, աչքդ լուս,— ասում է,— քու հողումը մի կարաս ոսկի դուրս ձկավ, արի տար:

— Չէ՛, ախպե՛ր, էք իմը չի,— պատասխանում է հողատերը: — Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դուրս գա, քունն է. ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլք քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե չէ՛ քունը: Վե՛ր տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ փանդատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՛ աչքերը շորս է բաց անում: Ասում է.

— Ոչ քունն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել — իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում — ի՞նչ ոսկի — կարասը լիքը օձ...

Ջարհուրած ու կատաղած ետ է գալի: Հրամայում է պատժեն անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

— Չէ՛, թագավորն ապրած կենա, — գոռում են խեղճերը, — մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի, թե՛ ճշմարիտ, ոսկի է:

— Վա՛հ, — զարմանում է թագավորը: Ասում է. — երևի լավ շտեսա, կամ տեսածս էն կարասը չէր: — Վեր է կենում մին էլ գնում:

Կարասը բաց է անում, — դարձյալ մեջը լիքը օձ:

էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի, — շեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

— Բացատրեցեք, — ասում է, — ո՞վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում — կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում — ոսկի: էս ի՞նչ կնշանակի:

— Իրա բացատրությունն էս է, թագավոր, եթե չես բարկանալ, — ասում են իմաստունները: — Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարզե է զրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է. խոսք չի գտնում պատասխանելու:

— Լա՛վ, — ասում է, — դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից որի՞ն է պատկանում գտած ոսկին:

— Իհարկե հողատիրոջը, — ձայն է տալիս վարող գյուղացին:

— Չէ, վարողինն է, — մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

— Լա՛վ, լա՛վ, կացե՛ք, — կանգնեցնում են իմաստունները, — ի՞նչ ունեք դուք — տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, որ մեկը մի տղա ունի, մյուսը մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք փնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կոխվր վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարզե էր զրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին էստեղ, շարը էն ազահ թագավորի մոտ:

1908

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձեզ էլ, երկու ախպորն էլ: Լինում են, շեն լինում երկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ռոճիկ ստանա, զրկի տուն:

էսպես էլ մեծը վեր է կենում գնում մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կրկվի ձեն ածելը: էս հարուստը մի շլված պայման է դնում ծառային: Ասում է՝ «մինչև էն ժամանակը թե դու բարկանաս — դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ — ես տամ»:

— Ես որ հազար մանեթ չունեմ որտեղի՞ց տամ, — ասում է ծառան:

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղեն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ինչ պետք է պատահի: Ինչ ուզում են անեն, ես եմ ու շեմ բարկանալ, պրծանք գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում է լավ. համաձայնում է:
Պայմանը կապում են ու մտնում է ծառայութեան:
Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային, դրկում է արտը հնձելու:

— Գնա՛,— ասում է,— քանի լուս է հնձի, որ մութն ընկնի կգաս:

Ծառան գնում է ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգնած գալիս է տուն: Տերը հարցնում է.

— էդ ո՞ւր եկար:

— Դե արևը մեր մտավ, ես էլ եկա:

— Չէ՛, էդպես չի: Աս քեզ ասել եմ՝ քանի լուս է, պետք է հնձես: Արևը մեր մտավ, բայց տես, նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ: Սա ինչ պակաս է լուս տալի...

— էդ ո՞նց կլինի... — զարմանում է ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես,— հարցնում է տերը:

— Չէ՛, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ...

Մի քիչ հանգստանամ... — կրկնում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում: Բայց լուսնյակը մեր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալի: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում:

— Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված առձիկն էլ... — սկսում է հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես,— կանգնում է գլխին հարուստը:— Ծրբ որ բարկանում ես. մեր պայմանը պայման է: էլ շասես թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Այ պայմանի ուժով ստիպում է, ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մեջ: Հազար մանեթ շուներ, թե տար հոգին ազատ աներ, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալի հարուստին, դառն ու դատաբկ վերագանում առև:

— Հը՞, ի՞նչ արիք,— հարցնում է փոքր ախպերը: Այ մեծ ախպերը նստում է, զլուխն էկածը պատմում, ինչպես ոք պատահել էր:

— Բան չկա,— ասում է փոքրը, դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում հիմի էլ փոքր ախպերն է գնում ծառա մտնում է՛լ նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կրկվի ձեն ածելը, ու պայման է դնում, որ եթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու էս օրից էլ ծառան ազատ է:

— Չէ՛, էդ քիչ է,— հակառակում է տղեն:— Թե դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանեթ տաս, թե ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լա՛վ,— ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպերն է մտնում ծառայութեան:

Առավոտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս է գնում, տուն է գալի, էս ծառան դեռ քնած է:

— Ա՛յ տղա, դե վեր կաց է՛, օրը ճաշ դառավ:

— Հը՞, բարկանում ես դու... — զլուխը վեր է քաշում ծառան:

— Չէ՛, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում է տերը. միայն ասում եմ պետք է արտը գնանք հնձելու:

— Հա, որ էք ես ասում, ոչինչ, կգնանք, ինչ ես վտազում:

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել: Տերը դուրս է գնում, ներս է գալի, սա դեռ տրեխները հագնում է:

— Ա՛յ տղա, գե շուտ արա, հագի է...

— Հը՞, հո չե՞ս բարկանում:

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես միայն սպում էի ասել՝ ուշանում ենք...

— Հա՛, էք ուրիշ բան է. թե չէ՛ պայմանը պայման է:

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արտն են գնում, ճաշ է դառնում:

— էլ ինչ հնձելու ժամանակ է,— ասում է ծառան,— տեսնում ես ամենքն էլ ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ հետո նստում են, ճաշն ուտում: Ծաշից հետո էլ ասում է՝ «Մշակ մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չէ՛»:

Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց է, մթնեց է՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ... էս ինչ կրակի մեջ ընկա...— ըսկըսում է գոռգոռալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան:

— Չէ՛, ո՛վ է բարկանում, ես էն էի ասում թե՛ մթնել է, տուն գնալու ժամանակն է:

— Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թե չէ հո մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են հյուր է եկել:

Մառային զրկում են թե՛ գնա ոչխար մորթի:

— Ո՛րը:

— Որը կպատահի:

Մառան գնում է: Մի քիչ հետո լուր են բերում հարուստին, թե՛ հասի, որ քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց: էս հարուստը վազում է, տեսնում է՛ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է: Գլխին տալիս է, գոռում:

— էս ի՛նչ ես արել, ա՛յ անաստված, քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «ո՛ր ոչխարը պատահի՛, մորթի», ես էլ եկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի — ուրիշ ավել պակաս ի՛նչ եմ արել,— հանգիստ պատասխանում է ծառան,— բայց կարծեմ դու բարկանում ես...

— Չէ՛, բարկանում չեմ, միայն ավստոս գալիս է, որ էսքան ապրանքս փշացավ...

— Լա՛վ, որ բարկանում չես, է՛լ կծառայես:

Հարուստը մտածում է՛ ինչ անի, ոնց անի, որ էս ծառայիցն ազատվի: Պայման է կապել մինչև մին էլ գարնան՝ կրկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ որտե՛ղ են գարունն ու կրկուն...

Միտք է անում միտք, մի հնար է մտածում: Կնոջը տանում է անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում, որ «կուկու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում թե՛ արի գնանք անտառը որսի: Հենց անտառն են մտնում թե չէ, կինը ծառի վրայից կանչում է — «կուկո՛ւ, կուկո՛ւ...»:

— Ըհը՛, աչքդ լուս,— ասում է ծառային տերը. կրկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի է ընկնում տիրոջ խորամանկութունը:

— Չէ՛, ասում է, ով է լսել, որ տարու էս եղանակին, ձմեռվա կիսին, կրկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում: Ծս պետք է էս կրկվին սպանեմ, սա ինչ կրկու է...

Ասում է ու հրացանը քաշում դեպի ծառը: Տերը գոռալով ընկնում է առաջը.

— Վա՛յ չզարկես, աստծու սիրուն... սե լինի քու պատահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկա մեջը...

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես...

— Հա՛, ախպեր, հերիք էր. արի՛ ինչ տուգանք տալու եմ տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայմանն է — ես էլ պետք է տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում էն հին խոսքը՝ թե «մարդ ինչ անի, իրեն կանի»:

էսպես հարուստը խելոքանում է, իսկ փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն:

1908

ԽԵԼՈՔՆ ՈՒ ՀԻՄԱՐԸ

Երկու ախպեր են լինում. մինը խելոք, մյուսը հիմար: Խելոք ախպերը միշտ բանեցնում ու շարշարում է հիմարին: էնքան շարշարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՛

— Ախպեր, էլ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում եմ. իմ բաժինը տուր, գնամ ջոկ ապրեմ:

— Լա՛վ,— ասում է խելոքը.— էսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերը տամ. երբ ջրից բերես, ո՛ր ապրանքը գոմը մտնի — ինձ, որը դուրսը մնա — քեզ:

Ժամանակն էլ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը ջուրն է տանում, ետ բերում: Զմեռվա ցուրտ օ՛ր, մրսած անասուններ, հենց տաք գոմի

դասն են հասնում թե չէ՝ իրար ետեից ներս են թափում: Դուանը մնում է մի հիվանդ քոսոտ մոզի գերաններին քար անելիս: Էն է մնում հիմարին:

Էս հիմարը թուր վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու:

— Ա՛ մոզի, արի, հե՛յ, — կանչելով գնում է:

Մի հին ավերակի մտափայ անցնելիս էլ որ ձեռն է տալի — ա՛ մոզի, արի, հե՛յ... — ավերակի արձագանքը կրկնում է:

— Հե՛յ...

Հիմարը կանգնում է:

— Ինձ հետ ես խոսում, հա՞... —

Ավերակը ձայն է տալիս:

— Հա՞... —

— Մոզին ուզում ե՞ս:

— Ե՛ս...

— Քանի՞ մանեթ կտաս:

— Տա՛ս...

— Հիմի կտա՞ս, թե չէ:

— Չէ՛... —

— Դե էգուց կգամ, որտեղից որ է՝ ճարի՛:

— Արի՛... —

Հիմարը համաձայնում է ու մոզին ծախված համարելով ավերակի դուանը կապում է, շրվշվացնելով վերագառնում տուն:

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում գնում փողերն առնելու: Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մոզին կերել են: Գնում է տեսնում՝ ոսկորները դեռ ու դեն ցրված ավերակի առջև:

— Հը՞, — ասում է, — մորթել ես կերել, հա՛:

— Հա՞... —

— Քաղ է՞ք, թե չէ:

— Չէ՛:

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է ավերակի մտքումը կա, որ իր փողը շտա:

— Էդ իմ բանը չի, — ասում է, — առել ես պրծեչ, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը — տասը մանեթ գեղին ոսկի՛... —

— Սկի՛... —

Էս էլ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տաք թե կտաս, ավերակի խարխուլ պատերին: Մին,

երկու զարկում է. պատերից մի քանի քար են վեր ընկնում: Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած: Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին թափում է հանկարծ առաջը լցվում:

— Այ էդպես... բայց էսքանն ի՞նչ եմ անում. տասը մանեթ ես պարտ — իմ քասը մանեթը տուր, մնացածը քու փողն է, ընչի՛ս է պետք... —

Մի ոսկի վերցնում, գալի տուն:

— Հը՞, մոզիդ ծախեցի՞ր, — ծիծաղելով հարցնում է խելոք ախպերը:

— Սխալեցի:

— Ո՞ւմ վրա:

— Ավերակի:

— Հետո, փող տվա՞վ:

— Իհարկե տվա՞վ: Դեռ չէր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի քանի հասցրի, ինչ ունեթ՝ առաջիս փոցե: Իմ տասը մանեթը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի էնպես փոված:

Ասում է ու ոսկին հանում ցույց տալիս:

— Էդ որտե՞ղ է, — աչքերը շորս է անում խելոք ախպերը:

— Է՛հ, ցույց չեմ տալ, դու աչքածակ ես, էնքան կհավաքես, շալակս կտաս, որ մեջքս կկոտրի:

Խելոքը երդվում է, որ մենակ ինքը կշալակի, միայն թե տեղը ցույց տա:

— Բեր, — ասում է, — ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ ես տեսնեմ, տկոթ ես, քեզ համար նոր շորեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալիս ախպորը, տանում է մնացածի տեղն էլ ցույց տալի: Խելոքը ոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր համար նոր շորեր չի առնում:

Էս հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ:

— Պարոն դատավոր, — ասում է, — ես մի մոզի ունեի տարա ավերակի վրա ծախեցի... —

— Հերիք է, հերիք, — ընդհատում է դատավորը. — էս հիմարը որտեղի՞ց եկավ, ո՞նց թե մոզին ավերակի վրա ծախեցի... —

— վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է ուրիշներին գանգատվում, նրանք էլ են վրեն ծիծաղում:

Ու ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է պալի, պատահողին գանգատվում, բայց ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, իսկ խելոք ախպերն էլ ծիծաղում է ամենքի հետ:

1908

ԽՈՍՈՂ ՋՈՒԿԸ

1

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար: Օրակա՞ն մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ հետ ջուրն է մտնում: Էս շալակտարը գետափին նստած՝ նայում է, նայում է՞ն սիրուն ձկանն ու միտք է անում.

— Տեր աստված,— ասում է,— սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՛ սա՛ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում՝ թե չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում.

— Լսի՛,— ասում է,— մարդ-ախպեր: Ընկերներես հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են: Սա էլ տեսնում ես, ինչպես եմ տանջվում. շունչս կտրում է ջրից դուրս: Ուզում եմ էլ հո գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպես եմ ուզո՞ւմ, էնպես եմ ուզո՞ւմ... Սկ խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ...

Էսպես էր ասում ցա՛ծ, շատ ցա՛ծ ձենով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով:

Էս շալակտարի մեղքը գալիս է, առնում է հո գցում գետը:
— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քու ծնողը: Թող չտխրեն քու ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա:

— Տո՛ ախմախ,— ասում է,— էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ հետ ջուրը գցո՞ւմ... Դե քնա կորի, էլ իմ աչքին շերեաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. գնա սովից մեռի:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

— Հիմի ես ո՛ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ... — տարա-կուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն:

2

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

— Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,— հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես Գիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կնիկը:

«Լսի՛, բարեկամ,— ասում է Հրեշը:— Էս կաթնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Երեք տարին լրացավ թե չէ, հենց էն գիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք — իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ կանեմ: Համաձայն ե՞ս:

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,— մտածում է աղքատը,— կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք. մինչև երեք տարվա լրանալն էլ աստված ողորմած է: Մի տեղից մի դուռ կբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

— Համաձայն եմ,— ասում է, ու կովն առաջն անում, տանում տուն:

Ծրնք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին. և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ ով գիտի՝ ինչ կհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

— Ա՛յ թե ինչ դուրս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավություն ընդունի... — Հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում:

էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ:

— Բարի իրիկուն, ասում է, ճամփորդ մարդ եմ. մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

— Ընչի չէ, ճամփորդ ախպեր, հյուրն աստծունն է: Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուց ետը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ — իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, ու մենք էլ չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի՝ մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի:

— Բան չկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ ես, — պատասխանում է օտարականը:

Համաձայնում են. հյուրը մնում է:

Մին էլ կես գիշերին դուռը դղրդում է: — Ո՞վ է. — Հրեշը: Եկել եմ, որ եկել եմ, դե պատասխանս տվեք: — Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

— Մի՛ վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կըտամ, — ասում է երիտասարդ հյուրը ու գնում է դեպի դուռը:

— Եկել ե՞մ, — դռան ետևից ձայն է տալիս Հրեշը:

— Ես էլ եմ եկե՛լ, — պատասխանում է ներսից հյուրը:

— Որտեղի՞ց ես եկել:

— Մովի էն ափից:

— Ընչո՞վ ես եկել:

— Կաղ մոծակը թամբել եմ, վրեն նստել եմ, եկել:

— Ուրեմն ծովը պատիկ է եղել:

— Ի՛նչ պատիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի:

— Ուրեմն արծիվը ճուտ է եղել:

— Ի՛նչ ճուտ. թևերի շվաքը քաղաք է ծածկում:

— Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:

— Ի՛նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:

— Ուրեմն նապաստակը ձագ է:

— Ի՛նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գլխարկն

ու տրեխն էլ ավել:

— Ուրեմն մարդը թզուկ է:

— Ի՛նչ թզուկ, ծնկան ծերին աքլորը ծուղրուղու կանջի, ձեռքը ականջը չի հասնի:

— Ուրեմն խուլ է:

— Ի՛նչ խուլ. սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլաի:

Հրեշը մնում է կապված, մոլորված. գգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:

Մրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալի, ուրախանում, աշխարհքովը մին են լինում: Հետև էլ բացվում է բարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնա իր ճանապարհը:

— Չենք թողնի, որ չենք թողնի, — առաջը կտրում են մարդ ու կին. — դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով եւ՛ր վճարենք քո լավությունը...

— Չէ՛, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը:

— Դե, գոնե անուճոգ ասա, եթե լավությունդ կորչի, ու չկարողանանք ետ վճարել, գոնե իմանանք՝ թե ում ենք օրհնելու...

— Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի — չի կորչի: Ես հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր... — ասում է անծանոթն ու չբանում ապշած մարդ ա կնկա աչքերից:

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է չի լինում՝ մի աքլոր է լինում:

Էս աքլորը քուշուշ անելիս մի ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում, ձեն է տալի:

— Մուղրուղո՛ւ, փող եմ գտե՛լ...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ գնան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում:

Աքլորը կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանով ապրե՛ց...

Թագավորը ոսկին ետ տալիս է իր նազիր-վեզիրին, ասում է.

— Նտ տարեք իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանից վախե՛ց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

— Գնացե՛ք, — ասում է, — բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՛լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի:

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է դրեկե՛լ...

Նփում են բերում թագավորի առաջն են դնում, կանչում է.

— Թագավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուղո՛ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.

— Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՛ւ...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի — զարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են մինը էս կողմը, մյուսը էն:

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի:

— Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՛ւ...

— Զարկեցե՛ք... — հրամայում է թագավորը:

Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի:

— Մուղրուղո՛ւ...

1909

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում:

Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս շեն լինում:

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ կովելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, շես հավատում. էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ քե՛լեխն ես տալիս, թե տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՛նչ քելեխ, ի՛նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՛նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի համար է:

Կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում միառժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է՝ բարեկենդանը գալիս չի: Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռազ-վռազ փողոցով անց է կենում: Ձեռը դնում է ճակատին ու ձեն տալի:

— Ախպե՛ր, ախպե՛ր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

— Ախպե՛ր, բարեկենդանը դու հո չե՞ս:

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսնեմ ինչ է դուրս գալի:

— Հա, նա եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ նա ասում:
— Էն եմ ասում, որ մենք թո ծառան հո չենք, որ թո եղն ու բրինձը պահենք: Ի՞նչ որ պահեցինք, հերիք չէ՞ր... չես ամաչո՞ւմ... Ընչի՞ չես գալի թո ապրանքը տանում...

— Դե էլ ի՞նչ նա նեղանում, քույրիկ ջան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալիս, չէի գտնում:

— Դե արի տար:

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դեսն է անում, երեսը դեպի իրենց գլուղը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա՛, էն բարեկենդանն եկավ, իր բաները իրեն սևցրի տարավ:

— Ի՞նչ բարեկենդան... Ի՞նչ բաներ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է, մեր տունն էր ման գալի. կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տվի, տարավ:

— Վայ թու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես — հիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց:

— Այ էն կողմը:

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից: Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է: Գլխի է ընկնում, որ սա էն կնկա մարդը պետք է լինի:

Գալիս է հասնում իրեն:

— Բարի օր, ախպերացու:

— Աստծու բարին:

— Հո էս ճամփովը մարդ չի անց կացավ:

— Անց կացավ:

— Ի՞նչ ունեիր շալակին:

— Ծղ ու բրինձ:

— Հա, հենց էդ եմ ասում: Ինչքա՞ն ժամանակ կլինի:

— Բավականին ժամանակ կլինի:

— Որ ձին քշեմ, կհասնե՞մ:

— Որտեղի՞ց կհասնես, դու ձիով, նա ուռով: Մինչև թու ձին շորս ոտը կփոխի — մի՞ն, երկո՞ւ, երե՞ք, շո՞րս — նա երկու ոտով մե՛կ-երկո՞ւ, մե՛կ-երկո՞ւ, մե՛կ-երկո՞ւ, շուտ-շուտ կգնա, անց կկենա:

— Բա ինչպե՞տ անեմ:

— Ինչպես պետք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մտա, դա էլ նրա պես ոտով վազի, գուցե հասնես:

— Հա՛, էդ լավ ես ասում:

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում: Սա հեռանում է թե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծոում, քշում:

Էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում է շհասավ, ետ է դառնում: Ծո է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա: Գալիս է տուն: Նորից սկսում են կովել, մարդը եղ ու բրինձի համար, կնիկը՝ ձիու:

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կովում են դեռ: Սա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

1910

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍՎԱՆԸ

Հորս կնունքով, մարս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Հաղին էր, Հյուղին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուս ու փուս գնացինք, որտեղ աճ էր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացի՞նք, գնացի՞նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մեջ էլ ըսկի ջուր չկա: Մին էլ, բ՛հ, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են ճշում երեք հատ սիպ-տակ բազ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

— Հաղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Թե՛ թվանք շանեմ:

— Հյուղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Ծս էլ շունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք էլ շունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՛ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փովեց էսպես — ամեն թևը հինգ գազ ու կես...

— Հադի, դանա՛կ...

Թե՛ դանակ շունեմ:

— Հյուդի, դու...

— Ծս էլ շունեմ:

— Չատի՛, Մատի՛...

— Մենք էլ շունենք...

— Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան շունի:

էս անբերան դանակը քաշեցինք: Հադին մորթեց, չկարաց. Հյուդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բադ մի ասիլ — մի գոմեշ ասա: Հադին շալակեց, չկարաց, Հյուդին շալակեց, չկարաց, Չատին չըկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսանք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շենլիկ չկա: էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը երեք պառավ, երկուսը մեռած, մընի բերնումն էլ շունչ չկա:

— Տղերք, ասինք, եկեք բազով փլավ անենք:

էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը ծակ, մինն էլ իսկի տակ շունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բազն ու բրինձը, անկրակ եփեցինք: Ծփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՛կ, վրա եկանք, կերա՛նք, կերա՛նք. ոչ աչքներս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ:

ԱՆՔԱՆ ՀՈՒՌԻՆ

Լինում է, չի լինում մի կնիկ: էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուրի: Մի ծուլ, անշնորհք աղջիկ: Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է,

Բամբակը կորիզոտ է:

Մաստակ պիտի, որ ծամեմ,

Կըտերը տիտիկ անեմ,

Անցնողին մըտիկ անեմ.

Ուտեմ, խմեմ,

Մթնի, քնեմ:

Հարևանները անունը դնում են Անբան Հուրի: Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի. — լիզրը գզող, լիզրը մանող, համ խճճող, համ խճճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատնեքը ոսկի:

էս գովասանքը գնում մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում: էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուզածն էլ հենց սա է, որ կա: Գլխապատառ գալիս է Անբան Հուրին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տունը: Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռը բամբակ է առնում տալիս կնկանը, թե՛ ես գնում եմ հեռու տեղեր առուտուրի, դու էլ էս բամբակը գզի, մանի, գամ տանեմ ծախեմ, հարստանանք:

Անբան Հուրին է, իրեն համար մաստակ ծամելով ման է գալի: Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կոկոում են:

— Փեփե՛լ... Կեկե՛լ... Փեփե՛լ... Կեկե՛լ...

— Վո՛ւյ, աղջի Փեփե՛լ, Կեկե՛լ, — ձեն է տալի անբան Հուրին, — որ բամբակը բերեմ ձեզ տամ, կգզե՛ք...

— Բե՛ր, բե՛ր, բե՛ր...

Անբան Հուրին ուրախանում է: Գնում է բամբակը կրում բերում, ածում գետը:

— Դե գզեցեք, մանեցեք: Մի քանի օրից ետ կգամ, մանածը կտանեմ, որ ծախենք:

Գնում է մի քանի օրից ետ գալի:

Գորտերը էլի կոկոում են.

— Փեփե՛լ—Կեկե՛լ... Փեփե՛լ—Կեկե՛լ...

— Աղչի Փեփե՛լ, Կեկե՛լ, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկոսլ, իսկ մանածը շեն բերում: Հուսիսն մին էլ որ նայում է, աչքովն ընկնում է գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը:

— Վո՛ւյ,— ասում է,— քոռանամ ես, տե՛ս, համ դղել ու մանել են, համ խալիչա են գործել իրենց համար:

Զեռը ճակատին է դնում ձեռն տալի:

— Դե որ խալիչա եք գործել, մեր բամբակի փողը բերեք:— Զեն է տալի ու ոտը փոխում է, մտնում ջուրը: Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի: Հանում է տեսնում՝ մի կտոր ոսկի: Փեփե՛լին ու Կեկե՛լին շնորհակալություն է անում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն: Մարդն էլ առուտուրի տեղիցն է գալիս: Գալիս է տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ ոսկու կտոր:

— Այ կնիկ, էս ի՞նչ ոսկի է:

Թե՛ բա շես ասիլ բամբակը Փեփե՛լի ու Կեկե՛լի վրա ծախեցի. քամբակի փողն է:

Մարդը ո՛նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախանաք: Զոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, գովում է, շնորհակալություն է անում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ է մեծացրել: Քեֆ է սարքում. նստում են քեֆի:

Զոքանչը խորամանկ կին է լինում: Իմանում է, թե բանը ինչպես է պատահել. վախենում է փեսան էլի աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի: Քեֆի լավ ժամանակ մի բղեղ է ներս մտնում ու բըռուցնելով պտտվում սենյակում: Էս զոքանչը վեր է կենում գլուխ է տալի բղեղին: Ասում է.

— Բարով եկար, մորքուր ջան, ո՛նց ես. որտե՞ղ ես, էսքան ժամանակ շես երևում... Ախր քեզ ո՞վ էր ասում էդքան բան անես, որ էդ օրն ընկնես...

Փեսան մնում է զարմացած: Ասում է.

— Այ մեր, խելագարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց. էդ բղեղին էդ ի՞նչ ես ասում — մորքու՛րս օրն է...

Զոքանչը թե.— Այ որդի, քեզանից ինչ թարքենմ, դու էլ իմ որդին ես: Զես ասիլ էս բղեղն իմ մորքուրն է: Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր: Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուշ եկավ, պստիկացավ. էնքան պստիկացավ, որ դառավ

բղեղ: Մեր ցեղն էնպես է: Շատ աշխատասեր ենք: Բայց աշխատելուց պստիկանում, բղեղ ենք դառնում:

Էս որ փեսան լսում է, վախեց քիչ է մնում պոռը ճաքի. էն է լինում որ էն, արգելում է Հուսիսն ձեռն էլ բանի շտա, որ մորքուրի նման բղեղ չդառնա:

1011

ՔԵՑ ԱՆՈՂԻՆ ՔԵՑ ԶԻ ՊԱԿՍԻԼ

Ա

Ժամանակով Բաղդադ քաղաքում նստում էր Հարուն Ալ Ռաշիդ թագավորը: Հարուն Ալ Ռաշիդ թագավորը սովորություն ուներ՝ շորերը փոխած ման էր գալիս իմանալու, թե ինչ է կատարվում իր մայրաքաղաքում: Մի գիշեր էլ էսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով: Մի աղքատ տնակից երգի ու նվագածուության ձայներ է լսում: Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրվում է ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դեմը փռած կարպետի վրա նստոտած տան տերն ու երաժիշտները: Աղքատ ընթրիքի շուրջը բոլորած նվագում են, երգում ու զվարճանում:

— Խաղաղություն ձեզ, ո՞վ ուրախ մարդիկ,— ողջունում է դերվիշն ու խոնարհություն է անում տան տիրոջը:

— Բարով եկար, դերվիշ բաբա, համեցեք, միասին ուտենք աստղճու տված մի կտոր հաց ու ժիսախն ուրախանանք,— խընդրում է տան տերը: Դերվիշին էլ նստեցնում են իրենց հետ ու շարունակում են քեֆը:

Դիշերվա մի ժամին տան տերը երաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում: Երբ երաժիշտները հեռանում են՝ դերվիշը տան տիրոջը հարցնում է.

— Անունդ ի՞նչ է, բարեկամ:

— Հասան:

— Ամոթ չլինի հարցնելը, Հասան ախպեր, ի՞նչ արհեստի

տեր եւ դու, ինչքան փող ես աշխատում, որ էսպես քեֆով ես անց կացնում քո ժամանակը:

— Քեֆը շատ փողով չի լինում, դերվիշ բարա,— պատասխանում է տան տերը:— Ամենաշնչին ապրուստն էլ կարող է մարդ ուրախ վայելել: Ես մի փինաչի եմ, շուստեր եմ կարկատում, օրը մի շնչին բան եմ վաստակում: Երեկոները բերում եմ մի մասը ապրուստի եմ տալիս, մյուս մասն էլ էս երաժիշտներին, որ տեսար: Նստում ենք, ուրախանում: Թե քեզ նման մի ազնիվ հյուր էլ աստված հասցնում է՝ ալիլի լավ:

— Անպակաս լինի քո ուրախությունը, ո՛վ Հասան, բայց եթե հանկարծ աշխատանքիդ էդ բարակ աղբյուրն էլ կտրի՝ ի՞նչ պիտի անես:

— Ինչո՞ւ է կտրում, դերվիշ բարա:

— Օրինակ, թագավոր է ու թագավորի քմահաճույք. հանկարծ հրաման արավ, որ էլ փինաչուց չպիտի լինի:

— Է՛հ, թագավորի դարդը կտրե՛լ է ընկնի փինաչիների ետևից... կամ ի՞նչ են արել նրան փինաչիները: Երբ էդպես բան կպատահի, էն ժամանակ կմտածենք. այժմ քնենք, դերվիշ բարա: Աստված ողորմած է. քեֆ անողին քեֆ չի պակսիլ: Աշխարհքի բան է՝ ինչպես բռնես՝ էնպես էլ կերթա:

— Լա՛վ, աստված տա, որ էդպես լինի,— բարեմաղթում է դերվիշն, ու քնում են:

Բ

Առավոտը վաղ դերվիշը գնում է: Նրա գնալուց հետո մունետիկները լցվում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները, գոռալով հայտարարում, թե թագավորի հրամանն է, փինաչիների խանութները փակ պիտի մնան. էս օրվանից էլ ոչ ոք իրավունք չունի էդ արհեստով պարապելու: Զանցառուների գլուխները կթռչեն:

Խեղճ Հասանի ձեռքից էլ բիզը խլում են, վզակոթին տալով գուրս անում իր նեղլիկ խանութից ու դուռը փակում:

Մյուս գիշերը, դարձյալ դերվիշի շոր մտած, Հարուն Ալ Ռաշիդ թագավորը գնում է քաղաքը շրջելու: Դարձյալ անցնում է էն փողոցով, ուր ապրում էր ուրախ Հասանը: Դարձյալ երգի ու երաժշտության ձայներ է լսում նրա տանից: Ներս է մտնում:

— Օ՞, բարով, բարով, դերվիշ բարա. համեցեք, նստիր քո տեղը:

Նստում են, ուտում, խմում, ածում, երգում, ուրախանում մինչև կես գիշեր:

Կես գիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում: Մնում են տան տերն ու հյուրը:

— Գիտե՛ս ինչ պատահեց, դերվիշ բարա:

— Ի՞նչ պատահեց:

— Հենց էն, ինչ որ դու գուշակեցիր երեկ իրիկուն: Էսօր թագավորը հրաման հանեց — մեր արհեստն արգելեց...

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է հյուրը:— Հապա ո՞րտեղից փող գտար, որ էս գիշեր էլ քեֆ սարքեցիր:

— Մի կավե կուժ եմ գտել, հիմի էլ շուր եմ ծախում: Օրական ինչ աշխատում եմ՝ մի մասը տալիս եմ ապրուստի, մյուսը՝ երաժիշտներին ու դարձյալ քեֆ եմ անում:

— Իսկ եթե թագավորը շուր ծախելն էլ արգելի՝ էն ժամանակ ի՞նչ ես անելու:

— Զուր ծախելով թագավորին ի՞նչ վնաս ենք տալի, որ արգելի: Եվ ինչո՞ւ էսօրվանից դարդ անեմ դրա համար: Երբ որ կարգելի, էն ժամանակ կմտածեմ: Մի՛ վախենար, բարեկամ, երբեք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկյուն, որ ես էնտեղ ուրախանամ:

— Անպակաս լինի ուրախությունը քո օջախից, ով Հասան,— բարեմաղթում է դերվիշն ու հեռանում:

Գ

Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում. շուրը աստըծունն է, և էսօրվանից ոչ ոք իրավունք չունի փողով ծախելու: Պատուել բոլոր շրկիւրների տիկերն ու ջարդել նրանց կժերը:

Աղքատ Հասանի կուժն էլ ջարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ դրկում:

Մյուս գիշեր թագավորը կրկին դերվիշի շոր է հագնում ու գնում քաղաքը շրջելու: Կրկին մոտենում է ուրախ Հասանի տանը: Դարձյալ ուրախության և երգի ձայներ: Ներս է մտնում:

— Ա՛յ, դերվիշ բարա՛, համեցե՛ք, համեցե՛ք, նստիր քո տեղը, քեֆ անենք, ցերեկը երկարացնենք, գիշերը կարճացնենք: Ուրախանանք, դերվիշ բարա, ավելի լավ է ուրախանալ, քան տրտմել:

— Իհարկե, ուրախությունը ավելի լավ է: Ամենքս էլ մեռնելու ենք, ո՛վ կարող է, թող ուրախանա,— բացականչում է դերվիշն ու նստում Հասանի կողքին:

Գիշերվա մի ժամին երգիչներն իրենց վարձն առնում են ու հեռանում: Մնում են դերվիշն ու տանտերը:

— Հասան ախպեր, էսօր ի՛նչ լսեցի. ասում են թագավորը արգելել է ջուր ծախելը, ճշմարի՛տ է արդյոք:

— Ինչպե՛ս չէ, ի՛նչպես չէ, ամենքիս ջրի ամաններն էլ ոչնչացրին: Ա՛խպեր, դու կատարջալ մարգարե ես եղել. ինչ ասում ես՝ մյուս օրը կատարվում է:

— Հապա ի՛նչպես է, որ դու գարձյալ քեֆ ես անում: Ո՛րտեղից ես գտել էս փողը:

— Երանի թե մարդու պակասը փողը լինի: Փողի գտնելը հեշտ է, դերվիշ բարա: Գնացի մի գործատիրոջ մշակ մտա. օրական մի բան է տալիս. բերում եմ մի մասը ապրուստիս եմ անում, մյուսը երաժիշտներին եմ տալիս ու շարունակում եմ իմ քեֆը: Բանը մարդու սիրտն է, դերվիշ բարա:

— Ես իմ հոգին, արժե, որ էդ սրտով թագավորի պալատական լինեիր դու,— բացականչեց դերվիշը:

— Վա՛հ, դերվիշ, քո ասածները կատարվում են ճշտությամբ, հիմի որ էս խոսքդ էլ կատարվի՛:

— Ինչո՞ւ չի կատարվի, աշխարհքում անկարելի բան չկա,— պատասխանեց դերվիշն ու բաժանվեցին:



Առավոտը վաղ տերության պաշտոնյաները կարեցին Հասանի աղքատ տնակի դուռը:

- Էստե՛ղ է կենում քեֆ սիրող Հասանը:
- Ես եմ,— պատասխանեց զարմացած Հասանը:
- Թագավորի հրամանով հետեիր մեզ:

Ուղիղ պալատը տարան Հասանին: Հայտնեցին, որ թագավորը իրեն պալատականի պաշտոն է տվել: Պալատականի զգեստ

հագցրին, մի թուր էլ կապեցին մեջքը ու փանգնեցրին պալատի մուտքերից մեկի առջև: Ամբողջ օրը էն մուտքի առջև պարապ կանգնեց Հասանը: Իրիկունը որ մթնեց, դատարկ ճամփու գրին առն, թե՛ գնա, առավոտը ետ կգաս քո տեղը կանգնելու:

Գիշերը դարձյալ դերվիշի շոր մտավ Հարուն Ալ Ռաշիդ թագավորն ու գնաց քաղաքը շրջելու:

Գնաց մոտեցավ Հասանի տանը: Ականջ դրեց: Զարմանքով լսեց, որ դարձյալ հեշում են երգն ու երաժշտությունը: Հասանը քեֆ է անում դարձյալ: Ներս մտավ:

— Դերվի՛շ, դերվի՛շ, քո տունը չքանդվի, արի է՛. երեկվա խոսք էլ կատարվեց, թագավորն ինձ պալատում պաշտոն է տվել:

- Ի՛նչ ես ասում:
- Աստված վկա:
- Եվ երևի շատ փող է տվել...
- Չէ՛ ինչ փող. մի գրոշ չտվին: Գատարկ տուն ղրկեցին:
- Հապա որտեղի՛ց ես փող գտել, որ դարձյալ քեֆ ես անում:

— Նստի՛ր, ասեմ որտեղից: Մի թուր են կապել մեջքս: Իրիկունը տուն գալիս մտածեցի, թե՛ հո ես մարդ չեմ սպանելու: Տարա պողպատի շեղբը (մեջը) ծախեցի, պողպատի փոխարեն փայտ շինել տվի, մեջը դրի՛ եկա տուն: Եկա պողպատի փողով քեֆ սարքեցի: Լավ եմ արել. չէ՛, դերվիշ. ավելի լավ է ուրախություն ունենալ, քան մարդ սպանելու սուր:

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց դերվիշը:— Լավ անելը՝ լավ ես արել, Հասան, բայց եթե էգուց քեզ թագավորը հրամայի, թե՛ կտրի էս հանցավորի գլուխը՝ ի՛նչ ես անելու:

— Բերանդ բարի բաց արա, ա՛յ չարագուշակ դերվիշ,— բարկացավ Հասանը:— Հակառակի նման ինչ էլ ասում ես, կատարվում է. չե՛ս կարող մի լավ բան ասել...

Ու շատ վշտացավ Հասանը: Սիրտը երկյուղ ընկավ, ամբողջ գիշերը չկարողացավ քնի:

Իրավ որ, մյուս օրը թագավորը կանչեց Հասանին ու ամբողջ արքունիքի առջև հանդիսավոր հրամայեց, որ մի հանցավորի գլուխը կտրի:

- Հանիր թուրդ ու կտրի էս հանցավորի գլուխը:
- Ապրած կենաս, մեծ թագավոր,— պատասխանեց սարսա-

փած Հասանը,— ես իմ օրում մարդու գլուխ չեմ կտրել, չեմ կարող: Փորձված մարդիկ շատ կան քո պալատում. հրամայիր մի ուրիշը կտրի...

— Ես քեզ եմ հրամայում,— սաստեց թագավորը,— եթե մի վայրկյան էլ ուշացրիր, գլուխդ կթուչի: Հանի՛ր թուրդ...

էս խոսքի հետ թշվառ Հասանը մոտեցավ հանցավորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դեպի երկինք.

— Տեր աստված, արդարն ու մեղավորը դու գիտես: Եթե էս մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թոցնեմ սրա գլուխը, իսկ եթե արդար է, թող փայտ դառնա իմ թուրը...

Ասավ, դուրս քաշեց թուրը... Փա՛յտ: Հրաշքի վրա պալատականները մնացին ապշած: Էստեղ Հարուն Ալ Ռաշիդ թագավորը փառ-փառ ծիծաղեց ու ամեն բան բաց արավ, պատմեց իր պալատականների առջև: Շատ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին թե՛ ուրախութուն սիրող Հասանին, թե՛ թագավորին: Ծիծաղեց մինչև անգամ էն դժբախտ հանցավորը, որ շոքած, վիզը մեկնած սպասում էր թրի զարկին: Թագավորը բաշխեց հանցավորին իր կյանքը, իսկ Հասանին դառնալով՝ հուշակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, որ միշտ աշխատի ու անպակաս, ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորեցնի ուրախ ապրել աշխարհքում:

1911

ԵՂԵՄԱԿԱՆ ԾԱՂԻԿԸ

Ժամանակով մեր աշխարհքում մի վաճառական է լինում: էս վաճառականը ունենում է մի աղջիկ՝ անունը Մաղիկ: Մաղիկ որ ծաղիկ, էնքան քնքույշ, էնքան նախշուն, էնքան սիրուն է լինում:

Հերը անշափ սիրելիս է լինում աղջկանը: Մի անգամ էլ օտարութուն գնալիս հարցնում է.

— Ի՞նչ կուզես քեզ համար բերեմ:— Թե՛ եղեմական ծաղիկը կուզեմ ինձ համար բերես:— Լավ, ասում է, կբերեմ:

Գնում է աշխարհքից աշխարհք անց է կենում, իր առուտուն անում է, իր գործը պրծնում, ուզում է աղջկա համար էլ եղեմական ծաղիկ գտնի, որ տուն գա: Դես է հարցնում եղեմական ծաղիկ, դեն է հարցնում եղեմական ծաղիկ, ոչով չի իմանում, թե ինչ բան է եղեմական ծաղիկը կամ որտեղ է բացվում: Վերջը մի ծեր մարդ է պատահում: էս ծեր մարդը մի ճամփա է ցույց տալի. ասում է էս ճամփով որ գնաս, էսինչ տեղը կգտնես քո հարցրած ծաղիկը: Բայց զգույշ կաց Միպտակ դեից, նա եղեմական ծաղիկն հսկում է:

Հոր սիրտ է: Մերունու ցույց տված ճամփեն բռնում է գնում: Գնում է, գնում, շատ է գնում թե քիչ, դուրս է գալիս էնտեղ, որտեղ բացվում է եղեմական ծաղիկը: Հենց հասնում է ծաղիկը պոկում է թե չէ, մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ: Մարդ ասես, մարդ չի, գազան ասես, գազան չի, բայց գազանի նման մոնչում է.

— Ո՛ւր պոկեցիր իմ ծաղիկը... քո մահն է հիմի...

— Քո մահն է հիմի... — ձեն է գալի ամեն կողմից...

Մարդը ոչ մեռած, ոչ կենդանի՝ հրեշի առաջն է ընկնում:

— Ներիր,— ասում է,— ո՛վ հզոր... իմ աղջիկն էր ուզել...

— Կներեմ,— կանչում է հրեշը,— միայն էն պայմանով, որ էդ աղջիկը ինձ տաս:

— Համաձայն եմ:

— Որ համաձայն ես՝ քեզ եմ բաշխում քո կյանքը: Գնա: Հենց որ ձեր տան դիմացի սարը սիպտակի — էդ իմ նշանն է, կգամ Մաղիկին տանելու:

Դու մի ասիլ Միպտակ դեք ինքը հրեշն է, որ կա:

Վաճառականը վերադառնում է տուն: Աղջիկը միամիտ առաջն է վազում, վզովը փաթաթվում: Հերը համբուրում է՝ եղեմական ծաղիկը տալիս իրեն, իսկ պատահած դեպքն ու իր խոստումը թաքցնում է: Թաքցնում է, բայց ինքն իր մեջ միտք է անում ու տխրում: Քանի օրերն անց են կենում, էնքան ավելի է տխրում: Մի առավոտ էլ վեր է կենում տեսնում իրենց տան դիմացի սարն արդեն սիպտակել է: Լաց է լինում: Պատճառը հարցնում են. էլ չի կարողանում ծածկի, պատմում է, թե՛ հապա չեք ասիլ էսպես-էսպես բան է պատահել, ես էլ խոսք եմ տվել, հիմի Միպտակ դեք գալու է Մաղիկին տանի:

— Բան չկա, հայրիկ,— ասում է Մաղիկը,— դու լաց մի լինի, ես կերթամ Սիպտակ դեկի հետ. ինչ կլինի կլինի:

Այնինչ Սիպտակ դեք արդեն դուռը կտրել է ու մոնչում է.

— Ո՛ւր է Մաղիկն, ո՛ւր... ինձ տո՛ւր...

Մոնչում է ու նրա սառը շնչից դողում են ծառերը, աշխարհքը գունատվում. ի՛նչ պետք է անեին խեղճ մարդիկը: Զուգած, զարդարած, եղեմական ծաղիկը ձեռքին դուրս են բերում Մաղիկին հանձնում են Սիպտակ դեկին, որ շարախինդ սուլոցով ու ազահ ոռնոցով, սառով, սևով, հողմի թևով իսկույն հափշտակում է տանում: Տանում է Մասիսի մեծ վիհը: Էնտեղ, Մասիսի էն մեծ վիհում, էն անմատչելի, միշտ մոռյլ ու միշտ սառն աշխարհքում կանգնած էր իր բյուրեղյա ապարանքը: Էն ապարանքից իջնում էր նա, սառով ու սարսափով աշխարհքը պատում, հափշտակում ասնում ամեն կյանք ու կենդանություն: Մաղիկին էլ տանում է փակում էն բյուրեղյա ապարանքում:

Էսպես ամիսներ են անց կենում: Մի անգամ էլ, գարնան սկզբին, երբ Սիպտակ դեք տանից դուրս է գնում, աղջիկը վեր է կենում փախչում: Ծտ է գալի դեք՝ տեսնում է՝ Մաղիկը չկա: Կատաղում է, հավաքում է իր բոլոր դիվական ուժն ու մրրիկի նման սուրալով, օձի նման սուլելով՝ ընկնում է ետևից: Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած: Ծտ է նայում տեսնում է Սիպտակ դեք գալիս է: Գալիս է, ո՛նց է գալիս, աստված ետ ու հեռու անի: Սարսափից ճչում է, օգնություն է կանչում: Կանչելու հետ, աստքուն հրամանով, առաջը մի դուռն է բացվում: Էն դանովը մտնում է սարի մեջն, ու կրկին դուռը փակվում է դեկի առաջին:

Ավելի է կատաղում Սիպտակ դեք. իր լայն թևերով բամփում է Արագածի գագաթին ու մոնչում.

— Ո՛ւր է Մաղիկն, ո՛ւր... ինձ տո՛ւր...

Սա էստեղ թռչ մոնչա, մենք գնանք Մաղիկի ետևից, տեսնենք էն կախարդական դոնից որ մտավ, ինչ եղավ:

Մաղիկը էն կախարդական դոնից ներս է մտնում թե չէ, դուրս է գալի մի դրախտական այգի, որտեղ հազարավոր ձայներ երգում են.

Զմբուխտ պալատում, սեկի դագաղում,
Պառկած է շարի ուժով կախարդված,
Պառկած է Արին ոչ մեռած, ոչ քուն,

Ու աշխարհքն ամեն սե սուգ է մտած:
Պառկած է մինչև օրը ցանկալի,
Էն պայծառ օրը, երբ որ նա կրթա,
Կրթա նոր կյանքով ու նոր սիրով լի,
Կարտասովի անույշ ու համբույր կըտա:

Առաջ է գնում Մաղիկը, հանկարծ այգին լցվում է զվարթ աղմուկով ու տարածվում են ուրախ երգի ձայները.

Ահա եկավ, հասավ շքնաղ
Իր թագուհին, իր սիրելին,
Հիմի կեչի պաղ դագաղից
Մեր բայ Արին-Արմանելին:
Հիմի կեչի թագավորը,
Հզոր Արին-Արմանելին
Ու կրծպտան վառ աչքերը
Ողջ աշխարհին, ծաղկին, ծըլին:
Հիմի կրկին կախարդանքը
Չար թշնամու, Սիպտակ դեկի,
Հիմի կրթա գալուր կյանքը,
Բույրը ծաղկի, շողն արևի:

Ծվ ճիշտ որ, Մաղիկը գնում է, ինչ է տեսնում. այգու մեջ մի զմբուխտ պալատ, պալատի մեջ ոսկի դագաղ, դագաղի մեջ մի ջահել, գեղեցիկ երիտասարդ, որ ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրեն հազիվ տրըփում է: Տեսնում է թե չէ, սիրտը փուլ է գալի, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է համբուրում: Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին. երիտասարդը հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մինը:

Դու մի՛ ասիլ՝ հենց ինքը Արին-Արմանելին է, որ կա:

— Ո՛վ ես դու, սիրուն աղջիկ,— հարցնում է Արին-Արմանելին,— և ինչպես ընկար էս աշխարհքը:

Ու Մաղիկը կանգնում պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես ինքը գերի էր եղած Սիպտակ դեկին, որ այժմ էլ ետևիցն է ընկել ու հալածում է իրեն:

— Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձայնը.— պատասխանում է Արին-Արմանելին: Ինձ էլ նա է կախարդել ամիսներ առաջ ու պցել էս մահանման քնի մեջ: Էսպես է անում ամեն տարի: Պետք է էսպես էլ մնայի, մինչև մինը խորտակի նրա շար կախարդանքը: Գու եղար էդ մինը: Այժմ ես դուրս կգնամ նրա դեմ:

Ասելն ու անելը մին է լինում: Առնում է կայծակի թուր ու դուրս է գալի: Երկու թշնամի ուժերը պատահում են իրար. բացվում է օրհասակոխի վր: Զարկում են զարկվում — երկինք ու գետինք իրար են խառնվում: Մութն ամպերում մոնչում է Սիպտակ դեք, Արին-Արմանելին ահավոր որոտում ու շողացնում է կայծակի թուրը. երկիրը դողում, դղրդում է հիմքից: Կովի վերջում պարտված-զարկված Սիպտակ դեք վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մոռյլ թագավորութունը, Մասիսի էն մեծ վիհը, դարձյալ փակվում է իր բյուրեղյա սառն ապարանքում: Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին:

Ու աստվածային հանդես է բացվում Արաքսի հովտում: Արին-Արմանելին պսակվում է Մաղիկի հետ: Բնությունը առատորեն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, ինս ու ջինս, մրջյուն ու թռչուն իրար են խառնում իրենց զվարթ աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ-կարմիրը՝ ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում ու աշխարհքովը մին ժպտում է գարնան կենսատու արևը:

Ու էսպես կրկնվում է ամեն տարի, որովհետև ամեն տարի Սիպտակ դեք կախարդում է Արին-Արմանելիին ու հափշտակում է սիրուն Մաղիկին:

1911

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

1

Լինում է, չի լինում մի խեղճ մարդ՝ անոսնը Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. էնքա՛ն էլ վախկոտ, էնքա՛ն էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնգա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնգա հետ շեմքն է դուրս գա-

լի: Որ շեմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրքքճրքքան լուս-լուսնյակ գիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է՛... Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդրստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...

Կնիկը թե.

— Զենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա... Նազարը թե.

— Ա՛նզգամ կնիկ, ինչո՛ւ շես թող անում ես գնամ քարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Էլ ի՛նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՛ւ եմ գրակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կովում է՝ կնիկը տուն է մտնում, դուռը փակում:

— Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի: Էս Նազարս մնում է դռանը: Վախից լեղապատառ է լինում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Շարը կտրած գնում է մի պատի տակ կուշ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լուսը բացվում է: Նազարը խռոված պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա տուն տանի, ու միտք է անում: Ամառվա շոգ օր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի — ճանճերը գալիս են սրա քիթ ու պոռնգին վեր գալի, լըցվում: Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են առաջին վեր թափում:

— Վա՛հ, էս ինչ էր... — մնում է զարմացած:

Ուզում է համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

— Վա՛հ,— ասում է,— ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՛նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

— Տե՛րտեր, օրհնյա ի տեր:

— Աստված օրհնի, որդի՛ս:

— Տե՛րտեր, բա շես ասիլ էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործութունը ու հետն էլ հայտնում է,

որ պետք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տեր-
տերը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան իմանան: Տեր-
տերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաչրն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի
ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նըս-
տում ու գլուղից հեռանում:

2

Իրենց գլուղից դուրս է գալի, մի ճամփա է ընկնում ու գնում:
Ինքն էլ չի իմանում, թե էդ ճամփեն ուր է տանում:

Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գլուղից հե-
ռացել է: Էստեղ սիրտն ահ է ընկնում: Իրեն սիրտ տալու համար
սկսում է քթի տակին մոմռալ, երգել, իրեն-իրեն խոսել, իշի վրա
բարկանալ: Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է,
քանի վախը սաստկանում է՝ էնքան ձեռքերը բարձրացնում է, սկսում
է գոռոգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ մյուս կողմից էշն է
սկսում զռալ... Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ
ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գոր-
տերը կանաչիցն են ջուրը թափում...

Նազարը ձենն ավելի է գլուխը գցում, իսկ որ մտնում է ան-
տառը — թվում է թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի մեջից,
ամեն մի քարի ետևից՝ որտեղ որ է գազան է հարձակվելու կամ
ավազակ. սարսափած սկսում է գոռոգոռալ, ոնց գոռոգոռալ —
ականջդ ոչ լսի:

Դու մի ասիլ հենց էս ժամանակ մի գլուզացի ձին քաշելով
անտառում միամիտ գալիս է: Էս զարհուրելի ձենը ականջն է
ընկնում թե չէ՝ կանգնում է.

— Վա՛յ, ասում է, ո՞նց թե իմն էլ էստեղ էր հատե՛լ. կա-
շկա էս ավազակներ են...

Ձին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ա՛՛ երկու
ստն ոճեեր, երկուսն էլ փոխ է առնում՝ փախչում:

Բախտդ սիրեմ Քաչ Նազար. գոռոգոռալով գալիս է տեսնում

մի թամբած ձի ճամփի մեջտեղը կանգնած իջին է սպասում:
Իշիցը վեր է գալի էս թամբած ձիուն. նստում ու շարունակում իբ
ճամփեն:

3

Շատ է գնում, քիչ է գնում, շատն աւ քիչն էլ ինքը կիմանաք,
գնում է ընկնում մի գլուղ. ինքը գլուզին անծանոթ, գլուղն՝ իրեն:
Ո՛ւր գնա, ուր չի գնա: Մի տանից դուռնի ձեն է լսում. ձին քշում
է էս ձենի վրա, գնում է ընկնում մի հարսանքատուն:

— Բարի օր ձեզ:

— Ա՛յ աստծու բարին քեզ, բարով հազար բարի եկար:

Համե՛ցեք հա, համե՛ցեք. դե դոնախն աստծունն է. սրան
տանում են իր դրոշակով սուկրի վերի ծերին բաղմեցնում: Աչքդ
էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը — թե ուտելիք, թե
խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են՝ իմանած, թե ով է էս
տարօրինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բռնում է իր կողքի
նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բռնում, էս-
պես հերթով իրար բռնելով ու հարցնելով բանը մնում է վերի ծե-
րին նստած տերտերին: Տեքտերք մի կերպով դոնախի դրոշակի
վրա կարդում է.

Անհաղթ հերոս Քաչրն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա
էլ իր կողքի նստածին, սա էլ երրորդին, երրորդը չորրորդին. էս-
պեսով հասնում է մինչև դռան տակը, ու ամբողջ հարսանքատու-
նը դրամբում է թե՛ բա՛ շես ասիլ նորեկ դոնախն է ինքը.

Անհաղթ հերոս Քաչրն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

— Քաչ Նազարն է հա՛... — բացականչում է պարծենկոտի
մինը: Ի՛նչքան է փոխվել. միանգամից լավ շճանաչեցի...

Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջա-
գործութունները, հին ծանոթութունն ու միասին անցկացրած
օրերը:

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

— Հապա ինչպես է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծառա չունի,— զարմանքով հարցնում են անծանոթները:

— Էդպես է դրա սովորությունը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ի՞նչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ի՞նչպես է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

— Շնորհքն էլ հենց դրա մեջն է՛, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես շարդես հազար, թե չէ լավ թրով — ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են շարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալի ճառ ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը. կարոտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալիս: Ժողովականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռի թափ տալը ինչքան բան կնշանակեր...

Աշուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է հորինում ու երգում:

Բարով եկար, հազար բարի,
Հրզոր արծիվ մեր սարերի,
Քազ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Խեղճ տրկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կրփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Մատաղ ենք մենք քո զբրոշին,
Մեջքիդ թըրին, տակիդ ուշին,
Նրա ոտին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Ու ցրվելով հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է.

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար:

4

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն: Գնում է հասնում մի կանաչ դաշտ: էս կանաչ դաշտում ձին թողնում է արածի, դրոշակը տնկում է, ինքն էլ դրոշակի շվաքումը պառկում քնում:

Դու մի՛ ասիլ օխտը հսկա եղբայրներ կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մոտիկ սարի գլխին է: էս հսկաները վերևից մտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել: Շատ են զարմանում, թե էս ինչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշվելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր է եկել ու ձին էլ բաց թողել: Ամեն մինը մի գուրզ ուներ քառասուն լղրանոց: էս քառասուն լղրանոց գուրզերը վերցնում են գալիս: Գալիս են ի՞նչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տնկած, դրոշակի վրեն գրած.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Վա՛յ, Քաջ Նազարն է՛... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած: Դու մի՛ ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած: էսպես թուրքները ցամաքած, շորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է, աչքերը բաց է անում, տեսնում գլխավերևը քառասուն լղրանոց գուրզերն ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում: Մտնում է իր դրոշակի ետևն ու սկսում է գողալ, ոնց որ աշունքվա տերևը կողալ: էս հսկաները որ տեսնում են սա գունատվեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի որտեղ որ է մի զարկով օխտիս էլ կսպանի, առաջին գետին են փռվում ու խնդրում են.

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին գարկես՝ շարդես հազար:

Մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսությանդ էինք փափագում. այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպեր ենք, ահա մեր ամբողջն էլ էն սարի գլխին է՝ մեջը մեր գեղեցիկ բույրը: Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կտրես...

Էստեղ Նազարի շունը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրոշակն առած առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը: Տանում են ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով, ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ բույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասել կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է:

5

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրա: Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե Քաջ Նազարը կսպանի: Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դեմ գնա: Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերևը մի աստված, ներքեը մի քաջ Նազար:

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թե վազում էր, որ գնա վագրին սպանի: Նշանածը բռնում է կանգնեցնում, թե՛ ո՞ւր ես վազում էղպես առանց զենքի, զենք առ հետդ, էնպես գնա: Զենք է բերում տալիս իրեն, որ գնա, իր փառքի վրա մի քաջութիւն էլ ավելացնի: Նազարը զենքն առնում է, դուրս գնում: Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրեն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն: Ծառի վրա կուչ է գալի ու Նազարն ո՞վ կտա — հոգին դառել է կորկի հատ: Հակառակի նման անտեր վագրն էլ գալիս է հենց էս ծառի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տեսնում — լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրջ մի, ծառիցը ընկնում է գազանի վրա: Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կաշում է սրա մեջքին: Էսպես զարհուրած Նազարը մեջքին կպած էս խրոջ-

նած վագրը փախչում է, ոհնց է փախչում, էլ սար ու ձոր, քայք ու բոլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛հ, Քաջ Նազարը վագրին նստած ըշում է:

— Հա՛յ-հարա՛յ, եկե՛ք հա, եկե՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... տվե՛ք հա տվե՛ք... Սրտավորվում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հոհոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում:

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացվում է:— Ափսո՛ս,— ասում է,— ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել նստել... էնքան պետք է ըշեի ո՞ր...

Լուրը գնում է հասնում է ամբողջը Մարդ, կին, մեծ, պատիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու: Վրեն երգ են կապում ու երգում:

Էս աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կըլինի քեզ հավասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թուր հասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ահեղ վագրին
Արիք քո ձին,
Զեծար անցար դու սարհասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Քառտեցիր,
Փառք ու պարծանք քեզ գարեգար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ. օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագավորին ու թագուհուն:

— Լուսնկան ետ սարն ելավ,
Էս ո՞ւմ երժան էր:

— Լուսընկան նոր սարն ելավ,
էն Քաջ Նազարն էր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
էն Ե՛մ նըման էր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
էն իր նազ-յարն էր:

Մեր թագավորն էր կարմիր,
Իրեն արևն էր կարմիր,
Քաղն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապնն կարմիր, հա՛յ կարմիր,
Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սուր կարմիր, հա՛յ կարմիր,
Քաղուհին կարմիր, հա՛յ կարմիր,
Կարմիր թագուհուն բարև,
Կարմիր թագավորին արև:

Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ Նազարին շնորհավոր,
Իր նազ-յարին շնորհավոր,
Ողջ աշխարհին շնորհավոր:

6

Գու մի՛ ասիլ էս աղջկանը ուզած է լինում հարևան երկրի
թագավորը: Որ իմանում է իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են ամուս-
նացրել՝ զորք է կապում, պատերազմով գալիս է օխտն ախպոր
վրա:

էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի
լուրը հայտնում են, գլուխ են տալի առաջը կանգնում՝ հրաման
են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է՝ սարսափում է Նազարը.
գուրս է պրծնում, որ փախչի ետ գնա իրենց գյուղը: Մարդիկ
կարծում են ուզում էր իսկույն դուրս վազել հարձակվել թշնամու
բանակի վրա: Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թե ախ
առանց զենքի ու զրահի մենակ ո՛ւր ես գնում, ի՞նչ ես անում,
գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է:

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրների
խնդրում է, որ չթողնեն Նազարին իր քաջությունից տարված

մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Եվ լուրը գնում տարած-
վում է զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջոցով էլ հասնում
է թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ առանց զենքի թռչում էր
դեպի պատերազմի դաշտը, հազիվ են կարողացել զսպել ու շըր-
ջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամենհի նժույգ ձի են բերում Նազա-
րին նստեցնում վրեն: Ոգևորված զորքն էլ հետը վեր է կենում
ահագին աղմուկով,— կեցցե՛ Քաջըն՝ Նազա՛ր... մա՛հ թշնա-
մո՛ւն...

Նազարի տակի նժույգը, որ տեսնում է վրեն ինչ անպետքի
մի՞նն է նստած՝ խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ,
ուղիղ դեպի թշնամու բանակը: Զորքերը կարծում են Քաջ Նա-
զարը հարձակվեց, ուռռա՛ են կանչում ու իրենք էլ ետևից հար-
ձակվում ամենայն սաստկությամբ: Նազարը որ տեսնում է չի կա-
րողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռը
զցում է, ուզում է մի ծառից փաթաթվի, դու մի՛ ասիլ ծառը փտած
է, մի գերանաչափ ճյուղը պոկ է գալիս մնում ձեռին: Թշնամու
զորքերը, որ առաջուց համբավը լսել էին ու ահը սրտնեղումն էր,
էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորնեղումը սիրտ չի մնում.
երես են շուռ տալիս,— փա՛խի, որ փա՛խի, թե մարդ ես գլուխդ
պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գա-
լիս է...

էդ օրը թշնամուց ինչքան կոտորվում է, կոտորվում, մնա-
ցածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, հայտ-
նում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամ-
բոցն է վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ է կա-
պում, աննկարագրելի ոգևորությամբ, ուռաներով և կեցցեներով,
երգով ու երաժշտությունով, աղջիկներով ու ծաղիկներով, պատ-
գամավորություններով ու ճառերով առաջն է դուրս գալիս, էնպես
մի փառք ու պատիվ, որ Նազարը մնացել էր ապշած շըշկված:

էսպես առքով-փառքով էլ բերում հրատարակում են իրենց
թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ Նազա-
րը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ մի պաշ-
տոն է տալիս: Մին էլ տեսնում է աշխարհքը իր բռան մեջ:

Ասում են՝ մի՞նչ և էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ

Նազարը: Ու՛ երբ քաշությունից, խելքից, հանճարից մոտը խոսք
են գցում՝ ծիծաղում է, ասում է.

— Ի՞նչ քաշություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ քա-
ներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունե՞ս՝ քե՞ֆ
արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քե՞ֆ է անում Քաշ Նազարը ու
ծիծաղում է աշխարհքի վրա:

1912

ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղ-
ջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը
չուրն է զրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղ-
բըրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝
փրեն-իրեն միտք է անում.

— Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ
գնենք Կիկոս. Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի,
քարովը դիպչի մեռնի...

— Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղնուտեղը ծառի տակին նստում է՝ սկսում է սուգ անել.

Գրնացի մարդի,
Ունեցա որդի,
Գրգակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

Մերն սպասում է սպասում, տեսնում է շեկավ: միջենկ աղջ-
կանն է զրկում: Ասում է. — Գնա՛ մի տե՛ս, քույրդ ընչի՞ ուշացավ:
Միջենկ աղջիկն է գնում:

— 390 —

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձ-
րացնում:

— Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ եղավ:

— Ի՞նչ Կիկոս:

— Բա շես ասիլ՝

Գրնացի մարդի,
Ունեցա որդի,
Գրգակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ, — գոռում է միջենկ քույրը, նըս-
տում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է շեկան, պատիկ աղջ-
կանն է զրկում: Ասում է.

— Աղջի՛, մի գնա տես քույրերդ ի՞նչ եղան: Գնացին, ես շե-
կան:

Հիմի պատիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝ երկու քույ-
րերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

— Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՛ բա շես ասիլ՝

Գրնացի մարդի,
Ունեցա որդի,
Գրգակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՛յ, — սա էլ է գլխին
տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս:

Մերն սպասում է; սպասում, տեսնում է աղջիկները շեկան,
փեքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե՛ չէ՛ երեք աղջիկն էլ կան-
չում են.

— 391 —

— Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլուխն ինչ է եկել:

— Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՛ բա շես ասիլ, ա՛յ մեր՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըղահը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ բարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.— մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու սա էլ շեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնացին աղբրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե՛ շէ, ձեն են տալի:

— Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՛յ քու Կիկոսին...

— Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,— զարմանում է մարդը:

Մեծ աղջիկը թե՛ բա շես ասիլ, ա՛յ հեր՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըղահը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ բարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ, Կիկոս ջա՛ն,— ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

— Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած շորստանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

1913

ԶԱՆՈՐԴ ՓԱՆՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է՝ ձախ է գնում: Դրա համար էլ անունը դնում են Զախորդ Փանոս: Ունեցած-չունեցածը մի լուծ եզն է լինում, մի սել ու մի կացին:

Մի օր եզնիքը սելում լծում է, կացինը առնում գնում անտուր փետի: Անտառում էս Փանոսը միտք է անում, թե՛ մի բան որ ծառը կտրելուց ետը մին էլ նեղութուն պետք է քաշեմ՝ ահագին գերանը գետնից բարձրացնեմ պցեմ սելի մեջ, ավելի լավ է՝ հենց սելը լծած բերեմ ծառի տակին կանգնեցնեմ, որ ծառը կտրեմ թե՛ շէ, ընկնի մեջը:

Ասածն արած է:

Եզներով սելը բերում է մի մեծ ծառի ներքև կանգնեցնում, ինքը անցնում վերի կողմը, կացինը քաշում — թրե՛խկ հա թրե՛խկ: Շատ է քաշում, թե՛ քիչ, էդ էլ ինքը կիմանա, ծառը ճռճալով գալիս է զարկում, տակովն անում սելը շարդում, եզներն էլ հետը: Փանոսը մնում է ապշած կանգնած: Ի՞նչ պետք է անի: Կացինը վերցնում է ու ծոծրակը քորելով ճամփա է ընկնում դեպի տուն:

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում: Տեսնում է մեջը վայրի բաղեր են լողում: Ասում է՝ գլուխը քարը, շեղավ շեղավ, արի գոնե մի բաղ սպանեմ, տանեմ տամ կնկանս: Ասում է ու կացինը պտտում, շարտում դեպի բաղերը, որ մինն սպանի. բաղերը ճղճղալով ցրվում են, փախչում, որը եղեգնուտն է մըտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում: Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս: Ի՞նչ անի, ի՞նչ շանի: Շորերը հանում է դնում լճի ափին, ինքը մտնում մեջը, որ կացինը հանի: Գնում է, գնում, քանի առաջ է գնում, ջուրն էնքան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, ետ է դառնում, դուրս գալի:

Դու մի՛ ասիլ՝ Փանոսը որ լիճն է մտնում ու խորը գնում, էդ ժամանակ լճափով մի անցկենող է լինում, տեսնում է էստեղ թափած շորեր կան, եղեգնուտի մեջ խորը գնացած Փանոսին էլ չի նկատում, էս շորերը հավաքում է, առնում գնում:

Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա: Մնում է տըկլոր կանգնած:

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, տեր աստված, էսպես տկլոր ո՛ւր գնամ»:

Սպասում է մինչև մութն ընկնի: Մթան հետ վեր է կենում. գնում գլուղը: Իր գլուղին մոտենում է, ասում է՝ էսպես տկլոր որ գնամ մեր տունը — տանըցիք ի՞նչ կասեն: Արի գնամ ախպարիցս շոր առնեմ հագնեմ՝ էնպես գնամ կնկանս մոտ:

Ճամփին ծռում է դեպի ախպոր տունը:

Գո՛ւ մի ասիլ՝ էդ գիշեր էլ ախպոր մոտ մեծաբք կա, քեֆի էլ էն տաք ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի ով կա, ով չկա. հյուրերից մինը կարծում է, թե շունն է, ձեռի կրծած ոսկորը շարտում է դեպի դուռը, ոսկորը դիպչում է աչքին, աչքը հանում:

Փանոսը ցավից վայ-վայ անելով ետ է դառնում, շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, օհո՛, մթնումը հրես մի տկլոր օքմին, ու շորս կողմից վրա են տալիս: Շների հաշոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները ետևից: Առանց երկար ու բարակ մտածելու վճռում են, որ կա թե չկա՝ սա սատանա է:

Բավական տեղ ղըշողու տալով, հայհոյելով, հարայ-հրոցով ընկնում են ետևից, հալածում, տանում գցում անտառները: Շներն

էլ ետևիցը մի ճուռը պոկում են, ու էսպես տկլոր, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Մյուս օրը գլուղում տարածվում է. թե «հապա շեք ասիլ՝ Փանոսը կորել է: Գնացել է անտառը փետի ու ետ չի եկել»: Գեղահավան հավաքվում են գնում. գնում են անտառը ման գալի, սելն ու եղները գտնում են ծառի տակին ջարդված — ինքը չկա:

Դես Փանոս, դեն Փանոս. հարց ու փորձով հագուստն էլ գրտնում են մեկի մոտ:

— Ա՛յ մարդ, էս հագուստը որտեղի՞ց է ընկել քեզ մոտ:

— Քե՛՛ ախպեր, էս հագուստը էսպես մի լճի ափին վեր ածած էր, հավաքեցի բերի:

Գնում են լճի շորս կողմը պտրտում, կանչում՝ «Փանո՛ս, Փանո՛ս», Փանոսը չկա:

Վճռում են, որ Փանոսը խեղդվել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելեխը տալիս: Կնիկն էլ մի քիչ սուգ է անում, Փանոսին գովում, ափսոսում, հետո մի ուրիշ մարդ է ուզում, հետը պսակվում, գնում:

Իրիկունները, երբ տուն էինք հավաքվում, մայրս անդադար խոսում էր օրվան անցածի կամ վաղվան հոգսերի մասին, իսկ հայրս, թինկը տված՝ ածում էր իր շոնգուրն ու երգում Քյորոզլին, Քյարամը կամ Ռրեէ հոգևոր երգ:

Ահա այս ծնողներից ես ծնվել եմ 1869 թվի փետրվարի 7-ին: Մանկությունս անց եմ կացրել մեր գյուղում ու սարերում:

Մի օր էլ մեր դռանը մայրս ճախարակ էր մանում, ես խաղում էի, մին էլ տեսանք, քոշերը հագին, երկար մազերով ու միրքով, երկաթե գավազանը շրխկացնելով, մի օտարական անցավ:

— «Հասի՛ր, էդ կլեկշուն կանչի՛ր, ամանները տանք, կլեկի»,— ասավ մայրս: Խաղս թողեցի, ընկա ուստի ետևից կանչեցի: Դուրս եկավ, որ կլեկչի չէ՛, այլ՝ մեր ազգականի փեսա՝ տիրացու Սհակն է: Սկսեցի զրույց անել: Տիրացուն խոսք բաց արավ իր գիտություն մասին:

— Տիրացու ջան, բա ի՞նչ կըլի, մեր գեղումը մնաս, երեսանցը կարդացնես,— խնդրեց մայրս:

— Որ դուք համաձայնվեք, ինձ պահեք, ես էլ կմնամ, ի՞նչ պետք է ասեմ,— հայտնեց տիրացու Սհակը:

Գյուղումն էլ տրամադրություն կար, և, մի քանի օրից հետո, տիրացու Սհակը դարձավ Սհակ վարժապետ: Մի օթախում հավաքվեցին մի խումբ երեխաներ, տղա ու աղջիկ շարվեցին երկար ու բարձր նստարանների վրա, եղավ ուսումնարան, և այստեղից սկսեցի ես իմ ուսումը:

Մեր Սհակ վարժապետը մեզ կառավարում էր «գաւազանաւ երկաթեաւ»: Իր երկաթե գավազանը, որ հրացանի շամփուրի էր նման, երբեմն ծռում էր երեխաների մեջքին, ականջները «քոքըհան» էր անում և մեծ կաղնենի քանոնով «շան լակոտների» ձեռների կաշին պլոկում: Ես չե՛մ կարողանում մոռանալ մանկավարժական այդ տեղերը:

Վարժապետի առջև կանգնած երեխան սխալ էր անում թե չէ՛ սարսափից իրան կորցնում էր, այլևս անկարելի էր լինում նրանից բան հասկանալ, մեկը մյուսից հիմար բաներ էր դուրս տալի: Այն ժամանակ կարմրատակում, սպառնալի՝ շուխի թևերը ետ ծալելով, տեղից կանգնում էր վարժապետը ու բռնում... Քիթ ու պոռնկն արյունոտ երեխան, զալարվելով, բառաչում էր վարժապետի ոտների տակ, զանազան սրտաճմլիկ աղաչանքներ անելով, իրկ մենք, սփրթնած, թուքներս ցամաքած, նայում էինք՝ ցրտա-

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր տոհմը կոռու հին ազնվական տոհմերից մեկն է: Իր մեջ ունի պահած շատ ավանդություններ: Այդ ավանդություններից երևում է, որ նա եկվոր է, բայց պարզ չի՛, թե Ռրտեղից: Թե եկվոր է՛լ է, անհերքելի հիշատակարանները ցույց են տալիս, որ նա վաղուց է հաստատված կոռու Դսեղ գյուղում:

Իմ հայրը, Տեր Թադեոսը, նույն գյուղի քահանան էր: Ամենալավ և ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ կյանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով: Զավազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճարան, սակայն միշտ ուներ մի խոր լրջություն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ էր և ձի նստող:

Իսկ մայրս բոլորովին ուրիշ մարդ էր: Երկու ծայրահեղորեն տարբեր արարածներ հանդիպել էին իրար: Մայրս — Սոնան, որ նույն գյուղիցն էր, սարում աչքը բացարած ու սարում մեծացած, մի կատարյալ՝ սարի աղջիկ էր, ինչպես գյուղացիքն են ասում,— մի «գիծ պախրի կով»: Նա չէր կարողանում համբերել հորս անփույթ ու շոռայող բնավորությանը, և գրեթե մշտական վեճի մեջ էին այդ երկու հոգին: Ա՛յդ էր պատճառը, որ հայրս երբեմն թաքուն էր տեսնում իր գործը: Շատ է պատահել, որ, մայրս տանից դուրս է գնացել թե չէ, ինձ կանգնեցրել է դռանը, որ հսկեմ, ինքը՝ ցորենը լցրել, տվել մի որևէ պակասավոր գյուղացու կամ սարից իջած թուրքի շալակը:

հար ծտերի նման շարված մեր բարձր ու երկար նատարանների վրա: Ջարդած երեխային վերցնում էին մեջտեղից:— «Արի՛»,— գոչում էր հանչում վարժապետը հետևյալին...

Մի երեխայի ուսումնարան ղրկելիս հայրը խրատել էր, թե՛ «վարժապետն ի՛նչ որ կասի, դու էլ էն ասա»: Թկավ:

Վարժապետն ասում է՝ «Ասա՛ այբ»:

Նա էլ կրկնում է՝ «Ասա՛ այբ»:

— Տո շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում «Ասա՛ այբ»:

— Տո շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում «Ասա՛ այբ»:

Այս երեխայի բանը հենց սկզբից վատ գնաց, և այնքան ծեծ կերավ, որ մի քանի ժամանակից «զաչաղ» ընկավ, տանիցն ու գեղիցը փախավ, հանդերումն էր ման գալի: Բայց մեր Սհակ վարժապետի շարունակյալ շէ՛ր դա: Այս տեսակ անաստված ծեծ այն ժամանակ ընդունված էր և սովորական բան էր մեր գյուղա-կան ուսումնարաններում: Գյուղացիներից էլ շատ քչերն էին բողոքում: Այդ ծեծերից ես չկերա, որովհետև վարժապետը քաշվում էր հորիցս, բայց մանավանդ մորիցս էր վախենում: Չմոռանամ, որ Սհակ վարժապետին սիրում էին մեր գյուղում և մինչև օրս հիշում են:

Տասը տարեկան, մեր գյուղից հեռացել եմ Ջալալօղլի, ուր մեծ և օրինակելի ուսումնարան կար, այդ ժամանակ՝ Լոռում ջատ հայտնի «Տիգրան վարժապետի» հսկողության տակ: Այնտեղից էլ անցել եմ Քիֆլիս, Ներսիսյան դպրոց, որ չե՛մ ավարտել:

Շատ վաղ եմ սկսել ուսանավոր գրել: 10—11 տարեկան ժամանակս Լորիս-Մելիքովի՝ վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ուսանա-վորներ — երգիծարանական, հայրենասիրական և սիրային: Սիրային ուսանավորներից մեկը, մի դեպքի պատճառով, տաբաժովեց ընկերներինս մեջ ու մնաց մինչև օրս: Ահա՛ այդ ուսանավորը:

Հոգո՛ւս հատոր,
Սրբո՛ւս կրտսեր,
Դասիս համար

¹ Լորիս-Մելիքով Միքայել (1825—1888)— գեներալ, 1877—78 թթ. ուսու-թյունական պատերազմում Կովկասյան հատուկ զորաբանակի հրամանատարը:

* Այս երկու տառն ընդհանրացած տառեր են, որով ժամանակի սխալման պատճառով էին իրանց նամակները: Լ. Ք.:

Դու մի՛ հոգար.
Թե՛ կա՛ն դասեր,
Կա՛ նաև սեր,
Եվ ի՛նչ զարմանք,
Ի՛մ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սերը սրբում՝
Դաս է սերտում:

Այս ուսանավորը գրված է 1881 կամ 82 թվին: Չե՛մ կարող չհիշել, որ այն ժամանակ ուսանավոր էր գրում և՛ իմ փոքր եղ-բայրը, որ կարդում էր ինձ հետ, և միշտ գտնում էին, որ նա ին-ձանից լավ է գրում:

Իմ տպված ուսանավորների մեջ ամենավաղ գրածը «Շունն ու Կատուն» է, որ գրել եմ 1886 թվին:— 1888 թ. ամուսնացել եմ: Սառայության եմ մտել մի քանի տեղ, բայց ամեն տեղ էլ չե՛ն հավանել, այնպես որ «Պոեան ու Մուզայի» մեջ ուղի՛ղն եմ ասեք Սկզբնական շրջանում սիրել եմ ռուս բանաստեղծ Լերմոնտովին, ավելի ճիշտը — նրա ա՛յն գործերը, որ սովորել եմ ուսումնարա-նում: Բայց, հենց որ ծանոթացել եմ եվրոպական բանաստեղծների և ավելի լայն գրականության հետ, այն օրվանից ինձ համար ամենասիրելին մնում է Շեքսպիրը:

1905

ՅԵԿԵՂԾ ԶԵՆՔ

Սրբեք այսքան մեծ շի եղել անկեղծության կարիքն ու կարո-տը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահաբի շափերով շի հայտ-նըվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաւտանի օրը:

Մե՞ծ աշխարհայիններն ու ակնկալությունները ամենքին տե-ղական են արել, դուրս են բերել իրենց անկյուններից. և ահա—

ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են։ Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է։

Անշուշտ նա պիտի շարժվեր այնպես, ինչպես ինքն է կամենում, և խոսեր այն, ինչ որ ինքն է մտածում։

Այդպես պիտի լիներ մարդը, ևս առավել այս տեսակ մի ժամանակի առաջ, երբ շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ անհրեակայելի է։

Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան։ Եվ հանկարծ... դուք տեսնում եք... Նա խաղ է անում, դերասանություն է անում։

Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են։

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածերն ու կեղծավորները։

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ, և ահա, մեր կյանքը ավելի նման է թատրոնական բեմի, ու այդ բեմը թեև փոքր, բայց, տեսեք, ո՞րքան դերասաններ ունի...

Իրենց վրա առած զանազան դերեր՝ նրանք մտել են ու խաղում են այս կամ այն ասպարիզում։

Ահա սա՛ ներկայանում է ամեն տեղ որպես շհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը նշանավոր հերոս է խաղում, երրորդը հրապարակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձևանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր, ամենքին մեղադրելու և ամենքից հաշիվ ուզելու...

Ու բնականաբար, շնայելով այսքան շատ գործիչների ներկայությունը, դուք զգում եք, որ ցուրտ է, որովհետև չկա անկեղծություն ջերմությունը, զգացմունքի հուրը, որովհետև նրանք խոսում են լեզվով, իսկ սիրտները շատ է հեռու, և զզվում եք վերջապես։

Սրանք ոչինչ չեն սիրում, այլ ցույց են տալի, թե սիրում են։

Եվ ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաղը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կաշեկով, փոխանակ գործի ծանրությունն ապա մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծնում նրա վրա ու շինում են իրենց էջը։

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էջը, ու միշտ էլ իր էջն է բշուր, թեկուզ աշխարհը քանդվի։

Հաճախ սրանց շահատակությունը տևում է շատ երկար, նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել և ով են թամաշավորները կամ երբ են գլխի ընկնելու։

Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը։

Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»։ Ժողովուրդն այսպես է կամենում...

«Ժողովուրդը մեզ հետ է... Ժողովուրդը ձեզ կդատի... Ո՞ւր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»։

Այդ հերիք չէ դեռ։ Ժողովուրդն էլ են կեղծում։

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետներին իրենց շինած հողավածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ։

— Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է։

Դե եկեք, ու ջոկեցեք իսկականը կեղծիքից։ Եվ ո՞վ պիտի զոկի, ե՞րբ, ո՞ր մի տեղը...

Կեղծի՛ք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի։

Եվ մի ժողովուրդ, որ այսքան կեղծիքներ ու կեղծավորներ ունի, այսքան խարդախներ ու խաչագողներ ունի, չի սիրվիլ, որքան կուզե խելոք լինի, որքան կուզե գոռա, թե կուտուրական եմ ես...

Նրա գործերը միշտ գետնին կմնան, որքան ուզում է գործիչներ ունենա։

Նրա մեջ կատարված հասարակական, թե ազգային գործերը խախտ են միշտ։

Նրա ամեն ընկերակցությունը հենց սկզբից իր մեջ ունի քայքայման բոլոր սաղմերը։

ՀՈՐԵԼՅԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Մեր մեջ հորելյանները համաճարակի կերպարանք են առնում: Հորելյան են տոնում ու հորելյանի են պատրաստվում ամենքը թե՛ արժանավոր, թե՛ անարժան ու միշտ էլ հրավիրում են ազգի ընդհանրությունը — մասնակցելու: Տարեցտարի բաղմանում են էդ «համազգային» տոները և փառաբանությունների ցանկն ու ցուցակն էլ զարգանում ու մեծանում է հետը մի շատ ինքնուրույն տեղում:

Հարգելու մարդիկ կա՞ն. շատ գեղեցիկ: Տոնելու գործեր կա՞ն, դանք հրճվանքով ու երգերով: Բայց օրինակ պետք է առնել հասկացող ժողովուրդներից, հենց թեկուզ մեզ մոտիկ ուսնները, տեսնենք նրանք ինչպես են անում: Եթե նրանք էլ մեզ նման հորելյաններ կատարեին, տարեկան մի քանի տասնյակ հազար հորելյան պիտի տոնեին. և ամեն մեկի հորելյանն էլ եթե դնեին ամբողջ ուս ժողովրդի առջև ու հորդորեին, հրավիրեին, թե եկեք պսակելու, փառաբանելու էս ինչ գրողին, դերասանին, խմբագրին, գյուղատնտեսին, ուսուցչին, քահանային և այլն, և այլն, երևակայում եք, թե ի՞նչ ազգային աղետի բնավորություն կարող էր առնել: Եվ եթե ամեն անգամ ամեն մեկի հորելյանին հավաքվեին ու ճառեին, թե դու ես որ կաս և քեզանով է որ մենք կանք, քեզանից է սկսվում ամեն բան և զանազան համեստ հաց ուտողների մեծ ու հանճար հոշակեին աշխարհքովը մին, երևակայում եք, թե ի՞նչ հոյակապ մասխարություն էր լինելու:

Նրանք էլ են հորելյաններ տոնում, բայց ամեն մեկին իրեն շրջանում: Մին էլ կարողում եք լրագիրներում, թե էս ինչ գրական, հասարակական կամ քաղաքական գործչի հորելյանը տոնել են էս ինչ շրջանում: Ուրիշ բան է, եթե նա կունենա էն տեսակ մի մեծություն, օրինակ մի Տոլստոյ, որի գլուխը երևում է ամեն աշխարհից, որի հորելյանն էլ, տոնելու եթե խնդիր լինի, ուղեհան էլ, շեն կարող պարտակել մի օրե՛ք շրջանում. և վերջապես նրան կարող էր, այո՛, համայն ուս ազգը զալ պսակելու աշխարհքի առջև ու աշխարհքի հետ և ասել՝ քեզ պսակելով պսակում եմ ինձ ուս ազգի ամբողջությունը, քեզ տոնելով՝ ուսական հոգու, ոգուական հանճարի հաղթանակն եմ տոնում:

Ժողովուրդը եթե չի հասկանում, հասկացողները էնքան խղճմտանք պետք է ունենան, որ նրա անհասկացողությունը ի լու-

րք չգործածեն ու նրա տգետ գլուխը դարձնեն պատվանդան իրենց համար արհեստական բարձրություններ ստեղծելու և տխուր շփոթություն՝ արժանավորի ու անարժանի, գեղեցիկ ու տգեղի, լավի ու վատի:

Շատ է տգեղ: Օրինակ առնենք ուրիշներից:

1909

ՄԵՍ ՏՍԱԼԸ

Անցյալները խոսեցինք էն մասին, թե մեր հարևան ժողովուրդները մեզ շեն ճանաչում, մենք էլ նրանց ու հաճախ ընկնում ենք ցավալի թյուրիմացությունների մեջ («Հորիզոն» № 40):

Բայց կա ցավի ավելի մեծը, ավելի ամոթալի մի դրություն: Մենք մեզ էլ շենք ճանաչում:

Երկիր ունենք — շենք ճանաչում, պատմություն ունենք — շենք ճանաչում, ժողովուրդ ունենք — շենք ճանաչում, գրականություն ունենք — շենք ճանաչում, լեզու ունենք — շենք իմանում:

Մտածում ենք. ի՞նչ մեծ պակասություն է դատարկ աշխարհագրական էն տգիտությունը, որ մեր երկիրը չգիտենք: Չենք հասկանում, թե էդ չգիտենալով ինչքան բան չգիտենք: Չէ՛ երկիրն է իր «առանձնահատկություններով», որ պայմանավորում է ու քացատրում և պատմություն, և գրականություն, և գեղարվեստ, և տնտեսական վիճակ, և մարդկային հայտնի տիպ ու հոգի: Նա է որոշում ազգերի ճակատագիրը. առանց նրա բնավորությունը հասկանալու ոչ կարող ես անցյալը ըմբռնել, ոչ ներկադ հասկանալ, ոչ ապագադ տեսնել:

Պատմություն ունենք — տգետ ենք: Եվ դժբախտաբար դեռ մի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք ունենք: Նախնական մշտչի մեջ թաղված դարերի մասին շեմ ասում, այլ էն ժամանակների ու անցքերի, որոնց վրա ընկնում է ճշմարիտ պատմության լույսը: Չգիտենք: Չգիտենք մենք ինչ ենք եղել: Ինչ ենք արել, ինչու և ինչպես, ինչ օրով, ինչ ճանապարհով ենք էստեղ հասել:

Եվ ինչ գարմանք, որ էս դրութեան մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճութիւնն ու դատարկութիւնը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարճամարտի իր ցեղը, իր անունից կամաշի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղին վերաբերյալ ամեն ստորութիւն. և շատ-շատ կդառնա մի միջազգային օշնչութիւն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից: Կամ թե չէ կընկնի մյուս ծայրը, իր ցեղը կհամարի Աստուծո քնտրյալ ժողովուրդ, «12 խաչապաշտի, եթմիշիքի միլլեթի գլուխը»¹, և կույր ազգասիրական տենչով բռնված շեղած մեծութիւններ ու փառքեր կզառանցի՝ հասկացողութիւններ, ժամանակներ ու դեպքեր իրար խառնելով, մի վիճակ, որ հաջող քառյակով ծագել է հանգուցյալ՝ Ռ. Պատկանյանը, թեև ինքն էլ ազատ չէր էդ պակասութիւնից:

«Հայկ ու Նապոլեոն մի գոռի համար
Սաստիկ թունդ խոսքեր ասացին իրար.
Հային ուներ հրացան, Նապոլեոնն աղեղ.
— Ո՞վ հաղթեց,— անշուտ մեր Հայկը ահեղ»:

Հիմի ժողովրդից հարցրեք: Մինը երգում է, թե նահապետական պարզ ժողովուրդ է, մյուսը հայհոյում է, թե փշացած խախ է, մինը հավատացնում է, թե ազատամիտ մշակական է ու ամեն հարցում իրեն հետ ու համաձայն, մյուսը պնդում է, թե տիրացու ազգ է, եկեղեցուց ու հոգևորականից դուրս ոչինչ չի հարգում, այնինչ երրորդը ասում է սոցիալիստ է...

Եվ մինչև էսօր շիմացանք ու չգիտենք, թե ինչ բան է էդ խորհրդավոր սֆինքսը, որ տխուր նստած է Ուրարտվի հին արձանագրութիւնների կողքին աչքերն արցունքով ու վշտով լիքը՝ Հապա գրականութիւնը:

Հայոց ամբողջ նոր գրականութիւնը հազիվ թե մի քանի ամսվա ընթերցանութեան նյութ լինի. և սակայն քանի՞ հոգի կգտնեք, որ ծանոթ լինեն իրենց մայրենի գրականութեանը: Միշտ կտեսնենք բերան արած կրկնում են էս կամ էն գրողի անունը, գովում երկինք են հանում, կամ պախարակում ցեխն են կոխում: Հետաքրքրվեցեք, հարց ու փորձ արեք, կտեսնեք ծանոթ չի, կարգացել չի, էստեղից մի կտոր, էնտեղից մի բրդուճ, հաճախ ծուն

¹ 12 խաչապաշտ, 72 մուսուլմանական ցեղերի գլուխ:

ու սխալ: Եվ որքան՝ գրական տգիտութիւն, ի՞նչ կոպիտ ճաշակ, ի՞նչ գոհհիկ վերաբերմունք դեպի գրականութիւնն ու գրողները: Ի՞նչ վիրավորանք քննադատելիս, վիճելիս, օգնելիս, հոբելյանը կատարելիս, մինչև գերեզմանի եզերքը, մինչև թաղման օրը: Իսկ գծծիութիւնը... Ամբողջ նոր գրականութեան արժեքն ի՞նչ է, գիտե՞ք: Անշուտ չգիտեք,— մի 100 ուրբուց էլ պակաս: Ամբողջ գրականութեան արժեքը... Եվ քանի՞ մարդու տան կգտնեք ամբողջ ժողովրդի մեջ... Հայը սովորաբար ցավում է փողը ծախսելիս, բայց գրքի տալի՞ս — էդ ծախսը ուղղակի չի հասկանում, մանավանդ երբ գրքի գինն էլ մի ուրբուց ավել է:

Լեզուն հո... գրականութեան մեջ անկազմ ու անկերպարան, մամուլի մեջ աղքատ, ողորմելի մի երկու երեք հարյուր բառերի չոր ու ցամաք շարան, շատ անգամ էն էլ ծուռն ու սխալ: Մի քիչ կրթված տուն ենք մտնում, ներողութիւն են խնդրում, որ հայերեն չգիտեն, կամ թե չէ ամենալավ դեպքում, եթե գիտեն, շարունակ լսում եք «նրա մոտ ձայն չկա... հրացանից արձակեցին... Ձեզ կարելի՞ է ուտել... (Вам можно кушать?)» ու նման մարգարիտներ:

էսպես է դրութիւնը, և եթե ճշմարիտ էսպես է, սրանից հետո էլ ինչ ուղիղ ճանապարհի կարող է լինել էս դրութեան մեջ գտնվող ժողովուրդը, ինչ արժանապատվութեան զգացմունք կարող է ունենալ և ինչ հարգանք հենց դեպի իրեն: Եվ ինչպես կարող է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները, երբ պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բովանդակութիւն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը:

1909

ՁԵՎՆ ՈՒ ՀՈԳԻՆ

Ամեն երևույթ ունի իր արտաքին կերպարանքը — ձեռք և ներքին իմաստը — հոգին: Ապրողը, գեղեցիկը, կատարյալը գրանց ներդաշնակութիւնն է, բայց էդ ներդաշնակութիւնը, դժբախտա-

բար, շատ է դժար, և մարդիկ սովորաբար վազում են հեշտին. իսկ հեշտը ձևն է: Երբ շին կարողանում ըմբռնել մի որևէ բանի ներքին իմաստը, հոգին կամ թե չէ կորցնում են ժամանակի ընթացքում, պաշտում ու պաշտպանում են ձևը, առանց հասկանալու: Եվ հաճախ մեծ գաղափարների անուններով լուկ ձևեր են պաշտում:

Եկեղեցի ասելով գմբեթավոր էն շինքն են հասկանում, ուր սրբերի պատկերներ կան, վառած մոմեր ու տերտերներ, թեև հենց բառը — եկեղեցի բոլորովին այլ բան կնշանակի:

Նույնիսկ էն մոմերն էլ որ վառում են, մի ժամանակ մթության մեջ միտք է ունեցել, բայց էսօր օրը ցերեկով վառելով պահում են միայն ձևը անմիտ ու անխորհուրդ:

Հոգևորական ասելով երկար շորեր են հասկանում ու երկար միրուք: Եվ եթե նա ավետարանը փշացնի — ոչինչ, բայց եթե միրուքը խուզի, անշուշտ մեծ իրարանցում կձգի հավատացյալների մեջ: Քրիստոնեություն ասելով մկրտություն, պատարագ, պսակի ու թաղման, տնօրհների ու գերեզմանօրհների և այլ արտաքին ծեսեր ու արարողություններ են հասկանում:

Էդպես է պատահում և նոր գաղափարների հետ:

Ուսումնարան ասելով ավելի շուտ շինքն են հասկանում, քան թե ուսուցիչ ու աշակերտ: Եվ էդ հասկացողությունն է խոր պատճառը, որ ուսուցիչը մեզանում էնքան հաճախ ու հեշտ ենթարկվում է զրկանքի, հալածանքի ու արհամարհանքի: Ուսումնարանի գաղափարը նրա հետ չի կապված, այլ շինքի:

Կհարցնեք.

— Ձեր գեղումն ուսումնարան կա՞:

— Հա՛:

— Բա՞նի աշակերտ կա մեջը:

— Աշակերտ չկա. էս մի քանի տարին և այլն:

Մի խոսքով գլխավորը պատերն են:

Գրականություն ասելով էլ երբեք կենդանի մարդիկ չեն հասկանում, այլ տպած գրքեր, և մինչև անգամ գրանից ավելի վատը անուններ...

Թատրոնն էլ մի մեծ շինք է, որ բեմ ունի, մեջը տոմսակներ են ծախսվում ու գերասաններ են խաղում:

Իսկ դերասան կնշանակի — բեխերը վեր արած մարդ...

Ձևն ու ձևապաշտությունը ամեն տեղ, և վա՛յ էն մարդուն, որ էս տեսակ միջավայրում հասկանում ու սիրում է իրերի ու ճրթ-

վույթների ներքին իմաստը և մանավանդ նրանց առողջ ամբողջությունը:

էս տխուր խորհրդածության առիթը տվեց Քիֆլիսի հայոց թատրոնի խնդիրը, որ վերջին օրերս գրավել է մամուլի ու հասարակության ուշքը: Հայոց թատրոնը մեռնում է, էստես հայտարարեցին: Եվ ահա կոնսիլիում են կազմել շքնաղ հոգեվարքի շուրջը ծերունի Մանթաշյանը, մի քանի ուրիշ հարուստներ և նրանց թամաշավոր մեծ բազմություն:

— Ի՞նչ է հարկավոր սրան, որ կենդանանա:

— Փող և սեփական շինք:

Նույն ունեցեալը ինչ որ գրեցին սրանից տարիներ առաջ, Փող տվին, բայց նա կրկին մեռնում է: Մեկն առաջարկում է, որ էս շինքից, Արտիստականից մյուսը փոխադրեն — ազնվականների թատրոնի շինությունը: Բայց նա էնտեղ էլ կմեռնի: Առաջարկում և հանձնաժողով են ընտրում սեփական շինք կառուցանելու: Բայց նա դարձյալ կմեռնի, որովհետև...

Ի՞նչ արտաքին ձևի մեջ եք որոնում նրա կյանքը, երկրորդական տեղ եք տալի նրա ներքին բովանդակությանը, արհամարհում եք նրա հոգին, էն, ինչով որ գոյություն կարող է ունենալ և ապրել թատրոն ասածը: Թարս եք հասկանում: Ահա պարզեք: Սկսեք հենց նույն օրերին թատրոնի դրությունը ողբացող հայոց թերթերից:

Ճշմարիտն ասեմ, «Մշակի» եթեներից, բայցերից ու այսուամենայնիվներից պարզ բան չհասկացա, բայց եզրափակում է.

«Ծղրափակելով մեր խորհրդածությունները՝ ընդգծում ենք, որ հայ թատրոնական գործը պահանջում է կազմակերպչական գործունեության բարվոքում և միևնույն ժամանակ նյութական ապահովություն, որպեսզի նա կարողանա թե՛ դերասանական ուժերի գրավման, թե՛ ներկայացումների կազմության և թե՛ զեկավարական գործի ուժեղացման համար անհրաժեշտ ծախսերը հոգալ բավարար կերպով» («Մշակ» № 5):

«Հորիզոնը» հարայ է կանչում.

«Օգնեցե՛ք. հայոց թատրոնը մեռնում է... այն բեմը, որի շնորհիվ է միայն, որ մենք ունենք Սունդուկյաններ... բայց նա պիտի ապրի, եթե մենք ուզում ենք ապրել... նա պիտի ապրի... իբրև մեր գրականությանը կենդան նյութեր հաղորդող հիմնարկություն» («Հորիզոն» № 5):

Հիմի դուք «Սուրհանդակին» ականջ դրեք.

«Այո՛, թատրոնն էլ մեռնում է մեզանում, ինչպես և մեռնում են մեր բոլոր կուլտուրական հիմնարկությունները, և մեռնում են միմիայն այն պատճառով, որովհետև հայ ազգը տրամադիր է ինքն իրեն ոչնչացնելու, ոչնչացնելու մինչ այն աստիճան, որ իր հետքն անգամ չի ուզում թողնել»։ Ասում է՝ «մեր հոգեբանությանը և մեր գործելակերպով ապրող ազգեր ներկայումս շատ քիչ, համարյա թե չկան, իսկ հնումը թեև եղել են, բայց նրանք էլ ոչնչացել են», և սրա նման զարհուրելի բաներ։ Բայց որովհետև ոչ հայոց ազգն էդպես տրամադրություն ունի, ոչ էլ ինքն է էդպես կարծում, այլ միայն հենց էնպես էր ասում, շարունակում է. «Սահայն դա դեռևս չի արգելում այսօր էլ համախմբվել և խորհրդակցել հայ թատրոնի մասին, այն թատրոնի, որը գեղարվեստի աշխարհին տվել է հանճարներ...»։ («Սուրհանդակ» № 53)։

Էս մտքով էլ ճառեր են խոսել Դրամատիքական Ընկերության ընդհանուր ժողովին, որ իսկապես մի ներկայացում էր և էս սեզոնի ամենահաջող ներկայացումը մուտքի տեսակետից։

Ես չեմ ուզում խոսել նրանից, թե հայ ազգը առանց թատրոնի ապրել է ու կապրի թե չէ, դա դատարկ խոսք է և մի վատ սովորություն, որ մեզանում ամեն մի հարց ու խնդիր իսկույն կապում են ազգի գոյության հետ։ Ես ուզում եմ միայն նկատել էն ցավալի հանգամանքը, թե ինչպես հասկացողներն էլ սխալ են հասկանում։ Ասում են՝ հայոց թատրոնն է, որ ստեղծել է Սունդուկյաններ ու հանճարներ։ Էլ չեն մտածում թե բոլորովին հակառակն է եղել — Սունդուկյան, Աղամյան, Հրաչյա, Սիրանույշ, Չմշկյան և այլն, և այլն, մինչև նորերը, նրանք են, որ թատրոն են ստեղծել, և առանց նրանց դուք թատրոն չեք կարող հասկանալ։ Եթե ուզում եք թատրոն ունենալ, պետք է նրանց հոգաք։ Եվ ահա էդ սխալ տեսակետից էլ առաջ գալով էսօր էլ դեռ, երբ էդքան դարդ եք անում հայոց թատրոնի համար ու հավաքվում եք իբրև թե նրան կենդանացնելու, ասում եմ՝ էսօր էլ դեռ կատարվում է զանցառություն ու հանցանք հայ թատրոնի դեմ, և էն ժամանակ, երբ շենքի ու արտաքին հանգամանքների ցավն եք ողբում, միաժամանակ զրկում ու մոռացության եք տալի նրանց, որ իրոք կազմում են հայ թատրոնը։ «Հորիզոնի» հենց նույն համարում պ. էլբեն պատմում է, որ լավ դերասանները հեռացել են, որովհետև նրանց շաղ ուճիկները կրճատել են։ Հետաքրքրական

է, թե ի՞նչ կնշանակի էստեղ շաղ բառը։ Մյուս կողմից էլ, ասում է, Դրամատիքական Ընկերությունը չի կարողացել կանոնավոր վարձատրել այն հայ հեղինակներին, որոնք աշխատել են թատերական ինքնուրույն ու թարգմանական գրականության համար։

Լսում ե՞ք՝ ի՞նչ են ասում։

Իսկ ես դրա վրա կավելացնեմ։ Դրամատիքական Ընկերությանը ուրիշները փող են տվել, որ մրցանակ տան լավ թատերական գրվածքին։ Նրանք հավանություն գտած պիեսին, անուն ունեցող գրողներին զլանում են ամբողջ մրցանակը տալ, կեսն են տալի, որ կարծեմ 150 ռուբլի է։ Կավելացնեմ, որ Շիրվանզադեի, Ահարոնյանի և մյուսների պիեսները խաղում եք շարունակ ու իրենց, դրամատուրգներին թողնում զուրկ, բողոքավոր կավելացնեմ վերջապես, որ հայոց թատրոնը, այսինքն թատերական գրականությունը խրախուսելու համար տրված գումարը ծախսել եք, կարծելով թե դուք եք թատրոնը և էդ թատրոնն է, որ հյուսիս է տալի գրականությունը, ոչ թե գրականությունը, որ հյուսիս է տալի թատրոնին։

Էդպես էլ դերասանների վերաբերությամբ։ Տաղանդավոր, ջահել մարդիկ են երևում, տարիներով քաշ են գալի էդ կիսամեռ բեմի կուլիսներում, մաշվում, փշանում, և դեռ մինչև էսօր հոգ չի տարված նրանցից մեկն ու մեկի վրա։ Բայց ի՞նչ եմ ասում, չեք էլ մտածել, որ նրանցից շատ շատերը մինչև անգամ կարգին հայերեն չգիտեն ու մինչև օրս էլ սրվակին սրիկա են ասում։

Թատրոնն էս է, պարոննե՛ր, իսկ դուք պատերին եք նայում։ Եվ ձեր էս սխալը ծանրանում է ավելի ևս, որ դուք ձեր խնամած էդ հիմնարկությունն անվանում եք հայոց թատրոն, մինչդեռ դա միայն Թիֆլիսի, էն էլ Թիֆլիսի մի փոքրիկ մասի թատրոնն է, իսկ հայոց թատրոնն էն կենդան թատրոնն է, որին դուք լավ չեք վերաբերվում։

«ԱՄԼԵՏԻ» ԶԱՐԶԱՐԱՆՔԻ ՇԱՐՈՒՄԸ ՔԻՖԼԻՍՈՒՄ

Վերջին օրերս¹ Քիֆլիսի արքունական թատրոնում երկու անգամ իրար ետևից ներկայացրին Շեքսպիրի «Համլետը», հայերեն՝ պ. Ամո Խարազյանը, ռուսերեն՝ պ. Դալլսկին: Մինչդեռ հայերեն ներկայացման ծանր տպավորության տակ մտածում էի հայ դերասանի և նրա խմբի ապիկարության մասին, վրա հասավ անուն հանած ռուս դերասանը — պ. Դալլսկին իր խղճալի թագավորով, իր տիկնիկ թագուհով, իր մուժիկ Պոլոնիոսով, իր անկենդան Օֆելիայով, իր փետի կտոր կաշտով, վերջապես իր խոհարարուհի ու լվացարարուհի պալատական նաժիշտներով — ի մեծ միջթարության հայոց խմբի: Եվ էապես համերաշխ էս երկու խումբը Քրիստոսի շարչարանքի նախընթաց շաբաթը շինեցին Համլետի շարչարանքի շաբաթ: Մեջները եթե մի երջանիկ բացառություն կար, էդ հայ Պոլոնիոսն էր (պ. Միրազյանը) միայն:

Ես կարծում եմ ոչ հոր եղեռնական մահը, ոչ մոր շուտափույթ ամուսնությունը, ոչ հորեղբոր աղգապիղծ վարմունքը, ոչ Օֆելիայի թեթևամտությունը, ոչ Պոլոնիոսի պալատական նենգավորությունը, ոչինչ, ոչինչ էնքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանձարեղ նրբամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ գերասանի անճաշակ լալկանությունը, վախկոտ հայացքները դես ու դեն, անմիտ վազվզելը պատից պատ, անտեղի աղաղակներն ու լաց ու կոծը կամ ռուս դերասանի հիստերիկ հեկեկոցներն ու հոհոցները, հիվանդագին գալարումները, անդադար ծամածուրությունները ու գոռում գոչումները:

Եվ ավելի ևս զարմանում եք, երբ մարդիկ էդ բոլորն անում են միաժամանակ արտասանելով Համլետի էս խոսքերը, որ ուզում է դերասաններին.

«...Արտասանի՛ր թեթև և ազատ: Բայց եթե որոտաս, ինչպես մեր դերասաններից շատերը, ապա ավելի ուրախ կլինեի, որ մունետիկներն արտասանեին իմ տողերը: Զափից ավելի օղը մի սողոցի՛ր քո ձեռքով այսպես... այլ թո՛ղ շարժումները չափավոր

լինեն, որովհետև կրքերի ամենասաստիկ հեղեղի, փոթորկի, և այսպես ասենք, ալեկոծման ժամանակ, դու պետք է պահես բովական ինքնիշխանություն, որ այդ բոլորին մի տեսակ փափկություն տա: Օ՛, դա հոգիս տանջում է, երբ տեսնում եմ մի հաղթանդամ մարդ, գլուխը կեղծամով ծածկած, պատառոտում է կիրքը և մաս մաս անում ստոր ամբոխի ականջները... Իսկ խուժանը առհասարակ ընդունակ չի մի բան հասկանալու, եթե ոչ անբացատրելի մնչակատակներ և գոռում գոչում...» («Համլետ», թարգմ. Մասեհյանի, 102):

Մի՞թե էնքան հեռու են էդ մարդկանց ականջները բերանից, որ իրենց ասածը չեն լսում: Եվ խաղում են ոչ թե դրամայի ամբողջությունը, ոչ թե նրա մտքերը, այլ նրա բառերը, առանձին-առանձին բառերը, որ, Համլետի ասածի նման, թեև տգետներին ծիծաղ է պատճառում, բայց խոր վշտացնում է հասկացողներին: Դերասանը արտասանում է էն կտորը, ուր իր մեջ խորտակված Համլետը իր վերջին ապավենը, իր սերը — Օֆելիային զրկում է կուսանոց. ասում է՝ «Մտի՛ր կուսանոց»... և իսկույն կուսանոց բառի հետ վազում է դեպի Օֆելիան, իր սև վերարկվով նրան փաթաթում, իբրև թե կույս շինեց (Դալլսկի) կամ մի տեղ սրի անուն եղավ թե չէ, սուրն են զուրս քաշում, թեև Համլետը իսկի սուրը չի սիրում և ինքն իրեն ասում է՝ «Թո՛ղ խոսքերի մեջ լինի սուրը, Համլետ», ծիծաղ բառին են հանդիպում թե չէ, ծիծաղում են, ում մասին ուզում է ասած լինի...

Երկուսն էլ խոսք ու մին արած թագուհու տեղը բերել են մի ջահել աղջիկ նստեցրել ու առաջը կանգնել որոտում են. — «Քո հասակում արդեն արյունը սառած է լինում ու կիրքը հանգած...»: Երկու անճոռնի նկար են կախել. մինը — գեղեցիկը իբրև Համլետի հայրն է, մյուսը — տգեղը, հորեղբայրը: Հայոց ներկայացմանը մեկի վրա են հարձակվում, որպես տգեղի, ռուսաց ներկայացմանը՝ մյուսի: Հոր ուրվականի մասին հենց իրենք են ասում, թե մորուքը թուխ էր, բայց ճերմակ մազեր էին փայլում մեջը, և ներկայացնում են մի կոշտ ճգնավորանման արարած մինչև ծնկները երկար, տափակ և ճերմակ մորուքով: Մի կույր ճգնավոր կամ պառավ սալդաթ, բայց բնավ Արեսանման արքայի ուրվական, որ իր անօրինակ վշտով հանդիսավոր ու վեհորեն անցնում է բեմի մթության մեջ: Եվ կարծես ավելի ևս իլյուզիան փչացնելու, հանդիսականներին համոզելու համար, որ նա ուրվական չի,

պ. Ամո Խարազյանը ետևից սրի մի հարված հասցրեց՝ շրխկաց-
նելով «անխոցելի սովերի» թիկունքին:

Խոսքը մասնավորենք հայոց խմբի վրա:

Հայերը չէին գրել, թե ում թարգմանությունն են խաղում, բայց երևում էր, որ ուսերենից արած մի թարգմանություն էր, և էն էլ անհաջող թարգմանություն: Ասում են՝ «որքա՛ն բարեծնունդ արարած է մարդը, փոխանակ ասելու «ազնիվ արարած»: Ռուսերենն *благородный* բառն է, որ բարեծնունդ են թարգմանել, և անշուշտ *Его благородие*-ն է պատճառը: Փոխանակ էնեաս ասելու, ասում են էննե, փոխանակ Պյուտոսի—Պիրուս, փոխանակ կախարդի—սքանչելագործ, հին ասելու տեղ—ասում են առաջ-նակարգ, մահվան քնի մեջ—ասում են մեռյալ քնի մեջ, փոխ. իշխանավորների—իշխանասերների, փոխ. ինչ պետք է անենք—ինչ պետք է անես, փոխ. Պելիկանի—ձկնորս թռչուն, փոխ. հորեղբոր կինը—հորաքույրը, և այլն: Դրա վրա ավելացրեք էս տեսակ հայերենը՝ «աչքներիս մոտով անցավ», խնջույքները լուրեր են տարածել. կամ էս արտասանությունը՝ «Ձեռդ թակավոտական հոամանը կատանցիք» (Ռոզենկրանց): Եվ երևակայեցեք, որ էն էլ հաճախ կզկզում են, դերը չեն իմանում, կամ էնքան ցած ու անորոշ են ասում, որ հանդիսականներից ոմանք արդեն իրենց համար դեր են շինել միշտ կանչել դեպի բեմը—Բա՛րձր, բա՛րձր... Եվ եթե մեկը կա, որ հայ բեմից բարձր է խոսում, էն էլ հուշարարն է, որի ձայնը իսկի չպիտի լսվի: Ի լրումն ամենի, չեն իմանում, թե ո՛րտեղ են գտնվում և ի՛նչ են խաղում: Թագավորը կարծում է, թե արքայական ծիրանին վրացու շուխա է, փեշերը հավաքում է գցում կռանն ու վազում, ծիրանին բռնող մանկլավիկը մնում է ետևից նայելիս: Պալատականները ներկայանում են թագավորին, որը գլխարկը վերցնում է, որը չէ, որը դռնովն է դուրս գնում, որը պատի միջովը (կուլիսի): Որտեղ թագավորը, թագուհին ու Պոլոնիուսը գաղտնի խորհուրդ են անում և պալատականներից ոչ ոք չպիտի ներկա լինի, բոլորը տնկված են կողք-ներին, և մին էլ տեսնում եք իրենց գաղտնի խոսակցությունը վերջացնելուց հետո թագուհին կանչում է՝ «ո՛վ կա այդտեղ նախասենյակում, ներս եկեք...»: Վա՛հ, տնաշեններ, դրանից գոնե հասկացեք, որ ներսը չպիտի լինեիք: Եվ ինչ զարսանք, որ էս տեսակ թագավորն ու թագուհին իրենց պալատականներով պալատից դուրս գնալիս էնպես վայրենի դուրս խուժեցին, որ պալատի տախ-

տակն ու կտավն պատերի մի մասը հետները տարան: Եվ երանի ընդմիջտ դուրս գնան ու իրենց ամբողջ թատրոնն էլ հետները տանեն, որովհետև էդ տեսակ թատրոն չի լինիլ և շպետք է լինի:

1910

ՀԱՅԻ ՈԳԻՆ

Անհատներ կան, որոնք ապրում են և նշանավոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտոն ունեն կամ աստիճան: Առեք նրանցից էդ պաշտոնը կամ աստիճանը՝ կոեսենք՝ օխտը կորածի սինը: Մարդիկ էլ կան, որ առանց իշխանության էլ, թեկուզ նույնիսկ ձախորդության ու հալածանքի մեջ, միշտ երևում են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով: էդպես են և մարդկային ցեղերը: Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրույն իշխանություն, զենքի զոռ ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետդհետե հավել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Իհարկե, ծանր է եղել միշտ էս մաքառումը և բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիվ նրանք չեն կորել ու կան: էդ ժողովուրդներից մինն է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, որ իր գոյության տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, և սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ՝ ազգային կյանքով ու կերպարանքով:

Գիտությունը, լուսավորությունը մարդկային կյանքի պատմության շատ մութ տեղերի հետ միասին լույս կծգի և մեր անցկացած երկար ու դժար ճամփի վրա մինչև նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը: էսքան փորձություն ու տառապանք ունեցած մի ժողովրդի

անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարրերը ժամանակի այնպիսի ջանքերով անձնատուր: Մին էդ դրությունը հասկանալի է խավար բազմության համար, ներքին չի ինտելիգենցիային, որ ինչքան էլ ընդհանուր առումով խորթ լինի էս ժողովրդին իր հոգով ու կենցաղով, այնուամենայնիվ իր մեջ պետք է ունենա և ունի մարդիկ, որոնք ապրում են էդ ժողովրդի կյանքն ու պատմությունը: Նրանք առաջ պետք է անցնեն, որոնք, ցույց տան, թե որն է էս ժողովրդի ճանապարհը:

Մեզանում, հիրավի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք էս կամ էն կուսակցությանն են կամ լրագրիներ: Ամեն ազգի մեջ կան և միշտ կլինեն ամեն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջությունը:

Այո՞, լինում են դեպքեր, մի որևէ հոսանք ուժ է առնում ու ժամանակավոր էս կամ էն կողմը քաշում կյանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամեն ժողովրդի կյանքի մեջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին. և նա դարձյալ կխոսի ու պատասխան կուզի, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ուր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերում, թե՛ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՛կ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս և անսկիզբն», թե՛ դալար մարգերում ու խաղահանգիստ հովիտներում, ուր ճլուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի բունն անուշ: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնաշու պաղատանքն՝ ըրի մեջ, թե՛՝ «վերք Հայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ:

Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ: Եվ ի՞նչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածուխի ու ավերածության...

— Մո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա:

1918

Ընկալ ուսական վիթխարի հանճարը ու մահվան բռնից ինչում է լայնածավալ Ռուսաստանը մի ծայրից մինչև մյուսը: Թնդում է և ամբողջ լուսավոր աշխարհքը, որովհետև, ինչպես ճշմարիտ մեծ մարդ, կրելով կատարյալ իր ժողովրդի հոգին ու պատկերը, հանդիսանում էր իր ժամանակի գեղարվեստական գրականության այն հոյակապ ուժը, որ կարող էր մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը ահագին տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից մինչև հոգու ամենածածուկ խորշերը, հանդիսանում էր իր ժամանակի հակափիլիսոփան, որ աշխատում էր լուծել կյանքի առեղծվածը, խորամուխ լինել, հասկանալ ու պատասխան գտնել, թե ինչո՞ւ է ապրում մարդը և փիլիսոփայական խաղաղությամբ նայելով մահվան պաղ ու խորունկ աչքերին՝ ուզում էր հաշտություն ստեղծի նրա ու նրա առջև սարսափող հոգիների մեջ:

Գերագույն ապավեն էր որոնում, Աստված էր որոնում տառապող ու դժբախտ մարդկության համար և գտնում էր նրան ոչ թե ուժի մեջ, այլ արդարության, ճշմարտության, ներքին, բարության մաքրության և այն սիրո մեջ, որ հավասարեցնում ու եղբայրացնում է մարդկանց, թշնամի չի ճանաչում աշխարհքում, չի հակառակում նույնիսկ շարին. և ազատությունն էլ հենց սրա մեջ էր դավանում:

Մահվան հանդեպ հաշվելով մարդու կարծօրյա կյանքի օրերը՝ իջեցնում է նրա արժեքը ու քարոզում է այն էլ նվիրել սիրո ու բարության Աստծուն:

Դեռ երիտասարդ հասակից նրա միտքը քաշում է դեպի բնությունն ու գյուղացին — մուժիկը: Այնտեղից տարածվում է բոլոր արհամարհվածների ու զրկվածների վրա ու մի օր էլ բացականչում է. «Զեմ կարող շտեսնել մերկերին ու քաղցածներին»: Իհարկե, այս այն տեսնելը չի, որ տեսնում են սովորական աչքեր ունեցողները: Եվ այսպես տեսնելուց հետո ուսուցանական թվականներին գրում է. «Քաղաքային կյանքը, որ առանց այն էլ խորթ էր թե՛ հոգուն, զզվեցրել է արդեն և փարթամ կյանքի վայելքները, որ երբեմն հաճույց էին տալիս, այժմ տանջանք են դարձել ինձ համար»: Եվ ահա նա վազուց խորշում էր այս կյանքից ու սրա վայելքներից, որ հիմնված են ուրիշների տառապանքների վրա:

վայելքներից, որ նա համարում է կեղծ քաղաքակրթութիւն արդյունք ու ընդհանուր առումով կոչում է անառակութիւն: Բայց խորշում էր շրջապատված այդ վայելքներով, ապրում էր իր համոզմունքներին հակառակ պայմաններում — մի ծանր դրամա, մի ներքին կոիվ, որ պետք է մի օր մի լուծում, մի ելք ունենար:

Այսպես առաջ գալով մենք գտնում ենք, որ նրա գործերից ամենամեծն ու բնորոշը, նրա գլուխ գործոցը եղավ վերջին փախուստը — ելքը Եգիպտոսից:

Նրա դժգոհ հոգին այլևս չկարողացավ հանդուրժել այս կյանքին, կամ, ավելի ճշմարիտը՝ կյանքի այս եղանակին, ու մեջքըն արավ նրան, երեսը դեպի անապատ, այն մեծ դժգոհների նման, որոնք անապատ են քաշվել իրենց հոգու հետ այնտեղ ապրելու և խորհելու, այնտեղ վայելելու այն ցանկալի խաղաղութիւնը, որ ստեղծագործող ու բարի հոգիների հայրենիքն է, այնտեղ մտածելու կյանքի անառակութիւնն ու մարդու փրկութիւնն վրա:

Այդ ճանապարհին էլ գտավ իր մահը:

Տրտմութիւնն օր է համայն Ռուսաստանի և ամբողջ լուսավոր մարդկութիւնն համար, տրտմութիւնն օր է ռուսական, այլև համաշխարհային գրականութիւնն համար, տրտմութիւնն օր է բոլոր նեղվածների ու ճնշվածների համար, որոնք իրենց նեղութիւնն մեջ սովոր էին լսելու նրա հուժկու ձայնը, տրտմութիւնն օր է բոլոր բարի սրտերի համար, որոնք գիտեին, որ դեռ կենդանի է Տոլստոյը...

Ընկավ մեծ գեղարվեստագետը, մեծ քարոզիչը ու մեծ դժգոհը:

Երախտագետ սրտով ու խորին պատկառանքով խոնարհվում ենք մեծ մարդու հիշատակի առաջ:

1910

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ

— Այժմ ի՞նչ պետք է անեք ի. Աբովյանի արձանի համար, երբ միայն 200 ու ունեք 18,000-ի փոխարեն, հարցրի Կուլտուրական Միութիւնն պ. նախագահին:

— Երեկույթներ պետք է սարքենք, հարուստներին պետք է դիմենք, ուրիշ ի՞նչ անենք, պատասխանեց նա:

Ու սիրտս մի երկյուղ ընկավ: Ուրեմն կարող է պատահել, որ այս ճանապարհով կանգնի ի. Աբովյանի արձանը, երևի վրեն էլ գրած «Հայ ազգը — իր մեծ զավակին»:

Ո՛չ, այդ անկարելի է, այդպես չպետք է լինի: Հայ ժողովուրդը, ինչքան էլ անտարբեր ասենք, ինչքան էլ հոգնած ու աղքատ, թույլ չի տալ և թույլ չպետք է տա, որ այդպես լինի: Դա մի տաղանդավոր գրողի արձան չի, դա մի անհատի արձան չի, դա հայ ժողովրդի վերբոս սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ՝ Արարատի սրբազան դաշտում սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ:

Պետք է կանգնի հավիտյան ու անլուելի պատմի աշխարհքին հայի տանջանքն ու տենչանքը: Սրա նման մի կոթող էլ կա, որ թերևս մի օր հայութիւնը կբարձրացնի Վանա ծովի ափերին, նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» Աստուծո հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոց աղաղակի»...

Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և՛ երկինքը և՛ երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մոնչում է մինչև երկինք:

Սրանց արձանները երեկույթներով ու հարուստների փողով չեն կանգնելու, այլ ազգի ընդհանրութիւնն: Սա մի պարտականութիւն է, բայց միաժամանակ և մի իրավունք, որ վերապահված է ամեն մի հայի:

Ի. Աբովյանի արձանն էլ թո՛ղ ուշանա մինչև հարկավոր գումարի լրանալը, միայն թի հայ ժողովուրդը կանգնի: Նրա արձանը պետք է կանգնի այն տեսակ երեք ուղբերով, որ այսօր նվիրաբերում է մի դառն աշխատավոր, մի Անուշավան Աբովյան իր սրտի անկեղծ հրձվանքի ու ազգային հպարտութիւնն հետ միասին: Բայց այդ երեք ուղբեր շուրջ է. կոպեկներ լինեն թող, միայն թե ամենքը, ամենքը գան ու մասնակցեն, որովհետև նա ամենքինն է ու ամենքը նրա մեջ են:

1910

ՇԻՐՎԱՆՁԱԳԵՆԻ ՀՈՒՅԵԼՅԱՆԸ

Հրապարակի վրա գրված է մեր նշանավոր վիպասան և դրամատուրգ Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակի խնդիրը¹։ Թիֆլիսի հայոց Դրամատիկական ընկերության վարչությանը, որ գործի նախաձեռնությունը առել էր իր վրա, ընդհանուր ժողով հրավիրեց, ուր և ընտրվեց հոբելյանական հանձնաժողով։ Այսպիսով առաջներս է գրական մի տուն։

Այստեղ մենք խոսք չենք անելու Շիրվանզադեի տաղանդի ու նրա գրական արժանիքի վրա, այլ միայն ուզում ենք վկայել, որ հայ ժողովուրդը եթե մարդիկ ունի, որոնց պետք է հարգի հոբելյանով, դրանցից մինը Շիրվանզադեն է։ Հոբելյանական տոներին ամեն մի ժողովուրդ՝ հանձին հոբելյարի, գալիս է հարգելու, պսակելու ինքը իրեն, իր շնորհքը, իր մտավոր-հոգեկան ուժերը, ուժեր, որ ընդունակ լինեին պատկառանք ներշնչելու ո՛չ միայն ազգի ընդհանրությանը, այլև օտարին։ Այդ տեսակետից «Յավագարի», «Քառսի», «Արտիստի» և շատ ուրիշ վիպական ու բեմական գրվածքների հեղինակը հանդիսանում է անվիճելի արժանավոր հոբելյար։ Մենք միայն կցանկանայինք, որ արժանավոր մարդու հոբելյանն էլ տոնվեր արժանավայել կերպով։ Կցանկանայինք՝ ավելի մեծ տարածության վրա լսվեր հայ ժողովրդի խրատասական ձայնը, որ երեսուն տարուց հետո գալիս է մայրական խոսք բերելու իր տաղանդավոր զավակին։ Կցանկանայինք, որ գրական այս տոնին հայտնվեին և՛ ուստահայր, և՛ տաճկահայր, և՛ պարսկահայր, և՛ Հնդկաստանի, Ամերիկայի ու Բուլղարիայի դաղձիական հատվածները, և ոչ միայն այս տոնին, այլև միշտ, նման տոներին, և դա դառնար սովորություն։

Եվ հենց այդպիսով էլ արդարացրած կլինեինք այս տեսակ տոների բարոյական մեծ նշանակությունը։ Կցանկանայինք, որ տաժանելի երեսուն տարիներից հետո տեական հանգստի հնարավորություն տրվեր նրան, միայն մի պայմանով — վերացած լինեին հարգանքի այն բոլոր միջոցներն ու ձևերը, որ մեր հոբելյարների ստացած պսակների փշերն են կազմում և մարդ չի հասկանում հարգանքի՝ համար են, թե՛ վիրավորանքի։ Մանավանդ

Շիրվանզադեն, որպես դրամատուրգ, այդ կողմից մեծ հարմարություն է տալիս։ Ամեն մի քաղաքում կարելի էր դնել նրա դրամաներից և տալ հոբելյանական ներկայացումներ։ Այդ ներկայացումները և նրա երկերի մասին եղած դասախոսությունները շատ բան կապահովեին միանգամայն գեղեցիկ ճանապարհով և կհեշտացնեին հանձնաժողովի գործը — մնացածը հոգալու նույնպես պատվավոր ձևով։

Վերջապես կցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը։ Եվ երբ որ տեսնի — կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջն է։

1910

ԴԱՌՆԱՅԱՄ ԺՈՂՈՎՈՒՐԳ

Մտածմունքներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից։ Նրանք է՛ն ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները կամ ժանտախտի թուլյնը։ Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվեք, առողջանաք։ Ի հարկե, եթե է՛նքան արիություն ու հասկացողություն ունիք։

է՛ն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ շարունակ կա մեր հոգում։

է՛սպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում։

Բայց քիչ են է՛ս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը։ Մեծ մա-

¹ Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյա հոբելյանը նշվել է 1911 թ. մայիսի 22-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում։

սամբ ախտի գոյութիւնը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հուշակում հիվանդ: Ամեն միւր ինքը շար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստախոս չի, թայֆայա-կան չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց շպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: Աշխարհը էն է, որ մեր ամբողջութիւնը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդութիւններով:

Նայեցե՛ք:

Գյուղացի ուսնձպար մարդիկ են, հարեան, միասին մեծա-ցած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում՝ մյուսը նախան-ձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «արնով է ընկ-նում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակից-ներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողութիւնը լսելիս քունը կորց-նում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հա-ջողութիւնն վրա է դարձ անում, ու տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք — միշտ դժգոհ է, բողբոջում է, գանգատվում է անարդարութիւններից, և դիտե՛ք էդ անարդարութիւնը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետ-նին հավասարել կամ հենց երկուսն էլ փշանում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտութիւն, է՛լ ափաշկարա սուտ, է՛լ շարխոսութիւն, կեղծավորութիւն: Նեղ թայֆականու-թիւն հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրատարակի, միշտ պետք է զար-կել, ծաղրել կամ լռել, մի խոսքով ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի:

էդպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչ-

ների մեջ: Մեկը մյուսի հուշակն ու հաջողութիւնը տանել չի կա-րողանում:

Հիմի եկեք ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ է՛ն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ շնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վեր-ջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ձգտում են պաշ-տոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյա-պես... ո՛չ մի մեղմութիւն, ո՛չ մի ներողամտութիւն, ո՛չ մի սահ-ման շարութեանը:

Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար երևույթի վրա պետք է նայել բնութեան ու պատմութեան օրենքների բարձրութիւնից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմութիւնը: Նա երկար դարերով մեզ դրել է բար-բարու ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյու-թիւն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փշանում: էսպես է բնութեան օրենքը:

էն հասարակ վարունկի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեռք թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: էնպես դառնանում ու դաժանանում է և մար-դը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնութիւնը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաջադիմութիւն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «գրականութիւն», և՛ «դպրոց», և՛ «բարեգործու-թիւն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասութիւններով, մի ընդհանուր ցավով. որի ճարը դրսից անել չի կարելի: էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դա-ժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի:

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստութիւն, հոգու արիւ-

թյուն և առողջ բնազդներ, անկարելի է աշքներս փակենք մեր էս
օտանը հիվանդութեան առաջ և շղթանք, որ մեր հոգին շատ է դառ-
նացած, մեր ներքին մտքողը շատ է փշայած, և դրա դեմ կռվելու,
առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում,
և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժ-
բախտութիւնը: Ապա թե էդ փրկարար գիտակցութեանը կհետեն
ինքնակատարելագործութեան բարձր ցանկութեանն ու ազնիվ
գործը:

Արի՛շ ճանապարհ չկա. ներսից էլ լինելու հաստատ փրկութիւ-
նը, որովհետև ներսից ենք փշայած:

1910

ՏՆՈՒՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(Ղազարի մահվան տարեդարձին)

Ազի՛ղ մի տարի առաջ՝ մին էլ այսօր էր, որ նա դարձավ
հիշողութիւն: Մենք էլ հիշողութիւններ կգրենք: Արի՛շ ի՞նչ կարող
է անել մեր մարդկային ապիկարութիւնը ամենազոր մահվան
հանդեպ:

Սակայն այսօր, նրա մահվան առաջին տարեդարձին ես այն
չեմ պատմելու, թե ինչ զգացմունքով էինք կապված մենք կյան-
քում ու ինչ օրեր անցկացրինք, ոչ էլ նրանից եմ խոսելու, թե ինչ
եղավ նրա մահն ինձ համար, այլ հիշատակելու եմ մի երկու տա-
րօրինակ դեպք: Տարօրինակ եմ ասում, որովհետև սովորաբար
տարօրինակ են համարվում, թե չէ մենք այդ տեսակ դեպքերը
ընդունում էինք որպէս սովորական ու բնական երևույթներ:

Մենք հաճախ խոսում էինք բնութեան ու կյանքի գաղտնի
ուժերից, որ տակաւին մարդը չի ճանաչում ու չի գիտակցում
պարզաբն: Խոսում էինք և հոգիների փոխադարձ հաղորդակցու-
թեան ընդունակութեանից, որ տարածութեան շին ճանաչում է
ազգում են ամեն տեղ ու ամեն հանգամանքում, բայց միայն
եռաբար բնութեան տեղ մարդիկն են զգում ու հասկանում: Ե՛վ մեր

մեջ՝ համարելով մեզ էլ այդ տեսակի մարդիկ՝ շատ դեպքեր էինք
բերում մեր կյանքից:

Ահա այդ դեպքերից երկուսը. մինը՝ թե ինչպես նա ինձ տե-
սով վտանգի մեջ, մյուսը՝ թե ինչպես ես տեսա նրա մահը:

Մրանից տասը տարի առաջ, 1902 թվականին, ես Քիֆլիսի
Հայոց Ազգագրական Ընկերութեան խմբագրութեան մասնաժողո-
վի մեջ էի: Գարնանը, մի գիշեր, երբ հավաքվել էինք խմբագրա-
կան մասնաժողովի նիստին, մի անակնկալից ես հանկարծ ընկա
կես գիշերին ինձ բերին մեր տունը: Դրութիւնս այդ գիշեր սաս-
տիկ ծանրացավ. բայց, իհարկե, այդ ժամին տմեկքը քնած էին
ու ոչ ոք էլ բան չէր կարող իմանալ: Գիշերվա մի ժամին մեր
զանգը տվին: Գնացին, եկան, թե՛

— Աղայանն է կանգնած ներքևը մթնում, բեզ է հարցնում:

Դուրս եկա հարցնեմ՝ ինչ կա, ինչ է պատահել:

— Դե լա՛վ, լա՛վ... հետո... Չայն տվեց ներքեից ու դնաց:

Առավոտը եկավ, դեմս կանգնեց ու վարմանք հայտնեց, թե
ինչպես է, որ ես կենդանի եմ: Պատմեց ու նկարագրեց, նկարա-
գրեց ամենայն ճշտութեամբ, թե ինչ դրութեան մեջ էր աեսել ինձ
գիշերը: Նրա համար էր վախեցել ու եկել անժամանակ, համոզ-
ված, որ ինձ անպատճառ մի դժբախտութեան է պատահել և
զարմանում է, որ ոչինչ չի պատահել:

Ես եղածը ծածկիցի նրանից մինչև մի քանի օր անցավ:

Մի ուրիշ անգամ ես աեսա նրան: Տեսա, թե ինչ պատահեց
նրա հետ, ես էլ վախեցած շտապեցի նրա մոտ, բայց այլևս չէի
կարող նրան պատմել...

Այդ անցյալ տարի, ուղիղ մին էլ այսօր, հունիսի 20-ի առա-
վոտն էր: Մի տոթ առավոտ էր: Ժամը 9-ից նոր էր անցել:

Նստած էի գրասեղանի առաջ ու միտք էի անում:

Այս խաղաղ մտորման ժամին հանկարծ առաջս փայլատա-
կեց մի պատկեր, մի կենդանի ու զարհուրելի պատկեր... Ղազա-
րոսն առջև գետին տապալվեց... մեռավ...

Այս պատկերը կայծակի արագութեամբ, ավելի վառ, քան
իրականութիւնը, եկավ ու անցավ մի անսպասելի ծանր հարվա-
ծի պես և այնպես տակն ու վրա արավ. որ ցավի ու շփոթութեան
մեջ սկսեցի մտտիկ բարեկամների անունները որոնել, թե ո՞րտեղ
են, որ հետազոտեմ... Մի կերպ աշխատեցի ինձ հաղթանակել,
հաղմունքս զսպել. վեր կացա, սկսեցի սենյակումս շրջել, բայց

չէի կարողանում ինձ տիրել: Այս ժամանակ ներս է մտնում կինս ու տեսնելով ինձ այդ դրութեան մեջ, զարմացած հարցնում է՝ թե ի՞նչ է պատահել: Պատմում եմ, թե այս տեսակ մի հիմար բան է մտել զլուխս ու շեմ կարողանում ազատվել: Նա ծիծաղում է վրեժ ու հանդիմանում, Սկսում է խոսել ուրիշ բանից: Հենց այս խոսակցութեան միջոցին փողոցից ներս է ընկնում գունաթափ որդիս...

— Պապեն ընկավ...

— Ո՞րտեղ...

— Փողոցում...

— Ի՞նչպես թե ընկավ...

— Ուշաթափվեց... տարան տուն... բժիշկների ետևից են վազում...

Վազում եմ: Նրա տանից մոտ եմ... Հեռվից մեր բարեկամներից մինը ձեռքով դեմս նշան է անում օդի մեջ ու ձայն է տալի.

— Վերջացավ...

Վազում եմ... Մի երկու րոպեից աչքիս առջևն էր նրա վիթխարի դիակը, իսկ ականջումս կանչում էր մեր բարեկամի գուժկան ձայնը.

— Վերջացավ...

Այո՛, վերջացավ: Հավիտյան վերջացավ: Եվ ինչքա՛ն բան վերջացավ ինձ համար... որովհետև ինչքան էլ սիրելի լինեք նա որպես գործիչ, հազար անգամ ավելի թանկ էր որպես ընկեր, և ինչքան էլ շնորհալի լինեք որպես ստեղծագործող, անհամեմատ ավելի բարձր էր որպես ստեղծագործություն: Աստծո հազվադեպ հաջող ու պայծառ ստեղծագործություններից մինն էր նա:

1912

ԵՐԵԿՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՍՕՐՎԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորից ոռնում է հին ժանոթ գույժը — «Տաճկաստանում կոտորում են հայերին»...

Նորից կոտորածի մոայլ մղձավանջը ծանրանում է մեր հոգնած սրտերին և նորից ամենուրեք զալկանում է Արևելքի հին տառապյալը — հայ ժողովուրդը:

Ոմանք ասում են՝ սուտ է, կոտորած չկա: Հայերի դատարկ սարսափն է միայն, որ աղաղակում է այդպես զարհուրելի: Բայց մեր աշխարհքներին ու կիսավայրենի ժողովուրդներին ծանոթ մարդը ամենայն հեշտութեամբ պետք է հավատա կոտորածին:

Եթե մինչև անգամ միայն սարսափն է գոռում այսօր, մի՞թե սարսափը դատարկ բան է, էն էլ սարսափելի երկրում ու սարսափելի ժողովուրդների մեջ: էդ էն սարսափն է, որ աղաղակում է ամեն կոտորածից առաջ ի լուր աշխարհի:

Մի՛ ասեք, թե սուտ է և ապարդյուն ու թշվառ քաղաքակալության մի՛ դիմեք անհույս ու շատ փորձված կողմերում:

Ի՞նչեցեք հայոց պատմությանը, կովկասի պատմությանը, Արևելքի պատմությանը — նրանք ձեզ կասեն. էդպես է եղել միշտ — սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած... իսկ վերջին դարերում սարսափի, կոտորածի հետ միաժամանակ կկարգաք. «ս. պատրիարքը գնաց մեծ եպարքոսի մոտ, նրան հավաստիացրին, որ արդեն կարգադրություն է եղած խաղաղությունը վերականգնելու և շարագործներին պատժելու, կամ թե չէ՝ պատրիարքը հրաժարական տվեց...» և դարձյալ սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած...

Վերջերք մեր պատմությունից ժամանակի մի որոշ տարածություն: Ահա ձեզ 1912 տարի:

1912 տարի է մի անհավասար կովի մեջ միսն ատամն առած մաքառում ու տանջվում է էս ժողովուրդը, կոտորվում ու փշանում է էս ժողովուրդը:

1912 տարի է Արևելքի բոլոր հզորներն ու բարբարոսները արյունով ու արտասուքով հեղեղում ու ողողում են էս երկիրը: 1912 տարի է սարսափ ու կոտորած, ջարդ ու գաղթ հետևում են իրար անընդհատ:

էս ամենը դարերով տեսնող ու տանող ժողովուրդը անշուշտ մի իմաստություն պիտի հաներ ու սովորեր էսքան դառը փորձերից ու փորձանքներից, մի քաղաքականություն պիտի ստեղծեր ու մշակեր իր համար էս դժոխք աշխարհքում:

Եվ հայ ժողովուրդը ստեղծեց ու մշակեց իր համար գլխապահության, ինքնապաշտպանության քաղաքականությունը:

Բայց լավ փորձելով ու տեսնելով, որ անկարող է միայն ինքնապաշտպանութիւն մը իր զլուխը պահել, միշտ աշխատել է միաժամանակ ունենալ մի հզոր դաշնակից կամ ավելի ճշմարիտը — հովանավոր Արևմուտքի քրիստոնյա պետութիւններին, որովհետև նրան անզայր հոշոտում ու ծվատում էին ոչ թէ միայն վաչկատուն ցեղերն ու ժողովուրդները Արևելքի, այլև հենց էն պետութիւնները՝ զբաղւորական թի իջած, որոնց հավատարիմ հպատակն ու հարկատուն էր նա:

Եվ 1912 տարի շարունակ իր երկրի մերթ էս, մերթ մյուս կողմերում ինքնապաշտպանութիւն կազմակերպելով ու դիմագրավելով օրհասական տագնապների մեջ, նա՝ հայ ժողովուրդը երկար դարերով անզայր օգնութիւն ու պաշտպանութիւն է ազդեսել քրիստոնյա Արևմուտքից, և էդքան դարերի ընթացքում միայն երկու անգամ է պատահել, միմիայն երկու անգամ, որ նա Արևմուտքից գտել է օգնութիւն և ուժեղ հովանավոր:

Առաջինը եղել է արևելյան հոովմեական կախարութիւնից — Բյուզանդիայից, երկրորդը — ռուսական կախարութիւնից:

Հայոց պատմութիւնը հոյակապ է եկարագրում էն տեսարանը, երբ Ձիրավի մեծ դաշտում մի կողմը պարսկական թշնամի զորքն էր ծփում «Իբրև ծով իմն ահեղ», իսկ նրա դեմ Հայաստանին օգնութիւն եկած բյուզանդական բանակն էր կանգնած իր խաչանիշ դրոշակով «Իբրև լեռն աղամանդեայ»: Եվ մինչդեռ Արևելքի ու Արևմուտքի էս ահագին զորութիւններն իրար եկած վճռում էին հայ ժողովրդի ճակատագիրը՝ վերև, Նպատի նվիրական բարձունքին հայոց մեծ Ներսեսը գոչում էր. «Առ Տէր՝ բազկատարած՝ հայցմամբ խնդրելով ի նմանէ հայիլ ի խաչակիր դրօշակ իւրոյ ժողովրդեան», որի աշխարհքը դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»:

Թերևս ավելի սրտառու է, երբ շատ դարերից հետո էջմիածնին օգնութիւն շտապող ռուսաց բատալիոնները՝ Կրասովսկու առաջնորդութիւնով Ապարանի լեռներից Պարսկաստանի գահաժառանգ Արբաս Միրզայի տասնապատիկ ավելի ուժեղ բանակի կրակի միջով ձգվում էին դեպի հայոց մայր Աթոռը, և մինչդեռ ամբողջ օրը Արարատյան դաշտում, Օշականի ձորում, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի շուրջը որոտում էր պատերազմը, մի ուրիշ

մեծ Ներսես՝ սեղան էր հանել Հայաստանի սրբութիւնները և Լուսավորչի գերեզմանի առջև տարածված ամբողջ միաբանութիւն մը Աստված էր աղաղակում պատերազմի ելքի և պարսկական դժոխքի մեջ այլով իր ժողովրդի փրկութիւնի համար: և աչքերը հանած, լեզուները կամ թուններն ու ձեռները կտրատած հայ մարդիկ Մայր տաճարի զանգակների տխուր ղողանջուով վրա սողում էին էջմիածին կամ դեպի քրիստոնյա բանակը:

Եվ զուր չի էդ հողի վրա հայոց եկեղեցին արձան կանգնեցրել հայ ժողովրդի ապագա սերունդներին ի գիտութիւն:

Այո՛, էդ ամենը պետք է իմանան ապագա սերունդները:

Այսօրվա շատ մարդիկ, հայ թե ռուս, չեն էլ կարող երևակայել, թե ինչպես են իրար հանդիպել հայն ու ռուսը: Ականատեսներից մինը, հայտնի դեկարթիստ Ե. Ն. Լաչինովը, իր «Նոստոլոգիայի» մեջ սաստիկ սրտաշարժ պատմում ու նկարագրում է անցյալ դարի սկիզբներում էդ հանդիպումները:

Նկարագրում է տաճկական, պարսկական ու քրդական գահաժողովուրդները, պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահան ու տեղահան եղած: Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը՝ ժեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով, русь! русь! здрасти! здрасти!...

Եվ էդ մի բառով էին արտահայտում ամեն բան, և սարսափ, և աղաչանք, և սեր, և խնդիր, որովհետև լեզու չգիտեին: Իսկ մյուս կողմից. «He бойтесь! не бойтесь!» ձեն էին տալի սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը:

Ակներև էր, ասում է նա, Լաչինովը, որ գերազանց հանդիսանալու ցանկութիւնը չէր, այլ յուրաքանչյուրը սրտին հարագատ կարեկցութիւնի զգացմունքն էր ասում ամենքին: Մեզանից ամեն մինը մասնակցում էր գժբախտների վիճակին: Նրանք իրենց հանձնել էին մեր պաշտպանութիւնը, մենք տեսնում էինք նրանց լիովի վստահութիւնը ռուսական բնավորութիւնը: Նրանց երախտագիտութիւնը շարժում էր մեզ, հարուցանում էր մեր մեջ ազգային պատվասիրութիւնի բարձր ու ազնիվ զգացմունքը: Վերջապէս վտանգի միջի կիներ, էն թույլ ու անպաշտպան արաբածը, որ սակայն ամեն ժամանակ ու ամեն տեղ մեծ ազդեցութիւն է ունեցել

¹ Նուսը վերաբերում է 1826—27 թթ. ռուս-պարսկական պատերազմին:

² Ներսես Աշտարակեցի (1770—1857) — կաթողիկոս:

սխրագործութիւնների վրա, ասպետական ոգու վրա,— ահա թե ինչն էր պատճառը, որ մեզանից ամեն միւր հարձակվողներին նկատում էր որպէս անձնական թշնամիների և սլանում էր պաշտպանելու ոչ թե իբրև օտար մարդկանց, այլ իբրև իր արենակիցներին» (Кавказск. сб. т. I. Отрывок из «Исповеди» Лачинова).

Նա, լաշինովը, պատմում է, թե ինչ սրտառու խանդավառութեամբ էր դիմավորում իրենց հայ կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախութիւնից. թե նույնիսկ էն երեխան էլ, որ նոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «Здравствуй, здравствуй...»:

Իսկ մյուս կողմից ռուս օֆիցերներն են գանդատվում, թե հայերին օգնութեան գնալիս անկարելի է կարգ պահպանել զորքի մեջ, զինվորական շարքերում. որովհետև ամեն մի զինվոր առաջ է նետվում ավելի շուտ օգնութեան հասնելու համար և խանդարում են կարգը: Անկարելի է լինում կարգ պահպանել:

էսպես. էն լացախառն ու աղոթքախառն «Здравствуй»-ն, որով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական ազատարար բանակին, հենց էնպես աղոթքով ու արտասուքով էլ արձանագրվեց ու հավերժացավ «Վերք Հայաստանի»-ի մեջ, ինչպես էն ի խորոց սրտի խոսքերից միւր, որ երբևիցե արտասանել է հայ ժողովուրդը աշխարհքի առաջ, և իր մշտական տառապանքի մեջ էլ միայն էն ժամանակ է մի իրական օգնութիւն տեսել, երբ հնչել է եղբայրական հուժկու «Не бойтесь»-ը հանուն արդարութեան, հանուն քաղաքակրթութեան:

Մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ վառվում է Անատոլիայի անմար դժոխքը, չի մարած ռուս մարդու լայն սրտի մեջ էդ ազնիվ ու վեհ զգացմունքը, որով նա պետք է պարծենա աշխարհքի առաջ. մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ միլիոնավոր մարդիկ կոտորածի առաջ սարսափահար կարեկցութիւն ու պաշտպանութիւն են աղերսում — ռուսական մեծ պետութիւնը չի հրաժարվի Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդութիւններից և՛ հիմնվելով միջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պարտավորութիւնների վրա՝ կարտասանի իր հսկայական «Не бойтесь»-ը. մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի զգացմունքին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի

էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսութեանը, քաղաքակիրթ աշխարհքի էս անվերջ խայտառակութեանը:

1912

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾԻՐԻՄԸ

«Ամեն մարթ չի՛ կանա կարթա
Իմ գիրուն՝ ուրիշ զրբն է:
Բռնիաթըս ավագ շիմասա՛
Քարափ է, քարուկրբն է...»

Սայաթ-Նովա

Մեր սիրելի նկարիչ Գ. Բաշինջաղյանը անցյալները «Մշակում» մի նամակ էր տպել ու հիշեցրել էր մեր անմահ երգիչ Սայաթ-Նովայի շիրմի խնդիրը:

Եթե չեմ սխալվում՝ մի անգամ էլ, մի քանի տարի առաջ, մեր ազգայիններից միւր հրապարակ հանեց դարձյալ Սայաթ-Նովայի շիրմի խնդիրը, բայց էնպես անպատասխան էլ անցավ ու մոռացվեց թե հարուցած խնդիրը, թե ինքը՝ հողվածագիրը:

Հիրավի, ծանր է, երբ միտք ես անում, էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հոգի, էսքան ազնիվ ու կենդանի մի սիրտ ու էսքան մոռացված մի գերեզման...:

Այո՛, էս ազգը դառը ժամանակների ու վայրենի հարվածների տակ ջախջախված, խանգարված ու խառնված մի խալիս է դարձել ու դեռ ուշքի չի եկել նորից, մի ամբողջութիւն չի դարձել ու չի ապրում իր կյանքով. թե չէ ինչպե՛ս կարող էր պատահել, որ Սայաթ-Նովայի երգերն ու գերեզմանը մնային մոռացված:

Հայոց նորաբաց Գրական Ընկերութիւնը որոշել է մոտիկ առաջիկայում կազմակերպել հատուկ Սայաթ-Նովային նվիրված մի գրական-երաժշտական երեկո և շիրմի խնդիրն էլ էս անգամ կարգի կդրվի:

Ծվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու շերմանա նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով:

1912

ՄԻՔԵ ԴԺՎԱՐ Է

Հայոց Գրական Հնկերութեան առաջին երկույթի բացմանը մեր գրեթե ամեն մի ուզողութեան ու ամեն հոսանքի մարդիկ միասին հավաքվեցին, միեկնույն զգացմունքով, միեկնույն անկեղծութեամբ խոսեցին միեկնույն առարկայի վրա հաշտ ու համերաշխ էս երկույթը էնքան լավ էր ազդել մերոնցից շատերի վրա, որ չէին իմանում ինչպես արտահայտեն իրենց ուրախութիւնը. իսկ նրանց ուրախութիւնը էնքան ծանր է ազդել ինձ վրա, որ չեմ իմանում ինչպես հայտնեմ իմ վիշտը:

Մի՞թե հիրավի, միտք եմ անում ես, մենք էնքան ենք զուրկ առաքինութիւններից, որ մի լավ գործի մեջ էլ իրար կողքի կանգնելն ու միասին ուրախանալը պետք է էսքան մեզ զարմացնի ու էսքան ուրախացնի:

Եվ հետո է տանում ինձ էս մտածմունքն ու ավելի մեծ է վիշտը:

Կյանքն՝ իր ամբողջութեան մեջ՝ մեծ է, շատ է մեծ. կյանքը — տիեզերական կյանքն է, և մարդու կյանքի ամբողջ վեհութիւնն ու քաղցրութիւնն էլ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով: Բայց մարդը սովորաբար չի կարողանում ապրել էն մեծ կյանքով. ապրում է միայն նրա մի մասով — մարդկութեան կյանքով: Սակայն նույնիսկ զրանով — մարդկութեան կյանքով ապրելու էլ քչերն են ընդունակ: Չէ՞ որ կյանքն ինչպէս անսահման մեծ է, էնպես էլ փոքր է անսահման: Եվ ահա ընդհանրապես ապրում են ավելի նեղ ու փոքրիկ կյանքերով: Գո ազգային կյանք, պետական կյանք, դասակարգային կյանք, կոոնակցական կյանք, ավելի — նեղ Թայֆայական կյանք — թշնամոս

բանակների պես կանգնած իրար դիմ մինչև էն պատլիկ ես-ը... էսպես էլ գնալով, գնալով էնքան է նեղանում ու նեղարտանում, մինչև կտրում է մարդ արարածի ազատ շունչը ու բանն էնտեղ է հասնում, որ նույնիսկ իրար հարազատ մարդիկ զարմանում են, որ կարող են իրար կողքի կանգնել ու միասին ուրախանալ:

Ո՞վ ողորմելի ուրախութիւն, ինչքա՞ն ցավալի բաներ ես ասում դու...

Բայց մի՞թե ճշմարիտ է, էդքանն էլ չկա մեր մեջը: Մի՞թե անկարելի է լինել առանձին կարծիքի ու համոզմունքի և հարգել իրար ու նույնիսկ միասին ուրախանալ: Մի՞թե դեռ ժամանակը չի հասել, որ կարողանանք լինել ավելի լայն սիրտ, ավելի համբերատար, ավելի ներող ու սիրող, քան թե ենք: Մենք շատ ենք քարացել չկամութեան ու շարակամութեան մեջ, շատ ենք ընտելացել ատելութեան մաղձի դառնութեանը ու դարձել ենք ատելի. մի՞թե խորթ ու անմատչելի պիտի մնա մեզ սիրո պայծառ զգացմունքը, մի՞թե չենք կարող իրար մոտենալ, բարութեան աչքերով նայել իրար ու տեսնել իրար մեջ մեր լավ կողմերը, քանզի մարդ չկա, որ լավ կողմեր չունենա, ու էսպեսով էլ կյանքը դարձնել քաղցր ու սիրելի:

Մի՞թե դժվար է:

1913

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ

Երևակայեցեք թե քսան տարի է, ինչ որ դուք ծանոթ եք մի նշանավոր մարդու, դրա համար էլ ձեզ համարում են քսան տարեկան, մինչդեռ 50 կամ 60 տարեկան եք դուք:

Սրա նման մի բան է, որ սովորաբար ասում են 35 տարի է, ինչ գոյութիւն ունի հայկական հարցը, որովհետև 35 տարի է, որ զբված է եվրոպական դիվանագիտութեան առջև և էդ էլ հաշվում են Բեռլինի դաշնադրութեան օրից¹:

¹ 1828 թ. Հունիսի 13-ից Հուլիսի 13-ը Բեռլինում կայացած կոնգրեսը:

Մի հիմնական սխալ, որ մարդկանց մտածողությունը սահմանափակելով էս 35 տարվա ժամանակի ու դեպքերի շրջանակում, պատճառ է դառնում շատ սխալների:

Սակայն եթե ազատվենք էդ մեծ սխալից, հարցին նայենք ավելի մեծ տարածության վրա, հեշտ էլ կճանաչենք նրա բնավորությունը, ավելի հաջող էլ կմոտենանք նրա բանական ու բնական լուծման հնարավորությանը:

Եվրոպական դիվանագիտության համար, այժմ, 35 տարի է, ինչ որ գոյություն ունի հայկական հարցը, բայց մեզ համար էլ հո էղպես չի, 35 տարի չի, ինչ որ գոյություն ունի նա:

Երկրորդն էլ մեր հարցը Քեռլինից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն դրել, այլ Սան-Ստեֆանոյից է սկսվում, և առեսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը:

էս երկու ճշմարտության մշտապես հիշելը շատ է կարևոր և շատ բան են ասում սրանք:

Հայկական հարցը շատ է հին: Իր ամբողջությամբ նրան մեզանում քչերն են ծանոթ ու տեղյակ: Նա իր սկզբնական շրջանում զուտ քաղաքական խնդիր էր և հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը: Բայց ժամանակի ընթացքում ջախջախվեց ինքը — հայ ժողովուրդը, ջախջախվեցին նրա ուժերն ու հույսերը ու իջնելով, իջնելով պարսկական ու տաճկական բռնակալության տակ՝ պահանջը հասավ մինիմումի: Եվ էսօր նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքացիական ազատության խնդիր, որ իր պահանջը վերջ ի վերջո ձևակերպում է էսպես. կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն:

Թե հայոց հարցը քաղաքացիական խնդիր է, ոչ թե քաղաքական, էդ լավ գիտեն թե եվրոպայում, թե Տաճկաստանը և թե Ռուսաստանը, և հայոց սեպարատիզմի առասպելին լուրջ մարդիկ չեն հավատում: Ռուս հայտնի գեներալ Փաղեկը իր «Армянская народность» աշխատության մեջ հերքելով հայկական սեպարատիզմը, որպես քաղաքական ուղղություն, ասում է՝ եթե մինչև անգամ դրսից էլ օգնություն ստանա, դարձյալ անիրագործելի բան է դա:

Եվ էսպես ամենքի համար նա է և մնում է կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովության պահանջ:

Արդ, որտե՞ղ և ո՞ր օրից գոյություն ունի հայկական հարցը իր ներկա բնավորությամբ:

— էն օրից, ինչ որ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը: Եվ գոյություն է ունեցել Պարսկաստանում, գոյություն է ունեցել և ունի Տաճկաստանում: Գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում, թեև կուղ իշխան Գալիցիների օրերում: Ընդհակառակը, հայ ժողովուրդը միշտ նայել է Ռուսաստանի վրա որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա:

Գեո 18 դ. սկզբում Օրին, հայոց բարձր հոգևորականությունն ու մելիքները բանակցության մեջ էին Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ և, առաջարկելով Հայաստանի իշխանությունը, խնդրում էին նրան ազատել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից, գերեվարություններից, կոտորածներից, կեղեքումներից ու առևանգումներից:

Ուրեմն էն ժամանակ գոյություն ունեի հայկական հարցը Հայաստանի պարսկական մասում և կոչվում էր պարսկահայկական հարց: Եվ դեռ էն ժամանակ էր, որ գերմանական կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, թե եվրոպական պետությունները հակամարտ շահեր ունեն Արևելքում — Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա, վերջը՝ թե հայ ժողովրդի փրկությունը չի կարող գլուխ գալ առանց Ռուսաստանի: Խորհուրդ տվեց դիմել Ռուսաստան Պետրոս Մեծին: Շատ շուտով փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը: Եվ թե Օրին ու հայ հոգևորականությունն ու մելիքները, թե հայ ժողովուրդը էն օրվանից երեսներն արին դեպի Ռուսաստան: Եվ ընդմիջտ դեպի Ռուսաստան: Մինչև էսօրվան օրը:

Ռուսաստանը էն միակ մեծ պետությունն էր, որ, անվերադառնալի վճռած, իր պատմական հարվածներն ուղղել էր Պարսկաստանի, բայց մանավանդ Տաճկաստանի վրա, և ուզում էր մի կողմից Յարգրադի դարպասի ճակատին կախել իր վահանը, մյուս կողմից իջնել զուրս գալ Պարսից ժոցը: էսպես. ճանապարհն ուղիղ կովկասի վրով, այլև քրիստոնյա ու անհամեմատ ավելի բարձր իր քաղաքակրթությամբ: Եվ հայ ժողովուրդը բազմատանջ Վրաստանի հետ միասին ապավինեց նրան: Իսկ Կովկասը իր բարեկամ քրիստոնյա ժողովուրդներով Ռուսաստանի

համար թե՛ ուղմական, թե՛ տնտեսական տեսակետից հանդիսա-
նում էր միակ ու հաստատուն կովանը Արևելքում: Էսպեսով էլ
երկուստեք դաշն ու հավատարմությունը ասպահովված էին վերին
աստիճանի կենսական ու հաստատուն երաշխիքներով:

Եվ ահա

«От Урала до Дуная,
До большой реки
Колыхаясь и сверкая
Двигутся полки...»

Идут все полки, могучи,
Шумны, как поток,
Страшно — медленно, как тучи,
Прямо на восток!

(Лермонтов)

Եվ մի շարք ուս-պարսկական պատերազմներից հետո վերջ-
նականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Գու-
գարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիջտ վերջ տվեց
կոտորածներով, գաղթականություններով ու առևանգումներով
հայտնի հայկական հարցին հայոց աշխարհքի էս մասում, կամ
ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին:

Մնաց տաճկահայկական հարցը:

1829, 55 և 78 թվականների պատերազմներով էլ իր ձեռքի
տակը բերելով Ալեքսանդրապոլն ու Ղարսը և այլ շրջաններ —
էդ մասերում էլ լուծեց հայ ժողովրդի կյանքի, գույքի և պատվի
հարցը: Սակայն սրանով լուծվեց տաճկահայկական հարցի մի
մասը, իսկ մնացած մասում, ինչ որ մնաց թուրքի ձեռքի տակ —
էրզերում, Վան, Մուշ և այլ տեղեր, մնացին ու շարունակվեցին
նույն կոտորածները, նույն գաղթականությունները, նույն բռնա-
բարությունները ու առևանգումները — մի խոսքով նույն հին հայ-
կական հարցը:

Մ. Արմենովի «Споры армянских племен»

Եվ պարբերաբար եվրոպական պետությունների շահերի դի-
մաց, լուսավոր մտադրության խզճմտանքի դիմաց, ամբողջ հա-
յուսթյան մորմաքվող սրտի դիմաց ծառանում է էդ արյունոտ ու
արցունքոտ հարցը: Այժմ էլ ահա նորից բարձրացել է նա սրբա-
զան ահավորությամբ: Ինչպե՞ս պետք է վճույի նա և էդ մնացած
մասում:

Առաջին պատասխանը, որ բխում է գործի հիմնավոր ժանո-
թությունից, ասում է.

— Էս օրվան մնացածն էլ պետք է վճույի էնպես, ինչպես որ
վճույի է մինչև այժմ:

Բայց էստեղ մի մեծ հարց:

— Ո՞վ կուզի դրա առաջն առնի և ո՞վ է կարող:

Եվ ահա, հարցի պատմությանն ու ընթացքին հետևելով,
եկանք կանգնեցինք էնտեղ, որ հայկական հարցի մնացորդն էլ
պետք է լուծի Ռուսաստանն էնպես, ինչպես լուծել է մինչև այժմ.
Կամ ուրիշ խոսքով, եկանք կանգնեցինք նոյ ու Մակու: Եվ ահա
սահմանի մյուս կողմը թյուրք կառավարությունը, որ միշտ խա-
ղացրել է եվրոպական պետություններին, լավ գիտենալով, որ
նրանք էլ են խաղ անում, աճապարանքով հրամանագրում է իր
պաշտոնյաներին — խաղաղություն պահպանել հայկական նա-
հանգնեցում, թե չէ ուսուր անց կկենա:

Էսպեսով ամբողջ աշխարհքը գիտի, որ թե... ուսն անց
կկենա:

Թուրքը երբեք չի կարողացել և այժմ էլ չի կարող առնել ուս-
սի առաջը: Հապա ո՞վ կուզենա առնել ուսսի առաջը:

Եվրոպական մեծ պետությունները կուզենան:

Նրանք են միշտ պաշտպանել թուրքին ուսսի դեմ և կարող է
պատահել, որ նորից նրանք պաշտպանեն:

— Արդյոք թուրքի սիրո՞ւց:

— Ո՞չ:

— Գուցե հայերին մարդավայել օր ու կյանք տալու համա՞ր:

— Երբե՞ք:

Իրենց շահերի և հատկապես Ռուսաստանի հզորացման
առաջն առնելու համար:

Ռուսաստանը հյուսիսից դեպի հարավ իջնելով, Անդլիան
Հնդկաստանից դեպի հյուսիս բարձրանալով, աշխարհքի էս եր-
կու հզորների շահերն ու ազդեցությունները վաղուց են իրաք դե-

մուգեմ եկել Միշին ու Փոքր Ասիայում: Եվ Անզլիան ամեն կերպ աշխատել է միշտ Ռուսաստանի դեմ ստեղծել մի պատվար, պաշտպանել է մերթ Պարսկաստանին, մերթ Տաճկաստանին և առհասարակ Ռուսաստանին թշնամի ամեն մի ուժ, սրա ծավալման ու հզորացման առաջն առնելու համար:

Մյուս կողմից՝ գերման ու սլավոն ցեղերի հին ներհակությունը հաստատվել է նոր իրական հանգամանքներով: Գերմանիան է ազդեցություններ ու իրավունքներ ձեռք բերել Տաճկաստանում և հայտնվել ռուսի ճանապարհին: Ավստրիան է տեսնում օրը ցերեկով, որ Ռուսաստանը իր ամեն մի զարկով ոչ թե շարունակ մեծանում է Տաճկաստանի հաշվին, այլ և իրար ետևից ազատագրում բոլոր սլավոն ցեղերին, իսկ ինքը Ավստրիան ունի 25 միլիոն սլավոն հպատակ: Սրանց հետ միասին եթե առնենք և այլ ուրիշ հանգամանքներ, քաղաքական թե տնտեսական, պարզ կլինի մեզ համար թե ինչու Ավստրիան ու Գերմանիան էլ հաճախ պաշտպանել են Տաճկաստանին ռուսի դեմ, որ հունա-սլավոնականության մեծ ներկայացուցիչն ու վերածնողն է հանդիսանում:

Գեո 16 դարից, Ղրիմի թաթար խաների դեմ մղած կռիվների օրից, իր հետ ունենալով սլավոն ցեղերը, վեր է կացել Ռուսաստանը Տաճկաստանի դեմ: Եվ քանի-քանի անգամ մահացու հարվածներ է տվել նրան: Բայց կանոնավոր կերպով ամեն մի հաղթանակից հետո նրա դեմ են զուրս եկել եվրոպական մեծ պետությունները ու կանգնեցրել են պատերազմի դաշտում.— Ո՛չ, Տաճկաստանը պետք է ապրի և զու չպետք է զորանաս նրա հաշվին: Թեև իրենք էս միջնորդությունների համար միշտ զորացել են Տաճկաստանի հաշվին. և ռուսին տարել են մի որևէ կոնգրես կամ կոնֆերանս:— Անատոմիա կամ ավտոնոմիա,— պահանջ է դրել Ռուսաստանը վեհաժողովներում:

— Ո՛չ, Տաճկաստանի ամբողջությունը պիտի մնա անձեռնմխելի, և ամեն մի բարենորոգում իր երկրի մեջ նորին մեծություն սուլթանի փառիշահության ներքին գործն է, և նա արդեն ազնիվ արքայական խոսք է տալիս, և ահա հրատարակում է էս ինչ կամ էն ինչ թուղթը. վճռել են ամեն անգամ եվրոպական մեծ պետություններն ու փակել իրենց վեհաժողովները:

Ահա թե որտեղ է, ինչպես Տաճկաստանի հետ կապված ուրիշ հարցերի, էնպես էլ հայկական հարցի դժբախտության պատճառը, և ահա թե ինչու և ինչպես է ապրել Թուրքիան:

Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու զաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյություն խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական զաղանություններին ու հայկական սարսափներին:

Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ:

Եվ տեղ չկա խուսափելու:

«Հորիզոնի» նախանցյալ № 9-ում մեր խոսքը նրանով վերջացավ, թե Եվրոպական պետություններից որը եղել է Ռուսաստանի ծավալման դեմ — նա դեմ է եղել և հայկական հարցին, էսպես է հայկական հարցը իր ներկա բնավորությամբ, որպես գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր, կապված Ռուսաստանի առաջխաղացության հետ:

Հաստատ կարելի է ասել — բոլոր հայերը գիտեն ու համոզված են, որ Գերմանիան ու Ավստրիան ավելի քան անտարբեր են եղած դեպի հայկական հարցը:

Բայց մեր մեջ հավատ կա արմատացած, թե Անզլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները:

Ինձ թվում է մեզ էս քաղցր մոլորության մեջ գցել են Գլադստոնի, Գիլլոնի, Բերարի, Պրեսանսեի նման լավ մարդկանց ճառերը ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վատթար կառավարության: Իսկ իրենց պետությունները, որ միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ Արևելքում, դրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին:

Անցյալ դարու սկզբից Ռուսաստանը մտավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պատերազմները: Էդ պատերազմները թե Գուգարք ու Սյունիք, թե Շիրակ ու Արարատյան երկրում՝ ազգային սրբազան պատերազմի նշանակություն ունեին հայերի համար: Վճռվում է պարսկահայկական հարցը:

Հայ ժողովուրդն ազատվում է պարսկական դժոխքից: Հայոց հոգևորականությունը խաչը ձեռքին գնում էր ռուսաց զորքի առաջին: Հայոց ինքնապաշտպանության խմբերը, որ կամավորներ էին կոչվում, կոչվում էին ռուսաց զորքի շարքերում կամ ապա-

հովում էին նրա ճանապարհը թշնամու հարձակումներից: Հայ ժողովուրդը իր ամբողջութեամբ ոտի էր կանգնել:

Եվ էդ բոլոր պատերազմներում Անգլիան օգնում էր Պարսկաստանին: Իհարկե, նա չէր էլ մտածում հայ ժողովրդի մասին, և միայն մի ցավ ուներ — կտրել ուստի առաջխաղացութեան ճանապարհը դեպի հարավ, դեպի Հնդկաստանի իր կալվածքները: Եվ էդպեսով գործում էր պարսկահայկական հարցի դեմ: Թե 1804—1807, թե 1810—13, թե 1826—28 թվականներին պարսից սարվազների զլուխն անցած՝ ուսաց զորքի դեմ, նրանց հետ և հայ կամավորականների ու հայ ժողովրդի դեմ՝ կռվում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժեներները, պայթում էին անգլիական հրացանները, որ 20 հազարով ու 40 հազարով իրենց ամեն ուղամաթեքով տալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի Անգլիական կոմսսիան: Ղարաբաղի ամբողջունների ու էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական թնդանոթները, որոնց վրա մակագրված էր. «Քազավորների թագավորից — Շահերի Շահին պարզե»:

Սակայն վերջ ի վերջու հաղթվեց Պարսկաստանը ու վճռվեց պարսկահայկական հարցը. այսինքն, պարսկահայկական նահանգներն անցան Ռուսաստանին և ապահովվեց հայ ժողովրդի գոյութեան խնդիրը:

Հերթն եկավ տաճկահայկական հարցին:

Տեսնում ենք դարձյալ Անգլիան Տաճկաստանի հետ Ռուսաստանի դեմ և միաժամանակ դեմ հայկական հարցին:

Թե 1829 թվականի, թե 1855 թվականի, թե 1878 թվականի ուստի-տաճկական պատերազմներին հայտնի է, թե ինչ պաշտպանություն ցույց տվեց Անգլիան Տաճկաստանին: Մի քանի անգամ ուսաց բանակը մտել է էրզերում և մի քանի անգամ հայկական նահանգները Անգլիայի ջանքերով ուստից խլվել ու ետ են տրվել սուլթանին: Եվ մի քանի անգամ հայ ժողովուրդը, որ էդ պատերազմներում իր համակրանքն ու սերը բաց ցույց էր տվել ուսներին — Անգլիայի ձեռքով մատնվել է տաճիկ կառավարության ու ժողովրդի վրեժինդրության կատաղությանը:

1855 թվին, երբ Ռուսաստանը հասել էր Պոլիս, երևաց դարձյալ Անգլիան, միաբանության բերեց մեզ անմիաբանությամբ հայտնի Եվրոպական կոնցերտը, և ոչ միայն Տաճկաստանն ազա-

տեցին ուստի ձեռքից, այլև ուստին ջարդեցին ու թուլացրին միացյալ ուժերով, իսկ սուլթանին ուժեղացրին, ստեղծեցին նրա համար մի անձեռնմխելի արտոնյալ դիրք և նրա արյունոտ ձեռքըն ավելի ծանր հաստատեցին Տաճկաստանի քրիստոնյա ժողովուրդների, նրանց թվում և հայերի վրա, որոնք արնաքամ եղան մինչև 1878 թվականը:

1878 թվականին էլ, երբ կրկին սկսեց ուստի-տաճկական պատերազմը և երբ դարձյալ ուստական բանակը հասավ Պոլսի շեմքը, դարձյալ երևաց Անգլիան, դուրս հանեց իր նավատորմիցը և ուստին կանգնեցրեց Սան-Ստեֆանոյում: Ապա Գերմանիայի հետ հաղթողին տարավ Բեռլին, դիպլոմատիական ջարդ տվեց նրան և միաժամանակ ջարդեց հայկական հարցը, կամ ավելի ճիշտը թարսեց, 16-ը շինեց 61, ուսաց զորքի փոխարեն հողավածի մեջ մտցրեց սուլթանի անունը և նրա բարեհայեցողությանը հանձնեց հայ ժողովուրդը, էս բոլորի համար ստանալով Կիպրոսն ու հայկական հարցի մոնոպոլիան:

Մենք դարձացանք Բեռլինում կատարված էս ֆոկուսի վրա, թե ինչպես 16-ը դարձավ 61, ուրախացանք, որ դարձանք 6 մեծ պետություն հոգածություն ատարկա ու Բեռլինից գնացինք Լոնդոն, էնտեղ էլ տեսանք ինչ ղեղեցիկ ճառեր են ասում...

Մինչդեռ մեր աշխարհքում հետզհետե մեծանում էր մեկ ու ուստին իրարից բաժանող տարածությունը, պաղում էին հին լավ հարաբերությունները, ստեղծվում էին նոր հարաբերություններ անպայման վնասաբեր երկու կողմի համար էլ, թե մեծի թե փոքրի, թե ուստի թե հայի:

Եվ ա՛յա վրա հասան 1894—96 թթ. կոտորածները, երբ Կովկասում հայ-ուստական հարաբերությունների պաղությունը լասել էին դալիցիյան ուժերին և վելիչկոյի հրապարակախոսությանը, իսկ Անգլիայում մեր բարեկամությունն և հոգատարությունը հասել էր իր գագաթնակետին Գլադստոնի ճառերում...

Եվ ի՛նչ...

Վերջ ի վերջու դուրս եկավ, որ Գալիցիյնը գոնե տաճկական սրից ազատված 40 հազար հայ գաղթական ընդունեց Կովկաս, իսկ հայկական հարցի ու հույսերի տերը — Անգլիան հայ ժողովրդի սարսափին ու աղերսախառն դիմումին տվեց հայտնի

պատասխանը — «Մեր նավերը շեն կարող լողալ հայոց լեռների գագաթներին»¹:

Մինչդեռ աշխարհքին հայտնի է, որ սուլթան Աբդուլ Համիդը նստում էր ոչ թե հայոց լեռների գագաթներին, այլ Բոսֆորի ջրերի ափերին, ուր միշտ կանգնում են անգլիական նավերը:

էսպես է եղել Անգլիան մինչև վերջին տարիներս:

Իսկ Ֆրանսիան:

Տասնվեցերորդ դարից սկսած սուլթանի հետ կապած պայմանագրերով ձեռք բերելով Թյուրքիայում բացառիկ դեր ու դիրք, Ֆրանսիան դարձավ Արևելքում պաշտպանը եվրոպական քրիստոնյաների, որոնք նույնիսկ ֆրանկ կոչվեցան անխտիր, եղան Թյուրքիայում արտոնյալ ու ազատ բնակիչներ, լցվեցին ծովեզրային քաղաքները և միշտ, մինչև Պոլսի վերջին ջարդը, իրենց լուսամուտներից տեսան հայերի կոտորածը: Եվ հայերը երբեք չնկատվեցին քրիստոնյա ու շտեման Արևելքում քրիստոնեության մեծ հովանավորի հովանին, որովհետև տաճկահայտակ էին ու ույա:

Եվ հենց Փարիզումն էր (1856 թվին), Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի նախագահությանը եղած վեհաժողովում, որ առաջին անգամ Տաճկաստանն ընդունվեց եվրոպական քաղաքակիրթ մեծ պետությունների շարքը, միջազգային երաշխավորությանը ապահովեց նրա հողային անձեռնմխելիությունը, սուլթանի անկախության սկզբունքը, նրա՝ իր հպատակ քրիստոնյա ազգերին հոշոտելու խնդիրն անվանվեց Տաճկաստանի ներքին գործ և նրանց բարօրության համար միանդամայն բավարար նկատվեց սուլթանի Հատուր-Հումայունը:

էստեղ, Փարիզում ստեղծվեց էն ամենը, ընչով որ սուլթանն իրեն զգում էր ուժեղ ու ապրում էր նրա բարբարոսական կառավարությունը, իսկ նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդները — դժբախտ ու տառապում էին՝ օրհասական մաքառումներով, ցույց տալով իրենց կենդանությունն ու վերածնվելու ձգտումը:

Եվ ահա Փարիզյան կոնգրեսի ու դաշնագրության վրա խոսելուց հետո էսպես է եզրափակում իր խոսքը մարդկության պատմությունը:

¹ Այս պատասխանը տվել է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլիսբերին 1878 թ. Լոնդոն մեկնած հայոց պատվիրակությանը:

«Եվ էսպես, — ասում է, — քրիստոնյա պետությունների և ժողովուրդների մեջ եղած հակամարտության պատճառով, նրանց <հան> դեպ իրար ունեցած նախանձի պատճառով, էն մշտական անվստահության պատճառով, որով նրանք հսկում էին իրար, և վերջապես, էն երկյուղի պատճառով, որով նրանցից ամեն մինը վերաբերվում էր մյուսի ազդեցության շրջանի միակողմանի ծավալումին ու զորացմանը — եվրոպական պետությունները իրանց հովանու տակ առան տաճկական գիշատիչ պետությունը և երկարացրին նրա գոյությունը, մտիկ չտալով, որ նա խորտակում է իր ազգաբնակչության կուլտուրան և ինչպես իր մուսուլման, էնպես էլ քրիստոնյա հպատակների վերաբերությանը անընդունակ է կատարելու իր պետական պաշտոնը: էդ ժամանակից տաճկական պետության գոյությունը միայն մի նպատակ է ունեցել. — արգելել իր սահմաններում ապրող ժողովուրդների պատմական զարգացումը ու ձգձգել Բալկանյան թերակղզու նահանգների վեհակի որոշումը» («История человечества», т. VIII, под ред. Гельмольтата):

Եվ ահա տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մինը, և անպայման ամենադժբախտը:

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր Թյուրքիայի սրբտում, ամենադժվար ու ամենավտանգավոր տեղում, և Թյուրքիան նրան բաց պիտի թողներ միայն իր վերջին շնչի հետ:

Եվ նա՝ Թյուրքիան, դիմել է, դիմում է ու կդիմի ամենահեշավոր միջոցների՝ վերջ դնելու էդ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը միանգամ ընդմիշտ փակելու համար:

Իր հերթին Ռուսաստանը զարկել է, զարկում է և կզարկի Թյուրքիային, մինչև ուժասպառ չանի նրան՝ հասնելով իր նախորոշած նպատակին ու կատարելով մի մեծ պատմական միսիաթե Բալկաններում և թե Արևելքում: Իսկ եվրոպական մեծ պետությունները աշխատել են ամեն կերպ առնել Ռուսաստանի ծավալման ու զորացման առաջը: Իրերի պատմական էս դասավորությունից փառապարա պարզ է, որ հայ ժողովուրդը պետք է լիներ ուսի հետ և իր կյանքի, զույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապեր Ռուսաստանի հաջողության հետ:

Պարզ է նույնպես, որ եվրոպական մեծ պետությունները,

որոնք դեմ են եղել Ռուսաստանի զորացմանն Արեւելքում — պետք է պաշտպանելին Տաճկաստանին և դեմ լինելին հայկական հարցին:

Եվ էսօր, եթե հայկական հարցը, ինչ ձևով ուզում է լինի — մի լուծում է առնելու, դա լինելու է Ռուսաստանի հաղթանակը կամ նրան փոխադարձաբար արած մի զիջում: Եվ հաճախորեն փոխադարձ զիջում է լինելու, քանի որ Անգլիան ու Ֆրանսիան էսօր հաշտ ու համերաշխ են Ռուսաստանի հետ: Եվ էդ հաշտութունը, եթե կա, զարհուրելի է Տաճկաստանի համար, որ ապրել է նրանց անհաշտութան պատճառով, հետևաբար կլուծվի և հայկական խնդիրը, և կլուծվի Ռուսաստանի նախաձեռնութեամբ:

Էսպեսով 35 տարվան շեղումից հետո՝ մեզ պատմութեան ընթացքը բերում է դարձյալ նույն տեղը:

Դարձյալ հայկական հարցը Ռուսաստանի պաշտպանութեանն ապավիճած և Ռուսաստանի հետ:

Դարձյալ ռուսական մամուլն է արծարծում հայկական հարցը, և դարձյալ ռուսական զորքն է կանգնած էն դժոխք երկրի սահմանի վրա, ուր դարձյալ կոտորածի սարսափի տակ ալիկոծվում է հայ ժողովուրդը:

Էս 35 տարվա ընթացքում ծանր տպավորութիւնները տակ ձեռքի ու մեծացել է մի սերունդ, որ շատ հասկանալի հոգեբանական ու իրական պատճառներով թերահավատ է տակավին. բայց էն մարդիկ, որոնք լավ գիտեն, թե կարճատև ու անցողական են ամեն վատ մարդիկ ու վատութիւններ, էն մարդիկ, որ անսասան հավատում են լավ գաղափարների աստիճանական, հաստատուն զարգացումին ու հաղթանակներին, ինչպես անհատների մարդասիրութեանը, էնպես էլ ազգերի առաջադիմութեանն ու ազնվացումին, էն մարդիկ, որ պարզ աչքով տեսնում են պատմական ու իրական էն հիմունքները, որ ապահովում են ազգերի լավ հարաբերութիւնները, — պետք է հավատան լավ օրերին ու լավ հարաբերութիւններին և պետք է ակնկալեն հայի համար մի մարդավայել ազգային վիճակ ու մի ցանկալի ապագա, որի մեջ Ռուսաստանն ունեցել է ու կունենա վճառական ազդեցութեան:

1812

ՅՐԿՈՒ ՄԵՆ ԹԻՖԼԻՍԵՅԻՆԵՐ

Թիֆլիսը: Բայց հին Թիֆլիսը:

Էն մի առանձին, յուրատեսակ աշխարհք էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք: Եվ որովհետև էդ կյանքին տոն տվողը վրացական անհոգ ու զվարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը իրարու խորթ տարրերի էտնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը — քեֆ քաշելու:

Եվ հիրավի, 1883 թվին, երբ ես առաջին անգամ Թիֆլիս եկա ուսումնարան մտնելու, ինձ թվաց, թե ընկա մի հակայական հարսանքատուն: Զուռնա, դժուր, դայիրա, նաղարա, ծափ-ծիծաղ, պար, երգ... էն էլ ոչ թե տներում, այլ դուրսը, դռներին, կտուրներին: Մանավանդ իրիկնապահներին: Կիրակի ու տոն օրերը հո — զուլփ բեր, որ դիմանա: Զուգված, զարդարված շրթիկում ու զրբնգում էր ամբողջ քաղաքը:

Տեսնողը զարմանում էր, թե՛ էս մարդիկը ե՞րբ են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար գալի: Էսպես էր ապրում հին Թիֆլիսը — գծի նման: Եվ դեռ ես հին Թիֆլիսի վերջին օրերին վրա հասա: Ասում են՝ ութսունական թվականներից սկսած Թիֆլիսն սկսեց փոխվել — փշանալ, ուրիշ խոսքով ասում էին՝ վելիկի կնյազից (մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչից) նոր մեր քաղաքը խարաբ էլավ:

Մեր Բաֆֆին մի բանաստեղծութեան մեջ շատ հաջող արտահայտել է թիֆլիսեցու էս վիշտը.

Եվստ ադաթներ ենք բերում
Մի քաղքումը Եվրոպեն,
Քեֆն ու սափեն զի՛ք կորում,
Փըշացավ էտանց օրեն...»

Եվ ճիշտ որ փշացավ: Մի կյանքից եթե զվարթութիւնը — քեֆն ու սափեն հանես, էլ տեղն ի՞նչ մնաց: Մնաց հոգան ու ջափեն: Եվ գնա տարին տասներկու ամիս հոգս ու ջափի տակին տեղա — թե ապրում եմ: Եվ ամեն օր հաշիվ արա, թե սա իրեն

շուրջ գցեց, նա կախվեց, մյուսը կարողեալ խմեց, շորորորը, ինչպես մեր լրագրիներն են ասում, ատրճանակից իրեն վարկեց, և... հտեհից էլ զանազան դատողութիւններ, որոնք սակայն ինչքան էլ խելոք լինեն, կյանքին ոչ մի ժպիտ չեն տալիս:

Իրա հետ միասին նկատեցեք, որ կորչում է ժողովուրդների անհատականութիւնը, առանձին ոգին, սեփական գույնն ու երանգը, էն ամենը, որ էնքան բնական են, ինչքան նրանց երկրի կլիման ու բնութիւնը և ինչով որ նրանք կենդանի են, գեղեցիկ են, մեծ են:

Չէ՞ որ ամեն ուժ սնունդ է առնում, զարգանում ու մեծանում իր հարազատ կլիմայի մեջ, ու ինչքան էլ մեծանա, թեկուզ գլուխն էլ երկինք հասնի ու աշխարհքն առնի իր հովանու տակ — միշտ ոտը դրած է մի հողի վրա, ու էդ հողը իր հարազատ հողն է, իր հարազատ աշխարհքն է:

Ասինք հին Թիֆլիսը, որ մի առանձին ինքնուրույն աշխարհք ու զվարթ կյանք էր ներկայացնում իր համով ու հոտով, լեզվով ու աղաթով, աղ ու հացով, նիստ ու կացով — անցել է արդեն: Անցել է, և անդառնալի: Ինչ որ տվել է, էլ չի կրկնելու: Բայց ի՞նչ է տվել, ի՞նչ ժառանգութիւն է թողել գալիք սերունդներին, աշխարհքին, պատմութիւնը:

էս հաշիվը կտեսնվի անշուշտ, և կասվի թե՛ հին Թիֆլիսը հայոց գրականութիւնն էլ երկու մեծ անուն է թողել — Սայաթ-Նովա և Գաբրիել Սունդուկյան: Հարազատ — Թիֆլիսի լեզվով, Թիֆլիսի շնչով, Թիֆլիսի հոգով:

Նվ մեծ:

Ու անվերջ մեծ Պեպոն կյանքի բեմի վրա մաքուր, հաղթական՝ Զիմզիմովի դեմը կանգնած իր հալալ աշխատողի կոշտ ձեռքը կզարկի մուրհակին ու Թիֆլիսի բարբառով կորոտա. — քու սրտումն ի՞նչ է գրած... ու կվարի իր ազնիվ կռիվը, ոչ թե մուրհակի համար — այլ ճշմարտութիւն համար, արդարութիւն համար:

Ու անվերջ կհնչի Թիֆլիսի բարբառով դժբախտ սիրո մեծ երգչի՝ Սայաթ-Նովայի ձենը իր «զալում» յարին, որ ինքն էլ է կրակ, հագածն էլ:

«Կերակե ծովեմեն՝ դուրս եկած՝ ուշ, շեյիրան իս ինձ ամա...»

էն բանաստեղծական խոստումը.

«Թեզուզ անմահութիւն ուզիս՝ սիրով կու ճարիմ քիզ ամա...»

Նրա փիլիսոփայական, խորիմաստ հորդորը.

«Անգաճ արա՛, մատաղ իմ քիզ, մէ քիչ կամաց գընա՛, գողալ. Աշխարհըս ո՛ւմն է մընացի՛ վուր ինձ ու քիզ մընա, գողալ...»

Նրա առողջ հոյակապ տխրութիւնը.

«Սիրտըս փորումըս սըքվոր է,
Ալ աչկորըս լաց է անում.
Մովըն նընգած ամբի նըման
Գոշ ու եսխես թաց է անում»:

Վերջապես.

«Գո՛ւզիմ թուի բըլբուլի պես,—
Բաղերումէն բեզարիլ իմ...»:

Նվ ահա էսօր էս երկու մեծ թիֆլիսցիների անունները գալիս են հրապարակ:

Գ. Սունդուկյանի մահվան տարելիցն է, ու Հայոց Գրական Ընկերութիւնը հարգանքի գրական երեկույթ է կազմակերպում Արտիստիկական թատրոնում. իսկ Սայաթ-Նովայի մահարձանի խնդիրն է մեջտեղը, և նույն Ընկերութիւնը պատրաստել է տալի նրա մահարձանը ու գրական-երաժշտական երեկույթներ է նվիրում անման երգչի ու նրա երգերը ամենակուլ ժամանակի բերանից խլողի՝ Գ <եորգ> Ախվերդյանի հիշատակին: Հայ ժողովուրդը և հատկապես Թիֆլիսի ժողովուրդը էս անունները տալիս պետք է թնդա ու միշտ հարազատի սիրով հավաքվի ամեն տեղ, ուր խոսում են նրանց մասին, ու ամեն միներ անկեղծ ուզենա մասն ունենալ նրանց տված հարգանքի ու նրանց վրա դրած արձանի մեջ:

Նրանք կան և մնալու են Թիֆլիսի, և հին Թիֆլիսի մեծ ու հարազատ զավակները:

Ճապոնացիները մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետևելով էս գեղեցիկ սովորությանը, էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Բաֆֆու հոգուն:

Անմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարհական ուժով դուրս կանչեցիր անցյալի մոթից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգեորեցիր վհատներին, որ տկարներին համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստեղծության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, էսօր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ, և մեր զգացմունքները, որ համակված են քո շնչով ու հիշատակով: Եկել ենք քո գերեզմանի վրա օրհնելու և փառաբանելու քո տված անհանգստությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր և էն նահատակների շարքերը, որ զնացին քո ցույց տված ճանապարհով:

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, ուր քո մահից 25 տարի հետո՝ դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հեռու չի օրը, երբ մենք կհարողանանք կրկին դաշ քո շիրմի վրա ու կանչել:— Արգեն կատարված է քո իղձը, ո՛վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են էնքան արյուններ, էնքան կոտորած, և օամեն կողմից պանզուփստ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք...: Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ո՛վ անհանգիստ հոգի:

Հայոց նորագույն գրականության պատմությունն առում է՝ Մերենցը եղավ մեր նոր պատմական վիպագրության հիմնադիրը: Եվ երբ ետ եք դառնում դեպի 60-ական թվականները՝ ճանաչելով թե ո՛վ էր էդ հիմնադիր վարպետը — ձեր սիրտը լցվում է անկեղծ հրեմանքով: Չգիտեք նրա ազատասեր ոգու վրա հիանաք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանաք, նրա հոգու ազնվության մաքրության վրա աքափառանաք, թե նրա սրտի քնքրության ու ճաշակի նրբության վրա:

Եվ ի՛նչ իմաստուն ու գեղեցիկ է զնում նա իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Թարոս Լեոնին, բյուզանդական բանաստեղծ փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամառք՝ իր ազատ կյանքով ապրելու:

Էսպեսով նա հանդիսանում է մի խորհրդանշան — հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսներ ծնելով:

Հայոց Գրողների Ընկերությանը էսօր եկել է ծաղիկներով ու զարդարել Մերենցի գերեզմանը նրա մահվան 25-ամյակի առթիվ:

Սակայն էս ծաղիկները չնչին զարդեր են նրա մեծ շիրմի համար: Սրանց բալտ արժանիքն էն է, որ մեր զգացմունքների արտահայտությունն են էսօր: Սրանցով չարտի զարգացվի նրա շիրմը, մի շիրմի, որ զարդարված է տաղանդի, ժողովրդասիրության ու մաքրության անթառամ զարգերով, թե չսալ գրողի, թե ազնիվ մարդու վսեմ առաքինություններով: Եվ մենք չենք եկել մեր հանգեսով ու ճառերով նրան բարձրացնելու, այլ եկել ենք՝ նրան հիշելով՝ նրանով բարձրանալու:

Եվ թո՛ղ օրհնված լինի նրանց հիշատակը, որունք իրենց կենդանության օրով ժողովուրդներին կյանք և շունչ տալուց հետո էլ՝ չեն զաղարում իրենց գործերով ու գերեզմաններով էլ ազնվվացնելու և բարձրացնելու մարդկանց ու ժողովուրդներին:

Թող օրհնված լինի Մերենցի հիշատակը:

Ստ եկան դարձյալ իմ «լուրջ կրիտիկոսները» — Դրամբյանն ու Ս. Հ.-ն: Եվ ստիպված ենք դարձյալ այժ-բեն ասելու:

Ի՞նչ պետք է անեք. մարդիկ կրիտիկոս են դառել ու իրենք էլ են ցավի մեջ մնացել, մենք էլ. վերջապես՝ ի՞նչ պետք է անեք, հայոց մամուլն է խոսում:

Բայց ցավը մենակ էն չի, որ հայոց մամուլի էս կամ էն օր-գանը կարող է էսքան տգետ լինել կամ էսպես տգետ կրիտիկոս-ներ ունենալ: Գրական տգիտությունը կամ տգետ քննադատությունը ամեն մի նոր առաջ եկող գրականության մեջ սովորական երևույթ է, սակայն մեր մեջ տգիտության վրա ավելանում է վատ հոգին, հոգու շարունջունը:

Եվ եթե մի «Մշակ» կամ մի «Հովիտ» սրանց տեղ են տալիս, ձայնակցում են ու հրճվում՝ պատճառը մենակ գրական տգիտու-թյունը հո չի, այլև հոգու շարունջունը, ապականված սիրտը:

Եվ սա Դրամբյան չի արդեն, այլ դրամբյանիզմ: Ես էլ էդ պատճառով է, որ կարևորություն եմ տալիս ու լուրջ խոսում էս տխուր երևույթի վրա:

Առայժմ մի կողմ թողնենք ամեն երկրորդական բան, գտնենք գլխավոր հարցն ու կանգնենք նրա վրա:

Պարոն Ռ. Դրամբյանն ու չգիտեմ ինչ՝ Ս. Հ.-ն, կամ մի խոս-քով ասենք դրամբյանիզմը — գտել են, որ հայոց «գրական մե-ծությունները» բանագողությունով են պարապում, ժողովրդական ստեղծագործություններն առնում են ու շնչին փոփոխություններով կամ բառացի հրատարակում իբրև իրենց ինքնուրույն գրվածք:

Էդ երևույթը անվանում են զգվելի թալան, կեղտոտ ուղի, ավերիչ ժանտախտ, գրական շանտաժ և այլն, և այլն, և այլն, և «Մշակի» ու «Հովիտի» էջերում հայոց բարեպաշտ ազգին հորդոր են կարդում առնել էս ազգային դժբախտության առաջը: Էս սըր-բազան ջհաթը մասնավորապես ուղղած էր ինձ վրա, իբրև նրա համար, որ ժողովրդական նյութեր եմ առել Ս. Հայկունու ժողո-վածովից, ինչպես 1910 թվականի «Մշակի» մի քանի համարում ցույց էր տալիս Ռուբեն Դրամբյանը, ու գրեթե բառացի հրա-տարակել եմ իմ անունով, առանց հիշելու, թ՛չ ժողովրդական է, ապա թե նրանից հետո Ս. Հ.-ն մեջտեղ եկավ «Հովիտի» էս տար-վան Ձ 16-ում և հայտարարեց, թե ես «Գառնիկ ախպեր» հեքիա-

թը թարգմանել եմ ռուսերենից ու տպել Եմ իբրև ինքնուրույն գրվածք: «Մշակն» էլ երկու անգամ իրար ետևից էս մասին ավե-տեց իր «հառաջադիմական» ընթերցողներին:

Իր ժամանակին ես պատասխան եմ տվել Դրամբյանին, այժմ էլ «Հովիտի» Ս. Հ.-ին պատասխանեցի «Հորիզոնի» Ձ 95-ում, ցույց տվի, որ դա զուտ հայկական հեքիաթ է և առել եմ ահա էս ինչ ու էն ինչ վարիանտներից: Իհարկե, «Մշակն» էս մասին լռեց, մինչև նոր հարմար դեպքը, իսկ Դրամբյանն ու Ս. Հ.-ն նորից աս-պարեզ եկան մինը «Հորիզոն» Ձ 45-ում, մյուսը «Հովիտի» Ձ 22-ում և նորից պնդում են իրենցը, այժմ էլ ուրիշ ձևով, թե-կուզ Հայկունուց չես օգտվել, թեկուզ ռուսերենից չես թարգմանել, բայց հո հայերենից ես առել, թեկուզ բառացի չի, բայց հո էլի էն նյութն է, նույն տիպերն են, նույն արտահայտություններն են, և թե ինչու վրեն չես գրում ժ ո ղ ո վ ը ղ ա կ ա ն:

Իբրև թե եթե գրեի ժողովրդական, ամեն բան կվերջանար նրանց համար, դրամբյանիզմի համար, հայոց էս մամուլի հա-մար: Բայց, իհարկե, սուտ են ասում: Եթե դրանով վերջանար, ես կասեի — ո՞վ «Մշակ», ո՞վ «Հովիտ», ո՞վ Տեր-Եզնիկ, ո՞վ Քա-լանթար, ո՞վ Համբարձում Առաքելյան, ո՞վ Դրամբյան, ո՞վ Ս. Հ., բաց արեք տեսեք 1905 թ. «Հասկերը» Ձ 1, հենց առաջին երեսին մեծ-մեծ տառերով տպած է՝ «Գ ա ռ ն ի կ ա խ պ եր» հ ա յ ժ ո ղ ո վ ը ղ ա կ ա ն հ ե ք ի ա թ:

էդպես էլ մյուսները:

Բայց սխալ է, եթե կարծում եք, էս որ ասի, մի «Հովիտ» կամ մի «Մշակ», մի Ս. Հ.— կամ մի Դրամբյան կամաչեն ու կլռեն: Ո՞չ, հազար-հազար անգամ՝ ոչ:

Դրանից ավելի խիստ ապացույցներ ու փաստեր եմ հանել նրանց դեմ, տպված են, հայտնի են, այսուամենայնիվ նրանք շարունակում են անվանարկել, թունավորել միշտ նոր ու նոր տըխ-մարություններ ու հայհոյանքներ կուտակելով մեջտեղը:

Իհարկե, էդ բոլորն ինձ ի՞նչ պետք է անեն. ոչինչ, և ժողո-վրդրդական առածի ասած՝ քոռամուկն ինչքան հող փորի՝ իր գըլ-խին կածի, բայց երևույթը, երևույթը շատ է գարշելի, հոգին շատ է ցած ու վատ:

Բայց առայժմ մի շատ հետաքրքրական պատմություն պետք է անեմ:

Եվ ահա պատմությունը:

Անցյալ դարի սկզբներին ուսաց գրականության մեջ հայտնվում է մի շահել մարդ, անունը Ալեքսանդր Սերգենիչ Պուշկին: Էս Ալեքսանդր Սերգենիչ Պուշկինը բանաստեղծ է լինում: Եվ որովհետև բանաստեղծ է լինում, դրա համար էլ բանաստեղծություններ է գրում, էն էլ զանազան տեսակի: Եվ որովհետև զանազան տեսակի բանաստեղծություններ է գրում, բազմազան էլ նյութեր է առնում իր երգերին. էլ սեր, էլ ընկեր, էլ հայրենիք, էլ բնություն, էլ ժողովուրդ, էլ պատմություն, դրանց հետ նաև ժողովրդական նյութեր — լեգենդներ ու հեքիաթներ:

Ըստ՝ն էր: Եվ ժողովրդական նյութեր է առնում մշակում, ինչպես խելքը կտրում է, և ինչքան ուժը պատում է, տպում է, վրեն էլ գրում է Ալեքսանդր Սերգենիչ Պուշկին:

Գրական ճաշակի ու հասկացողության տեր մարդիկ հրճվանքով ողջունում են երիտասարդ բանաստեղծին, սիրում են առանձնապես նրա ժողովրդական նյութերի մշակումը, որոնց հետ ուսաց գրականության մեջ էր մտնում ուսաց ժողովրդական ոճն ու շունչը, իսկ հայտնի Ժուկովսկին հենց առաջին հեքիաթի — Բուսլան և Լյուդմիլա-ի համար զրկում է Պուշկինին իր պատկերը վրեն մակագրած՝ «հաղթված ուսուցիչը — հաղթող աշակերտին»:

Հիմի կասեք. Հապա եթե ձեռնդ էլ համ բանաստեղծ կար, համ ժողովրդական նյութեր կային, համ էլ նյութերի մշակումը կար, հապա ինչպե՞ս է, որ Գրամբյան չկար, Ս. Հ. չկար, «Մշակ» չկար, «Հովիտ» չկար... Ինչպես չկար, հենց էդ եմ ասում:

Գրական տոնի և ուրախության հենց էն տաք ժամանակը իր իշի վրա նստած հայտնվում է չտխրահոյակ Каченовский-ն, որ հենց սրանով էլ մնում է անմահ ուսաց գրականության պատմության մեջ, և Житель Бутырской слободы կեղծ անունով տպում էր իր շուրջ «կրիտիկան» «Вестник Европы» 1820 թվի № 11-ում. — Արթուն կացե՛ք, քաղաքացիներ՛ր, հայրենիքը վտանգի մեջ է... մի ինչ-որ Պուշկին է դուրս եկել...

Ուսաց գրականության պատմությունն ասում է. «Житель Бутырской слободы» увидел в мысли Пушкина воспользоваться русским сказочным элементом просто неприлично, бедствие и явление отвратительное...»

Էնքան նման «Մշակի» Գրամբյանին ու «Հովիտի» Ս. Հ.-ին, որ թիչ է մնում կարծեմ, թե ես էլ Պուշկին եմ:

Իհարկե, ներողություն եմ խնդրում քեզ սիրելի հայրենակից-

ներից, որ էս տեսակ մի համեմատություն անցկացրի մտքովս: Ես լավ գիտեմ, որ նրանք թույլ չեն տալ բնավ, որ թիֆլիսի: Էս ինչ փողոցում, էս ինչ համարի տանց մի ուրիշ Պուշկին լինի, էն էլ հայ: Բայց վեճի նմանությունը շատ է մեծ, նրա համար հիշատակեցի:

Եվ հետաքրքրական է ավելին լսել, ավելի զարմանալի նմանությունը տեսնելու:

Ռուս. Գրամբյանն էլ մեղադրում է Պուշկինին, թե նա իր հեքիաթը վերցրել է ուսաց Հայկունու — Кирша Данилов-ի ժողովրդական նյութերի հավաքածուից: Ասում է. «Чего ждать, когда наши поэты начинают пародировать Киршу Данилова? Возможно ли просвещенному или хоть немного сведущему человеку терпеть, когда ему предлагают новую поэму, писанную в подражание Еруслану Лазаревичу».

Եվ ճիշտ «Մշակի» Գրամբյանի ու «Հովիտի» Ս. Հ.-ի նման էլ նմանություններ է գտնում: Ասում է. «Для большой точности, или чтобы лучше выразить всю прелесть старинного нашего песнопения, поэт и в выражениях ушодобился Ерусланову рассказчику...»

Եվ նախադասություններ ու բառեր է բերում, ցույց տալու, թե պատմությունն ու տրիպերը հո նման էին, արտահայտությունն ու լեզուն էլ ինչքա՞ն նման են:

«Теперь прошу, писал он, обратить ваше внимание на новый ужасный предмет, который, как у Камюэнса Мыс бурь, выходит из недр морских и показывается посреди океана Российской словесности. Пожалуйста, напечатайте же мое письмо; быть может, люди, которые грозят нашему терпению новым бедствием, опомнятся, рассмеются — и остановят намерение сделаться изобретателями нового рода русских сочинений. — Дело вот в чем: Вам известно, что мы от предков получили небольшое бедное наследство литературы, т. е. сказки и песни народные. Что об них сказать? Если мы бережем старинные монеты, даже самые безобразные, то не должны ли тщательно хранить и остатки словесности наших предков?..»

Իսկ մի ուրիշը գրում էր: ԲԱ՛

«Мать дочери велико на эту сказку племуть»

Իհարկեմ, հետո բացվեց ու էսօր ապացուցված է, որ Պուշկինը չի էլ օգտվել Кирша Данилов -ի հավաքածուից, և ուսաց գրականության պատմությունը ցավ հայտնելով դրա համար, որ չի օգտվել, ասում է.

«Но нужно помнить, что самое содержание русского фольклора раскрывалось медленно и современные научные воззрения на фольклор и на вопрос об отношении его к книжной словесности в сущности сходятся с тем практическим решением его, какое дал Пушкин в «Руслане и Людмиле». Универсальность сюжетов фольклора и зависимость его от творчества книжного или индивидуального — результат только новейших изучений. В их свете свободное отношение Пушкина к чудесно-фантастическим сюжетам и приурочение их к национальному преданию—есть акт гениального предвидения...» (Библиотека великих писателей, под ред. Венгерова, Пушкин, т. I. соч. Пушкина с объясн. их и сводом отзывов критики, Л. Поливанова, Руслан и Людмила).

Но нужно помнить էն էլ, որ էս ամենը հետո հայտնվեց ու ասվեց: Դրա համար հարկավոր էր մի Բելինսկիի գար ու ամեն մեկին ցույց տար իր տեղը: Իսկ մինչև նրա գալը, էդ ուս Դրամբյաններն ու Ս. Լ.-երը և նրանց խրախուսող ուսական «Մշակներն» ու «Հովիտները», որ շարունակ կուրծք էին ծեծում, թե իրենք գրականության ու ազգի սիրուց են էրվում, շատ մտքեր ու շատ արյուն պղտորեցին:

Սառնասիրտ Крылов-ը էդ «լուրջ կրիտիկայի» ծանր սպա-վորության տակ իր սրտի ցավը թողեց ուսաց գրականության մեջ մի քառյակով.

«Напрасно говорят, что критика легка;

Я критику читал Руслана и Людмилы:

Хоть у меня довольно силы,

Но для меня она ужасно как тяжка» .

Պուշկինի բարեկամ իշխան Վյազեմսկին առաջարկում էր ուժով լռեցնել էդ իդիոտներին, իսկ Պուշկինն ինքը տեսնելով, որ քննադատը չի կանգնած իր առջև, այլ բթությունը, որ դուրս է եկել իր կուպիտ ձեռքը բարձրացրել միայն հարվածելու հանուն հայրենիքի ու գրականության, նրա հաստ ու տափակ ճակատը

խարանեց մի շարք էպիգրամամաներով, որոնք հայտնի են «На Каченовского» ընդհանուր վերնագրով: Ահա նրանցից մինը:

Нахальство, Аристарх, таланту не замена,

Я буду всё поэт, тебе наперекор,

А ты останешься всё тот же крохобор,

Плюгавый выполозок из гузка Дефонтена*.

Եվ էստեղ ես ուզում եմ պարծենալ ու հիշեցնել, որ ես Պուշկինի նման անքաղաքավարի չեմ վերաբերվել դեպի իմ Արխատարիները, ու էս տեսակ բաներ չեմ ասել սրանց, թեև սրանք շատ ավելի աներես ու շար են, քան ուս պրոֆ. Каченовский-ն և էնպես, ինչպես Պուշկինն է զգված. բացականչել թե — «ո՞ր սատանեն արավ, որ ես բանաստեղծ ծնվեի Ռուսաստանում», ես երբեք էդ տեսակ բացականչություն չեմ արել, թե՛ ո՞ր սատանեն արավ, որ ես բանաստեղծ ծնվեի հայերի մեջ, թեև ես հազար անգամ ավելի իրավունք ունեի:

Զէ՞ որ միայն մի թշվառ Каченовский-ն իր նման մի երկուսը չէին, որ զզվեցրել էին մի Պուշկինի: Զէ՞ որ միայն էդ մի անախորժ վիճաբանությունը չէր նրա զայրույթի ու զզվանքի պատճառը:

Եվ մի՞թե մեծ ու փոքր Դրամբյանն ու Ս. Լ.-ն նորություն են մեր կյանքում, մի՞թե թշնամությունն ու շարությունը մեր ամենօրյա հացը չեն, մի՞թե հայհոյանքն ու սուտը հրբեկ պակասել են մեր գլխից, և մի՞թե մենք կտեսնենք դրանց վերջը...

— Բնա՛վ:

Եթե ուս Каченовский-ներն առաջ են եկել իբրև իմաստակներ և համառելով մնացել ու թաղվել են իրենց մոլորության մեջ, հայ մեծ ու փոքր Դրամբյանները սկզբից մինչև էսօր հայտնվել են իբրև մաղձոտ հողիներ և հուսահատորեն ճգնել են միայն հարվածել, թունավորել, վնասել, սպանել: Ուրիշ խնդիր է, թե ուժ չեն ունեցել ու չեն կարողացել, բայց էդ է եղել ձգտումը, հողին: Եվ նրանցից բան չեք կարող հասկանալ, ոչ էլ կարող եք բան հասկացնել:

Կասեն՝ վերցրել եք բառացի էսնչից: Յույց կտաք, որ չեք վերցրել: Էդ նշանակություն չունի: Կասեն՝ թարգմանել եք: Յույց

* Դեֆոնտեն ֆրանսիացի մի եզվիտ հողորական էր և մի շար ու գռեհիկ դրոզ, որ վեճի էր մտել Վոլտերի հետ: Լ. Ք.:

կտաք, որ Թարգմանութիւն չի: Դարձյալ չեմ լսիլ: Կասեն ինչո՞ւ չեք վրեն գրում ժողովրդական: Թվականով, տեղով, էջով ցույց կտաք, որ գրել եք վրեն ժողովրդական: Միևնույն է, նրանք իրենցը կշարունակեն:

Ես ցույց տվի, որ իմ մշակած ժողովրդական նյութերի վրա սովորաբար գրել եմ «ժողովրդական»: Բայց շատ իզուր: Ես ոչ թե կարող էի չգրել «ժողովրդական», այլ ուղղակի չպետք է գրեի: Մինչդեռ մեր գրամբայանիզմը հանգուցյալ Հայկունու օրինակի վրա ցույց տալով, պահանջում է, որ ես իմ մշակած նյութերի վրա ոչ միայն գրեմ ժողովրդական, այլև՝ թե արտեղ, երբ և ումից եմ լսել:

Եվ մեր մեծ թե փոքր, հառաչադիմական թե կղերական բթամիտ Դրամբայանները մինչև էսօր դեռ չեն հասկացել, թե էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները գրում են — որտեղ են լսել, երբ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան է և այլն, և այլն, որովհետև էն արձանագրութիւն է, պրոտոկոլ է, և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Իսկ մշակածի, գրական լեզվով պատմածի, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, շափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած: Ճիշտ էնպես, ինչպես հայոց էս կամ էն Դրամբայանը կարող է մի գյուղից լինի դուրս եկած, բայց իրոք էլ գեղջուկ Դրամբայան չի և թույլ չի տալ իրեն գեղջուկ անվանել, այլ մշակված Դրամբայան, «լուրջ կրիտիկոս» Դրամբայան, ազատամիտ թերթի աշխատակից Դրամբայան...

Եվ ահա մենք պարտավորված ենք էդ «լուրջ կրիտիկոս» Դրամբայանին ու հայոց ազատամիտ թերթին ցույց տալու, թե բանահավաք ուրիշ է, բանաստեղծն ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը — ինքը:

Մի բանահավաք Афанасьев պարտական է հիշելու, թե որտեղ է լսել, օրինակի համար, «Золотая рыбка» հեքիաթը ու հոտիցն էլ բերում է նրա զանազան տեղերի տարբերակները, թե ինչպես մի տարբերակում ձկան դերը աղվեսն է կատարում, երբորդում՝ թռչնակը, շորորդում՝ ծառը:

Մեկում ծերունու լավութիան փոխարեն են վճարում, մյուսում առջակի լավութիւն են անում խղճահարութիւնից: Մեկում հարստութիւն են ուզում, մյուսում՝ իշխանութիւն, երբորդում

ուզում են սուրբ դառնան: Մեկի վերջում մնում են դատարի, մյուսում — հարուստ ու երջանիկ, երրորդում — դառնում են շներ...

Եվ ամեն վարիանտի տակ մարզը գրում է — Записано в Чердыском уезде, Пермской губ. կամ Записано в Енисейской губ. Իսկ մի բանաստեղծ Պուշկին նույն ժողովրդից վերջնում է նույն հեքիաթը և գրում է. «Сказка о рыбаке и рыбке». Գրում է ու ստորագրում Ալեքսանդր Պուշկին: Եվ որովհետև երբ ասում են հեքիաթ, առակ, լեգենդ, ամեն մի գրականութիւնից տարրական հասկացողութիւն ունեցող մարդ, մինչև իսկ ուսմիկը, գիտեն, որ էդ կենդանակի ընդհանուր, ժողովրդական ստեղծագործութիւն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրել, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով: Եվ ահա Պուշկինն էլ էսպես է պատմում, շատ ժոտ ու հավատարիմ մնալով բնագրին, և նրա գրածը արդեն ժողովրդականը չի և չի կարող ու չի էլ գրում վրեն ժողովրդական: Եվ ոուսաց գրականութիւն պատմութիւնը Պուշկինի գրածի ու ժողովրդականի էսքան մոտիկութիւնը շեշտելով հանդերձ ոչ թե հայհոյում է նրան, այլ ընդհակառակը, բարձր գնահատելով պոետի նուրբ հոտառութիւնն ու զգուշավորութիւնն, ասում է.

«Текст народной сказки, взятой на этот раз Пушкиным, заключал много достоинств и по стройности состава, и по яркой характеристике обеих главных действующих лиц (старика и старухи). Пушкин, почувствовав эти достоинства своего источника, придержался близко к нему» (Соч. Пушкина о объясн. их и свод. отзыв. критики Поливанова).

Մեր «լուրջ կրիտիկոսները» պ. Տեր-Ղևոնդյանի դաւազրքում Թարգմանած ոուսական հեքիաթը հաշկակա՞նի տեղ են դնում, իսկ հայկականը անվանում են ոուսերենից Թարգմանութիւն և կամ «Դասընկերում» տպած գերմանականի խառնուրդ «Ձանգլու-Պանգլուն» անվանն հայ ժողովրդական հեքիաթի օրինակ են առաջարկում: Եվ բացարձակ բոթիկ ու անտեղյակ են առարկայից, որի վրա խոսում են, դեռ հանդգնում են սովորեցնել, թե ինչպե՞ս պետք էր ժողովրդական նյութի մշակել ու գրել:

Իսկ ես, մարդու Թարգման էլ էի՞, փոխանակ նրանց խորհրդին հետեւելու և գործը խաղաղ վերջացնելու, ուզում եմ ցույց տաւմ, որ ավելի թե՛մ հանցավոր ու բանագող եմ, քան թե նրանք

գիտեն ու կարծում են: Ես իմ լեզունդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականիցն առել, ու միշտ աշխատել եմ և աշխատում եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ, Սասունցի Դավիթը կազմելիս էլ եմ հզպես արել, նույնիսկ Անուշն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից և շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում՝ «բառացի»:

Սրան, իհարկե, ամենայն սիրով կհավատան մեր «լուրջ կրիտիկոսներն» ու նրանց թերթերը, միայն մի ծանր խնդիր կա, որ չի կարող վճռել նրանց պատվիկ ուղեղը, թե ինչպես է, որ ես Հայկունու կամ ուրիշ ժողովրդական նյութերից «բառացի» առնում եմ ու իմ առած «բառացին» «հեշտ փառք է վաստակում ու գումարներ է դիզում...», իսկ բնագիրը, իսկականը չի կարողանում, և կամ իրենք ու Հայկունիները չեն կարողանում անել նույնը:

Ա՛յ զարմանալի «բառացի»...

Ա՛յ հանելուկ...

Եվ ես խորապես համոզված եմ, որ էս «լուրջ կրիտիկոսներից» սկսած մինչև իրենց խմբագիրները, սրանց խղճուկ բանականությունը էստեղ շջմում է ու մոլորվում, ու ընդմիջտ էլ կմնա նույն ցավալի դրություն մեջ:

Եվ անշուշտ սրանց կարելի էր շատ բան ներել:

էս տեսակ մարդիկ արևելյան ու արևմտյան բոլոր մեծ առակախոսներին մի Եզոպոսի, մի Փեդրոսի, մի Լաֆոնտենի, մի Կոլտի, մի Ուլիմպիանոսի, մի Գյոթեի և նմաններին միշտ կարող էին անվանել գրական շանտաժիստներ, բանագողներ, ավերիչ ժանտախտներ և ինչ որ բերանները գար, և ճշմարիտ որ նրանց գրքերն ու գրվածքներն էլ բոյկոտի ենթարկել և հայհույնով գրել ստորեցնել:

Չէ որ ամենքն էլ ունին նույն առակները, նույն ազգավներն իրենց պանիրներով, նույն խորամանկ աղվեսներն ու գայլերը, նույն թակարդները, նույն օձերն ու նույն գյուղացիները, և այլն, և այլն: Եվ նրանք ի՞նչ պիտի անեին: Կամ պետք է աղաղակեին — Տե՛ր, թող սրանց մեղքերը, որովհետև չգիտեն ինչ են անում ու ինչ են ասում, և կամ թե չէ պետք է իրենց առակներին նոր առակ ավելացնեին, թե ինչպես էշը սոխակին երգել է սովորեցնում և կամ թե ինչպես խոզը պալատն է ընկնում և միայն աղք է տեսնում էնտեղ:

Անկասկած կարելի էր էս տեսակ մի բացականչությունով կամ մի առակով փակել սրանց հետ խնդիրը, եթե միայն տգիտությունը լիներ մեզ զբաղեցնող առարկան. բայց ես ավելի հոգու շարունակումն ու սրտի վատությունն եմ նկատում էստեղ և նրա դեմ է, որ ստիպված եմ գրիչ առնելու էս անհարմար օրերում:

Եվ իսկի նոր չի ու նորություն չի մեզանում գրական անճաշակությունն ու տգիտությունը միացած փոքրիկ հոգու շարունակումը, որ ես պատահմունքով «դրամբյանիզմ» անվանեցի, և որից ոմանք, սխալվելով, ենթադրում են, թե էս ամենը ուղղած է մի որևէ խեղճ ու կրակ Դրամբյանի դեմ: Ո՛չ, ով կդառնա ու կթերթի մեր մամուլի հին տարիները, կտեսնի, որ առաջ էդ վատ երևույթը, որ ես «դրամբյանիզմ» անվանեցի պատահմունքով, շատ ավելի խոշոր ու ավելի բազմաթիվ ներկայացուցիչներ է ունեցել, և միայն այժմ նրանք սակավացել ու մանրացել են, դարձել Դրամբյաններ ու Ս. Հ.-եր:

Սրանից մի քանի տարի առաջ ո՛ր հայ գրողի երեսնամյակը, քառասնամյակը, կամ հիսնամյակը տոնում էին — երզվում էր, թե էսքան տարվա ընթացքում իմ գրվածքների վրա մի լուրջ հոգված չեմ կարողացել ու բացի հայհույնքը ուրիշ բան չեմ լսել:

Պետք է վերջանա էս գարշելի երևույթը, իսկ եթե նրան վերջ չի լինիլ — վերջ չի լինիլ և գրական մարդու ցասումին ու հարվածներին: Շատ հին ու սուրբ կոփվ է սա:

Սակայն, «Մուրճի» օրերից սկսած մեր մեջ երևում են գրական հասկացողության ու ճաշակի տեր մարդիկ, որոնք քննադատության մեջ դնելով գրական-գեղարվեստական խիստ պահանջներ, միաժամանակ իրենց հետ բերում են լուրջ վերաբերմունք ու հարգանք դեպի գրողն ու գրականությունը:

Տարեցտարի ավելանում է սրանց թիվը, տարեցտարի ուժեղանում են սրանք, սրանց հետ եկել է և մի նոր, թարմ ու ճաշակավոր բազմություն, և սրանց միջից պիտի պայթի ու որոտա էն դատող ու զատող բարկությունը, որ ամեն մի ժողովրդի գրականության մեջ, որոշ շրջանում, գալիս է պայթում բոլոր մեծ ու փոքրը, հին ու նոր Դրամբյանների գլխին ու մաքրում, պարզում ժամանակաշրջանի հաշիվները:

Ինձ թվում է, որ հեռու չի էդ օրը մեր մեջ:

«Новое время»¹-ն գոհ է, որ հայերը նորից վերադառնում են դեպի Ռուսաստան, որից երես էին դարձրել վերջին 35 տարին հատկապես նրա պարագլուխները, և, ողջունելով հայ ժողովրդի էս վերադարձը դեպի հին ավանդությունները, ասում է. «հայկական նոր տրամադրության անկեղծությունը դեռ պետք է փորձենք»:

Առած կա, թե վատ մարդը զատկին էլ վատ կլինի: Հիմի սրանն է: Ժողովուրդների բարեկամության տոնական օրն էլ հայտնվում է՝ դարձյալ վատ դերում — փորձի կերպարանքով:

Եվ նրա հետ մարդ ուզում է էսպես խոսել:

Ո՞ւմ եք փորձում, ո՞վ փորձիչ:

Հայ ժողովրդի՞ն: Բայց դուք ինքներդ եք հաստատում, թե նրա մեջ ամուր է եղել բնական ձգտումը դեպի Ռուսաստանն ու միշտ էլ մնացել է անփոփոխ:

Հին ավանդություններն ու պատմություննն եք փորձում:

Բայց նրանք մնացել են անսասան հայ ժողովրդի հետ միասին: էդ էլ եք դուք վկայում...

Սակայն ես ուզում եմ մի ուրիշ խոսք ասել հին փորձիչին: Ուզում եմ ասել. դուք ո՞վ եք, որ ուզում եք մեզ փորձի ենթարկել: Մի՞թե դուք եք հանդիսանում էն Ռուսաստանը, որին վերադարձել են հայերը, մի՞թե դուք նրա հարազատ ներկայացուցիչն եք: Մի՞թե դուք նրա ոգու թարգմանն եք:

Ո՞չ: Երբե՞ք: Մենք եկել ենք ու գալիս ենք դեպի Մեծ Ռուսաստանը, դեպի մեծ Ռուս ազգը, և եթե սիրել ու հարել ենք — նրան, ոչ թե ձեր ու ձեզ նմաններին, որոնք միշտ եղել են փոքր ու անսիրելի: Եթե մենք միացած ենք անբաժան, ռուսական պետությանն ենք միացած, նրանից ենք տեսել բարիքներ, նրա հետ ենք կապել մեր հույսերը, նրան էլ ծառայել ենք հարազատի նման ամեն ասպարիզում: Եվ վկայությունները շատ են:

Իսկ ձեզանից մենք ի՞նչ ենք տեսել, ձեզ հետ ե՞րբ ենք եղել միացած ու բաժանված, որ էս օր էլ ետ գանք դեպի ձեզ ու դուք էլ դեռ մեզ փորձեք:

Եթե վերադառնում ենք հին լավ ավանդություններին, դուք

լավ ավանդություններ չունեք, և դարձյալ խոսքը ձեր ու ձեզ նմանների մասին չի:

Եթե մենք կապված ենք եղել ու էսօր էլ նորից՝ ավելի գիտակցաբար, ամրապնդում ենք կապը, էդ ռուս լավ մարդու հետ է, որի սրտի բարությունն ու մեծությունը վայել են իր հայրենիքի մեծությանն ու ազգային ուժին, ոչ թե ձեզ հետ, որ միշտ եղել եք փոքրոգի ու նեղսիրտ և խոսել եք միայն խորթությունից ու թշնամությունից:

Եվ էսօր էլ, երբ խոսք կա հին ավանդությունների, սիրտ ու լավ կապի մասին — փորձիչը խոսք չունի: Նա միայն կարող է մտքեր պղտորել ու վատ զգացմունքներ առաջ բերել:

— Ետ գնա, քո օրը չի էս օրը: Թող առաջ գա նա, ով կարող է Մեծ Ռուսաստանը հանդես բերել հօգու մեծությամբ ու սրտի բարությամբ. հա, որ իր ուժով երկրներ նվաճելու հետ իր առաքինություններով էլ ժողովուրդների սրտերն է նվաճում:

1913

ԼՍԵՆԸ ԱՒ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Արդյոք մի որևէ ձևով վճովե՞ց հայկական հարցը: Արդյոք վերացա՞վ տաճկահայոց ամբողջ կյանքի ու մեր հոգու վրից էդ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի ու ավելի լայն խնդիրների: Ո՞վ գիտի:

Չնայելով հայոց կաթողիկոսի ու նրա ներկայացուցիչ Նուբար փաշայի շնորհավորական հեռագիրներին՝ հայ ժողովուրդն ամեն տեղ էս հարցի գեմը խորին լուռություն է պահպանում, ծանր ու իմաստուն մի լուռություն, իսկ երիտասարդ թուրքերը Ռուսաստանի սահմանի վրա զորահանդեսներ են սարքում:

Այժ, զուցե վերջը չի հայկական հարցի, բայց վերջի սկիզբն է: Դրա համար էլ խորհրդավոր է և էն համատարած խլրտումը, որ նկատվում է մեր կուլտուրական կյանքում — գպրոցի, գրական-

¹ Պետերբուրգում լույս տեսնող հեռագրիական օրաթերթ:

նության, գիտության — ուսումնասիրության ու բանասիրության ասպարեզներում: Սա էլ սկիզբն է մի նոր վերածնության, որի համար մենք բավականաչափ ուժեր ու տրամադրություն ունենք արդեն:

Հինը ենթարկվում է վերագնահատության, առաջադրվում են նոր, ավելի լուրջ պահանջներ, և ամենամեծ պահանջը — պարզ հասկանալ...

Պարզ հասկանալ մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունը ու մեր պատմական հիշատակաբանները: Մինչև այժմ նրանք խոսել են մեր սրտի հետ, և մենք սիրել ենք զգացմունքով, անխտիր, հախուռն, առանց հասկանալու, թե ինչ ենք սիրում և ինչու. այժմ գալիս է ժամանակը՝ նրանց էությունը ներհմուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու, և էդ նպատակի համար են և Գրական Ընկերություն, և Ազգագրական Ընկերություն, և Պատմական Ընկերություն, և Երաժշտական Ընկերություն, և ուրիշ նման ընկերություններն ու մասնավոր ձեռնհաս անհատների ջանքերը:

— Էս ճանապարհին ինչպես կլինեն շատ հայտնություններ, հիացումներ, էնպես էլ անխուսափելի են շատ հիասթափություններ, բայց էս է հաստատ ու ճշմարիտ ճանապարհը:

Պետք է լռեն վերջապես բոլոր նրանք, որոնք խոսել են ու խոսում են և՛ ժողովրդի անունից, և՛ գրականության, և՛ պատմության, և՛ գիտության — միմիայն մարդկանց աչքերին թող փշելու համար, կուրացնելու ու իրենց ետևից տանելու համար, իրենց համար առաջնորդողի դիրք ու աթոռ ստեղծելու համար, և՛ հանդես պետք է գան ու խոսեն նրանք, որոնք երկար տքնությամբ ու ճգնությամբ ուսումնասիրել ու սիրել են իրենց խոսքի առարկան և շեն գալիս դիրք ու աթոռ գրավելու հավակնությամբ, այլ գիտությանն ու գեղարվեստին ծառայելու պատրաստակամությամբ:

Ահա՛ նրանցից մեկը — ճարտարապետ Թորոս Թորամանյանը, տասնումեկ տարի լուռ ու մունջ, հազար ու մի զրկանքով հայոց ավերակներում աշխատելուց հետո՝ վերջապես հրապարակ է գալիս խոսելու հայոց ճարտարապետության, նրա ծագման, զարգացման ու հարաբերությունների մասին: Եվ երկու նշանավոր գիտնականներ էս տեսակ վկայություն են տալիս նրա համար: Պրոֆ. Մառը իր մի աշխատության մեջ վկայում է, թե պ. Թորա-

մանյանը հայոց ճարտարապետության հիշատակարանների լեզվի առաջին ուսուցիչն է: Իսկ պրոֆ. Ստրիժիգովսկին ասում է. ճարտարապետ Թորամանյանը մի մեծ նորություն է բաց անում ամբողջ Եվրոպայի առջև:

Պետք է լռենք ու պաշտպանենք հայոց ճարտարապետական հիշատակարանների լեզվի առաջին ուսուցչին, թե ու թիկունք պետք է լինենք մեր ազգային ստեղծագործական հանճարը հայտնագործող ու վեր հանող վաստակավորին:

1914

ԿՈՎԿԱՍԻ ՄԵԾ ՈՐՂԵԳԻՐԸ

Մեծ է Կովկասը, արևելքի ու արևմուտքի, հարավի ու հյուսիսի մեջտեղը կանգնած հին հսկան: Աստվածների բնակավայրեր են եղած նրա երկնահաս բարձունքները: Նրանց ստորոտների վրա հանգչում են հին դարերի ու հին ժողովուրդների գերեզմաններն ու ավերակները, տներն ու տաճարները, իսկ գագաթները շողշողում են ամպերից վերև, արևին ու աստղերին ճակատ առ ճակատ:

Մեծ բան է՝ լինել Կովկասի որդեգիրը:

Հազար հազարավոր մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց նրանք բոլորը Կովկասի համար եղել են անցվորներ, խոսյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեգիր՝ նա շատ քիչ է ունեցել:

Էդ երջանիկ քերիցն եղան երկու մեծ ոռու բանաստեղծները — Պուշկին և Լերմոնտով: Արդյոք հարավի ու լեռնաստանի ժառանգական արյունն էր, որ խոսեց նրանց մեջ, թե՛ շինջ ու հըստակ մեծություններին ձգտող բանաստեղծի ոգին, ո՞վ գիտի, թերևս և՛ մինը և՛ մյուսը, բայց նրանք Կովկասը սիրեցին, Կովկասը նրանց ու մեծ Կովկասին մեծ որդեգիրներ եղան հավիտյանս հավիտենից:

Եվ ահա էսօր լրանում է ոռու ժողովրդի մեծ զավակներից մեկի և Կովկասի մեծ որդեգիրներից մեկի — Լերմոնտովի ծննդյան

հարյուրամյակը, բայց պատերազմի պատճառով հետաձգվում է էդ պայծառ, էդ ցանկալի տոնը, որ Ռուսաստանի մի ծերից մինչև մյուսը պետք է խնդացներ ու թնդացներ շատ միլիոնավոր սրտեր ազնիվ ու խոր զգացմունքներով առանց աղոթի ու ցեղի խտրութեան:

Հետաձգվում է:

Ամենքս էլ հետաձգում ենք: Բայց բույրովի՞ն լսել չի կարելի: Եվ ինձ էսօր համակում է մի խոր տխրություն:

Ես մտածում եմ. ինչպես էսօր ժամանակը չի, որ կերմոնտովի ծննդյան հարյուրամյակի տոնը գար, էնպես էլ հարյուր տարի առաջ ժամանակը չէր, որ կերմոնտովը ծնվեր. բայց ծնվեց. ծնվեց հրեղեն ու վերասլաց մի հոգով, որ դեռ մանկուց շնաշխարհիկն էր որոնում հարյուր տարի առաջ եղած Ռուսաստանի միջավայրում, շինովնիկական մունդիրի մեջ ամուր սեղմված ու շորացած մի կյանքում, ու կատարվեց մեծ դրաման:

Այո՞, դրամաների մեջ ավելի զարհուրելին չկա, քան մեծ հոգիների դրաման:

Կերմոնտովն էլ ունեցավ իր մեծ ընկերի — Պուշկինի ճակատագիրը: Մինը եղավ որպես ջինջ երկնակամարի վրա թափառող մենակ մի ամպ:

Последняя туча рассеянной бури!
Одна ты несешься по ясной лазури,
Одна ты наводишь унылую тень,
Одна ты печалишь ликующий день.

Մյուսը՝ որպես ծովի ընդարձակության վրա, կապույտ մշուշի մեջ հածող մենակ մի նավ:

Белеет парус одинокий
В тумане моря голубом...

Եվ երկուսն էլ Ռուսաստանի լայնածավալ տափաստանների վրա շասկացված ու հալածված մենակ հոգիներ...

Բայց ինչու՞ էին նրանք հալածված իրենց հայրենիքում: Մի՞թե իրենց հայրենիքը չէին սիրում: Մի՞թե կերմոնտովը իր հայրենիքը չէր սիրում:

Սիրում էր, այո՞, բայց «տարօրինակ» սիրով: ոչ է՞ս սիրով, ինչ սիրով որ սիրում էին մնացած շատերը: Եվ ինչ էր խոստա-

վանում հրապարակով, թե՛ ոչ արյունով գնած փառքը, ոչ գոռոզ ինքնավստահությունով լիքը հանգիստը, ոչ խափար անցյալի նվիրական ավանդները — ուրախության ոչ մի զգացմունք չեն շարժում իր մեջ: Իսկ էն «տարօրինակ» սերը, որով սիրում էր, և որը չէր մկրտում ոչ մի անունով, սակայն շոսյուրեն փոռում էր իր երկերում ու երգերում, ոչ հասկացող կար, ոչ գնահատող: Կյանքի ասպարեզը բռնած էին կամ ոչնչությունները և կամ նրանք, որոնց մասին ասում է՝ «Իրենց սրիկայի սիրտը ծածկած էին մունդիրով»: Հասկացող, գնահատող հասարակություն չկար, և «տարօրինակին» հազարավոր աչքերով հետապնդում, հազարավոր ձեռքերով մերժում, թշուժ էին իրենց շրջանից: Մի շրջան, որից Պուշկինն ուղում էր մինչև Չինաստան մին փախչի, որից զզված Գրիբոյեզովը Պարսկաստան ընկավ...

էս ամենի վրա ավելացավ և էն ամենամեծ վիշտը, որ կերմոնտովը ունեցավ իր կյանքում: Նա պաշտում էր Պուշկինին, և տեսավ Պուշկինին... բամբասված ու զնգակահար: Որոտաց մի հրաթափ, մի անուն զայրույթով, որի անունն է «На смерть Пушкина», ամբողջ Ռուսաստանի երեսին նախատիքի ու քրտապարտության էն տեսակ խոսքեր շարտեց, որ մինչև էդ օրը Ռուսաստանը գեռ չէր լսել, ու սրանով ամեն բան լրացավ:

Պետք է հեռանար:

Հեռացավ՝ մնաս բարով ասելով «տերերի ու ստրուկների Ռուսաստանին, կապույտ մունդիրներին ու նրանց նվիրված ժողովրդին, Գոթե, ասավ, էնտեղ, Կովկասի սարերի ետևը կարողանամ ծածկվել քո (ժողովրդի) ղեկավարների ամենատեսա աչքերից ու ամենալուր ականջներից»¹:

էսպես ժամանակը, երբ իրեն շրջապատող ամեն բան ընկած է մարդու աչքից ու սրտից, հրասթափված մարդը կյանքի մեջ մի տեսող, մի ապավեն է որոնում ու նրան է փարում, նրան է փաթաթվում իր բոլոր հույսերով ու սիրով: Կովկասը էդ ապավենն ու վերջապահը եղավ Պուշկինի ու կերմոնտովի համար: Եվ երբ նրանք իրենց ժամանակի ուսական կյանքի ու իրենց հրասթափության անապատից թշված, հաշածված դիմում էին դեպի հարավ՝ նրանց խոցված ու գազազած սրտերին հեռվից, ամպերի

¹ Կերմոնտովի «Прощай, немытая Россия» բանաստեղծության արձակ վերջապահը:

միջից առողջ ու պայծառ ժպտացին Կովկասի ձյունափառ գագաթները՝ հոյակապ ցնորքների նման, նրանք էլ իրենց հոգու ամբողջ ուժով ու աշխուժով փաթաթվեցին Կովկասին, որդեգրվեցին Կովկասին ու ախպերացան մեզ — կովկասցիներին:

Եվ երբ կգա Լերմոնտովի հարյուրամյակի կատարման օրը, մենք, կովկասցիներս, կտոնենք՝ ոչ միայն որպես մի մեծ ռուս բանաստեղծի տոն, որին, ինչպես և առհասարակ ռուս գրականությանը, շատ բան ենք պարտական, այլև որպես մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր ընդհանուր մոր — Կովկասի աննման որդեգիրն է, որ դեռ մանուկ օրից երկինքն ու Կովկասի կապույտ սարերը միասին է երազել:

1914

ՂԵՊԻ ՄԵՍ ԿՅԱՆՔԸ

«Բնությունը կենդանի է ստեղծել, — մարդը հառաջադիմության արդյունք է»:

Էսպես են որոշել մարդկային իմաստությունն ու գիտությունը:

Հիրավի, երբ խորաթափանց հայացքով նայում եք դեպի ետ՝ անցած հեռավոր ժամանակների աղջամուղջում ձեր աչքին մտալ պատկերանում է մարդակեր մարդը, ապա երբ նորից դառնում եք դեպի ձեր շորս կողմը՝ տեսնում եք, որ մարդը էսօր ոչ թե մարդակեր չի, այլև մարդասպանությունն էլ նրա կյանքում արդեն համարվում է մի դժբախտ դեպք, որի վերացման համար նա մեծ մտահոգություն ունի՝ բարոյական պատվերներով, պետական օրենքներով, զեղարվեստական և ուրիշ հազար ու մի արտահայտություններով:

Դեռ սրանից էլ ավելին: Տեսնում եք՝ նրա մեջ արմատանում, զարգանում ու ծավալ է առնում ալտրուիզմի — ալլասիրության լայն զգացմունքը, որ առաջնորդում է դեպի հանրամարդկային եղբայրությունը:

Եվ դեռ սրանից էլ դենը: Նրա մեջ հետզհետե որոշվում,

շեշտվում ու հաստատվում է կենդանասիրության խոր ու վսեմ զգացմունքը, որ տանում է դեպի տիեզերական մեծ կյանքը:

Եվ, անշուշտ, ուրախությունով պետք է նկատեինք էս հառաջադիմությունը, եթե մեր հեռավոր գեղեցիկ երազները չլինեին ու մեր ազնիվ անհամբերությունը:

Այո՛, մենք շատ ենք հեռու էն լավ մարդուց ու լավ կյանքից, որ երազում են լավագույն երազողները, բայց ակներև հառաջադիմությունը դեպի նրանց է տանում:

Էսպիսով առաջադիմությունը, ամենակողմանի կերպով առած, մի աստվածային աշխատանք է, որ կատարում են ընտիր անհատներն ու ազգերը, լավ մարդն ու լավ կյանքը ստեղծելու համար: Եվ անհատը կամ ազգը ինչքան ազնիվ է՝ էնքան էլ շատ է նախանձախնդիր հառաջադիմության ճանապարհը շուտով բռնելու և էնքան էլ ուժեղ թափով ու սրտով է շարժվում էդ աստվածային գործը կատարելու:

Սակայն ամեն հառաջադիմություն պայմանավորվում է ինքնուրույն քայլեր անելու, ունեցած լավագույն ձիրքերը մշակելու և լավագույն զգացմունքները զարգացնելու ազատության պայմանով: Մի ժողովուրդ, որ կլանված լինի իր գլխապահության հասարակ խնդրով, ինչպես մեր ժողովուրդն է եղել կլանված ասիական բռնակալությունների տակ «կյանքի, գույքի ու պատվի» մըշտական բռնաբարումի խնդրով, էլ նա ինչպե՞ս կարող է մասնակից լինել մարդկության ընդհանուր հառաջադիմության գործին: Մեր կյանքը դժոխք են դարձրել նրանք, մեզ համար մարդուն անվայել ստոր վիճակ են ստեղծել ու ստոր խնդիրներ, մեր ուշքն ու միտքն էլ հետը ցած տարել: Դառնացրել են մեր հոգին, նրա մեջ զարգացրել են վրեժի ու թշնամության զգացմունքները, ստիպել են երգել «Արյան երգեր», և մեր լավագույն մարդիկն էլ շեն կարողացել դուրս գան մեր իրականության անձուկ ու արյունոտ շրջանակից, հեռու նայեն ու մասնակից լինեն համաշխարհային մեծ խնդիրների մշակումին՝ գրական լինի, գիտական, թե հասարակական:

Այժմ համաշխարհային մեծ ցնցումով՝ շատ ու շատ բան է հեղաշրջվում ազգերի հոգում ու կյանքում. շտեսնված մեծ պատերազմը խոստանում է շտեսնված մեծ էլ բարեփոխություններ: Մեծ պետությունները իրենց սրերը մերկացրել են նաև հանուն ճշմարտության ազատության: Սրանով նրանք գալիս են վերացնելու

Շն անվերջ ու արդար խոռվութիւնը, որ հարուցանում են հայած-
ված աղգները իրենց վիճակի հանդամանքով և էսպեսով էլ խոռ-
վարարների փոխարեն նրանք, մեծ պետութիւնները ստեղծում են
իրենց համար բարեկամներ ու գործակիցներ խաղաղ առաջադի-
մութիւն ասպարեզում:

Մենք՝ հայերս էլ էդ փոքր ազգերից մինն ենք: Տաճկական
բռնակալութիւն անկումով ու հայկական հարցի բարեհաջող լու-
ծումով մեր առջև էլ նոր հորիզոններ են բացվում: Հնարավորու-
թիւն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգաց-
մունքներով, զբաղվելու մեծ խնդիրներով, մտնելու հառաջադեմ
ազգերի եղբայրութեան մեջ ու նրանց հետ միասին երազելու
կյանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու
համամարդկային մեծ խնդիրների մշակույթի ազնիվ գործին ու
նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը:

Եվ մեր բախտավորութիւնն այն է, որ մենք միանգամայն
բնորոշակ ենք սրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժո-
ղովուրդ չենք մենք:

Եվ սրանով է թանկ մեր հարցը, սրանով է իմաստալի մեր
կեփը, սրա մեջ է մեր իրավունքի ամբողջ վսեմութիւնը:

1915

ՀԱՆԳՐՈՒՄ ՈՒ ԼԻՔՆ ԷԱՎԱՏՈՎ

Քյուրդ-տաճկական սրածութիւնն ու ավերածութիւնն ամա-
լացնում է տաճկական Հայաստանը: Մինչև ուր հասնում է իրենց
միշտ արյունոտ ու հավիտյան նզովված ձեռքը՝ համատարած կո-
տորածով ճգնում են բնաջինջ անեն մեր հին ու ազնիվ ցեղը, մեր
շատ տառապած ու ծվատված ցեղը, և կոտորածից ազատվածնե-
րը քյուրդ-տաճկական սահմաններից հարյուր հազարներով հո-
սանք են առկա դեպի մեզ, դեպի ուսական Հայաստան:

Մեծ է փորձութիւնը ու աղետն ահաբի:

Բայց մենք երեկ մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին ան-

զամը չենք տեսնում էս տեսակ աղետ և՛ ինչ որ տեսնում ենք՝
անօրինակ չի մեզ համար:

Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի
մեծ տարածութիւնների վրա, շատ ավելի երկար ժամանակներով,
շատ ավելի ծանր կորուստներով, փախչողն ու գաղթողն էլ չի
խմացել թե ո՛ւր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնութիւն
կամ օգնութեան՝ հույս չենք ունեցել: Բայց այսուամենայնիվ անց
ենք կացրել էս ամենը:

էսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները: էսօր մենք
մարտնչում ենք մեր թշնամիների դեմ, մեր գաղթականն ապա-
վեն ունի ուսական Հայաստանում, իր եղբայրների մոտ, և սո-
վածը այլևս իր տրեխը չի ուտում կամ իր հարազատին, էսօր մեզ
հետ է ուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա
միջոցով էլ աշխարհքի մեծագույն պետութիւններն ու լուսավոր
ազգերը, և՛ համաշխարհային թո՛հուբո՛հի մեջ՝ մեր վիճակի մասին
խոսք են հանում Ռուսաստանից մինչև Ամերիկա, վերջապես էն
հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնա-
մու վայրագութիւնը — վերջինն է լինելու:

էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե-
լք որ հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է
ձախտող վայրկենին, փորձութիւնը, ինչքան էլ մեծ լինի, պետք է
տանենք արիութեամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժե-
րով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տա-
նենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լա-
վագույն ապագայի անսասան հավատով:

1915

ԽՈՍԱԷ՝ ՈՒՂՂՎԱՅ Վ ԲՈՅՈՒՍՈՎԻՆ

էս տարվա սկզբին մեր անմոռանալի բարեկամն ու ընկե-
րք՝ Վ. Բըլրսովը, երբ Թիֆլիսում մեզ մոտ հյուր էր, զրույցների
ժամանակ հայոց բանաստեղծութեան հանդեպ մեշտ կրկնում էր
իր անկեղծ հիացումը և զարմանքով ու ջգվով հարցնում, թե

ինչպե՞ս են իրենք մինչև էսօր անծանոթ մնացել մի էս տեսակ հարուստ գրականության ու արվեստի:

Ու մի օր էլ, խնջույքի մեջ, դիմելով նրան, ես էսպես բացատրեցի նրա համար զարմանալի հրեությունը, թե ինչպես է եղել, որ իրենք անծանոթ են մնացել մեր բանաստեղծությանը: Ասի՝ մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ուստիկաններ են ուղարկել, թե գնացւք գողեր բռնեցեք ու սրիկաներ: Նրանք էլ եկել են՝ ավազակներ, գողեր ու սրիկաներ են գտել: Դատախազներ են ուղարկել, թե մարդասպաններ ու ոճրագործներ երևան հանեցեք ու դատապարտեցեք: Նրանք էլ եկել են, մարդասպաններ ու ոճրագործներ են գտել: Ժանդարմներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք: Նրանք էլ եկել են՝ հեղափոխականներ են գտել. Եվ այլն, և այլն: Ու լուրը գնացել է Ռուսաստան՝ թե Կովկասում ավազակներ կան, գողեր ու սրիկաներ կան, մարդասպաններ, խաբեբաներ ու ոճրագործներ կան, հեղափոխականներ կան...

Բայց բանաստեղծներ չեն ուղարկել, թե գնացեք Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն որոնեցեք: Ահա, առաջին անգամն է ռուս բանաստեղծը գալիս մեզ մոտ հատկապես մեր բանաստեղծության համար: Առաջին անգամն են ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում — և գտնում են լիուլի, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան...

Մեր ազնիվ հյուրը պատմում էր, թե առաջին անգամ, երբ նրանց ուշադրությունը խնդրել էին հայոց բանաստեղծության վրա, նրանք ինչ զարմանքով ու անլուրջ էին վերաբերվել էդ առաջարկին, իսկ երբ ծանոթացանք, ասում էր, գրեթե հենց առաջին ծանոթությունից, հենց առաջին գիշերից միանգամից ամենքս հիացանք ու դարձանք հայասեր: Եվ առաջ էր բերում էն տեսակ ականավոր բանաստեղծների կարծիքները, ինչպես Բայլմոնտ, Վ. Իվանով, Բլոկ և այլն: Բայց ամեն թյուրիմացություն փարատելու համար՝ էստեղ պետք է ասեմ, որ միշտ մեր միջնադարյան բանաստեղծությունն է եղած հիացման գլխավոր առարկան:

Էն ժամանակ նրանք էին հիացած, այժմ հերթը մերն է: Ես քննադատելու չեմ «Поэзия Армении» գիրքը: Քննադատներ շատ կան, նրանք կքննադատեն: Ամենաշատը ես ինչ-ինչ նկատողու-

թյուններ եմ անելու, մեծ մասամբ մեր հին բանաստեղծության մութն ու վիճելի կետերի վրա: Սակայն չեմ կարող իմ բուռն ու անկեղծ հիացումը շահատենել հրապարակով մեր լավագույն բարեկամների ու ընկերների էն շնորհքի ու սիրո հանդեպ, որ նրանք հանդես են բերում էս գեղեցիկ գործի մեջ, հաճախ անհաղթելի դժվարությունները հաղթահարելով: Մարդիկ կան, որ բանաստեղծների անհաջող գործերն են որոնում ու նրանցով են զբաղվում: Իրանք անգետ ու անճաշակ մարդիկ են, և նույնիսկ վատ հոգու տեր մարդիկ: Թերությունները պետք է նկատել, բայց բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պիտի գնահատել:

Եվ էս ճշմարիտ է ո՛չ միայն ինքնուրույն գործերի համար, այլև թարգմանության: Չէ՛ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքա՛ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև փնքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՛ն սեր...

Եվ ի՞նչ խնամքով կազմած ու ճաշակով տպած գիրք է, ինչքան շքեղ իր պարզության մեջ: Դրա համար էլ ամեն մի ձեռքն առնող,— հայ լինի թե օտար,— համակվում է սիրով ու հարգանքով դեպի մեր շատ թշնամի ու քիչ բարեկամ տեսած ցեղը:

Այժմ ամենքի համար պարզ է «Поэзия Армении» գրքի նշանակությունը: Էն ժամանակ Բրյուսովին իրեն էլ էինք ասում, Եվ բնավ չափազանցություն չէին էն բոլորը, ինչ որ դարձրին բրյուսովյան շաբաթը Թիֆլիսում՝ տոնական շաբաթ:

Եվ ահա էս ամենի համար պարտականություն եմ զգում եղբայրական համբույր ուղարկելու նրանց, Ռուսաստանի լավագույն զավակներին, որ կյանքում լավագույնն են փնտրում, ընտրում ու սիրում:

Վերջապես եկավ վաղուց սպասված գիրքը — Поэзия Армении -ն, Հայաստանի բանաստեղծությունը: Եվ ռուսերենից ու ռուսախոս հայերից նրանք, որ միայն Հայաստանի թշվառու-

թյունն էին լսել, կոտորածներն ու սարսափները գիտեին, այժմ կտեսնեն և նրա բանաստեղծությունը ու կսիրեն: Չեն կարող շահի, որովհետև ինքը ամբողջ սեր է. իսկ, մեր անզուգական Սայթ-Նովայի խոսքով ասենք, «Մերը սեր կու բերե...» և

«Աշուղի շեզուն բրուզ է,
Թրհանք ունի, նալաթ չըկա...»:

1916

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՏՈՆՐ

1616 թվականի ապրիլի 23-ին Անգլիայում վախճանվեց Շեքսպիրը, մինևույն օրը հսպանիայում վախճանվեց Սերվանտեսը:

Մի օրում գերեզման իշան երկու գրական հսկա, որ ոգեպես հարուստն առնելով ու բարձրանալով համաշխարհային գրականության հորիզոնի վրա կանգնեն ու մնամ ընդմիշտ՝ այլ մեծերի շարքում՝ երկու պայծառ արեգակ կամ բանաստեղծության ամենատեսա աչքերը՝ հավիտյան բացված մարդկային կյանքի ու բնության վրա:

Էս տարի, ապրիլի 23-ին՝ լրանում է սրանց մահվան երեք-հարյուրամյակը:

Համաշխարհային աղետալի պատերազմի ընթացքում շատ տոներն են և ունցան շտոնված, բայց էս մի տոնը պետք է տոների ամբողջ կուլտուրական աշխարհքը: Պետք է տոնեն և՛ պատերազմից հեռու կանգնած ժողովուրդներն իրենց խաղաղ քաղաքներում, և՛ կովող ազգերը իրենց խրամատներում, և՛ անգլիացին, որ Շեքսպիր է ծնել, և՛ գերմանացին, որ Շեքսպիր է սիրել ու որդեգրել, և՛ ռուսը, և՛ ֆրանսիացին, և՛ իտալացին, և՛ ավստրո-հունգարացին, — ամե՛նքը, ամե՛նքը, մինչև ուր հասել է Դոնքիշոտի ազնիվ խելառության համբավը, մինչև ուր հասնում է Շեքսպիրի աստվածային բռնակալությունը, որ մարդկային հոգին ազատագրելով ամեն տեսակ բռնակալություններից՝ միայն ստեղծագործական ոգու իշխանությունն է ենթարկում:

Էս տոնը վրա է հասնում սգավոր մարդկությանը՝ որպես մի համաշխարհային միություն, թե՛ ազգերը միայն ավերիչ թնդանոթներ չեն դրկում իրար, այլև ստեղծագործող հանճարներ, թե նրանք միայն իրար չեն ծվատում ու իրարից խլում, այլև փոխադարձաբար իրար տալիս են է՛ն ամենաբարձրը, ինչ որ կարող է մարդը երազել: Թե նրանք ունին էն տեսակ կապեր, որոնք միշտ մնում են սրբազան, ամուր ու անսասան, նույնիսկ և էն ժամանակները, երբ պատահողոված ու ոտնակոխ են եղած արքայական կնիքներով կնքված ամեն դաշնագիր:

Շեքսպիր ու Սերվանտես...

Համլետ ու Դոնքիշոտ...

Նրանք էին, որ հունականի ֆատալիզմից ու միջնադարյան միստերիայից, այլև Իսրայելի Եհովայի ահավորությունից ազատագրեցին մարդկային միտքը, պալատներից ու վանքերից դուրս բերին գեղարվեստն ու գրականությունը էս լեն ու արձակ արև աշխարհքը և տիրողներին բերին ցիփ մերկացրին ժողովուրդների առջև ու ցույց տվին մարդը՝ մինը իր բարձր հումորով, մյուսը կյանքի ամենակողմանի ու խորին ըմբռնումով ու հանճարեղ լերարտադրումով, և իրական կյանքի վրա դրին համաշխարհային նոր գրականության սկիզբը: Էսպեսով՝ նոր գրականությունը դարձավ էն թարմ, առողջ օդը, որ վերածնության շրջանից սկսած շնչում է մարդկությունը, և, միշտ նոր ուժ առնելով, իրար ետևից նորանոր հորիզոններ է նվաճում՝ անդադար ընդարձակելով իր կյանքի ու աշխարհայացքի սահմանները:

Մենք էլ՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհքի հետ միասին պետք է տոնենք էս մեծ տոնը:

Հայոց գրական Ընկերություններն ու դպրոցները հանդիսավոր գրական երեկույթներ պիտի կազմեն. հայոց մամուլը պետք է պատշաճավոր հողվածներ նվիրի, և հայոց թատրոնը տոնական ներկայացումներ պիտի տա՝ Շեքսպիրի մահվան երեքհարյուրամյակին միացնելով և հայ հանճարեղ Համլետի՝ Պետրոս Աղամյանի մահվան քսանհինգամյակը:

1916

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Զարմանալի է մեր ազգի կենսունակութիւնը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակութեան անսասան հավատքով: Կենսունակութիւն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկութիւնը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՛ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ ի՞նչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Աբրահամու զավակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ:

Եվ ահա, ինչպես ամեն ժամանակ, էնպես էլ էսօր շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին: Մեծ աղետի օրերում էլ նա, ասես թե մի վերածնունդ նախատեսելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի: Ընկերութիւններ են հիմնվում իրար հտակից, գործեր են ծրագրվում ու ձեռնարկվում ամեն ասպարեզում՝ ամենօրվա ապրուստի, մթերքների շուրջը կազմվող կոոպերացիաներից մինչև գրականութեան ու գեղարվեստի բոլոր ճյուղերը, մինչև գրողների, նկարիչների ու երաժշտական ընկերութիւնները...

Երաժշտական Ընկերութիւն... բայց երաժշտութիւնը ամենանորն է արվեստների մեջ և Երաժշտական Ընկերութեան լոկ գոյութիւնն անգամ ապացույց է՝ թե ուր ենք ձգտում մենք: Երաժշտութիւնը արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտութիւններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ գոյութեանը, նրա մարմնին ու հոգուն և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպեստով էլ նա, արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը միաժամանակ, հանդիսանում է ամենաուժեղ արտահայտութիւնը ժողովուրդների ոգեկան կյանքի և՛ բարձրագույն հաճույքներ տալով հանդերձ՝ դառնում է բարձրագույն կրթութեան միջոց:

Գեորգ կաթողիկոսի ու Զուխաճյանի ջանքերից հետո մեր մեջ եկավ Կարա-Մուրզան, ապա թե Եկմալյանը հայտնվեց, Եկմալյանից հետո նոր երաժիշտները եկան խմբովին, որ իրենց հետ բերին երաժշտական ընկերութիւնը: Ահա էսօր էլ գալիս է եվրո-

պական երաժշտական աշխարհքում անուն հանած հայ նշանավոր երաժշտագետը՝ Ալ. Սպենդիարյան, օտար երկրից դեպի հայրենի մթնոլորտը, արևմտյան երաժշտութիւնից դեպի արևելյան երաժշտութիւնը, մեծ ու գեղեցիկ ծրագիրներով, որոնց գործ դառնալուն առհավատաշյա են իր խոշոր տաղանդն ու փայլուն պատրաստութիւնը և էն հանգամանքը, որ իր շարժվելու հնարավորութիւնով կապված ու կախված չի մեր դժբախտ իրականութիւնից:

Առաջին անգամ է մեր տաղանդավոր հայրենակիցը հայտնվում մեր մեջ, առաջին անգամ է դուրս գալիս մեր հասարակութեան առջև, և առաջին անգամից ողջունում ենք հրճվանքով ու ծափերով:

1916

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1847 թվականին 18 տարեկան Միքայել Նալբանդյանը գրագիր է եղել Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարութեան մեջ:

1887 թվականին էլ 18 տարեկան ես էի գրագիր Քիֆլիսի հայոց Կոնսիստորիայում:

Շատերը կհիշեն, թե ութսունական թվականներին ինչքան քիչ էր գիրքը Քիֆլիսում, և ինչ դժվարութեամբ էր ընթերցանութեան գիրք ձարվում՝ թե հայերեն, թե ռուսերեն: Դժվար էր մանավանդ ինձ նման մի օտարական պատանու համար:

Ներսիսյան դպրոցն էլ իսկի չավարտած՝ գրեթե բացարձակ անգետ էի ինչպես ամեն գիտութեան՝ էնպես էլ գեղարվեստին ու գրականութեանը, թեև մեծ սեր ու ձգտում ունեի, մանկուց էլ ոտանավորներ էի գրում: 18 տարեկան էի դարձել և միայն մի քանի գիրք էր անցել ձեռքս, էն էլ մեծ մասամբ պատահմունքով:

Եվ ահա էդպես պատահմունքով էլ էդ ժամանակները ձեռքս ընկան «Հյուսիսափայլի» համարները:

Շատ սիրեցի էդ բաց կապույտ, շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորութեամբ կարդում էի: Առանձնապես դուր

էին եկել Կոմս Էմանուելի հիշատակարանն ու մյուս գրվածքները, Ս. Նազարյանի խորհրդածութիւններն ու թարգմանութիւնները և Սադաթյանի թարգմանած Լերմոնտովի «Եւը»:

Էսպես էլ իմ շատ քիչ կարգացած ու սիրած գրքերից մինը եղավ «Հյուսիսափայլը»: Արանով էլ պետք է բացատրել էն երեւելայթը, որ իմ էն ժամանակներում գրած ու 1890—1892 թվականներին Մոսկվա տպած ուսանավորների մեջ պատահում են «Հյուսիսափայլի» ոչ միայն ոճերն ու դարձվածքները, այլև մինչև անգամ բառերն ու բառերի ձևերը, — սեղանափայտ, գիշերատեսիլ, հարցանել, մեռանել, և այլն:

Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, — եթե ոչ՝ իրենից առաջ եղածների ազդեցութիւնների համագումար — մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորութիւն հնոցի մեջ ու ձուլում, ձևակերպում իր ճաշակով:

Եվ էսօր, «Հյուսիսափայլի» մեծ աշխատակցի մահվան հիւնամյակի օրը, առանձին սիրով ու երախտագիտութեամբ եմ ետ նայում դեպի էն օրերը, երբ հափշտակված կարդում էի նրա զբոսայգիները և առհասարակ դեպի «Հյուսիսափայլը», ինչպես իմ պատանեկութիւնի հարազատներից մեկին:

Հետո, իհարկե, աչքս ավելի բաց անելով ու ավելի մեծ գրականութեանը ծանոթանալով՝ տեսա, որ ես իմ պատանեկան անգիտութեան ու ոգևորութեան մեջ՝ ոչ իմացած եմ եղել, ոչ էլ նկատած «Հյուսիսափայլի» պակասութիւնները, և միմիայն նրա լավ կողմերով եմ եղել տարված: Չեմ իմացել թե պարսավագիր կա Կոմս Էմանուելի՝ «Մեռելահարցուկի» մեջ, թե «Տեսիլքի» մեջ Գիրսաւր Սարգիս եպիսկոպոս Հասան Զալալյանն է՝ անհատական բնից էնքան սեպած, չեմ իմացել, թե իր բանաստեղծութիւնները առնված են Բերանժեից ու Հայնեից, մի խոսքով նրանից առել եմ էն, ինչ որ լավն է ու պայծառ, ճիշտ երեխայի կամ լավ ընթերցողի նման: Եվ էսօր օրհնում եմ էդ երջանիկ միամտութիւնը ու մազաշափ անգամ իմ սերն ու հարգանքը չի պակասում թե՛ դեպի ամբողջ «Հյուսիսափայլը» առհասարակ, թե՛ դեպի Ս. Նալբանդյանը առանձնապէս: Ինչ որ պակասութիւններ են՝ եղել են իրեն ժամանակինն ու պայմաններինը, և շատերը նույնիսկ շատ հեշտ բացատրելի ու հասկանալի են, իսկ միշտ կենդանի, միշտ վառվուռն ու միշտ որոնող հոգին ու ազատ շունչը իր անկապտելի էութիւնն է եղել: Եվ, վերջապէս, ինչի՞նչ եմ պետք

նրա մանր մունր անցավոր պակասութիւնները, որ նրանից հազար անգամ ավելի շատ կյանքում ունի ամեն մի մարդ, ամեն օր, ամեն քայլափոխի վրա, ինչ էսօր նրա հավերժական լավութեանն է զբաղեցնում, որ միլիոնավորներից մեկը չի ունենում:

Շատ հալածական ու շարքաշ կյանք է անցկացրել մեր Նալբանդյանը, բայց նույնիսկ էդ հալածանքների մեջ էլ բարձրացել է նա: Հալածվելով էլ միշտ դեպի վեր է գնացել, ոչ թե դեպի վար: Հալածել են, — նոր-նախիջևանից Մոսկվա է փախել և եկեղեցու դարի ու հոգևոր կառավարութեան քարտուղարի պաշտոնից հասել է Լազարյան ճեմարանի ուսուցչութեանը և «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակցի բարձրութեանը: Էլի են հալածել. — Մոսկվայից էլ արտասահման է անցել, դարձել իր ժամանակի լուսավոր աշխարհի սակավաթիվ առաջադեմ մարդկանցից մինը, ճոխացած եվրոպական գիտութիւնով ու լայն, ազատական մտքերով, լավագույն մտածողների ու գործիչների ընկերն ու մտերիմը: Հալածանքի մեջ էլ վերացել է մեր կյանքի անձուկ ու վատ մթնոլորտից դեպի էն հավերժական բարձրութեանը, որտեղից դենը էլ տեղ չկա լավ հոգիների համար, և ընդմիշտ հավերժացել է Հայր Գրականութեան համաստեղութեան մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղերից մինը:

1916

ԱՂԱՄՅԱՆԻ ՕՐԵՐԻՑ:

(Հիշողություն)

Լրացավ Պետրոս Աղամյանի մահվան քսանհինգամյակը¹: էսօր՝ նրա կյանքը վերապատմելու կամ նրա տաղանդը վեր հանելու ժամանակ՝ ես էլ ուզում եմ էն պատմել, թե երբ ու ինչպէս եմ նրան տեսել և ինչ առնչութիւն եմ ունեցել նրա հետ, թեկուզ և շատ կարճ ու կողմնակի:

Ութնունական թվականներն էին:

¹ Պետրոս Աղամյանը վախճանվել է 1891 թ. հունիսի 3-ին, Պալատ:

Մեր կյանքում ուղղման փողի նման թնդում էին Գամառ-Քաթիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Րաֆֆու վեպերը անընդհատ ու խորհրդավոր, մամուլի մեջ աչ ու ձախ շառաշալից մտրակում էր Գրիգոր Արծրունին, իսկ Քիֆլիսի թատրոնում զինվորական երաժշտությունը հնչում էր «Զեյթունցիների մարշը», և որոտում էր Ադամյանը: Հասարակությունը խոնվում էր թատրոնի դռների առաջ, ու փողոցային երեխաները Քիֆլիսի փողոցներում ճշում էին.

- «Օֆելիա՛, մտի՛ր կուսանոց...
- Դեզեմոնա՛, ո՛ւր է թաշկինակը»...

Հայոց լեզուն տիրաբար հաղթանակում էր գրեթե ամբողջովին վրացախոս Քիֆլիսում և մի նոր շունչ էր փչում:

Քիֆլիսի հայությունը վրա առանձնապես մեծ տպավորություն էր թողել էն շտեմնված ու չլսված հանգամանքը, որ գլխավորապես ուսու գեներալներն ու բարձր շրջանները իրենց ընտանիքներով լցվում էին հայոց թատրոնի օթյակները...

Ես աշակերտ էի:

Ոչ մի կերպ չէի հաշտվում էն ամենի հետ, ինչ որ խոսում էին էս մարդկանց դեմ. մանավանդ խոսում էին Գամառ-Քաթիպայի, Րաֆֆու և Ադամյանի դեմ, Արծրունու մասին միայն թե ասում էին բռնակալ է:

Պատանեկան ասեմ թե երեխայական գայրույթով ծառս էի լինում, վիճում իմ միանգամայն չզիտցած բաների մասին, պաշտպանում էի նրանց և շարունակ երազում էի՝ տեսնել:

Գամառ-Քաթիպային երբեք էլ չտեսա: Դեպքը բերեց, հենց էդ օրերը, դեռ աշակերտ, եղա Րաֆֆու մոտ, երբ առաջին փուլած «Մամվելն» էր գրում ու սրբագրում: Մի քիչ հետո եղա և Արծրունու խմբագրատանը, մի երկու անեկդոտանման բան էլ տվի թերթի համար: Բայց ամենից դժարն ու ամենից ծիծաղաշարժը Ադամյանի հետ ծանոթանալս եղավ: Հեշտ բան չէր էն ժամանակ մի աշակերտի համար՝ Ադամյանին տեսնել բեմի վրա: Ներսիսյան դպրոցի աշակերտներին արգելված էր թատրոն գնալը:

Թատրոնի վերաբերությամբ անողոքելի խիստ էր մեր վերակացու պարոն Գրիգորը: Նա թատրոնը համարում էր անբարոյականություն վայր և ամեն կերպ աշխատում էր «էս արդար երեխանցը» հեռու պահի էն նզովյալ շինությունից: Ինքն էլ կյանքում թատրոն չէր գնացել ու չէր գնում: Տարին մի անգամ, բարե-

կենդանին էլ, երբ դպրոցից հրամայում էին՝ «Վարդանանց պատերազմի» ներկայացմանը որդեգիրների հետ թատրոն գնա, ստիպված գնում էր, բայց ներկայացման ժամանակ նստում էր երեսը ետ շրջած ու մեջքն արած դեպի բեմը:

Ահա էս ժամանակ, Ադամյանի թունդ ժամանակը, Լոռուց Քիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը, Տիգրան Տեր-Գավթյան, որին պարտական են իմ հասակակից գրեթե բոլոր գրագետ լոռեցիները, և իր նախկին աշակերտներից մի քանիսին հավաքեց, թե եկեք ձեզ տանեմ «Համլետ»-ի ներկայացմանը, Ադամյանին տեսեք Համլետի դերում: Տարավ: Տեսանք: էդ գիշերը ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում: էդ գիշեր ես էնքան սիրեցի Համլետը և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոշնչացրի, որովհետև... Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ ես ինձ դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ մի բան:

էն գիշերից հետո ես գաղտնի ճանապարհով դարձյալ ընկա Ադամյանի ներկայացումներին, և մինչև անգամ մի գիշեր էլ խաղացի նրա հետ: էդ խաղը, որ բոլորովին անակնկալ, մի սկանդալ դուրս եկավ ու խեղճ Ադամյանին գրեթե սպանեց բեմի վրա, հենց էդ խաղն էլ պատճառ եղավ, որ ես ծանոթացա նրա հետ: էդ էլ էսպես եղավ: Պոլսից Քիֆլիս էր եկել իր ժամանակին հայտնի դերասան Կյուրեղյանը և, եթե չեմ սխալվում, տիկ. Հրաչյայի հետ «Վարդան Մամիկոնյան» էին խաղալու: Ահա այդ խաղի մեջ Ադամյանն էլ վերցրել էր Սղիշի դերը: Վարդան Մամիկոնյան... Սղիշ... Ադամյան... ես էլ ներսիսյան դպրոցի աշակերտ — վճռեցի՝ տեսնել, ինչ ուզում է լինի, թեկուզ դպրոցից դուրս անեն: Մի բարի հոգի ինձ սովորեցրեց, թե էնպես մի կարճ ու ապահով ճանապարհ կա, որ համ Ադամյանին կտեսնես, համ Վարդան Մամիկոնյանին, դեռ նրանց հետ էլ կխաղաս ու քեզ էլ դպրոցից դուրս չեն անիլ:

— Ինչպե՛ս:

— Թե՛ ներկայացումից առաջ կգնաս բեմի ետևը, կհայտնես, որ ուզում ես զինվոր խաղաս — կընդունեն, շորերդ կփոխեն, բե-

1 Չ. Կարենյանի «Վարդանանց պատերազմը կամ Վարդան Մամիկոնյան» պոլերգությունը ներկայացվել է 1887 թ. փետրվարի 12-ին:

զեր կշիռեն, ու կլինես բեմի վրա. էլ ոչ կհասնարեն, ոչ որտես
կանեն:

Փսիանակ քիչ առաջ գնալու, ես դեռ մի քանի ժամ առաջ
գնացի, մինչև իրիկնապահ սպասեցի: Իրար ետևից եկան, հար-
ցուսիրձ արին, վերջապես ինձ ընդունեցին հայոց զինվոր: Շո-
րերս: փոխեցին, տրիկո հագցրին, գույնդույն: լանջապանակ
հագցրին, մի ոսկեզօծ կարդոնե. ասգափարտ կոխեցին գլուխս, մի
փետե սուր կախ արին կողքիցս, սուր ծերը արծաթի գույն թղթով
պատած մի նիզակ էլ ձեռս տվին, և արդեն կազմ ու պատրաստ էի
մեծ պատերազմի համար:

Էսպես կերպարանափոխված ու գինավառ՝ որ հայելու մեջ
ինքս էլ ինձ տեսա՝ լցվեցի գործի լրջության՝ գիտակցությամբ:
Ռուս զինվորներ էին բերել, նրանց հետ տարան մի երկու ան-
գամ բեմի վրա պատեցինք, փորձ արինք, թե որ կողմից պետք է
մտնեինք, ինչ անեինք ու ինչ ասեինք — և ընդամենը ասելիքներս
մի քանի բացականություններ էին — կեցցե՛ Վարդան, կեցցե՛
Քորավար, և սրա նման բաներ, նրանից հետո մեռել պիտի խա-
ղայինք, իբրև պատերազմի դաշտում — Ավարայրի դաշտում
սպանված հայ զինվորներ: Ահա հենց էս սպանված զինվորների
դերն էր, որ ես չկարողացա կատարեմ ու դուրս եկավ սկանդալ,
վերջին գործողությունը, վարագույրը բանալուց առաջ մեզ տա-
րան պառկեցրին զանազան տեղեր՝ թե դաշտում, թե լեռնալան-
ջերին, իբրև սպանված ու թափված զինվորներ: Ես ընկա մի լեռ-
նալանջ: Բանն էն է, որ էդ լեռնալանջ ասածդ կտավի վրա նկա-
րած լեռներ ու ժայռեր են, ետևից տեղ-տեղ արանք-արանք տախ-
տակներով շինած: էդ տախտակների վրա պառկեցինք — իբրև
լեռնալանջերին: Ես էլ, ինչքան կարող էի, պատճառական մեծ ող-
բերությունը վայել մի դիրք ընդունեցի, սաղավարտս ու նիզակս
էլ կողքիս ընկած, տախտակի լեռնովը մին պառկեցի: Բայց էն-
պես պառկեցի, որ կարողանամ ներքև — դաշտին նայեմ, ուր մի
ուկացրած արկղի վրա, իբրև ժայռի վրա գալարվելով ու — «Ա՛խ,
Հայաստան, Հայաստան» մրմնջալով, մեռնում էր Վարդան Մա-
միկոնյանը — Կյուրեղյանը: Նրա մոտ պիտի գային և Վասակի
կինը — աիկին Հրաչյան, և վերջապես Եղիշեն — Աղամյանը ծեր
Սառուկի հետ:

Վարագույրը բացվեց: Առաջին անգամ էի բեմից հասարա-
կություն տեսնում. անհամար գլուխներ ու աչքեր, բոլորը հասած

զեպի մեզ: Բեմի վրա կես մութ է, լուսնյակ գիշեր և խորհրդավոր
լուռություն, միայն Վարդանն է, որ ոլոր-մոլոր է գալիս ու ցավալի
մրմնջում. — «Ա՛խ, Հայաստան, Հայաստան...»

Ահա եկավ Սաթենիկը, մի բաժակ գինի ձեռքին, որ Վարդանի
համար է բերում Հայաստանից:

Ոտներս ինձ քաշեցի, սրան ճանապարհ տվի: Գնաց, ներքև
սկսվեցին նրանց փոխադարձ ողջագուրանքները, գուրգուրանք-
ներն ու սրբազան ուխտերը...

Մին էլ հանկարծ թատրոնը թնդաց ծափերից, զլխիս վերև
հայտնվեցին Եղիշեն — Աղամյանը ծեր Սառուկին հենված:

— Մո՛, ճանապարհ տուր...

Ոտներս դարձյալ ինձ քաշեցի, սա էլ անցավ:

— Վարդա՛ն, իմ Վարդա՛ն, — մրմնջալով Ավարայրի դաշտն
իջավ: Հենց դաշտն իջավ թե չէ, որ պիտի խաղա — սը՛սս... հա-
սարակությունը ամեն կողմից սը՛ս արավ ու լռեց, պատրաստ-
վեց: էդ ժամանակ ես էլ ուզեցի պատրաստվեմ, որ լավ լսեմ ու
տեսնեմ: Վիրա՛ որ ծոռեցի, թեքեցի դեպի ներքև, անկանոն դիրքի
պատճառով՝ թուքս կատիկս թռավ թե ին՛՛ հանկարծ մի հազ բրո-
նեց ինձ: Ես ցնցվում եմ ամբողջ մարմնով, ինձ հետ շարժվում
ու ճռճում: է ամբողջ դեկորացիան, բոլոր տախտակներն ու
կտավները — այսինքն բոլոր սարերն ու ժայռերը, և հակառակի
նման էն ամենահանդիսավոր րոպեին, թատրոնի խորին լուռության
մեջ: Թատրոնում ընդհանուր ծիծաղ բարձրացավ, գալերեան
սկսեց ազմեկել ու աղաղակել — բրավո... բի՛զ, կեցցեն հայոց քա-
ջիքը... և այլն և այլն:

Ինզձ Աղամյանը մնացել է քաբացած, մեջտեղը կանգնած:
Վերջապես հագս գաղարեց, ժողովուրդը հանգստացավ, նորից
սը՛սս, նորից լուռություն: Աղամյանը մի փոքր էլ սպասեց ու խա-
ղաց: Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ թե չէ՝ ժա-
ղովուրդն սկսեց դղրդալի ծափահարություններով Աղամյանին
կանչել, իսկ Աղամյանը տեղից թռավ դեպի մեռելները կատաղած
գոռալով:

— Ա՛ն ո՛վ էր, ծո՛... բայց ժամանակ չկա, էնտեղ կանչում
են, վարագույրը բարձրացնում են: Գնաց: Ես խառնակ դրություն-
ներից օգտվելով փախա, զինվորական համազգեստս հանեցի ու
փախա դեպի պարտերը: Ճանապարհին, դեպի բեմի ետևը եկող-
ները հարցնում էին, թե էն ո՛վ էր, որ էնպես հաղում էր ու աչ-

քերն էլ բաց ներքև նայում: Ըս մտածեցի, որ էս աչքերի բացն էլ քանի շնն իմացել — շուտով թողնեմ բեմական ասպարեզը, գնամ տուն:

Մյուս օրն էր թե մի երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանն էլ բարկացած չի, ծիծաղելով է պատմում էդ դեպքը և հարցնում էր, ուզում էր ինձ տեսնի: Ըս գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարություն բնորոնեց, մանավանդ երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից մինն էլ նվիրեց ի հիշատակ Վարդանանց պատերազմի ներկայացմանը և իմ կարճատև — բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը:

Ինձ թվաց մի շատ քաղաքավարի ու քնքույշ, բայց հիվանդ մարդ: և, չգիտեմ ինչու, մենակ մարդ: Գուցե էն էր պատճառը, որ հյուրանոցում էր ապրում, չգիտեմ, բայց մենակ մարդ...

Այնուհետև երբ ավելի ու ավելի ծանոթացա նրա կյանքի հետ, նքս: տառապանքների հետ, տեսա, թե մեր կյանքում ինչքան է հալածվել և մամուլից, հատկապես «Մշակից», որ նրան ոչ թե տանելի, այլ անտանելի տաղանդ էլ չէր ընդունում և դրա համար կռվի էր մտել ուսուց «Кавказ» թերթի հետ: Հալածվել է և մասնավոր մարդկանցից, և երբեմն էլ հալածանքների պատճառը եղել են վանազան կանանց պատմություններ: Առանձնապես նեղն է ընկել մի ուսուց կնոջ պատճառով և մի շատ անախորժ դրությունից ազատվել է միայն իր բարեկամ գնդապետ Մելիք-Հայկազյանի միջամտությամբ: Եվ հետագայում, ասում եմ, երբ ավելի շատ ծանոթացա էս մենակ ու միշտ օտար մարդու կյանքի հետ, որին ավելի շատ գնահատել ու սիրել են նրանք, որոնց միանգամայն խորթ է եղել ինքը, որոնց նույնիսկ լեզուն չէր հասկանում ինքը, երբ վերահասու եղա, թե ինչ աշխատանքով ու ինչ բարեխղճությամբ է նա իր դերերն ուսումնասիրելիս եղել — և ամսական քանի-քանի դեր խաղալու պայման է կապելիս եղել նրա հետ հայոց թատրոնը պահող մարմինը, և թե նրան ծափահարողները ծափահարել են լոկ արտաքին փայլից շլացած բոպեարար և լքել են մշտապես, այնուհետև նա դարձավ ինձ համար մի մշտական վիշտ, մի գեղեցիկ վիշտ, մի իսկական Համլետ, որ բարձր ձիրքերով ծնվել էր մի շատ խեղդուկ մթնուրտում...

Եվ խեղդվեց...

Իննսնական թվականների սկզբներին էր: Աշխարհահռչակ իտալացի դերասան Ռոսսին եկավ Քիֆլիս: Էն ժամանակ, ինչքան հիշում եմ, Քիֆլիսում բացի հայոց դերասանական խումբը՝ ուրիշ խումբ չկար: Հայոց խումբն էլ մեծ մասամբ կազմված էր սիրողներից հանգուցյալ Գևորգ Զմշկյանի գլխավորությամբ: Ըս էլ էի սիրողների մեջ: Ռուս անտրեպրենյորը մեզ հրավիրեց Ռոսսուն դիմավորելու: Եվ ահա մենք, իբրև դերասանական խումբ գնացինք կայարան, Ռոսսուն ընդունեցինք ծաղկեփնջերով ու երաժշտությունով: Ռոսսին մեզ հրավիրեց իր բոլոր ներկայացումներին: «Համլետի» ներկայացման գիշերն էր: Ամբողջ հասարակությունը անհամբեր սպասում էր վարագույրի բացվելուն, որ Ռոսսու Համլետը համեմատի Ադամյանի Համլետի հետ: Գուրս եկավ Ռոսսին, հսկա դերասանը — Դանիայի դժբախտ ու փրկսուփա արքայազունը: Հասարակությունը հափշտակված, շունչն իրեն պահած հետևում էր մեծ ողբերգուին: Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ: Թատրոնը դղրդաց միահամուռ ու անընդհատ ծափահարությունից: Ռոսսին ստիպված մի քանի անգամ բեմ դուրս եկավ՝ մինչև որ հասարակությունը հանգստացավ: Եվ հասարակությունը հանգստացավ թե չէ, նույնիսկ Ռոսսու թարմ խաղի ահագին տպավորության տակ գրեթե միաձայն արձակեց իր վճիռը:

— Սքանչելի է... Բայց Ադամյանին չի հասնիլ:

Ըս իմ կյանքում, թերևս երբեք ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշեր:

Բայց, այսուամենայնիվ, չեմ կարող ասել՝ հպարտությունն ավելի մեծ եղալ, թե՞ վիշտս...

Նա մեղանում չընահատվեց, և անպաշտպան, անժամանակ գերեզման իջավ:

Երիտասարդ ընկերներ

Ռուսահայ բանաստեղծությունը և երեք շրջան է ունեցել: 1857 թ. ուսանող Ռ. Պատկանչանը — Գամառ Բաթրիզյան հրատարակել է իր «Ազգային կրդարան» անունով բանաստեղծությունների տետրակն ու նրանով սկիզբն է դրել առաջին շրջանի բանաստեղծության:

Նրանից երեսուն տարի հետո, 1887 թվականին ուսանող Հ. Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին գիրքը, ու սկիզբն առավ երկրորդ շրջանի բանաստեղծությունը:

Հովհաննիսյանից երեսուն տարի հետո էլ, 1908 թվականին զարձալ ուսանող Վ. Տերյանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջները» ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը, որի մասին հանդիսավոր ու հավաքական կերպով խոսում ենք էսօր Հայ Գրողների Ընկերության մեջ:

Ինչպես տեսնում եք՝ ես քննում եմ երկրորդ շրջանի մեջ եկանգնած եմ հին շրջանի ու նորագույնի մեջտեղը: Մտերիմ քննկերներ եմ ունեցել առաջին շրջանի գրողներից, նորագույն շրջանի մեջ էլ ունեմ մտերի և սիրելի մարդիկ: Սա ցույց է տալիս, թե ինչքան նոր է մեր բանաստեղծությունը, որ մի մարդ կարող է ընկերներ ունենալ առաջին գրողներից մինչև նորագույնը:

Անարատ ընկերական սիրտ զգացմունքով ու խորին հուզմունքով խոնարհվելով առաջին շրջանի իմ հավերժացած ընկերների հիշատակի առջև՝ ողջունում եմ ձեզ, իմ նոր ընկերներ, որ նոր ոգևորությամբ ու նոր երգերով հայտնվում եք հայոց գրական աշխարհում:

Հրճվանքով եմ լսում, թե իզուր շեն շրջանները իրար հետեկ, և դուք՝ թե արվեստի կողմից, թե հոգեկան ապրումների՝ հանդիսանում եք ձեր նախորդ շրջանների զարգացումը: Բայց նույնքան հրճվանքով եմ նկատում և մեր հասարակական կյանքի զարգացումը, որի պերճ ապացույցը հենց էսօրվան մեր հանդիսական հասարակությունն է:

Մենք էլ ենք եղել սկսնակներ, բայց մեր գրական կյանքի

արշալույսին էս տեսակ հասարակություն, էս տեսակ գնահիճ, էս տեսակ քննադատական աշարություն շենք տեսել:

Սա էլ ձեզ նման նոր է, մի նոր ժողովուրդ, որ առաջ է եկել էս երեսուն տարվա ընթացքում, մեր աչքի առջև, նոր հաշակով, նոր քրովանգակությամբ, նոր հրահանգներով ու նոր վերաբերմունքով: Մենք էս տեսակ ժողովուրդ շենք տեսելու իսկ մեզնից առաջ՝ մեր նախորդները ավելի ևս անմխիթար մթնոլորտում են առաջները բաց արել: Նրանք էլ ասում էին, թե՛ իրենք պետք է գրեն և կարող լավորեն հին, որ իրենց գրվածքները կարգային միքենք պետք է ընթերցողներ պատրաստեն իրենց համար:

Եվ ասում ողջունելով ձեզ, միաժամանակ շնորհավորում եմ, ցույց տալով էս նոր ժողովուրդը, որ էսքան աննախընթաց ոգեվորությամբ խառնվում է մեր գրական երեկոներին և նույնիսկ իր անավոր աղետի օրերում խոսք է անում ու մտածում իր գրականությունը պաշտպանելու մասին:

Նոր են և քննադատները, որ խոսում են ձեզ հետ:

Նորություն է մեր գրականության մեջ նրանց հարգալից վերաբերմունքն ու կիրառած քննադատական մեթոդը: Հարկավ նրանք կարող են սխալվել իրենց գնահատությունների մեջ, բայց նոր ու շիտակ է նրանց ճանապարհը: Դուք էլ ուշադիր ու հարգանքով լսեցեք նրանց, օգտվեցեք նրանց դիտարկություններից և գանգով լսեցեք նրանց, որովհետև ամենից շատ և ամենից լավ բամբակ շփոթվեք բնավ, որովհետև ամենից շատ և ամենից լավ բանաստեղծին փնջն է իրեն հանկանում և իր ներքին բնազդն ու ինտուիցիան է իր ամենաուժեղ: առաջնորդը: Համոզված եղեք, որ մեքենայաբար ոչ բանաստեղծ կարող է ստեղծել և ոչ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջ ք վերջո՝ մի քննադատ կա՞ն որ վերջնականապես որոշում է ապրող և մեռնող գործերը, դա ժամանակն է:

Մի՛ շփոթվեք նաև էս ժամանակ, երբ ազդեցությունների խոսք են անում: Համաշխարհային գրականություն մեջ ոչ մի բանաստեղծ չկա, որ շատ կամ քիչ ազդված չլինի իր նախորդներից: Անազդեցությունը էս սանգուղջն է, որով սկանալիք բարձրանում է գրչի ինքնուրույնությունը: Այլ էլ հուզվեցե՞ք, երբ լավ բանաստեղծություններ շատ շեն գտնում և ձեր գրվածքներում: Լավ բանաստեղծություններ քիչ կան նույնիսկ նշանավոր բանաստեղծների մեջ: Զիչեցե՞ք ձայնի խոսքը, որ ասում է թե՛ մեծ բանաստեղծը նա էսօրի յոթ գրվածքից մի նը գտնում է ու թե՛ մեծ գրական

նաստեղծը նա է, որի յոթը երգից մինը լավն է, դուք շատ պետք է ուրախ լինեք, եթե ձեր տասնևյոթ կամ քսանևյոթ երգից մինը լավ լինի: Դրանով էլ դարձյալ կենդանի կմնաք ձեր մայրենի գրականության մեջ:

Խոսքս վերջացնելով՝ կրկին ողջունում եմ ձեզ և ձեզ շեմ ասում՝ բարով եք եկել, ինչպես սովորաբար ասում են ուրիշներին էս հարկի տակ ողջունելիս: Նրանք դրսից են գալիս, իսկ դուք էս տանիցն եք, էս գերդաստանից և էս տեղից եք մեկնում դեպի կյանք: Ձեզ ասում եմ՝ բարով գնաք դեպի մեր ժողովուրդն ու աշխարհը, վշտերի, ցավերի, շարիքների ու կարիքների աշխարհը ձեր թարմ ու անկեղծ երգերով, կյանքի լավագույն ձայներով մարդկանց հրապուրելու դեպի ճշմարիտն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը:

1917

ՀՍԿԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ:

Ռուս ժողովուրդը տակավին չի ամբողջացրել իր ազգային էպոսը, բայց տեսեք, թե նրա մասերում — БЫЛИНА-ներում ինչ վսեմ պարզությամբ ու ինչքան հոյակապ տալիս է իրեն պատկերը:

Ահա նրանցից մեկից մի փոքրիկ կտոր, որ շատ է պատշաճ մեջտեղ բերելու էս նշանավոր օրը:

Былина-ի վերնագիրն է «Исцеление Ильи Муромца»: Պատմում է, թե ինչպես բժշկվեց երկար ժամանակ անդամալուծ, հաշմանդամ ընկած Մուրոմցի Իլիան: Իսկ Մուրոմցի Իլիան արդեն գիտեք, որ ինքը ռուս ժողովուրդն է:

Ասում է՝ էն ժամանակ, երբ իշխան Վլադիմիրը թագ էր կապում Կիև մայրաքաղաքում՝ Մուրոմի Կարաշարովա գյուղում մի գյուղացի էր ապրում, Իվան Տիմոֆեևիչ: Գյուղացի Իվան Տիմո-

գեևիչը մի տղա ուներ Իլիա անունով, որին ամենից շատ էր սիրում:

Բայց նստած էր Իլիան իր տեղը անշարժ,
Ընկած էր ուղիղ երեսուն տարի,
Ուն ու ձեռ չունեի երեսուն տարի,
Ու փեշի վրա էնքան էր պառկել,
Որ փոս էր ընկել տեղը իր պառկած...

Եվ էսպես անդամալուծ, փեշի վրա պառկած երեսուն տարի (այսինքն շատ երկար ժամանակ) նա շարունակ լսում է, թե ինչ վատություններ են կատարվում իրենց աշխարհքում, ինչ ավազակություններ են լինում իրենց մայրաքաղաքում (Соловей разбойник): Պառկած տեղը սիրտն էր վում է, ու միշտ ասածուն էն է աղթում, որ իրեն մի ձեռն ու ոտը տա...

Եվ ահա մի անգամ էլ, երբ հերն ու մերը տանը չեն, գնացել են դաշտը իրենց աշխատանքին, օտար մարդիկ են գալիս, խեղճեր են գալիս փակ դռան առջևը կանգնում ու Իլիային ձեն են տալիս, կանչում են, խնդրում են, որ դուռը բաց անի, իրենց ներս թողնի, ջուր տա խմեն, սիրտները հովանա:

Իլիան ներսից պատասխանում է, ասում է՝ «ես էլ եմ շատ ուզում, որ ձեզ ներս թողնեմ, ջուր էլ տամ՝ կուշտ խմեք, բայց ի՞նչ անեմ, էսքան տարի է էսպես անդամալուծ ընկած եմ, ոչ ոտն ունեմ, ոչ ձեռը»...

— Տեղիցդ ժած արի — վեր կկենաս, — կանչում են խորհրդարավոր հյուրերը:

Իլիան լուռ է:

Աջ ոտն է փորձում — շարժվում է. ձախ ոտն է փորձում — շարժվում է: Իսկույն ոտի է կանգնում, դարպասները լեն բաց է անում ու ներս է հրավիրում օտարականներին: Ջրի փոխարեն վեղորեներով գարեջուր է տալիս: Խմում են կշտանում, մնացածն էլ ասում են, դու խմիր: Խմում է, արյունը խաղս է առնում երակներում, աշխուժի է գալիս, կենդանանում, զորանում, դառնում մի հսկա, էնքան ուժեղ, որ հարկ է լինում ուժը մի քիչ պակասացնել, չափավորել:

Ապա թե օրհնում ու խրատ են տալիս անծանոթ հյուրերը:

— Էդ ուժը, ասում են, բավական է քեզ, որ դու մեծ հսկա լինես, չպարտվես պատերազմի դաշտում, քրիստոնեության

պաշտպան հանգիսանաւ ու կովկաս մեծ հսկաների հետ, Բայց տես, ասում են, ում հետ ուզում ես կովիւր, միայն թե շկովես Միկուլա Սելյանինովիչի (շինականի, գյուղացու) հետ, իմացիր, որ նրան մայր հողը շատ է սիրում...

Գնում է Իլիան, ու մինչդեռ իր ծնողները ծանր աշխատանքից հոգնած քնած էին, մի երեք ժամում կատարում, վերջացնում է նրանց գործը, որ նրանք մի քանի օրում չէին կարող կատարել:

Մնողները զարթնում են, զարմանում են, թե էս ինչ հրաշք է կատարվել հանկարծ, որ իրենց անդամալուծ որդին միանգամից ոտի է կանգնել ու կանգնել իբրև հսկա: Իլիան պատմում է, թե ինչ է կատարվել, ու հայտնում է, թե արդեն ճամփա է ընկել նում... իր սրտի հին ցանկութունը կատարելու, իր ճնշված հայրենիքին ծառայելու, նրան ավագակներեց մաքրելու և քրիստոնյա աշխարհքը պաշտպանելու: Եվ դրա համար հար օրհնութունն է խնդրում:

— Գնա, իմ աչքի սույս, իմ հսկա զավակ, — օրհնում է ծերունի հերբը: — Բայց օրհնում եմ քեզ բարի գործերի համար: չար գործի համար օրհնութուն չկա: Գնա, և քո ճամփին ոչ թուրքի ընդդեմ մտածիր: շար բան, ոչ քրիստոնեին զարկիր բաց զաշտում...

Ու վեր կացավ հսկան, աղոթեց, իր նծուգը հեծավ: Հեծնելը տեսան, բայց էլ չտեսան, ուր գնաց...

Ինչ հոյակապ գեղեցկություն և ինչքան հարազատ ու ճշմարիտ, որ աշխարհքում գրեթե ծակ բերան չէր մնացել, որ շատեր, թե Ռուսաստանը մի ընկած անդամալուծ է, նրանից ոչինչ չի դուրս գալ: Վերջին օրերս բուլգարական միևնույնը մինչև անգամ դիակ էր անվանում, և... Եվ հանկարծ... հսկան վեր կացավ տեղից:

Դուրս եկավ, որ ռուսական փեղք, որին նա կրած էր էնքան տարի, նրա համար Պրոմեթեոսի ժայռն է եղել, և էնքան տարի ինքն իր մեջ աճելով ու մխալով ուժ է հավաքել՝ միանգամից վեր կենալու և մի հսկայական զարկով փրկելու իր երկիրը: Մեծ ու ահավոր մի վայրկյան...

Բայց պատահում է, որ երկար տարիներով պառկած հսկաները վեր կենալիս միանգամից չեն կարողանում ամուր քոտի վրա կանգնել, մի քանի անգամ շոքում են, մինչև որ վերջնականապես

պետեղարողանում են հարտատուն կանգնել: Եվ ամեն մի շոքելով հազար հազարավոր մարդիկ են ընկնում տակն ու զուր կոտորվում:

Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին միայն մի հոգս պիտի ունենա. — ամուր բռնի, իր ուժերի ներածին չափ անցուկ դառնա ռուսական նոր քոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի:

էս է պահանջում ինչպես ընդհանուրի, էնպես էլ ամեն մի անհատի շահն ու փրկությունը:

1917

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԽՈՍԻ

Մենք, ռուսահայերս, սովորաբար Հայաստան անվանել ենք Տաճկահայաստանին: Նույնիսկ Այրարատյան կամ Շիրակի դաշտից Տաճկահայաստան գնացողն էլ ասում է՝ Հայաստան եմ գնում: էլ չեմ քննում, թե ինչ է սրա պատճառը. բայց էսպես է:

Եվ ահա էս պատերազմի ընթացքում, դեպքը բերեց, ես երկու անգամ գնացի Հայաստան: Մի անգամ Ալաշկերտի հովիտը, մյուս անգամ Վան: Ապա թե ծանոթացա Հայաստանի շատ մտավորականների հետ, մոտիկից տեսա Հայաստանի ժողովուրդը, ու մի ահագին ցավ ծանրացավ իմ սրտին, թե ես ինչքան քիչ տեղեկություն եմ ունեցել էսօրվա կենդանի Հայաստանից. ես, որ համարվում եմ նրա ճանաչողներից միսը, ես, որ միշտ կարծիք եմ հայտնել ու շատ թե քիչ գործել նրա համար...

Նրանից հետո Վասպուրականի, Արածանու հովտի և այլ տեղերի գաղթականության հեղեղն եկավ ծովացավ Այրարատյան դաշտում:

Ես էլ նրան գիմավորողներից միսը եղա: Պատվեցի նրանց մեջ էջմիածնում, փոսեցի թիֆլիսի ժողովներում, ու վերջը դարձյալ մի տխուր գիտակցություն համակեց՝ ամբողջ էությունս ու մի փոքրիկ վիշտ, թե մենք ինչքան ենք տկար մեզ վրա եկած աղետի հանդեպ: տկար ֆիզիկապես, նյութականապես ու բարոյապես...

Հապա նրա — Հայաստանի հա՞րցը, հայկական հա՞րցը...

Ինչե՛ր չեն խոսվել ու կատարվել էդ հարցի շուրջը...

Եվ Հայաստանը գրեթե միշտ լուսթյան է եղել դատապարտված ակամա: Ոչ նրա ցավն ենք կարողացել ճշմարիտ իմանալ, ոչ էլ ցանկությունը:

Բավական էր:

Հայաստանը պետք է խոսի վերջապես:

Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլև էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար:

1917

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿՈՒՆ

Թանկագին Սերգեյ Միտրոֆանովիչ:

Մեծ պատերազմի ընթացքում բոլոր ժողովուրդներն աշխարհի առաջ, համարյա ամբողջությամբ, արտահայտեցին իրենց էությունը, և ամենից ավելի թերևս, ուստի ժողովուրդը, որովհետև նա, պատերազմից բացի, կատարել է և հեղափոխություն: Պարզվեց, որ այդ ժողովուրդը մի կենտավրոս է և նրան իր ամբողջությամբ մենք չէինք տեսել և չգիտեինք:

Մինչև այժմ մենք տեսել էինք միայն նրա գլուխը, ի դեմս նրա գրողների և մտավորականության, իսկ ժողովուրդն ինքը — մարմինը — մնում էր մթության մեջ և մեզ անծանոթ:

Եվ ես այժմ եմ միայն ըմբռնում ուստի գրականության համար այնքան յուրահատուկ, իսկ ուրիշ ժողովուրդների գրականություններին օտար, ձգտումը՝ «ճանաչել իր ժողովուրդին»:

Հիրավի մեզ անծանոթ էր այդ մարմինը, որը սակայն ինքն էր աճեցրել այդ գլուխը, որ ընդունակ է այնքան բարձրանալու և

ազատ հայացքով ընդգրկելու լայն ու հեռու տարածություններ: Իսկ լայնն ու հեռուն՝ հենց դա էլ ժողովրդի հայրենիքն է:

Եվ ես կարծում եմ, որ բոլշևիզմի մեծ խիզախությունները խորթ չեն ուսումնարար հոգուն: Իսկ ուսումնարարը առհասարակ մեծ միտիա ունի կատարելու ժողովուրդների կյանքում:

Այսպես նայելով Ռուսաստանին և այդպես հասկանալով նրան, ես իմ խոսքը սահմանափակում եմ Կովկասով, և ուզում եմ մի հարցում անել, որին Դուք, թերևս, կպատասխանեք որպես ուսումնարար և ուսումնարարի հոգու մեկնիչ:

Ձեր աչքերի առաջ այստեղ Կովկասում տեղի է ունենում շափազանց տարօրինակ երևույթ:

Այն ժամանակ, երբ Կովկասի բոլոր ժողովուրդները մեկը մյուսի ետևից ողջունում են նոր, ազատ Ռուսաստանը և իրենց ազգային համագումարներում որոշում են մնալ ազատ, մեծ ուսաստանյան հանրապետության կազմում, հենց այդ ժամանակ ուսական բանակը, որ հաղթանակորեն մտել է թշնամու երկրի խորքը և դարձել դրություն տերը, սկսում է նահանջել ո՛չ միայն ուղղահայաց, այլև լքել նույնիսկ Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ուսաներն այդքան հեշտ կարող են թողնել իրենց գրաված վայրերը և Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ուսաները միայն ցարերի կամքով էին Կովկաս գալիս, և այժմ, երբ այդ կամքը չկա, վերադառնում են տուն:

Մի՞թե Ռուսաստանը միայն մի ուսաներն էր գանգված է, որին ձգեին այնքան շատ և այժմ ազատ մնալով, կծկվում է ետ, թե՛ ուսումնարարի այդ պատմական առաջընթացն ունեի իր ներքին, ժողովրդի մեծ ոգով պայմանավորված, իմաստը:

Կովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նվաճման ժամանակ ուսումնարարի մարդիկ այն միտքն էին հայտնում, որ Ռուսաստանը կոչված է այդ երկրներում ստեղծել քաղաքացիական ազատ կյանք, արդար իրավակարգ և լինել կուլտուրայի և լուսավորության կրողը:

Ի՞նչ եք կարծում, այդ բոլորը միայն դատարկ ֆրազնե՞ր էին, և մենք, որ մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞լ ենք:

Ռուսաստանն ավելի քան մի հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում միլիոնավոր կյանքեր զոհարարել և ստեղծել լայնա-

ծավալ մի պետութուն, որ այժմ դարձել է ռուսական մեծ հանրապետութուն:

Ինչ եք կարծում՝ ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգութունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց:

Մի՞թե այս նոր երրորդ Հոռմի փլուզումը ցավալի արձագանք չի գտնում նրա որդիների սրտերում, և մի՞թե մեծ հայրենիքը պաշտպանություն չի գտնի իր բազում գնդերից, և չի առաջանա մի նոր հզոր շարժում: Ռուսաստանի վեհություն, ազատության ու պատվի պաշտպանության համար:

1918

ԽՈՍՔ ԻՐ ՀԻՍՆԱՄՅԱ ՀՈՒՍԵՆԻ ԱՌԹԻՎ

Քանկագին ուսուցիչներ ու սիրելի աշակերտներ. դեռ փոքր պատանեկական հասակում ես տաղ էի ասում մեր մեծերի մոտ, որոնք ինձ ասացին՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք...»: սակայն անցան տարիներ և ես նորից պիտի ասեմ՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Մենք գրքերում էինք կարդում ու հեքիաթներում լսում մարդկանց գազանությունների մասին, սակայն այսօր մենք մեր աչքերով տեսանք, որ դեռ չի վերացել կոռվք, պատերազմը:

Շատ ճակատներ կան պատերազմում, սակայն ամենավսեմը ձերն է, որովհետև դուք եք կռվում այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն ու ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս ու արդարություն: Դուք պիտի պաշարեք՝ վերացնելու ժողովուրդների վրայից տանջանքներն ու թշվառությունները: Ես մի համեստ գործիչ եմ, և այսօր ձեր այդ վառ զբաղմունքները ապացուցում են, որ դուք պիտի ձեր գործը արթնացնեք կատարելով:

Մերանալոց հիտո՞ւ ես նորից կրկնում եմ ձեզ, սիրելի աշակերտներ՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Մենք, հին սերունդը դժբախտ եզավ, մազթում եմ, որ դուք ստեղծեք երջանիկ կյանք: Հայտնում եմ ձեզ բոլորիդ իմ խորին շնորհակալությունը՝ ինձ ցույց տված զգացմունքների համար:

1919

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Ես մեր բանաստեղծների, վիպասանների ու դրամատուրգների գործերը տարիներ առաջ եմ կարդացել:

Միայն կանեի, եթե մեր գեղեցիկ գրականության վրա կարծիք հայտնեի հին սպառնալիքային տակ:

Էն ժամանակից շատ են փոխված իմ գրական ճաշակն ու հասկացողությունը և իմ աշխարհայացքը: Ինչ որ էն ժամանակ թվում էր գեղեցիկ ու հերոսական, այժմ տգեղ է ու բարբարոսական: Ես վերջին տարիներս, երբ դեպք է լինում՝ վերադառնում եմ իմ հին կարդացածներից մեկին կամ մյուսին՝ հիասթափվում եմ հաճախ: Ընդհանուր սպառնալիքունս ու կարծիքս էն է, որ մեր գեղեցիկ գրականությունը առողջ ու ամբողջական գործեր շատ չունի:

Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի:

Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ապագա Հայաստանն է, ազատ, հարազատ հողը, ժողովուրդը:

Էդ ապագա Հայաստանն էլ կտա մեր գրականության ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական, բարբառների, գրաբարի ու եզաժ. գրական լեզվի համագրությունը: Հայ ժողովուրդական կենդանի բարբառների ազդեցությունն է լինելու տիրական:

Չնչին է հայ ժողովրդական կենդանի բարբառների միջև եղած տարբերությունը և կայանում է գլխավորապես կը-ի և ում-ի միջ: էգտեղ էլ՝ գերակշռելու է կովկասահայ բարբառը: Էս շնչին տարբերությունները մի կողմ թողած, հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն:

1919

ՊԱՅԾԱՌ ԷԶԵՐ

1904 թվին, անհաջող պատերազմի հետևանքով, Ռուսաստանը ծայրից ծայր սկսել էր ալեկոծվել:

Հեղափոխության ուրվականից վախեցած ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի շար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը:

Էդ ուղղությամբ նա գործի ձեռնարկեց և Անդրկովկասում: Անդրկովկասում պետք էր իրար դեմ հանել երեք ժողովուրդ— հային, վրացուն ու թուրքին:

Անցյալ փորձերը ցույց էին տվել, որ անկարելի էր հայ-վրացական ժողովուրդների ընդհարումը գլուխ բերել:

Այո՛, եղել են տխուր միջադեպեր, բայց դրանք կարողացել են միայն պաղեցնել, պղտորել, թունավորել ժամանակավորապես էդ ժողովուրդների հարաբերությունները, էն էլ միշտ վերին խավերում, և շատ-շատ թույնը հասցնել մինչև գործիչների ու հրապարակախոսների լեզուն, բայց էդ թույնը հասցնել մինչև հայ և վրացի ժողովուրդների հոգու խորքը — չի հաջողվել երբեք: Եվ մնացել են անսասան մեծագույն հիշատակներով լեցուն էդ հոգիները:

Եվ էն երկու ժողովուրդը, որոնք իրենց պատմությունը սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկ) և Քարթլոսը եղբայրներ էին, մնացել են ու մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով:

Նրանք միաժամանակ են հնարել իրենց գիրը, միաժամանակ

են ընդունել քրիստոնեությունը, միասին մշակել թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ գրականությունն ու գիտությունը, միասին կովել իրենց ազատության և կուլտուրայի համար և միասին նույնիսկ իրենց մեծ տառապանքների մեջ ու միշտ բախտակից:

Նրանք միասին հաղորդակից են եղել հունա-հոմեոսական կուլտուրային և շարունակ միասին պաշտպան կանգնել արևմտյան քաղաքակրթությանը:

Եվ էն հայ գործիչը, որ չէր պաշտպանում Վրաստանին, չէր հասկանում իր ժողովրդին ու իր պատմությունը, և էն վրացին, որ չէր պաշտպանում հային ու Հայաստանը, չէր հասկանում վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ճանապարհը: Էնպես որ, հայ թե վրաց պատմության մեջ լավագույն վրացին պաշտպանում է Հայաստանին, հայը՝ Վրաստանին:

Նույն հայը կամ վրացին, որ լավ գիտեր և հասկանում էր իր ժողովրդի բախտն ու բնավորությունը և նրա գերագույն շահերը, միշտ պաշտպանում էր իր հարևանին, ինչպես ինքն իրեն: Հենց էդ պատճառով էլ հայոց պատմության մեջ կարելի է կարդալ, օրինակ, էսպիսի մի վկայություն վրաց թագավորի մասին.

«Եւ էր Դաւիթ արքայ այր սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածպաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևացաւ ընդունող և սիրող ազգին հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն հայոց. և սա շինեաց քաղաք հայոց՝ ի յաշխարհն վրաց, և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս և անսանեաց զանուն քաղաքին Գառայ... և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց» («Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ», 1869, Երուսաղեմ, էջ 447):

Կամ էն պատմությունը, թե վրաց թագավորն ինչպես ազատեց հայոց մայրաքաղաքը թշնամու ձեռից և թե ինչքան նեղություններ են քաշել հայերը վրաց թագավորի մահից հետո (նույն, էջ 451, 459):

Էդ տեսակ վկայություններ է տալիս նաև վրաց պատմությունը հայերի մասին.

«Օգտվելով մահվամբ հայոց Աշոտ թագավորի, որ այդ ժամանակ միակ հետևողն էր Վրաստանի խաղաղության, Պաղլան, Դինաուրի Գարրիել քորեպիսկոպոսի հաջորդը գրավեց Գարդաբանի մի մասը, Քարթալինիային պատկանող շրջանները, իսկ արխազական Բագրատ թագավորը մտավ բուն Քարթալինիա»:

(«Վրաստանի պատմություն» իշխ. Ս. Բարաթովի. Ս. 9. Բ. 1871. էջ 18):

Սրանք; իհարկե, եղակի դեպքեր չեն, որ վաթնիի է բերել հայոց կամ վրաց պատմությունեից: Եվ էդ դեռ տիրողների թագավորների և իշխանների: կյանքից: Իսկ ժողովուրդը... սովորաբար ասում են, թե ժողովուրդը քիչ է երևում անցյալում, պատմության մեջ:

Ո՛չ, ես կարծում եմ, ժողովուրդը կա, երևում է, նա խոսում է հազար ձևերով ու արտահայտություններով: միայն հարկավոր է կարողանալ էդ գտնել, եկատել և տեսնել:

Ահա՛ հայ ժողովուրդը; խոսացած իր ազգային էպոսի — Սասունցի Դավթի մեջ:

Եվ հսպես չլ, հայկական էպոսի մեջ մշտապես անսասան կանգնած են հայոց հսկայի — Սասունցի Դավթի և վրացի հսկայի — Գեորգիի (այլ վարիանտով՝ Զամդո) հսկայի դեմքերը: իրար կողքի, ուր Դավթի Գեորգիին է տալիս իր բարևը, Գեորգին էլ միայն Դավթի բարևն է անում, նա է Դավթին զգուշացնում վերահաս վտանգի հանդեպ, և նրան է հավատում Դավթին անվերապահ: Նրանց սրերը երբեք չեն խաչաձեպում, և բացառապես սիրո և բարեկամության համար է Դավթի Գեորգիի երկիրը գալիս:

Ահա՛ ձեզ ամբողջ ժողովրդի արտահայտած կարծիքը; սերունդներով ամրապնդված կապը, հավերժորեն գծված ճանապարհը: Հայ լինի թե վրացի; եթե շեղվում է էդ ճանապարհից, նա դավաճանում է իր ցեղի ոգուն...

Սակայն հենց նույն էպոսը «Գրաչալի կեղծով խնդիրը» պարզում է և բաց անում գեղեցիկ ազագայի հեռանկարը: Երբ Սասունցի Դավթի հարձակվում է և սկսում է կոտորել թշնամու զորքին, մի ծերունի է առաջ գալիս և ասում — Դավթի, ինչո՞ւ ես մեզ կոտորում, մենք խեղճ ուսնչաբար մարդիկ ենք, թագավորն է զոռով հավաքել մեզ կովի բերել, մենք քո դեմ բան չունենք, թագավորն է քո թշնամին; կոիվ ունես նրա հետ: արա՛: Քո թուր-կայծակով ինչո՞ւ ես կոտորում խեղճ ժողովրդին: Եվ հսկայի թուր-կայծակին մնում է օդում կախված:

— Լավ ես ասում, դու ծերունի, — պատասխանում է Սասունցի Դավթի, և թողնելով հասարակ ժողովրդին, դարձնում է իր ձիու գլուխը և ուղղում դեպի թագավորի վրանը:

... և հսպես:

Եվ ահա — էն գլխից մինչև էս գլուխը: Ինչ կռիվու կոտորած ուղում է լինի՞ հնապաշտ բունապետներից մինչև դեմոկրատիկ հասարակագետությունները: միշտ սարքված են երկիքները կառավարողների և ղեկավար շրջանների ու ղեկավար մարդկանց ձեռքով: Եվ միշտ էդ արվել է հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդու կամքի ու ցանկության հակառակ:

Եվ հենց դրա մեջն է էն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ էդ բոլոր աղետների մեջ: ոչ թե հասարակ ժողովուրդն է մեղավոր, այլ նրա իշխանավորները: և քանի շատ էր վերջինները թուլանան, իսկ իրենք՝ ժողովուրդները դառնան ավելի գիտակից: անմիջականորեն մոտենան իրար, և քանի իրավունքն ու իշխանությունը անցնի ժողովրդին, հասարակին, ընդհանուրին, աշխատողին — էնքան էլ մեղմանալու են էդ աղետները և վերջապես վերանալու: Իսկ թե ժողովուրդն անմեղ է ամեն կովի ու կոտորածի մեջ և հակառակ՝ դրա ամենայն պայտույցներից մեկը: հենց 1905—06 թվականների հայ-թուրքական ընդհարումներն էին, որոնցից էս մի քանի փաստեր առաջ կբերեմ, էնքան պայծառ ու լուսավոր փաստեր, որ ինձ իրավունք են տալիս իմ հողմածի վերնագիրը դնել — պայծառ էջեր:

էդ անասան հավատով ես նպատակ գրի մեր կյանքի ամենասև և մոռյլ էջերից բերել պայծառ փաստեր, որոնք վկայում են այն մասին, թե ինչպես ժողովուրդներն ու ժողովրդի մարդիկ կարողանում են պաշտպանել մեկը մյուսին: ընդդեմ նրանց ընդհանուր իշխանավորների: Եվ ես իմ այս հողմածների ընդհանուր վերնագիրն եմ դնում «Պայծառ էջեր», որովհետև պայծառ եմ նայում մեր ժողովուրդների ապագային:

1920 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂԸ

Աշխարհի ամեն կողմը ցրված հայոց ժողովուրդ...
ԼՍԻՐ,
Քեզ է կանչում Հայաստանի Ազնության Կոմիտեն:

Քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարված
ամեն հոսանքի հայ գործիչների ու գրականագետների ժողովը:

Եվ գուցե երբեք դու չես լսել նրանց ձայները էսպես միացած
ու միահամուռ:

Եվ էսքան մեծախորհուրդ մի վայրկյանի:
ԼՍԻՐ:

Դարավոր մաքառումներից հետո, համաշխարհային թոհուրո-
հից, լայնածավալ ալեկոծությունների և աղետների ժովից գերա-
գուլյն ճիգերով բարձրանում է ազատ ու անկախ Հայաստանը:

Պատմական էս մեծ օրերին տենդային իրարանցումով նրա
շուրջն են խոնված հայության կենսունակ տարրերը, և Այրարատի
նվիրական հողի վրա մի իշխանություն տեղի է տալիս մյուսին:

Սակայն՝ Հայաստանի Օգնության Կոմիտեն այսօր գալիս է
հայտարարելու ի լուր համայն հայության, թե խաղաղությունը
արդեն հաստատված է մեր հայրենիքում և հաշտ ու համերաշխ
հարաբերության մեջ է նա իր հին հարևան ժողովուրդների հետ:

Եվ արդեն անցնում է նա իր վերջերը դարմանելու և կազ-
դուրեցնելու աշխատանքին:

Կառավարությունը առոտք է հանել իր բոլոր ուժերը ժողո-
վրդին ազատելու տիրող և մանավանդ առաջիկայում սպառնա-
ցող սովից և վերաշինելու քանդված երկիրը:

Խաղաղություն գտնելով գործի է անցել և ինքը, մեծ տա-
ռապալը, Հայաստանի իսկական տերը, հայ գյուղացին:

Սովը, սուրն ու ավերածությունը չեն ընկճել նրա հանրահըռ-
չակ տոկունությունն ու շինարար ոգին:

Նա բազմաթիվ զոհեր է տվել և տալիս է տակավին, բայց չի
լքում պապենական օջախը, և իր գութանի մաճին ապավինած՝
կանգնած է հայրենի դաշտի վրա ու կանգուն էլ պիտի մնա, ինչ-
քան իշխանություններ էլ գան ու գնան:

Եվ երբ հարևան աշխատավոր ժողովուրդները երեկվան ար-
յունահեղության փոխարեն այսօր եղբայրական օգնության ձեռք
են մեկնում հայ աշխատավոր ժողովրդին, մի՞թե կարող է պա-
տահել, որ նրա տառապանքների ու շինարար ճիգերի հանդեպ
անտարբեր մնաս միայն դու, նրա տարագիր եղբայրը, պան-
դուխտ հայություն: Դու՝ որ հեռու ես հայրենիքից, բայց ուշք ու
միտքդ միշտ դեպի ետ, դեպի հայրենիք:

Այո՛, Հայաստանի Օգնության Կոմիտեն քաջ գիտե, որ դու էլ

ես բաժանված զանազան կուսակցությունների, ինչպես քաղա-
քական ու քաղաքացիական կյանքով ապրող ամեն մի ժողովուրդ:

Ահա՛, Կոմիտեն ինքն էլ կազմված է տարբեր քաղաքական
հայացքի մարդկանցից:

Բայց նա լավ գիտե և էն, որ հայ ժողովրդին սովից ազատե-
լու և քանդված Հայաստանը վերաշինելու գործը վեր է ամեն կու-
սակցական նկատառումներից և քաղաքական տարածայնություն-
ներից:

էսպես էլ մտածելով՝ ամենքը եկել միացել են այս վսեմ գոր-
ծի շուրջը, կազմել են ազատ ու անկուսակցական մարմին և գոր-
ծունեություն են հրավիրում ամենքին, ամեն կողմից:

էսպես է մտածում և ինքը՝ Հայաստանի Խորհրդային Հանրա-
պետական կառավարությունը, որ ո՛չ միայն գործելու լիակատար
արտոնություն է տալիս, այլև աջակցում է ամեն մեկի և ամեն մի
մարմնին, որ կցանկանա օգնել, անձամբ գա, աչքով տեսնի և
տնօրինի իր օգնությունը:

Արդ, լսիր հայություն, ուր էլ որ լինես, Եվրոպայից
մինչև Հնդկաստան, և ամենուրեք:

Լսի՛ր քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության
ամեն բանով, ինչով կարող ես, որ ունենաս էն՝ ինչ որ երազել
ես դարերով — ազատ ու շեն հայրենիք:

Նախագահ՝ Փումանյան Հովհաննես

Հովհաննէս Թումանյան (Ք. Հախփաղյան)	3
Բանաստեղծություններ	
Գուժանի հրգը	15
Ամառվա գիշերը գյուղում	16
Հին օրհնություն	17
Նախերգանք	18
Համերգ	19
«Ե՛ր, ես երանի»	19
Մարերում	20
Աստղերի հետ	21
Ուրու	22
Քրիստոսն անապատում	22
«Մութն էր երկինքը»	23
«Ինձ մի ինդրիր»	23
Գարտա	24
Հաշտություն	25
Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա	26
Ազրյուրը	26
Այլազովսկու նկարի առջև	27
Հայ օւխտավորին	28
Խրնիթում	28
«Եթե մի օր, տն՛ուշ ընկեր»	29
Երկու սև ամպ	30
Գաղթականի հրգը	31
Ֆլավորություններ	31
Ֆրոմոսիյան սաղմոսներից, Ա	32
Ֆրոմոսիյան սաղմոսներից, Բ	33
Դիտր գիշեր	34
Գու թո ճամփեն	34
«Ա՛ր, ի՛նչ լավ են սարի վերս»	35
Պանդուխտ եմ, թուրիկ	36
Մեր նախորդներին	36
Հայոց լեռներում	37
Հայոց վիշտը	38
Մեր ուխտը	39
«Քառեղ մի վսեմ խորհուրդ է ապրում»	40
«Փամանակն անվերջ, տիեզերքն անհուն»	40
Կաթալի գովեր	41
Վայրէջք	41
Մոխակի վիշտը	42
Մանուկն ու ջուրը	43
Կաթալի ողբը	44
	45

«Տաղով եկավ»	47
Մաղիկների հրգը	47
Վերջին տաղնապը	50
Հայրենիքիս հետ	51
Հոգեհանգիստ	52
Բարձրից	54
Վ. Բրյուսովին	55
«Երազեցի շարունակ»	55
Երեխի նման	56
Գրագարանս	57
Աշխենի ալբոմից	57
Անուշի ալբոմից	58
«Քոշաքարում ես վազել եմ»	58
Իմ հրգը	59
Պատրանք	59
Նվեր Վրաստանի բանաստեղծներին	60
Սիրիուսի հրածեղաը	61
Փառչակներ	
«Ա՛նց կացան...»	63
«Վերջացա՛վ...»	63
«Ո՛ւր կորան...»	63
«Ետ շեկավ...»	64
«Հիմի բացե՛լ են հանդես...»	64
«Երկու դարի արանքում»	64
«Շու՛ղ է իմ վիշտն, անափ ու խոր»	64
«Քանի՛ մահ կա իմ սրտում»	65
«Կյանքից հարբած անցավոր»	65
«Ը՛տ եկե՛ք...»	65
«Հին աշխարհքը ամեն օր»	65
«Զուր եմ փախչում, ինձ խաբում»	66
«Ո՛վ իմանա՛՛ ո՛ւր ընկանք»	66
«Երազումըս մի մաքի»	66
«Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես»	66
«Քանի՛ ձեռքից եմ վառվել»	67
«Մընացել է բերդը մեզ»	67
«Հոգիս՛ տանը հաստատվել»	67
«Ո՛նց է ծպտում իմ հոգին»	67
«Ի՛նչ ես թըռչում, խեղճ սի՛րս»	68
«Իմ սո՛ւր, արթուն պահանջում»	68
«Էլինե՛ր հեռու մի անկյուն»	68
«Մի հավք գարկի ես մի օր»	68
«Երկու շիրիմ իրար կից»	69
«Ո՛վ է ձեռքով անում, ո՛վ»	69

«Աշնան ամպին ու դամպին»	69
«Կըլթացնում են, արտորում»	69
«Բերանն արնոտ Մարդակերը էն անբան»	70
«Մեռա՛ն, մեռա՛ն... Եվ ահա»	70
«Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն»	70
«Ի՛նչ մի անհայտ Բանաստեղծ ես, շրտեսնված մինչ էսօր»	70
«Հե՛յ ազատ մարդ, հե՛յ անզոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ»	71
«Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին»	71
«Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ»	71
«Ո՛ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՛ս, թե է՛ն»	71
«Կորցրել եմ, ո՛ւր գրտնեմ»	72
«Ի՛նչ իմանաս Հատեղծողի գաղտնիքները անմեկին»	72
«Խալամն ասավ իր սիրունուն.— Ոտըդ ըզգույշ դիր հողին»	72
«Երեսկ էսպես՝ անվերջ քեզ հետ — իմ կյանքի հետ լինեիր»	72
«Լուսը լուսին քո ժպիտն է իմ երեսին ճառագում»	73
«Առատ, անհատ՝ Աստծու նրման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես»	73
«Ես շրնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր»	73
«Այրունալի աղետներով, աղմուկներով ահարկու»	73
«Ամեն անգամ Քո տըվածից, Էրբ մի բան ես Դու տանում»	74
«Հազար տարով, հազար դարով, առաջ թե ետ, ի՛նչ կա որ»	74
«Ասի. «Հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ...»	74
«Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ»	74
«Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ»	75
«Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում»	75
«Աստծու բանտն են տաճարները — աշխարհքներում բովանդակ»	75
«Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի»	75
«Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ շահ սըրբազան»	76
«Ամեն մի սիրտ ցավով լըցվեց մեր դարում»	76
«Աղբյուրները հընչում են ու անց կենում»	76
«Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին»	76
«էնքան շատ են ցավերն, ավերն իմ սըրտում»	76
«Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր»	77
«էս է որ կա... Ծիշտ ես ասում, թասըդ բեր»	77

Մանկական բանաստեղծություններ

ԱզվԼսը	78
Լուսարացին	79
Կույր աշուղը	80
Քամին	80
Հուտին	81
Արտուտիկ	81
Ուլունք	81
Փխտն	82
Ամպն ու սարը	82

Կանանչ ախպեր	83
Արագիլ	83
Ճնճղուկներ	84
Աշնան վերջը	85
Փոքրիկ երկրագործ	85
Ուրազ ու սղոց	86
Տերևաթափ	86

Իսլաղներ

Շունն ու Կատուն	87
Անբախտ վաճառականներ	89
Ախթամար	93
Անիծած հարսը	96
«Պողոս-Պետրոս»	98
Արծիվն ու Կաղնին	100
Փարվանա	101
Լուսավորչի կանթեղը	107
Գառնիկ ախպեր	108
Չարի վերջը	115
Հսկան	120
էսպես շի մնա	124
Մուկիկի մահը	127
Մի կաթիլ մեղրը	130
Աղավնու վանքը	135
Մոճակն ու Մրջյունը	138
Թագավորն ու շարչին	140

Պոեմներ

Մարոն	144
Լոռեցի Սաքոն	149
Հառաչանք	155
Անուշ	166
Դեպի անհունը	194
Պոետն ու Մուսան	206
Սասունցի Դավիթը	216
Թմկաբերդի առումը	247

Պատմվածքներ

Լեռների հովիվը	259
Գիթորը	261
Երկաթուղու շինութունը	277
Արշարոս	280
Գարո բիճու շերամապահութունը	284

Երկու հայր	286
Ահմադը	287
Գրազը	289
Նղչերուն	293
Նեսոյի քարաբաղնիսը	299
Քեռի հեշանը	302
Մղրիղը	305
Գեղը	310
Իմ ընկեր Նեսոն	330

Հեփիարներ	
Անխելք մարդը	335
Պոչատ աղվեսը	338
Ուլիկը	340
Միտը	342
Ճամփորդներ	343
Կացին ախպեր	344
Սուտասանը	345
Չախչախ թագավորը	346
Ոսկու կարասը	351
Տերն ու ծառան	353
Խեչոքն ու հիմարը	357
Խոսող ձուկը	360
Անհաղթ աքլորը	364
Բարեկենդանը	365
Սուտլիկ որսկանը	367
Անբան Հուռին	369
Քեֆ անողին քեֆ չի պակսիլ	371
Յղնմական ծաղիկը	376
Քաշ Նազարը	380
Կիկոսի մահը	390
Ձախորդ Փանոսի հեքիաթը	393

Հողվածներ	
Ինքնակենսագրություն	396
Անկեղծ շենք	399
Հարելյանների գեմ	402
Մեծ ցավը	403
Ձեն ու հոգին	405
«Համլետի» շարչարանքի շարաթը Քիֆլիսում	410
Հայի ոգին	413
Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ	415
Ամենքը միասին	416

Շիրվանզադեի հորելյանը	418
Կառնացած ժողովուրդ	419
Տխուր հիշողություն	422
Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը	424
Սայաթ-Նովայի շիրիմը	429
Մի՞թե դժվար է	430
Հայկական հարցն ու իր լուծումը	431
Երկու մեծ թիֆլիսեցիներ	443
Խոսք Րաֆֆու գերեզմանի վրա	446
Խոսք Մերենցի գերեզմանի վրա	447
Հայոց դրամբյանիզմն ու ես	448
Փորձիչը	458
Լսենք ու պաշտպանենք	459
Կովկասի մեծ որդեգիրը	461
Դեպի մեծ կյանքը	464
Հանգիստ ու լիքը հավատով	466
Խոսք՝ ուղղված Վ. Բրյուսովին	467
Համաշխարհային գրական տոնը	470
Ողջունում ենք	472
Մ. Նալբանդյանի հիշատակին	473
Աղամյանի օրերից	475
Խոսք սկսնակ բանաստեղծներին	482
Հսկայի ազատությունը	484
Հայաստանը պետք է խոսի	487
Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն	488
Խոսք իր հիանալի հորելյանի առթիվ	490
Հայ գրականության վիճակը	491
Պայծառ էջեր	492
Հայաստանի օգնության կոմիտեի կոչը	495

Հովհաննես Քումանյան

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Խմբագիրներ՝ Մ. Հ. Կալչոյան,
Ի. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ի. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

Ованес Туманян

ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.

Ереван — 1978 г.

ИБ—862. Հանձնված է շարվածքի 20/II 1978 թ.:

Ստորագրված է տպագրության 10/II 1978 թ.:

Քուղթ № 1 60×84¹/₁₆, տպագր. 31,5 մամ. = 29,30
պայմ. մամ., հրատ. 22,8 մամ.:

Պատվեր 131: Տպաքանակ 50000: Գինը 2 ռ. 20 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9,
Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի հրատարակչություն-
ների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պե-
տական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլի-
գրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Гос-
комитета Совета Министров Арм. ССР по делам
издательств, полиграфии и книжной торговли,

Ереван-9, ул. Теряна, 91.